

LIBRARIES

# ԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՄԱՍՆ Ա.




Երկասիրութիւն

ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1908

Karapet Episkopos
Hayots Ekeghetsuoy

# ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

patmutiun...

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*ՄԱՍՆ Ա.*



**Երկասիրութիւն**

*ԿԱՐԱՊԵՏ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ*



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
*Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի*
**1908**

# ՄԻ ՔԱՆԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՐԿԱՍԻՐԱՂԻ ԿՈՂՄԻՑ

Տարիներ առաջ, երբ ես յանձն առայ Հայոց եկեղեցւոյ պատմութիւն դասաւանդել Մ. Աթոռի Ճեմարանում, իմ հասկացած պատմութեան համար ձեռնարկ չկար. պէտք էր նորը կազմել։ Անցեալ դարում լոյս տեսած թէ ազգային ընդհանուր և թէ եկեղեցական պատմութեան բոլոր ձեռնարկների մայրը Չամչեանի եռահատոր պատմութիւնն է. նորանից են փոխ առնում բոլորեքեան իրենց հայեացքների մեծ մասը պատմական աղբիւրների, անցքերի, անձնաւորութիւնների մասին, նորա ընդունած ժամանակագրութիւնն են գործ դնում, յաճախ նորա միտումաւոր բացատրութիւններին և արհեստական պատճառաբանութեանը ենթարկւում։ Սակայն Չամչեանից յետոյ պատմագիտութիւնը հսկայական յառաջադիմութիւն է գործել և թէպէտ մեր պատմութեան համեմատաբար քիչ բաժին է ընկնում այդ յառաջադիմութիւնից, ներելի չէ այնուամենայնիւ անտես անել եղածը և շարունակել ուսուցանել այնպիսի բաներ, որոնք արդէն հերքուած են նորագիւտ աղբիւրների և նոր ուսումնասիրութիւնների շնորհիւ, տալ գաղափարներ, որոնք ժամանակակից ըմբռնումների հետ չեն հաշտւում։ Պէտք էր ուրեմն պատմութեան բուն նախնական աղբիւրներին դառնալ, նոցա վերայ եղած ուսումնասիրութիւններն ի նկատի առնել, ամեն ինչ ի նորոյ քննել և ստուգել։ Բանի որ այդ աշխատութիւնը կատարւում էր դասերի հետ զուգընթացաբար, իւր ազդեցութիւնը կթողնէր այն բնականօրէն դասաւանդութեան եղանակի վերայ. ես ինձ իրաւունք չէի համարում աւանդականի փոխարէն իմ եզրակացութիւնները դնել աշակերտների առաջ, առանց բացատրելու, թէ ինչի վերայ են հիմնուած սոքա։ Այդպիսով դասաւանդութիւնը ստանում էր քննադատական—վիճական բնաւորութիւն. պատմիչք ես կամայ ակամայ ունկնդիրների միջքը տանում

այն ճանապարհով, որով ինքս գնացել էի՝ որոշ արդիւ
հասնելու համար. շարունակ աչքի առաջ ունէի սխալ ւ
զեկութիւններ ու տեսութիւններ, որոնց դէմ վիճում, հ
քում և տեղը նորն էի դնում։ Իմ պատմածներն ա
կերտները գրի առան, ես հարևանցի կերպով սրբագր
նոցա գրածը, և այդպէս կազմուեցան տետրակներ, որ յե
տարէցտարի արտագրւում էին, և մինչև վերջին տարին
րիչներն ևս այդ տետրակների վերայ էին աւանդում Հա
եկեղեցւոյ Պատմութիւնը Ճեմարանում։

Անցեալ ուսումնական տարուայ սկզբին Ճեմար
վարչութիւնը՝ կամենալով ազատել աշակերտներին տետր
ներն արտագրելու ծանր աշխատութիւնից, առաջարկեց
տպագրութեան տալ։ Սիրով յանձն առայ, բայց չու
նկատեցի, որ կարելի չէր եղած տետրակները նոյնութե
կամ փոքրիկ փոփոխութիւններով տպարան ուղարկել. պ
էր մեծ մասը փոխել, կամ նորից գրել։ Ինձ համար պ
էր հարկաւ, որ իսկական մտքով դասագիրք կազմելիս
րեւոր կլինէր հանել բոլոր քննադատական մասերը, կողմն
դատողութիւններն ու կարծիքները, և որոշ իրողութիւն
ու թուեր ներկայացնել աշակերտին. սակայն այդ դէպք
ուսուցչի կամ ընթերցող հասարակութեան ձեռքում պ
է գտնուէր նախօրօք մի ուրիշ գիրք, որի մէջ պարզա
նուած ու պատճառաբանուած լինէր հանգամանօրէն,
ինչ հիմունքներով աւանդական պատմուածքի և տեսութե
փոխարէն նորն է տրւում այժմ. ուրիշ խօսքով պէտք
առաջ մի ընդարձակ բուն քննադատական պատմութ
գրել, մանրակրկիտ հետազօտութիւնների ու բացատ
թիւնների մէջ մտնել, նախկին հեղինակների վիճելի կ
ծիքները կէտ առ կէտ հերքել, անթիւ ծանօթութիւն
դնել են,—մի մեծ աշխատութիւն, որի պահանջած ժա
նակն ու յարմարութիւնները չունէի։ Ստիպուած եղայ
րից միջին ճանապարհ ընտրել ու նիւթի հետ տալ այն
ցատրութիւնները, որոնք իւրաքանչիւր իրողութեան
չափով հաւաստի և ստուգուած լինելը որոշում են։ Դժբ
տաբար իմ անակնկալ կերպով նոր պաշտօնի կոչուելն
Մ. Աթոռից հեռանալը արգելք եղան՝ սկսած գործը
հետվ առաջ տանելու և մինչև վերջ հասցնելու. ս

ո շարունակ ես այլ ևս նորանով զբաղուել չկարողացայ, կ յետոյ, յանձն առած պարտքից մասամբ թեթևանալու մար, հատուած առ հատուած տպագրութեան նիւթ ու- րկելով հեռուից՝ այսպիսի աշխատութեան բոլորովին նպաստ պայմաններում, հազիւ հնարաւորութիւն ունեցայ նչափը գլուխ հանելու, որ ահա վստահանում եմ հրապա- կի վերայ դնել։

Եկեղեցական պատմութեան դասագրքի մեծ կարիք յ այժմ, թէ մեր դպրոցներում և թէ պետական միջնակարգ րժարաններում գործ դնելու համար։ Այդ կարիքին բա- կանութիւն տալու յաւակնութիւն չունի ներկայ երկասի- ւթիւնը, որ բացի յիշեալ թերութիւններն ունենալուց և սակատար լինելուց՝ տպուած է սակաւաթիւ օրինակնե- վ։ Գուցէ մեր կրօնուսոյցներից շատերը կկամենային, որ սա ր բոլոր պակասութիւններով մէկտեղ ամբողջացած լինէր լրիւ դասընթացի համար նիւթ մատակարէր իրենց։ Սակայն դ պահանջի լրացումը կամայ ակամայ պէտք է թողնենք ելի յարմար ժամանակի, երբ իմ պաշտօնն ու միջավայրը յլ կտան թերևս սորա շարունակութեան փոխարէն վերև նարկած լուրջ և բազմակողմանի աշխատութեան ձեռնար- լու և ամբողջ պատմութիւնը նորից աւելի կատարեալ ով գրի առնելու։ Այս հրատարակութիւնը թող համարուի րև մի տպագրեալ դասարանական տետրակ, իբրև մաս- ւոր փորձ մեր պատմութեան մի հատուածը լուսաբանե- ւ, իբրև ժամանակաւոր օժանդակութիւն դպրոցական գոր- ն։ Այդպիսով, յոյս ունիմ, նա աննպատակ չի անցնի և ր որոշ սահմանափակ դերը կկատարէ։

Ե. Տ. Վ.

19 յուլիսի 1908 Թ.
Փարիզ.



# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Յիսուս Քրիստոս Հրէից ժողովրդեան առջև եկաւ որև Աստուծոյ արքայութեան քարոզիչ: Դարեր շարունակ այդ ժողովուրդն ապրել էր այն համոզմունքով, որ երկնքի ու երկրի Արարիչն առանձին խնամք ունի իւր վերայ. որ ինքը նախահայրերի և մարգարէների միջոցաւ ցուցումներ էր ընդունել Նորանից, թէ ինչպէ՞ս պէտք է արժանավայել պաշտօն մատուցանել Նորան և ինչպէ՞ս կենցաղավարել՝ Նորան հաճոյ լինելու համար. ընդունել էր խոստումներ, թէ մի օր պէտք է յայտնուի Նա կատարեալ փառօք և զօրութեամբ, ամէն չարիք ու ամէն հակառակութիւն աստուածային սուրբ կամքի դէմ պէտք է խորտակէ, և այսպէս՝ անսահման իշխանութիւն տարածելով երկրի վերայ, ըստ ամենայնի երանաւէտ կեանք պատրաստէ Աստուծոյ ժողովրդեան համար: Յիսուս քարոզում էր ահա, որ այդ օրը եկել է և իւր հրապարակ լինելովն արդէն Աստուծոյ թագաւորութիւնը հաստատուել է. բայց մի թագաւորութիւն, որ այս աշխարհի թագաւորութիւնների նման չէ՝ մարդոց նիւթական ու մարմնաւոր կեանքի վերայ չի տարածում իւր իշխանութիւնը, այլ ներքին հոգևոր կեանքի վերայ. ուստի Նորա մէջ մտնելու ու Նորա բարիքները վայելելու համար Աստուծոյ անուանական երկրպագու լինելը բաւական չէ, այլ հոգւով և ճշմարտութեամբ պէտք է երկրպագել:

Այն անձինք, որոնց վերայ Յիսուսի քարոզութիւնը տպաւորութիւն գործեց և որոնք հետզհետէ Նորա շուրջը համախմբուեցան՝ մինչև Նորա մահը դեռ մի տեսակ սպասողական վիճակի մէջ էին. աւանդական տեսութիւններն ու մարդկային ցանկութիւնները այնքան խոր արմատ էին առնել Նոցա մէջ, որ իրենց Վարդապետի հակառակ ազդարարութիւնները լսելով, Նորա իւրաքանչիւր խօսքի ու քայլափոխի մէջ դէպի վերինն ու հոգևորը, դէպի բա-

րոյականն ու երկնայինը միայն ձգտելու. յորդոր գտնելով հանդերձ, աչք ունէին այնու ամենայնիւ, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը արտաքին փառքով ու շուքով էլ երյայտնուի, և ինչպէս Երկնաւոր Վարդապետը իշխող դէմք կունենայ, այնպէս և նորա ամենամօտ աշակերտները ամենաբարձր տեղերը կստանան այդտեղ: Յիսուսի մահից յետոյ իսկ այդ ակնկալութիւնը երկար ժամանակ կենդանի մնաց նորա հետևողների մէջ, որոնցից շատերը անձկանօք սպասում էին, թէ ահա շուտով յարուցեալ Փրկիչը կգայ ու ամէն ինչ իւր յաւիտենական նպատակի համեմատ կվերակարգաւորէ. ուստի և կարիք չէին զգում երբեք ներկայ դրութեանը յարմարուելու, երկրի համար կենցաղավարութեան տևական պայմաններ որոշելու և յարաբերութեանց հաստատուն կարգեր սահմանելու:

Սակայն եղբայրական սիրոյ գաղափարը, որ Յիսուսի հետևողների փոխադարձ յարաբերութեանց համար առաջնորդող սկզբունք պիտի լինէր, սկզբից և եթ դրդում էր նոցա՝ մօտենալ միմեանց, հոգս, ուրախութիւն, նեղութիւն միմեանց մէջ բաժանել, մի ընտանիք կազմել: Ով աւետարանի ճշմարտութիւնը լիովին ըմբռնել էր՝ չէր կարող բաւականանալ անհատական երանութեան ձգտումով, այլ պէտք է փափագէր և աշխատէր, որ, եթէ հնար է՝ բոլոր մարդիկ նոյն ճշմարտութիւնը ճանաչեն և դէպի յաւիտենական կեանք առաջնորդուին: Իսկ երբ Յիսուսի աշակերտները, ս. Հոգւով զօրացած՝ քարոզելու ելան, թէ Հրէից ժողովուրդը պարհուրելի կերպով մեղանչել էր Աստուծոյ և Աստուծոյ կողմից իւր հայրերին եղած յայտնութեանց դէմ՝ խաչ հանելով Յիսուսին. թէ Յիսուս գերեզմանի մէջ չէր մնացել, այլ յարութիւն առնելով ապացուցել էր, որ ինքն է Աստուծոյ Որդին, նախահայրերին խոստացուած ճշմարիտ Մեսիան. թէ չարչարուելով ու խաչուելով նա ոչ միայն իւր փառքից ոչինչ չէր կորցրել, այլ ընդհակառակն ամենայն լրութեամբ կատարել էր Երկնաւոր Հօր կամքը, ամբողջ մարդկութեան համար փրկութեան ճանապարհ բաց արել և աւելի մեծ տիրական պատուի արժանացել. թէ այնուհետև Աստուա

ովուրդ պետի կամքին և նորա խոստացած քաջե-
ը վայելէին Հրէաների փոխարէն Յիսուսի հետևողները
որա յարութեան հաստատացողները.— այդ քարոզու-
թյան առաջին, կամ Յարութեան համար վկայելու, մարտ-
յու և անձը զոհելու կարիքը, պէտք է սովորէր Յիսուսի
հետևողներին՝ խմբուել, ուշէլ մերտ կապերով կապուել
Բեանց հետ և շրջապատից դուրս յատկանիշներով դա-
շանուող մի համայնք կազմակերպել:

Մի համայնք էր դա, որ համոզուած էր, թէ Երկնա-
յին Վարդապետը կենդանի է և, ուր ժողովուում են մի-
նի հոգի նորա անունով՝ յայտնուում է նոցա մէջ,
ունկնդրում աներևոյթապէս ապրել նոցա հետ, ղե-
կավարել նոցա հոգևոր կեանքը և ղեկալի յաւիտենական
ատողին առաջնորդել: Նա աշխատում էր իւր ամէն մի
ըժուածքը և իւր հետևողների իւրաքանչիւր քայլա-
փը համաձայնեցնել Երկնաւոր Վարդապետի տուած
պատուէրներին՝ նորա քարոզած աւետարանական ճշմար-
տութիւնների համեմատ կարգաւորել կեանքն իւր բոլոր
կողմերով: Նա հետամուտ էր սրբութեամբ պահպա-
նել նորա թողած նուիրական և խորհրդաւոր յիշա-
տակները՝ քարոզութեամբ, գրով, այլ և այլ արարողու-
թիւններով արծարծելու և տպաւորիչ դարձնելու այդ
յատակները. պարտաւորութիւն էր զգում ի սփիւռս
աշխարհի տարածելու աւետարանի քարոզը, ամբողջ
մարդկութիւնն իւր մէջ առնելու և դարձնելու Աստուծոյ
ժողովուրդ: Եւ ահա այդ համայնքը կոչուում է Քրիստոսի
Եկեղեցի: Իսկ նկարագրել, թէ նա ինչպէ՛ս աճեց և ինչպէ՛ս
զարգացաւ նուաճել հեթանոսական աշխարհը. ի՛նչ արգելք-
ներ յաղթեց, ի՛նչ փորձութիւններ դիմացաւ և ի՛նչ մի-
ջոցներ գործ դրեց. ինչպէ՛ս կազմակերպուեցաւ և իւր
պատմական գոյութեան ընթացքում ինչպիսի՛ հաստա-
տութիւններ ու ներքին երևոյթներ հանդէս բերաւ. ի՛նչ
փոփոխութիւն յառաջացրեց և ի՛նչ ազդեցութիւն ու-
նեցաւ անհատների, ազգերի և ամբողջ մարդկութեան
կրօնական ու հասարակական կեանքի վերայ,—նշանա-
ւոր է Եկեղեցւոյ պատմութիւնն անել:

Եկեղեցի (Ekklesia) յունարէն բառը փոխած է նշա-

նակում։ Այդպէս կոչուում է առաջին դարերում թէ հա
ւատացեալների իւրաքանչիւր համախմբումը կրօնակ
նպատակով, թէ մի քաղաքում կամ որոշ շրջանում գը
նուած և մի ընդհանուր եպիսկոպոսի տեսչութեան ներք
միացած բոլոր քրիստոնեաների համայնքը, և թէ ի ամիւ
աշխարհի տարածուած ամբողջ քրիստոնէութեան միո
թիւնը։ Այս վերջին իմաստով գործածուած դէպքում եկ
ղեցի բառի վերայ աւելացուում է սովորաբար «կաթուղ
իկէ» կամ ընդհանրական մակդիրը։ Ժամանակի ընթացքու
կրօնական վէճերի և քաղաքական ու աշխարհագրակ
պայմանների շնորհիւ՝ Ընդհանրական եկեղեցու մէջ զանա
զան բաժանմունքներ յառաջ եկան, որոնցից իւրաքան
չիւրը ներքուստ և արտաքուստ իւր առանձնայատո
կերպաւորութիւնն ստացաւ, առանձնացած կեանքով սկ
սեց և ըստ այնմ ունեցաւ իւր առանձին պատ
մութիւնը։ Հայոց եկեղեցին այդ բաժանմունքներից մէ
է, որ իւր ինքնուրոյն կեանքն ու ինքնուրոյն պատմու
թիւնն ունի, կարելի է ասել, իւր կազմակերպութեա
առաջին օրերից սկսած՝ շնորհիւ այն հանգամանքի, որ
հայերն ամբողջ ազգութեամբ քրիստոնէութիւն ընդուն
ցին՝ այնպիսի մի ժամանակ, երբ նոքա քաղաքական ւ
ինքնուրոյն մարմին, մի առանձին պետութիւն էին կազ
մում. և այդ պետութեան սահմաններում, Հայաստան
քաղաքական դրութեան և հայ ժողովրդեան ազգայ
առանձնայատկութիւնների համեմատ՝ մի ինքնատիպ եկե
ղեցական կազմակերպութիւն յառաջ եկաւ։

Հայոց եկեղեցւոյ պատմութիւնը պէտք է ուսուցան
ուրեմն, թէ ինչպէս մուտք գործեց և հաստատուեցա
քրիստոնէութիւնը հայ ժողովրդի մէջ, ինչպիսի յատու
կազմակերպութիւն ստացաւ այստեղ, և ինչ ընթացք ու
նեցաւ այդ եկեղեցական կազմակերպութիւնը մինչև մե
օրերը։ Սակայն քրիստոնէութիւնը երկու և կէս դար
անցեալ ունէր արդէն, երբ հաստատուն հիմք դրաւ Հա
յաստանում, և այն բոլոր դաւանական, վարչական, ծիսա
կան, կենցաղավարական կերպաւորութիւնները, որ նա
ընդունել էր յոյն-հռովմէական աշխարհում՝ ընդունելու
թիւն գտան հարկաւ ընդարձակ չափով նաև Հայոց եկե

ղեցու մէջ։ Այլ և դորանից յետոյ, դարերի ընթացքում, Ընդհանրական եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած կարևոր շարժումները իրենց որոշ ազդեցութիւնն են ունեցել Հայոց եկեղեցու վերայ, շատ դաւանական և կանոնական որոշումներ նորա կողմից դրական կամ բացասական վերաբերման հանդիպել։ Այնպէս որ, Հայոց եկեղեցու պատմութիւնն անելու համար՝ անհրաժեշտ է քայլ առ քայլ հետևել Ընդհանրական եկեղեցւոյ զարգացմանը և կարևոր ծանօթութիւնները փոխ առնել ընդհանուր եկեղեցական պատմութիւնից։ Միւս կողմից, քանի որ հայ ազգի հեթանոսական անցեալը մեզ առ այժմ քիչ է յայտնի, և միայն քրիստոնէական շրջանում յառաջ եկած գրի և գրականութեան շնորհիւ սկսում ենք բազմակողմանի կերպով ծանօթանալ նորա պատմական կեանքի հետ, իսկ այնուհետև գրեթէ ո՛չ մի փոքր ի շատէ կարևոր շարժում չի եղել նորա կեանքում, որ բոլորովին առնչութիւն չունենար եկեղեցու հետ,—ուստի Հայոց եկեղեցւոյ պատմութեան մէջ մտնում է այն նիւթի մեծագոյն մասը, որ առհասարակ Հայոց ազգի պատմութեան նիւթն է կազմում, միայն թէ տարբեր տեսակէտի ներքոյ դասաւորուած։

Ըստ այսմ Հայոց եկեղեցւոյ պատմութեան երեք դարերը հարկաւոր կլինի որոշել հետևեալ կերպով։ Առաջին՝ Հին կամ Կազմակերպութեան դար, քրիստոնէութեան նախնական օրերից մինչև հայկական թուականի սկիզբը (552 թ.), կամ Դուինի Բ. ժողովը, երբ քրիստոնէութիւնը ընդունելութիւն է գտնում և հետզհետէ հաստատուում հայերի մէջ, յաղթող դուրս գալիս տեղական և պարսկական հեթանոսութեան դէմ վարած ծանր կռուից և յառաջ բերում հայ ազգային եկեղեցւոյ ինքնատիպ կազմակերպութիւնը։ Երկրորդ՝ Միջին կամ Մաքառման դար, Դուինի Բ. ժողովից մինչև Հայրապետական աթոռի փոխադրութիւնը ս. Էջմիածին (1441 թ.), երբ Հայոց եկեղեցին գրեթէ մըշտական հոգևոր պատերազմի մէջ է՝ իւր ինքնուրոյնութիւնը պաշտպանելու համար դաւանութեամբ և ոգւով օտար ուրիշ հարևան եկեղեցական կազմակերպութիւնների դէմ, և քրիստոնէութիւնը պաշտպանելու՝ ամբողջ արևելքը անտանելի բռնութեան ճիրանների մէջ խեղդող մահմեա-

կանութեան դէմ. եղնում է այդ անհատատար կռուի թէպէտ հեծուած ու ճղակոտոր արտաքուստ, բայց առանց կորցնելու իւր անկախութիւնն ու ներքին կենսունակութիւնը: Երրորդ՝ Նոր կամ Վերածննդանութեան դար, Աթոռի փոխադրութիւնից մինչև մեր օրերը, երբ կրօնական վէճերն այլ ևս երկրորդական տեղ են բռնում, և Հայ եկեղեցին, իբրև անկախ ազգային հաստատութիւն, հայ ժողովրդի պատմական կեանքի միակ ներկայացուցիչը հանդիսանալով՝ ջանք է գործ դնում ի սփիւռս աշխարհ տարածուած հայերին մի ընդհանուր հողաւոր կենտրոնով միմեանց հետ կապուած պահելու և մի նոր պատմական դերի համար պատրաստուելու:

Հին դարի պատմութիւնը կարող ենք բաժանել կրկ երեք շրջանների: Առաջին՝ Քրիստոնէութեան աճում Յոյն—Հռովմէական աշխարհում և նորա հետքերը Հայաստանում՝ ս. Լուսաւորչից առաջ: Երկրորդ՝ Քրիստոնէութեան հաստատուելն Հայաստանում և հեթանոսական մնացորդների ու հեթանոսական բարքերի դէմ կռուել մինչև գրերի գիւտը: Երրորդ՝ Հայոց եկեղեցու ներքուն կազմակերպութիւնը, նահատակութիւնը կրօնական պատերազմների մէջ և օտար ուղղութեանց դէմ պաշտպանուելու առաջին փորձերը՝ մինչև Դուինի Բ. ժողովը:

Առաջին շրջանը վերջապէս կբաժանենք 3 գլուխների

## ԳԼՈՒԽ Ա.

## Քրիստոնէութեան տարածումն առաջին 3 դարերու եւ ընդհանրական եկեղեցւոյ հաստատութիւնը:

Ա. Երուսաղեմի մայր համայնքը:—*Յիսուս իւր վերջին օրերն Երուսաղէմում էր անցրել. անջնջելի տպաւորութիւններով և խորհրդաւոր յիշատակներով կապուած էին նորա հետևողները այդ՝ առանց այն իւրաքանչիւր հրէի համար նուիրական, սրբավայրի հետ: Այստեղ խմբուեցան նոքա ս. Հոգին ընդունելու և, իբրև յարուցեալ Քրիստոսի վկաներ՝ շրջապատող հրէաներին ապաշխարութիւ*

քարոզելու ու հաւատի բերելու համար. այստեղ կազմուեց և հետզհետէ զօրացաւ առաջին հաւատացեալների համայնքը:

Համայնքի կենտրոնն էին Քրիստոսի 12 առաքեալները, որոնք բաւական երկար ժամանակ նստած մնացին Երուսաղէմում, և նոցա մէջ ամէնից աչքի էր ընկնում իւր ոգևորուած քարոզութեամբ Պետրոս առաքեալը: Սկզբում նոցա գլխաւոր գործակիցն էր Յովհաննէս՝ Զեբեդեայի որդին, բայց շուտով առանձին դիրք ստացաւ և նոցա հաւասար պատիւ վայելեց Յակովբոս Տեառնեղբայրը: Թէ առաքեալներն և թէ միւս հաւատացեալները՝ իբրև հրէայ մարդիկ, շարունակում էին պահել բոլոր հրէական սովորութիւնները. ուրիշ հրէաների նման միշտ տաճար էին գնում և աղօթում, կատարում էին տօներն ու զանազան արարողութիւնները. ուստի այն հանգամանքը, որ նոքա նաև իրենց առանձին համայնական կեանքն ունէին, խաչեցեալ Յիսուսի յարութեանը հաւատում էին, միասին խմբուած ժամանակ նորա թողած յիշատակով խորհրդաւոր ընթրիք կատարում, եղբայրական սիրով իրենց ունեցուածքը միմեանց մէջ բաժանում՝ մեծ թշնամութիւն յառաջ չբերաւ նոցա դէմ հրէայ ժողովրդի մէջ, այլ ընդհակառակն աւելի յարգանք էր ազդում շատերին և հետաքրքրութիւն շարժում: Յարաբերութիւնը փոխուեց այն ժամանակ, երբ հաւատացեալների համայնքի մէջ մտան ոչ պաղեստինացի եկուոր հրէաներ, որոնք հեթանոս աշխարհներում, հեթանոսական ազդեցութիւնների ներքոյ, ապրած լինելով՝ շատ սովորութիւններ փոխել էին և առհասարակ աւելի ազատ հայեացքով էին նայում հրէական օրէնքի և պաշտամունքի վերայ: Այսպիսի եկուորներից էր ս. Ստեփանոս, որ և իւր ազատ հայեացքների համար քարկոծուեցաւ, ու այնուհետև հրէաներն սկսեցին աւելի խստութեամբ հետևել հաւատացեալների ընթացքին ու հալածել նոցա:

**Բ. Քարոզութիւն Երուսաղէմից դուրս եւ հեթանոսների մէջ:**—Սակայն հալածանքի հետևանքն այն եղաւ, որ Երուսաղէմից փախուստ տուող հաւատացեալները ցրուեցան և Պաղեստինի զանազան մասերում, նոյն իսկ դրսի երկըրներում, աւետարանի քարոզութեան հիմք դրին: Արդէն

այս ժամանակ հրէաների մեծամասնութիւնը Պաղեստինի
դուրս էր ապրում՝ տարածուած մեծ քանակութեամբ
Միջագետքում, Բաբելոնում, Մարաստանի կողմերում
մանաւանդ Ասորիքում, Եգիպտոսում, Փոքր Ասիայում
Հռովմում և Հռովմէական պետութեան ներքոյ՝ Միջերկրա
կանի շուրջ գտնուած, բոլոր երկրներում: Այդ բոլոր տե
ղերում ապրող հրէաները կենդանի յարաբերութեան մէ
էին մայր երկրի և Երուսաղէմի հետ. ուրեմն առանց հա
լածանքի էլ՝ ուխտաւորների և առևտրականների միջոցաւ
աւետարանի քարոզութիւնը կարող էր հեշտութեամ
մուտք գտնել նոցա մէջ: Ահա այդ դրսեցի հրէաները
գլխաւոր միջնորդներն եղան, որ շուտով աւետարանը սկ
սեց արագ նուաճումներ անել հեթանոս աշխարհում
Նոքա ամենուրեք, ուր փոքր ի շատէ աչքի ընկնող թիւ էլ
կազմում՝ ունէին իրենց ժողովարանը, և այստեղ կարել
էր յաճախ տեսնել հեթանոսների, որոնք իրենց համար
ապիկար աստուածներից ձանձրացած՝ մխիթարութիւ
էին որոնում միաստուածութեան կրօնի վսեմ աշխարհայե
ցողութեան և մաքուր բարոյականութեան մէջ: Առաջի
հաւատացեալները հեթանոսներից անշուշտ այդպիսի «ե
կամուտ հրէաներ» եղան, որոնք արդէն ընդելացել էլ
ճշմարիտ կրօնի մի շարք գաղափարներին և իսկական հրէա
ների նման ակնկալում էին գուցէ նախահայրերին ա
ուած խոստումների լրումը տեսնելու: Բայց Քրիստոսի
համբարձումից յետոյ հազիւ երկու տասնեակ տարին
անցած՝ հաւատացեալների շարքում ոչ միայն այդպիսի
«եկամուտներ», այլ նաև բուն հեթանոսութիւնից դար
ձողներ կային. գոնէ նոյն ըստ երևոյթին ոչ շատ փոք
թիւ գտնում ենք Հռովմէական պետութեան երեք ամենա
մեծ շահաստաններից մէկում, Ասորիքի Անտիոք քաղաքու
ուր և հաւատացեալներին առաջին անգամ «քրիստոնեա
անունը տուին: Երբ հեթանոսութիւնից դարձածներ
համայնքի մէջ արդէն այնքան աչքի ընկնող տեղ էին բռ
նում, որ միւս հեթանոսները տեսան, թէ սոցա սովորակա
հրէաների հետ շփոթել չի կարելի, այլ պէտք է նկատ
իբրև Քրիստոսի հետևողների մի յատուկ խմբակցութիւն
ըստ այնմ անուանել:

**Գ. Աւետարանի ժառանգութիւնը հրեաներից անցնում է հեթանոսներին:** — Հեթանոսութիւնից դարձողների բազմանալով՝ հաւատացեալների համայնքի մէջ մի անխուսափելի խնդիր ևս ծագեց, նոյն Անտիոք քաղաքում. արդեօք նախկին հեթանոսները Քրիստոսի ճշմարիտ հետևող լինելու համար պարտաւո՞ր էին հրէական օրէնքը ճանաչել և և ծէսերը կատարել: Քանի որ հաւատացեալ հրէաների մէջ հաստատ էր մնացել բոլոր հրէաներին յատուկ այն հայեացքը, թէ չի կարելի մօտիկ հաղորդակցութիւն ունենալ հեթանոսի հետ, երբ սա հրէական օրէնքի մի քանի էական պահանջները գոնէ չի կատարում՝ նորա չպիտի կարողանային հեթանոսութիւնից դարձողների հետ մի համայնք կազմել, եթէ այդ խնդիրը չլուծուէր: Անտիոքում այդ ժամանակ գործում էր Պօղոս առաքեալը, որ թէպէտ Քրիստոսի անմիջական աշակերտների թւում չէր եղել և Ստեփանոսի նահատակութեան ժամանակ մինչև իսկ նորան քարկոծողներից և հաւատացեալներին հալածողներից մէկն էր, բայց յետոյ հրաշքով դարձի եկաւ և հանդիսացաւ աւետարանի ամենեռանդուն քարոզիչը. իւր քարոզութեամբ այնպիսի մեծ արդիւնք ցոյց տուաւ, որ գլխաւոր առաքեալների շարքն անցաւ: Նա ու իւր նշանաւոր գործակիցը՝ Բառնաբաս, որ աւելի հին հաւատացեալներից էր, պաշտպանում էին այն կարծիքը, թէ դէպի Քրիստոս ունեցած հաւատը միակ փրկութեան ճանապարհը լինելով նորա հետևողների համար, օրէնքն այլ ևս պարտաւորեցուցիչ ոյժ ունենալ չի կարող: Սոքա ընտրուեցան Անտիոքի համայնքի կողմից, որ երթան Երուսաղէմ և Քրիստոսի բուն առաքեալներին առաջարկեն իրենց զբաղեցնող խնդիրը պարզել:

Առաքեալները ժողովուեցան և Պօղոսի ու Բառնաբասի բացատրութիւնները լսելուց յետոյ համաձայնութեան եկան, որ յիրաւի պէտք չէր հեթանոսութիւնից դարձողների վերայ օրէնքի լուծը դնել, այլ կարելի էր միայն այնպիսի գործնական միջոցներ ձեռք առնել, որ օրինապահ հրէաները հեշտութեամբ ընդելանան նոցա հետ համայնական կեանք վարելու: Թէպէտ այս նկատմամբ եղած փորձերը յաջողութիւն չգտան և քրիստոնեայ հրէա-

ներից շատերը շարունակեցին խորթ աչքով նայել հեթանոսութիւնից դարձողների վերայ, մինչև իսկ հալածանհանեցին Պօղոս առաքեալի ու նորա համախոհների դէմ որոնք ամենայն եռանդով պաշտպանում էին աւետարանազատութեան սկզբունքը, բայց և այնպէս Առաքելական ժողովի որոշումն այն մեծ արդիւնքն ունեցաւ որ քրիստոնէական համայնքը դարձաւ բոլորովին անկախ հրէութիւնից, և հեթանոսներն անարգել կարող էին նորա մէջ մտնել: Շատ չանցած՝ վերջիններս այնչափ բազմացան և այնպիսի գերակշռող դիրք գրաւեցին համայնքի մէջ որ հրէայ տարրը կամ պէտք էր բոլորովին նոցա համակերպէր, կամ բաժանուէր և մի առանձին աղանդաւոր երևոյթ ստեղծէր: Մանաւանդ Երուսաղեմի կործանումից յետոյ, երբ հրէութիւնը զրկուեց իւր կենտրոնական սրբավայրից, և քաղաքական անկման հետ նորա բարոյական ուժերն էլ սաստիկ ջլատուեցան, գրեթէ ոչ մի ազդեցութիւն չէր կարող ունենալ այլ ևս քրիստոնէական համայնքի վերայ, որ այդպիսով աճեց ու զարգացաւ զուտ հեթանոսական միջավայրում: Քրիստոնեաներն սկսեցին հրէաների վերայ նայել իբրև Աստուծուց մերժուած «խաչահանուների» ժողովրդեան վերայ, իսկ իրենց համարել ճշմարիտ Իսրայէլ՝ մի նոր սերունդ ընտրեալների, որ կոչուած է հնի տեղ բռնելու և նախահայրերին եղած աւետաւոր խոստմանց իրականացումը տեսնելու: Բ. դարի միջոցներում նոցա և հրէաների մէջ փոխադարձ թշնամութիւնը կատարեալ էր. եկեղեցին դարձաւ ամբողջովին «հեթանոսաց եկեղեցի», և քրիստոնեայ հրէաների մի փոքրիկ համայնք միայն՝ իբրև աղանդ հալածուած հաւասարապէս թէ քրիստոնեաներից և թէ հրէաներից, մի երկու դար պահեց դեռ իւր աննկատելի գոյութիւնը:

**Դ. Առաքեալների եւ նոցա աշակերտների գործունէութիւնը:**—Մի հին աւանդութեան համաձայն՝ Առաքելական ժողովից յետոյ Քրիստոսի առաքեալները, որոնցից արդէն Յակովբոս, Զեբեդեայի որդին, նահատակուած էր, Երուսաղէմի համայնքի գլուխ կարգելով Յակովբոս Տեառնեղբօրը, իրենք ցրուեցան աշխարհի զանազան կողմերը՝ քարոզելու: Ուշ ժամանակի աւանդութիւնները նոցա տանու

են հեռաւոր երկիրներ և իւրաքանչիւրին իբրև այս կամ այն ընդարձակ աշխարհի լուսաւորիչ ներկայացնում: Սակայն նոցա մեծ մասի գործունէութեան վերաբերմամբ ո՛չ մի ստոյգ պատմական յիշատակ չի մնացել. մասամբ գուցէ այն պատճառաւ, որ նոքա գործել են այնպիսի տեղերում, ուր գրի գործածութիւնը շատ սակաւ էր և առհասարակ պատմութիւն չի պահուել. մասամբ էլ, որ իրօք սահմանափակ է եղել այդ քարոզութեան շրջանը, և աւանդութիւնը ընդարձակել է՝ յաջորդ դարերում եկեղեցւոյ կատարա՛ծ մեծ նուաճումների տպաւորութեան ներքոյ: Ամէնից աւելի տեղեկութիւն ունենք Պօղոս առաքեալի մասին, որ, Փոքր Ասիոյ գրեթէ բոլոր կարևոր կենտրոններում քարոզելուց և համայնքներ հաստատելուց յետոյ՝ դէպի Մակեդոնիա ու Յունաստան անցաւ, Բալկանեան թերակղզու զանազան մասերում աւետարանի սերմեր ձգեց. իսկ իբրև կալեալ Երուսաղէմից Հռոմ տարուելով՝ այնտեղ ևս մեծապէս նպաստեց քրիստոնէական համայնքի զօրանալուն: Նորա գործակիցներն ու աշակերտները, ինչպէս վերև յիշուած Բառնաբաս, Սիղուանոս, Տիմոթէոս և այլն, անշուշտ իրենց գործունէութեամբ նոյնպէս մեծապէս նպաստեցին, որ Պօղոս առաքեալի քարոզութիւնը ամենաընդարձակ ազդեցութիւն ունեցաւ քրիստոնէութեան զարգացման վերայ և ամէնից կենդանի հետքեր թողեց:

Ինչպէս մի շարք պատմական յիշատակներից երևում է, մի որոշ շրջանում առանձնապէս խոր և տևական է եղել նաև Յովհաննէս Աւետարանչի ազդեցութիւնը, որ ըստ հին աւանդութեան շատ երկար՝ մինչև Բ. դարի սկիզբը, ապրել է Եփեսոսում, ուր հովուական խնամքը տարածել շրջակայքի վերայ, և թողել է մի շարք նշանաւոր աշակերտներ, որոնք մի քանի սերունդ բերնէ բերան աւանդելով կենդանի էին պահում նորա քարոզած սկզբբունքները: Իսկ Պետրոս առաքեալի համար այնչափը գոնէ յայտնի է, որ Առաքելական ժողովից յետոյ եղել է Անտիոքում, հաւանականաբար քարոզել Փոքր Ասիայի մի քանի քաղաքներում և, շատ հին աւանդութեան համաձայն, 64 թ.-ին՝ Պօղոս առաքեալի հետ միաժամանակ, նա-

հաստատուել Հռովմում: Իբրև Նորա թարգման և գործակից է յիշուում Յովհաննէս Մարկոս աւետարանիչը, որ առժամանակ եղել է Նաև Պօղոս առաքեալի սպասաւոր ու գործակիցը, և ըստ աւանդութեան դարձել է առաջին Աղէքսանդրիոյ առաջին եպիսկոպոսը: Առաքելական քարոզիչներից մէկն է վերջապէս ս. Ստեփանոս Նախավկայի պաշտօնակից Փիլիպպոս, որ Սամարիայում քարոզելուց յետոյ, իւր մարգարէուհի դուստրների հետ՝ երկար տարիներ ապրել և գործել է Փռիւգիայի Հիերապոլիս քաղաքում: Յամենայն դէպս առաքելական շրջանի քարոզիչների գործունէութիւնը, եթէ այնչափ ընդարձակութիւն չէ ունեցել, որչափ վերագրում է նրանց աւանդութիւնը՝ մինչև աշխարհի ծայրերը հասցնելով աւետարանի քարոզութիւնը, գոնէ Հռովմէական պետութեան սահմաններում այնքան մեծ տեղ էր գրաւել և այնպիսի հաստատուն արմատներ ձգել, որ արդէն Բ. դարի սկզբներին Հռովմի կայսրերն ու քաղաքական նշանաւոր գործիչներ կարևոր են համարում լուրջ ուշադրութիւն դարձնել և խիստ միջոցներ ձեռք առնել նրա դէմ:

Ս. Աւետարանի տարածման նպաստող հանգամանքները:- Ամենակարևոր հանգամանքն այն է անշուշտ, որ քրիստոնէութեան առաջին դարերում՝ ինչպէս աւետարանի օրրան Պաղեստինը, այնպէս և ժամանակի գրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը գտնուում էր Հռովմայեցւոց իշխանութեան, կամ քաղաքական ազդեցութեան ներքոյ: Այս հսկայական պետութեան ընդարձակածաւալ սահմաններում ի մի ձուլուած բազմազան ազգերի միջից որոշ չափով վերացել էին ցեղական ու կրօնական խտրութիւնները: Հռովմի հզօր կայսեր հովանաւորութիւնը բոլոր հպատակներին ապահովութիւն էր պարգևում. հռովմէական արդարակշիռ օրէնքը անիրաւ զրկանքների դէմ պաշտպանում, հարթում էր հետզհետէ իշխանի և ստրուկի միջև եղած մեծ անջրպետը և ամէնքին Հռովմի հաւասար քաղաքացիներ դարձնում: Յունարէնը ընդհանուր գործածական լեզու էր ամբողջ պետութեան մէջ. յունական ուսում ու արուեստը ամենուրեք մուտք էին գտնում, մտքեր լուսաւորում և բարքերը կրթում: Բոլոր գաւառներում

մի սահմանից մինչև միւսը, ձգուում էին լայն, բանուկ, ապահով ճանապարհներ, որոնցով՝ ինչպէս մինչև այդ ժամանակ հռովմայեցի զինուորն ու պաշտօնեան, յոյն ուսուցիչն ու վաճառականն էին ազատ անարգել երթևեկել, այնպէս էլ երթևեկում են այնուհետև աւետարանի քարոզիչները։ Հռովմն ամենայն ներողամտութեամբ թոյլ էր տալիս, որ հպատակ ազգերից իւրաքանչիւրն իւր ուզած կրօնը պաշտէ, միայն թէ ճանաչուած լինի այն տիրող օրէնքի կողմից՝ չդիպչելով նորա հիմնական կէտերին։ Յունաց փիլիսոփայութիւնը՝ հեթանոսական աստուածութիւնների մասին եղած, պարզամիտ հաւատալիքներն ու նախապաշարումները ցրելով, իսկ արևելքից մուտք գործող նորանոր կրօնները, իրենց խորհրդաւոր պաշտամունքով և ճոխ պատկերացումներով՝ մարդոց երևակայութիւնն ու զգացումները գրգռելով, ընդարձակ շրջաններում յառաջ էին բերել բուռն տենչ՝ ամբողջ մարդկութեան. բարոյական և մտաւոր աշխարհայեցողութիւնը ղեկավարող մի համատարած կրօն ունենալու։

Քրիստոնէութիւնը հէնց այն կրօնն էր, որ այդ պահանջին բազմակողմանի կերպով բաւարարութիւն էր տալիս։ Կեանքի նպատակի բանական ըմբռնումն և նորան հասնելու բարոյական զօրութիւն պակասում էր թէ մարդկութեան այն մեծ զանգուածին ընդհանրապէս, որ Հռովմէական պետութիւնն էր ներկայացնում, և թէ սորա իւրաքանչիւր քաղաքացուն առանձնապէս. իսկ քրիստոնէութիւնը ձգտում էր, անհատներին կրթելով՝ ամբողջ մարդկութիւնն այդ ուղղութեամբ վերակենդանացնել։ Նորա հիմնական ճշմարտութիւններն այնչափ պարզ էին, որ ամէն մի հասարակ ու անուս մարդ դիւրութեամբ ըմբռնել կարող էր. բայց միևնոյն ժամանակ աստուածային նախախնամութեան և մարդկային հոգու ամենախոր գաղտնիքները թափանցելով՝ անսպառ խորհրդածութեան նիւթ էր մատակարարում նա իմաստունին և գիտունին։ Միաստուածութեան կրօնը՝ հրէութեան օրինակով և յոյն փիլիսոփայութեան արդիւնքով նախապատրաստուած և մատչելի դարձած այն գաղափարը, թէ տիեզերքի մէջ մի [illegible]ութիւնք, մի հաստատուն օրէնք, մի նախախնամող դ

ղութիւն է իշխում, և ոչինչ են հեթանոս ազգերի շինած կուռքերն ու երևակայած փոփոխամիտ, վատաբարոյ աստուածութիւնները, ներկայանում էր այստեղ իւր բոլոր վսեմութեամբ՝ ազատ հրէաների ազգային սահմանափակումներից և փիլիսոփաների անորոշ վարկածներից: Փրկագործութեան գաղափարը՝ նիւթական ստոր բնութեան կապանքներից ազատուելու և դէպի մի հոգեղէն, լուսաւոր, երանական աշխարհ դիմելու փափագը, որ այնչափ հրապուրիչ էր դարձնում արևելեան կրօնների խորհրդաւոր պաշտամունքը, արտայայտւում էր աչքանչելի պարզութեամբ Աստուծոյ Որդու մարդեղութեան և խաչելութեան խորհուրդների մէջ: Որչափ և արդար լինէր հաւասարական դատաստանը, որչափ խստապահանջ հրէական օրէնքը՝ նորա փայլը նսեմանում էր աւետարանի վեհ բարոյական սկզբունքների և յաւիտենական դատաստանի այն փառաւորեալ պատկերի առաջ, որ Փրկիչն էր գծել: Ո՛չ մի կրօն, ո՛չ մի վարդապետութիւն, ո՛չ մի գեղարուեստական ստեղծագործութիւն չէր կարող ընծայել կեանքի այնպիսի առաջնորդ, որպիսին Նա էր՝ Երկնաւոր վարդապետը, որի խօսքը գործ էր, իւրաքանչիւր քայլափոխը սրբութեան և ճշմարտութեան օրինակ: Քրիստոնէութիւնը ամէն ինչ ունէր՝ թէ զգացմունք ջերմացնելու, թէ կամք զօրացնելու և թէ միտք սնունդ տալու համար. ուստի զարմանալի չէ, որ նա զօրեղ տարածութիւն պէտք է գործէր ամէն մի զգայուն սրտի և կենդանի հոգու տէր անձի վերայ, և բոլոր դէպի վերինը նկրտելու ընդունակ մարդիկ գտնուէին շուտով նորա հետևողների շարքում:

Զ. Քրիստոնէութեան դէմ հանած հալածանքները — Զննելով յիշած և ուրիշ նման նպաստաւոր պայմանները՝ քրիստոնէութիւնը մեծամեծ արգելքների պիտի յաղթէր և ծանր հալածանքների դիմանար, մինչև համաշխարհային կրօն դառնալը: Վերև ակնարկեցինք, թէ ինչպէս մեծ թշնամութիւն յառաջացաւ նորա դէմ և հետզհետէ զարգացաւ հրէութեան մէջ, որ այնքան նորա տարածման առաջին օրերին բուռն Հրէաստանում հանած հալածանքներով վտանգաւոր չեղաւ, որքան դուրսը՝ հեթանոսների մէջ ցանած ատելութեամբ, ստոյգ լուրջ-

ըով և ռուսապետական զրպարտութիւններով։ Բայց առանց
դորան էլ Հեթանոս ժողովուրդը շատ պատճառներ ունէր
քրիստոնէութեան դէմ զինուելու։ Նա այնպէս վարժուել
էր կրօնը բազմաթիւ աստուածութիւնների շօշափելի
պատկերների և նրանց մատուցած ճոխ պաշտամունքի ու
զոհաբերութիւնների մէջ տեսնել, որ քրիստոնէական մի-
աստուածութիւնը՝ իւր բարձր գաղափարներով և հոգևոր
պաշտամունքով, հասարակ դասի աչքին իբրև անկրօնու-
թիւն ու անաստուածութիւն էր երևում։ Բարքերի այն
սոսկալի ապականութիւնը, որի մէջ լողում էր այդ ժո-
ղովուրդը, անընդունակ էր դարձնում շատերին աւետա-
րանի ցոյց տուած մաքուր բարոյականութիւնը ըմբռնե-
լու և տարրական չափերով անգամ գործադրելու։ Կեղ-
ծիք և ցնորք էին համարում նոքա նոր կրօնի բարոյական
պահանջները և տրամադիր էին իրենց կողմից նորա հե-
տևողներին ամէն տեսակ գաղտնի պղծագործութիւն-
ների մէջ մեղադրելու։ Ուստի քրիստոնեաների հակառա-
կորդների համար դիւրին գործ էր ամբոխին գրգռել նոցա
դէմ, և շատ անգամ այդ գրգիռը այնպիսի ծայրայեղու-
թիւնների էր հասնում, որ նոյն իսկ հեթանոս պետու-
թիւնը ստիպուած էր պաշտպանել հալածուածներին խոշ-
տանգումներից ու արիւնհեղութիւնից։

Կրթուած դասն սկզբում աւելի քիչ էր ուշադրու-
թիւն դարձնում քրիստոնեաների վերայ և համարում
էր նրանց ցնորամիտ մոլորեալներ, որոնք իրենց տգիտու-
թեամբ կամ տարօրինակ դատողութեամբ անհեթեթ
բաների հաւատում են. բայց երբ եկեղեցին զօրացաւ և
արտաքուստ իսկ մի պատկառելի հաստատութիւն դարձաւ՝
հետզհետէ հանդէս եկան մեծ ու փոքր հեղինակների և
փիլիսոփաների քննադատական, երգիծաբանական ու վի-
ճաբանական գրուածներ։ Ամենանշանաւորը և ժամանակով
վերջինը նոցա մէջ Պորփիւրոս փիլիսոփան է, որ լաւ ու-
սումնասիրել էր Սուրբ Գիրքը և, աւելի տեղեակ, հիմնա-
ւոր ու խորաքննին քննադատ լինելով քան իւր նախորդնե-
րը՝ շատ հոգս է պատճառել ժամանակակիցներին. մի
քանի եկեղեցական հայրեր միմեանց ետևից հերքողական
շարադրութիւններ են գրել նորա դէմ, և ստրունդէ —

բունդ յիշուել է նա իբրև քրիստոնէութեան ամենավտանգաւոր և ամենոխերիմ թշնամի։

Սակայն այս բոլորից աւելի աղէտալի եղաւ քրիստոնէութեան համար և խիստ թանգ նստեց այն հանգամանքը, որ նա չէր կարող հաշտուել պետական օրէնսդրութեան հետ և ուրիշ կրօնների նման ներողամիտ վերաբերմունք գտնել։ Նա ներկայանում էր ո՛չ իբրև մի հաւատարը միւսների շարքում, այլ իբրև բացարձակ ճշմարիտ կրօն, որի առաջ մնացածները ստում են և իրենց գոյութեան իրաւունքը կորցնում։ Իսկ այդ ժամանակ ընդհանուր ընդունելութիւն գտած և Հռոմի բոլոր հպատակների համար պարտաւորեցուցիչ դարձած կրօնական արարողութիւն էր այն պաշտամունքը, որ մատուցւում էր յանուն կայսեր։ Այդ պաշտամունքի մէջ գաղափարական մարմնացում էր գտնում պետութեան գաղափարը. ամէն մի փոքր և շատ աչքի ընկնող կենտրոններում նորան նուիրած տաճարներ կային և պաշտօնեաներ, որոնք հսկում էին նորա ճշտիւ կատարման վերայ՝ խոնարհ երկրպագութիւն պահանջում կենդանի կայսեր պատկերի և մեռած ու աստուածների կարգն անցած կայսրների ոգիների առաջ։ Քրիստոնեան բնականաբար հրաժարուելով պիտի հրաժարուէր այդպիսի կոպիտ մարդապաշտութիւնից, և ահա նա նկատուում էր իբրև արհամարհող կայսեր ու ապստամբ, որչափ և այլապէս հաւատարիմ հպատակ լինէր ու արդարամտութեամբ հետևէր «Կայսերը կայսեր տալու» սկզբունքին —Ներոն կայսեր քրիստոնեաների դէմ հանած հալածանքը առաջին դարում պատահական բնաւորութիւն ունէր հաւանականաբար հրէաների տարածած սուտ լուրերից էր յառաջ եկել։ Բայց Բ. և Գ. դարերի միւս բոլոր հալածանքների համար, կարելի է ասել, գլխաւոր շարժառիթը եղել է յիշեալ ոգեղ պաշտամունքի դէմ մեղանչելը։ Բ դարի զօրեղ կայսրները՝ Տրայանոս, Ադրիանոս, Մարկոս Աւրելիոս անվայել էին համարում դեռ լրտեսների և մատնիչների ցուցումներով օգտուելը և հրամայում էին պատժել քրիստոնեաներին այն դէպքում միայն, երբ նոքա յայտնի կերպով մերժում էին օրէնքը և հրապարակաւ հրաժարուում կայսեր պատկերին երկրպագելուց։ Այդ պատճառաւ նոցա

օրերում եղած հալածանքները շատ սահմանափակ թուով զոհեր են տարել: Ուրիշ էր Դեկոս կայսեր հալածանքը 249 թ. ին, որի հրովարտակի համաձայն ամէն քրիստոնեայ առանց բացառութեան պէտք է բռնադատուէր՝ կամ նոր կրօնն ուրանալ կամ մահուան պատժի ենթարկուել, և Վալերիանոսի հալածանքը 258 թ. ին, որ, եկեղեցին անհովիւ ու անառաջնորդ թողնելու համար՝ կարգադրել էր ամէն տեղ հոգևորականներին և համայնքի աչքի ընկնող անդամներին ձերբակալել ու մահուան դատապարտել: Այդ հալածանքներն ևս թէպէտ խիստ արիւնահեղ, բայց բարեբաղդաբար կարճատև եղան. մինչդեռ վերջին հալածանքը, Դիոկղետիանոս կայսեր օրով, որ 302 թ. ին սկսուեց և մինչև 311 թ. ը տևեց՝ իբրև մի վերջին յուսահատ փորձ արագ քայլերով յառաջացող քրիստոնէութիւնը արեան մէջ խեղդելու, սարսափելի աւերումներ գործեց եկեղեցու մէջ և հազարաւոր նահատակներ խլեց նորանից:

Բայց այս հալածանքները սպասածի հակառակ արդիւնք ունեցան: Նահատակների իրենց տանջանքների մէջ ցոյց տուած անյողդողդ հաւատն ու գերմարդկային համբերութիւնը, իբրև մի հրաշալի ներքին զօրութեան երաշխիք՝ ամենազօրեղ տպաւորութիւն էին գործում շրջապատողների վերայ և հարիւրաւոր սրտեր գրաւում: Նոցա թափած արիւնը, ինչպէս ասում են ժամանակակիցները, սերմ էր դառնում՝ հաւատացեալների թիւը բազմապատկելու համար: Որչափ ծանր էր հալածանքը, եկեղեցին ելնում էր նորա միջից այնչափ աւելի ներքուստ ամրապնդուած, անյուսալի տարրերից զտուած և յառաջադիմութեան նոր քայլերի համար կենսունակ դարձած. այնպէս որ խիստ պատկառելի մեծութիւն էր ներկայացնում այն ժամանակ, երբ վերջին հալածանքը դադարեց:

Է. Հնագոյն աղանդները:—«Հրէական աղանդի» մասին արդէն յիշեցինք:—Աւետարանի ուսումն իսպառ աղաւաղելու և քրիստոնէութիւնը արևելեան կրօնների ու արևմտեան իմաստասիրութիւնների մի տարօրինակ խառնուրդ դարձնելու ծանր փորձը յատուկ բերին այն աղանդները, որոնք հեթանոսական հողի վերայ հանդէս եկան Բ. դարում և յայտնի են «Գնոստիկեան» ընդհանուր անունով:

Այդ անունը նոքա տուացել են յունարէն գնոզիս—գիտու
թիւն բառից՝ այն պատճառով, որ յանձին Քրիստո
նեայք ունեցած աստուածային յայտնութիւնը նկատում
էին իբրև միջոց՝ բարձրագոյն գիտութիւն ձեռք բերելու
տիեզերքի, աստուածագործութեան, հոգու և մարմնի փ
խադարձ յարաբերութեան գաղտնիքներն ըմբռնելու
բառ այնմ կեանքի նպատակն ու գործ համապատա
խան ընթացքը որոշելու։ Նոցա բոլորի սկիզբը գնոստ հո
մարուում է «Գործք առաքելոց»ի մէջ յիշուած Սիմոն Մոգ,
որ յէրաւէ պատմական կարևոր դեր խաղացել է։ Հա
ւանականաբար որա հայրենիք Սամարիայում ու հարևա
Ասորիքում է տեղի ունեցել ամէնից առաջ այն շփու
արևմուտքի և արևելքի մէջ, որով յունական շարժու
միտքը Բաբելոնի և Առաջաւոր Ասիայի կրօնական ն
առասպելաբանութիւններից խորհրդաւոր պատկերացու
ներ փոխ առաւ և, նոցա մէջ զանազան վերացական գ
ղափարներ ամփոփելով՝ ստեղծեց մի առանձնայատուկ
կրօնի փիլիսոփայութիւն։ Իսկ քրիստոնէութիւնից Աստու
ծոյ Որդու մարմնացման գաղափարը վերցնելով՝ այդ փ
լիսոփայութիւնը հնարաւորութիւն էր ստանում բաց
տրելու, ի թիւս այլոց, իւր ամէնից կնճռոտ խնդիրը, ի
ինչպէս պէտք է նիւթական աշխարհի մէջ գերուած հոգիք
կամ լուսաւոր տարրերն ազատուելն ու իրենց յաւիտենա
կան աղբիւրի մօտ վերադառնան։ Եւ այս ձևով ըմբռ
նած փրկագործութեան գաղափարն էր գնոստիկեանների
համար քրիստոնէութեան հիմնական կէտն ու նորանց մի
ճշմարիտ կրօն դարձնողը։ Քրիստոսի պատմութիւնը նոքա
նկատում էին իբրև մի կարևոր օղակը տիեզերքի պատմու
թեան, որ սկսուում է աստուածային էութիւնից մի կա
ընկնելով և նիւթի հետ խառնուելով. իւր շրջման կէտ
է հասնում Փրկչի մարմնացմամբ, երբ նիւթի մէջ փ
կուած հոգիները իրենց աստուածային ծագումը ճանա
չում են և ճգնութեան ու սրբազան խորհուրդների միջ
ցաւ փրկութեան դիմում. իսկ վախճանը տեղի կունենա
այն ժամանակ, երբ բոլոր հոգեղէն տարրերը ազատուա
կլինեն։ Զանազան գնոստիկեան դպրոցների առաջնորդն
զանազան կերպով են պատկերացնում այս տիեզերակա

դրամայի ընթացքը․ ոմանց մօտ գերակշռում է տեսութիւնը, ոմանց մօտ կրօնական առասպելը․ իսկ նոցա հետևողները մեծ մասամբ միայն կրօնական ծէսերին և ճգնական վարժութիւններին էին մասնակցում՝ առանց քան հասկանալու փիլիսոփայական տեսութիւններից։

Հասարակ ժողովրդեան անմատչելի լինելուն հետ միատեղ այդ տեսութիւնները պարունակում էին նաև շատ այնպիսի կէտեր, որոնք երբէք չէին կարող հաշտուել քրիստոնէութեան հետ և խիստ խորթ պէտք է հնչէին աւետարանի քարոզութեան փոքր ի շատէ ընդելացած ականջներին։ Օրինակ՝ ստեղծագործութեան մասին տուած բացատրութիւնը, որով ներկայանում էր այն ոչ թէ Բարձրեալ և անիմանալի Աստուծոյ կամքով եղած, այլ մի երկրորդական էակի ոտնձգութիւն, որ Բարձրեալի մասին գաղափար չունէր և նորա մօտից ընկած աստուածային կայծը նիւթի հետ խառնելով ու աշխարհն ստեղծելով՝ իրեն Աստուած երևակայեց և Հին Կտակարանի յայտնութիւնները տուաւ․ մինչև որ Քրիստոսի գալստեամբ խաբէութիւնը բացուեց։ Հետևաբար Հին Կտակարանը կորցնում է ամէն նշանակութիւն և չի կարող աւետարանի հաւասար աստուածային յայտնութիւն համարուել։

Գնոստիկեաններն այսպիսով շատ քիչ հետևողներ ունեցան և կարճ ժամանակի մէջ անյայտացան։ Նոցանից մէկը միայն՝ Մարկիոն, գործնական դառնաց և, վերացական հարցերը մի կողմ թողնելով՝ ձեռնարկեց ուղղակի մի նոր եկեղեցական համայնք կազմակերպելու։ Նա համարում էր, թէ Քրիստոսի աշակերտները սխալ են հասկացել նորա աւետարանը և աղաւաղել են Հին Կտակարանի ազդեցութեամբ․ ուղիղ է ըմբռնել միայն Պօղոս առաքեալը, որի քարոզութեան համեմատ և դատել պէտք է քրիստոնէութիւնը․ հաւատ և սէր պէտք է միայն ունենալ, խիստ ճգնական կեանքով աստուածային շնորհը վաստակել, և այդպէս փրկութիւն գտնել։— Մարկիոնի կազմած համայնքները դեռ Ե. դարում գոյութիւն ունէին և մտահոգութիւն էին պատճառում եկեղեցական հայրերին․ նոքա տարածուած էին Եփրատի միջին հովտում, ինչպէս երևում է ազդեցութիւն են գործել նաև Հայերի վերայ և այդ

պատճառ եղել, որ Նոցա աղանդի դէմ հերքում է գր-
մեր Եզնիկ Կողբացին։

Որոշ տեսակէտից գնոստիկականութեան բոլորովի
հակառակ ուղղութիւն ունէին և զուտ եկեղեցական հո
վերայ յառաջ եկան՝ Բ. դարի վերջերում, այդպէս կո
չուած Միօնարխիանական աղանդաւորները։ Նոցա ընդհանու
ձգտումն է՝ գնոստիկեանների քարոզած երկուութեա
դէմ պաշտպանել մաքուր միաստուածութեան գաղափա
րը, բացատրելով միանգամայն Փրկչի աստուածային ա
ռնչութիւնը Հօր հետ։ Նոցա մի մասը Յիսուսին համարու
է սոսկ մարդ, որ վերուստ Աստուծոյ Բանը, կամ առա
քոյ կարգի աստուածային ներշնչում, ընդունելով՝ կարո
ղանում է աստուածանման կեանք վարել, հրաշքներ գոր
ծել և աստուածային փառքի հասնել։ Միւս մասն ընդհա
հառակը՝ Նորա կատարեալ Աստուած լինելը չեշտել
համար, ընդունում է Նորան իբրև Նոյն Հօր Աստուծ
մարմնացումն, կամ մի առանձին ժամանակաւոր կերպա
րումն։ Այս տեսութիւններից երկրորդն աւելի մօտ
ժամանակակից քրիստոնեաների ըմբռնման և աւելի ը
դարձակ շրջաններում տարածուեցաւ. բայց առաջինը, կա
Որդեգրական կոչուած աղանդը, աւելի ազդեցութիւն
աւելի զգալի հետևանքներ ունեցաւ արևելքում. մանա
ւանդ երբ Նորա ներկայացուցիչ հանդիսացաւ Գ. դար
երկրորդ կիսում ապրող Անտիոքի եպիսկոպոս Պօղոս Սա
մոսատացին։ Յատկապէս այս Սամոսատացու քարոզա
որդեգրական ուսումը երկար ժամանակ պահուեց Հայա
տանի սահմաններում և, ինչպէս յետոյ կտեսնենք, կա
րևոր դեր պէտք է խաղացած լինի մեր պատմութեա
մէջ։ Իսկ ուրիշ սոյն դարաշրջանում յառաջ եկած աղանդ
ները շատ սակաւ առնչութիւն ունեն մեր եկեղեցա
պատմութեան՝ հետ. եթէ չհաշուենք Մանիքեցութիւն
որ իսկապէս քրիստոնէութեան մրցակից մի նոր արև
ւելեան կրօն էր, և ոչ քրիստոնէական աղանդ։

Ը. Առաքելական հայրեր, ջատագովներ եւ Աղեքսանդրիո
յի դպրոց։—Եթէ եկեղեցին յիշած վտանգներին ու փոր
ձութիւններին յաղթողութեամբ դիմադրեց՝ որոշ չափո
պարտական է իւր այն ականաւոր ներկայացուցիչներին

րոնք աւետարանի ճշմարիտ վարդապետութիւնն ու ա-
ռաքելական մաքուր աւանդութիւնը իրենց գրուածների
մէջ կենդանի պահեցին և ժամանակի աշխարհայեցողու-
թեան համեմատ այնպիսի ձևակերպութիւն տուին, որ իւ-
րաքանչիւր քրիստոնեայ հակառակորդի դէմ սորա զէնքով
ռուել ու իւր հաւատը պաշտպանել կարող էր: Նոցանից
յնպիսիները, որոնք Ա. դարի վերջերում և Բ. դարի
կզբներում են ապրել, իբրև առաքեալների հետ անմի-
ական հաղորդակցութիւն ունեցող՝ Առաքելական հայրեր
ն կոչւում: Նոցա մի քանի գրուածները միայն մեզ յայտ-
ի են, որոնք այնչափ յարգի են եղել, մինչ Աստուածա-
շնչի ձեռագիրների մէջ են մտել և գրեթէ նոր կտակա-
անի գրքերի հաւասար գործածութիւն գտել: Աւելի
անօթ է Իգնատիոս Աստուածազգեաց Անտիոքի եպիսկո-
ոսը, որ երբ կապուած Հռովմ էր տարւում գազանների
ռաջ ձգուելու, ճանապարհին եօթ խրախուսական թղթեր
րեց զանազան համայնքների: Ապա Զմիւռնիայի Պողիկար-
ոս եպիսկոպոսը, որ ինքն էլ մի թուղթ ստացել է Իգ-
ատիոսից և նորա թղթերի առթիւ մի թուղթ գրել Փ
իպպէի համայնքին: Երկուսն էլ եղել են մտիկ յարաբե-
ութեան մէջ Յովհաննէս աւետարանչի հետ և նորա նման
որ ըմբռնել ու արտայայտել աւետարանի ճշմարտու-
իւնները: Կայ նոցա թղթերի նաև հին հայերէն թարգ-
մանութիւնը:

Առաքելական հայրերի յաջորդներ և մասամբ աշա-
կերտներ կարող են համարուել այդպէս կոչուած Ջատա-
ովները, որոնց գործունէութիւնը ընկնում է աւելի Բ.
արի երկրորդ կէսի մէջ: Սոքա լաւ հրահանգուած լինե-
ով ժամանակակից յունական գիտութեամբ՝ ծառայեցրին
յդ գիտութիւնը հեթանոսների կրթուած դասակար-
ին աւետարանական գաղափարները մատչելի դարձ-
նելու, քրիստոնէութիւնը նորան հալածող հռովմէական
այսրների ու մեծամեծների առաջ ջատագովելու և
հոստիկեանների մոլորութիւնները հերքելու համար:
ոցա մէջ աչքի է ընկնում՝ ծագմամբ Սամարացի,
ուստինոս փիլիսոփան, որ վաթսունական թուականներին
ռովմում նահատակուեց և թողել է՝ երկու բազմակող-

մանի կարևորութիւն ունեցող ջատագովութիւններ հեթանոսների, և մի բանախօսութիւն հրէաների դէմ: Աւելի նշանաւոր է ս. Իրենէոս կամ Երանոս՝ Պողիկարպոս Զմիւռնացու աշակերտը, որ և «Հետևող առաքելոց» է ասուած մեզանում՝ իր ուսուցածները Փրկչի աշակերտներից անմիջական մի աշակերտի վկայութեանց վերայ հիմնելուն համար: Ծննդեամբ նա հաւանականաբար Փոքր Ասիայից էր կամ Ասորիքից. բայց յետոյ եղաւ Գալլիայի Լիոն քաղաքի համայնքի եպիսկոպոսը և երևի նոյնպէս նահատակութեամբ կնքեց իր կեանքը: Նորա բազմաթիւ գրուածներից պահուած համարում էին միայն «Ընդդէմ հերձուածոց» հինգ ընդարձակ գրքերը, որոնք այդ կարգի գրուածքների մէջ առաջին տեղն են բռնում և առհասարակ ամենամեծ արժէք ունին՝ Բ. դարի քրիստոնէութեան ի մօտոյ ծանօթանալու համար: Սակայն վերջերս գտնուեցաւ նաև նորա «Ցոյցք առաքելական քարոզութեան» անունով գրուածքի ամբողջական հայերէն թարգմանութիւնը, որ գերմաներէն փոխադրութեան հետ հրատարակուած է և, ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս՝ ներկայացնում է ամփոփումն քրիստոնէական հաւատալիքների այն ձևով, ինչպէս ըմբռնւում էր Բ. դարի վերջերում:— Առաջին անգամ հայերէն թարգմանութեամբ գտնուեցաւ նաև ամենահին ջատագովներից մէկի՝ Արիստիդէս փիլիսոփայի, Ադրիանոս կայսեր ուղղած ջատագովութեան մի կարևոր հատուածը:

Յունական փիլիսոփայութեան մասնակարգուած տեսութիւններով քրիստոնէական գիտութիւն մշակելու գործը, որին ջատագովները կողմնակի կերպով միայն նպաստեցին իրենց գրուածներով՝ Բ. դարի վերջերից սկսած հաստատուն հիմքերի վերայ դրուեցաւ Աղէքսանդրիայում: Այստեղ հիմնուած «Երեխայից դպրոցը», որի նպատակն էր սկզբում հեթանոսութիւնից դարձողներին քրիստոնէական դաւանութեան տարրական գիտելիքների հետ ծանօթացնել և այդպիսով մկրտութեան համար նախապատրաստել՝ շատ շուտով դարձաւ մի բարձրագոյն գիտական հաստատութիւն: Նորա առաջին նշանաւոր ներկայացուցիչն է Կղեմէս Աղէքսանդրացին, որ մեր ձեռքը հասած երեք գլխա-

ւոր գրուածներում կամեցել է ուսումնասիրութեան նիւթ դարձնել քրիստոնէական կեանքի և վարդապետութեան վերաբերեալ բոլոր խնդիրները, և այսպէս առաջին անգամ աստուածաբանական գիտութեան մի ամբողջացած համակարգութիւն տալ: Սակայն այդ նպատակին հակապէս իրագործել է միայն նորա աշակերտ և յաջորդ Որիգենէսը, որ իւր բազմակողմանի հմտութեամբ, հսկայական գրաւոր աշխատութիւններով, ներքուն ու ամենաընդարձակ գիտնական պաշարով նախնի եկեղեցւոյ բոլոր աչքի ընկնող հեղինակներին գերազանցում է: Բացի դաւանաբանական գրուածներից նա տուել է Ս. Գրքի մի շարք ուսումնասիրութիւններ և մեկնութիւններ, բազմաթիւ ճառեր, բարոյական ու պատմական խնդիրների լուսաբանութիւններ, և հռչակուած է մանաւանդ իւր «Վեցիջեան» աստուածաշնչով, ուր Ս. Գրքի եբրայեցերէն բնագիրն ու յունարէն թարգմանութիւնները կողք կողքի դնելով՝ աշխատում է ժամանակի ընթացքում սպրդած աղաւաղումներից մաքրել և ճշգրիտ օրինակը վերականգնել:—Որիգենէսի աշակերտ և դպրոցի յաջորդ յայտնի ներկայացուցիչը Դիոնիսիոս եպիսկոպոս Աղէքսանդրացի է, որի գրուածներից միայն հատուածներ են մնացել՝ մի քանիսը հայերէն ձեռագրերում: Միւս աշակերտներից նշանաւոր է Գրիգոր Սքանչելագործը, որ Հայաստանի հարևան Պոնտոսում քրիստոնէութիւն տարածեց և եղև Նեո-Կեսարիայի եպիսկոպոս այդ երկրի լուսաւորիչը հանդիսացաւ: Նա թողել է մի ներբողեան իւր ուսուցչի համար, մեկնաբանական և այլ գրուածներ, որոնց մի քանիսից դարձեալ միայն հատուածներ են մնացել:

## ԳԼՈՒԽ Բ.

## Եկեղեցւոյ ընդարձակութիւնը եւ վարչական, դաւանական, ծիսական ու բարոյակրթական դրութիւնը Գ. դարի վերջին:

**Ա. Քրիստոնէութեան տարածման ընդհանուր երեւոյթը:—** Եթէ առաքեալների ժամանակի գաղափարով միայն ամբողջ

աշխարհը երբև աւետարանի քարոզութեան ասպարէզ էր նկատւում և իրականութեան վերայ չէր հիմնուած այն հաւատը, թէ այդ քարոզութեան լոյսն ամէն տեղ արդէն հասել է,—Դ. դարի վերջերին պաշտօնապէս իրականացած էր և այն ժամանակուայ քաղաքակրթուած ազգերին յայտնի սահմաններում երկիր չէր մնացել, ուր քրիստոնէութիւնը գոնէ նուազ չափով մուտք գործած չլինէր։ Մի քանի երկրներում բազմաթիւ քաղաքներ և գիւղեր կային, որոնց մէջ ազգաբնակութեան մեծագոյն մասը, երբեմն նոյն իսկ ամբողջը՝ քրիստոնեայ էր. կային գաւառներ, ուր հեթանոսութիւնը միայն առերևոյթ, տիրող իշխանութեան ճնշման ներքոյ՝ պահպանւում էր։

Նման երևոյթ նկատւում է նաև մի ուրիշ կողմից։ Մինչ նախնական շրջանում աւետարանն աւելի աղքատների ու խեղճերի համար էր և իւր հետևողների գերակշռող մեծամասնութիւնը հասարակութեան ստորին խաւերի մէջ էր գտնում՝ յաջորդ շրջաններում հետզհետէ մատչելի դարձաւ բոլոր դասակարգերին։ Վերջին կայսրները, ինչպէս առաջ ակնարկուեցաւ, իրենց հալածանքն ուղղում էին աւելի բարձր դասակարգերին պատկանող, դիրք և ազդեցութիւն ունեցող քրիստոնեաների դէմ, որոնք պատկառելի թիւ էին ներկայացնում պետութեան կարևոր կենտրոններում։ Ունևոր դասից, ազնուական ընտանիքներից, նոյն իսկ կայսերական տնից ականաւոր հաւատացեալներ ու բաւական թուով նահատակներ յիշւում են նոյն իսկ առաջին երկու դարերում, և նոցա մէջ շատ պատուաւոր տեղ են բռնում կանայք, որոնք սկզբից և եթ զգալի ծառայութիւն են մատուցել աւետարանի քարոզութեան գործին։ Ջատագովները, և մանաւանդ Աղէքսանդրիայի դպրոցը՝ մեծապէս նպաստեցին, որ կրթուած և գիտուն մարդիկ սկսեցին յարգանքով վերաբերուել դէպի քրիստոնէութիւնը, նորա գաղափարական սկզբունքներով ոգևորուել, հոգևոր մխիթարութեան հետ բարձր տեսութիւններ ևս որոնել նորա մէջ։ Առանձին կարևորութիւն ունի այն հանգամանքը, որ խիստ բազմաթիւ հաւատացեալներ կային, մանաւանդ վերջին ժամանակ՝ ամէն կարգի պետական պաշտօնների, մի քանի տե-

վերում նաև զօրքի մէջ. Թէպէտ այստեղ նոր կրօնի խոստովանութիւնը աւելի ծանր վտանգների հետ էր կապուած, և սոցա շարքերում աւելի յաճախ են պատահում նահատակներ, քան սոսկ քաղաքացիների շրջանում։ Յամենայն դէպս քրիստոնէութիւնը, նախ քան Հռովմէական պետութեան մէջ իբրև ազատ կրօն հռչակուելը և այդպիսով իշխանական դիրք ստանալը՝ իրօք արդէն համամարդկային կրօն էր դարձել և իշխում էր մարդկութեան մի աչքի ընկնող մասի հոգիների վերայ։

**Բ. Քրիստոնէութեան տարածումը մայր երկրում եւ մերձաւոր արեւելքում։**—Զարմանալին այն է, որ մայր երկրում՝ Պաղեստինում, համեմատաբար փոքր էր քրիստոնեաների թիւը։ Ադրիանոս Կայսրը 135 թ. ին վերջնականապէս ճնշեց հրէից ապստամբութիւնը և Երուսաղէմն աւերելով դարձրեց մի աննշան հեթանոսական քաղաք, Էլիա Կապիտոլինա անունով։ Հրէաներին արգելուած էր այնտեղ բնակել. հրէայ քրիստոնեաների փոխարէն, որոնցից գրեթէ բացառապէս բաղկացած էր առաջին մայր համայնքը, եկան հաստատուեցան հեթանոս-քրիստոնեաներ։ Գ. դարում՝ վերանորոգուած Երուսաղէմը կամաց կամաց յառաջ գնաց և եզաւ վերջը զօրեղ մրցակից Կեսարիայի, որ Պաղեստինի քաղաքական կենտրոնը լինելով՝ դարձել էր քրիստոնեաների համար ևս երկրի եկեղեցական կեանքի կենտրոն։ Ուրիշ մի շարք քաղաքներում և աւաններում հաւատացեալներ ու եպիսկոպոսական աթոռներ են յիշուում Ա. դարից սկսած. յիշուում են մի քանի գիւղեր, որ Դ. դարի սկզբին ամբողջովին քրիստոնեայ բնակչութիւն ունէին։ Բայց կային Պաղեստինում քաղաքներ ու ամբողջ գաւառակներ, ուր հրէաները, կամ այնպիսի հեթանոսներ, որոնց մէջ կենդանի էր մի արևելեան պաշտամունք՝ յամառութեամբ հալածում և թոյլ չէին տալիս, որ քրիստոնեայ երևայ իրենց շրջանում։ Քրիստոնէութիւնը տարածուած էր առհասարակ աւելի այն տեղերում, ուր իշխում էր յունական քաղաքակրթութիւնը, և քրիստոնեայ դարձողների գերակշռող մեծամասնութիւնը յունախօս էր՝ աւելի սերտ կապերով կապուած յունացած Աղէքսանդրիայի, քան շրջակայ երկրների հետ։

Գրեթէ այս նոյն վիճակի մէջ էր Պաղեստինեին կից Փիւնիկիան, որի Դամասկոս քաղաքում, ինչպէս յայտնի է, քրիստոնեաներ կային դեռ Պօղոս առաքեալի դարձից առաջ: Բայց աւելի ուժեղ էր ընկնում յետոյ և աւելի բարձր դիրք ունէր գլխաւոր քաղաքի՝ Տիւրոսի, համայնքը, որ ի միջի այլոց շատ նահատակներ է տուել: Ուրիշ համայնքների և տասնեակ եպիսկոպոսական աթոռների թւում յիշւում է նաև մի մարկիոնական եկեղեցի Դամասկոսի մօտերքում:

Շատ աւելի հարուստ էր քրիստոնեայ ազգաբնակութեամբ հարևան Ասորիքը: Սորա մայրաքաղաք Անտիոքը, ինչպէս յիշուեցաւ, արդէն առաքելական շրջանում աւետարանական քարոզութեան գլխաւոր հանգիստավայրերից մէկն էր: Անուանելով իրեն Պետրոս առաքեալի աթոռանիստ, և մեծ քաղաքական կենտրոն լինելով՝ նա շատ շուտ սկսեց ձգտել ամբողջ արևելքի քրիստոնէութեան կենտրոն դառնալու: Պօղոս առաքեալից յետոյ՝ անջնջելի հետքեր էր թողել այստեղ իւր գործունէութեամբ ս. Իգնատիոս. հանդէս էին եկել ապա մի շարք ուշքի ընկնող հեղինակներ, և հիմնուել էին մի քանի գիտնական դպրոցներ, որոնց մէջ նշանաւոր եղաւ և պատմական մեծ դեր կատարեց Պօղոս Սամոսատացու գաղափարներին հետևող Լուկիանոս հեծուածողի դպրոցը: Այս բազմամարդ քաղաքի բնակչութեան մի շատ ստուար մասը հաւանականաբար արդէն Գ. դարի վերջին քրիստոնեայ էր: Նոյնը կարելի է նաև նորա շրջակայքի համար ասել, ուր գերակշռում էր ասորի տարրը, մինչ Անտիոքի բարձր դասը յունախօս էր: Պատմական նշաններից երևում է, որ այդ ասորի ազգաբնակութեան մէջ քրիստոնէութիւն տարածելու, ասորերէնը եկեղեցական լեզու դարձնելու և նոյն լեզուով քրիստոնեայ գրականութիւն յառաջ բերելու համար աւելի գործ է տեսել Միջագետքի Եդեսիան, քան Անտիոք քաղաքը:

Ասորական ազդեցութիւնը զօրեղ էր նաև Պալմիրայի փոքրիկ պետութեան մէջ, որ կարճատև քաղաքական անկախութիւն ունեցաւ. Թէպէտ այստեղ էլ քաղաքացի տարրը յունախօս էր և յունական քաղաքակրթութեան

զուգընթաց էր աճել քրիստոնէութիւնը: Սակայն իրենք առաքեալները մեծ չափով ենթարկուած էին ժամանակակից քաղաքակրթութեան, յայտնի էին հրէաների նման իբրև ճարպիկ վաճառականներ, որով շատ բանում միջնորդների դեր են կատարել արևելքի ու արևմուտքի մէջ․ քիչ չեն նպաստել անշուշտ նաև քրիստոնէութեան տարածմանը:

Յորդանանից և Մեռեալ ծովից դէպի արևելք և դէպի հարաւ տարածուած այն երկրում, որ Արաբիա էր կոչւում և որտեղ դարձից անմիջապէս յետոյ առանձնացել է Պօղոս առաքեալը՝ բաւական թուով քրիստոնեաներ պէտք է եղած լինէին և նոյն իսկ մի շարք եպիսկոպոսներ ու մի քանի ծաղկած համայնքներ յիշւում են: Բայց այստեղ էլ քրիստոնէութիւնը մուտք էր գործել միայն խառն քաղաքացի ազգաբնակութեան մէջ, որ յոյն-հռովմէական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ էր գտնւում: Գուցէ նորա գլխաւոր տարածողներն ու պահպանողները այն հրէայ-քրիստոնեաներն էին, որ Երուսաղէմի առաջին կործանումից և վերջին աւերումից յետոյ այս կողմերը փախան: Համենայն դէպս բուն արաբական թափառող ցեղերի մէջ դժուար է քրիստոնէութեան հետքեր գտնել:

Սակայն թէ որչափ պակաս են համապատասխանում իրականութեան այն սահմանները, որ մենք ստիպուած ենք գծել նախնի քրիստոնէութեան տարածման համար՝ մեզ հասած ստոյգ պատմական տեղեկութիւնների հիման վերայ, ցոյց է տալիս պարզ կերպով Եգիպտոսի օրինակը: Բ․ դարի վերջերքին քիչ տեղեր կային, ուր քրիստոնէութիւնն այնպէս հաստատուն հիմք դրած լինէր և ընդարձակութիւն գտած, ինչպէս այս երկրում: Նորա գլխաւոր քաղաքը՝ Աղէքսանդրիան, կենտրոն էր արդէն, ինչպէս տեսանք, քրիստոնէական գիտութեան համար, ունէր ամենաազդեցիկ եպիսկոպոսական աթոռներից մէկը և հետզհետէ վճռական ձայն էր ստանում ընդհանուր քրիստոնէութեան վերաբերեալ զանազան խնդիրներում: Մինչդեռ մեզ գրեթէ բոլորովին անյայտ է, թէ երբ մուտք գտաւ այստեղ քրիստոնէութիւնը և ինչպէ՞ս հասաւ ծաղկման այդ աստիճանին: Գ․ դարի սկզբին տեղի ունե-

ցած հալածանքների համար յիշւում է, որ բազմաթիւ նահատակներ են եղել Վերին Եգիպտոսից. ուրեմն այդ ժամանակ արդէն ամբողջ երկրում տարածուած պէտք է լինէին քրիստոնեաները, աւելի հարկաւ Նեղոսի բարեբեր հովտում. բայց Լիբիայում և անապատի օազիսներում գտնուող մի քանի տեղերի մասին էլ յիշատակութիւններ կան: Քրիստոնեաների մէջ որոշ կերպով տարբերւում էին միմեանցից քաղաքակիրթ յոյն տարրը և բոլորովին տգէտ եգիպտացի ժողովուրդը, որ սակայն հեշտութեամբ յարեց քրիստոնէութեան. սորա լեզուով սկսեցին ս. Գրքի կարևորագոյն մասերը թարգմանել և մի համեստ եկեղեցական գրականութեան հիմք դնել: Դ. դարի սկզբին 100-ի չափ եպիսկոպոսական աթոռներ են յիշւում Եգիպտոսում և ազգաբնակութեան մի շատ աչքի ընկնող մասը քրիստոնեայ էր:

**Գ. Քրիստոնէութեան տարածումը Փոքր Ասիայում եւ Արեւմուտքում:**—Փոքր Ասիան, իբրև առաքեալների գործունէութեան գլխաւոր ասպարէզներից մէկը, յունական քաղաքակրթութեամբ նախապատրաստուած նոցա քարոզութեան սերմերն ընդունելու և աճեցնելու՝ ամէնից հեշտ, արագ և աննկատելի կերպով հաշտուեց քրիստոնէութեան հետ և դարձաւ նորա զարգացման կենտրոնական միջավայրը: Այստեղ յառաջ եկան և լուծուեցան նախնի քրիստոնէութեան զբաղեցնող ամենակարևոր խնդիրները. այստեղ մշակուեցան հաւանականաբար Ընդհանրական եկեղեցւոյ կազմակերպութեան հիմնական սկզբունքները և պահպանուեցան ամենաթանկագին առաքելական աւանդները: Նոյն իսկ ներքին, սակաւածանօթ լեռնոտ գաւառներում այնչափ ընդհանրացած էր քրիստոնէութիւնը, որ Գ. դարի վերջին ամբողջ երկիրը կարելի էր իրապէս քրիստոնեայ համարել: Արևելեան գաւառներից յատկապէս Կիլիկիան (ինչպէս և սորա հարևան Կիպրոս կղզին, որ ամենահին քրիստոնեայ երկրներից մէկն է) Ա. դարից ի վեր սերտ կապ էր պահպանել Անտիոքի հետ և աւելի ենթարկւում էր նորա հոգևոր ազդեցութեան: Բայց միւս մասերի նկատմամբ առաջնակարգ դիրք էր գրաւում Ասիայի նահանգի գլխաւոր քաղաք Եփեսոսը, որ

այնքան հարուստ էր առաքելական աւանդութիւններով և քրիստոնէական պատմութեան յիշատակներով: Ասիայում էին գտնուում նաև Պողիկարպոսի հայրենիք Զմիւռնիան և ուրիշ պատմական տեղեր, որոնք յիշուած են արդէն Նոր Կտակարանի մէջ: Իսկ նորանից յետ չէին մնում, իբրև նախնի քրիստոնէութեան բնագաւառներ՝ Բիւթանիան իւր Նիկոմիդիա գլխաւոր քաղաքով, Փռիւգիան իւր սնուցած մոնտանական շարժումով, Գաղատիան, ևլն:

Բալկանեան թերակղզու մի ծայրից մինչև միւս ծայրն էլ քարոզելով անցել էր, ինչպէս յիշեցինք, Պօղոս առաքեալը, և հարկաւ նորա հիմնած համայնքները՝ Փիլիպպէում, Թեսաղոնիկէում, Աթէնքում, Կորնթոսում, և այլն, յարատևեցին ու շրջակայքում քրիստոնէութիւն տարածելու միջնորդ եղան: Ամէնից աչքի էր ընկնում նոցա մէջ Կորնթոսի համայնքը: Բայց մեզ հասած կցկտուր տեղեկութիւններից հետևեցնել պէտք է, որ թերակղզու ներքին մասերը առաջին երեք դարերում համեմատաբար ցանցառ քրիստոնեայ բնակչութիւն ունէին: Այսպէս էր դրութիւնը նաև թերակղզուց դէպի հիւսիս և հիւսիսարևմուտք ընկնող երկրներում՝ մինչև Դանուբի հովիտը, ուր եպիսկոպոսական աթոռներ և նահատակներ յիշուում են, բայց չի երևում, թէ այդ կողմերը առանձնապէս հարուստ եղած լինեին քրիստոնեայ բնակիչներով: Քրիստոնէութիւնը հաստատուած էր ապա Արշիպեղագոսի կղզիներից մեծ մասի, եթէ ո՛չ բոլորի վերայ: Այլ և Ղրիմ թերակղզու մի քանի քաղաքներում, որոնք յոյն ազգաբնակութիւն ունէին: Սոցա մերձակայքում ապրող գոթերի մէջ էլ, ինչպէս երևում է, սկսել էր մուտք գործել:

Գալով Հռովմին, ուր մի պատկառելի համայնք էր կազմուել դեռ Պօղոս առաքեալի այնտեղ ոտք դնելուց առաջ՝ բնականաբար, իբրև ամբողջ պետութեան մայրաքաղաք, առանձին ձգողական ոյժ պէտք է ունենար ամէն կողմի քրիստոնեաների համար և իւր քաղաքական դիրքովն իսկ կարևոր դեր կատարէր քրիստոնէութեան տարածման ու զարգացման գործում: Մանաւանդ երբ այդ համայնքի մէջ բարձր դասակարգերի, նոյն իսկ կայսերական ընտանիքին պատկանող՝ անձինք մտան հետզհետէ և

իրենց հետ բերին ազդեցիկ անուններ ու հարուստ նիւթական միջոցներ, նա սկսեց օգնութեան ձեռք հասցնել, երբեմն նոյն իսկ ամենահեռաւոր՝ կարօտեալ համայնքներին, մխիթարել ու քաջալերել նեղութեան օրերում, խրատել և յորդոր կարդալ յայտնի եղած զեղծումների նկատմամբ, հովանաւորող հանդիսանալ։ Այդպիսով աճեց այս համայնքի հեղինակութիւնը, որից օգուտ քաղեցին Հռովմի եպիսկոպոսները և, յենուելով այստեղ նահատակուած երկու գլխաւոր առաքեալների անուան վերայ, շատ վաղ ձգտում ցոյց տուին իրենց հոգևոր իրաւասութեան ենթարկելու, եթէ կարելի էր՝ ամբողջ քրիստոնեայ աշխարհը։ Բայց այդ ձգտումը որոշ չափով իրականութիւն գտաւ միայն արևմուտքում, ուր նոքա մրցակիցներ չունէին և շատ տեղեր հաւանականաբար Հռովմից էլ ընդունել էին աւետարանի լոյսը։ Բուն Իտալիայում,—չհաշուած Հռովմը, ուր Գ. դարի կէսին արդէն 155 հոգի միայն հոգևորականներ կային և 1500-ից աւելի այրիների ու չքաւորների համար խնամք էր տարւում,—հարիւրի չափ եպիսկոպոսական աթոռներ են յիշւում նոյն այդ ժամանակ։ Դորա համեմատ և ուրեմն քրիստոնեաները աչքի ընկնող բազմութիւն էին ներկայացնում և նոցա թիւը զգալի կերպով մեծացած պիտի լինի յաջորդ խաղաղ շրջանում։ Աւելի սակաւաթիւ էին նոքա հիւսիսային Իտալիայում, ուր միայն արևելեան՝ Բալկանեան թերակղզու հետ սերտ կապուած, մասի գլխաւոր քաղաքներում ծաղկած համայնքներ կային։

Շատ վաղ տարածուած պէտք է լինի քրիստոնէութիւնը Գալլիայի հարաւ—արևմտեան մասում, ուր յունական ազգաբնակութիւնն էր գերակշռում և կենդանի առևտրական յարաբերութեան մէջ էր արևելքի հետ։ 177 թ.-ին ծանր հալածանքի ենթարկուեցան այստեղ Լիոնի և Վիեննի համայքները։ Գ. դարից սկսած քրիստոնեայ համայնքներ և եպիսկոպոսներ յիշւում են նաև Գալլիայի ներքին նահանգներում, Հռենոսի վերայ գտնուած մի քանի գերմանական քաղաքներում, և վերջապէս Բրիտանիայում։ Իսկ Սպանիայում, որտեղ քարոզելու դիտաւորութիւն ունէր արդէն Պօղոս առաքեալը՝ Գ. դարի սկզբին գաւառ-

րուած մի ժողովից երևում է, որ գրեթէ ամէն կողմ տարածուած էր քրիստոնէութիւնը՝ աւելի՛ խիտ հարաւային մասերում, և 20-ից աւելի եպիսկոպոսական աթոռներ կային:

Քաղաքակրթական տեսակէտից, կարելի է ասել, Եւրոպայի մաս էին կազմում Աֆրիկայի այն ափունքը, որ ընկնում են Միջերկրականի հարաւ—արևմտեան անկիւնում և Քրիստոսից առաջ արդէն զօրեղ կերպով ենթարկուել էին յոյն-հռովմէական քաղաքակրթութեան: Այստեղ ևս քրիստոնէութիւնը շատ վաղ մուտ գործած պիտի լինի և Բ. դարում այնպիսի ծաղկման էր հասել, որ նորա հետ մեցել կարող էին միայն Փոքր Ասիայի մի քանի նահանգները: Երկրի գլխաւոր քաղաքը Կարթագէնը կամ Կարքեդոնը շուտով քրիստոնէութեան կարևորագոյն կենտրոններից մէկը դարձաւ, և նորանում հաւանականաբար աւելի վաղ (Բ. դարում) սկսեցին Աստուածաշնչի մասերը լատիներէն թարգմանել, քան Հռովմում և Իտալիայում, ուր մինչև Գ. դարի սկիզբները եկեղեցական լեզուն յունարէն էր: Այստեղ յամենայն դէպս հանդէս եկան քրիստոնեայ—լատինական աշխարհի առաջին մեծ հեղինակները՝ Տերտուղիանոս և ս. Կիպրիանոս եպիսկոպոս, և լատինական գրականութեան հիմքը դրին: Կիպրիանոսի օրով՝ Գ. դարի կէսերին, մօտ 150 եպիսկոպոսներ պիտի եղած լինէին այս երկրում. իսկ Դ. դարի սկզբում նոցա թիւը երևի 250-ից անցնում էր. բատ այժմ և ընդարձակ չափով տարածուած էր քրիստոնէութիւնը: Գրեթէ քրիստոնեայ երկիր էր համարուում սա այդ ժամանակ:

**Գ. Քրիստոնէութիւնը Հայաստանի սահմանակից երկրներում:**—Կապադովկիայում, որ Եփրատ գետով բաժանուում է Մեծ Հայքից և որի մէջ մտնում է Փոքր Հայքը, գրեթէ նոյնչափ վաղ էր հաստատուել քրիստոնէութիւնը և նոյնպիսի ընդարձակութիւն գտել, ինչպէս Փոքր Ասիայի միացած նահանգներում: Այստեղ քրիստոնեաները յիշուում են արդէն Պետրոսի Ա. Թղթում. Բ. դարից ի վեր յայտնի են հանդիպում Կապադովկիայի քրիստոնեաները ուրիշ երկրներում. իսկ նոյն դարի վերջերին քրիստոնեաների դէմ Կապադովկիայում եղած մի ծանր հալածանքի

*ւուրը մինչև Աֆրիկա էր հասել։ 258 Թ. ին այս երկրի վերայ յարձակուող Գոթերը բաւականաչափ քրիստոնեաների գերի էին տարել, որից կարելի է եզրակացնել, թէ ինչքան մեծ պէտք է եղած լինի նոցա թիւն այդ ժամանակ։ Կապադովկիայի գլխաւոր քաղաք Կեսարիան վաղ ժամանակներից կենդանի յարաբերութեան մէջ է եղել Պաղեստինի, Անտիոքի, Աղէքսանդրիայի, և արեւմուտքի քրիստոնէական կարևոր կենտրոնների հետ։ Նորա եպիսկոպոսներից յայտնի են մանաւանդ երկու աչքի ընկնող հեղինակներ՝ Աղէքսանդր, որ յետոյ եպիսկոպոս եղաւ Երուսաղէմում և մի մատենադարան հիմնեց այնտեղ, և Փիրմիլլիանոս, որ Կեսարիան դարձրեց մի կարևոր ուսումնավայր՝ աստուածաբանական կրթութեան համար։ Սոցա հետ շատ մօտ են եղել, այցելել սոցա և գործել Կեսարիայում Աղէքսանդրիայի երկու ճրագները՝ Կղեմէս և Որիգենէս։—Ցատկապէս Փոքր Հայքում քրիստոնէութեան վաղ տարածուած լինելու մասին վկայում է այն նշանաւոր հանգամանքը, որ Մարկոս Աւրելիոս կայսեր ժամանակ* (161—180) *Մելիտինէ քաղաքում գտնուող գնդի մէջ բազմաթիւ քրիստոնեաներ կային՝ հաւանականաբար շրջակայքից ժողոված։*

*Կապադովկիայի հետ միաժամանակ քրիստոնէութիւնը պէտք է մուտք գործած և հաւասար չափով տարածուած լինի նաև նորանից դէպի հիւսիս ընկնող Պոնտական գաւառներում։ Մարկոս Աւրելիոսի օրերում այստեղ ևս բազմաթիւ եկեղեցիներ և մի քանի եպիսկոպոսներ կային, որոնց գլխաւորը նստում էր Ամաստրիսում և մի թուղթ է ստացել Դիոնիսիոս Կորնթացուց։ Յետոյ աւելի կարևորութիւն ստացաւ Ամասիայի եպիսկոպոսական աթոռը։ Պոնտոսի մի քանի գաւառներում քրիստոնէութիւն հաստատողը և ընդհանրապէս նորա զարգացման և տարածման մեծ զարկ տուողը եղաւ, ինչպէս առաջ յիշուել է, Գրիգոր Սքանչելագործը։ Պատմուում է, որ երբ սա Նէո-Կեսարիայի եպիսկոպոս ձեռնադրուեց (մօտ* 240 *Թ.), քաղաքում և շրջակայքում ընդամէնը* 17 *քրիստոնեաներ էին գտնուում. բայց նորա երեսնամեայ գործունէութիւնից յետոյ՝ մահուան ժամանակ, մնացել էին միայն նոյն*

թուով հեթանոսներ։ Այդ մեծ յաջողութիւնը բացատրը-ւում է գլխաւորապէս նորանով, որ Գրիգոր ամէնից ընդարձակ չափով ու հմուտ կերպով գործ դրեց՝ Կապադովկիայում ևս ընդունելութիւն գտած, առաքելութեան մի նոր եղանակ։ Նա աշխատում էր յարմարուել ըստ ամենայնի տեղական ժողովրդեան բարքերին. այն ուրախ տօնակատարութիւնները, որ տեղի էին ունենում յանուն հեթանոս աստուածութիւնների՝ քրիստոնեայ սուրբերի յիշատակի վերայ դարձնել, և քրիստոնէական սրբութիւններին պաշտօն մատուցանել գրեթէ նոյն ձևով, ինչպէս առաջ հեթանոսականին էին մատուցել։ Այդպիսով նա յոյս ունէր ի հարկէ աւելի հեշտութեամբ մատչելի դարձնելու նաև քրիստոնէութեան գաղափարական բովանդակութիւնը։ Թէ որչափ հասաւ նպատակին՝ դժուար է ասել. բայց իրօք կարճ ժամանակ յետոյ Պոնտոսը նոյնպիսի մի քրիստոնեայ երկիր էր, ինչպէս Փոքր Ասիայի միւս նահանգները։

Մեր եկեղեցւոյ պատմութեան համար առանձին կարևորութիւն ունի, թէ ինչպէս հաստատուեց քրիստոնէութիւնը Հայաստանի հարաւում՝ յատկապէս «Հայոց Միջագետքի» Եդեսիա քաղաքում ։ Աբգար Թագաւորի դարձի մասին եղած յայտնի աւանդութիւնը յետոյ կըտեսնենք։ Առ այժմ ի նկատի պիտի առնենք միայն ստոյգ-պատմական իրողութիւնը, որ Բ. դարի վերջին, նոյն այդ ժամանակ հաստատապէս հռովմէական գերիշխանութեան ներքոյ մտած՝ Ոսրոյենէ կիսանկախ փոքրիկ Թագաւորութեան մայրաքաղաք Եդեսիան, Թագաւորական տան հետ մէկտեղ, քրիստոնեայ էր։ Ինչպէ՞ս էր տեղի ունեցել այդ արտակարգ երևոյթը՝ դժուար է այլ ևս ստուգել։ Գիտենք միայն, որ 170—190 թ. Եդեսիայում գործել էին երկու նշանաւոր անձինք՝ երկուսն էլ աղանդաւոր. Տատիանոս, որի, չորս աւետարանների միացմամբ՝ կազմած «Դիատեսսարոն»ը դեռ յաջորդ դարերում գործ էր ածուում աւետարանների տեղ ասորական և ուրիշ արևելեան եկեղեցիներում. և Բարդեծան, որ Գ. դարի մի նշանաւոր հեղինակի ասելով հայ է եղել ծագմամբ, և նորա գնոստիկական ուսման հետևողները իբրև առանձին համայնք գոյութիւն են ունեցել մինչև Ե. դար, նորա յօրինած

կրօնական երգերը որպէս երգուել նաև ուղղափառ համայնքներում։ Յայտնի է նոյնպէս, որ աւանդութեան մէջ իբրև Ադդէ առաքեալի երկրորդ յաջորդ յիշուած Փղուտ եպիսկոպոսը մօտ 200 թ. ին ձեռնադրուել է Անտիոքի Սերապիոն եպիսկոպոսից, և այնուհետև Եդեսիայում երկու հակառակորդ համայնքներ են եղել՝ Փղուտեան ուղղափառներ և Բարդեծանեան աղանդաւորներ։ 216 թ. ին Կարակալլա կայսրը վերջ տուաւ Եդեսիայի թագաւորութեան, քրիստոնէութիւն ընդունած Աբգար Թ. Բար-Մանու վերջին թագաւորը շղթայակապ Հռոմ տարուեցաւ, որով քրիստոնէութիւնն էլ զրկուեց այնտեղ պետական կրօն» լինելուց։ Ինքը Եդեսիան մնաց համարեա գրեթէ ամբողջովին քրիստոնեայ, բայց շրջակայքներում իշխում էր հեթանոսութիւնը, և միայն Մծբինում ու մի քանի ուրիշ քաղաքներում մինչև Գ. դար քրիստոնեայ համայնքներ յիշուում են։

Այս շրջանում քրիստոնէութիւնը պէտք է մուտք գործած լինի նաև բուն Միջագետքի ու Պարսկաստանի շատ քաղաքներ։ Նոյանից մի քանիսի մէջ կազմակերպուած համայնքներ ու եպիսկոպոսներ յիշուում են։ Իսկ նահատակների պատմութեանց և ուրիշ նշանների հիմանվրայ՝ կարելի է մինչև Պարսկաստանի խորքերը տանել քրիստոնէութեան հետքերը։ Յամենայն դէպս Դ. դարում այնպիսի ծաղկած դրութեան էր հասել այստեղ քրիստոնէութիւնը, որ անցեալում չէր կարող շատ սահմանափակ շրջանների մէջ ամփոփուած լինել։ Վերջապէս Թովմաս առաքեալի մասին եղած հին աւանդութիւններից երևում է, որ առնուազն Դ. դարի սկզբին քրիստոնեաներ կային Հնդկաստանի հիւսիս-արևելեան մասում։ Աղեքսանդրեան դպրոցի հիմնադիր Պանթէնոս նոյնպէս յիշել է, որ իւր ճանապարհորդութեան ժամանակ գտնուած է եղել Հնդկաստան և այնտեղի բազմաթիւ հրէայ գաղթականների մէջ տեսել է այնպիսիներին, որոնք Քրիստոսի մասին գաղափար ունէին և պահել էին Բարթուղիմէոս առաքեալի ձեռքով իրենց հասած Մատթէոսի եբրայեցերէն աւետարանը։ Բայց ամենայն հաւանականութեամբ Հնդկաստան ասելով նա հասկանում է Հարաւային Արաբիան։

Ե. Սկզբնական վարչական կազմակերպութիւնը։—Քանի Քրիստոնէի եկեղեցին գծագրւում էր և ընդարձակւում՝ նորանոր ազգերի ու կրօնական դաւանակիցների տարածելով, քաղաքակրթութեան զանազան աստիճանների վերայ դասւող մարդկանց իւր մէջ ընդունում, այնքան աւելի հարկ պէտք է զգացւէր գծելու կազմակերպութիւն տալու նորան, որպէս անդամների միմեանց հետ կապող և արտաքին ազդեցութեանց ու փորձութեանց դէմ պաշտպանող կարգեր հաստատելու։ Բոլոր հաւատացեալների դաւանակարգական միութիւնը աւետարանի քարոզութեան առաջնորդող սկզբունքներից մէկն էր, որի հիման վերայ չէր կարող հաստատուել այն հայեացքը, թէ ինչպէս ի սկզբան աշխարհի տարածուած քրիստոնեաները կազմում են միասին մի մեծ եկեղեցի Աստուծոյ, այնպէս և իւրաքանչիւր մի տեղում խմբուածները պէտք է ներկա համայնական ամբողջութիւն կազմեն ու ամէն բանում այս ընդհանրական եկեղեցւոյ պատկերը ներկայացնեն։ Իրապէս բոլոր քրիստոնեաների միութիւնը միշտ էլ գաղափարական մնաց, և միայն կազմակերպութիւն տալուն աւելի առանձին առանձին համայնքները. բայց մի նշանաւոր կազմակերպութիւն, որի նմանը դժուար է ցոյց տալ ուրիշ տեղ։ Իւրաքանչիւր նորա մէջ մտնողը մինչև կեանքի վերջ կապուած էր մնում. սկզբում ամէն օր, յետոյ գոնէ շաբաթը մի անգամ՝ մասնակցում էր ընդհանուր աղօթքին ու ժամապաշտութեանը. այս համայնական հաւաքոյթներում հաղորդ սնունդ և իւր իւրաքանչիւր քաղաքացի համար հրահանգներ էր ստանում. համայնքի կողմից դրուած պատասխանատութիւններին հնազանդում և փոխադարձաբար ամէն կարիքի ու նեղութեան մէջ օգնութիւն ընդունում նորանից. նորա միջոցով դառնում մի կենդանի անդամը Քրիստոսի եկեղեցւոյ, որից դուրս փրկութիւն չկար իւր համար։ Կարելի է երևակայել, թէ այսպիսի մի կազմակերպութիւն որչափ զօրեղ տպաւորութիւն պիտի գործէր և գրաւէր ազդեցութիւն ունենար անհատների վերայ, երբ՝ ի մասնէ ճանաչում էին նորա նպատակներին։ Այդ պատճառով իսկ քրիստոնէական համայնքներն իրենց ամբողջութիւն աւելի մեծ առա-

քելական դեր են կատարել և աւելի յաջողել տարածելու քրիստոնէութիւնը, քան անհատական քարոզիչները։

Սկզբում համայնքների մէջ առաջնակարգ դիրք ունէին Փրկչի անմիջական աշակերտները ու հետևողները, կամ այնպիսի անձինք, որոնք իրենց երկնատուր շնորհքով աւետարանի քարոզութեանը նպաստել և աւետարանական ոգին արծարծել կարող էին։ Յատկապէս երեք կոչումներ յիշւում են նախնական շրջանում, որոնցով բնորոշւում էր այդ քարոզիչներից ամէն մէկի գործունէութեան եղանակը,—առաքեալներ, մարգարէներ և վարդապետներ կամ ուսուցիչներ։ «Առաքեալ» էին ասւում բացի տասն և երկուսից այլ և այն ամէն աւետարանի տարածմանը նուիրուած անձինք, որոնք յօժար կամքով հրաժարուել էին տնից ու ստացուածքից և անդադար շրջում էին մի տեղից միւսը, աշխատում միշտ նոր հաւատացեալներ վաստակել, համայնքներ կազմակերպել, եղածներին քաջալերել և ոգի տալ։ «Մարգարէներն» ազդում էին իրենց ոգևորութեամբ, կարևոր դէպքերում հանդէս գալիս իբրև վերին ներշնչման թարգմաններ, երբեմն ապագայի վերաբերմամբ լուրջ ազդարարութիւններ անում, իսկ սովորաբար ուրիշներից աւելի եռանդուն և կենդանի կերպով նոյն աւետարանական ճշմարտութիւնները քարոզում։ Սոքա ևս մի որոշ համայնքի հետ կապուած չէին, առաքեալների նման գոյքից զուրկ լինելով՝ յաճախ երթևեկութիւններ էին կատարում և գրեթէ նոյն հաւասար յարգանքով ընդունւում զանազան համայնքներում, առանց պարտաւորութիւն զգալու սակայն միշտ նոր տեղեր այցելել։ «Վարդապետներ» կոչւում էին վերջապէս համայնքի այն հաստատուն անդամները, որոնք մի առանձին կարողութիւն ունէին ուսուցանելու և նայելով, թէ որչափ շնորհք կամ գիտութիւն ցոյց կտային, ըստ այնմ և գնահատութիւն էին գտնում։ Սակայն վարդապետութիւնն էլ միւսների նման ազատ և ներքին բերմամբ յանձն առած գործունէութիւն էր, և ո՛չ համայնքի կողմից տրուած պաշտօն։

Այսպիսի պաշտօնների կարիք շատ վաղ զգացուեց՝ այն օրից, երբ առաջին համայնքը կազմակերպուե-

ցաւ և տնտեսական ու վարչական այլ և այլ հոգսեր ունեցաւ: Մենք տեսնում ենք, որ արդէն առաքելական շրջանում, վերև յիշած ազատ կոչումների հետ զուգընթաց՝ յառաջ են գալիս և ձևակերպւում երեք հաստատուն պաշտօնէութիւններ—եպիսկոպոս, երէց և սարկաւագ, որոնք և մնում են ասպարէզի վերայ, մինչ առաջինները հետզհետէ պակասում են: Առաքելութիւնը դրեթէ դադարում է Բ. դարի սկզբում, երբ այլ ևս ոչ ոք չի մնում աւետարանի առաջին քարոզիչներից. մարգարէական ոգին թուլանում է և արհեստական բնաւորութիւն ստանում. ուսուցումը դառնում է հասարակ հրահանգութիւն: Եւ ահա հանդէս է գալիս եպիսկոպոսը՝ իբրև համայնքի բացարձակ գլուխ, նորա բոլոր վարչական ու տնտեսական գործերի ղեկավարողը, նորա միութեան ներկայացուցիչը ուրիշ համայնքների և դրսի աշխարհի առաջ, նորա կենտրոնը կրօնական համախմբումների ժամանակ, ուր նորա յատուկ իրաւունքն էր բոլորի կողմից հաղորդութեան ս. խորհուրդը կատարել: Աւելի բարձրացաւ եպիսկոպոսների նշանակութիւնը մանաւանդ գնոստիկեան աղանդների տարածուելուց յետոյ, երբ նոքա, ներկայանալով իբրև առաքեալների օրինական յաջորդներ և նոցա աւանդած ճշմարիտ վարդապետութեան ժառանգորդներ՝ իրանց վերապահեցին նաև այն ուսուցանելու և բացատրելու իրաւունքը. այնպէս որ համայնքը նոցանից զրկուելով համարւում էր անհովիւ և ամէն վտանգների ենթակայ, իսկ անհատը նոցա չհնազանդելով՝ խզած էր լինում եկեղեցւոյ հետ ունեցած հաղորդակցութեան կապը: Իւրաքանչիւր համայնք ունէր մի եպիսկոպոս, որի խորհրդականները և որոշ դէպքերում փոխարինողներն էին երէցները: Ժամանակի ընթացքում, երբ համայնքներն այնքան ընդարձակուեցան, մանաւանդ մեծ քաղաքներում, որ ստիպուած էին մի քանի մասերի բաժանուել և առանձին եկեղեցիներ ունենալ՝ երէցները աւելի անկախ դիրք ստացան և դարձան շատ տեղերում երկրորդական համայնքների վարիչներ: Ապա հաղորդութեան խորհուրդն իբրև պատարագ մատուցանելու պաշտօնն էլ գլխաւորապէս նոցա վերայ մնաց, և նոքա բռնեցին Հին ուխտի

հանաների տեղը, իսկ եպիսկոպոսը դարձաւ միաժամանակ քահանայապետ՝ ձեռնադրութեան առանձնաշնորհութիւնով: Ինչ վերաբերում է սարկաւագներին՝ նոցա յունարէն դիակոն—սպասաւոր անունը ցոյց է տալիս արդէն, որ ծառայողի դեր դանէին՝ յատկապէս տնտեսական գործերի մէջ. բայց լինելով եպիսկոպոսի խնամքին օգնականները և նորա կարգադրութիւնների անմիջական գործադրողները, երեցներն աւելի կարևոր դեր էին ձեռք բերում քան երէցները: Իսկ սարկաւագից զատ եկեղեցական պաշտօնները յառաջ են եկել պաշտամունքում (Հռոմում), և արեւելքում գործնական նշանակութիւն չեն ստացել:

Գ. դարում եպիսկոպոսների իշխանութիւնը ընդարձակուեց մի քանի հանգամանքների շնորհիւ: ա) Ինչպէս յիշեցինք, նախկին փոքրիկ համայնքները շատ տեղ մեծացել և ճիւղաւորուել էին, որով մայր համայնքի եպիսկոպոսը մի շարք ուրիշ համայնքներ էր ունենում իւր ձեռքի տակ: բ) Մինչդեռ սկզբում քրիստոնէութիւնը տարածուած էր գրեթէ միայն քաղաքներում, շուտով հաւատացեալներ երևացին նաև գիւղական ազգաբնակութեան մէջ: Նոցա թիւը շատ անգամ այնքան քիչ էր, որ առանձին համայնք չէին կարող կազմել, ունենում էին իրենց մէջ այս առաւելն մի երէց կամ մի սարկաւագ և կապւում մօտիկ քաղաքի քրիստոնեայ համայնքի հետ: Իսկ եթէ կազմում էին համայնքներ, մանաւանդ այնպիսի քաղաքներով աղքատ երկրներում, ինչպէս օրինակ Կապադովկիան և իւր հարևան գաւառները, նոցա եպիսկոպոսն էր, որ քորեպիսկոպոս էր կոչւում (յունարէն է և «երկրի պետ» է նշանակում, մինչ բուն եպիսկոպոսը քաղաքի պետ էր)—ենթարկւում էր որոշ չափով քաղաքի եպիսկոպոսի իշխանութեան, և այդպիսով սա դառնում է ամբողջ շրջակայքի գլխաւոր հովիւը: գ) Միևնոյն նահանգում գտնուող համայնքները բնականաբար մօտիկ յարաբերութեան մէջ էին միմեանց հետ և սկզբից ի վեր նկատւում էին իբրև մի որոշ միութեան անդամներ. իսկ նահանգական քաղաքի եպիսկոպոսը կարևոր դէպքերում հանդիսանում էր առաջադաս քաղաքների նկատմամբ մի տեսակ վերահսկողի և հովանաւորողի

դէրում: Այդպէս կապուած մնում էին երբեմն նաև աւելի հեռաւոր համայնքներ, որոնք միևնոյն հիմնադիրն ունէին և կարող էին որ և է մայր համայնքից հոգևոր հրահանգութիւններ ստանալ: Մանաւանդ երբ եկեղեցական ժողովները յառաջ եկան՝ իբրև ամենազդեցիկ միջոց աղանդների դէմ կռուելու և եկեղեցու միութիւնը պահպանելու, կենտրոնի եպիսկոպոսը, որ ժողովարար նախագահում էր՝ սկսեց միւսներին իբրև ստորադրեալներ նկատել, ձեռնադրութեան և այլ իրաւունքներ բանեցնել: Մի քանի կարևորագոյն կենտրոնների եպիսկոպոսները՝ ինչպէս օր. Անտիոքին, Աղեքսանդրիային, և աւելի Հռովմին, իրենց իշխանութիւնն այսպիսով տարածում էին հետզհետէ սահմանակից նահանգների և հեռաւոր երկրների վերայ: Բայց այս շրջանում դեռ նոցա իրաւասութեան սահմաններն անորոշ էին, և ձևակերպութիւն ստացաւ միայն մետրոպոլիտական (նահանգի եպիսկոպոսի) իշխանութիւնը:

**Զ. Նոր Կտակարան եւ Հաւատոյ կանոնը:**—Հին Կտակարանը նախնի քրիստոնեաների համար մնաց նոյն ս. Գիրքը՝ նոյն ճշմարիտ աստուածային յայտնութեան յիշատակարանը, ինչ որ եղել էր Փրկչի և իւր աշակերտների համար: Ամէն անգամ, երբ նոքա համախմբւում էին աղօթելու և Աստուծոյ խօսքը լսելու՝ աւետարանի կենդանի քարոզի հետ կարդացւում էին նաև հատուածներ Հին Կտակարանից և բացատրւում: Հաւատոյ վերաբերեալ խնդիրներում առաջնակարգ տեղ էր տրւում մարգարէներից վերցրած այն վկայութիւններին, որոնցով ապացուցւում էր, թէ փրկչական տնօրէնութիւնները դարեր առաջ նախատեսուած են եղել և ուրեմն ամենաբարձր հեղինակութեան դրոշմն են կրում իրենց վերայ: Իսկ նախահայրերի և այլ աստուածահաճոյ անձերի պատմութիւնները մեծապէս հրահանգիչ էին իրենց բարոյակրթական բովանդակութեամբ: Վերջապէս Հին Կտակարանը առատ նիւթ էր ընծայում բազմակողմանի կրօնական խորհրդածութիւնների և միաստուածութեան գաղափարի վերայ հիմնուած ընդարձակ աշխարհայեցողութեան համար: Առաջին անգամ, ինչպէս տեսանք, գնոստիկեանները

կողմնակի շարժառիթներից դրդուած, կռիւ յայտարարեցին այդ բոլորի դէմ և պնդելով պնդում էին, թէ Հին Կտակարանը աւետարանի նկատմամբ բոլորովին տարբեր և ստոր աստիճանի կրօնական յայտնութիւն է: Այս, աւելի ոյժ տալու համար իրենց տեսութիւններին՝ Նորա հանդէպ հանեցին առաքելական շրջանի հեղինակներից վերցրած և իրենց գաղափարներին յարմարեցրած, կամ պարզապէս նոցա անունով կեղծած գրուածներ: Օրինակ Մարկիոն Ղուկասի կրճատած աւետարանից և Պօղոս առաքեալի 10 թղթերից կազմեց մի կանոնական ժողովածու, որ աւելի բարձր հեղինակութիւն պիտի ունենար, քան ուղղահաւատների գործ դրած Հին Կտակարանը: Վերջիններս այն ժամանակ իրենք էլ սկսեցին խնամքով ժողովել հարազատ առաքելական գրուածները, որ վաղուց առանձին առանձին կարդացւում էին շատ համայնքների մէջ, և մանաւանդ չորս աւետարանները՝ իբրև Փրկչի քարոզութեան ու գործոց անմիջական յիշատակարաններ, արդէն Հին Կտակարանի հաւասար և աւելի յարգ ունէին: Քանի դեռ կենդանի աւանդութիւնը կար նախնի քարոզիչների բերանում, նոցա կարիքը շատ չէր զգացուել. բայց երբ այն քարոզիչներն իջան ասպարիզից, և ամէն ոք սկսեց իւր քմաց համաձայն յեղյեղել ու բացատրել աւանդութիւնը, ինքն ըստ ինքեան պահանջ պէտք է յառաջ կար գրաւոր յիշատակարանների միջոցաւ հաստատուն և տեւական դարձնելու այն, և ահա լոյս ընկան զանազան նպատակ ունեցող և զանազան տիպի գրուածներ, որոնք առաքելական ծագում էին վերագրում իրենց: Հարկաւոր էր ուրեմն ամենայն զգուշութեամբ զտել կեղծն իսկականից և ընտրել այնպիսիները, որոնք թէ իրենց անվիճելի վաւերականութեամբ և թէ ներքին արժանիքով համապատասխանէին նոցա վիճակուած մեծ դերին՝ հիմք և կանոնական չափ լինելու քրիստոնէական ուղիղ դաւանութեան և բարոյականութեան համար: Ամենայն հաւանականութեամբ այդ զտումն և կանոնական գրուածներն ի մի ժողովելու ձեռնարկութիւնը տեղի ունեցաւ նախ Փոքր Ասիայում, և ապա Հռովմում: Ինչպէ՞ս և ո՞ւմ ձեռքով, մեզ յայտնի չէ. ժամանակակից յիշատակութիւններից

այնչափը միայն կարող ենք եզրակացնել, որ ամէնից առաջ Ք. մի ամփոփուեցան չորս աւետարանները. շուտով աւելացան նոցա վերայ Պօղոս առաքեալի Թղթերը, ապա Կաթուղիկեայց Թղթերից մի քանիսը, և արդէն Բ. դարի կիսին մեր այժմեան Նոր Կտակարանի մեծագոյն մասը կազմուած էր ու գործածութեան մէջ: Յետոյ աւելացան Գործք առաքելոցը, Կաթուղիկեայց մնացած Թղթերը և Յովհաննու յայտնութիւնը. իսկ դարի վերջին մեր այժմեան կանոնը գրեթէ բոլորովին ամբողջացած էր և Հին Կտակարանի հետ մէկտեղ ընդունուում էր իբրև ս. Գրքի անհրաժեշտ և աւելի արժէքաւոր մասը: Միայն մի քանի Թէ կանոնի մէջ մտած և Թէ կանոնից դուրս մնացած գրուածների մասին տեղ տեղ կասկածներ կային, Թէ արդեօք կանոնական պիտի համարուի՞ն: Յամենայն դէպս Նոր Կտակարանի կանոնի մէջ մտան անկասկած առաքելական շրջանի գրականութեան ընտրելագոյն նշխարները, և դորանով առաքելական աւանդութիւնը վերջնական ձևակերպութիւն ստացաւ: Անանցանելի սահման դրուեցաւ այնուհետև աստուածային աղբիւրից ընդունածի և մարդկային մտածութեան արդիւնքների մէջ. բայց քրիստոնէական գրականութիւնը մի անդրդուելի հիմք ունեցաւ, որի վերայ արագ կերպով աճեց ու բարձրացաւ նորա բազմադարեան պատկառելի շէնքը:

Միաժամանակ հաստատուեցաւ նաև «Հաւատոյ կանոնը»: Քրիստոնէութեան առաջին օրերից ի վեր համայնքներում գործ էին ածուում այնպիսի բանաձևեր, որոնց մէջ համառօտ կերպով ամփոփուած էին հաւատոյ էական կէտերը: Յատկապէս մկրտութեան միջոցին նորահաւատը այդպիսի մի բանաձևով խոստովանում էր այն ճշմարտութիւնները, որ իբրև քրիստոնեայ պիտի դաւանէր: Երբ աղանդները բազմացան և վտանգաւոր դարձան, հարկ զգացուեց մի ընդհանուր բանաձև ընտրելու, որի մէջ առանձնապէս շեշտուէին նոցա խեղաթիւրած հաւատալիքները և ուղիղ դաւանութեամբ ապահովուէին նոցա մոլար ուսումից: Այդպիսի ձգտում ամէնից առաջ երևում է Հռովմում, ուր իրենց մէջ գործածական «Առաքելական հանգանակը» համարելով անմիջապէս առաքեալներից

աւանդած կանոն ճշմարիտ հաւատոյ՝ կամեցան պարտաւորեցուցիչ դարձնել այն բոլոր քրիստոնեաների համար և նորա խոստովանութեամբ որոշել, թէ ով է Կաթուղիկէ եկեղեցւոյ անդամ, և ով ոչ: Բայց միայն Գ. դարում այդ հանգանակը կամաց կամաց ընդունելութիւն գտաւ ուրիշ եկեղեցիների մէջ: Նման եղանակով մի քանի աւելի ընդարձակ հանգանակներ էին կազմուել արևելեան եկեղեցիներում, և դեռ դարի վերջին չկար Կաթուղիկէ եկեղեցւոյ բոլոր անդամների համար ընդունելի և պարտաւորական մի հանգանակ: Այդպիսին առաջին և վերջին անգամ, կարելի է ասել, Նիկիոյ ժողովն է միայն տուել: Այնուամենայնիւ ներկայ շրջանում տեսականապէս հաստատուած պէտք է համարուին երեք հիմնական չափերը՝ եպիսկոպոսական իշխանութիւն, Նոր Կտակարան և Հաւատոյ կանոն, որոնցով իւր որոշ մշտական կերպարանութիւնն ստացաւ Ընդհանրական եկեղեցին:

**Է. Ծէսեր, տօներ, վարք ու բարք.**—Որչափ և հոգևոր բնաւորութիւն էր կրում քրիստոնէական կրօնք, չէր կարող ուրիշ կրօնների նման իւր արտաքին պաշտամունքը՝ իւր ծիսական արտայայտութիւնները չունենալ: Ամենահին խորհրդաւոր ծէսք, որ Փրկչի օրինակով կատարել էին արդէն նորա անմիջական աշակերտները և որով իւրաքանչիւր նոր հաւատացեալ եկեղեցւոյ գիրկն էր ընդունուում՝ մկրտութիւնն էր անշուշտ: Սկզբում մկրտութիւն ընդունելու համար բաւական էր համարւում մի պարզ խոստովանութիւն յանուն Քրիստոսի կամ յանուն Ս. Երրորդութեան. բայց յետոյ հանգամանքները ստիպեցին երկար (մինչև 2 տարի տևող) նախապատրաստութիւն ու հրահանգութիւն պահանջել: Մկրտութիւն կատարում էին սովորաբար ուխտօրեայ հանդիսով, տարին երկու անգամ՝ զատկի և հոգեգալստեան մեծ տօներին: Նախնական ձևը երեք անգամ ջրի մէջ ընկղմելն էր, ինչպէս մեզանում պահուած է. միայն հիւանդներին բաւականանում էին [illegible]սրսկելով, որից այդ ձևի մկրտութիւնը սովորութիւն [illegible] անուանւում: Մկրտուում էին ի հարկէ յօժար[illegible] և հասկացողութեամբ. քրիստոնէութիւն ընդու[illegible]նդակաւոր մարդիկ. բայց շատ վաղ սկսաք է սկը-

պատուած լինել նոյա հետ նաև նոյա զաւակներին, կամ հաւատացեալ ծնողներից եղած մանուկներին՝ մկրտելու սովորութիւնը. Թէպէտ դեռ Գ. դարում մանուկների մկրտութեան դէմ Տերտուղիանոսը կանգնեց և մինչև վերջն էլ նոյն պաշտպանաւոր կռւայն մնաց: Դորա հետ մէկտեղ հաստատուեց կնքահայր ունենալու սովորութիւնը: Իսկ աղանդաւորների բազմանալուց յետոյ մեծ խնդիր յառաջ եկաւ, թէ արդեօք պէ՞տք է վաւերական ճանաչել նոցա ձեռքով եղած մկրտութիւնը: Նոյն իսկ եկեղեցւոյ աչքի ընկնող ներկայացուցիչներից շատերը դորան հակառակ էին և այդպէս մկրտուածներին կրկին մկրտում էին. բայց վերջը յաղթանակեց այն հայեացքը, թէ կրկին ս. Երրորդութեան անունով մկրտուածներին նորից մկրտել կարելի չէ:

Երկրորդ մեծ խորհուրդը՝ հաղորդութիւնը, կատարւում էր նախկին քրիստոնեաների ամենօրեայ (յետոյ միայն կիւրակնօրեայ) պաշտամունքի կենտրոնը: Կատարւում էր այն, Փրկչի օրինակով, երեկոները. Բ. դարում հալածանքների պատճառով սկսեցին առաւօտները կատարել: Հանդէսն սկսւում էր ս. Գրքի ընթերցանութեամբ, ապա քարոզութիւն և հասարակական աղօթք էր տեղի ունենում, որի վերջում բոլոր հաւատացեալները եղբայրական համբուրով միմեանց ողջունում էին: Յետոյ հացը և գինին մատուցանում էին եպիսկոպոսին, որ աղօթելով և գոհաբանելով՝ օրհնում էր հացը, ինքը ճաշակում բաժակի հետ և տալիս սարկաւագներին բաշխելու՝ իբրև մարմին և արիւն Քրիստոսի. իսկ բացականների համար տուն էին տանում: Հրէից-քրիստոնեաներից մնացել էր նաև սաղմոսներ երգելու սովորութիւնը, որ աւելի ընդարձակութիւն գտաւ արևելքում: Անսուաղ հաղորդուելու սովորութիւնը նոյնպէս շատ հին է: Հաղորդութեան մասնակցել կարող էին միայն իսկական հաւատացեալները. ուստի չմկրտուածները և ապաշխարութեան ենթարկուածները ս. Գիրքը և քարոզը լսելուց յետոյ դուրս էին հանւում: Հաղորդութեան խորհուրդի հետ երկար ժամանակ կատարւում էր սիրոյ ճաշը՝ այն նպատակով, որ բոլոր հաւատացեալներն իրենց աղօթքով կերակուրը Աստուծոյ ձեռքից ընդունած լինել համարեն և միասին վայելելով՝ իրենց ունեցածից բաժին

հանեն աղքատին ու տնանկին: Բայց արդէն առաքելական ժամանակից սկսած այնպիսի զեղծումներ էին լինում այդ ճաշերին, որ նորա Դ. դարում մի քանի ժողովներով արգելուեցան: Մեզանում հին հեթանոսական զոհաբերութիւնները փոխարինեցին այդ սիրոյ ճաշով, որ և յարատեւեց իբրև «մատաղ»:

Ուրիշ բաների հետ քրիստոնեաները հրէաներից վերցրին նաև շաբաթուայ մէջ մի օր սուրբ պահելու և երկու օր պահեցողութեան նուիրելու սովորութիւնը: Հրէայ քրիստոնեաները իրենց ազգակիցների նման սուրբ էին պահում շաբաթ օրը. բայց միևնոյն ժամանակ այն օրը, երբ Փրկիչը յարութիւն էր առել՝ նուիրեցին նորա յիշատակին և դարձրին Կիւրակէ—տէրունական օր. այդ օրն էին ժողովւում յատկապէս համայնական աղօթքի և հաղորդութեան խորհուրդը կատարելու համար, և այդ օրը շուտով իւր վերայ վերցրեց նաև շաբաթի նշանակութիւնը ու նորա տեղը բռնեց: Միայն արևելքում շաբաթը մնաց իբրև կէս-տօնական օր՝ նորանով, որ այդ օրը շաբաթական պահքը լուծում էին և աւելի նշանաւոր սուրբերի յիշատակն էին կատարում: Իսկ հրէից երկուշաբթու և հինգշաբթու փոխարէն քրիստոնէութեան համար պահեցողութեան կամ հսկման օրեր դարձան չորեքշաբթին ու ուրբաթը, երբ մինչև ժամի 9-ը ծոմ էին պահում և ապա եկեղեցական պաշտամունքի ներկայ լինում: Այսպէս և հրէից պասէքի ազդեցութեամբ յառաջ եկաւ տարուայ ամենամեծ տօնը՝ զատիկը: Բ. դարի կէսերին յայտնի եղաւ, որ Հռոմում և ուրիշ արևմտեան համայնքներում, 40 ժամ կամ աւելի պահեցողութիւնից յետոյ՝ զատիկ էին կատարում միշտ այն կիւրակէ օրը, որ ընկնում էր Հրէից պասէքից յետոյ. իսկ Փոքր Ասիայում նոյնպիսի պահեցողութեամբ զատիկը տօնում էին հրէաների հետ միասին՝ նոյն Նիսան ամսի 14-ին: Հաւանականաբար սկզբում այդ տօնը տարբեր նշանակութիւն ունէր իւրաքանչիւրի համար. մի տեղ աւելի նշանակութիւն էին տալիս Քրիստոսի յարութեան յիշատակին, ուստի ինչպէս ամէն կիւրակէ այդ յիշատակին էր նուիրած, այդպէս էլ տարուայ մէջ մի մեծ կիւրակէ՝ ժամանակով ամէնից մօտ այն գարնային

օրերին, երբ Փրկիչը խաչուեց և յարութիւն առաւ, Նուիրում էին յատուկ յարութեան յաղթական տօնը կատարելու. իսկ միւս տեղում՝ Նկատելով խաչեցեալ Փրկչին իբրև ճշմարիտ գառն Աստուծոյ, ինչպէս Նա ինքը խորհրդաւոր ընթրիքի միջոցաւ այդ ուսուցել էր՝ Նոյն այն ժամին, երբ հրէաները պասէքի գառն էին ճաշակում, տօնում էին Նորա խաչի մահով և յարութեամբ ձեռք բերած փրկագործութեան մեծ խորհուրդի յիշատակը: Արդ, խնդիր էր, թէ՛ որ սովորութիւնն աւելի ուղիղ և ամբողջ քրիստոնէութեան համար պարտաւորեցուցիչ պէտք է համարուէր: Այս առթիւ ծագած վէճը երկար ժամանակ տևեց և միայն Նիկիոյ ժողովում լուծուեցաւ Նորանով, որ հաստատուեցաւ Հռովմի սովորութիւնը՝ Նիսանի 14-ին յաջորդող կիւրակէին տօնել զատիկն իբրև յարութեան յիշատակ. իսկ Նորա Նախընթաց չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին կատարել մատնութեան, խորհրդաւոր ընթրեաց և խաչելութեան յիշատակները: Ըստ այսմ և պահեցողութեան ժամերն ընդարձակուեցան, և յառաջ եկաւ քառասնօրեայ պահք:

Զատկից յետոյ ամենահին քրիստոնէական տօնն է հոգեգալուստը, որ Նոյնպէս բռնում է հրէից պենտեկոստէի տեղը: Իսկ յայտնութեան տօնը, որ Բ. դարում տօնել սկսեցին, Նուիրած էր առաջ Փրկչի մկրտութեան միջոցին իբրև Մեսիա յայտնուելու յիշատակին. յետոյ դորա վերայ աւելացաւ Նաև մարդեղութեամբ յայտնուելու խորհուրդը, կամ ծննդեան յիշատակը, և հին եկեղեցին կատարում էր յայտնութեան տօնը իբրև ծննդեան և մկրտութեան տօն միանգամայն, մինչև Դ. դարում արևմտեան եկեղեցիները սկսեցին առանձին ծննդեան տօն կատարել, ապա այդ սովորութիւնը Նաև արևելքում տարածուեց, ու միայն մեր եկեղեցին հաւատարիմ մնաց Նախնի աւանդութեանը:—Շատ վաղ սկսեցին զանազան համայնքներում իրենց մէջ եղած Նշանաւոր Նահատակների վկայութեան տօներ կատարել. այդ տօներից մի քանիսն ընդհանրացան յետոյ, և այսպէս հետզհետէ կազմակերպուեց եկեղեցական տարին՝ իւր բազմազան տօներով:

Սակայն Նախ քան քրիստոնէութիւնը իւր եկ

կան կազմակերպութեամբ ու պաշտամունքով միութենական ոյժ ձեռք կբերէր իւր հետեւողների համար և արտաքին ազդեցութիւն կունէր դրսի աշխարհի վերայ, նա արդէն հոգևոր մեծ զօրութիւն էր իւր քարոզած ու փորձառական եկեղեցական սկզբունքներով: Փրկիչը ցանկացել էր, որ նորա աշակերտները յայտնի լինէին իրենց բարի գործերով, յատկապէս միմեանց սիրելով. և իրաւ նոյն իսկ այն հեթանոսները, որոնք քրիստոնէական հաւատը ծաղրում էին և հաւատացեալներին ամենայն ոճրագործութիւններում մեղադրում, չէին կարող ուրանալ, որ սոքա իրենց մաքուր վարքով ու անձնուէր սիրոյ պատրաստակամութեամբ մի արտաքոյ կարգի երևոյթ էին ներկայանում շրջապատող եսական և ամենաանձնական հաճոյքների ապականէ դարձած աշխարհում: Որբերն ու այրիները, հիւանդներն ու յաշմանդամները, գերիներն ու բանտարկեալները, աղքատութեան և քաղաքական ծանր պայմանների մէջ տառապողները, բնութեան դաժան պատահարներից թշուառացածներն ու այլ և այլ հանգամանքների շնորհիւ աղքատութեան ու քաղցի մատնուածները — ամէնքն օգնութիւն էին գտնում իրենց հաւատակից եղբայրներից: Օգնութիւնը լինում էր թէ մասնաւոր կերպով, թէ համայնական միջոցներով. ջերմեռանդ հաւատացեալը կիւրակէ օրերը, կամ ուրիշ տօնախմբութիւնների ժամանակ, բերում էր իւր նուէրը և յանձնում եպիսկոպոսին. նա էլ դնում էր սեղանի վերայ, որով նուիրած էր լինում Աստուծուն, իսկ ժամասացութիւնից յետոյ սարկաւագների միջոցաւ կամ տեղն ու տեղը բաժանում էր կարօտեալներին, կամ նոցա տներն էր ուղարկում: Մեծ համայնքներում երբեմն լինում էին նաև շատ խոշոր նուիրաբերութիւններ, և այդ նուէրներով, բացի հեռու և մօտիկ կարօտեալներին օգնելուց, հոգացում էին նաև ուրիշ շատ ահագին ծախքեր, ինչպէս օր. եկեղեցու պաշտօնեաների ապրուստը, աղքատ ննջեցեալների թաղման ծախսը, ճանապարհորդող եղբայրներին ցոյց տուած հիւրասիրութիւնը և այլն: Կան վկայութիւններ, որ շատ անգամ հեթանոս չքաւորներին ևս բաժին էր հասնում քրիստոնեաների գթասրտութիւնից: Բայց միայն դորանով չէին սոքա հեթանոս աշխարհի համար իրենց ամե-

քէշ աղ հանդիսանում, այլ նաև իրենց վարքի բարոյակրթական նշանակութեամբ: Քրիստոնեաները կոչւում էին հրատարակել տիրող անառակութեան, ստութեան, զօշաքաղութեան դէմ: Հաստատելով միակնութիւնը և անլուծանելի դարձնելով ամուսնութիւնը՝ նոքա ամէն ջանք գործ էին դնում պաշտպանել ընտանեկան կեանքի սրբութիւնը սովորական դարձած ծայրայեղ վեղծումների դէմ: Արգելելով վաշխառութիւնը, ընչաքրութիւնը, կեղծիքը առևտուրի մէջ՝ նոքա հովանաւորում էին խեղճին և զրկեալին: Խուսափելով գազանամարտներից և ժամանակակից թատրոնի ընծայած անպատկառ տեսարաններից՝ նոքա մեղմացնում էին բարքերը, բարձրացնում ժողովրդեան բարոյական գիտակցութիւնը: Շատ նորադարձները խոստովանում են, որ քրիստոնէական համայնքի և քրիստոնեայ անհատների մէջ նկատած բարոյական կեանքի վեհութիւնը ամենահամոզեցուցիչ պատճառն է եղել իրենց համար նոր կրօնն ընդգրկելու:

## ԳԼՈՒԽ Գ.

## Առանձնութիւններ եւ հետքեր նախ քան ս. Լուսաւորիչ Հայաստանում եղած քրիստոնէութեան:

**Ա. Աբգար թագաւորի դարձն ըստ աւանդական աւանդութեան:**—Հայկական աւանդութիւնը քրիստոնէութեան ծագումն Հայաստանում սերտ կերպով կապում է Եդեսական աւանդութեան հետ, որի ասորերէն յիշատակարանն այսպէս է պատմում: Աբգար Ուքամա, այսինքն Սև, Եդեսիայի թագաւորը, որ երկարատև թագաւորութիւնից յետոյ վախճանել է 50 թ. ին յ. Ք., դեսպաններ էր ուղարկել Պաղեստինի Ելևթերոպոլիս քաղաքը՝ Հռովմայեցւոց Տեբերիոս կայսեր Սաբինոս կուսակալի մօտ: Այդ դեսպանները ճանապարհորդութեան միջոցին մտնում են Երուսաղէմ և մնում այնտեղ հրէից բազմութեան, որ գնում էր Քրիստոսի ետևից. տեսնում օր մնում են, և իրենցից մէկը՝ Անան, թագաւորի քարտուղարը, բոլոր

տեսածները գրի է առնում։ Երբ վերադառնում են Եդեսիա՝ պատմում են և ցոյց տալիս Թագաւորին Անանի գրածը։ Աբգար շատ զարմանում է և կամենում է գնալ Պաղեստին, Քրիստոսին անձամբ տեսնել. բայց չի կարողանում, որովհետև Հռովմայեցւոց իշխանութեան տակ գտնուած երկրում պիտի ճանապարհորդէր։ Ապա Անանի ձեռքով մի նամակ է գրում, որի մէջ Յիսուսին դիմելով իբրև բժշկի և նորա կատարած հրաշքների հիման վերայ հաւատացած, թէ նա Աստուած է և Աստուծոյ Որդի, խնդրում է գալ բժշկել իրեն հիւանդութիւնից, ազատուել հրէաների հետամտութիւնից և ապրել իրեն հետ իւր փոքրիկ խաղաղ մայրաքաղաքում։ Յիսուս ստանալով նամակը՝ երանի է տալիս Աբգարին, որ առանց իրեն տեսնելու հաւատացել էր, և յանձնարարում է ասել նորան, թէ ինքը պիտի կատարէ իւր համար սահմանուածները և վերանայ Հօր մօտ. բայց յետոյ կուղարկէ իւր աշակերտներից մէկին, որ նորան բժշկէ, և բոլոր նորա հետ եղողները յաւիտենական կեանք ժառանգեն, նորա քաղաքն օրհնուի և ընդ միշտ զերծ մնայ թշնամիներից։ Անան նաև նկարում է Յիսուսին ու պատկերը հետը բերում, պատմում է Աբգարին իւր լսածները։ Պատկերը պատուաւոր տեղ է գտնում Աբգարի ապարանքում։ Իսկ Քրիստոսի համբարձումից յետոյ Թովմաս առաքեալը ուղարկում է նորա եօթանասուն և երկու աշակերտներից մէկին՝ Ադդէին, Աբգարի մօտ։ Ադդէն Եդեսիայում իջևանում է Տուբիա անունով մի հրէի տանը։ Աբգարը լսում է և հրաւիրում իւր մօտ. բժշկութիւն է գտնում նախ ինքը, ապա և իւր շրջապատողներից շատերը. բոլորեքեան հաւատում են։ Թագաւորի հրամանով քաղաքի բոլոր բնակիչներն ի մի տեղ են ժողովուում. Ադդէն երկար քարոզում է նոցա, և գրեթէ ամբողջ ժողովուրդը քրիստոնէութիւն է ընդունում ու մկրտուում. նոցա հետ նաև քաղաքում ապրող կռաւագործ հրէաները։ Եկեղեցի ևս շինում է Եդեսիայում, և մի քանի տարի նորադարձներին հովուելուց յետոյ՝ ձեռնադրում է Ադդէոս կերպասագործին եպիսկոպոս, իւր յաջորդ թողնում, խաղաղութեամբ վախճանում և մեծ պատուով թաղուում։ Իսկ

երբ Աբգար թագաւորը վախճանւում է, նորա որդի չարահոգի Մանուն Ագգէոսի սրունքները ջարդել տալով նահատակում է, և որովհետև սա չէր կարողացել իւր տեղը եպիսկոպոս ձեռնադրել՝ Փղոտ երէցը գնում է Անտիոք ու ձեռնադրութիւն ընդունում Սերապիոն եպիսկոպոսից, որ իւր կարգին ձեռնադրուել էր Պետրոս առաքեալի փոխանորդ Հռոմի Զեփիւրինոս եպիսկոպոսից:

Այս աւանդութիւնը յայտնի է եղել արդէն Եւսեբիոս Կեսարացուն, որ Դ. դարի սկզբներին, իւր նշանաւոր Եկեղեցական պատմութիւնը գրելիս՝ համարել է այն Եդեսիոյի դիւանում պահուող հին յիշատակարաններից առնուած և, ասորերէնից յունարէն թարգմանելով՝ համառօտակի իւր պատմութեան մէջ մտցրել: Յիսուսի բերանացի խօսքերի փոխարէն Եւսեբիոս յառաջ է բերում նորա Աբգարին գրած մի նամակը՝ նոյն բովանդակութեամբ. իսկ Ադդէ առաքեալին անուանում է Թադէոս: Ամբողջ աւանդութեան այժմ գտնուած ասորերէն յիշատակարանի հեղինակն է, վերջաբանի համաձայն՝ «Լաբուբնա, որդի Սենեկայ, որդի Աբշադարայ, դպիր թագաւորի». իսկ «Հաննան քարտուղարը» վերցրել պահել է այն արքունի դիւանում: Այսպէս կարդացել է երևի նաև Եւսեբիոս, որ այդ գրուածքը համարել է ժամանակակցի գործ. բայց քննադատները ցոյց են տալիս, որ աւանդութիւնը յառաջ պէտք է եկած լինի Գ. դարում և այժմեան խմբագրութեամբ գրի առնուած Դ. դարի վերջերին: Այդ խմբագրութեամբ և մի քանի մանր փոփոխութիւններով նա ամբողջովին հայերէն է թարգմանուել և յայտնի եղել մեզանում «Ղերուբնայի պատմութիւն» անունով, որովհետև Լաբուբնա անուան տառերը հայերէնում աղաւաղուել են (Սենեկն էլ Անակ է դարձել): Ամենից կարևոր փոփոխութիւնը հայերէն թարգմանութեան մէջ այն է, որ Ադդէ առաքեալը Եդեսիայում չի մեռնում, այլ միայն Ադդէին (փոխանակ Ագգէոսի) եպիսկոպոս ձեռնադրելով՝ գնում է «ընդ արևելս քարոզել զաւետարանն Քրիստոսի»:

Բ. Եդեսիական աւանդութեան հայկական ձևափոխութիւնը և Թադէոս առաքեալի գործունէութիւնը Հայաստանում. — Ասորական աւանդութիւնը ծանօթ է եղել մեզ

և

կողմնակի շարժառիթներից դրդուած, կռիւ յայտարա-
րեցին այդ բոլորի դէմ և պնդելով պնդում էին, թէ Հին
Կտակարանը աւետարանի նկատմամբ բոլորովին տարբեր
և ստոր աստիճանի կրօնական յայտնութիւն է: Ապա,
աւելի ոյժ տալու համար իրենց տեսութիւններին՝ նորա
հանդէպ հանեցին առաքելական շրջանի հեղինակներից
վերցրած և իրենց գաղափարներին յարմարեցրած, կամ
պարզապէս նոցա անունով կեղծած գրուածներ: Օրինակ
Մարկիոն Ղուկասի կրճատած աւետարանից և Պօղոս
առաքեալի 10 թղթերից կազմեց մի կանոնական ժողովա-
ծու, որ աւելի բարձր հեղինակութիւն պիտի ունենար,
քան ուղղահաւատների գործ դրած Հին Կտակարանը:
Վերջիններս այն ժամանակ իրենք էլ սկսեցին խնամքով
ժողովել հարազատ առաքելական գրուածները, որ վաղուց
առանձին առանձին կարդացւում էին շատ համայնքների
մէջ, և մանաւանդ չորս աւետարանները՝ իբրև Փրկչի քա-
րոզութեան ու գործոց անմիջական յիշատակարաններ,
որդէն Հին Կտակարանի հաւասար և աւելի յարգ ունէին:
Քանի դեռ կենդանի աւանդութիւնը կար նախնի քարո-
զիչների բերանում, նոցա կարիքը շատ չէր զգացւում.
բայց երբ այն քարոզիչներն իջան ասպարիզից, և ամէն ոք
սկսեց իւր քմայ համաձայն յեղյեղել ու բացատրել աւան-
դութիւնը, ինքն ըստ ինքեան պահանջ պէտք է յառաջ գար
գրաւոր յիշատակարանների միջոցաւ հաստատուն և տե-
ւական դարձնելու այն, և ահա լոյս ընկան զանազան
նպատակ ունեցող և զանազան տիպի գրուածներ, որոնք
առաքելական ծագում էին վերագրում իրենց: Հարկաւոր
էր ուրեմն ամենայն զգուշութեամբ զտել կեղծն իսկա-
կանից և ընտրել այնպիսիները, որոնք թէ իրենց անվիճելի
վաւերականութեամբ և թէ ներքին արժանիքով համապա-
տասխանէին նոցա վիճակուած մեծ դերին՝ հիմք և կանոնա-
կան չափ լինելու քրիստոնէական ուղիղ դաւանութեան
և բարոյականութեան համար: Ամենայն հաւանականու-
թեամբ այդ զտումն և կանոնական գրուածներին ի մի
ժողովելու ձեռնարկութիւնը տեղի ունեցաւ նախ Փոքր
Ասիայում, և ապա Հռովմում: Ինչպէ՞ս և ո՞ւմ ձեռքով,
մեզ յայտնի չէ. ժամանակակից յիշատակութիւններից

այնչափը միայն կարող ենք եզրակացնել, որ ամէնից առաջ ի մի ամփոփուեցան չորս աւետարանները. շուտով աւելացան նոցա վերայ Պօղոս առաքեալի թղթերը, ապա կաթուղիկեայց թղթերից մի քանիսը, և արդէն Բ. դարի կիսին մեր այժմեան Նոր Կտակարանի մեծագոյն մասը կազմուած էր ու գործածութեան մէջ: Յետոյ աւելացան Գործք առաքելոցը, կաթուղիկեայց մնացած թղթերը և Յովհաննու յայտնութիւնը. իսկ դարի վերջին մեր այժմեան կանոնը գրեթէ բոլորովին ամբողջացած էր և Հին Կտակարանի հետ մէկտեղ ընդունւում էր իբրև ս. Գրքի անհրաժեշտ և աւելի արժէքաւոր մասը: Միայն մի քանի թէ կանոնի մէջ մտած և թէ կանոնից դուրս մնացած գրուածների մասին տեղ տեղ կասկածներ կային, թէ արդեօք կանոնական պիտի համարուի՞ն: Յամենայն դէպս Նոր Կտակարանի կանոնի մէջ մտան անկասկած առաքելական շրջանի գրականութեան ընտրելագոյն նշխարները, և դորանով առաքելական աւանդութիւնը վերջնական ձևակերպութիւն ստացաւ: Անանցանելի սահման դրուեցաւ այնուհետև աստուածային աղբիւրից ընդունածի և մարդկային մտածութեան արդիւնքների մէջ. բայց քրիստոնէական գրականութիւնը մի անդրդուելի հիմք ունեցաւ, որի վերայ արագ կերպով աճեց ու բարձրացաւ նորա բազմադարեան պատկառելի շէնքը:

Միաժամանակ հաստատուեցաւ նաև «Հաւատոյ կանոնը»: Քրիստոնէութեան առաջին օրերից ի վեր համայնքներում գործ էին ածուում այնպիսի բանաձևեր, որոնց մէջ համառօտ կերպով ամփոփուած էին հաւատոյ էական կէտերը: Յատկապէս մկրտութեան միջոցին նորահաւատը այդպիսի մի բանաձևով խոստովանում էր այն ճշմարտութիւնները, որ իբրև քրիստոնեայ պիտի դաւանէր: Երբ աղանդները բազմացան և վտանգաւոր դարձան, հարկ զգացուեց մի ընդհանուր բանաձև ընտրելու, որի մէջ առանձնապէս շեշտուէին նոցա խեղաթիւրած հաւատալիքները և ուղիղ դաւանութեամբ ապահովուէին նոցա մոլար ուսումից: Այդպիսի ձգտում ամէնից առաջ երևում է Հռովմում, ուր իրենց մէջ գործածական «Առաքելական հանգանակը» համարելով անմիջապէս առաքեալներից

պաւանդած կանոն ճշմարիտ հաւատոյ՝ կամեցան պարտա-
ւորեցուցիչ դարձնել այն բոլոր քրիստոնեաների համար և
նորա խոստովանութեամբ որոշել, թէ ով է Կաթուղիկէ
եկեղեցւոյ անդամ, և ով ոչ։ Բայց միայն Գ. դարում այդ
հանգանակը կամաց կամաց ընդունելութիւն գտաւ ուրիշ
եկեղեցիների մէջ։ Նոյն եղանակով մի քանի աւելի ընդար-
ձակ հանգանակներ էին կազմուել արևելեան եկեղեցինե-
րում, և գեռ գարի վերջին չկար Կաթուղիկէ եկեղեցւոյ
բոլոր անդամների համար ընդունելի և պարտաւորական
մի հանգանակ։ Այդպիսին առաջին և վերջին անգամ, կա-
րելի է ասել, Նիկիոյ ժողովն է միայն տուել։ Այնուամե-
նայնիւ ներկայ շրջանում տեսականապէս հաստատուած
պէտք է համարուին երեք հիմնական չափերը՝ եպիսկոպո-
սական իշխանութիւն, Նոր Կտակարան և Հաւատոյ կանոն,
որոնցով իւր որոշ միութական կերպարանութիւնն ստացաւ
Ընդհանրական եկեղեցին։

**Է. Մեհեր, զոհեր, վարք ու բարք.**—Որչափ և հոգևոր
բնաւորութիւն էր կրում քրիստոնէական կրօնք, չէր կա-
րող ուրիշ կրօնների նման իւր արտաքին պաշտամունքը՝
իւր ծիսական արտայայտութիւնները չունենալ։ Ամենա-
հին խորհրդաւոր ծէսը, որ Փրկչի օրինակով կատարել էին
արդէն նորա անմիջական աշակերտները և որով իւրա-
քանչիւր նոր հաւատացեալ եկեղեցւոյ գիրկն էր ընդու-
նւում՝ մկրտութիւնն էր անշուշտ։ Սկզբում մկրտու-
թիւն ընդունելու համար բաւական էր համարւում մի
պարզ խոստովանութիւն յանուն Քրիստոսի կամ յանուն
ս. Երրորդութեան. բայց յետոյ հանգամանքները ստիպե-
ցին երկար (մինչև 2 տարի տևող) նախապատրաստութիւն
ու հրահանգութիւն պահանջել։ Մկրտութիւն կատարում
էին սովորաբար ութօրեայ հանդիսով, տարին երկու անգամ՝
զատկի և հոգեգալստեան մեծ տօներին։ Նախնական ձևը
երեք անգամ ջրի մէջ ընկղմելն էր, ինչպէս մեզանում
պահուած է. միայն հիւանդներին բաւականանում էին
ջուր ցանելով, որից այդ ձևի մկրտութիւնը սովորութիւն
դարձաւ արևմուտքում։ Մկրտւում էին ի հարկէ յօժար
կամքով և հասկացողութեամբ քրիստոնէութիւն ընդու-
նած հասակաւոր մարդիկ. բայց շատ վաղ պէտք է սկը-

պատուած լինէր նոյա հետ նաև նոյա զաւակներին, կամ հաւատացեալ ծնողներից եղած մանուկներին՝ մկրտելու սովորութիւնը. Թէպէտ դեռ Գ. դարում մանուկների մկրտութեան դէմ Տերտուղիանոսը կային և մինչև վերջն էլ իբրև պացանկացողը կրևայթ մնացին: Դրա հետ մէկտեղ հաստատուեց կնքահայր ունենալու սովորութիւնը: Իսկ աղանդաւորների բազմանալուց յետոյ մեծ խնդիր յառաջ եկաւ, թէ արդեօք պէ՞տք է վաւերական ճանաչել նոցա ձեռքով կատարած մկրտութիւնը: Նոյն իսկ Եկեղեցւոյ աչքի ընկնող ներկայացուցիչներից շատերը դրան հակառակ էին և այդպէս մկրտուածներին կրկին մկրտում էին. բայց վերջը յաղթանակեց այն հայեացքը, թէ յանուն ս. Երրորդութեան մկրտուածներին նորից մկրտել կարելի չէ:

Երկրորդ մեծ խորհուրդը՝ հաղորդութիւնը, կազմում էր նախնի քրիստոնեաների ամենօրեայ (յետոյ միայն կիրակնօրեայ) պաշտամունքի կենտրոնը: Կատարւում էր այն, Փրկչի օրինակով, երեկոները. Բ. դարում հալածանքների պատճառով սկսեցին առաւօտները կատարել: Հանդէսն սկսւում էր ս. Գրքի ընթերցանութեամբ, ապա քարոզութիւն և հանգանակական աղօթք էր տեղի ունենում, որի վերջում բոլոր հաւատացեալները եղբայրական համբոյրով միմեանց ողջունում էին: Յետոյ հացը և գինին մատուցանում էին եպիսկոպոսին, որ աղօթելով և գոհաբանելով՝ բեկանում էր հացը, ինքը ճաշակում բաժակի հետ և տալիս սարկաւագներին բաշխելու՝ իբրև մարմին և արիւն Քրիստոսի. իսկ բացականների համար տուն էին տանում: Հրէայ-քրիստոնեաներից մնացել էր նաև սաղմոսներ երգելու սովորութիւնը, որ աւելի ընդարձակութիւն գտաւ արևելքում: Անսուաղ հաղորդուելու սովորութիւնը նոյնպէս շատ հին է: Հաղորդութեան մասնակցել կարող էին միայն կատարեալ հաւատացեալները. ուստի չմկրտուածները և ապաշխարութեան ենթարկուածները ս. Գիրքը և քարոզը լսելուց յետոյ դուրս էին հանւում: Հաղորդութեան խորհուրդի հետ երկար ժամանակ կատարւում էր սիրոյ ճաշը՝ այն նպատակով, որ բոլոր հաւատացեալներն իրենց առօրեայ կերակուրը Աստուծոյ սեղանից ընդունած պէտք համարեն և միասին վայելելով՝ իրենց ունեցածից բաժնեն

հանեն աղքատին ու տնանկին։ Բայց արդէն առաքելական ժամանակից սկսած այնպիսի զեղծումներ էին լինում այդ ճաշերին, որ նոքա Դ. դարում մի քանի ժողովներով արգելուեցան։ Մեզանում հին հեթանոսական զոհաբերութիւնները փոխարինեցին այդ սիրոյ ճաշով, որ և յարատևեց իբրև «մատաղ»։

Ուրիշ բաների հետ քրիստոնեաները հրէաներից վերցրին նաև շաբաթուայ մէջ մի օր սուրբ պահելու և երկու օր պահեցողութեան նուիրելու սովորութիւնը։ Հրէայ քրիստոնեաները իրենց ազգակիցների նման սուրբ էին պահում շաբաթ օրը. բայց միևնոյն ժամանակ այն օրը, երբ Փրկիչը յարութիւն էր առել՝ նուիրեցին նորա յիշատակին և դարձրին Կիւրակէ—տէրունական օր. այդ օրն էին ժողովուում յատկապէս համայնական աղօթքի և հաղորդութեան խորհուրդը կատարելու համար, և այդ օրը շուտով իւր վերայ վերցրեց նաև շաբաթի նշանակութիւնը ու նորա տեղը բռնեց։ Միայն արևելքում շաբաթը մնաց իբրև կէս-տօնական օր՝ նորանով, որ այդ օրը շաբաթական պահքը լուծում էին և աւելի նշանաւոր սուրբերի յիշատակն էին կատարում։ Իսկ հրէից երկուշաբթու և հինգշաբթու փոխարէն քրիստոնէութեան համար պահեցողութեան կամ հսկման օրեր դարձան չորեքշաբթին ու ուրբաթը, երբ մինչև ժամի 9-ը ծոմ էին պահում և ապա եկեղեցական պաշտամունքի ներկայ լինում։ Այսպէս և հրէից պասէքի ազդեցութեամբ յառաջ եկաւ տարուայ ամենամեծ տօնը՝ զատիկը։ Բ. դարի կէսերին յայտնի եղաւ, որ Հռովմում և ուրիշ արևմտեան համայնքներում, 40 ժամ կամ աւելի պահեցողութիւնից յետոյ՝ զատիկ էին կատարում միշտ այն կիւրակէ օրը, որ ընկնում էր Հրէից պասէքից յետոյ. իսկ Փոքր Ասիայում նոյնպիսի պահեցողութեամբ զատիկը տօնում էին հրէաների հետ միասին՝ նոյն նիսան ամսի 14-ին։ Հաւանականաբար սկզբում այդ տօնը տարբեր նշանակութիւն ունէր իւրաքանչիւրի համար. մի տեղ աւելի նշանակութիւն էին տալիս Քրիստոսի յարութեան յիշատակին, ուստի ինչպէս ամէն կիւրակէ այդ յիշատակին էր նուիրած, այդպէս էլ տարուայ մէջ մի մեծ կիւրակէ՝ ժամանակով ամէնից մօտ այն գարնային

օրերին, երբ Փրկիչը խաչուեց և յարութիւն առաւ, նուիրում էին յատուկ յարութեան յաղթական տօնը կատարելու. իսկ միւս տեղում՝ նկատելով խաչեցեալ Փրկչին իբրև ճշմարիտ գառն Աստուծոյ, ինչպէս նա ինքը խորհրդաւոր ընթրիքի միջոցաւ այդ ուսուցել էր՝ նոյն այն ժամին, երբ հրէաները պասէքի գառն էին ճաշակում, տօնում էին նորա խաչի մահով և յարութեամբ ձեռք բերած փրկագործութեան մեծ խորհուրդի յիշատակը: Արդ, խնդիր էր, թէ ո՛ր սովորութիւնն աւելի ուղիղ և ամբողջ քրիստոնէութեան համար պարտաւորեցուցիչ պէտք է համարուէր: Այս առթիւ ծագած վէճը երկար ժամանակ տևեց և միայն Նիկիոյ ժողովում լուծուեցաւ նորանով, որ հաստատուեցաւ Հռովմի սովորութիւնը՝ Նիսանի 14-ին յաջորդող կիւրակէին տօնել զատիկն իբրև յարութեան յիշատակ. իսկ նորա նախընթաց չորեքշաբթի, հինգշաբթի և ուրբաթ օրերին կատարել մատնութեան, խորհրդաւոր ընթրեաց և խաչելութեան յիշատակները: Ըստ այսմ և պահեցողութեան ժամերն ընդարձակուեցան, և յառաջ եկաւ քառասնօրեայ պահք:

Զատկից յետոյ ամենահին քրիստոնէական տօնն է հոգեգալուստը, որ նոյնպէս բռնում է հրէից պենտեկոստէի տեղը: Իսկ յայտնութեան տօնը, որ Բ. դարում տօնել սկսեցին, նուիրած էր առաջ Փրկչի մկրտութեան միջոցին իբրև Մեսիա յայտնուելու յիշատակին. յետոյ դորա վերայ աւելացաւ նաև մարդեղութեամբ յայտնուելու խորհուրդը, կամ ծննդեան յիշատակը, և հին եկեղեցին կատարում էր յայտնութեան տօնը իբրև ծննդեան և մկրտութեան տօն միանգամայն, մինչև Դ. դարում արևմտեան եկեղեցիները սկսեցին առանձին ծննդեան տօն կատարել, ապա այդ սովորութիւնը նաև արևելքում տարածուեց, ու միայն մեր եկեղեցին հաւատարիմ մնաց նախնի աւանդութեանը:—Շատ վաղ սկսեցին զանազան համայնքներում իրենց մէջ եղած նշանաւոր նահատակների վկայութեան տօներ կատարել. այդ տօներից մի քանիսն ընդհանրացան յետոյ, և այսպէս հետզհետէ կազմակերպուեց եկեղեցական տարին՝ իւր բազմազան տօներով:

Սակայն նախ քան քրիստոնէութիւնը իւր եկեղեց···

կան կազմակերպութեամբ ու պաշտամունքով միացեալ ոյժ ձեռք կբերէր իւր հետևողների համար և ամրապնդէր ազդեցութիւն կունէր դրսի աշխարհի վերայ, նա առաջ հոգևոր մեծ զօրութիւն էր իւր քարոզած ու գործադրած բարոյական սկզբունքներով: Փրկիչը ցանկացել էր, որ նոր աշակերտները յայտնի լինէին իրենց բարի գործերով, յատկապէս միմեանց սիրելով. և իրօք նոյն իսկ այն հեթանոսները, որոնք քրիստոնէական հաւատը ծաղրում էին և հաւատացեալներին ամենազզուելի յանցաւորութիւններ ամբաստանում, չէին կարող ուրանալ, որ սոքա իրենց մաքուր վարքով ու անձնուէր սիրով պատրաստակամութեամբ ի արտաքոյ կարգի երևոյթ էին ներկայացնում շրջապատող եռանդուն և ամենաանձնուէր կերպով առաջարկել գործն աշխարհում: Որբերն ու այրիները, հիւանդներն ու յաշմանդամները, գերիներն ու բանտարկեալները, աղքատութեան և քաղաքական ծանր պայմանների մէջ տառապողները, բնութեան դաժան պատահարներից թշուառացածներն ու այլ և այլ հանգամանքների շնորհիւ աղքատութեան ու քաղցի մատնուածները — ամէնքն օգնութիւն էին գտնում իրենց հաւատակից եղբայրներից: Օգնութիւնը լինում էր թէ մասնաւոր կերպով, թէ համայնական միջոցներով. ջերմեռանդ հաւատացեալը կիւրակէ օրերը, կամ ուրիշ տօնախմբութիւնների ժամանակ, բերում էր իւր նուէրը և յանձնում եպիսկոպոսին. նա էլ դնում էր սեղանի վերայ, որով նուիրած էր լինում Աստուծուն, իսկ ժամերգութիւնից յետոյ սարկաւագների միջոցաւ կամ տեղն ու տեղը բաժանում էր կարօտեալներին, կամ նոցա տներն էր ուղարկում: Մեծ համայնքներում երբեմն լինում էին նաև շատ խոշոր նուիրաբերութիւններ, և այդ նուէրներով, բացի հեռու և մօտիկ կարօտեալներին օգնելուց, հոգացում էին նաև ուրիշ շատ տեսակ պէտքեր, ինչպէս օր. եկեղեցու պաշտօնեաների ապրուստը, աղքատ ննջեցեալների թաղման ծախսը, ճանապարհորդող եղբայրներին ցոյց տուած հիւրասիրութիւնը ևլն: Կան վկայութիւններ, որ շատ անգամ հեթանոս չքաւորներին էլ բաժին էր հասնում քրիստոնեաների գթասրտութիւնից: Բայց միայն դրամով չէին սոքա հեթանոս աշխարհի համար իբրև ամե-

քէչ ազ հանդիսանում, այլ նաև իրենց մտքերի բարոյա-կրթական նշանակութեամբ: Քրիստոնեաները կռիւ էին հրատարակել տիրող անառակութեան, սնութեան, զօշաքաղութեան դէմ: Հաստատելով միակնութիւնը և անլուծանելի դարձնելով ամուսնութիւնը՝ նոքա ամէն ջանք գործ էին դնում պաշտպանել ընտանեկան կեանքի սրբութիւնը սովորական դարձած ծայրայեղ վեղծումների դէմ: Արգելելով վաշխառութիւնը, ընչաքսրութիւնը, կեղծիքը առևտուրի մէջ՝ նոքա հովանաւորում էին խեղճին և զրկեալին: Խուսափելով գազանամարտներից և ժամանակակից թատրոնի ընծայած անպատկառ տեսարաններից՝ նոքա մեղմացնում էին բարքերը, բարձրացնում ժողովրդեան բարոյական գիտակցութիւնը: Շատ նորադարձները խոստովանում են, որ քրիստոնէական համայնքի և քրիստոնեայ ընտանիքի մէջ նկատած բարոյական կեանքի վեհութիւնը ամենահամոզեցուցիչ փաստն է եղել իրենց համար նոր կրօնն ընդգրկելու:

## ԳԼՈՒԽ Գ.

## Աւանդութիւններ եւ փաստեր նախ քան Ս. Լուսաւորիչ Հայաստանում եղած քրիստոնէութեան:

**Ա. Աբգար թագաւորի դարձն ըստ ասորական աւանդութեան:**—Հայկական աւանդութիւնը քրիստոնէութեան ծագումն Հայաստանում սերտ կերպով կապում է Եդեսական աւանդութեան հետ, որի ասորերէն յիշատակարանն այսպէս է պատմում: Աբգար Ուքամա, այսինքն Սև, Եդեսիայի թագաւորը, որ երկարատև թագաւորութիւնից յետոյ վախճանել է 50 թ. ին յ. Ք., դեսպաններ էր ուղարկել Պաղեստինի Ելևթերոպոլիս քաղաքը՝ Հռովմայեցւոց Տեբերիոս կայսեր Սաբինոս կուսակալի մօտ: Այդ դեսպանները ճանապարհորդութեան միջոցին մտնում են Երուսաղէմ և տեսնում այնտեղ հրէայ բազմութեանը, որ գնում էր Քրիստոսի ետևից. տեսան օր մ'ննում են, և իրենցից մէկը՝ Անան, թագաւորի քարտուղարը, ըստ

տեսածները գրի է առնում: Երբ վերադառնում են Եդեսիա՝ պատմում են և ցոյց տալիս Թագաւորին Անանի գրածը: Աբգար շատ զարմանում է և կամենում է գնալ Պաղեստին, Քրիստոսին անձամբ տեսնել. բայց չի կարողանում, որովհետև Հռովմայեցւոց իշխանութեան տակ գտնուած երկրում պիտի ճանապարհորդէր: Ապա Անանի ձեռքով մի նամակ է գրում, որի մէջ Յիսուսին դիմելով իբրև բժշկի և նորա կատարած հրաշքների հիման վերայ հաւատացած, թէ նա Աստուած է և Աստուծոյ Որդի, խնդրում է գալ բժշկել իրեն հիւանդութիւնից, ազատել հրէաների հետամտութիւնից և ապրել իրեն հետ իւր փոքրիկ խաղաղ մայրաքաղաքում: Յիսուս ստանալով նամակը՝ երանի է տալիս Աբգարին, որ առանց իրեն տեսնելու հաւատացել էր, և յանձնարարում է ասել նորան, թէ ինքը պիտի կատարէ իւր համար սահմանուածները և վերանայ Հօր մօտ. բայց յետոյ կուղարկէ իւր աշակերտներից մէկին, որ նորան բժշկէ, և բոլոր նորա հետ եղողները յաւիտենական կեանք ժառանգեն, նորա քաղաքն օրհնուի և ընդ միշտ զերծ մնայ թշնամիներից: Անան նաև նկարում է Յիսուսին ու պատկերը հետը բերում, պատմում է Աբգարին իւր լսածները: Պատկերը պատուաւոր տեղ է գտնում Աբգարի ապարանքում: Իսկ Քրիստոսի համբարձումից յետոյ Թովմաս առաքեալը ուղարկում է նորա եօթանասուն և երկու աշակերտներից մէկին՝ Ադդէին, Աբգարի մօտ: Ադդէն Եդեսիայում իջևանում է Տուբիա անունով մի հրէի տանը: Աբգարը լսում և հրաւիրում իւր մօտ. բժշկութիւն է գտնում նախ ինքը ապա և իւր շրջապատողներից շատերը. բոլորեքեան հաւատում են: Թագաւորի հրամանով քաղաքի բոլոր բնակիչներն ի մի տեղ են ժողովւում. Ադդէն երկար քարոզում է նոցա, և գրեթէ ամբողջ ժողովուրդը քրիստոնէութիւն է ընդունում ու մկրտւում. նոցա հետ նաև քաղաքում ապրող կտաւագործ հրէաները: Եկեղեցի և շինում է Եդեսիայում, և մի քանի տարի նորադարձների հովուելուց յետոյ՝ ձեռնադրում է Ագգէոս կերպասագործին եպիսկոպոս, իւր յաջորդ թողնում, խաղաղութեամբ վախճանում և մեծ պատուով թաղւում: Իսկ

Երբ Աբգար թագաւորը վախճանւում է, նորա որդի չա-րահոգի Մանուն Ագգէոսի սրունքները ջարդել տալով նահատակում է, և որովհետև սա չէր կարողացել իւր տեղը եպիսկոպոս ձեռնադրել՝ Փալուտ երէցը գնում է Ան-տիոք ու ձեռնադրութիւն ընդունում Սերապիոն եպիս-կոպոսից, որ իւր կարգին ձեռնադրուել էր Պետրոս առա-քեալի փոխանորդ Հռոմի Զեփիրինոս եպիսկոպոսից:

Այս աւանդութիւնը յայտնի է եղել արդէն Եւսե-բիոս Կեսարացուն, որ Դ. դարի սկզբներին, իւր նշանա-ւոր Եկեղեցական պատմութիւնը գրելիս՝ համարել է այն Եդեսիայի դիւանում պահուող հին յիշատակարաններից առնուած և, ասորերէնից յունարէն թարգմանելով՝ համա-ռօտակի իւր պատմութեան մէջ մտցրել: Յիշուած ընդա-րձակ խօսքերի փոխարէն Եւսեբիոս յառաջ է բերում նորա Աբգարին գրած մի նամակը՝ նոյն բովանդակութեամբ. Իսկ Ադդէ Առաքեալին անուանում է Թադէոս: Ամբողջ աւանդութեան այժմ գտնուած ասորերէն յիշատակա-րանի հեղինակն է, վերջաբանի համաձայն՝ «Լաբուբնա, որ-դի Սենեկայ, որդի Աբշադարայ, դպիր թագաւորի». Իսկ «Հաննան քարտուղարը» վկայել պահել է այն արքունի դիւանում: Այստեղ կարդացել է երևի նաև Եւսեբիոս, որ այդ գրուածքը համարել է ժամանակակցի գործ. բայց քննա-դատները ցոյց են տալիս, որ աւանդութիւնը յառաջ պէտք է եկած լինի Գ. դարում և այժմեան խմբագրութեամբ գրի առնուած Դ. դարի սկզբներին: Այդ խմբագրութեամբ և մի քանի մանր փոփոխութիւններով նա ամբողջովին հայերէն է թարգմանուել և յայտնի եղել մեզանում «Ղերուբնայի պատմութիւն» անունով, որովհետև Լաբուբնա անուան տառերը հայերէնում աղաւաղուել են (Սենակն էլ Անակ է դարձել): Ամենից կարևոր փոփոխութիւնը հայերէն թարգ-մանութեան մէջ այն է, որ Ադդէ առաքեալը Եդեսիայում չի մեռնում, այլ միւս Ադդէին (փոխանակ Ագգէոսի) եպիս-կոպոս ձեռնադրելով՝ գնում է «ընդ արևելս քարոզել աւետարանն Քրիստոսի»:

**Բ. Եդեսական աւանդութեան հայկական ձևափոխու-թիւնը եւ Թադէոս առաքեալի քարոզչութիւնը Հայաստա-նում.**— Ասորական աւանդութիւնը ծանօթ է եղել մեզ

պատմահայր Մովսէս Խորենացուն թէ «Ղերուբնայի»
թէ Նւսեբիոսի եկեղեցական պատմութեան հայերէն թարգ-
մանութիւններից, որ նա միացնելով, ամփոփելով և յա-
ւելումներ անելով՝ յառաջ է բերել իւր պատմութեան
մէջ: Սակայն այստեղ Աբգար Ուքաման, կամ Ուշաման
որ արդէն Լաբուբնայի հայերէն թարգմանութեան մէ
Արշամայ էր կարդացւում, ներկայանում է իբրև Հայոց
թագաւոր՝ Պարթևաց թագաւորների ցեղակից Արշակունի
Արշամ թագաւորի որդին, որ նախ հպատակեցնելով Հռով-
մայեցիներին և ապա ապստամբել կամենալով՝ շինել է
Եդեսիա քաղաքը և իւր գահը Մծբինից այնտեղ փոխա-
դրել: Այդպիսով Թադէոսի առաքելութիւնն էլ ակզբի
և եթ իբրև հայերի մէջ եղած է նկատւում, որ Եդեսիա-
յով չի վերջանում. այլ, ինչպէս հայերէն Լաբուբնայի
ակնարկել էր՝ հրովարտակ է առնում նա Աբգարից աւե-
տարանի անարգել քարոզութեան համար և գնում թա-
գաւորի քեռորդի Սանատրուկի մօտ, որ կարգւած է
«ի վերայ աշխարհին և զօրացն»: Յետոյ պատմւում է
թէ ինչպէս Աբգարի մահից յետոյ թագաւորութիւնը եր-
կու մասի է բաժանւում. Նորա՝ հայերէն Լաբուբնայի մէ
անունը չյիշուած, Անանուն որդին թագաւորում է Եդե-
սիայում, իսկ Սանատրուկ «ի Հայս»: Եւ որովհետև, ասում
է, յաջորդող անցքերը՝ առաքեալի Հայաստան գալը, Սա-
նատրուկի դարձը, կրկին հաւատն ուրանալը, առաքեալի
ու իւր Սանդուխտ դստեր նահատակելը, ինչպէս և Ադդ
եպիսկոպոսի նահատակութիւնը Եդեսիայում՝ ուրիշներ
արդէն պատմել են, ուստի ինքը Խորենացին բաւականա-
նում է համառօտակի յիշելով:

Ուրիշները—նշանակում է երևի ամէնից առաջ «Թա-
դէոս առաքելոյ վկայաբանութիւնը», որն ըստ վերջաբան
հայերէն է թարգմանել (չի ասած՝ ի՞նչ լեզուից) ամ
Սամուէլ եպիսկոպոս և որի երկու համառօտութիւններ
նոյնպէս կան: Խորենացուն ծանօթ է ըստ իւր վկայութեան
նաև Թադէոս առաքեալի ու Սանդուխտ կոյսի նշխարաց
գիւտի պատմութիւնը, որ տեղի է ունեցել մեր ձեռք
հասած յիշատակարանի համաձայն Վահան Մամիկոնեան
իշխանութեան օրով, այսինքն Ե. դարի վերջում: Ակա

յաբանութիւնը պատմում է, որ երբ Փրկիչը համբառնալիս ձեռքը առաքեալների վերայ դրաւ, ս. Հոգի ներշնչեց և զանազան վիճակներ քարոզելու ուղարկեց՝ Թադէոս առաքեալին վիճակուեց «Հայաստան ազգս», և նա ելաւ եկաւ նախ «Ասորւոց Միջագետք», քարոզեց ու հրաշքներ գործեց, Ուռհա քաղաքում Աբգար Թագաւորին բժշկեց, ամբողջ քաղաքը լուսաւորեց և, աշակերտներ թողնելով այնտեղ՝ շտապեց հասնել Հայոց աշխարհը, Սանատրուկ Թագաւորի մօտ։ Քարոզեց և հրաշալի բժշկութիւններ արաւ Արտազ գաւառի Շաւարշան գիւղաքաղաքում, որ Հայոց Թագաւորների ամարանոցն էր, և արքունիքից ու դրսից շատերը հաւատացին՝ ի միջի այլոց Թագաւորի դուստրը, մատաղ և հրաշագեղ Սանդուխտ կոյսը։ Թագաւորը հրամայում է հաւատացեալներին սրամահ անել. բայց նորանոր հրաշագործութիւններ են տեղի ունենում, որոնց պատճառով նոցա թիւը կրկին աւելանում է. հաւատում ու մկրտւում է նաև առաջնակարգ իշխաններից մէկը, որ Սամուէլ անունն է ստանում, և մի մեծազգի տիկին Զարմանդուխտ անունով՝ իւր ամբողջ ընտանիքի հետ։ Թագաւորն այդ երկուսին էլ և ուրիշ շատ հաւատացեալների սպանել է տալիս և աւելի զայրանալով իւր դստեր վերայ, որ նոցա շատերի դարձի պատճառն եղաւ, հրամայում է նորան ևս նահատակել։ Վերջը նահատակւում է առաքեալը՝ հաւատացեալների առաջնորդ թողնելով իւր «լծակից» Զաքարիային։ Սորա հետ մէկտեղ նորադարձների մի խմբի առաջնորդ մնում է Զեմենտոս, որ առաքեալի նահատակութեան միջոցին տեղի ունեցած հրաշքով ուրիշ շատերի հետ հաւատացեալների շարքն էր անցել։ Սանդուխտ կոյսի նահատակութեան տեղը Առաքեալը ծածկել էր. իսկ երբ ինքը նահատակւում է՝ մօտի վէմը պատառւում ու նորա մարմինը մէջն է առնում։ Դարեր անցնելուց յետոյ Կիրակոս անունով մի միայնակեաց՝ Շաւարշանի մօտ Սանատրուկ լերան ստորոտում մի այրի մէջ ճգնելիս, տեսիլ է ունենում, որով գտնում են Թադէոս առաքեալի, ս. Սանդուխտի, նոցա հետ նահատակուած, կամ առաքեալին աշակերտած, հինգ ուրիշ սուրբերի, նաև Զաքարիայի ու մի անյայտ Իսրա

չէի նշխարքները։ Այդ որ բոլոր են, Վահան Մամիկոնեանը և Յովհաննէս կաթողիկոսը (Մանդակունի) մեծ քաղաքական գործիչ, որոնք են կառուցում և զարդարում նշխարների մի մասն ամփոփում են իրենց հետ, Խորենացու անհետացման համեմատ՝ փոխադրում են «առաջադրը», նշանակում է հաւատակամարը՝ Դուինն ու Դրվիզ են վերջին։

Գ. Աւանդութիւններ Բարդուղիմէոս առաքեալի եւ Եղի Նախահայր եղջանի այլ քարոզիչների ու վկաների մասին.— Խորենացին յիշում է համառօտ, որ բացի ս. Թադէոսից Հայաստանի առաքելութիւնը վիճակուել է նաև ս. Բարդուղիմէոս առաքեալին, և սա նահատակուել է Հայքի մէջ՝ Արեբանոս քաղաքում։ Նոյնը ընդարձակ կերպով պատմում է առաքեալի հայերէն վկայաբանութիւնը։ Այդ համաձայն՝ Հնդկաց, Պարթևաց, Մարաց, Եղիմացւոց երկրները քարոզելուց յետոյ նա գալիս է Հայաստան։ Գողթն գաւառը, քարոզում, շատերին ի քրիստոնէութիւն դարձնում և մկրտում, այստեղ թողնելով նոյն մօտ իւր աշակերտներից մի քանիսին՝ Սանատրուկի թագաւորութեան 29-րդ տարին մտնում է Հայաստանի կենտրոնական մասը, ուր հարկաւոր էր Թադէոսի առաքելութեան պակասը լրացնել։ «Արտաշու» բերդի մօտ հանդիպում է 12 առաքեալներից մէկին՝ Յուդա Յակոբեանին, հանդիպման տեղը մի խաչ են կանգնեցնում, և բաժանուելով նորանից՝ գալիս է Հեր և Զարևանդ գաւառները, կանգ առնում Ուրբիոնա քաղաքում։ Այստեղ ուրիշ հաւատացեալների թւում նորան աշակերտում է Սանատրուկ թագաւորի քոյրը Ոգուհին։ Թագաւորը իմանալով զայրանում է և ուղարկում Տերենտիոս հազարապետին նորան ձերբակալելու. բայց նա բարութիւնից բժշկում է հազարապետին և մկրտում։ Ապա գալիս է մէկ ուրիշը և առաքեալին Ոգուհի կոյսի միւս աշակերտների հետ ատեան տանում, ուր նորա սաստիկ տանջում են և Ոգուհու, հազարապետի ու այ հաւատացեալների հետ նահատակում։ — Բարդուղիմէ առաքեալի մասին կայ նաև այն աւանդութիւնը, թէ Հայաստան է բերել ս. Աստուածածնի պատկերը և, Անձեւաց գաւառում Անահտի մեհեանը կործանելով

[illegible] եկեղեցին չէինք ու կրկին այնտեղ, ուր և դասուած է մինչև այժմ [illegible] փոքր [illegible] [illegible]։

Եւսեբիոս պատմիչը, ս. Թադդէոսի վկայաբանութեան մէջ [illegible] [illegible] յիշուած է Թադէոս [illegible] առաքեալը, որին ուրիշ յիշատակարաններ են [illegible] առաքեալ են համարում և [illegible] [illegible] Հայաստանում ցոյց տալիս։ Բայց այդ Թադէոսն 12 առաքեալներից [illegible] մէջ չէ [illegible] է, ինչ որ Թադէոսը կամ Ղեբէոսը և [illegible] է [illegible] [illegible], որ Թադէոս առաքեալի բուն վկայաբանութեան մէջ ոչ մի ակնարկ չկայ այդ մասին, թէ նա 72 աշակերտներից է, այլ նա [illegible] է [illegible] [illegible] 12 առաքեալներից մէկը, կարծեմ [illegible], որ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] առաքեալներից մէկին՝ Թադէոս—Ղեբէոս—Լեբէոսին, [illegible] Հայաստանի [illegible] առաքեալ, [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] յաջորդութեան և Աբգար թագաւորի պատմութիւնը [illegible] համար՝ [illegible] [illegible] [illegible] 72 աշակերտներից Թադէոս—Հայաստանի քարոզութեան գործը [illegible] կենդանի [illegible] համարուում են մեզ առաքեալներից Թովմաս՝ Թադէոսին ուղարկողը, և Սիմոն Քանանացի՝ [illegible] պարսկական նահանգների առաքեալը։ Իսկ առաքեալների աշակերտներից յիշուում են՝ Կոմսի, որի գերեզմանը ցոյց են տալիս Աղուլիսում, Եղիշէ, որ Աղուանից առաքեալն է, Ադէ՝ Թադէոս առաքեալի մահից [illegible] առաջնորդութիւնը [illegible] [illegible] [illegible] է, և [illegible], թէ նա նահատակութիւնից առաջ [illegible] է [illegible] դէպի Հիւսիս և դէպի [illegible], [illegible] [illegible] [illegible] և [illegible] աթոռներ հաստատել։ Իսկ Արտազի [illegible] աթոռի համար մի հին ցանկ կայ, որի համաձայն Թադէոս առաքեալի ձեռնադրած Զաքարիային կարգաւ յաջորդել են Զեմենտոս և մի քանի ուրիշ եպիսկոպոսներ։

Սակայն հին և [illegible] է ս. Ռուփսիմեանց և ս. Գայիանեանց [illegible] եղած [illegible]։ [illegible] [illegible] [illegible] են իրենց [illegible] [illegible], որ [illegible]

*րէն բառով Խռխուսի՝ Թարգմանօրէն Ոսկի էր, և համարւ
է Թադէոս առաքեալի աշակերտներից։ Սա իւր ընկերն
հետ գնում, քարոզում է Հայոց Արտաշէս Թագաւորի
քունիքում, և Սաթենիկ Թագուհու մի խումբ ազգականներ
որոնք սորա հետ եկել էին Ալանաց երկրից, հաւատում
և մկրտուում։ Արտաշէսի որդիքը հալածում են Ոսկեա
և նահատակում, իսկ նորադարձ ալան իշխանազուննե
կասկածելով նոցանից՝ խոյս են տալիս Ջրաբաշխ լեռնե
և 46 տարի ճգնում այնտեղ։ Ժամանակ անցնելուց յ
տոյ Ալանաց Թագաւորը մարդիկ և զօրք է ուղարկո
նոցա որոնելու, և երբ նոքա չեն համաձայնում Թողն
իրենց ճգնարանները և ուրանալ քրիստոնէութիւնը,
ղարկուած մարդիկ նոցա կոտորում են սրով։ Այսպիսո
նահատակուում են 15 հոգի, որոնք իրենց գլխաւորի
նունով Սուքիասեանք են կոչուում, այլ և, խոտաճար
և երկար մազերով ծածկուած լինելուն համար՝ Քօշ
(վայրի այծեր)։ Բայց զարմանալին այն է, որ նոցա ն
հատակութիւնը տեղի է ունենում արդէն Պարսից Շ
պուհ Թագաւորի օրով, երբ Խոսրով Մեծ Հայոց Թագ
ւորը սպանուել էր և Հայաստան ոտնակոխ էր լինո
օտարներից։ Նոցա մարմինները մնում են անթաղ, մին
ս. Լուսաւորիչ ս. Հոգւոյ ազդեցութեամբ իմանում
նոցա տեղը, գալիս թաղում է և գերեզմանի վերայ վկ
յարան կանգնեցնում։*

Դ. Աւանդութեանց պատմական արժէքը եւ բուն պա
մական յիշատակութիւններ.—*Առաջին եզրակացութիւ
որին պէտք է յանգէր յիշած աւանդութիւնների քնն
դատական ուսումնասիրութիւնը, այն է, որ Եդեսակ
աւանդութիւնը Աբգարի դարձի մասին պատահական կ
պով է հայացրած և պատկանում է ոչ թէ Հայոց,
Ասորական եկեղեցուն։ Եդեսիան յունարէն անունն
Ուռհա քաղաքի, որտեղ Քրիստոսից շատ առաջ կէս-
բաբական, կէս-ասորական ծագումն ունեցող Թագաւ
ներ էին նստում, և Ուռհա անուան աղաւաղումից յ
առաջացել է նոցա Թագաւորութեան Օսրոյենէ անուն
Քրիստոսի ժամանակ այդ Թագաւորութիւնը գրեթէ ս
կախ էր, դեռ բոլորովին չենթարկուած Հռովմէական*

խանութեան և միայն Պարթևների հովանաւորութեան ներքոյ, մինչ Հայաստանում Արտաշէսի ու Մեծ Տիգրանի ընկել թագաւորական ցեղը սպառել էր, և Հռովմայեցիք ըստ հաճոյից կարգում էին արագ կերպով իրար յաջորդող թագաւորներ՝ հարևան երկրների իշխանական տներից։ Առաջին դարու Հայաստանում տեղի ունեցած անցքերի պատմութիւնը յամենայն դէպս այնքան ծանօթ է ժամանակակից օտար պատմիչներից, որ Խորենացու պատմածները Արշամի և Աբգարի մասին նորա մէջ տեղ գտնել չեն կարող։ Ուրեմն Հայաստանի քրիստոնէութեան նկատմամբ պատմական ճշմարտութիւն որոնել կարող ենք միայն այն աւանդութիւնների մէջ, որոնք Սանատրուկի թագաւորութեան համար են պատմում։ Իսկ այդ անունով թագաւոր Հայերն իրօք ունեցել են, թէպէտ ոչ Քրիստոսի և առաքեալների ժամանակակից, այլ մեզ յայտնի Եդեսիոյ առաջին քրիստոնեայ թագաւորի՝ Աբգար Թ. Բար-Մանուի։

Այս զուգադիպութիւնը արժանի է առանձին ուշադրութեան։ Աբգարի պատմութեան մէջ հանգամանքներ կան, որոնք յարմարում են միայն Բ. դարու վերջերին. Ելեւթրոպոլիս քաղաքը, ուր Աբգարը դեսպաններ է ուղարկում, այդ անունը ստացել է 200 թ. ին. Փղոսս եպիսկոպոսը, ինչպէս յիշեցինք, ձեռնադրուած է Անտիոքի այն եպիսկոպոսից, որ ինքը նստել է աթոռ 190 թ. ին, մինչդեռ ըստ աւանդութեան նա երէց է եղել արդէն Եդեսիոյ առաջին առաքեալի ժամանակ. Աբգարի յարաբերութիւնը Հռովմայեցւոց հետ այնպէս է, ինչպիսին կարող էր ունենալ միայն Բ. դարի վերջում ապրող Եդեսիայի թագաւորը։—Նման հանգամանքներ նկատում ենք այն աւանդութիւնների մէջ, որոնք կապուած են Սանատրուկի անուան հետ։ Դժբաղդաբար օտար պատմիչներն այս թագաւորի մասին ոչինչ չեն պատմում. Նա յիշուում է միայն իբրև հայր Վաղարշ թագաւորի, որ խարդախութեամբ վերի բռնուեցաւ Կարակալլա կայսրից, ինչպէս Աբգար Թ. ը, և թագաւորած պիտի լինի 166—200 թուականների միջոցին։ Փաւստոս Բիւզանդացին նորան «առաքելասպան» է անուանում և Թադէոս առա-

քեալի քաղաքութիւնը պատմող գրուածքի մասին յիշուած է այնպէս, որ ենթադրել է տալիս, թէ այդտեղ Աշոտի անուն չի եղել, այլ Սմբատունին է նկատուել իբրև Հայոց իսկական թագաւոր և սկզբից մինչև վերջ հալածող քրիստոնէութեան։ Նոյն Բիւզանդացին պատմում է, որ Ժ. դարում Պարսիկները Հայոց թագաւորների գերեզմանները բանալիս չեն կարողացել Սմբատունի գերեզմանը բանալ, այնչափ ամուր և հոյակապ շինուածք է ունեցել։ Առհասարակ նորա մասին ազգային պատմութեան մէջ մնացած յիշատակութիւնները ցոյց են տալիս, որ մեր ամենազօրեղ թագաւորներից մէկն է եղել և վերական զօրքերի առատ նիւթ տուել։ Շատ հաւանական է, որ Մծբինը նորա ժամանակում մայրաքաղաքն եղած լինի, և այդպիսով առիթ ներկայացած Ուռհայեցիների և հայերի մօտիկ յարաբերութեան։ Իսկ Ոսկեանց ու Սուքիասեանց մասին աւանդութիւնները հասկանալի կդառնան այն դէպքում միայն, եթէ համարենք նոցա Բ. դարի վերջերին Հայաստանում հալածուած քրիստոնէութեան հետևողներ։ Քանի որ Սուքիասեանք ապրում են Պարսից Շապուհ թագաւորի ժամանակ՝ Գ. դարի միջոցներում, նոյն ու սուրբ Ոսկեանք և հարկաւ առաջին դարի մարդիկ լինել չեն կարող, և այն «Մեծ Թագաւորին», որի մասին քարոզում են և որի սրբոյ ձեռքով նահատակութիւն են ընդունում, Գ. դարու սկզբներին պէտք է ապրած լինէր, ինչպէս էր իրօք Վաղարշ թագաւորի կեանք։ Այդպիսով կմնայ հետևցնել, որ Ոսկեանք քրիստոնէութիւն ընդունել են Սանատրուկի օրով Հայաստան եկած մի քարոզչից. և եթէ Աբգարի դարձի պատմութիւնը ազգա- յիշողութիւն և վկայաբանութեանց ոճով ձևակերպուած մի փոխանցումն է՝ Բ. դարի վերջից առաջին դարի միջոցները, այն անցքերի, որոնք տեղի են ունեցել իսկապէս Աբգար Թ. քրիստոնեայ թագաւորի օրով, անհիմն չի լինի հարկաւ նման փոխանցում Սանատրուկի թագաւորութեան դէպքերի համար ընդունել։ Ասորական և հայկական աւանդութիւնների միմեանց հետ կապուելու գլխաւոր պատճառն ևս այն կարելի է համարել, որ ամենայն հաւանականութեամբ Եդեսիայից եկած քարոզիչների

յետագով ալեան տարածուած լինին քրիստոնէութիւնը հա-
յերի մէջ։ Այդ հաստատում է և միջի այլոց Եդե-
սացու պատմիչը Բարդածանի մասին, թէ նա Հայաստանն
էր եկել քարոզելու և մնացած է իւր գրուածներով Մար-
կիոնեանց դէմ։

Գալով ս. Բարդուղիմէոսի վկայաբանութեան՝ այն
ձևով, ինչպէս մեզ է հասել, յետինացած է անշուշտ ուշ
ժամանակի, Թադէոս առաքեալի վկայաբանութեան հե-
տեւողութեամբ. բայց աւանդութիւնը, թէ նա Հայաստա-
նի առաքեալ է եղել, աւելի հին է և շատ տարածուած յի-
շուած գտայ եկեղեցական հայրերից։ Դուցէ այդ աւան-
դութեան մէջ հետքեր կարելի է գտնել այն հանգաման-
քին, որ բացի Եդեսիայից աւելի մի Ասորեստանից էլ քրիս-
տոնէութիւնը մուտք է գործել Հայաստան։ Վկայաբանու-
թիւնն իսկ Բարդուղիմէոսի առաքեալի Դաշտենից Հայաս-
տան գալը այնպէս է պատմում, որ կարելի է մտածել,
թէ Դաշտենը Հայաստանում չէ. և իրօք մեր երկրի այդ
արեւմտեան մասերը Ա. և Բ. դարերում Մարաց թագա-
ւորի իշխանութեան ներքոյ էին եղել։ Իսկ նոյն ժամանա-
կուայ Մարաց երկրի մասին յայտնի է, որ բազմաթիւ
հրէայ բնակիչներ ունէր և հրէական ազդեցութիւնն այն-
քան զօրեղ էր, մինչ Ադիաբենական թագաւո-
րական ընտանիքը հրէութիւն է ընդունել, յատկապէս
Ադիաբենէում թագաւորութիւն ունող այն Հեղինէ թա-
գուհին, որին մեր Խորենացին Աբգարի մայր է համարում
և քրիստոնեայ։ Նոյն ժամանակներն չէ ուրեմն, որ ինչ-
պէս ուրիշ տեղեր, այնպէս և այստեղ քրիստոնէութիւնը
հրէաների միջոցով ընդունելութիւն գտած լինէր՝ նախ
Մարաց, և ապա Հայերի մէջ։ Ս. Բարդուղիմէոսի վկայա-
բանութիւնները տարբեր յեղանակներով Արտաշատում փոխադրեն
մի ուրիշ հայ թագաւոր են յիշում, որ նորան նա-
հատակել է և որի անունը, ինչպէս և առաքեալի նա-
հատակութեան տեղի անունը, բաւ աղաւաղուած է, և
դժուար է որոշել, թէ ինչ ժամանակի ու քաղաքի մասին
է խօսքը։ Բայց երեւում է, որ նորա նահատակութիւնը
այն պատճառաւ միայն յետոյ Սանատրուկին է վերա-
գրուել, որ սա էր հալածական աւանդութեան մէջ յայտնի

«առաքելասպանը», և եթէ մի առաքեալ նորա ձեռքով է սպանուել, ժամանակակից միւս առաքեալի սպանութիւնն և նորա ձեռքով կատարուած պիտի համարէին։

Եղե՞լ է արդեօք ս. Բարդուղիմէոսի կամ «Մարտական» մի առաքելութիւն և աւելի հի՞ն է, քան ս. Թադէոսինը կամ «Եդեսական»ը, ինչպէս մի քանի նշաններ ցոյց են տալիս,—չենք կարող հարկաւ որոշ ասել. ինչպէս և առհասարակ մեր ձեռքում եղած աղբիւրներով պարզել չի կարելի, թէ ո՞րչա՞փ հին է քրիստոնէութեան առաջին քարոզչի մուտքը Հայաստանում և ո՞ր կողմից է տեղի ունեցել։ Իբրև հաւաստի պէտք է ընդունել միայն, որ արդէն Ա. դարում աչքի ընկնող քանակութեամբ հրէաներ կային այստեղ և հաւանականաբար աւելի բազմացան Բ. դարում. ու մեր երկիրը դեռ Քրիստոսից շատ առաջ՝ մանաւանդ Տիգրան Մեծի օրերից սկսած, կենդանի յարաբերութեան մէջ է եղել թէ Պաղեստինի և թէ Հռովմէական պետութեան այլ նահանգների հետ, որոնք քրիստոնէութեան օրրան դարձան. որ եթէ ո՛չ հարաւից, գոնէ արևմուտքից և արևմտա-հիւսիսային կողմից սահմանակից էր նոյն այնպիսի երկրների, ուր արդէն Ա. դարում քրիստոնէութիւն է քարոզուել, և լինելով նոցա պէս Հռովմէական գերիշխանութեան ներքոյ՝ որոշ տեսակէտից նման քաղաքական և քաղաքակրթական պայմանների մէջ էր գտնուում։ Ապա ուրեմն ոչինչ չի արգելում մտածելու, թէ ինչպէս այդ երկրներում շատ վաղ տարածուել է քրիստոնէութիւնը, նոյն կերպ կարող է նաև հայերի մէջ մուտք գործած լինել։ Հարկաւ ո՛չ մի պատմական փաստ չունինք, թէ 12 առաքեալներից մէկն ու միւսը ինք եկել է այստեղ քարոզութեան. ընդհակառակը պէտք է ի նկատի առնենք, որ Հայաստանը քաղաքականապէս այնպիսի խառն վիճակի մէջ էր Ա. դարի կէսին և այնչափ ենթակայ անընդհատ կրկնուող պատերազմների, մինչ եթէ եկող էլ լինէր՝ հազիւ յաջողութիւն գտնէր այստեղ։ Բայց 66 թ.-ից ի վեր, երբ Տրդատ թագաւորը հաստատուում է գահի վերայ և խաղաղութեան մի բաւական երկարատև շրջան է սկսուում, նոր կրօնական շարժման համար ազատ ասպարէզ կար, և այդ շրջանում կենդանի մնացած առաքելական քարոզիչ-

ները կարող էին հեշտութեամբ իրենց գործունէութիւնը մինչև մեր երկիրը տարածել. մանաւանդ որ նոցա բոլորի հաստատ համոզմունքն էր, թէ իրենք պարտականութիւն ունէին աւետարան քարոզելու աշխարհի բոլոր ծայրերում, ուր միայն հնարաւոր է։ Նշանակալից է յամենայն դէպս այն հանգամանքը, որ Գործք առաքելոց Բ 9. ս. Հոգւոյ աղդեցութեամբ լեզուներ խօսող ազգութիւնների շարքում անպատեհ կերպով դրուած «Հրէաստանի» փոխարէն՝ Տերտուղիանոս (ինչպէս և Ե. դարում ս. Օգոստինոս) Հայաստան է կարդացել. թէ որպիսի՞ իրաւունքով, դժուար է ասել. բայց պարզ է գոնէ, որ նա ոչ միայն իւր ժամանակ (Գ. դարի սկզբին) քրիստոնեայ հայեր լինելու մասին ունեցած ծանօթութիւնն է ցոյց տալիս դորանով, այլ և այն համոզմունքը, թէ այդպիսիք եղել են արդէն Ա. դարում՝ Գործք առաքելոցի գրութեան ժամանակ։

Փոքր Հայքի մէջ Բ. դարում քրիստոնէութեան տարածուած լինելը արդէն յիշել ենք։ Պէտք է ենթադրել, թէ իւր քրիստոնեայ զինուորներով հռչակուած «Մելիտինեան» գնդի հետ մի կապ ունի այն հին լատինական վկայաբանութիւնը, որի համաձայն Ադրիանոս կայսեր օրով (117—138) Արարատ լերան վերայ մի բիւր զինուորներ են խաչ հանուել։ Արդեօք այս աւանդութիւնը չէ՞ յիշեցնում, թէ Մելիտինէում ապրող Բ. դարու քրիստոնեայ հայերի հաւատակից-ազգակիցներն եղել են նաև Արարատեան երկրում։ Այսպէս թէ այնպէս, գոնէ Սանատրուկի մասին վերև յառաջ բերածներից հետևցնել պէտք է, որ եթէ նորանից առաջ շատ տարածուած չէ եղել քրիստոնէութիւնը հայերի մէջ, նորա ժամանակ այնչափ էր տարածուած և կարևորութիւն ստացած, մինչ ծանր հալածանքի պատճառ դառնուեցաւ։ Սանդուխտի յիշատակը, աւելացրած վրան Ոգոհու, Զարմանդուխտի և Սուքիասեանց վկայաբանութիւնները, իրաւունք է տալիս ենթադրելու, թէ Հայոց արքունիքում ևս մուտք էր գտել քրիստոնէութիւնը՝ յատկապէս տիկնանց դասի մէջ, և գուցէ դոքա հետքերն են, որ յետոյ պալատական անձինք և Տրդատի քոյրը այնպիսի կարևոր դեր են խաղում նորա դարձի պատմութեան մէջ։ Ոսկեանց և Սուքիասեանց

վկայաբանութիւնները հաւանական են դարձնում, որ Սանատրուկից յետոյ էլ հալածանքներ են եղել Հայաստանում քրիստոնեաների դէմ և անհիմն չէ Խորենացու այն վկայութիւնը, թէ Խոսրով Մեծի օրով շատերը նահատակուել են: Վերջապէս Լուսաւորչից առաջ Հայոց մէջ ոչ միայն քրիստոնեայ անհատներ, այլ նաև ամբողջ կազմակերպուած համայնքներ գտնուելու ամէնից հաստատուն պատմական փաստն այն է, որ Գ. դարի կէսում Աղէքսանդրիոյ Դիոնիսիոս եպիսկոպոսը մի թուղթ է գրել Հայոց Մեհրուժան եպիսկոպոսին: Մեհրուժան անունից հետեւցնում են ոմանք, որ այդ եպիսկոպոսի աթոռը Վասպուրականի կողմերում պիտի եղած լինի. յամենայն դէպս ոչ մի պատճառ չկայ Մեծ Հայաստանից դուրս, Փոքր Հայքում, որոնելու այն, ինչպէս արել են ուրիշները:

## ՇՐՋԱՆ Բ.

## Քրիստոնէութեան հաստատուիլը Հայաստանում և նորակազմ եկեղեցւոյ մաքառումը ներքին և արտաքին թշնամիների դէմ:

### ԳԼՈՒԽ Գ.

### Հայոց դարձն ի քրիստոնէութիւն:

**Ա. Հայաստանի քաղաքական դրութիւնը Գ. դարում:**— Մեր ազգի պատմութիւնը շատ կցկտուր տարբեր ընթացք է ունեցել, քան մենք սովոր ենք պատկերացնել Խորենացու նկարագրածով: Օտար պատմիչների համաձայն, ինչպէս ակնարկեցինք առաջ, Կարակալլա կայսրը 211 թ.-ին նենգութեամբ կալանաւորեց Հայոց Վաղարշ թագաւորին, և սա մեռաւ բանտում 216-ին. իսկ սորա որդին Տրդատ Բ. թագ ստացաւ Կարակալլայի յաջորդ Մակրինոս կայսրից 218 թ.-ին: Այդ ժամանակ արդէն մի մեծ քաղաքական յեղաշրջում էր սկսուած Հայաստանի սահմանակից և բազմաթիւ կապերով նորա հետ կապուած Պարթևաց պետութեան մէջ: Արտաշիր Սասան-

ներան՝ հպատակ իշխաններից մէկը, ապստամբել էր և անկախ պարթևական թագաւորութիւն հաստատելով հետզհետէ նուաճում էր Պարթևաց արևելեան նահանգները։ 226 թ.-ին մի քանի վճռական ճակատամարտների մէջ նա վերջնականապէս խորտակեց Պարթևաց զօրութիւնը, որոնց վերջին թագաւորն Արտաւան սպանուեցաւ պատերազմում, և նորա որդիքն ապաւինեցին Հայաստան։ Արտաշիր յափշտակեց այդպիսով արքայից արքայի տիտղոսը և տէր դարձաւ գրեթէ բոլոր նախկին պարթևական երկրներին. բայց Հայաստանին տիրելու փորձն անյաջող անցաւ։ Մեր Ագաթանգեղոսի պատմելով՝ Հայոց թագաւորն էր այդ օրերում Խոսրով՝ Վաղարշի որդին, որ ուրեմն վերոյիշեալ Տրդատ Բ-ի եղբայրն ու յաջորդը պէտք է եղած լինի։ Օտար պատմիչները չեն հերքում Ագաթանգեղոսի պատմածը, որի համաձայն Խոսրով տասը տարի շարունակ պատերազմ մղեց Արտաշրի դէմ (228—238) և անպարտելի մնաց, մինչև որ դաւաճանութեամբ սպանուեցաւ. ընդհակառակն նոցա հաղորդած յիշատակութիւններից երևում է, որ նոյն իսկ Խոսրովի մահից յետոյ պարսիկներն անմիջապէս չկարողացան նուաճել Հայոց երկիրը։ Հարկաւ Հայաստանը միայն սեփական զօրութեամբ չէր ընդդիմադրում։ Գտնուելով Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքոյ՝ Պարթևաց անկումից յետոյ նա աւելի մեծ չափով կարիք պէտք է զգար նոցա յարելու և նոցա մօտ պաշտպանութիւն գտնելու. իսկ նոքա պիտի աշխատէին թոյլ չտալ, որ Պարթևաց իշխանութեան տեղ մի աւելի վտանգաւոր և թարմ ուժերի տէր ախոյեան հանդէս գայ յանձին Սասանեանց։ Յիրաւի մի շարք հռովմէական կայսրներ փոփոխակի յաջողութեամբ արշաւանքներ յանձն առին սոցա դէմ և թէպէտ նպատակին չհասան ու չընկճեցին սոցա, բայց գոնէ ստիպեցին նախկին սահմանների մէջ մնալ. հայերն էլ՝ մասամբ այդ արշաւանքների շնորհիւ, մասամբ հիւսիսային ազգերի կողմից գտած օգնութեամբ, պահեցին իրենց անկախութիւնը։ Փիլիպպոս Արաբացի կայսրը 244 թ.-ին կնքած մի ամօթալի դաշնադրութեամբ ձեռք էր վերցնում Հայաստանից. այնուամենայնիւ հայերը շարունակեցին իրենց ընդդիմադրութիւնը՝ ոչ առանց Հռո-

մայեցիների գաղտնի օգնութեան, և միայն 253 Թ.-ին Արտաշրի յաջորդ Շապուհ Թագաւորը (242—272) կարողացած պիտի լինի տիրել Հայաստանին. իսկ Հայոց Տրդատ Թագաւորը, մի օտար պատմչի ասելով, այդ ժամանակ է խոյս տուել և ապաւինել Հռովմայեցւոց երկիրը:

Այս կէտում շփոթութիւն կայ Ագաթանգեղոսի պատմութեան մէջ: Հաւանականաբար ճիշտ է նորա պատմածը, թէ Խոսրովի մահից յետոյ Տրդատ էր «մանկիկ փոքրիկ». բայց սա անմիջապէս դայեակների ձեռքով «ի դուռն կայսեր» չէ տարուել, այլ երևի հայ նախարարների խնամակալութեամբ ներքոյ ժառանգել է իւր հօր Թագաւորութիւնը. մինչև որ 15—16 տարեկան դեռ ցղայակաճ հասակում ստիպուած էր տեղի տալ Պարսից զօրութեան առաջ, որոնց օգնում էին, ինչպէս ենթադրել կարելի է Եղիշէի պատմութեան մի կարևոր ակնարկից՝ իւր «հայրապական հօրեղբայրները»: Այդ դաւաճան ազգականները հաւանականօրէն գաղտնի դաւադրութեան մէջ լինելով Պարսից Թագաւորի հետ՝ սպանել էին Խոսրովին, Պարսից երկիւղից փախել և շարունակ աշխատում էին վերադառնալ ու խլել Թագաւորութիւնը Տրդատից, որ և յաջողուեց 253-ին. Շապուհ՝ Հայաստանին տիրելով, ըստ երևոյթին առանց այլևայլութեան չի միացրել այն իւր երկրի հետ, այլ Տրդատի նենգաւոր հօրեղբայրներից մէկին Թագաւոր է հաստատել այնտեղ, և դա է գուցէ այն Արտաւազդ անունով Հայոց Թագաւորը, որի մասին օտար պատմիչները յիշում են 260 Թ.-ին: Նոյն այդ Թուին Հռովմայեցւոց Վալերիանոս կայսրը Պարսից դէմ վարած անյաջող պատերազմի մէջ գերի էր ընկել. բայց Հռովմէական գերիշխանութեան ներքոյ գտնուող Պալմիրայի Ոդենատոս Թագաւորը Հռովմայեցւոց զօրավարի հետ միացած յաջորդ տարին սաստիկ ջարդ տուաւ Պարսից զօրքերին և հասաւ պաշարեց մինչև իսկ նոցա Տիզբոն մայրաքաղաքը: Հաւանականաբար հայերն ևս այդ ժամանակ ելան նոցա իշխանութեան տակից, և գուցէ Տրդատ վերադարձաւ, հալածեց Արտաւազդ Թագաւորին ու նորա կողմնակիցներին և հաստատուեց հայրենի գահի վերայ: Սակայն այն հանգամանքը, որ Ագաթանգեղոս Տրդատի Թագաւորութեամ

տիրանալը կապում է Գոթաց մի արշաւանքի հետ, ուր Նա առանձին քաջութիւն է ցոյց տուել և իբրև վարձատրութիւն «Յունաց թագաւորից» թագ ու օգնական զօրք ստացել, տրամադրում է ենթադրելու, թէ Տրդատի վերադարձը տեղի է ունեցել աւելի ուշ, 267 Թ․-ից յետոյ։ Այդ թուին իրօք Գոթերը մի մեծ արշաւանք են գործել Փոքր Ասիայի նահանգների վերայ, ուր հաւանականաբար ապաստանած էր և Տրդատ։ Նոցա դէմ մղած պատերազմի մէջ սպանուեցաւ Ոդենատոս թագաւորը և սորա իշխանութիւնը ժառանգեց իւր կինը՝ Զինոբիա թագուհին, որ թշնամացաւ Հռովմայեցիներին և պատերազմի բռնուեց Աւրելիանոս կայսեր հետ։ Զինոբիայի դաշնակիցների թւում յիշւում են և հայերը․ բայց Աւրելիանոսի համար ես պատմուած կայ, թէ կարողացաւ հայերին իւր կողմը ձգել։ Գուցէ մի նշան է այդ, որ հայերի մէջ դեռ երկու կուսակցութիւններ կային․ Տրդատի կուսակցութիւնը Հռովմայեցիների կողմն էր բռնում, իսկ Նորա հակառակորդները դէպի Պարսից կողմը հակուած լինելով՝ դաշնակից էին դարձել Զենոբիային։ Յամենայն դէպս յայտնի է, որ Աւրելիանոս 273 Թ․-ին վերջ տալով Զենոբիայի թագաւորութեան և գերի վերցնելով Նորան՝ ի միջի այլոց տարաւ իւր հետ նաև հայ գերիների և իւր վերայ վերցրեց «Հայական» պատուանունը․ ուրեմն հաւանականօէն առաջ բոլոր հայերը Հռովմայեցւոց իշխանութեան տակ չէին և նա գոնէ Հայաստանի մի մասը նորից նուաճեց։ Եթէ Տրդատ Ոդենատոսի յաղթութիւնից, կամ Գոթաց արշաւանքից յետոյ, թագաւոր էր հաստատուել Հայաստանի մի մասի վերայ, այժմ կտիրանար երևի ամբողջ երկրին․ բայց յաջորդ տարիներն ևս նա խաղաղ իշխանութիւն վայելել չէր կարող, որովհետև շարունակ պատերազմներ էին տեղի ունենում Հռովմայեցւոց և Պարսից մէջ՝ սկզբում ո՛չ յաջող առաջինների համար, մինչև որ Կարոս կայսրը 283 Թ․-ին յառաջ գնաց, Միջագետքը գրաւեց, պաշարեց ու առաւ նոյն իսկ Տիզբոն մայրաքաղաքը։ Սորա յանկարծական մահն արգելք եղաւ այդ յաղթութիւնների պտուղն իսկոյն քաղելու, և միայն Դիոկղետիանոս կայսեր 286 Թ․-ի վերջին կապած դաշ

դրութեան համաձայն Հայաստանը՝ Տիգրիսից այս կողմ եղած միւս երկրներէ հետ, մնում էր հաստատապէս Հռովմայեցւոց գերիշխանութեան ներքոյ։

Երևի այս դաշնադրութեան շնորհիւ Տրդատի թագաւորութիւնը վերջնականապէս ապահովվեցաւ. յիշողութիւնն է, որ Խորենացին Տրդատի գահ բարձրանալը համարում է Դիոկղետիանոսի իշխանութեան երրորդ տարին. մինչդեռ Ագաթանգեղոսի կրկին և կրկին անգամ յիշատակելը, թէ Տրդատ իւր կեանքի բոլոր օրերը անցրել է Պարսից դէմ վարած պատերազմների մէջ՝ ցոյց տալիս, որ նորա թագաւորութեան գոնէ մի աչքի ընկնող մասը նախընթաց պատերազմական շրջանում է տեղի ունեցել, և ո՛չ ամբողջը յաջորդ, համեմատաբար խաղաղ, ժամանակամիջոցում։ Յիրաւի Հայաստանը դարձեալ մի անգամ պատերազմի ասպարէզ դարձաւ 296 թ-ին, երբ Պարսից Ներսեհ թագաւորը ծանր զօրքով եկաւ գրաւեց այն, և Գալերիոս Կեսարը նորա դէմ ելնելով՝ առաջին անգամ պարտութիւն կրեց. բայց շուտով նոր զօրք ժողովեց սա և այնպիսի փառաւոր յաղթութիւն տարաւ, որ, 298 թ-ին կնքած դաշնադրութեամբ՝ Ներսեհ ստիպուած էր ամենածանր պայմաններ յանձն առնել և իսպառ ձեռք քաշել Հայաստանից։ Այնուհետև 40 տարի շարունակ տևեց խաղաղութիւնը երկու մեծ պետութիւնների մէջ։ Եւ մեր ազգային պատմութիւնից չի երևում, որ Տրդատ այս պատերազմի միջոցին բոլորովին դուրս մղուած լինի Հայաստանից, ինչպէս եզրակացնել կարելի էր օտար պատմիչներից։ Հաւանականաբար նա տէր մնաց երկրի մի մասին և օգնելով Գալերիոսին պարսիկների դէմ՝ դաշնադրութիւնից յետոյ ընդարձակեց իշխանութիւնը ամբողջ երկրի վերայ։—Որչափ և մութ ու խառն է մեր երկրի պատմութիւնն այս ժամանակամիջոցում, երևում է այնուամենայնիւ, որ չնայելով երկարատև պատերազմներին և իւր ենթադրեալ վիճակին՝ քաղաքականապէս պատկառելի մի զօրութիւն էր ներկայացնում նա ու աւելի զօրացաւ Տրդատի ուժեղ բազկի ներքոյ յաջորդ խաղաղ շրջանում։ Եւ այդ զօրութեան ու խաղաղութեան օրերում քրիստոնէութիւնը Հայոց մէջ ազատ կրօն դարձաւ

Բ. Հայոց ներքին կեանքն ու հեթանոսական կրօնը.— *Արտաքին պատմութիւնից աւելի անծանօթ է մեզ հայերի ներքին կեանքը քրիստոնէութիւն ընդունելուց առաջ։ Փոքր ի շատէ գաղափար ստանում ենք այն ժամանակից, երբ ազգային հեղինակները սկսում են զբաղուել մեր անցեալով, և ահա դոցա նկարագրութեամբ սկզբից և եթ տեսնում ենք Հայաստանը բաժանուած մի շարք նախարարութեանց մէջ, որոնք գրեթէ անկախ իշխաններ են իրենց երկրներում և շատ անգամ կենդրոնական իշխանութեան դէմ են դուրս գալիս։ Ժողովուրդը շինական պարզ կեանք է վարում, շարունակ պատերազմների մէջ, զէնքը ձեռքին իւր ինքնուրոյն գոյութիւնը պահպանելու ստիպուած և, իւր երկրի աշխարհագրական դիրքի, շրջապատող քաղաքական պայմանների շնորհիւ՝ պատմութեան ասպարէզ ելնել, մեծ գործեր կատարել, սակաւ դէպքերում միայն կարողացել է։ Սակայն գտնուելով մի կողմից փառաւոր բազմադարեան անցեալ ունեցող արևելքի, միւս կողմից յոյն-հռովմէական քաղաքակրթութեան ազդեցութեան տակ՝ անհաղորդ չէր մնացել անշուշտ երկու կողմից ևս առատութեամբ ընդունած տպաւորութիւններին, և նորա նիստ ու կացի, նորա սովորութիւնների մէջ պէտք է նշմարուէին, այդ ազդեցութեանց հետքերը։ Յիրաւի ազդեցութիւնը նկատելի է ի միջի այլոց Հայոց հեթանոսական կրօնի վերայ, որի ուսումնասիրութիւնը ամէնից մեծ նշանակութիւնն ունի ու ամէնից աւելի հետաքրքրական է եկեղեցւոյ պատմութեան համար։*

*Ամենակարևոր տեղեկութիւններ հայոց հին կրօնի մասին գտնում ենք Ագաթանգեղոսի պատմութեան մէջ։ Այսպէս, Տրդատի առաջին հրովարտակից տեսնում ենք, որ հայոց գլխաւոր աստուածութիւնները երեք են. Արամազդ, Անահիտ և Վահագն։ Առանձին ուշադրութեան արժանի են այն յատկութիւնները, որ տրուած են այստեղ աստուածներին։ Արամազդի մակդիրն է Արի. նորանից սպասում է երկրի պարարտութիւնը, լիութիւնը։ Հայոց երկրի բուն խնամակալն է Անահիտը. իսկ Վահագն քաջութեան աստուած է։ Զարմանալի է մանաւանդ այն կարևորութիւնը, որ տրուել է յունական փիլիսոփայութեան*

և քաղաքակրթութեան, մինչ աստուածների բաշխ
բարիքներին համահաւասար է համարւում յունաց իմ
տութիւնը:

Յիշած աստուածներից ամենասիրելին և կարել
ասել ամենազգայինը, թէև ուրիշ արևելեան ազգ
մէջ էլ նա պաշտւում էր՝ Անահիտն է, որի գլխա
մեհեանը գտնւում էր Եկեղեաց գաւառի Երիզա ա
նում: Նա կոչւում է «Փառք ազգիս մերոյ և կեցուցի
«Մայր ամենայն զգաստութեանց»: Նորան նմանեցնու
էին զանազան յունական աստուածութեանց, ա
Դիանային կամ Արտեմիսին, որ որսի և կուսութեան ա
տուածուհի էր: Ուշադրաւ է մանաւանդ այն կէտը,
մինչդեռ օտարները խիստ անբարոյական պաշտամունք
վերագրում Հայոց Անահիտին, այստեղ ընդհակառա
նա ներկայանում է իբրև պաշտպան զգաստութեան
բարոյական կեանքի, մի տեսակ մարմնացումն հայ մ
դու իւր գերդաստանի տանտիկնոջ մասին ունեցած գ
ղափարի: Անահտի մի ուրիշ մեհեանը գտնւում էր
տիշատում, ուր տեղ դարձեալ երեք աստուածութեւ
միատեղ պաշտօն էին մատուցանում: Դոցանից մէկը
կեմայր, Ոսկեծին, Ոսկեհատ մականուններն ունէր, որ
հաւանականաբար Անահտին էին տրւում՝ նորա հա
կանգնած ոսկէ արձանի պատճառով: Բայց Անահտից
ւելի պատուաւոր տեղ բռնում է այստեղ Վահագն,
անուան նուիրուած Վահէվահեան մեհեանը առաջին
յիշւում, բազմաթիւ քրմեր և ընդարձակ պաշտամու
ունէր. իսկ նորա հետ սերտ կերպով կապուած էր Ա
ղիկի մեհեանը, որ կոչւում է նաև սենեակ Վահագ
որովհետև Աստղիկը այստեղ նկատւում է իբրև Վահագ
կին, սիրոյ և գեղեցկութեան աստուածուհի, որ մօտա
րապէս այն նշանակութիւնը պիտի ունեցած լինի
ժողովրդի համար, ինչ որ Աֆրոդիտէն յունաց և Աստ
տէն Փիւնիկեցւոց համար:

Ամենամեծը աստուածներից համարւա Արամազդն
որի գլխաւոր մեհեանը գտնւում էր Անի կամ Կամ
քաղաքում: Նա բոլոր աստուածների հայր էր և հաւ
նականաբար նորա պաշտօնը կատարւում էր նաև ա

տեղ, ուր ուրիշ մեծ կռատուններ կային, ինչպէս Ար-տաշատում, Արմաւիրում, Բագարանում, Վաղարշապատ մայրաքաղաքում եւն։ Արամազդ թէև նոյն անունն է, ինչ որ Պարսից Ահուրամազդան կամ Որմիզդը և անկասկած նոյն ծագումն ունի, բայց նորա գաղափարը և պաշտա-մունքը հայերի մէջ տեղական բնաւորութիւն է ստացել և շատ գծերով տարբերւում է պարսկականից։ Նորան նմանեցրել են Յունաց Զևսին և նորա անուան հետ կա-պել են մի ամբողջ ընտանիք աստուածների։ Այսպէս նորա առաջին ծնունդն էր Անահիտ. երկրորդը Նանէն, որի մեհեանը գտնւում էր Թիլն աւանում, և իբրև ճարտա-րութեան ու արուեստի աստուածութիւն նա ամէնից աւելի նմանում էր Յունաց Աթենասին։ Իսկ Արամազդի տրու որդին համարւում էր Միհր, որ նոյնպէս բոլոր ա-րիական ազգերի մէջ պաշտուած մի աստուածութիւն է՝ կրակի, արևի, լուսոյ ներկայացուցիչ։ Նորա գլխաւոր մե-հեանը գտնւում էր Բագայառիճ գիւղում։

Այս ընտանիքից դուրս է Բարշամինան, որի մեհեանը գտնւում էր Թորդանում և որի պաշտօնը փոխ է առ-նուած ասորիներից։ Հայերի մէջ պատմուող այն առաս-պելը, թէ Վահագն գնացել յարդ է գողացել նորանից և երկնքի երեսին թափելով յառաջացել է յարդագողի ճա-նապարհը՝ ցոյց է տալիս, որ այդ երկու աստուածութիւն-ները գաղափարով մօտ են միմեանց և մի տեսակ հակա-ռակորդներ են հանդիսանում։ Իրօք Բարշամինան կամ Բաալ-շամինը ասորիների մէջ նոյնպիսի երկնքի աստուած է ե-ղել, ինչպէս Վահագնը հայերի մէջ, և մրցելով սորա ազգա-յին պաշտամունքի հետ, մուտք է գտել հարաւ-արևմտեան Հայաստանում։ Արամազդի ընտանիքից դուրս էր նաև Տիւր աստուած, որի մեհեանը գտնւում էր Վաղարշապատից դէպի Արտաշատ տանող ճանապարհի վերայ, Երազամոյն կոչուած տեղում, և նա Արամազդի գրիչն էր, գրում էր մարդկանց գործերը, բացի միջնորդ և պատգամախօս ներկայանում Արամազդի և մարդկանց մէջ։ Որան նմանե-ցնում են Յունաց Հերմեսին։

Սորանից Արամազդի պաշտամունքից, թէ անկախ մի աստուածութիւն էր Վանատուր կամ Ամանոր աստու-

ծը, որի մեհեանը Բագաւանում Հայոց ամենամեծ ուխտատեղիներից էր և որի անուան նուիրուած էին Նաւասարդի ժողովրդական տօները, դժուար է ասել: Բացի այդ աղօտ յիշատակութիւններ ենք գտնում Սպանդարամետ, Փառնակ և այլ այսպիսի աստուածութիւնների մասին, որոնց իսկական գաղափարն ու բնաւորութիւնը անծանօթ է մնում: Աւելի յայտնի են Յարլէզք, Քաջք և ուրիշ բազմազան ոգիներ, որոնք նաև քրիստոնէական շրջանում մնում են հասարակ ժողովրդեան հաւատալիքների առարկայ և գուցէ աւելի դեր են խաղացել նորա կրօնական կեանքի մէջ, քան բուն պաշտօնական աստուածութիւնները: Այսպէս թէ այնպէս, բոլոր մեր տեղեկութիւնները համեմատելով՝ տեսնում ենք, որ հայոց հեթանոսական կրօնը մօտիկ յարաբերութիւն ունի դրացի ազգերի կրօնների հետ, շատ դէպքերում փոխառութիւններ է արել նոցանից. Ամենից աւելի ազդեցութիւն են ունեցել անշուշտ հին պարսիկներն ու Պարթեւները, որոնցից առնուած են ոչ միայն գլխաւոր աստուածութիւնների անունները, այլ նաև կրօնական կեանքին ու պաշտամունքին վերաբերեալ շատ բառեր և դարձուածներ: Ասորական ազդեցութիւնը կողմնակի կերպով է եղել և մի քանի երկրորդական աստուածութիւնների գաղափարն ու պաշտամունքը ներմուծել: Իսկ յոյն-հռովմէական քաղաքակրթութեան, մասամբ գուցէ յունաց երկրից բերած արձանների և կրօնական հասկացողութիւնների շնորհիւ, այդ բոլոր աստուածութիւններն ընդունել են աւելի մարդկային և գաղափարական կերպարանք, առիական վայրագ ըմբռնումներն ու բարքերը մեղմացրել:

Կան սակայն առանձնայատկութիւններ, որ պէտք է ենթադրել, թէ միայն հայոց ժողովրդին էին յատուկ և ցոյց են տալիս նորա ունեցած առանձին գաղափարը կրօնի մասին: Բոլոր նշաններից երեւում է, որ կրօնական կեանքը Հայաստանում այնպէս ընկած չէր, ինչպէս Հռովմէական պետութեան մէջ. յունական փիլիսոփայութիւնը և ուրիշ դրդիչներ չկային այստեղ, որ աստուածները իրենց յարգը կորցնէին: Հայերի անտարբեր չլինելը դէպի իրենց աստուածները, երեւում է օրինակ նոցա բերած հարուստ

*գոհերից և նոցա կատարած փառաւոր տօնախմբութիւններ: Բայց այն հանգամանքը, որ Հայոց աստուածները բացօյական յատկութիւններ են ցոյց տալիս և հայերը պարզ կեանք ունեցող մի լեռնական ժողովուրդ են՝ դիւրամատչելի պէտք է դարձնէր միւս կողմից քրիստոնէութիւնը, որի մէջ այնքան ընդարձակ տեղ են բռնում բարոյական գաղափարները: Պատճառները շատ կային ուրեմն, որ սա թէ զօրեղ հակառակութեան հանդիպէր, և թէ իւր յարգը ճանաչողներ գտնէր: Հարկաւոր էր միայն որ առաջին քարոզիչները հասկանային յարմարուել նորա հոգևոր պահանջներին, և մենք տեսնում ենք, որ այդ իրօք տեղի է ունեցել կատարելապէս, որ նոքա աշխատել են բարեփոխել, վերանորոգել քրիստոնէական ոգուով այն, ինչ որ հայ ժողովրդի համար սուրբ էր և իւր մաքուր ու բարոյական բնաւորութեամբ համաձայնել կարող էր քրիստոնէութեան հետ: Մեզանում տեղի է ունեցել նոյն երևոյթը, որ, ինչպէս յիշուեցաւ, Գրիգոր Աքանչելագործի ջանքով առատ արդիւնք էր տուել հարևան Պօնտոսում, և այստեղ նոյնպէս դորանով է ամենից աւելի բացատրւում, թէ ինչպէս քրիստոնէութիւնը այնքան հեշտութեամբ հաստատուեց ու տարածուեց հայ ժողովրդի մէջ:*

**Գ. Տրդատի վերադարձն ու Գրիգոր Լուսաւորիչ:**—*Վերև յառաջ բերած հարևանցի տեսութիւնը Հայաստանի քաղաքական վիճակի մասին ցոյց էր տալիս, թէ որչափ դժուար է որոշել այն տարին, երբ Տրդատ թագաւոր հաստատուեցաւ: Դորա համեմատ դժուարանում է որոշել նաև նորա դարձի թուականը: Ագաթանգեղոսի պատմելով Տրդատ Հայաստան ոտ դնելուց անմիջապէս յետոյ, Գրիգորին հարկադրեց պաշտօն մատուցանել Անահիտ արձանին Երիզայում, և երբ սա մերժեց՝ անտանելի տանջանքներ տալով, հրամայեց տանել ձգել Արտաշատի Խոր-Վիրապը, որտեղից նա ելաւ, նոյն Ագաթանգեղոսի աւելի վաւերական տեղեկութիւնների համաձայն՝ 13 տարի յետոյ (Ագաթանգեղոսի ուրիշ մասերում 15 տարի է հաշուած): Արդ, եթէ Տրդատ թագաւորել է 261 թուին, նորա դարձն ևս կարող էր լինել արդէն 273-ին, Աւրեղիանոսի նուաճումներից անմիջապէս յետոյ: Եւ*

նշաններ, որ կարծես իրաւունք են տալիս այդչափ վաղ դնել Հայերի քրիստոնէութիւնն ընդունելը։ Բայց նոյն իսկ այդ դէպքում նոր կրօնի տարածումն ու հաստատութիւնը տեղի կարող էր ունենալ աւելի 284—286 թուերից, մանաւանդ 298-ից. յետոյ տիրող խաղաղութեան շրջանում։ Ուստի շատ հեռու չի եղել ճշմարտութիւնից մեր մէջ ընդունուած այն տեղեկութիւնը, թէ Տրդատ գահ նստած լինելով 287 թ-ին քրիստոնէութիւնն էլ ընդունել է 300 թուին։ Ցամենայն դէպս, որ Դ. դարի սկզբում Հայերը յայտնի էին օտարներին իբրև քրիստոնեայ ժողովուրդ, դորա համար ունենք մի շատ արժէքաւոր վկայութիւն։ Եւսեբիոսի եկեղեցական պատմութեան մէջ յիշուում է, որ 312 թուին քրիստոնեայ հայերը մի պատերազմ են ունեցել իրենց հաւատի պաշտպանութեան համար, քրիստոնէութիւնը հալածող Մաքսիմինոս Դազա կեսարի հետ։ Այսպիսով օտար պատմիչներն էլ համաձայն են, որ Տրդատ քրիստոնէութիւն ընդունեց Կոստանդիանոսից շատ առաջ և առաջին անգամ Հայաստանում քրիստոնէութիւնը ազատ կրօն հրատարակուեցաւ։ Դոցանից մէկն ասում է, որ քրիստոնէութիւնը հրաշքով հաստատուեցաւ Հայաստանում, և մեր պատմութիւնը հաստատում է Հայոց դարձի այդպիսի հրաշալի բնաւորութիւն ունենալը։

Ըստ Ագաթանգեղոսի Տրդատ թագաւորը սկզբում հալածող էր քրիստոնէութեան։ Նա իւր կրթութիւնը ստացել էր յունական աշխարհում, և յունական փիլիսոփայութեան ուսմամբ վարժուած էր։ Նորա օրով մի քանի մեծ հալածանքներ են տեղի ունեցել Հռովմի Կայսրների կողմից. բնական է, որ նա էլ իբրև նոցա աջակիցն ու ստորադրեալը հետևէր նոցա օրինակին։ Մի հրաշալի դիպուած պէտք էր ուրեմն, որ նորան ստիպէր թողնել իւր ներքին ընթացքը և նոր կրօն ընդունել։ Այդպիսի մի դիպուած գտնում ենք Ս. Հռիփսիմեան կոյսերի Դիոկղետիանոսի ձեռքից փախչելու և Հայաստան գալու պատմութեան մէջ։ Թէ որչափ պատմական և մեր երկրին վերաբերեալ նիւթ է տալիս Հռիփսիմեանց վկայաբանութիւնը [illegible] չէ ստուգել, բայց քանի որ այդ կոյ-

րի համար Լուսաւորչի ձեռքով վկայարաններ շինուե-
և արդէն Դ. դարում Նշանաւոր ուխտատեղիներ
ռնալու մասին կասկածի տեղիք չկայ, պէտք է ընդու-
որոշ առընչութիւն նոցա նահատակութեան և Տրդա-
գարձի մէջ։ Ոչինչ չկայ անհաւանական, որ Տրդատ
ան մի առթիւ ծանր հիւանդութիւն ստացած և Գրի-
բ Լուսաւորչի աղօթքին ապաւինելով՝ բժշկուելուց
տոյ քրիստոնէութիւն ընդունած լինի։

Մեր պատմութիւնը կապում է Տրդատի բախտը Հա-
Լուսաւորչի բախտի հետ արդէն նոցա մանկութեան
րից սկսած։ Գրիգոր Լուսաւորիչը ներկայանում է
տեղ իբրև Տրդատի հայր Խոսրովին սպանող Անակի
լին, սերուած ուրեմն Պարթև թագաւորական ցեղից,
Տրդատի նման մանուկ հասակում տարուել էր յունաց
իրը և Կապադովկիոյ Կեսարիա քաղաքում սնուել
իստոնէական կրօնով, ապա առանց ի վեր հանելու
ծագումը գնացել սպասաւոր էր եղել Տրդատի մօտ՝
յրական մեղքը քաւելու համար։ Անշուշտ այս աւան-
ւթեան մէջ շատ բան ճոխացրած է, և գուցէ իւր
բձից առաջ Տրդատ ամենևին չէր հանդիպել Լուսաւոր-
, բայց գոնէ այնքանը կարող ենք ստոյգ համարել, որ
ւջինս իւր կրթութիւնը ստացել է Կապադովկիայում՝
սարիա կամ գուցէ և Սեբաստիա քաղաքում, և իշխա-
կան մեծ տնից է եղել։ Եթէ նա իրօք Խոսրովի սպա-
վի որդին էր, իսկ Խոսրովին սպանել են իւր եղբայրնե-
ապա ուրեմն Տրդատի հօրեղբօրորդին պիտի լինէր,
րովի սպանութիւնից յետոյ փախցրած Հայաստանից և
ւցէ Տրդատից առաջ, Արտաւազդ թագաւորի օրով, այն-
ղ վերադարձած։ Գուցէ նա այն իշխաններից մէկն էր,
նք գերի բռնուեցան Հայաստանում Յոտենադոսի յաղ-
ւթիւնից յետոյ և այդ ժամանակից ի վեր գտնուում
Արտաշատի բանդում, մինչև որ մի արտաքին քաղա-
կան ազդեցութեան շնորհիւ (Զենոբիայի ?) ազատուեց։
Տրդատ հաշտուեց նորա հետ, երբ հակամէտ լինելով
ստոնէութիւն ընդունելու՝ այլ ևս ոխ ունենալ չէր
ող նորա դէմ, իբրև մի յայտնի քրիստոնէի, այլ ընդ-
կառակն շատ բան պէտք է սպասէր նորա աջակցութ

նից: Նշանակալից է յամենայն դէպս այն հանգամանք որ Լուսաւորիչ քարոզել սկսում է հայ լեզուով, եւ հայ մարդ, և մեր պատմութեան մէջ ոչ մի ակնարկ չկա որից երևայ, թէ նա օտար լինէր հայոց կեանքին և հայ սովորութիւններին, եթէ և իսկ օտար լեզու գործածէր Այս ժամանակի պայմաններին ի նկատի ունենալով՝ պէտք է կարծել, թէ, այն ընդարձակ կալուածները և այն իշխա-նական դիրքը, որ ունէր նորա սերունդը և վայելում կ անկախ հայրապետական կոչումից, յանկարծակի ձեռ չբերուեցան, այլ տոհմական սեպհականութիւն էր, և Լու սաւորիչ ինքը ծնուել էր իբրև մի հայ իշխանազն՝ տէ այդ սեփականութեան:

Ըստ Ագաթանգեղոսի Լուսաւորիչ Վիրապից ելնա է Տրդատի քոյր Խոսրովիդուխտի տեսիլքով և Օտա ի խանի ձեռնադրութեամբ: 65 օր թագաւորին, նորա շք ջապատողներին և ժողովրդին քարոզելուց, Տրդատին միւս հիւանդացած իշխաններին բժշկելուց յետոյ՝ նոր առաջին հոգսն է լինում նախ Հռիփսիմեանց վկայո հիների մարմինները ամփոփել և ապա շրջելով այն տ դերը, որոնք կենդրոն էին հեթանոսական պաշտաման կործանել կռատներն ու կուռքերը: Նա սկսում է ա քունիքից և կործանում է նախ թագաւորի հայրենակ չաստուածների բագինները, որոնք գտնւում էին անկա կած աէրութեան նոյն ժամանակի մայրաքաղաք Վաղա շապատում, և հաւանականաբար այդ թագաւորակ բագինների տեղում էլ շինուեցաւ առաջին Կաթուղիկէ Հայոց թագաւորութեան և կաթուղիկոսութեան Մա եկեղեցին: Ապա ինքը թագաւորը զօրք առած՝ նորա հե գնում է դէպի հին մայրաքաղաքը, Արտաշատ, և այսպ կարգաւ միւս տեղերն է անցնում, խորտակում ամենա րեք հեթանոսական ոյժը և Քրիստոսի խաչը կանգնեցնո Բագինների տեղում: Այդ գործը ինհարկէ այնպէս դիւրո թեամբ չկատարուեցաւ, ինչպէս որ պատմութեան մ երևում է. թագաւորի զօրքով գնալն արդէն նշան է, սպասում էր մեծ հակառակութիւնների հանդիպել, նորան ցոյց տրուած զօրեղ ընդդիմադրութեան յիշատա տք է համարել Ագաթանգեղոսի այն տեղեկութիւն

թէ ուր նա և Լուսաւորիչը գնում էին դևերը նոցա դիմաց էին ելնում գունդագունդ և առ ժամանակ կռուելուց յետոյ ստիպուած էին լինում տեղի տալ ու փախչել: Բուրմերն էին ի հարկէ դևերը, որոնք երևի զօրեղ դասակարգ էին կազմում և իրենց բազմաթիւ սպասաւորներն ու հետևողներն ունէին: Ինչպէս յետագայ ժամանակի պատմութիւնը ցոյց է տալիս նոքա միանգամից չչքացան, այլ բաւական երկար մնացին հաւատարիմ իրենց հին կարգերին և շարունակեցին մտքեր պղտորել:

Առանձին ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ քրիստոնէութիւնը մեր մէջ մտնում է վերից դէպի վայր, արքունիքից և իշխանական տներից դէպի հասարակ ժողովուրդը: Լուսաւորիչ սկզբից և եթ մեծ հոգս է տարել նախ Տրդատին և նրան շրջապատող իշխաններին քարոզելու, նոցա որդիներին դաստիարակելու: Նոյն կերպ վարուում է նա նոյնպէս քրմերի նկատմամբ՝ մասնաւորապէս ուշադրութիւն դարձնելով նոցա զաւակների կրթութեան վերայ, աշխատելով որ նոցանից կազմուած լինի նաև քրիստոնեայ հոգևորական դասակարգը, որ նոքա ունենալով նման պաշտօն ինչպէս առաջ էր և վայելելով իրենց ունեցած առաջուայ արտօնութիւնները, փոխանակ հակառակորդ լինելու, պաշտպան ու միջնորդ լինեին նոր կրօնի տարածման:

**Դ. Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը եւ Հայոց հայրապետական աթոռի կապը Կեսարիոյ հետ.**—Մեր Լուսաւորիչն իւր առաքելութեան գործը յաջողութեամբ առաջ տանել չէր կարող հարկաւ, քանի դեռ ձեռնադրութեան շնորհը չէր ընդունել: Նորադարձ հօտը պէտք է իւր հովիւներն ու հովուապետն ունենար, և ահա այդ կարիքը լցուցանելու համար Տրդատ մեծ ժողով է գումարում նախարարներից և տէրութեան առաջաւորներից, և Ս. Գրիգոր ընտրւում է միաձայն հաւանութեամբ, ուղարկւում առանձին շքով Կապադովկիոյ Կեսարիա քաղաքը, որպէս զի Ղևոնդ արքեպիսկոպոսից եպիսկոպոսական ձեռնադրութիւն ընդունէ և լինի նորադարձ հայ ժողովրդեան հովուապետը: Նա ինչո՞ւ Կեսարիա գնաց ձեռնադրուելու, այդ մասին

զանազան տեսակ բացատրութիւններ են տրուել: Ընդու-
նելով իսկ, թէ Ս. Գրիգոր Կեսարիայում է ձեռնադրուել
որի դէմ լուրջ կասկածներ կարելի է յարուցանել՝ մի
համար այնտեղ գնալու պարզ բացատրութիւնն այն է,
որ այնտեղ էր իւր սկզբնական կրթութիւն ստացել, ո
Կեսարիան Հայաստանի մօտ ամենից աչքի ընկնող եպիսկո-
պոսական աթոռն էր, քաղաքական կապեր էլ ունէր մի
երկրի հետ (այնտեղ էր նստում արևելքի հռովմէական
զօրաց ընդհանուր հրամանատարը), Հայաստանում գտ-
նուած մի եպիսկոպոսից ձեռնադրութիւն ընդունել ան-
յարմար էր համարւում գուցէ, քանի որ յետոյ իւր
քահանայապետ պիտի իշխէր նորա վերայ: Ղևոնդեա
հայերին գրած նամակի մէջ ասւում է, թէ քահանայա
պետական ձեռնադրութիւնը հայերը այնուհետև պէտք
Կեսարիայից ընդունէին, որից, և առհասարակ ս. Գրիգո
րի Կեսարիայում ձեռնադրուելու հանգամանքից՝ հետևց
րել են շատերը, թէ հայոց հայրապետութիւնը երկա
ժամանակ ենթարկուած էր Կեսարիոյ աթոռին: Սակայ
պէտք է նկատել նախ, որ Ղևոնդեանի նամակի այդ հա
տուածը պակասում է արաբերէն լեզուով գրուած ս. Գրի
գորի վարուց մէջ: Երկրորդ, որ հայերն ինչպէս տեսա
300 թուից տարիներ առաջ քրիստոնէութիւն ընդունա
ս. Գրիգոր եւս ձեռնադրուած պիտի լինէր, մինչդեռ Ղևո
դիոս 316 թուից միայն յայտնի է իբրև Կեսարիոյ եպիս
կոպոս և եղել է 325 թուին Նիկիոյ ժողովում. ուրեմ
նորա ս. Լուսաւորչի ձեռնադրող լինելն էլ աւելի քա
կասկածելի է: Գուցէ իրենք Կեսարիոյ եպիսկոպոսները
ժամանակ ձգտում ունեցել են իրենց աթոռի իրաւասու
թեանը ենթարկելու հայերին, բայց որ վերջիններս Կեսա
րիայից ընդունած ձեռնադրութեան այդպիսի նշանակու
թիւն չէին տալիս, երևում է թէկուզ նորանից,
ս. Գրիգորի անմիջական յաջորդը իւր հօրից է ձեռնա
դրուել և դորա համար Կեսարիոյ մետրապօլիտի հաճու
թիւնն առնել ամենևին չեն մտածել: Այնուհետև թէպէ
ըստ Փաւստոս Բիւզանդի մի շարք հայ կաթուղիկոսնե
Կեսարիայից են առել ձեռնադրութեան շնորհը, յատկա
պէս Լուսաւորչի տան շառաւիղները, որոնք աշխարհակա

ձակից եպիսկոպոսութիւն էին ընդունում, բայց ինքը պատմիչը մտքով չի անցկացնում, թէ այսպիսով հայերը ենթարկուած էին լինում Կեսարիոյ աթոռին: Կապադովկիոյ Կեսարիան հռոմէական պետութեան մէջ բարձրագոյն աթոռներից չէր: Երբ պատրիարքական իշխանութիւնը կարգացաւ Դ. դարում, այդտեղ նստող մետրապոլիտներն ենթարկուեցան սկզբում Անտիոքի և յետոյ Կ. Պոլսի պատրիարքի իշխանութեան: Ինչպէ՞ս կարող են ուրեմն Լուսաւորիչ և իւր յաջորդները, որոնք սկզբից և եթ «Կաթուղիկոս» տիտղոսն ընդունեցին և դորանով կամեցան ամբողջ հայութեան ընդհանրական տեսուչը լինել՝ նոյնպիսի բացարձակ հոգևոր իշխանութիւն ունենալ նորակազմ եկեղեցական համայնքի վերայ, որպիսին Արշակունի թագաւորները իրենց երկրի վերայ ունէին,—յօժարակամ ենթարկուած լինել դրսի մի երկրորդական աթոռի գերապատուութեանը, մինչ իրենց «դիւցախառն» ծագմամբ պարծեցող արշակունիք մեծ դժկամակութեամբ ենթարկւում էին նոյն իսկ Հռոմի հզօր կայսրների իշխանութեան: Մեզ համար հարց է նաև այն, թէ արդեօք Փաւստոս որոշ գիտումո՞վ չէ հայոց բոլոր հայրապետներին մինչև Մեծն Ներսէս Կեսարիա տանում ձեռնադրելու, թէ նա մի կամ երկու անգամ պատահած դէպքը չի՞ ընդհանրացնում արդեօք բոլորի վերայ: Ցամենայն դէպս երևակայել ենք կարող, որ այդ ամէնը պատմական իրողութիւն լինէր, Հայոց Հայրապետութիւնը խզէր իւր կապը Կեսարիոյ աթոռի հետ այնպիսի մի նշանաւոր նուիրապետի ժամանակ, որպիսին էր Բարսեղ Մեծ Կեսարացին, և սա անհային ագմուկ չբարձրացնէր այդ առթիւ, սորա բազմաթիւ գրուածների մէջ ոչ մի յիշատակութիւն մնացած չլինէր այդ մասին:

Ն. Ս. Լուսաւորչի գործունէութիւնը ձեռնադրութիւնից յետոյ:—Երբ Լուսաւորիչը ձեռնադրուած վերադարձաւ Կեսարիայից, նորա առաջին գործն եղաւ ըստ Ագաթանգեղոսի Հայոց ամենանշանաւոր, դեռ ևս կանգուն մնացած մեհեաններից մէկը կործանել, այն է Վահէվահեան մեհեանը Աշտիշատում: Այդտեղ ամփոփում է նա իւր

հետ բերած Ս. Յովհաննու և Ս. Աթանագինէի մասու-
ները և առաջին անգամ արդէն իբրև կաթուղիկոս եկ
ղեցի է շինում ու մկրտում իւր հետ եկած իշխաններ
և ժողովրդի մեծ բազմութիւն (19 բիւր): Աշտիշատի
թանոսական ժամանակ իբրև ուխտատեղի ունեցած
ղինակութիւնը անցնում է նոր շինած եկեղեցու վր
և մնում է մինչև մեր օրերը: Այդտեղից Լուսաւոր
գալիս է Բագաւան, ուր նրան ընդառաջ էր ելել Հայ
թագաւորը: Ամսօրեայ պահեցողութեամբ նախապատր
տուելուց յետոյ՝ Լուսաւորիչը մկրտում է թագաւո
ու հետը եկած զօրքին (15 բիւր): Այս մի ամբողջ շ
բաթ մնում է այդտեղ, ըստ Ագաթանգեղոսի 400 բ
ժողովրդի բազմութիւն մկրտում, շինում է երկրորդ ե
ղեցին Ս. Յովհաննու անունով, և այստեղ էլ Վանատ
Ամանորայ դից յիշատակն ու տօնն է կապուում Ս. Յ
հաննիսի անուան հետ և այս եկեղեցին մնում է առ
ջուայ նման մեծ ուխտատեղի: Ս. Գրիգոր իւր ճա
պարհորդութեան միջոցին առ ժամանակ մնացել էր
քանտիայում, և բերել էր իւր հետ եկեղեցու պաշ
նեաներ, որոնց և գործակից է դարձնում իրեն քա
նաներ կարգելով նորահաստատ եկեղեցիների մէջ:
նորա աշխատութիւնն էր, գլխաւորապէս, ինչպէս
շուեցաւ, նախկին քրմերի սերնդից եկեղեցու պաշ
նեաներ պատրաստել: Այդպիսի քրմական տներից Ա
թանգեղոսի վկայութեամբ նա յետոյ 12 եպիսկոպո
է ձեռնադրում, որոնցից ամենանշանաւորն էր Աղբ
նոս: Սորա սերունդը առանձին դեր է կատարում Հ
եկեղեցու պատմութեան մէջ: Այդ քրմերի, ինչպէս
իշխանների որդիները դաստիարակուում էին հելլէ
ասորի դպրութեամբ: Նոցանից կարճ միջոցում Լու
ւորիչը կարողանում է բազմաթիւ պաշտօնեաներ պ
րաստել եկեղեցու համար: Որպէս զի այդ պաշտօն
ները անտեսապէս ապահովուած լինեն, Ս. Գրիգոր
դատի միջոցաւ յատկացնել է տալիս նոցա օգտին
րաքանչիւր գիւղում չորս երդի և իւրաքանչիւր աւա
եօթն երդի հող: Այդ կարգադրութեան և եպիսկոպո
ների ունեցած տոհմական կալուածների շնորհիւ այն

առատ էին հոգեւորականների եկամուտները, որ, ինչպէս տեսնենք, յաջորդ շրջանում աշխարհական իշխանաւորների նախանձն էր շարժում և վերջը զգալի կերպով պակասեցրին նորա քանակը:

Այսպէս Ս. Լուսաւորիչ Վաղարշապատ մայրաքաղաքը հասնելուց և այնտեղ նախօրօք նշանակած տեղերում հայրապետական մայր եկեղեցին և կոյսերի վկայարանները կառուցանելուց յետոյ՝ կրկին շրջեց Հայաստանի բոլոր կողմերը, ամեն տեղ եկեղեցիներ և եկեղեցական պաշտօնեաներ հաստատեց, կարգ ու կանոն սահմանեց և կարճ միջոցում կազմակերպել կարողացաւ նորահաստատ եկեղեցին:

Մեր պատմիչների վկայութեամբ ծերութեան օրերում նա սկսեց ճգնազգեաց կեանք վարել և երբ թագաւորը, որ ցանկանում էր նրան միշտ իւր մօտն ունենալ, տեսաւ որ չէ կարող նրան համոզել թողնելու ճգնութիւնը, կամեցաւ որ նորա փոխարէն մէկ ուրիշը արքունի դրան եպիսկոպոս ձեռնադրուի և նորանից յետոյ հայոց եկեղեցու առաջնորդ լինի: Իմացուեցաւ այդ ժամանակ, որ Լուսաւորիչն երկու որդիներ ունի Կեսարիայում մնացած՝ Վրթանէս և Արիստակէս: Նորա բերել տուեց և որովհետև Արիստակէսն ամուսնացած չլինելով աւելի յարմար գտնուեցաւ, եպիսկոպոսական կոչումն և ձեռնադրութիւն ընդունեց իւր հօրից: Սակայն Ագաթանգեղոսի աւելացնելն անմիջապէս, թէ Լուսաւորիչ շարունակում էր այնուամենայնիւ շրջել իւր հօտի մէջ և նորա հոգևոր պէտքերը հոգալ՝ ցոյց է տալիս արդէն, որ Ս. Գրիգորի ճգնութեան մասին պատմածները չափազանցութիւն են՝ ուշ ժամանակի գաղափարներ փոխադրած այնպիսի մի շրջան, ուր չէին կարող այդ կարևորութիւնը տուած լինել ճգնական—կրօնաւորական կեանքին:

**Զ. Քրիստոնէութեան պետական կրօն դառնալը Հռովմէական աշխարհում եւ դորա հետեւանքը հայերի համար:—**
Այդ ժամանակ ահա արտաքին յոյն—հռովմէական աշխարհում մի մեծ դէպք տեղի ունեցաւ. քրիստոնէութիւնը, որ միշտ հալածեալ վիճակի մէջ էր եղել և, ինչպէս

տեսանք, Դիոկղետիանոս կայսեր օրով վերջին ամեն
մեծ հալածանքին ենթարկուել, աղատ կրօն հրա
րակուեց։ Այդ նկատմամբ առաջին քայլ անողը, եղ
էր նոյն ինքն Գաղերիոս կայսրը, որ առաջ Դիոկղետիա
նոսի Կեսարն էր և նորա հանած հալածանքի գլխա
ղրդիչը։ Երկար ժամանակ քրիստոնէութեան դէմ կա
ղի կռիւ վարելուց յետոյ նա իւր կեանքի վերջին օրերու
համոզուեցաւ, որ այդ կռիւն անօգուտ է և 311-ին
հրովարտակով ազատութիւն տուեց քրիստոնեաներ
իրենց կրօնը պաշտելու։ Այնուհետև քրիստոնէութեա
բացարձակ պաշտպան հանդիսացաւ Կոստանդիանոս՝
րութեան արևմտեան մասի կայսրը, որ 312-ին իւր գ
հակիցների հետ հրատարակեց Մայլանդի (Միլանի) հր
վարտակը, որով քրիստոնէութիւնը ոչ միայն ազատ կր
էր ճանաչուում, այլ և հրամայուում էր քրիստոնեաներ
խլած կալուածները յետ դարձնել։ Բայց կատարեալ
վերջնական ազատութիւն ստացաւ քրիստոնէութիւ
այն ժամանակ միայն, երբ Կոստանդիանոս 323-ին յաղթ
հեթանոսութեան վերջին պաշտպանին, արևելեան մա
կառավարիչ իւր փեսայ Լիկինոսին, և միահեծան
դարձաւ Հռովմէական պետութեան։ Ագաթանգեղո
պատմելով՝ երբ Տրդատ Կոստանդիանոսի քրիստոնէ
թիւն ընդունելը լսեց, Լուսաւորչի և Արիստակէսի հ
մեծ պատրաստութեամբ գնաց Հռովմ, խնդակցութի
յայտնելու և այնտեղ դաշն հաստատեց Կոստանդիանո
հետ։ Դժուար է որոշել, թէ այստեղ որ թուականն է հ
մարուում Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունել
եթէ 313-ը, այն ժամանակ Կոստանդիանոս միմիայն ար
մուտքի իշխան էր, իսկ Տրդատը գտնուում էր Արևել
իշխան Լիկինոսի հովանաւորութեան ներքոյ, ուրեմն նա
իշխանութեան սահմաններից անցնել և Հռովմ գնալը
պատեհութիւն կլինէր. իսկ եթէ 323 թիւը, ապա յայ
նի է, որ այս ժամանակուայ միջոցներում կայսրը
մասամբ արևելքում, Նիկոմիդիայում էր գտնուում,
րեմն չէր կարող Հայոց թագաւորի այցելութիւնը ընդու
նած լինել Հռովմում։ Եթէ այդպիսի կարևոր դէպք ան
անմնար, քրոնոլոգին անհասկանալի էլ կլինէր, թէ ինչ

տայս մասին ժամանակակից պատմիչների մօտ ոչ մի յիշատակութիւն չկայ: Հաւանականաբար այդպիսի զրոյց ստեղծելու հիմք ծառայել է Տրդատ Ա. Հայոց Թագաւորի Ներոն կայսեր օրով Հռոմ գնալու և այնտեղ մեծ շքով ընդունուելու պատմութիւնը, և այդ միակ դէպքը չէ երևի, որ ուրիշ Տրդատների անունից փոխադրուել է Տրդատ Գ. առաջին քրիստոնեայ և քրիստոնեայ պատմիչներին առանձնապէս սիրելի Թագաւորի վերայ: Անշուշտ Կոստանդիանոսի քրիստոնէութիւն ընդունելը մեծ նշանակութիւն ունէր քրիստոնեայ հայերի համար. այդպիսով այն կապը, որ կար Տրդատի Թագաւորութեան և Հռոմէական պետութեան մէջ, աւելի պէտք է հաստատուէր: Բացի այդ, քանի որ Մաքսիմիանոս Դաձայի դէմ 312 թուին պատերազմ վարող քրիստոնեայ հայերի Թագաւորը Տըրդատը պիտի լինէր, դորանից յետոյ ըստ ինքեան կարիք յառաջ կգար վերահաստատելու իշխող պետութեան հետ խզուած յարաբերութիւնը. ուստի և շատ հաւանական է, որ Տրդատի ու քրիստոնէութեան հակամէտ ու յաղթական Կոստանդիանոսի մէջ մի նոր դաշինք կնքուած լինի, ինչպէս յիշուում է այդ Եղիշէի և ուրիշ պատմագիրների կողմից. բայց դորա համար Հռոմ գնալու կարիք չկար:

Կոստանդիանոսի, ինչպէս բոլոր քրիստոնեայ եկեղեցւոյ, այնպէս նաև մեր եկեղեցւոյ համար մեծ նշանակութիւն ունեցող մի գործը այն եղաւ, որ նա 325-ին Ա. տիեզերական ժողովը գումարեց Նիկիայում: Յայտնի է, որ այդ ժողովում Արիոսի մոլորութեան դէմ մարդեղութեան խորհրդի ճշմարիտ վարդապետութիւնը հաստատուեցաւ և կազմուեցաւ առաջին անգամ հաւատոյ մի հանգանակ, որ ընդհանրական եկեղեցու միութեան ոգին և բոլոր քրիստոնեաների մաքուր հաւատը պէտք է արտայայտէր: Ըստ մեր պատմութեան, որ և հաստատուում է Նիկիոյ ժողովին մասնակցող եպիսկոպոսների մեզ հասած ցանկով՝ այդ ժողովին մասնակցելու համար ուղարկուեցաւ Ս. Արիստակէս, որ իւր հետ բերաւ հաւատոյ հանգանակը և ժողովի մէջ հաստատուած 20 կանոնները: Այդ կանոնների վերայ իբր Լուսաւորիչ նորերն է աւելա

ցրել, և գործադրել իր եկեղեցու մէջ: Այնուհետև իր Լուսաւորիչն այլ ևս ժողովրդի մէջ չի երևացել, այլ Սեպուհ լերան վրայ ճգնելով վախճանուել է անյայտութեան մէջ. հովիւներն առանց ճանաչելու թաղել են, յետոյ Գառնիկ ճգնաւորի տեսիլքով գտել, տարել թաղել են Թորդան գիւղում: Սակայն այս ամէնը, ինչպէս և Արիստակէսի մասին պատմուածը, թէ Ս. Լուսաւորչի իսպառ հրաժարելուց յետոյ 7 տարի Հայրապետական իշխանութիւնն է վարում, նահատակւում Զորրորդ Հայոց Արքեղայոս իշխանի ձեռքով և թաղւում Թիլն աւանում, թէ նոյն տարին մեռնում է նաև Տրդատ՝ նախարարներից թունաւորուելով, թէ նրա մարմինը մեծ շքով բերում են Թորդան և Լուսաւորչի մօտ թաղում, և յետոյ փոխադրւում է Հոգւոց վանքը, Խորենացու պատմածներն են և ուշ ժամանակի անվստահելի աւանդութիւններ: Ագաթանգեղոս Լուսաւորչի, Տրդատի և Արիստակէսի վերջին օրերի մասին ոչինչ չէ պատմում, և մենք այդ մասին ստոյգ պատմական տեղեկութիւններ չունինք: Սոսկ միայն կարող ենք համարել Ս. Արիստակէսի խոստովանոկան մահը, որ Փաւստոս նոյնպէս յիշում է: Նոյն իսկ Ագաթանգեղոսի պատմած վերջին անցքերը զանազան տեսակէտից կասկածելի են: Արդէն Նիկիոյ ժողովի ժամանակ ամենայն հաւանականութեամբ ո՛չ Լուսաւորիչ և ո՛չ Տրդատ կենդանի չէին: Նորագոյն ուսումնասիրութիւնների հիման վերայ Տրդատի մահը ոմանք դնում են 317 թուին. եթէ Լուսաւորիչ նրանից առաջ է վախճանուել, ուրեմն Ս. Արիստակէս Նիկիոյ ժողովում մասնակցել է ո՛չ իբրև նորա փոխանորդը, այլ իբրև Հայոց եպիսկան կաթուղիկոս և ինքնիշխան հայրապետ է եղել եօթ տարուց աւելի,—որչափ և մինչև ե՞րբ դժբախտաբար յայտնի չէ: Ցամենայն դէպս Ս. Լուսաւորիչ անյայտութեան մէջ վախճանուած և նորա նշխարները Գառնիկ ճգնաւորի միջոցաւ՝ Զենոն կայսեր ժամանակ, Ե. դար վերջերին, գտնուած լինել չեն կարող, քանի որ Փաւստոս Բիւզանդացուն քաջ յայտնի է որ նա թաղուել է տեղը քից և եթ Թորդանում և Ս. Վրթանէսի մահուան ժամանակ նորա գերեզմանը յայտնի էր, որ ուրդուն տարա

Ձորա մօտ թաղեցին: Իսկ Ե. դարու կէսերին նորա նշխար-ներն ամենայն հանդիսականութեամբ Թորդան են տարուել և նոցա վերայ կառուցուել է Հայոց հայրապետութեան երկրորդ աթոռանիստ կաթուղիկէ ս. Գրիգոր եկեղեցին:

## ԳԼՈՒԽ Ե.

## Հայոց եկեղեցին Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատի անմիջական յաջորդների օրով:

**Ա. Ս. Վրթանէսի Հայրապետութիւնը:**—Ս. Լուսաւորչի յաջորդների և նոյն ժամանակի Հայոց եկեղեցու վիճակի մասին մենք շատ քիչ պատմական տեղեկութիւններ ունենք: Դժուար է նաև այդ շրջանի ժամանակագրութիւնը ճշտել, որովհետև Խորենացու և նրա թուերը անվստահե-լի են: Խորենացու ասելով Ս. Վրթանէսը տասն և հինգ-տարի կաթուղիկոսութիւն է արել. այդ թիւը մօտաւո-րապէս ճիշտ կարելի է համարել այն դէպքում, եթէ ըն-դունենք, որ Ս. Արիստակէս Նիկիոյ ժողովից անմիջապէս յետոյ, կամ 326—327 թուականներին վախճանել է, իսկ Ս. Վրթանէս նորան յաջորդելով՝ մինչև 340 թիւը եղել է հայրապետական աթոռի վերայ: Այսպէս ընդունելուն համապատասխանում է այն հանգամանքը, որ Ս. Վրթա-նէս ժամանակակից էր Երուսաղէմի Մակար եպիսկոպոսին. իսկ սա Նիկիոյ ժողովին մասնակցող հայրերից է, թէպէտ յետոյ էլ բաւական ժամանակ կենդանի է մնացել: Ապա նոյնը հաստատում է և այն տեղեկութիւնը, որ Ս. Վրթա-նէս կաթուղիկոս եղաւ, ըստ Փաւստոսի Խոսրով Բ. թա-գաւորի օրով: Փաւստոս մի կարևոր դէպք է յառաջ բե-րում Ս. Վրթանէսի կեանքից, որ բաւականաչափ լոյս է սփռում այն ժամանակուայ հայոց քրիստոնէութեան և տիրող բարքերի վերայ: Ս. Վրթանէսը Տարօնի Մայր եկե-ղեցում պաշտօն էր մատուցանում, ինչպէս սովոր էր տարէցտարի կատարել: Այդ ժամանակ այդտեղ և շրջա-կայքում մնացած հեթանոսները դաւադրութիւն են կազմում, որի մէջ մասնակից է լինում և Թագուհին

Նոյն իսկ պատարագի միջոցին կամենում են Ս. Վրթան
սին դուրս քաշել և նահատակել, բայց նա հրաշքով ա
զատւում է: Այս դէպքը, ինչպէս և Փաւստոսի պատմա
այն մեծ կոտորածները, որոնք տեղի են ունենում Ռ
գունեաց, Բզնունեաց և Մանաւազեանց նախարարու
տների մէջ, Մանաճիհր Ռշտունու վարմունքը Յակ
Մծբնայ հայրապետի հետ և ուրիշ նման գործեր ցոյց
տալիս, թէ քրիստոնէութիւնը որչափ քիչ ազդեցութի
ունէր դեռ որոշ շրջանների վարք ու բարքի վերայ. Ի
ինչպէս ամբոխի մէջ, նոյն իսկ իշխանական տներում, է
խող էին մնում հեթանոսական սովորութիւնները, մնա
էր դեռ հեթանոսական կեանքը ընդարձակ չափով. Հաւա
նականաբար շատ տեղեր ծածուկ կատարւում էր նա
հեթանոսական պաշտամունքը:

Փաւստոս իւր պատմութեան Դպ. Գ. ԺԳ. գլխու
գեղեցիկ կերպով նկարագրում է այս շրջանի հայոց ցա
ւալի կենցաղն և վարք ու բարքը: Իսկ եկեղեցւոյ ներքի
վիճակի մասին փոքր ի շատէ գաղափար տալու համա
առանձին արժէք ունի վերոյիշեալ Մակար Երուսաղէմա
ցու թուղթը, ուղղուած առ «եպիսկոպոսապետ Տ. Վր
թանէս և համօրէն եպիսկոպոս և քահանայս Հայոց», ո
վաւերականութեան դէմ կասկածելու առանձին պա
ճառ չկայ և որ Հայոց կողմից եղած մի դիմումին պա
տասխանելով՝ կանոններ և հրահանգներ է տալիս մկրտու
թեան ու հաղորդութեան խորհուրդների պատշաճա
կարգերով կատարելու համար: Երևում է այստեղից, թ
որչափ անորոշ էր դեռ հայոց եկեղեցւոյ դիրքը այսպի
խնդիրներում և որչափ նախնական ձևով էին կատարւու
մեր մէջ զանազան ծէսեր: Շատ հետաքրքրական
նաև երկու հայ եպիսկոպոսների մասին յիշատակութի
նը, որոնք արիոսականութեան էին յարել և ընդոստաց
եկեղեցւոյ օրինական վարչութեան դէմ: Դժբախտաբ
այս և նման աղօտ յիշատակութիւններից ոչինչ որոշ ե
րակացութիւն հանել չենք կարող, թէ ինչ դեր են կա
տարել աղանդաւոր շարժումներ հայոց եկեղեցու ա
սկզբնական շրջանում:

Ս. Վրթանէսի օրով ըստ Բիւզանդի երկու կարև

պատերազմներ են տեղի ունեցել Հայոց և Պարսից մէջ։ Առաջնի առիթը տուել է Աղձնեաց Բակուր բդեշխի ապստամբութիւնը Հայոց թագաւորից՝ և այդ պատերազմում հայերը յաղթող են հանդիսացել. իսկ երկրորդում երկու կողմից մեծ կոտորածներ են եղել և ընկել է պատերազմի դաշտում Հայոց նշանաւոր սպարապետ Վաչէ Մամիկոնեանը։ Ինքը Ս. Վրթանէսը այդ պատերազմին ազգային կրօնական նշանակութիւն է տուել։ Ուշադրութեան արժանի են Բիւզանդի բերած այն խօսքերը, որոնցով մխիթարում է Ս. Վրթանէս՝ ունեցած մեծ կորստի համար։ Վաչէ և իւրայինք ներկայանում են իբրև Վարդանանց նախատիպ նահատակներ, «որ յաղագս աշխարհի և եկեղեցեաց և աստուածագործ օրինաց ազատութեան մեռան», ուստի Հայոց հայրապետը սահմանում է, որ նոցա յիշատակին տօն կատարուի տարէցտարի և նոցա անունը յիշուի Ս. պատարագի մէջ։ Իսկ Վ.աչէի փոխարէն սպարապետ է կարգւում մանուկ Արտաւազդը՝ Մամիկոնեանց փեսաների խնամակալութեան ներքոյ։ Այնուհետև վախճանւում է Խոսրով Բ. որին Բիւզանդ հակառակ Խորենացու «Քաջարանց և աշխարհաշէն» է անուանում, և որ ուրեմն թագաւորած պիտի լինի առնուազն մինչ 337 թիւը, որովհետև այդ թուականից առաջ լուրջ պատերազմ վարել Պարսից դէմ անկախ Հռոմայեցիներից նա չէր կարող։ Շատ չանցած մեռնում է նաև Ս. Վրթանէսը և թաղւում Թորդան աւանում՝ «Առ մեծ հայրապետին Գրիգորի»։

**Բ. հայոց եկեղեցին Ս. Լուսաւորչի թոռների օրով։—** Ս. Վրթանէս ունէր երկու որդի, ըստ Բիւզանդի նորա ծերութեան օրերի պտուղ, որոնցից անդրանիկը, Ս. Գրիգորիս, եպիսկոպոս էր կարգուած «Կողմանց Աղուանից և Վրաց». Խորենացին նրան Փայտակարան նահանգի եպիսկոպոս է համարում, որ չի հակասում նախորդ որոշման։ Բայց աւելի ուշ ժամանակների հանած եզրակացութիւնը, թէ եղել է Վրաց և Աղուանից կաթուղիկոս՝ պատմական փաստերով չի արդարանում։ Յիրաւի քանի աւելի է պարզւում այն ժամանակի պատմութիւնը, նոյնքան

նշանները են երևում, որ սերտ կապ է եղել Հայոց զա
և այս հարևան ազգերի քրիստոնէութեան ընդունելու մէ
և որ Ս. Լուսաւորչի առաքելական գործունէութիւ
տարածուել է մասամբ նոցա վերայ. սակայն թէ ի՞ն
իսկապէս ազդի ունեցել և ի՞նչ յարաբերութիւններ
ստեղծուել գործով՝ դժուար է առ այժմ որոշել,
Հայոց Գիւտ Կաթողիկոսը Ե. դարում Աղուանից Վա
թագաւորին գրած նամակում պարզ ասում է, որ
Լուսաւորիչ նոցա համար ձեռնադրել է Հա... քաղաքա
ցի մի եպիսկոպոս, ուրեմն ո՛չ Գրիգորիսին: Բիւզան
պատմում է, թէ ինչպէս Ս. Գրիգորիս քարոզել է Կա
կասեան աւազակաբարոյ ժողովուրդների մէջին Մա
քթաց մէջ, որոնց թագաւորը մի Արշակունի էր Սանէսա
անունով, և այդ հանգամանքը երևի դիւրութիւն էր տա
լիս նրան արքունիքում մուտ գործելու: Սկզբում նա յա
ջողութիւն է ունենում, բայց ժողովուրդը զգում է,
իրեն անյարմար է աւետարանի պատուիրաններից համաձա
կեանք վարել. Թագաւորին գրգռում են Գրիգորիսի դէ
և սա կնքում է իւր կեանքը Վատնեան դաշտի մէջ ձիաքա
նահատակութեամբ: Նորա մարմինը թաղում են Ամարա
սում, որ այնուհետև դառնում է մեծ ուխտատեղի: Ն
րա մասին պատմածները վկայում են, որ այս սկզբնա
կան ժամանակներում Հայերը փորձել են քրիստոնէակա
առաքելութիւնը յառաջ տանել հարևան վայրենի ժող
վրդովների մէջ և ծանր արգելքների են հանդիպել:

Ս. Վրթանէսի երկրորդ որդին էր Յուսիկ, որ ի
աղայական հասակում կնութեան էր առել Տիրան արքա
յորդու դուստրը և ունեցել էր երկու որդի՝ Պապ և Աթա
նագինէ: «Սուրբ երանելի մանուկ» է անուանում Ն
այն ժամանակ ևս, երբ իւր հօր տեղ Հայոց հայրապետ
ընտրուում՝ արդէն իր աներ Տիրան թագաւորի օրո
որի կողմից և ուղարկուում է մեծ իշխանների ուղեկցո
թեամբ Կեսարիա՝ եպիսկոպոս ձեռնադրուելու: Փաւստ
շատ մութ գոյներով է նկարագրում Տիրանի թագաւ
րութիւնը, խստիւ պախարակում է մանաւանդ նրա վ
րաբերմունքը դէպի եկեղեցին: Մինչդեռ Խորենացի իշխա
նութեան առաջին տարիները խաղաղութեամբ անցան,

միայն վերջերը մի քանի պատերազմների եղան, որոնց մէջ Հայոց բուն մեծի մասին յաջողութիւն ունէր՝ Տիրանի թագաւորութեան գրեթէ ամբողջ շրջանը վերանորոգուած էր Պարսից և Յունաց մէջ տեղի ունեցող անընդհատ պատերազմներով: Եւ որովհետև Յոյները միևնոյն ժամանակ շարունակ պատերազմ ունէին իրենց երկրում՝ հիւսիսային ազգերի հետ և արևելքում չէին կարող յաջողութեամբ առաջ տանել, ուստի Պարսից թագաւորին յաջողւում էր գրգռել Հայոց նախարարներին, նոցա իրենց թագաւորի դէմ հանել և ամեն կերպ նեղը ձգել վերջիններին: Ինքը Տիրան ստիպուած էր ուրեմն հաճոյանալ Պարսից և այդ է պատճառը իրեն, որ առանձին քաջահանճարութիւն ցոյց չէր տալիս դէպի եկեղեցին: Հաւանականաբար իւր վարքը ու բարքով ու ներքին յատկութիւններով էլ նա իւր նախորդների արժանաւոր ժառանգը չէր համարւում, և նրա գործած անիրաւութիւնները պէտք է չափից անցած լինէին, որ երիտասարդ կաթուղիկոսը իրաւունք է համարում բացարձակապէս նրա դէմն ելնել և արգելել նրան եկեղեցի մտնելու. թէև ցէ այս դէպքում դեր էր խաղում նաև այն հանգամանքը, որ բուն Փաւստոսի, Յուսիկին ակամայ բռնադատել էին Տիրանի դստեր հետ ամուսնանալու և նա կարճ ժամանակից յետոյ բաժանուել էր կնոջից: Այդպիսով կարող էր նոցա մէջ ընտանեկան դժտութիւն յառաջ եկած լինել: Կարող էին նաև քաղաքական ու ցեղական ուրիշ նկատումներ իրենց նշանակութիւնն ունենալ: Ուշադրութեան արժանի է այնուամենայնիւ, թէ որչափ բարձր գիտակցութեան էր հասել արդէն հայոց կաթուղիկոսը իւր կոչման մասին, երբ այսպիսի համարձակ քայլ է անում: Ինչ և լինէ թագաւորը չէ կարողանում տանել այդ ծանր անարգանքը և բրածեծ անելով նահատակել է տալիս եկեղեցու սրբութեան քաջ պաշտպանին: Խորենացին այդ դէպքի առիթը համարում է այն, որ իբր թէ Տիրանը կամեցել էր Յուլիանոս ուրացողի պատկերը եկեղեցում դնել: Սակայն դա ժամանակագրական մեծ սխալ է, որովհետև ստոյգ գիտենք, որ Յուլիանոսի կայսր լինելուց (362) շատ առաջ արդէն կուրացրած Տիրանի Արշակ որդին էր հայոց թագաւորը (350):

Յուսիկի մահուանից յետոյ, արտաքնեաւ նրա որդին
րից ոչ մէկը արժանի չէ համարւում կաթուղիկոսութեա
թագաւորն ու նախարարները մտածում են եկեղեց
վերակացութիւնը յանձնել Դանիէլ անունով ասորի ք
րեպիսկոպոսին, որ համարւում էր Ս. Լուսաւորչի
շակերտ՝ նորանից ձեռնադրութիւն ընդունած և Տարօ
Մայր-եկեղեցւոյ և եկեղեցական կալուածների կառավ
րիչ կարգուած: Հեթանոսների մէջ քրիստոնէութիւն ք
րոզած լինելուն և իւր մաքուր վարքի համար նա մ
համբաւ էր վայելում: Գուցէ այսպիսի մի հեղինակա
օտարականի կաթուղիկոսական աթոռ բարձրացնելով Տ
րան նպատակ ունէր Լուսաւորչի սերունդից խլելու ժ
ռանգական դարձած հայրապետական իշխանութիւնը
նորա արագ կերպով աճող հեղինակութիւնը նուաստա
նելու: Յիշատակելի է այտեղ մի կողմնակի երևոյթ և
Փաւստոս, ինչպէս ուրիշ առիթներում, նոյնպէս և ա
անգամ մեծ գովասանքներ ու պատուանուններ է շռա
լում Տարօնի Մեծ եւ Նախառաջին Մայր եկեղեցու համ
և այդ պատճառ է եղել նոր ժամանակներս շատեր
պնդելու, թէ հայոց հայրապետական Մայր-եկեղեցին
էր սկզբներում և այստեղ Աշտիշատում էր հայոց հայր
պետների աթոռանիստը: Մինչդեռ այն հանգամանքն ի
որ այս եկեղեցին յատուկ վերակացու ունէր յանձին Դան
էլի, հակառակն է ապացուցանում: Թող որ Դ. դարի
եկեղեցւոյ ամբողջ պատմութիւնը ցոյց է տալիս,
հայրապետի աթոռանիստն այնտեղ միայն կարող էր լին
ուր էր թագաւորի մայրաքաղաքը, և բոլոր այն փաստեր
որոնք բերւում են հակառակ Վաղարշապատի Մայր
կեղեցու հեղինակութեան և ի նպաստ Աշտիշատի՝ զօր
թիւն չունեն:

Երբ թագաւորը նշանաւոր նախարարներ ուղարկ
լով Դանիէլի ետևից, բերել է տալիս նորան արքունի
ստ փոխանակ զգացուելու եղած պատուից՝ սաստ
յանդիմանում է նրան իւր անիրաւութեանց, մանաւա
վերջին չարագործութեան համար, և թագաւորի հրամ
նով տեղուտեղը խեղդամահ է լինում: Նրա երկու աշ
կերտները Եպիփան և Շաղիտա տանում թաղում են նո
մարմինը Տարօնի Հացեաց դրախտում:

**Դ. Լուսաւորչի տոհմին չպատկանող հայրապետները։**— Դանիէլի մահով կրկին հարց է առաջ գալիս, թէ ով պիտի լինի կաթուղիկոս։ Փորձում են միանգամ ևս Յուսիկի որդիներից մէկին ու մէկին բռնադատել այդ բարձր պաշտօնը յանձն առնելու և նոցա իրենց կամքի հակառակ սարկաւագ են ձեռնադրել տալիս, բայց նոքա արհամարհում են աստուածային շնորհքը և շատ չանցած պատժւում անակնկալ զարհուրելի մահով։

Թէ ինչքան հաստատ էր Հայոց մէջ այն գաղափարը որ եպիսկոպոսական աթոռը յաջորդութեամբ որդէցորդի պիտի անցնի, այդ երևում է Փաւստոսի շատ վկայութիւններից։ Մենք տեսնում ենք, որ ոչ միայն կաթուղիկոսութիւնն է Լուսաւորչի տան համար ժառանգական, այլ նաև ուրիշ եպիսկոպոսական աթոռներ ժառանգաբար որդէցորդի են անցնում։ Օրինակի համար, Ներսէս Մեծի նշանաւոր տեղապահ Խադ եպիսկոպոսն արու զաւակ չունենալով, իւր աթոռը թողնում է իւր փեսային ժառանգութիւն։ Այսպէս վարուելու գլխաւոր պատճառն այն էր անշուշտ, որ իւրաքանչիւր աթոռի հետ ընդարձակ կալուածներ և մեծ եկամուտներ էին կապուած և երկրում տիրող կարգերը թոյլ չէին տալիս, որ նոքա ամեն անգամ պատահական մարդոց ձեռք անցնեն։ Դուրանով բացատրւում է, թէ ինչու նաև այժմ նախարարները պնդում են, որ նոր կաթուղիկոսը անպատճառ Լուսաւորչի ցեղից լինի, և ահա ընտրւում է Փառէն ոմն երէց «ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովաննու»։ Փաւստոսի խօսքերի կապակցութիւնը ցոյց է տալիս, որ այս Փառէնը Լուսաւորչի տան հետ մի մերձաւոր, մի ազգակցական կապ պիտի ունենար։ Գուցէ այն պատճառով, որ նա անմիջական ժառանգ չէր, այլ կողմնակի մի ազգական, կամ որ նա իւր նախորդների նման արիաբար թագաւորի դէմ ելնել և նրան յանդիմանել չէր համարձակւում, «Բայց միայն զիւր անձն սուրբ պահէր և ի հարկէ ընկերէր անօրէն թագաւորին և ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ», Բիւզանդ և նրա հետևողները արժանի չեն համարել նրան որոշ կերպով Լուսաւորչի շառաւիղների շարքում դնել։ Իսկ Փառէնի Ս. Լու-

տաւորչին որ և է կերպով ցեղակից լինելը երևում է նա-
նրանից, որ նորա մահից յետոյ «երբեք ոչ ոք գայր ի տան
Գրիգորի այնմ (կաթուղիկոս) արժանի. ապա նմանեցու-
ցին զՇահակ ոմն անուն ի տոհմէ զաւակին Աղբիանո-
եպիսկոպոսին»: Աղբիանոս ինչպէս տեսանք Լուսաւորչի
ժամանակ ամենից նշանաւոր եպիսկոպոսն էր և նորա տո-
մից՝ որ պատուով երկրորդ տեղ էր բռնում, յանձն առա
կաթուղիկոս ընտրել, երբ Լուսաւորչի ցեղից այլ ես
ոք չկար յարմար այդ կոչման:

Այս Շահակը Մովսէս Խորենացու և հետևող պատ-
մագիրների մօտ չէ յիշւում, բայց Փաւստոս այնպէս
որոշ կերպով դնում է նորա կաթուղիկոսութիւնը Փառէ-
նից յետոյ և Ներսէսից առաջ եղած, որ կասկածելու
տեղիք չկայ, մանաւանդ՝ Յոբիանոս Կայսեր դրած մի
ժողովական թղթում (363 թիւ) յիշւում է նաև Իսակ-
կիոս Հայոց եպիսկոպոս, որ անշուշտ այս Շահակն է: Այ
կարևոր յիշատակութիւնը մեզ միջոց է տալիս կրկին ժա-
մանակագրութեան վերայ լոյս սփռելու: Փաւստոս ըստ
երևութին թէ Փառէնի և թէ Շահակի կաթուղիկոսու-
թիւնը դնում է Տիրանի օրով, բայց դոնէ վերջինիս հա-
մար այդ հաւանական չէ, որովհետև ոչ միայն Յոբիանոսի
նախորդ Յուլիանոս կայսեր օրով Հայոց թագաւորը Ար-
շակն էր, այլ արդէն Կոստանդիոս կայսեր օրով նա մի
քանի անգամ յիշւում է Յունաց պատմութեան մէջ:
Յայտնի է, որ Կոստանդիոս նրան աւելի սերտ կապե-
լու համար իւր կայսերութեան հետ, կնութեան է տալիս
նրան Ողոմպիա անունով մի ազնուական օրիորդ (որ
առաջ Կոստաս Կեսարի նշանածն էր), և այդ ամուսնու-
թիւնը պէտք է տեղի ունեցած լինի 355-ին: Այսպէս նոյն
Կոստանդիոս 360-ին Կեսարիայում տեսնուել է Արշակի
հետ, սիրով ընդունել և դաշն կապել նորա հետ: Հաւա-
նականաբար Արշակը թագաւոր եղաւ մօտ 350 թուին,
որովհետև այդ թուին է տեղի ունեցել Կոստանդիոս
կայսեր այն յաջող պատերազմը Պարսից Շապուհ թագա-
ւորի դէմ, որի հետևանօք վերջինս, ինչպէս և Փաւստոս
նկարագրում է՝ միայն անուններ և դէպքեր շփոթելով,
ստիպուած եղաւ մի քանի տարի առաջ նենգութեամբ

կալանաւորած և կուրացրած Տիրանին ազատ թողնելու և նրա որդի Արշակին գահ բարձրացնելու: Փաւստոս այս պատերազմում մասնակցող Պարսից թագաւորին Ներսէհ անուանելով՝ ամենայն հաւանականութեամբ կէս դար առաջ Ներսէհի և Գաղերիոս Կեսարի մէջ տեղի ունեցած պատերազմի յիշողութիւնները բերում խառնում է այս ժամանակուայ դէպքերի հետ: Նա անտեղի կերպով բերում Արշակի անուան հետ է կապում նաև Շապուհի հանած մեծ հալածանքը քրիստոնեաների դէմ, դորա պատճառը համարելով այն, որ Արշակ երդմամբ հաւատարմութեան դաշն է կապել նրա հետ և յետոյ դրժել: Եւ իրաւի Շապուհի օրով մեծ հալածանք տեղի ունեցաւ: Բայց սկսուել էր արդէն 345 թուին երբ Արշակ չկար թատրովին մէջ տեղ, այլ պատերազմ էր ծագել հռովմայեցւոց դէմ և Շապուհ շուտով նկատեց, որ իւր պետութեան մէջ գտնուած քրիստոնեաները յայտնի կերպով համակրութիւն են ցոյց տալիս թշնամիներին: Մանաւանդ երբ մայրաքաղաքի Սիմէօն եպիսկոպոսը հրապարակաւ թշնամանք արտայայտեց թագաւորի դէմ, նա հալածանքն աւելի սաստկացրեց և նորա թագաւորութեան ամբողջ ընթացքում (մինչև 379 թիւը) քրիստոնեաների արիւն էր թափուում: Թէև նորա հալածանքն աւելի քաղաքական նպատակով էր, բայց մոգերը օգուտ քաղեցին թագաւորի տրամադրութիւնից և մեծ արիւնհեղութիւն գործել տուին: Քրիստոնեաները անթիւ նահատակներ ունեցան, որոնցից շատերի համար հետաքրքրական վկայութիւններ կան Փաւստոսի մէջ: Ցամենայն դէպս եթէ Տիրան, ինչպէս հաւանական է, գահից զրկուել է արդէն մօտ 346 թուին, ապա նորա թագաւորութեան օրերում տեղ է մնում միայն Յուսիկի կաթուղիկոսութեան համար, որին Խորենացին վեց տարուայ իշխանութիւն է վերագրում, և կարելի է ենթադրել, որ Յուսիկի և Դանիէլի մահից յետոյ հայրապետական աթոռն առ ժամանակ թափուր մնաց, վրայ հասաւ նաև Տիրանին հասած փորձանքը և միայն Արշակի գահ բարձրանալուց յետոյ կաթուղիկոս ընտրուեց Փառէն: Իսկ եթէ ընդունենք, որ սա Դանիէլի մահից անմիջապէս յետոյ ընտրուել է և կաթուղիկոս եղել

տակա. ժամանակ» նոյն խառն տարիներում, առաջ գո-նէ Ճոհնակի կաթուղիկոսութիւնը, որ առ նուազն մինչ 363 թիւը տևել է, Արշակի օրով պիտի դնենք:

## Գ Լ Ո Ւ Խ Զ.

## Ա. Ներսէս Մեծ (364—373).

Ա. Ա. Ներսէսի ժամանակը. բնորոշութիւն ու ձեռնարկութիւնը.—Ա. Լուսաւորչից յետոյ մեր եկեղեցու պատմութեան մէջ ամենից աչքի ընկնող անձնաւորութիւնն անշուշտ Մեծն Ներսէսն է, որի կաթուղիկոսութեամբ կարծես է սկսել եկեղեցական կեանքը մեզանում մի նոր ընթացք է ստանում և որի օրով իսկապէս քրիստոնէութիւն սկսում է հայոց ժողովրդի կրօնը լինել. Ներսէս զանազան խաւերի մէջ մուտք գտնել և յառաջ բերել այն արգելքները, որ յաջորդ շրջանում կրօնական պատերազմների ժամանակ երևան եկան: Զարմանալին այն է, որ Ներսէս ա[illegible] հետևանքներով հարուստ գործունէութիւնը շատ կա[illegible] ժամանակի մէջ տեղի ունեցած պիտի լինի: Դրեթէ մի քանի ժամանակագիրները նրան երեսուն և չորս տարի կա[illegible] թուղիկոս եղած են համարում, բայց այդ թիւը բոլորովին անհամաձայն է ճշգրիտ պատմութեան հետ: Փաւստոս պատմելով նրա ձեռնադրութեան Կեսարիայ Եւսեբիոս եպիսկոպոսից, որ աթոռ էր բարձրացել 362-ին, ուրեմն այդ թուից առաջ չէր կարող ձեռնադրուած լինել, [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] թուին կաթողիկոս [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible] [illegible] է Գա[illegible] [illegible] [illegible], որը [illegible] 374-ին, և որովհե[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ունեցաւ գէ[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Ներսէս բազ[illegible] [illegible] [illegible] [illegible] մի տարի տա[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] չարչարանք [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]ուղիկոսութեա[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]: Իսկ ա[illegible] ժամանակամիջոցում [illegible] [illegible] [illegible] բոլորը, ինչ [illegible]

Փաւստոսն ու ուրիշները պատմում են նորա մասին բժուար կլինի։

Շատ հետաքրքիր է նորա ընտրութեան նկարագիրը, որ տալիս է Բիւզանդ։ Այստեղ իմանում ենք, որ նա իւր մանկութեան օրերը անց է կացրել Կեսարիայում և այնտեղ իւր կրթութիւնը ստացել «ընդ հաւատարիմ վարդապետօք»։ Ապա նա Արշակ թագաւորի սենեկապետն էր դարձել և դեռ երիտասարդ հասակում էր, երբ Շահակի մահից յետոյ թագաւորի մօտ ժողովուած նախարարները պահանջեցին, որ կաթուղիկոս լինի անպատճառ Լուսաւորչի տնից, յատկապէս Աթանագինէի և Տիրան թագաւորի քոյր (?) Բամբիշից ծնուած Ներսէսը։ Սա սկզբում խիստ ընդդիմանում է այդ պահանջին, անարժան է համարում իրեն այդպիսի բարձր պաշտօնի համար, մեղադրում է իրեն զանազան յանցանքների մէջ, սպառնալիքներ է տալիս, բայց ոչինչ չի օգնում, ինքը թագաւորը խլում է նորա ձեռքից սուրը, որը երբեմն իւր պաշտօնի նշան բռնած կանգնել էր, և ծերունի Փաւստոս եպիսկոպոսին պատուիրում բռնութեամբ սարկաւագ ձեռնադրել նորան։ Այնուհետև ուղարկւում է Կեսարիա Եւսեբիոս եպիսկոպոսից ձեռնադրուելու, «Ի կաթուղիկոսութիւն Հայոց Մեծաց»։

Այս առթիւ Փաւստոսը մի հրաշք է պատմում, որ շատ խորհրդաւոր է Ներսէսի գործունէութիւնը բացատրելու համար։ Ձեռնադրութեան միջոցին ասում է նա, ներկայ եղող Բարսեղ երէցի գլխին մի աղաւնի է երևում, որը յետոյ բարձրանում Ներսէսի գլխին է նստում։ Այդ ցոյց է տալիս անշուշտ այն սերտ կապը, որ կար Ս. Ներսէսի ու Ս. Բարսեղի կեանքի ու գործունէութեան մէջ։ Այս Բարսեղ Մեծն կամ Բարսեղ Կապադովկացին, որ յետոյ Կեսարիոյ Մետրապոլիտ եղաւ, իւր բազմակողմանի գործունէութեան ուրիշ արդիւնքների թւում շատ նշանաւոր է նրանով, որ արևելքում կրօնաւորական կեանքին սկիզբ և նոր ուղղութիւն տուաւ և մշտական կանոններ հաստատեց։ Արդէն Գ. դարում յառաջ էր եկել կրօնաւորութիւնը և քանի գնում ընդարձակ տեղ էր բռնում եկեղեցու մէջ։ Նորա առաջին կանոնաւորողն ու ընդար-

*հակ ծառայ տուողը եղաւ Դ. դարու սկզբներին Ս. Ան-
տոնը Եգիպտոսում: Ս. Բարսեղ, որ աշխարհական կրթու-
թիւն էր ստացել Աթէնքում, տուն վերադառնալուց
յետոյ իւր Մակրինա քրոջ ու այրիացած մօր աղքատու-
թեան ներքոյ ընկաւ, որոնք քաշուել էին քաղաքից դուրս
մի առանձին տեղ և վարում էին ճգնական կեանք: Այ-
նուհետև համապարհորդեց Ասորիք, Պաղեստին, Եգիպ-
տոս, ուր արդէն կրօնաւորական կեանքը ծաղկեալ վիճա-
կի մէջ էր, և վերադառնալուց յետոյ սկսեց կանոնաւոր
վանքեր հաստատել, որոնք կարճ միջոցում աճեցին, և
ազդեցութիւն յառաջ բերին շրջակայքում և ընդարձա-
ծաւալ ստացան:*

*Ս. Բարսեղ առանձին բարեկարգութիւն մտցրեց կը-
նական կեանքի մէջ՝ նկատելով այն մեծ վտանգը,
կարող էր առաջ գալ վանքերում պարապութիւնից՝ աշ-
խատանքը, թէ ձեռքի և թէ մտաւոր, պարտաւորեցուց
դարձնելով կրօնաւորների համար: Փոխանակ Ասորիքում
և Եգիպտոսում ընդհանրացած առանձնական ճգնաւոր-
կան կեանքի, նա վանական կեանքը նախադասեց և կը-
նոնաւոր կազմակերպութիւն տուաւ նորան:*

*Նրա հաստատած վանական կանոնները առանձ-
նշանակութիւն ունեցան արևելեան եկեղեցու համար,
որտեղ գրեթէ մինչև այժմ բոլոր վանքերը այդ կանոննե-
րով են առաջնորդւում: Բնական է որ այսպիսի աչ-
ընկնող մի անձնաւորութիւն իւր մտցրած բարեփոխու-
թիւններով մեծ տպաւորութիւն գործէր Ս. Ներսէսի նմ-
փայլուն ընդունակութիւնների տէր մի անձի վերայ
ազդեցութիւն ունենար հարևան Հայոց եկեղեցու վրայ:*

*Մեծն Ներսէս իբրև ըստ ամենայնի հետևող եղ-
Ս. Բարսեղի և Հայաստանում մտցրեց գրեթէ նոյն բար-
կարգութիւնները, ինչ որ տեսել էր Կապադովկիայում:*

**Բ. Աշտիշատի ժողովն ու Ս. Ներսէսի բարեկարգութիւ-
ները:** *Ս. Ներսէս Կեսարիայից իբրև կաթուղիկոս վերադառ-
նալուց յետոյ մի ժողով է գումարում Աշտիշատում,
պատմութիւնից մեզ յայտնի առաջին ազգային եկեղ-
[illegible] ժողովն է (364 կամ 365 թուին) և հիմնական նշ-*

…ակցութիւն է ունենալ անշուշտ յետագայ ժամանակի եկեղեցական կեանքի համար: Այդ ժողովի մէջ ըստ Փաւստոսի, նախ ընդունւում ու գործադրութեան մէջ են դրւում առաքելական կանոնները, որով պէտք է հաստատել գուցէ այն բոլոր ժողովական կարգերն ու որոշումները, որոնք մինչև այդ ժամանակ հաստատուել էին ընդհանրական եկեղեցու մէջ, բայց հայերի կողմից հարկաւոր ուշադրութիւն միայն գտել: Բ. որոշւում է աղքատների և զանազան հաշմանդամների համար աղքատանոցներ և հիւանդանոցներ շինել, նոցա ապրուստի միջոցները հայթայթել և թոյլ չտալ այլ ևս, որ անտէրուն շրջեն, մուրացկանութիւն անեն: Գ. արգելւում է մեռեալների վրայ կոծ անելը, որ ինչպէս երևում է շատ տարածուած ու մշակուած էր Հայոց մէջ և սերտ կապուած էր հեթանոսական սովորութիւնների հետ: Դ. կարգաւորւում է ամուսնութեան օրէնքը ընդհանրական եկեղեցու մէջ տիրող կարգերի հիման վերայ: Այս նկատմամբ ևս ինչպէս պատմական այլ և այլ վկայութիւններից երևում է, շատ զեղծումներ եղած պիտի լինէին Հայոց մէջ: Արդէն Ներսէսի նախորդները մաքառել էին այդ զեղծումների դէմ և դոցա առաջն առնելու համար նոքա ջանքերն էլ քիչ յաջողութիւն են գտնում: Ե. հաստատում է կանոններ կերակրի և կենցաղավարութեան մէջ ցոյց տուած անխտրականութեան և զանազան անբարոյական սովորութիւնների դէմ. միջոցներ ձեռք առնում քրիստոնէական սիրոյ, արդարութեան, ողորմածութեան և ճշմարտասիրութեան սկզբունքները ընդհանրացնելու համար: Բայց ժողովի խորհրդածութեան կենդրոնը կազմում էր անշուշտ Վանական կեանքը, և նորա հետ զուգընթաց աղքատանոցներ, հիւանդանոցներ, որբանոցներ, ապաստանարաններ հիմնելու կարիքը, ինչպէս և ժողովից յետոյ ս. Ներսէսի գլխաւոր հոգացողութեան առարկան եղաւ վանքեր ու բարեգործական հաստատութիւններ հիմնելը Հայաստանի զանազան մասերում: Վանքերին կից հաստատում էին նաև դպրոցներ, ուր հայ մանուկները յոյն ու ասորի դպրութիւն պիտի սովորէին: Այսպիսի բարեկարգութիւններով ահա քրիստոնէութիւնը հետզհետէ մատչելի է դառ-

նում հայ ժողովրդին, որ պէտք է ենթադրել, քան մեծ մասին դեռ միմիայն անունով քրիստոնեայ էր, և կամ հեռու ընկած գաւառներ, ինչպէս հարաւային լեռնային կողմերը, որոնք շատ քիչ էին ենթարկուել քրիստոնէական ազդեցութեան: Վանքերը մեծ ծառայութիւն են մատուցանում, թէ այդպիսի տեղերի համար քարոզիչներ պատրաստելով և թէ իրենց շրջապատի վերայ ազդելով քրիստոնէական աշխարհայեցողութեան ծանօթութիւններ և սկզբունքներ տարածելով բոլոր դասակարգերի մէջ: Փաւստոս յանուանէ յիշում է երկու կրօնաւորների՝ Եպիփան ու Շաղիտա, որոնք ինչպէս երևում է արդէն Ներսէսից առաջ կրօնաւորական կեանք էին վարում և կապ ունէին Դանիէլ Ասորու հետ, նորա աշակերտներն էին: Ներսէսի մահից յետոյ սոցանից մէկը վանքեր է հաստատում, մեծապէս նպաստում քրիստոնէութեան զօրանալուն Կորդուաց մէջ, իսկ միւսը Ծոփաց ու Աղձնեաց աշխարհներում: Այսպիսի ուրիշ հետևողներ ևս անշուշտ Մեծն Ներսէս ունեցել է, որոնց գործունէութեան շնորհիւ մասամբ Հայոց եկեղեցին նախապատրաստուեց այն լինել, ինչ որ ներկայացնում է նորա որդի Ս. Սահակ օրով:

Դ. Ս. Ներսէսի մասնակցութիւնը քաղաքական գործերում: Դժուար է պատմութեան հետ հաշտեցնել այն դէպքերը, որոնց նկարագրութեամբ Բիւզանդ և ուրիշ ազգային պատմիչներ ցոյց են տալիս Ներսէսի մասնակցութիւնը քաղաքական խնդիրների մէջ: Ներսէս Արշակ թագաւորի կողմից պատգամաւոր ուղարկուած է համարւում Վաղէս կայսեր մօտ, նորա ձեռքով աքսոր ուղարկուած, ապա նորա մահից յետոյ վերադարձած, մասնակից եղած Կ. Պօլսի տիեզերական ժողովին, յետոյ Հայաստան գալով երկար ժամանակուայ գործունէութիւնից յետոյ վախճանած, մինչդեռ ինչպէս ասացինք նա վախճանած պիտի լինի Պապից առաջ, ամենաուշը 373 թուին, իսկ Վաղէս կայսրը մեռել է 379-ին և Կ. Պօլսի ժողովը եղել է 381-ին: Գոնէ մի դէպքի համար, ուր Ս. Ներսէս յանձն չի առնում արիոսական Վաղէսի մանկանը օրհնու

Քեամբ բժշկել և դորա մահուան պատճառով աքսորուած ֊, կարող ենք ասել, որ յայտնի շփոթութիւն է Ս. Բարսեղին պատահած նոյնպիսի մի դէպքի հետ, և այդ տեղից եզրակացնել, որ նման պատմութիւններ ևս առնուած են Ս. Բարսեղի և ուրիշների մասին եղած վկայաբանութիւններից: Յայտնի է, որ Վաղէս կայսրը 372-ին արևելք ճանապարհորդելիս եղել է Կեսարիայում և հաւանական է, որ այդ միջոցին Ս. Ներսէսն ևս այնտեղ գտնուած լինէր, որովհետև 372-ին Կեսարիայում գումարուած մի ժողովի եպիսկոպոսների ցանկի մէջ յիշուում է նորա անունը: Գուցէ մի այդպիսի ժողովի յիշողութիւնն է, որ մեր պատմիչները շփոթել են Կ. Պօլսի մեծ ժողովի հետ, և այս ժամանակ Վաղէս կայսեր հետ ունեցած որև բանակցութիւն հիմք է ծառայել նորա պատգամաւորութեան մասին պատմուած երկար զրոյցներին: Բայց որովհետև Արշակը 367-ին գերի է տարուել, այդպիսի դէպք կարող էր տեղի ունեցած լինել միայն սորա որդի Պապի օրով:

Չնայած որ Արշակի թագաւորութեան ժամանակ ընկնում են միայն Ս. Ներսէսի կաթուղիկոսութեան երեք առաջին տարիները, Փաւստոս տասնեակ տարիների պատմութիւն է տեղաւորել այդ շրջանում: Դորա պատճառն այն է երևի, որ Արշակի արկածալից թագաւորութիւնը ժողովրդական վէպերի նիւթ դարձաւ յետոյ: Իսկ եկեղեցական հեղինակները այդ վէպերից զանազան միջնադէպեր վերցրել կապել են իրենց առանձնապէս սիրելի ժամանակակից մեծ մարդու անուան հետ: Այդ միջնադէպերից աւելի մօտ է ճշմարտութեան և խիստ բնորոշ Հայր մարդպետի Աշտիշատում Ս. Ներսէսին այցելելու պատմութիւնը, ուր նա չար նախանձ է ցոյց տալիս դէպի հայրապետի շրջապատող ճոխութիւնը և յետոյ արժանի պատիժը կրում: Հետաքրքրական է այստեղ այն արհամարհական հայացքը, որ ժամանակի իշխանները ունէին հոգևորականութեան վրայ, և կաթուղիկոսական կալուածների յիշատակութիւնը, որից երևում է, թէ ինչպիսի մեծ նիւթական միջոցներ ունէին եկեղեցական իշխանաւորները իրենց տրամադրութեան ներքոյ. ամբողջ գաւառներ՝ Այրարատ, Դարանաղի, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփ-

և այն համարուում էին միայն կաթուղիկոսական կալուած-ներ, հարկաւ այն մտքով, որ նորանից առաջ հասոյթն-երն ստացուում և կամ կաթուղիկոսարանը նոցա մէջ էր դարձեալ հողեր և գիւղեր ունէր երբեմն սեպհականութիւն։ Բուն վիպական նիւթ է և հաւանականօրէն արհեստակ-կերպով Ս. Ներսէսի կեանքի հետ կապուած Գնէլի պատ-մամբ և նորա կին Փառանձեմին Արշակ կնութեան առնե-լու պատմութիւնը։ Քանի որ Պապը Փառանձեմի որդի է, իսկ նա արդէն հասակն առած կտրիճ մարդ էր, երբ Ներսէսը վախճանուեցաւ, նորա մայրը չէր կարող Արշակի հետ ամուսնացած լինել Ներսէսի կաթուղիկոսութեան օրով, որով նա ամենավաղը 365 թուին ծնուած և 37[illegible] թուին վախճանած պիտի լինէր։ Հաւանականն այն է, որ Արշակ սկզբում այօրինի կենակցութեան մէջ էր Փառան-ձեմի հետ և Պապի ծնուելուց յետոյ էլ այդպէս մնաց մինչև որ այդ փառասէր կինը թագուհի լինելու ցանկու-թեամբ պարհուրելի միջոցի դիմեց և թունաւորեց Արշա-կի հարազատ կնոջ՝ Ողոմպիա թագուհուն, որ գլխաւոր պատճառը եղաւ երևի Արշակի և Ս. Ներսէսի մէջ ծագած գժտութեան և դորանից յետոյ էր, որ վերջինս հեռացաւ արքունիքից, բայց Փաւստոսի մինչև Արշակի մահը քաշուած կեանք վարեց։ Նորա այս անգամուայ միջամտութիւն Արշակի ընտանեկան գործերում պատճառ է եղել երևի նորա անունը խառնելու Փառանձեմի ամբողջ վիպական պատմութեան մէջ։ Բոլորովին ձգելու համար Ս. Ներսէ-սին հայրապետութիւնից, Արշակը նորա փոխարէն կամե-նում է ձեռնադրել տալ Չունակ անունով մէկին, բայց եպիսկոպոսները յանձն չեն առնում, բացի Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսներից, որոնցից և նա եպիսկոպոսա-կան ձեռնադրութիւն է ընդունում, բայց նորա իշխանու-թիւնը Փաւստոսի ասելով մնում է սահմանափակ, որով-հետև մեծամասնութիւնը հաւատարիմ էր Ս. Ներսէսի։ Սորա կողմնակիցների գլուխն էր երևի Խադ՝ Բագրևանդ-և Արշարունեաց եպիսկոպոսը, որին Փաւստոս տեղապահ է անուանում հայրապետի բացակայութիւններին ժամա-նակ և մեծ գովասանքով է խօսում նորա սրբութեան Արշակի թագաւորը ցոյց տուած համարձակութեան մասին

-ցէ իրօք Ներսէսի կողմնակիցները նորան ճանաչում
ի իբրև տեղապահ թէ այս ժամանակամիջոցում և թէ
շակի մահից յետոյ, երբ Ս. Ներսէս հաւանականաբար
յար ժամանակ բացակայ մնաց աթոռից: Ձոնակը վերջը
եղաւ յայտնի չէ:

Ս. Ներսէսի և Արշակի գժտութեան առթիւ կարող
եղած լինել նաև այն հանգամանքը, որ Արշակ իւր
դաւորութեան վերջին տարիներում Պարսից կողմն է
կւում: Յուլիանոս կայսրը Պարսից դէմ վարած պատե-
զմում կոպտութեամբ և անարգանքով էր վերաբերուել
պի Արշակ, ուստի սպասած օգնութիւնը նորանից չէր
ացել և սպառնացել էր պատերազմից յետոյ պատժել
ան. բայց սպանուեց պատերազմում և նորա յաջորդը՝
ւիանոս 363-ին պարսիկների հետ դաշն կապելով յօժա-
-եց ձեռք քաշել Հայաստանից: Այդ ժամանակուանից
լեր Արշակ աշխատում էր երևի հաճոյանալ Պարսից
սգաւորին, և դորա հետևանքն է Փաւստոսի երկու
գամ յիշելը, թէ նա բարեկամութեան դաշն է կապել
պուհի հետ, մինչև իսկ յունաց դէմ պատերազմի ելել:
մենայն դէպս Արշակի երկդիմի դիրքը և կայսեր օգնու-
ւնից զրկուելը շատ ծանր պիտի նստէր նորա թագաւո-
-թեան: Բարեկամական յարաբերութիւնները Պարսից
ո երկարատև լինել չէին կարող, սոքա պիտի աշխատէին
3-ի դաշնադրութիւնից յետոյ անպատճառ տիրել Հա-
ստանին. և եթէ սկզբում յաջող էին Արշակի պատե-
զմները Պարսից դէմ, որ աներևակայելի չափազանցու-
ւններով ճոխացրած պատմում է Փաւստոս, դժբախտ
խճանը անխուսափելի էր այնուամենայնիւ: Բայց այն,
պատերազմի մէջ կռուող ույժերն անհաւասար էին՝ Շա-
ւհի համար դիւրին էր Հայոց նախարարներին Արշակի
մ գրգռել և նորա զօրութիւնը զանազան միջոցներով
ոտել: Յանուանէ յիշւում են Վահան Մամիկոնեան,
Տրուժան Արծրունի և գրեթէ բոլոր սահմանապահ իշ-
նները իբրև ապստամբ Արշակից և Պարսից թագաւո-
նորա դէմ դրդող: Նախարարներին թագաւորից հե-
ցնելու մի պատճառ համարում են մեր պատմիչները,
ակաւանի շինութիւնը, որն արագ կերպով բնակեցնե-

լու և մեծացնելու համար Արշակ տրված էր կացու-
այնտեղ ժողովուրդներին իրենց նախկին յանցանքնե-
պարտքի և զատերի պատասխանատուութիւնից և այդ-
տով մեծ անկարգութիւններ և դժգոհութիւններ առա-
ջբերել ժողովրդի մէջ։ Աւելի ճիշտն այն է թերևս, որ Ա-
շակ ձգտում էր իր երկրում գահն ամրացնել և Հայ
թագաւորի թուլութեան և հարևան զօրեղ պետութիւնն-
երի ձեռքին խաղալիք լինելու գլխաւոր պատճառը համար-
լով իր երկրի բազմաթիւ կիսանկախ նախարարութիւ-
ների մէջ բաժանուած լինելը, աշխատում էր մի զօ-
կենդրոնական իշխանութիւն ստեղծել. բայց հայ նախ-
րարները միայն իրենց անձնական շահերի տեսակէտից ընե-
և կարճատեսութեամբ ինչպէս սովորական է այսպի-
դէպքերում, պատրաստ էին ամենաչնչին հաշիւներով ի-
միմեանց դէմ ելնելու և թէ թագաւորին դաւաճանել-
Եւ երբ պատմիչը Արշակին դատապարտում է Կամսար-
կանների կոտորելուն և ուրիշ նախարարների ատա-
թեան համար, իսկ նրա պապ Խոսրովին անմեղադրելի
կացուցանում, որ Մանաւազեանց, Որդունեաց, Բզնու-
նեաց նախարարութիւնները բնաջինջ էր անել տուել, ա-
շուշտ արդարութեան զգացումը չի խօսում նրա մէ-
Երկու թագաւորներն էլ երևի նոյն քաղաքականութիւ-
էին հետևել, բայց Արշակ թէպէտ աւելի մեծ ձիրքե-
օժտուած, դժբախտ օրերի հանդիպեց և չկարողացաւ ի-
հայրերի քաղաքականութիւնը գլուխ հանել։ Քաղաքակ-
այն պայմանների մէջ, որ նա էր գտնւում, զարմանա-
չէ, եթէ ի վերջոյ իրեն բոլորովին առանձնացած և լ-
քուած տեսաւ և տապալուած եղաւ Շապուհին անձնա-
տուր լինել 367 թուին, որի կողմից պատուով ընդու-
նուելուց յետոյ, Անյուշ բերդն աքսորուեցաւ։ Ըստ Փ-
ւստոսի Ներսէս Մեծ աշխատում էր այս անգամ
համաձայնեցնել նախարարներին, որ իրանց թագաւոր-
պաշտպանեն և օտարի ձեռքը չտան երկիրը, բայց չէ
ջողում։

¹ Գ. Ս. **Ներսէսի կաթուղիկոսութիւնը Արշակի ժամ-**
մանը. Արշակի գերութիւնից յետոյ Հայաստա-

տում մեծամեծ աղէտներ են տեղի ունենում։ Փառանձեմ Թագուհին Պապ արքայազնւոյ հետ Արտագերս ամուրը ամրոցն է պաշարւում և երկար ժամանակ արիաբար պաշտպանւում, յետոյ թագաժառանգին ուղարկում է, որ Յունաց կողմից օգնութիւն գտնէ և սպասում է։ Այդ ժամանակ ստոր մի պատմիչք անելով Շապուհի կողմից Հայոց աշխարհի վերակացուներ էին կարգուած Արտաւան ու Գլաղակ, որոնք Թագուհու կողմն են անցնում և երբ Պապ օգնութիւն է գտնում Յունաց կողմից և Հայաստան մտնում, գնում նիզակակից են լինում նրան. բայց սա միչ ժամանակ յետոյ նոցա դէմ եղած ամբաստանութեանց հաւատալով, դաւադրութեամբ սպանել է տալիս նոցա։ Այս Արտաւանն ու Գլաղակը մի քանի գծերով հետաւոր նմանութիւն ունին Փաւստոսի յիշած Վարդան Մամիկոնեանի ու Դղակ մարդպետի հետ, և եթէ դոքա նոյն անձինք են եղել, երևում է դորանից, թէ որչափ չփոթ են մեր տեղեկութիւնները ժամանակի անցքերի մասին, չնայելով որ երկու արժանահաւատ պատմիչներ նկարագրում են այն։ Մինչ այս Փառանձեմ Թագուհին զուր տեղը իւր որդուց մօտ տասն և երեք ամիս օգնութիւն սպասելուց յետոյ ստիպուած է լինում անձնատուր լինել Պարսից, գերի է տարւում Պարսկաստան և անպատուած մահով սպանւում։ Հայաստանի գլխաւոր քաղաքները և շատ բերդեր քարուքանդ են լինում, դանձերը կողոպտւում, և բազմաթիւ ժողովուրդ, որի մէջ նաև հրէաներ, գերի տարւում։ Այդ գերիներից մէկն էր Արտաշատի Զուիթ երէցը, որ իւր հաւատը չուրանալուն համար նահատակւում է Շապուհի հրամանով։

Սակայն Վաղէս կայսրը վերջապէս Տերենտիոս զօրավարին Ադէ կոմսի առաջնորդութեամբ զօրք է տալիս Պապին օգնութեան, որ գնայ տիրէ իւր երկրին։ Ըստ Փաւստոսի Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնեան՝ Արշակի նշանաւոր զօրավար Վասակի որդին, հայ առաջապահ գնդով կանխում երկիրը մաքրում է Պարսիկներից, բերդերը գրաւում, Պարսից շինած կռատուները կործանում, այնպէս որ Պապ անարգել գալիս է իւր գահն վերայ հաստատւում։ Այնուհետև Հայոց հետ ունեցած եր

նշանաւոր ճակատամարտերի մէջ եւ Մուշեղ մեծամե քաջութիւններ է անում՝ պարսիկներին առաջացած լինում բոլորովին ազատ թողնել Հայաստանը։ Պարս պատմութիւնից էլ յայտնի է, որ 370 թուին Պարս թագաւորը իւր զօրքը յետ է կանչել Հայաստանից․ ա լինում է անշուշտ Փաւստոսի յիշած պատերազմներ և ճակատամարտից յետոյ։

Պապ արդէն իւր երկրում ոտ դրած օրից հետամուտ էր եղել Ս. Ներսէսին գտնելու և դիմելով նրան խնդր էր՝ հայր և հովիւ ալեւս լինել դարձեալ ջլատուած հօտի և նա ամէն կերպ գործակից էր երկրի մէջ կարգ ու խա ղաղութիւն վերականգնելու ։ Իսկ Ձիրաւի փառաւոր ճա կատամարտի միջոցին նա Մովսէս մարգարէի նման Նպա լերան վերայ բազուկները տարածած ըստ պատմչի աղօ թում էր և այսպէս իւր քաջալերութիւններով գլխ ւոր օժանդակողը դարձաւ յաղթութեան։ Սակայն նոր համաձայնութիւնը Պապի հետ երկար չի տեւում։ Փաւ ստոս ամենազզուելի գոյներով է նկարագրում Պապ վարած անբարոյական կեանքը, բայց այդ բոլորովին հա մաձայն չէ ժամանակակից Ամիանոս պատմչի տուա ածելի հաւատալի նկարագրին, ուր Պապը իւր հօր ա ղու ոչ որդի. ժառանգ է ներկայանում և տաղանդաւոր իշխան, որ կարճ ժամանակամիջոցում կա րողացաւ քայքայուած պետութիւնը ոտքի կանգնեցնե Վստահելի չէ նաև Փաւստոսի մեղադրանքը, թէ Ս. Նե սիսի մահուան պատճառը Պապն է եղել, որը չէ կար ողալով տանել նրա յանդիմանութիւնները և նենգութեա ընթրիքի կանչելով թունաւորում է նրան։ Ս. Ներսէ յանկարծական մահը նորա կենդանութեամբ և մանաւան մահից յետոյ Պապի բռնած խստորինակ ընթացքը, յառա են բերել այդ կասկածը հոգեւորականութեան մէջ։ Եւ նա մեծ հանդիսով թաղւում է ժառանգական Թիլն աւա նում՝ ինքը Պապ, ասած է, մասնակցում էր հանդէսի և ամեն յարգանք ցոյց տալիս։ Հարկ չկայ ընդունելու որ վերջինս իւր չարագործութիւնը ծածկելու համար է այսպէս վարւում։

**Ե. Պապի ընթացքը Ս. Ներսէսի մահից յետոյ, նորան աջորդող կաթողիկոսները։**—*Հայրապետի մահից յետոյ անմիջապէս Պապ ձեռնարկեց յիրաւի յեղաշրջել նորա հաստատած կարգերը։ Նոր կաթուղիկոս ընտրւում է Աղբիանոսի տնից Յուսիկ Բ., որին կրկին Խորենացին և իւր ժառանգները չեն յիշում, և որովհետև նա այլ ևս Կեսարիա չէ ուղարկւում ձեռնադրուելու, Փաւստոսի պատմելով իբրև թէ Կեսարիոյ մետրոպօլիտը, որ այն ժամանակ Ս. Բարսեղն էր, զայրանում է, ժողով է գումարում Կեսարիայում և անվաւեր ճանաչում Յուսիկի կաթուղիկոսութիւնը, արգելում Հայոց կաթուղիկոսներին եպիսկոպոս ձեռնադրել, հարկադրում այնպիսով, որ Հայոց եկեղեցու համար պէտք եղած եպիսկոպոսները գան ու Կեսարիայում ձեռնադրութիւն ընդունեն։ Բայց զարմանալին այն է, ինչպէս ակնարկեցինք, որ ինքը Ս. Բարսեղ այսպիսի մի կարևոր կարգադրութեան մասին ոչ մի յիշատակութիւն չի թողել իւր գրուածների մէջ։ Թող, որ եթէ լինէր իսկ այդպիսի կարգադրութիւն, Պապի նման մի թագաւոր և Հայոց եկեղեցու նման մի ինքնուրոյն հաստատութիւն ո՛չ մի դէպքում անկասկած չէին համակերպի նորան, և մենք ոչ Փաւստոսի և ոչ յետագայ շըրջանի՝ Ս. Ներսէսի ժառանգ Մեծ Սահակի պատմութեան մէջ ոչ մի պատմական հետք չենք գտնում, որ այդպիսի մի կարգադրութիւն երբ և իցէ գործադրուած լինէր։ Բայց Ս. Բարսեղի նամակների մէջ յիշւում է մի ուրիշ վէճ, որ տեղի է ունեցել ինչ որ Փաւստոս եպիսկոպոսի ձեռնադրութեան պատճառով։ Սա Պապի յանձնարարականով Ս. Բարսեղի մօտ էր գնացել ձեռնադրուելու, բայց նա յանձն չէ առնում ինչ ինչ մութ պատճառներով նորան ձեռնադրել, ուստի Փաւստոս գնում ձեռնադրւում է Տիանայի եպիսկոպոսից, և դորանով Ս. Բարսեղի անպօր դժգոհութիւնը յառաջ բերում։ Ամենայն հաւանականութեամբ այստեղ խօսքը Յունաց սահմաններում գտնուած մի թեմի մասին է, որ ենթարկուած է եղել Կեսարիայի մետրոպօլտի իրաւասութեան, բայց այնքան անորոշ կերպով, որ հարևան վիճակի մետրոպօլիտը կարող էր իւր սահմանի մէջ համարել. իսկ Պապ նորա դէ-*

մել էր այն պատճառով, որ այդ թեմը Մեծ Հայքի սա
մաններից դուրս էր։ Դուցէ և այս դէպքը հիմք է ծառա
յել այդ տարօրինակ աւանդութեան, թէ Ս. Ներսէ
յետոյ բոլոր հայ եպիսկոպոսները Կեսարիայում են ձե
նադրութիւն ընդունել։ Յամենայն դէպս այս և նմ
պատմութիւնները որոնցով Փաւստոս աշխատում է սե
կապ ցոյց տալ Հայոց հայրապետութեան և Կեսար
աթոռի մէջ, ակնյայտնի արգիւնք են ինչ որ միտումնա
ձգտումների և նոցա բացատրութիւնը պէտք որո
աւելի այն աւանդնայատուկ պայմանների մէջ, որոնք յ
ռաջ եկան մեր եկեղեցում Ս. Սահակից յետոյ Ե. դա
կէսերին, Փաւստոսի գրքի խմբագրութեան ժամանակ։

Յուսիկից յետոյ նոյն կարգով յաջորդում են ի
երեք կաթուղիկոսներ Զաւէն, Շահակ և Ասպուրակ
հաւանականաբար երեքն էլ Աղբիանոսի տնից. Թէպ
Շահակը Կորճեայ է անուանւում գուցէ նորա համար,
նախ քան կաթուղիկոսութիւնը Կորճէից եպիսկոպոս
եղել։ Փաւստոսը բացառաբար յիշում է սոցա կաթուղ
կոսութեան տարիները։ Զաւէնի համար 3, իսկ Շահ
համար երկու տարի, և որովհետև Ասպուրակէսի համ
էլ ասում է թէ իշխանութիւն էր վարում Խադրոնի օր
ուստի կաթուղիկոս եղած պիտի լինի առնուազն մի
90 թիւը։ Այդ շրջանը եկեղեցու համար Ներսէսի կաթ
ղիկոսութեան հետ համեմատելով Փաւստոս նկարագր
է իբրև յետադիմութեան շրջան։ Թէպէտ վերջին ժամ
նակներս մեր պատմութեամբ հետաքրքրուող Եւրոպ
գիտունները Պապի առաջին իսկ քայլը, Յուսիկ երկրո
կաթուղիկոս նստելն առանց Կեսարիա գնալու, համ
րում են դարագլուխ մեր եկեղեցու պատմութեան հ
մար և սկիզբ մեր եկեղեցական ինքնուրոյնութեան, բ
այդպէս կլինէր, եթէ իրօք ապացուցուէր, որ մինչև ա
ժամանակ մեր եկեղեցին ենթարկուած էր Կեսարիայ աթ
ռին. մինչդեռ պիտի կրկնենք, ոչ Փաւստոսն է այդ ասօ
և ոչ մեր ազգային կամ արտաքին պատմութեան ս
որ և է արժէքաւոր փաստ կարելի է գտնել այդ ենթ
դրութեան վերայ պնդելու համար։ Ստոյգն այն է միայ

որ Պապ Ս. Ներսէսի մահից յետոյ աշխատել է ըստ երեւոյթին կտրել ամէն յարաբերութիւն յոյների հետ, և իւր ժողովրդին ազատել յունական եկեղեցական այնպիսի ազդեցութիւններից, որ մեղկացնող և օտարացնող էր համարւում, փոխարէնը ոյժ տալ ազգային ոգուն և ազգային սովորութիւններին։ Ինչպէս յիշեցինք նա աշխատում է Ներսէսի հաստատած բարեկարգութիւնները վերացնել, կանայքերն աւերել, վանականներին ու կոյսերին ցրուել, աղքատանոցների հաստատութիւնները քանդել է տալիս, հոգևորականութեան ոյժը ջլատելու համար փակում է յորդ եկամուտների աղբիւրը, պտուղ ու տասանորդ տալը արգելում է, Տրդատի նշանակած 7 մաս հողից 5-ը խլում է և միայն 2-ը թողնում. վերականգնում է մի քանի հեթանոսական սովորութիւններ, ինչպէս մեռելների վրայ լաց անելը և այլն. Հաւանականաբար Նորա մահից յետոյ պայքարը հոգևորականութեան դէմ չի շարունակւում այլ ևս, բայց Փաւստոսի վկայութեամբ, Զաւէնն ու իւր յաջորդները աշխարհական հակումն ունեցող անձինք էին, մինչև իսկ հոգևորական տարազի ձևը փոխել կարճ հագուստներ էին հագնում, երևի դարձեալ Ս. Ներսէսի մտցրած յունական կրօնաւորական սքեմի փոխարէն վերանորոգելով նոյն հայերի մէջ եղած, գուցէ և հեթանոս հոգևորականներից մնացած տարազը։ Այդտեղից գոնէ առաջինը իւր կենցաղավարութեամբ և հոգևորականին անարժան դիրք էր բռնել։ Իսկ այն ամէն տարօրինակութիւնները, որ Փաւստոս պատմում է Փառէն կաթողիկոսի որդի Յովհաննէս եպիսկոպոսի, իբրև մի պալատական խեղկատակի և իւր կոչումն ու եպիսկոպոսական աստիճանը անտանելի կերպով ի չար գործ դնող հոգևորականի մասին՝ ցոյց է տալիս, թէ ինչպիսի ծանր զեղծումներ էին տեղի ունենում այս խառն ժամանակներում։ Սակայն միևնոյն ժամանակ Գինթ վանահօր ու նորա հետևողների առաքինութեանց մասին պատմածները ապացոյց են, որ Ներսէսի բարեպաշտութեան հետքերն էլ բոլորովին չջնջուեցան և մի աւելի բարեբաստիկ ժամանակ պէտք էր, որ նորա վերակենդանանային և ընդարձակութիւն ստանային։

Մինչ այս Պապը սպանւում է յոյների դաւաճանութեամբ 374-ին։ Նորանից յետոյ առժամանակ թագաւոր է լինում Վարազդատ անունով մի Արշակունի, որին Մանուէլ Մամիկոնեանը հալածում է Հայաստանից, հաւանականաբար 376-ին, երբ ըստ օտար վկայութեանց, յոյները իրենց զօրքերը բոլորովին հեռացնում են Հայաստանից։ Ապա նա իշխում է Հայաստանի վրայ ըստ Փաւստոսի 7 տարի, որին համաձայն են նաև օտարազգի վկայութիւնները։ Նա հանդիսանում է խնամակալ Պապի Արշակ ու Վաղարշակ որդւոց, որոնցից առաջինին ամուսնացնում է իւր դստեր հետ և Պարսից օգնութեամբ թագադնում նորա գլուխը, պատուով պահում Պապի կին Զարմանդուխտ թագուհուն, երբ պարսից կողմից դաւադրութիւն է լինում իւր դէմ, նոցա զօրքերին էլ դուրս քշում Հայաստանից և իւր զօրեղ ու խոհեմ կառավարութեամբ այնպիսի անկախութիւն և անդորրութիւն տալիս երկրին, որպիսին վաղուց տեսնուած չէր։ Մանուէլ պէտք է վախճանուած լինի 383 թուին, որից յետոյ Արշակը անկախ թագաւոր եղած մինչև 390 թիւը (Վաղարշակի վախճանի մասին ոչինչ յայտնի չէ), երբ Պարսից ու Յունաց մէջ համաձայնութիւն է յառաջ գալիս Հայոց երկիրը միմեանց մէջ բաժանելու։ Արշակն անցնում է Յունաց կողմը, իսկ երկրի մեծագոյն մասը մնում է Պարսից ձեռքում, որոնք առանձին թագաւոր են նշանակում Խոսրով անունով մի Արշակունի արքայազնի։



## ՇՐՋԱՆ Գ.

## Հայոց եկեղեցու բարգաւաճումը գրերի գիւտի պատճառով եւ նահատակութիւնը կրօնական պատերազմների մէջ:

### ԳԼՈՒԽ Է.

### Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ. նոցա վերանորոգչական գործունէութիւնն ու դպրոցը.

Ա. Հայոց նշանագրերի գիւտը.—*Հայերէն գիրը հնարողի՝ Ս. Մեսրոպի, կամ (որ աւելի հին ու վաւերական անունն է) Ս. Մաշթոցի վարուց պատմիչը Կորիւն, իւր գրքի վերջում մի քանի կարևոր թուեր է ընծայում, որոնք որոշում են Ս. Մեսրոպի գործունէութեան կարևոր կէտերը և միջոց են տալիս ժամանակակից դէպքերը մօտաւոր ճշտութեամբ դասաւորելու: Դժբախտաբար Ս. Սահակի կաթողիկոսութեան տարին անյայտ է մնում: Սակայն քանի որ, ինչպէս տեսանք, Ասպուրակէս իշխանութիւն էր վարում դեռ Խոսրովի օրով, ս. Սահակ, որ նորա անմիջական յաջորդն էր, պէտք է իւր հայրերի աթոռը բարձրացրած լինի 390 թուից յետոյ և հաւանականաբար ոչ ուշ քան 395 թուականը: Իսկ այս շրջանի ամենակարևոր դէպքը՝ գրերի գիւտը, ըստ Կորիւնի տեղի է ունեցել Յազկերտի թագաւորութեան ը. տարին, և ս. Մեսրոպի վախճանից 35 տարի առաջ, ուրեմն միջին հաշուով 405 թ.-ին:*

*Թէ Կորիւնի և թէ Ղազար Փարպեցու պատմութեան մէջ ս. Սահակն առաջին անգամ հանդէս է գալիս գրերի գիւտի առթիւ: Ամենից վստահելի և նախնական պատմիչն է Կորիւն, որ այսպէս է առաջ բերում գրերի գիւտի պատմութիւնը. ս. Մաշթոց «ի Տարօնական գաւառէ ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ», մանուկ հասակից յունարէն լեզու էր սովոր*

կրթութիւն ստացել, ապա արքունական դիւանում պաշ-
տօնեայ եղել (ըստ Փարպեցու՝ Հայոց Խոսրով թագաւո-
րօրով)։ Յետոյ նա թողնում է պաշտօնը, կրօնաւորակ-
կեանք յանձն առնում և ուրիշ ընկերներ ժողովելո-
անցնում է Գողթան գաւառը քարոզելու։ Կորիւնի
փոքր ինչ մութ յիշատակութեան համաձայն այդ դէ-
է եղած լինի 395 թ.-ին։

Գողթն գաւառում հեթանոսական մնացորդներ շա-
կային. ս. Մաշթոց Շաբիթ իշխանի օգնութեամբ յաջ-
ղում է աւետարանի քարոզութիւնը հաստատուն հ-
մունքների վրայ դնել, հեթանոսական պաշտամունքը ա-
մատախիլ անել և այդ պաշտամունքին հաւատարիմ մն-
ցած քուրմերին հալածել դէպի Մարաց կողմերը։ Ա-
քարոզութեան միջոցին նա առաջին անգամ զգում
հայերէն գրերի պակասութեան մեծ կարիքը, գալի-
Սահակ կաթողիկոսի մօտ մի ելք գտնելու, որ նոյնպէ-
իւր սրտին շատ մօտ է ընդունում այդ խնդիրը, և դի-
մում են Վռամշապուհ թագաւորի օգնութեան։ Վեր-
ջինս լսած լինելով, որ Ասորի Դանիէլ եպիսկոպոսի մ-
Հայոց նշանագրեր կան, Վահրիճ անուանով մէկին արք-
յական հրովարտակով ուղարկում է, որ Հաբէլ երէ-
միջնորդութեամբ այդ գրերը առնում նորանից բերում
(403 թ.-ին)։

Ս. Մաշթոց այնուհետև մանուկներ է ժողովա-
մօտ երկու տարի աշխատում է այդ գրերով վարժեցն-
և հայերէն դպրութեան սկիզբը դնել, բայց հետզհետէ հ-
մոզւում է, որ նոքա բաւական չեն հայերէն լեզ-
նրբութիւններն արտայայտելու համար։ Պատճառն ս-
էր երևի, որ այդ գրերը փոխ էին առած սեմական ա-
գերից, որոնք ձայնաւորներ չեն ճանաչում և միայն
բաղաձայն տառ. գործածելով զուրկ են մեր մի շա-
նմանահնչիւն տառերից։ Ապա ս. Մաշթոց հետը մի քա-
աշակերտ առնելով՝ Միջագետք է գնում, նախ Եդես-
և յետոյ Ամիդ քաղաքները՝ գիտուն մարդկանցից ի
պահանջուած խնդրի համար խորհուրդ հարցնելու. վեր-
պատրաստւում է Սամոսատ գնալու։ Այդ ժամանա-

-տըա հանապազորդ աղօթքները կատարումն են ընդու-նում և մի երկնատուր հրաշքով ըմբռնում է, թէ ինչպէս պէտք լինին հայերէն գրերը: Ապա Սամոսատ է գնում և Հռոփանոս անունով յունարէն գրութեան վարժ մի անձի օգնութեամբ ձևակերպում է հայերէն գրերը և անմի-ջապէս սկսում է փորձի համար գործ գնել՝ իւր Յովհան Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի աշակերտների օգնու-թեամբ, Աստուածաշունչի թարգմանութեան վերայ՝ սկսելով Առակաց գրքից, որի առաջին բառերը՝ «Ճանա-չել զիմաստութիւն և զխրատ», գեղեցիկ կերպով ընդգր-կում են գրի գործածութեան նպատակը: Փորձը յաջո-ղութեամբ է պսակւում: Յետոյ դառնում է Ս. Սահակի և թագաւորի մօտ, որոնց կողմից ընդունւում է մեծ հան-դիսով և ուրախութեամբ:

**Բ. Ս. Մեսրոպ—Մաշտոցի լուսաւորիչ գործունէութիւնը Հայաստանում եւ հարեւան երկրներում:**—Ըստ Փարպեցու Ս. Սահակ մեծապէս նպաստել է հայերէն այբուբենը կարգաւորելու «Ըստ անայլաթարութեան յունին», մեծ զգուշութեան տակ լինելով, հետոյ մանաւանդ ժամանա-կակից երաժշտական և հռետորական արուեստին և փի-լիսոփայութեան: Նոյն հովանաւորութեամբ և եռան-դուն մասնակցութեամբ երկրի ամեն կողմերում դպրոց-ներ են բաց անում, նաև իշխանական տներից շատ մա-նուկներ կրթում, որոնց թւում յիշւում են յա-նուանէ Մամիկոնեանք, և յատկապէս Աւարայրի հերոսը՝ Ս. Վարդան: Իսկ ս. Մաշթոց աւետարանական առաքե-լութեան հետ միացնելով գիր և ուսում տարածելու գործը՝ առժամանակ գործում է Մարաց խաւարուած կողմերում. ապա իւր Տիրայր Խորձենացի և Մուշէ Տարօ-նացի աշակերտների հետ գնում է քարոզելու «ի սփիւռս հեթանոսաց» և մտնում է նախ իւր առաջին առաքելու-թեան վայրը Գողթն, ուր ինչպէս Շաբաթ իշխանը, այն-պէս և նորա որդի Գետը մեծապէս նպաստում են նո-րան իւր առաքելական գործունէութիւնը առաջ տանելու և նոր ուսման համար դպրոցներ հաստատելու: Այնտեղից Սիւնեաց երկիրն է անցնում, ուր կրկին տեղւոյն Վաղինակ և ապա Վասակ իշխանների օգնութեամբ շատ աշակերտա-

ւոր գործունէութիւն է ցոյց տալիս, Անտոնիոս անուն մէկին վերահսկող է կարգում և անցնում Վրաստա Առանձին ուշադրութեան արժանի է, որ Կորիւն պ առթիւ մեծ գովասանքով է խօսում տարիներ յետ Վարդանանց պատերազմներում այնչափ տխուր հայ ատուցած Վասակ մարզպանի մասին՝ նորան «քաջ», «եր հրդական և հանճարեղ» անուանելով:

Վրաց համար ևս Ս. Մաշթոց նշանագրեր է յօրինու և ներկայանալով Բակուր թագաւորին և Մովսէս եպի կոպոսին, առաջարկում է գործ դնել այդ նշանագրեր Ջաղայ անունով մի ուսումնական անձի ձեռքով վրաց րէն թարգմանութիւններ է անել տալիս և դպրոցն բանում. ապա մի շարք աշակերտներ թողնելով, որո մէջ նշանաւոր էին նոյն ինքն Կորիւն՝ նորա կենսագր թեան պատմիչը, և Սամուէլ եպիսկոպոսը, վերադա նում է կաթողիկոսի մօտ:

Այստեղ նորա հետ մտածում են հայերէն դպր թիւն տարածել նաև յունաց բաժնի հայերի մէջ: Ս. Մա թոց անցնում է Յունաց կողմը, ուր կառավարիչ էր Ան տոլիոս անունով մի իշխան: Սա Թէոդոս Բ. կայս իմաց է տալիս Ս. Մաշթոցի ձեռնարկութեան մասին, ի նշան իւր հաճութեան շնորհում է նորան Ակում կոչումը: Ս. Մաշթոց այնուհետև Մելիտինէ է գնում, աշակերտներ է թողնում, երևի յունարէն դպրութ ուսանելու համար, որոնց գլխաւորն էր յայտնի Ղև դը, և հետոն ունենալով Դերջանի Գինթ եպիսկոպո անցնում գնում է Կ. Պօլիս, ներկայանում անձամբ կ սրին և Ատտիկոս պատրիարքին, պատիւ ու մեծար ընդունում. ապա թղթեր առնելով, որ իրեն անարգ թոյլ տրուի հայերի մէջ դպրոցներ բանալու, նոր գր գործ դնելու և հեթանոսութեան մնացորդներն արմ տախիլ անելու, վերադառնում է Հայաստան: Յուն բաժնում եղած ժամանակ նա գործ է ունենում «Բո բորիանոս» կոչուած աղանդի հետ, որ Խորենացին «Բ բորիտոն» է անուանում, և դժուար է որոշել, թէ յայտնի քրիստոնէական աղանդներից որի մասին է խօս

-խտոն անունով աղանդաւորներ յայտնի են ընդհ

ուր եկեղեցու Դ. Ե. դարու պատմութիւնից, որոնց ծագումն ու բնաւորութիւնը մութ են, և դժուար թէ նոցա մասին լինի Կորիւնի յիշատակութիւնը. այլ աւելի հաւանական է, որ նորա յիշած աղանդը սերտ առնչութիւն ունենայ այն մծղնէութեան հետ, որով, ինչպէս կը տեսնենք, ստիպուած էին զբաղուել արդէն Ս. Մաշթոցի անմիջական աշակերտները և, որ կարևոր դեր խաղաց մեր եկեղեցու պատմութեան մէջ։ Ս. Մաշթոց փորձում է նախ քարոզութեամբ այս աղանդաւորներին ճշմարիտ ճանապարհի վրայ բերել և երբ չի յաջողում, աքսորել ու հալածել է տալիս երկրից։

Այս ժամանակ նորա մօտ է գալիս Աղուանից երկրից Բենիամին անունով մէկը, որի օգնութեամբ նշանագրեր է յօրինում նաև Աղուանից համար. ապա իւր Ենովք և Դանան աշակերտներին Յունաց բաժնում թողնելով, ինքը գալիս է կրկին Վաղարշապատ։ Այստեղ արդէն Հայոց թագաւորն էր Արտաշէս, Վռամշապուհի որդին։ Ուրեմն 20 տարուց աւելի էր տևել, գրերի գիւտից յետոյ, Ս. Մաշթոցի վերոյիշեալ կրթական-Առաքելական գործունէութիւնը։ Նա անցնում է այնուհետև Աղուանք, Բենիամինի ձեռքով սկսած գործը շարունակելու. այնտեղ ևս դպրոցներ է բաց անում և Երեմիա եպիսկոպոսի միջոցաւ թարգմանութիւններ է անել տալիս. նման աշխատութիւն գործ է դնում Բաղասական կողմերում, Մուշեղ եպիսկոպոսի օժանդակութեամբ, և իւր աշակերտներից մի քանիսին՝ Յովնաթան անուն պալատական երէցի առաջնորդութեամբ թողնելով, անցնում է Գարդմանից ձորը. մեծարանք և օժանդակութիւն է գտնում Խուրս իշխանի կողմից և իւր գործնէութիւնն այստեղ ևս շարունակում։ Այցելում է ապա կրկին Վրաստան և, Տաշրաց Աշուշայ իշխանի հրաւէրով, նրա մօտ գալիս այնտեղ իւր առաքելական գործն առաջ տանում։ Յետոյ վերադառնում է Ս. Սահակի մօտ։

**Գ. Հայաստանի քաղաքական դրութիւնը Ս. Սահակի եւ Ս. Մաշթոցի օրով։**—Հայաստանի երկու մասի բաժանումը՝ 390 թ.-ին, պէտք է նորա քաղաքական անկախութեան

վախճանը և Հայոց պարթևական թագաւորութեան խ-
կական անկումը համարել: Արշակ թագաւորը Ցան-
բաժինը անցնելուց յետոյ հաւանականաբար մէջ մի ք-
ղաքական դեր չխաղաց այլ ևս ու անուամբ միայն թա-
գաւոր էր. գուցէ նոյն իսկ նորա կենդանութեամբ ա-
դէն յոյն կուսակալ կարգուեցաւ այստեղ և այդ բաժի-
կառավարուեցաւ այնուհետև միշտ կուսակալներով Բիւ-
կայսերութեան նահանգներից մէկը: Իսկ Պարսից բաժ-
նում հաստատուած Խոսրով թագաւորն ու իւր յաջորդ-
ները կուսակալից աւելի իշխանութիւն չունէին, Պարսի-
թագաւորի հլու հպատակներն էին, և միայն Վռամշ-
պուհ կարողացել է իւր խոհեմութեամբ հանգիստ ու պ-
տուաւոր իշխանութիւն վարել, իսկ գրերի գիւտի և տ-
րածման գործում իւր ցոյց տուած աջակցութեամբ մ-
պատմութեան մէջ կարևոր տեղ գրաւել:

Ցիրաւի Խորենացին ինչ որ պատմութիւններ է անում
էր Խոսրով ու Արշակ թագաւորների մէջ տեղի ունեցա-
թշնամական յարաբերութիւնների, պատերազմների, հա-
նախարարաց շարժումների մասին. մինչև իսկ Վռամշ-
պուհին թագաւոր եղած է ցոյց է տալիս երկու բաժի-
ների վերայ ևս, ու այդպիսով Հայաստանի քաղաքակ-
միութիւնը մի տևական վերականգնած. սակայն նոր-
պատմածները հնարաւոր բաներ չեն և պատմական հ-
մունքներից զուրկ լինելով՝ ամբողջապէս մտացածին պի-
համարուին: Նոյնը պէտք է ասել նաև նորա յետագ-
րով յերիւրած այն պատմութիւնների մասին, որոնց
նկարագրում է Ս. Սահակի միջամտութիւնը քաղաքակ-
գործերի մէջ: Այս դէպքում նա չի քաշւում մէջ պ-
տուաբեր դեր տալու այն Մեծ Սահակին, որին ուր-
անգամ ըստ արժանւոյն գովաբանելու համար խօսք
գտնում: Ս. Հայրապետը մէկ հանդէս է գալիս իւր փ-
սայ Համազասպին սպարապետ դարձնելու, մէկ իւր թ-
Վարդանի համար սպարապետութեան պատիւ ձեռք բ-
բելու նպատակով — և ամեն անգամ որ և է ընտանեկ-
հոգսով, խոր մտածմունքների մէջ առաջին տեղը տալ
իւր մերձաւորների շահը պաշտպանելուն: Անկասկած
[illegible] մէջ ընդունակ է եղել և ոչ կարելը է ունեցել այ-

…ջիսի դեր կատարելու. այլ այստեղ պարզ կերպով աչքի ընկնում Խորենացու պատմութեան գլխաւոր միտումը՝ ցոյց տալ, թէ ինչ Մամիկոնեանք մինչև Ե. դարի սկիզբները մի աննշան նախարարական տոհմ են եղել և միայն Ս. Սահակի շնորհիւ նախարարութեանց շարքում հինգերորդ տեղը ստացել ու սպարապետութեան իշխանութիւն ձեռք բերել, խլելով կարծես այդ իշխանութիւնը Բագրատունիներից. մինչդեռ ստոյգ պատմական իրողութիւնն այն է, որ Մամիկոնեանք ժառանգական սպարապետ էին արդէն Տրդատ Մեծի օրով և նոյնը մնացին նորա յաջորդների ժամանակ. որ ինչպէս Ե. Զ. և Է. դարերում, այնպէս և Գ. դարում նոքա առաջնակարգ դեր ունէին, հայրենիքի համար կռուող հերոսների մի ամենափառաւոր շարք են տուել, և օրինակ մի Մանուէլ Մամիկոնեան աւելի ընդարձակ և զօրեղ իշխանութիւն է գործ դրել, քան հայ-պարթև թագաւորներից շատերը: Ընդհակառակն Բագրատունիք պատմութեան ասպարիզի վերայ կարևոր դերերում երևում են Ե. դարի վերջերից սկսած միայն, Է. դարի սկզբից դառնում են Մամիկոնեանց զօրեղ մրցակիցները և հետզհետէ յաջողում դուրս մղել նոցա ասպարիզից՝ ոչ շատ պատուաւոր միջոցներով, որոնց մէջ աննշան տեղ չի բռնում անցեալ պատմութիւնը կեղծել տալը: Ս. Սահակի ժամանակակից դէպքերի համար միակ արժանահաւատ աղբիւրն է Կորիւն, որի պատմածներն զգուշութեամբ լրացնել կարելի է միայն Ղազար Փարպեցու և առաջին պատմութիւնից: Փարպեցին իւր պատմութիւնն սկսում է այնտեղ, ուր վերջացրել է Փաւստոս, և եկեղեցական խնդիրներում Կորիւնին հետևելով՝ բոլոր քաղաքականին աւելացնում է այնչափը, որչափ յայտնի էր մի սերունդ անցնելուց յետոյ, իւր ժամանակ. այսպիսով աւելորդ տեղ ու նիւթ չի թողնում այլ ևս Խորենացու և յետագայ պատմիչների համար:

Խոսրով թագաւորն բոլոր Փարպեցու հայ նախարարների բանսարկութեանց շնորհիւ գահից ձգուեցաւ և աքսոր ուղարկուեցաւ. այս նոյն նախարարների խնդրանօք Պարսից թագաւորը նորա տեղ թագաւոր հաստատեց նորա եղբայր Վռամշապուհին: Կորիւնի վկայութեանց

վերայ հիմնուելով՝ Վռամշապուհի թագաւորութիւ
պէտք է դնել 399 թ.-ին. ուրեմն Խոսրովի գահից զրկուի
ևս նոյն կամ նախորդ թուականին տեղի ունեցաւ հաւա
նականաբար։ Իսկ Վռամշապուհ վախճանած պէտք
լինի 414 կամ 415 թ.-ին. որովհետև նորա մահից յե
Խոսրով աքսորից վերադառնում և կրկին անգամ 8 ա
թագաւորելով Հայաստանում՝ վախճանում է. ապա Յա
կերտ Ա. 416 թ.-ին թագաւոր է նստեցնում իւր ո
Շապուհին։ Սա լսելով իւր հօր ծանր հիւանդութիւ
420 թ.-ին թողնում է Հայաստանի գահը և շտապ
Պարսկաստան հօրը յաջորդելու համար. բայց նոյնա
չհասած սպանւում է։ Դորանից յետոյ Պարսից բա
Հայաստանը երկու տարուայ չափ մնում է գրեթէ անի
խան և շատ խառնակ վիճակի մէջ. ինչպէս երևում է
հայերը օգտուելով այն հանգամանքից, որ Պարսկաստա-
նում միաժամանակ թէ ներքին կռիւներ էին յառաջ եկ
գահի համար և թէ արտաքին պատերազմ Յունաց գէ
մտածում էին Պարսից լուծը թօթափել և անկախութիւ
հաստատել, բայց նախարարների անհամաձայնութեա
պատճառով ոչինչ գլուխ չեկաւ, և սոքա երկիրը խաղ
ղացնելու համար Պարսից թագաւորին դիմեցին և թ
գաւոր խնդրեցին. Վռամ Դ. խոհեմութիւն համար
նոցա դարձեալ մի հայազգի թագաւոր տալ՝ յան
Վռամշապուհի որդի Արտաշէսի (422 թ.)։

Սակայն Արտաշէս փչացած վարքի տէր մի ապի
պատանի լինելով՝ շատ շուտ զզուեցրեց ամենքին
շուայտ կեանքովը։ Նախարարները Ս. Սահակին դիմե
և խնդրեցին իրենց հետ միաբանել Պարսից թագաւո
րողոքելու և Արտաշէսին Հայաստանից հեռացնելու
մար. բայց մեծ հայրապետը՝ ընդունելով հանդերձ,
նոցա ասածները մանուկ թագաւորի անարժան ընթա,
մասին շատ ճշմարիտ էին, հոգևոր իմաստութեան և խ
հակառակ էր գտնում իւր «մոլորեալ ոչխարին» ան
ւանների ձեռքը տալը և յորդորում էր մի ևս ժամանա
տանել նորա վատ արարքները և աշխատել ուղղ
թեան բերելու։ Նա անշուշտ նախատեսում էր,
ինչպիսի անդարձ կորուստ պիտի լինէր հայ թագաւո

*սրի ձեռք մատնելը և յօժարութեամբ պարսիկ իշխա-
ւոր իրենց գլխին նստեցնելով՝ Հայաստանի քաղաքա-
ւ ինքնուրոյնութեան վերջին ստուերն անգամ ան-
տացնելը. ուստի երբ տեսաւ, որ չի կարողանում
նախարարներին համոզել, բացարձակապէս հրաժարուեց
ւէ նոցա անխորհուրդ գործի մէջ մասնակցութիւն ու-
ալուց, և նոքա զայրացած՝ որոշեցին ինչպէս Արտա-
ին գահից, այնպէս և Ս. Սահակին հայրապետութիւնից
ել տալ: Երբ նախարարների բողոքը Պարսից թագա-
ին հասաւ՝ նա հրամայեց, որ ինչպէս Արտաշէս, այն-
ս և Ս. Սահակ արքունիք երթան, իրենց դէմ եղած
աստանութեանց պատասխանը տալու: Այստեղ ևս
ւք գործ դրուեցաւ Ս. Սահակին դրդելու, որ Արտա-
ի ամբաստանողների կողմն անցնի, և երբ անդրդուելի
ւց՝ հրաման ելաւ, որ կաթուղիկոսական իշխանութիւնից
ուած համարուի և կաթուղիկոսարանը յարքունիս գրա-
ւի: Իսկ Արտաշէսի գահընկէց լինելով՝ Արշակունեաց
գաւորութիւնը դադարեց բոլորովին 428. թ.-ին, Հայա-
անը դարձաւ Պարսից նահանգներից մէկը և նորա կա-
վարութեան համար այնուհետև պարսիկ մարզպաններ
արկուեցան:*

Դ. Ս. Սահակի դերը հայրապետական իշխանութիւնից ուելուց յետոյ: Միջանկեալ հակաթոռ կաթուղիկոսներ:

*ւարմանալի է, որ Կորիւն ոչինչ չպատմելով ժամանա-
կից քաղաքական անցքերի մասին և անուշադրութեան
նելով այնպիսի մի կարևոր հանգամանք, որպիսին էր
ոց թագաւորութեան դադարումը՝ նոյն իսկ ս. Սահա-
հայրապետական աթոռից զրկուելը չի յիշում: Այդ
ցատրւում է գլխաւորապէս նրանով, որ Կորիւն
ն նպատակ էր դրել ս. Մեսրոպի վարքը նկարագրել
տալիս էր այն միայն, ինչ որ իւր հայեացքով անմիջա-
ն կապ ունէր այդ նպատակի հետ. բայց պէտք է աւե-
յնել անշուշտ, որ Արշակունեաց անկումն այն նշա-
կութիւնը չունէր երևի ժամանակակիցների աչքում,
պիսին մենք ենք տալիս: Հայոց բուն քաղաքական դո-
թիւնը այս և յաջորդ դարերում ներկայացնում էր*

նախարարութիւններն իրենց ներքին կառավարութ
և իրենց այրուձիով, ոչ թէ կենդրոնական իշխանութ
որ միանգամ Պարսից հպատակութեան տակ լինելու
տոյ՝ շատ զգալի չէր այլևս այս կամ այն նահանգի հա
հայ կլինէր արդեօք երկրի ընդհանուր իշխանաւորը,
Պարսիկ. Թագաւո՞ր տիտղոսով, թէ հասարակ մարզպա
րիշ կերպ սկսան նայել հարկաւ այդ խնդրի վերայ յա
շրջաններում, երբ հայ ժողովրդեան հոգևոր միութ
հաստատուեցաւ և դորա հետ զօրանալով ընդհա
հայրենիքի գաղափարը՝ ամէնքի համար պարզուեց,
այդ գաղափարական միութիւնը պահպանելու համա
մեծ կարևորութիւն ունէր ամբողջ երկրի, կամ գոնէ
րա Պարսից բաժնում եղած նշանաւոր մասի՝ մի հա
կան իշխանութեան ներքոյ քաղաքականապէս միացա
նելը։ Սակայն նախախնամութեան անհաս տնօրէնութ
էր, որ առաջուստ իբրև պատմութեան քմահաճ հասա
խաղն երևացող այն տարօրինակ հանգամանքը, որ Հա
տանի քաղաքական միութիւնը Թագաւորութեան անկ
երկրորդ ամենածանր հարուածը ստացաւ նոյն ժամա
երբ ս. Սահակի և ս. Մաշթոցի բազմարդիւն գործուն
թեամբ նորա հոգևոր ու գաղափարական միութիւ
հաստատուում անխորտակելի հիմքերի վերայ։ Ինչ խօ
շատ ցանկալի պիտի լինէր, եթէ հոգևոր զարգացմա
պահպանուէր և զօրանար ընիկ քաղաքական իշխ
թիւնը երկրի կենտրոնում. բայց երբ վերջինիս բ
արդէն վճռուած էր՝ աւելի է գնահատելի դառնու
մեծ մարդոց աշխատութիւնը, որ ներքին զօրութեա
մար հոգալով՝ միջոց տուին մեր ազգին, ամենաանն
պայմանների մէջ անգամ իւր ինքնուրոյնութիւնը
պահելու։ Ուստի որոշ տեսակէտից արդար է Կորիւն
իւր վարդապետների գործն այնքան մեծ է երևու
աչքում, որ ժամանակի նոյն իսկ խոշոր քաղաքական
քերը դորա առաջ նսեմանում են և յիշատակու
չեն արժանանում։

Ս. Մաշթոցի և ս. Սահակի վերջին գործերը նա
պէս է պատմում, որ դժուար է որոշ սահման դնել 3
ից առաջ և յետոյ տեղի ունեցածների մէջ։ Այսպ

արգելում, թէ ե՞րբ վերադարձաւ նա Վրաց և Տաճկաց զօրքերից և արդեօք Ս. Սահակ նորա համար մեծ աշխատութիւն ցոյց տուաւ դորանից յետոյ, ինչպէս երևում է, ամանձին եռանդով առաջ տարուած թարգմանչական գործունէութեան մէջ, որ արդէն հայրապետական իշխանութիւնից զրկուած լինելով՝ ազատ միջոց ունէր ունէր: Մենք իմանում ենք, որ այդ ժամանակ երկու աչքի ընող աշակերտներ՝ Յովսէփ Պաղնացին և Եզնիկ Կողբացի, Եդեսիա ուղարկուեցան, որպէս զի ասորերէնից հայերէն թարգմանեն նշանաւոր եկեղեցական հայրերի գրուածներ. իսկ նոքա այդ յանձնարարութիւնը որոշ չափով կատարելուց յետոյ Յունաց կողմերն անցան և յունարէն լեզուին հմտանալով՝ դարձան թարգմանիչներ և այդ լեզուից: Նոքա Կոստանդնուպոլսում էին, երբ նրա մօտ են գալիս երկու ուրիշ աշակերտներ՝ Ղևոնդ ինքը Կորիւն, որոնք և նոյն ուղղութեամբ աշխատում մի առժամանակ և ապա բոլորը միասին վերադառնում են հայրենիք՝ իրենց հետ առած Ս. Գրքի ընտիր օրինակներ, Ս. հարց գրուածներ և ի միջի այլոց «Նիկիական և եփեսոսական» կանոններ: Վերջին յիշատակութիւնը ցոյց է տալիս, որ նոցա վերադարձը եղաւ 331 թ.-ից, ուրեմն և թագաւորութեան անկումից տարիներ յետոյ, ուստի և այդ թուականին է գումարուել Եփեսոսի Գ. եկեղեցական ժողովը: Յիրաւի այս հանգամանքները պատմելիս Կորիւն Ս. Սահակին այլ ևս «Կաթուղիկոս» կամ «Եպիսկոպոս» պատուանունը չի տալիս, բայց ինչպէս նրա նկարագրութիւնը, այնպէս և մեր ձեռքը հասած մի թանկագին թղթակցութիւն, որ եղել է Ս. Սահակի և Ս. Մաշթոցի և Եփեսոսի ժողովի երկու ներկայացուցիչ եպիսկոպոսների մէջ՝ պարզում են, որ իւր հաւատարիմներն ու քրիստոնեայ աշխարհը 428 թ.-ից յետոյ ևս շարունակում էին Ս. Սահակին համարել Հայոց իսկական հայրապետ և նա որոշ հովուապետական պարտականութիւններ կատարում էր հայ հօտի նկատմամբ:

Փարպեցու և հեղինակների պատմութիւնից յայտնի է, որ Պարսից արքունիքի առաջ Արտաշէսին և Ս. Սահակին մատնող նախարարների գործակիցն էր Սուրմ

*Արծկեցի մի երէց, և սորան հասաւ կաթուղիկոսական*
*իշխանութիւնը՝ Ս. Սահակի աթոռից զրկուելով։ Բայց*
*տով նորա աշակերտներից զզուած՝ նախարարները Գա*
*դուաը դիմեցին. Վռամ թագաւորը նոցա մօտ ուղա*
*Բրքիշոյ անունով մի ասորու։ Սորանից ձանձրացած՝ ի*
*րեցին փոխել և ուրիշին ուղարկել. Նա էլ ուղարկեց*
*ուրիշ ասորու՝ Շամուէլ անունով։ Բայց սա և իւր*
*խորդների ընթացքը շարունակեց, և այդ ժամանակ*
*խարարները զգացին, թէ որչափ մեծ տարբերութիւն*
*օտար վարձկանների և հարազատ անձնադիր մեծ հովու*
*պետի մէջ. զղջմամբ և աղաչանօք դիմեցին դարձնել*
*Սահակին և խնդրեցին, որ շարունակէ առաջուայ*
*հովուել իրենց. սակայն նա, անյիշաչարութեամբ ներե*
*նոցա ապերախտ վարմունքը իւր դէմ՝ ոչ մի պայմա*
*չկամեցաւ հայրապետական իշխանութիւն վարել։*
*որոշ չէ. արդեօք երբ հակաթոռ կաթուղիկոսների*
*փոխութիւնն այնպէս արագ կատարուեցաւ, որ 485—*
*թուերին արդէն Ս. Սահակ մենակ էր մնացել աթոռ*
*վերայ և քաղաքական գործերի չխառնուելով՝ եկեղե*
*կան խնդիրներում հայրապետական իրաւասութիւն*
*գործ դնում. թէ այսպիսի իրաւասութիւն պահպան*
*նաև այն ժամանակ, երբ յիշեալ հակաթոռ կաթուղիկ*
*ներն էին իշխում, որոնք քաղաքական իշխանութ*
*կողմից միայն ճանաչուած լինելով՝ բարոյական հեղի*
*կութիւնից զուրկ էին և հայ ու օտար եկեղեցական*
*կողմից իբրև յափշտակիչներ էին նկատուում։ Կան մ*
*յիշատակութիւններ, որոնցից եզրակացնել կարելի է,*
*այդպիսի երկուութիւն հայրապետական իշխանութ*
*մէջ եղել է ո՛չ միայն Ս. Սահակի կենդանութեամբ,*
*նոյն իսկ նորա մահից յետոյ, երբ նորա և Ս. Մաշթ*
*աշակերտներն իբրև տեղապահներ շարունակել են եկ*
*ղեցւոյ ներքին գործերը վարել, իսկ Սուրմակ Արծկեց*
*կամ մի ուրիշը անուանական կաթուղիկոս են եղել քա*
*ղաքական աշխարհի առաջ։ Յամենայն դէպս վերև յ*
*շուած թղթակցութիւնը, որ իբրև մի կարևոր փաստ*
*թուղթ յառաջ է բերուել այդպէս կոչուած Ն. առէ*
*րական ժողովի մէջ (553 թ.-ին) և դորանով պատմակ*

նակութիւն ստացել, ապացոյց է ի միջի այլոց, թէ
ստանի երկու մեծ վարդապետները ոսկեայ հաչակ
ստացել իրենց ժամանակի քրիստոնեայ աշխարհում.
թէ Կ. Պոլսոյ Պրոկղ պատրիարքը նոցա պարզապէս
ետարանիչներ» է անուանում և իբրև կենդանի սուր-
ն նոցա առաջ խոնարհում՝ լոկ բիւզանդական քաղա-
յարութիւնից չէր անշուշտ, այլ որ տեղեակ էր նոցա
արև աւետարանչական գործունէութեան։
Սորա և Մելիտինէի Ակակիոս եպիսկոպոսի գրած
Թերի նպատակն է հայերին զգուշացնել Անտիոքացի-
ն գործունէութիւնից, որոնք իրենց կողմնակից Նես-
ի Եփեսոսի Ս. ժողովում քանդակուելուց յետոյ աշ-
տում էին իրենց երկու մեծ ուսուցիչների՝ Դիոդոր
ոնացու և Թէոդորոս Մոպսուեստացու կամ Մամես-
ու գրուածքները տարածել և այդպիսով Քրիստոսի
երկու դէմ, երկու բնութիւն որոշող աղանդի կող-
կիցներ գտնել մանաւանդ քրիստոնեայ Արևելքում։
ս գրութեանց պատասխանների մէջ ասուած է, թէ
ուսման հետևողներ դեռ չեն երևացել Հայաստանում,
եթէ երևան՝ ամէն ջանք գործ կդնեն հեռացնելու
ւ իրենց միջից, պաշտպանելով եկեղեցւոյ ուղղափառ-
անութիւնը և մնալով միաբան ընդհանուր քրիս-
նութեան հետ։ Ցիրաւի Կորիւն իւր պատմութեան
ում յիշում է, որ Հայաստան են բերուել «Գիրք
ապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք առն
ւմն Հռոմի, որում Թէոդորոս անուն», իսկ Ս. Սա-
և Ս. Մաշթոց լսելով՝ անմիջապէս միջոցներ են ձեռք
լ, դուրս հանելու, հալածելու նոցա հետևողներին
ց աշխարհից։ Խօսքն այստեղ անշուշտ Թէոդորոս Մա-
ացու գրուածների մասին է, որ Անտիոքի դպրոցի
ազօրեղ ներկայացուցիչն էր և որի հետևողներն ու-
ւ Հայաստան են եկել յիշեալ թղթակցութիւնը փո-
ակուելուց յետոյ. ինչպէս և Կորիւն նշանակում է
իբրև Ս. Սահակի վերջին գործ։ Այս գործը շատ
աւոր է մեր եկեղեցւոյ պատմութեան համար ունե-
հետևանքներով։ Ս. Սահակ և Ս. Մաշթոց Եփեսոսի
մի որոշումներն ու դաւանութիւնն ընդունելով՝ ըն-

դունած և խուրացրած եղան նաև այն ամէն դաւանակ-
ու կանոնական որոշումները, որոնք Նիկիոյ ժողովից յ-
տոյ՝ ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ շատ կ-
րևոր տեղ գրաւող մի դարաշրջանում գուցեան ընդ-
նուած ու հաստատուած էին. իսկ իսպառ մերժելով Ա-
տիոքացիներին Հայաստանից՝ նրանց աշակերտների և ի-
տագայ ժամանակների առաջ գծեցին այն ուղին, ո-
պէսզի է ընթանար այնուհետև մեր եկեղեցին դաւան-
կան խնդիրներում։ Յենուելով մեծ վարդապետների հ-
ղինակութեան վերայ՝ նա շարունակեց ուղիղ և վաւեր-
կան համարել այն միայն, ինչ որ ընդունուել էր մի-
Եփեսոսի ժողովն ու այդ ժողովով. մերժել իսպառ օտա-
րամուտ և խորթ այն ամէնը, ինչ որ հակառակ էր ա
ժողովի քարոզած դաւանութեան։

**Ե. Ս. Սահակի եւ Ս. Մաշտոցի թարգմանչական գ-
ծունէութիւնը, եկեղեցական բարեկարգութիւններն ու
նութիւնները, վախճանը.**— Փարպեցին Ս. Գրքի ամբողջակ-
թարգմանութիւնը Ս. Սահակին է վերագրում՝ նկար-
գրելով, եթէ ինչպէս գրերի գիւտից յետոյ հայ քահ-
նաներն ու նախարարները Ս. Մաշտոցի և Վռամշապ-
թագաւորի հետ մեծ հանդիսաւորութեամբ նորան
դիմում և խնդրում՝ իւր վերայ վերցնել այդ ամենակ-
րևոր գործը, իւր մեծ նախահօր, Ս. Գրիգորի նման գ-
նալ երկրորդ լուսաւորիչ Հայաստանեայց, որովհետև ու-
ոչ ոք ձեռնհաս չէր Ս. Գրքի պատասխանատու թար-
մանութիւնը գլուխ հանելու. և նա յանձն է առնում
ամենայն յաջողութեամբ կատարում։ Սակայն Փարպեց-
այստեղ անշուշտ չափազանց տարուել է իւր հաւատարմ-
արուեստովն ու Ս. Սահակին փառաւորելու ցանկ-
թեամբ։ Ստոյգը դարձեալ Կորիւնի պատմածը պէտք
համարել, որի գրելով, ինչպէս տեսանք, Ս. Մաշտոց գ-
Ասորիքում եղած միջոցին փորձեց նորագիւտ նշանագ-
րը Ս. Գրքի թարգմանութեան վերայ փորձել և իւր աշ-
կերտների հետ սկսեց թարգմանել Առակաց գիրքը։ Ա
կասկած այդ թարգմանութիւնն ասորերէնից էր. Ս. Մա-
թոցի աշակերտները տասնեակ տարիներ յետոյ նոր սկս-
ցին յունարէն սովորել և գործածել։ Մենք շատ պատմ-

ր ունենք ընդունելու, որ նոյն իսկ գրերի գիւտից առաջ
Գրքի եթէ ոչ ամբողջ մատեաններ, գոնէ փոքր և ընդար-
կ հատուածներ ամենագործածական մասերից՝ աւե-
ւլաններից, սաղմոսներից, Առակաց գրքից, Հնգամա-
անից և այլն — հայերէն լեզուով բերնէ բերան անցնում
ն՝ փոխադրուած լինելով նոյնպէս ասորերէնից։ Ամենայն
ւանականութեամբ «Թարգմանիչ» կոչումով եկեղեցա-
ններ գրերի գիւտից առաջ եւ կային, որոնք ասորերէն
Գրքի վերայ կարդացածը եկեղեցում տեղնուտեղը
սրգմանում, պարզում էին ժողովրդին և այդպիսով
ակել էին արդէն մի որոշ բարբառ, որ նշանագրերի
ւտից յետոյ գործադրուեցաւ մինչև այն ժամանակ բե-
նացի աւանդածը անմիջապէս գրի առնելու։ Պէտք է
թադրել, թէ այս կերպով Աստուածաշնչի կարևորա-
յն բաժինն առաջին իսկ տարիներում թարգմանուել ու
րծածութեան մէջ էր մտել, և հետզհետէ աւելանում
ն նոր մասեր։ Իսկ երբ Կ. Պոլիս գնացած աշակերտ-
ըը իրենց հետ բերին, ինչպէս յիշուեցաւ, յունարէն
տուածաշնչի ընտիր օրինակներ, Ս. Սահակ մինչև այդ
ամանակ եղած «յանկարծագիւտ փութանակի» թարգ-
նութիւնները յունարէնի հետ համեմատելով սրբագրեց
մի ընդհանուր խմբագրութեան ենթարկեց՝ գլխաւոր
նական ունենալով այդ գործում Եզնիկ Կողբացուն,
ի մեր ձեռքն հասած «Եղծ աղանդոց» ինքնուրոյն
ուածքը՝ Աստուածաշնչից յետոյ, դասական հայերէնի
ենարնտիր օրինակն է ներկայացնում։ Աստուածաշնչի
ժմ գտնուած հայերէն ձեռագրերի մանրազննին բաղ-
տութիւնն ու ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս
նպէս, որ նորա սկզբնականը թարգմանուել է յիրաւի
որերէնից և ապա խնամքով սրբագրուել յունարէնի
մեմատութեամբ. բայց այս սրբագրութիւնը միայն
Սահակի ձեռքով չի կատարուել, այլ յետոյ էլ շատ
ռքեր վրան շարժել են՝ աշխատելով միշտ աւելի ու
ելի մօտեցնել յունարէնին, այնպէս որ հնագոյն ձեռ-
ագիրների մէջ աւելի շատ են նախնական՝ ասորերէնից
ած, թարգմանութեան հետքերը։

Կորիւն պատմում է, որ Ս. Սահակ Աստուածաշնչի

*խմբագրութեան ձեռնարկելուց առաջ յունարէնից հայե րէն էր փոխադրել «Զեկեղեցական կրոց գումարութիւնն» որ նշանակում է անշուշտ մեր այժմեան ժամագրքի, պա տարագամատոյցի, Թերևս Մաշտոցի ու հին տօնակա հիմնական մասերը. այսինքն այն ամէնը, ինչ որ Ե. դա րում մեր եկեղեցւոյ ամենօրեայ և տօնական ժամերգու թեան մէջ էր մտնում: Դորա վերայ աւելացնում է ն շատ սուրբ հայրերի «ղճշմարիտ զիմաստութիւնն», կամ նալով երևի Ս. Եփրեմի, Ոսկեբերանի, Բարսեղ Կեսար ցու և այլ եկեղեցական հայրերի ճառերն ու յորդորակա ները մատնանիշ անել, որոնցից շատերը իրենց ոճով իբրև Ե. դարու թարգմանութիւն են նկատուում և մասը մինչև այժմ մեր եկեղեցւոյ տօնական ընթերցուա ների շարքում կարդացուում է: Այս Ս. Սահակ՝ աշ կերտներով մէկ տեղ, թարգմանել է նոյն հայրերի մի քա մեկնաբանական գրուածները՝ իբրև մի տեսակ յաւելու Ս. Գրքի թարգմանութեան, որի ընթերցուածների հ զուգընթացաբար դուցէ մի ժամանակ կարդացուում է եկեղեցում այդ մեկնութիւնները: Այս գործերով Մ Հայրապետը հանդէս է գալիս իբրև բուն պարագլու ու ղեկավարը թարգմանիչների այն մեծ դպրոցի, որ ազգային գրականութեան հիմքը դրաւ: Այդ գրական թիւնը, ի բաց առեալ մի քանի այնպիսի գրուածնե ինչպէս վերև յիշուած Կորիւնի և Եզնիկի երկասիր թիւնները, իւր նախնական, «ոսկեղէն» կոչուած շրջանո գրեթէ ամբողջովին թարգմանական է և եկեղեցակ բնաւորութիւն ունի, յառաջ է եկել մեծ մասամբ Ս. Ս հակի ձեռքի տակ կամ նորա հոկողութեան ներքոյ՝ աւ նորա կեանքի վերջին տասնամեակում, երբ հայրապ տական իշխանութեան հոգսերից ազատ լինելով՝ իւր ծ րութեան օրերը կարող էր հանգիստ ամբողջ աշխատու թեան նուիրել:*

*Ս. Մաշթոց ընդհակառակն իւր կեանքն անցրել մինչև վերջը դուրսը՝ ժողովրդի մէջ, Հայաստանի հ նաև հարևան քրիստոնեայ երկիրներում՝ Աղուանքում Վրաստանում, շրջելով, առաքելութեան այդ ընդարձ ասպարիզի վերայ գործելով իբրև աւետարանիչ, քա*

ողիչ և ուսուցիչ. ուստի նորա գրական գործունէու-
թիւնն ևս կապուած է եղել այդ ասպարէզի հետ։ Կո-
ւնի ասելով՝ նա յօրինել է «Ճառս յաճախագոյնս, դիւ-
պատումս, շնորհագիրս», ուրիշ խօսքով իւր բերանացի
արողութիւնների հետ թողել է նաև մի շարք գրաւոր
արոզներ։ Այդպիսի քարոզների ժողովածուն են համա-
ում մի քանի նշանաւոր հայագէտներ աւանդաբար Ս.
ուսաւորչին վերագրուած «Յաճախապատումը», որի Ս.
աշթոցի գործ լինելն անշուշտ շատ աւելի հաւանական
, քան Ս. Լուսաւորչի։ Բացի այդ Ս. Մաշթոցին ընծայել
ն, շատ ուշ ժամանակի աւանդութիւնների հիման վե-
այ՝ մեր հնագոյն որոշ կարգի շարականներ։ Ինչպէս և
. Սահակ, աւելի հաստատուն վկայութիւններով, մի
անի յայտնի շարականների հեղինակ է նկատուում՝ ըստ
արպեցու վերև յիշուած վկայութեան, առանձին հըմ-
ութիւն ունենալով երաժշտական արուեստի մէջ։ Սա-
այն հաւանականաբար Ս. Մաշթոցին վերագրուած շա-
ականներից մի քանիսը, օր. Ապաշխարութեան Համբար-
ձները Ե. դարից աւելի հին են և երգուել են Սաղմոս-
երի հետ, իբրև նոցա «կցորդ»ներ, կամ քրիստոնէական
աւելուածներ, որից և սովորութիւն է մնացել մեր եկե-
եցում ամէն շարական կցել «փոխ»ի ձևով ասուող սաղ-
մոսներին։ Յայտնի է, որ Ասորոց եկեղեցին շատ հարուստ
եղել եկեղեցական երգերով. իսկ մեր եկեղեցին իւր
ազմակերպութեան առաջին երկու դարերում շատ կող-
մերով ենթարկուած լինելով ասորական ազդեցութեան՝
այս մասում ևս երևի փոխառութիւններ է արել հարևան
ծաղկած եկեղեցուց։ Դորա փոխարէն Ս. Սահակ յունական
րթութիւն ստացած լինելով՝ մի նոր հոսանք է մտցրել,
րով սկսել են մեզանում յունական ուղղութեան հետևել,
և գուցէ դորանից է, որ Ս. Սահակի անուամբ մնացած
շարականները իրենց կազմութեամբ և ոգւով տարբերուում
են այն միւս հնագոյն շարականներից։ Յամենայն դէպս
թէ այս և թէ գրական ուրիշ ճիւղերում՝ որոշելու հա-
մար, թէ ո՛րն է Ե. դարու մեծ վարդապետների ինքնու-
րոյն աշխատութիւնը և ո՛րը փոխառութիւն օտարներից,
ո՛րը նախնական և ազգային ոգւոյ ծնունդ, ո՛րը եկամու-

և արտաքին ազդեցութեամբ յառաջ եկած՝ մանրամ
ու սու մնասխլութիւն է հարկաւոր, որ գծագրագրաբար
չի եղել։ Մի բան անհերքելի է, որ Ս. Սահակ և Ս. Մաշթ
իրենց աշակերտներով մէկ տեղ, շատ մեծ աշխատութի
են գործ դրել մեր եկեղեցւոյ ժամապաշտութիւնը կա
գաւորելու, մաքուր կրօնական զգացումը և ճշմար
քրիստոնէական բարոյականութիւնը զօրացնելու, Ս. գր
ու եկեղեցական վարդապետութիւնը ժողովրդին մատչ
դարձնելու համար։ Անցեալի մնացորդը նոքա զտել և կա
գաւորել են, իրենք շատ բան աւելացրել՝ որոշ սահմ
չդնելով երևի ինքնութեան ու փոխառութեան մէջ,
աշխատելով միայն ըստ կարելւոյն առատ և հայ ժո
վրդեան ըմբռնելի՝ կրօնական խորհրդածութեան ու ա
բութեան նիւթ տալ։ Այդպիսով գծել են այն շրջան
որի մէջ մնաց մեր եկեղեցին դարերի ընթացքում՝ ը
դունելով յիրաւի նորանոր փոփոխութիւններ ու յա
լումներ, բայց առանց կորցնելու Ե. դարից ժառանգ
իւր ընդհանուր պատկերը։

Կորիւնի այն յիշատակութիւնը, թէ Կ. Պօլսոյ գնա
ցած աշակերտները վերադարձան «նիկիական և եփեսոս
կան կանոնօք», համանականաբար այն իմաստն ունի,
սոցա միջոցով Հայոց եկեղեցին մուտ գործեցին Նիկ
ժողովից մինչև Եփեսոսի ժողովը ընդհանուր եկեղեց
մէջ ընդունելութիւն գտած՝ ինչպէս դաւանական, ա
պէս և կանոնական որոշումները։ Բացի այդ մեզ հա
են Ս. Սահակի անունով 55 գլուխ կանոններ, որոնք ո
շում են եկեղեցւոյ զանազան պաշտօնեաների իրաւա
թեանց սահմանները, նոցա հասանելիք տուրքերի տես
ու չափը ևլն. անվաւերականութեան երևոյթ ամենև
չունեն, ուստի և կարող են իբրև փաստ ծառայել, ի
ինչպէս այս մեծ հայրապետի օրով մեր եկեղեցւոյ վա
չական կազմակերպութիւնն էլ կարգ ու կանոնի ա
դրուեցաւ, արտաքին ու ներքին յարաբերութեանց հ
մար հաստատուն կանոններ սահմանուեցան, և երևի ջա
գործ դրուեցաւ՝ ըստ կարելւոյն յարմարուելու ընդհ
նուր եկեղեցական կարգերին։ Ինչպէս կտեսնենք, Ս. Ս
հակի և Ս. Մաշթոցի մահից մի քանի տարի յետոյ ա

նոցա աշակերտները հիմնում էին նոցա հաստա-
ծ կանոնական դրութեան վերայ՝ զանազան զեղծում-
վերացնելու համար, և նոցա այդ հեղինակութիւնը
ոց դարեր շարունակ։

Կորիւնի նկարագրութեամբ՝ կրօնաւորական կեանքն
նոր զարկ է ստացել և խիստ զօրացել այս շրջանում,
որպէս Ս. Մաշթոցի ջանքերով, որ Հայաստանի այլևայլ
մերում մենաստաններ էր հիմնում, եղած միայնա-
ցների հետ առանձնանում էր այս կամ այն քարան-
ում, ուր բարի վարքով նոցա առաքինութեան օրինակ
դիտանում, ուր վարդապետութեամբ նոցա կրթում,
աջալերում՝ հոգեշահ ընթերցուածներով, երգերով ու
օթքներով անցկացնելու ժամանակը։ Իսկ Ս. Սահակի
Բար Զ. դարու մի վստահելի յիշատակարան պատմում
որ վերանորոգել և սրբատաշ քարերով կառուցել է
դարշապատում Ս. Կուսանաց վկայարաններն ու Կա-
ւղիկէ Մայր տաճարը, այլ և ուրիշ շատ տեղերում
ոգութիւններ է արել և եկեղեցիներ կառուցել։

Այսպէս Հայաստանի երկու մեծ վարդապետներն
նց բազմակողմանի և բազմարդիւն գործունէութեամբ
դար առաջ պաշտօնապէս ընդունուած քրիստոնէա-
կրօնը դարձրին իրենց ժողովրդի համար կենդանի
ծօն ույժ, Հայոց եկեղեցին պայծառացրին ներքուստ
արտաքուստ. Նորա ինքնուրոյն կազմակերպութիւնը
հպանելով՝ աւելի հաստատուն նեցուկների վերայ դրին
որ բովանդակութիւն ու նոր միջոցներ ընձեռեցին իւր
ռայպյտութեան իւրաքանչիւր կողմի՝ քարոզութեան,
ուցման, բարոյական հրահանգութեան, կարգապահու-
ան, պաշտամունքի համար ևլն. հայ ժողովրդին դրին
նոր բարգաւաճման, լուսաւորութեան և քաղաքա-
թութեան ճանապարհի վերայ՝ դրի զօրաւոր զէնքը
ա ձեռքը տալով, որով հնարաւորութիւն պէտք է ու-
ար այլ ևս իւր զգացումներն ու մտքերը՝ իւր հոգևոր
նքի այլ և այլ շարժումները ազատօրէն արտայայտե-
, ապագայ սերունդներին իւր գլխից անցածը և իւր
ոյական ժառանգութիւնք աւանդելու, օտար ազգերի,
ր առանձին կարևորութիւն պիտի ստանար՝ քրիստո-

Նեայ արևմուտքի հետ հոգևոր հաղորդակցութեան մ
մտնելու։ Իսկ այս վերջին կէտը Ս. Սահակի յաջող
երախտիքը պէտք է համարուի, քանի որ նորա ազդեցու
թեան ներքոյ Հայոց գիրը իւր կազմութեամբ և Ե. դար
գրականութիւնն իւր ուղղութեամբ ու բովանդակու
թեամբ Արևմտեան-յունական բնաւորութիւն ընդուն
ցին և այդպիսով հայ ժողովուրդն իւր ներքին կեանք
ընդ միշտ կապուեցաւ, իւր յարատև տառապանքնե
րին չնայած՝ կենդանի յարաբերութեան մէջ մնաց դէպ
քաղաքակրթութիւն ձգտող քրիստոնեայ Արևմուտքի հետ
Նորա երկարամեայ հայրապետութիւնը մեր ազգային-եկե
ղեցական պատմութեան ամենափառաւոր շրջանն է, և
հոգևոր վերածնութեան դարագլուխը, և իւր անզուգա
կան զուգակցի՝ Ս. Մաշթոցի հետ, նոքա երկուսը յիշա
մեր ազգի երկրորդ լուսաւորիչները և առաջին մեծ վա
դապետները եղան։ Ս. Սահակ իւր արգասաւոր կեան
կնքեց 438 Թ.-ին Բագրաւանդ գաւառի Բլրոցաց գիւ
ղում։ Կորիւնի յիշելով նա վախճանուել է նոյն օրը,
օրը և ծնուել էր՝ Նաւասարդ ամսի վերջին (մօտ Սեպ
10) առաւօտեան։ Նորանով դադարեց ժառանգակ
հայրապետութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորչի մեծագոր
տոհմի մէջ, որովհետև նա արու զաւակ չունէր, այլ
դուստր միայն, որ ամուսնացած էր Համազասպ Մամ
կոնեան իշխանի և սպարապետի հետ։ Այդ օրհնեալ ամու
նութիւնից յառաջացան Մեծն Վարդան և իւր քաջա
եղբայրները՝ Ս. Հմայեակ և Համազասպեան։ Իսկ Վարդա
կին Դուստրին էր վիճակուած Մեծ Հայրապետի երկրա
նշխարներն ամփոփելու պարտքը, որ նորա Երեմիա անու
և ուրիշ պաշտօնեաների հետ Տարօն տարաւ և Աշտ
շատի սեփական կալուածում հանդիսաւոր յուղարկաւ
րութեամբ թաղեց։ Իսկ նորա շիրմի վերայ քիչ ժամանա
յետոյ վայելուչ տաճար շինուեցաւ, որ այժմ կիսաւ
ղրութեան մէջ է։ Նորա տոհմական մեծ կալուածնե
դարձան այնուհետև ժառանգութիւն Մամիկոնեան տա
որ մինչև այդ ժամանակ երևի կալուածատէր նախարա
րութեանց շարքում չէր և հայրենիքի պաշտպան առ

ը թողնում սերունդէ սերունդ՝ իբրև բուն ժառանգա-կան հարստութիւն:

Ս. Մաշթոց իւր մեծահոգի հովանաւորից և գործակ-ցից յետոյ 6 ամիս միայն կեանք ունեցաւ, որ գործա-դրեց միայնակ տանելով անխնամ մնացած ժողովրդի հո-վուութեան ծանր լուծը և անպաշտօն աթոռութեամբ հսկելով նորա եկեղեցական կեանքի վերայ: Նա վախճա-նեց Վաղարշապատում 439 թ.-ի մեհեկան ամսի 13-ին (մօտ 20 մարտի) և Վահան Ամատունի հազարապետ իշ-խանը Հմայեակ Մամիկոնեանի և նորա գլխաւոր աշա-կերտների հետ տարաւ նորա մարմինը իւր տոհմական կալուածը՝ Օշական, և մեծ հանդիսով թաղելով այնտեղ՝ մի քանի տարի յետոյ փառաւոր տաճար կանգնեց նորա շիրմի վերայ: Այժմ այդ ս. շիրիմը Գէորգ Դ. երջանկա-յիշատակ հայրապետի ջանիւք կառուցած նորակերտ պայ-ծառ տաճարի հովանու ներքոյ է և վերջին ժամանակ հետզհետէ ուխտաւորների աւելի ու աւելի մեծ բազմու-թիւն է գրաւում իւր մօտ:

ԳԼՈՒԽ Ը.

## Հայոց եկեղեցին Ս. Սահակի եւ Ս. Մաշթոցի անմիջական աշակերտների օրով: Ա. կրօնական պատերազմն ու նորա հետեւանքները:

Ա. Հայրապետական աթոռի վիճակը Ս. Սահակից եւ Ս. Մաշթոցից յետոյ։—Կորիւն պատմում է, որ Ս. Մաշ-թոցի թաղման առթիւ ժողովուած իշխաններն ու բազ-մութիւնը՝ հանգուցեալ երկու մեծ հայրերի փոխարէն, Հայոց եկեղեցու «գլխաւոր վերակացու և տեղապահ» կարգեցին նոցա աշակերտներին, «որոց առաջինն Յովսէփ՝ գլխաւոր ժողովոյն»: Նոյն Ս. Յովսէփի համար Փարպեցին ասում է պարզապէս, թէ Ս. Մաշթոցի հրամանաւ Հայոց աշխարհի հայրապետութեան յաջորդը եղաւ, և մի ուրիշ տեղ աւելացնում է, «Որ թէպէտ և երէց էր ըստ ձեռ-նադրութեան, այլ զկաթուղիկոսութեան Հայոց գաթոռն.

ունէր ի ժամանակին»: Իսկ Եղիշէ, Վարդանանց պա
մութեան հեղինակը թէպէտ Արտաշատի ժողովին մա
նակցողների շարքում նորան առաջին տեղը դնելով «եպ
կոպոս Այրարատայ» անուանում է, բայց ուրիշ տեղ
րում նորա մասին խօսելիս զգալ է տալիս, որ յետ
երէց էր ձեռնադրութեամբ, ինչպէս Ս. Ղեւոնդ և այլ
կերներ: Վերջապէս Ժ. դարու պատմագիր Յովհանն
կաթուղիկոսը յիշում է, որ մինչ Ս. Յովսէփի տեղապ
հութեամբ յաջորդեց հայրապետական աթոռը, Յաղկ
տի հրամանով Սուրմակն էր ձեռնադրութիւն կատարու
վեց տարի, ապա թէ ամբողջ իշխանութիւնը անցաւ
Յովսէփին: Այս տեղեկութիւններն ի մի ամփոփել
պէտք է նկատենք նախ, որ եթէ Ս. Յովսէփ ժառանգել
միայն Ս. Մաշթոցի ունեցած իշխանութիւնը՝ այդ չ
կարող լրիւ հայրապետական իշխանութիւն լինել, որով
հետև ինքը Ս. Մաշթոց բառի բուն մտքով հայրապետ չ
եղել: Ընդհակառակն բոլորովին անհաւանական չէ Յո
հաննէս պատմագրի յիշատակութիւնը Սուրմակի մասի
որից կարելի էր եզրակացնել, թէ ինչպէս Ս. Սահա
կենդանութեամբ, այնպէս և յետոյ մի առժամանակ ա
խարհական իշխանութեան կողմից ճանաչուած անու
նական կաթուղիկոսներ կային. և եթէ Սուրմակ էր
երկրորդ անգամ կաթուղիկոս եղաւ և նոյնն է, ինչ
Արտաշատի ժողովականների շարքում յիշուած Սուրմ
Բզնունեաց եպիսկոպոսը, ապա նա չի կարող 6 տարի ի
խանութիւն վարելուց յետոյ մեռած լինել, այլ գու
տեսնելով, որ ոչ ոք իւր վերայ ուշադրութիւն չի դա
ձնում, Ս. Սահակի և Ս. Մաշթոցի աշակերտներն անպա
ման հեղինակութիւն են վայելում և եկեղեցական եր
գիրներում ամէնքը նորա են դիմում, հրաժարուեց ի
անուանական իշխանութիւնից, կամ նախարարների ճըն
ման տակ մի կողմ քաշուեցաւ և կաթուղիկոսական բ
լոր գործերի տնօրէնութիւնը Ս. Յովսէփին թողեց: Կ
րևոր է նաև այն հանգամանքը, որ Ս. Սահակի մահուա
Լուսաւորչի տան ժառանգական կալուածները Մամիկ
նեանց ձեռք անցնելուց յետոյ՝ Հայոց հայրապետակա
նութեան կարողութիւնն ու արտաքին ճոխութիւ

տի չափազանց նուազէին ըստ ինքեան։ Մեզ համար
սըզ չէ՝ արդեօք այդպիսով հայրապետութիւնը բոլորո-
ն զրկուո՞ւմ էր նիւթական սեփականութիւնից. ար-
օք Դ. դարում ինչպէս Լուսաւորչի տան կաթուղի-
ոսները իրենց ժառանգական կալուածների հասոյթներով
ն կառավարւում, այնպէս և Աղբիանոսի տան կաթու-
կոսները իրե՞նց կալուածների հասոյթներով, թէ կային
րև այնպիսի կալուածներ և հասոյթներ, որոնք հայրա-
ոտութեան հետ կապուած էին և իւրաքանչիւր նոր
յրապետի ձեռքն էին անցնում, անկախ, թէ ո՞ր տոհ-
ց կլինէր նա. չգիտենք՝ որչափ էին այդ կալուածներն
հասոյթները, որոնք կային հաւանականաբար։ Յայտնի
նաև, որ եթէ Ս. Սահակի աթոռից զրկուելուց յետոյ
3 թ.-ին «կաթուղիկոսական տունը» յարքունիս գրաւ-
եցաւ՝ ի՞նչ էր իսկապէս գրաւուածը. Պարսից մօտ մնա՞ց
ոդեօք, յանձնուեցաւ Պարսից թագաւորի կողմից կար-
ուած կաթուղիկոսների՞ն, թէ կրկին Ս. Սահակին վերա-
սրձուեց և յաջորդաբար Ս. Մաշթոցի ու Ս. Յովսէփի
ւօրէնութեան ներքոյ դրուեցաւ։ Թւում է սակայն, որ
րջինիս և իւր ընկեր Յովհանի Ս. Մաշթոցի թաղումից
տոյ «գլխաւոր վերակացու» յայտարարուիլը մի աղօտ
շատակութիւն է այդ մասին, թէ Ս. Սահակի և Ս. Մաշ-
ոցի մօտ հայրապետանոցին պատկանած գոյք, ստաս-
ր և հարստութիւններ կային, որոնց վերահսկողութիւնը
ցա ամենամերձաւոր աշակերտներին յանձնուեցաւ, և
դ երևի մեծապէս նպաստում էր նոցա հեղինակու-
ւնը բարձրացնելուն, հակաթոռ կաթուղիկոսներին աւելի
զրկելով որ և է հեղինակութիւնից։ Հաւանականաբար
րսից իշխանութիւնն ևս լուելեայն համակերպեցաւ այդ
ութեանը և նկատելով, որ ընդհանուրի համակրութիւնը
Սահակի և Ս. Մաշթոցի աշակերտների կողմն է, թոյլ
ւաւ որ նոքա հաստատուին կաթուղիկոսական իշխա-
ւթեան մէջ։

Այդ իշխանութեան հետ անքակտելի կերպով կա-
ւած էր Այրարատի եպիսկոպոսութիւնը։ Նախնական
եղեցւոյ մէջ առանց աթոռի և թեմի եպիսկոպոսներ
ային. իսկ ընդհանրական հայրապետը, եպիսկոպոսների

գլուխ լինելով հանդերձ՝ ունէր իւր առանձին թե
ինչպէս Արշակունի թագաւորները ամբողջ Հայաստա
իշխան լինելով՝ ունէին իրենց առանձին նահանգը: Այ
րատեան աշխարհն էր այդ նահանգը, որ կաթուղիկո
կան թեմ դարձաւ հայերի քրիստոնէութիւն ընդունել
յետոյ, ինչպէս որ նախարարական իշխանութեանց ա
մաններում հաստատուեցան մի մի եպիսկոպոսական ա
թոռներ: Արշակունեաց թագաւորութեան վերանա
այդ նահանգի ներքին կառավարութիւնը պէտք է ան
լինի մարզպանների ձեռքը և ուրեմն կարելի էր ենթ
դրել, թէ թեմական իշխանութիւնն ևս հակաթոռ կ
թուղիկոսների ձեռքը կանցնէր. բայց երբ Ս. Յովհ
առանց եպիսկոպոսական ձեռնադրութեան Այրար
եպիսկոպոս է յիշուում՝ կնշանակէ, եթէ ոչ Ս. Մա
թոցի մահուամբ անմիջապէս, գոնէ մի քանի տարի յ
տոյ կաթուղիկոսական իշխանութեան հետ նորան աւել
ցաւ նաև այդ կարևորագոյն թեմը: Իսկ թէ ինչու ն
մինչև վերջը երէց մնաց, փոխանակ եպիսկոպոսակ
ձեռնադրութիւն ընդունելով՝ լրիւ վարելու թեմակ
ու հայրապետական իշխանութիւնները, դորա պատճա
ուշանի և չբացատրուած մեր պատմիչների կողմից, կ
րելի է գտնել ժամանակակից Հայոց եկեղեցւոյ վարչա
դրութեան մէջ: Մինչ այդ, ինչպէս տեսանք, հայրապ
տական իշխանութիւնը ժառանգաբար անցել էր Ս. Լ
սաւորչի և Աղբիանոսի տանց ներկայացուցիչներին. Լու
ւորչի տնից այժմ ժառանգ չէր մնացել, ուրեմն հան
պետի գային դարձել Աղբիանոսի ժառանգները, և
նոքա ձեռք չէին քաշել իրենց իրաւունքից՝ հաստատ
Փառպեցու պահած այն թանկագին տեղեկութիւնը,
Ս. Սահակից յետոյ կաթուղիկոս են լինում յաջորդա
երկու Մանազկերտցիներ կամ Աղբիանոսեաններ՝ Մեղ
և Մովսէս: Ամենայն հաւանականութեամբ նոքա ա
էլ ձգտել էին կաթուղիկոսութեան և ընդդիմադրութ
հանդիպել Ս. Սահակի և Ս. Մաշթոցի աշակերտների կ
մից, որ ի միասին ծանօթացած լինելով Յունական և
եկեղեցւոյ կարգերին և հոգւով յարած՝ չէին կարող հ
տուել այլ ևս այն անտեղութեան հետ, որ եկեղեց.

ավուապետ լինէր ո՛չ թէ արժանաւորագոյնը նորա պաշ-
տօնեաներից, այլ մի պատահական, գուցէ ամենևին այդ-
[illegible] պաշտօնի համար ո՛չ շնորհք, ո՛չ պատրաստութիւն,
և հակում ունեցող անձ, և ժառանգէր Առաքելական
աթոռը ինչպէս մի հայրական կալուածք։ Միւս կողմից,
թէ Պարսից թագաւորի նշանակած մի կաթուղիկոս կար,
որին վերապահուած էր ձեռնադրութեան իրաւունքը,
այա հասկանալի է, թէ ինչո՛ւ Ս. Յովսէփ և իւր ըն-
կերները աւելի գերադասում էին երէց մնալ, քան նորա
օրէնի իշխանութիւնը ճանաչելով՝ նորանից եպիսկո-
պոսական ձեռնադրութիւն ընդունել։ Հաւանականաբար
այս էր պատճառը, որ երբ նորա խմբովին Պարս-
կաստան տարուեցան Վարդանանց պատերազմից յետոյ,
որև Հայոց եկեղեցւոյ ամէնից աչքի ընկնող ներկայա-
ցուցիչներ և ապստամբութեան գրգռիչներ, այդ խմբի մէջ
միայն մի ծերունի եպիսկոպոս կար, երևի արդէն Մեծն
Սահակ Պարթևից ձեռնադրութիւն ընդունած, Սահակ
Ռշտունեաց եպիսկոպոսը։

Այսպէս ուրեմն Ս. Յովսէփ՝ վայելելով անշուշտ
Մամիկոնեանց, Ամատունեաց և ուրիշ ազդեցիկ նախա-
րարների հովանաւորութիւնը, որոնցից շատերը, ինչպէս
տեսանք, Ս. Սահակի և Ս. Մաշթոցի դպրոցից էին ան-
ցել՝ կարողացաւ իւր ձեռքում պահել հայրապետական
իշխանութեանը պատկանած էական իրաւասութիւնները
և ստացուածքը, իւր ընկերների հետ միասին առաջնա-
կարգ տեղ բռնել եկեղեցական ժողովներում և վարել
ինչպէս եկեղեցւոյ ներքին կառավարութեան վերաբե-
րեալ բոլոր գործերը. բայց արտաքին ոտնձգութիւնների
և հնացած ժառանգական իրաւունքների դէմ նա խուլ
կռիւ մղել միայն կարող էր և պէտք է թոյլ տար, որ
նոր գաղափարները ժամանակի ընթացքում մուտք գտնեն
և նոր կարգերի՝ ի մէջ այլոց հայրապետական աթոռը
արժանաւորագոյնին ազատ ընտրութեամբ ժառանգել
տալու սկզբունքի համար ճանապարհ հարթեն։ Թւում է
թէ, ինչպէս առաջ ակնարկել ենք, նոյն այս մաքառման
արձագանքները պէտք է համարուին որոշ էջեր Փաւստոսի
Բիւզանդացու պատմութիւնից, որ հաւանական

վերջնական կերպով խմբագրուեցաւ Վարդանանց պա
րազմից յետոյ, Մանազկերտցի կաթուղիկոսների օ
րում: Արդեօք Ս. Ներսէսի կենդանութեամբ և նո
մահից յետոյ թագաւորների կողմից կարգուած Զաւէ
և Յուսիկ Բ. կաթուղիկոսների ձեռնադրութեան իր
ւունքը նորա համար չէ՞ ժխտուում այդ պատմութ
մէջ, որ ապացուցում Ս. Սահակի կենդանութեամ
նորա մահից յետոյ Պարսից թագաւորի կարգած Սուր
և այլ կաթուղիկոսների ձեռնադրութեանց ապօրինի
ները. արդեօք նոյն ինքն Մելիտէ Մանազկերտցին,
իբրև Մանազկերտի եպիսկոպոս յիշուում է Արտաշ
ժողովականների շարքում՝ ոգանից չէ՞ր ընդունել
ձեռնադրութիւնը և նորա ապօրինի ձեռնադրութ
դէմ նոյնպիսի բողոք չէ՞ եղել, ինչպիսին նկարագրուա
Դ. դարու Մանազկերտցիների համար. արդեօք Զաւէ
Աղբիանոսի տնից եղած այլ կաթուղիկոսներ նորա հա
չեն ամենամութ գոյներով նկարագրուում Փաւստ
մօտ, որ այդ տոհմը վարկաբեկ լինի և ցոյց տրուի,
Լուսաւորչի զաւակները աւելի իրենց անձնական արժ
նիքներով և մէկը միւսից յետոյ թողած մեծ երախտ
են հայրապետական աթոռի օրինական ժառանգ համ
սացել, մինչ Աղբիանոսի ցեղը, այդ բոլոր առաւել
թիւններից զուրկ լինելով՝ ո՛չ մի հիմնաւոր իրաւ
չունէր նոյն աթոռի համար: Յամենայն դէպս Ս. Սահ
և Ս. Մաշթոցի դպրոցի ու հին սերունդի մէջ մի գ
մաքառում, ինչպէս յետոյ կտեսնենք, տեղի ունեցել
և բոլոր նշանները ցոյց են տալիս, որ նախ քան Վ
դանանց պատերազմը առաջինի կողմն էր գերակշ
հետևեալ խառն ժամանակամիջոցում երկրորդը զօ
ցաւ, բայց յետոյ դարձեալ առաջինը տարաւ վերջնա
յաղթանակը:

Բ. Շահապիվանի ժողովն ու Մծղնէութիւնը:—Փաւ
ցին ս. Յովհէփի Հայոց հայրապետութեան յաջորդ կ
դուելը յիշելով՝ աւելացնում է, «Եւ ի բարեխօսութ
սուրբ հանգուցելոցն արանց (ս. Սահակայ և ս. Մաշթ
որհեցաւ աշխարհիս Հայոց պաշտօն ուղղափառ հա
յ՝ մինչև ցամն երկոտասաներորդ Յազկերտի արքա

արսից, որդւոյ Վռամայ»։ Այս նշանակում է պարզա-
էս, որ ս. Յովսէփը մինչև 450 Թ.ը խաղաղութեամբ
ռավարել է եկեղեցին և ունէ հալածանք հաւատոյ դէմ,
աչքի ընկնող յեղաշրջում եկեղեցական կեանքի մէջ
ղի չի ունեցել։ Բոլորովին հակառակ մի պատկեր են
զմել շատերը այս ժամանակամիջոցի նկատմամբ՝ Խորե-
ցու ողբի ազդեցութեան ներքոյ, որ ներկայանալով իբրև
Սահակի և ս. Մաշթոցի Յունաստանից վերադարձող
ուսումնական աշակերտներից մէկը, խիստ մռայլ գոյնե-
ով է նկարագրում երկու մեծ վարդապետների մահուամբ
անտէր մնացած Հայոց եկեղեցու և ժողովրդի վիճակը։
Այն ինչպէս նորա ուրիշ այն նկարագրութիւնները,
ոնք ժամանակով աւելի մօտ պատմիչների գծած շրջա-
ց ելնում են և ըստ երևութին նոցա աւանդածը հերքող
ամ լրացնող նիւթ տալիս՝ զուրկ են պատմական արժէ-
քից, այնպէս և այս։ Ըստ ինքեան հասկանալի է, որ ս. Յով-
էփի և նորա ընկերների գործունէութեան օրերը անկման
եր չէին Հայոց եկեղեցու համար, այլ ներքին շէնութեան,
րացման և բարեկարգութեան ամենաբեղմնաւոր օրեր,
ը մեծ վարդապետների սկսած գործն ամենայն եռան-
ով առաջ տարուեցաւ և աննկուն հաւատոյ այն կենդա-
նրար ոգին հայ ժողովրդեան մէջ արծարծուեցաւ, որի
առաւոր արտայայտութիւնն են Վարդանանց և Վահա-
նանց պատերազմները։ Իսկ արտաքին պատմութիւնից
այտնի է, որ մեր երկիրը խաղաղութիւն և համեմատա-
ար բարօրութիւն է վայելել այն ժամանակամիջոցում։
Յազկերտ Բ. դաժան բռնաւորը իւր թագաւորութեան
իզբին մի յաջող պատերազմ վարեց Միջագետքում Բիւ-
զանդական կայսերութեան դէմ, և մնացած ամբողջ
ամանակը զբաղուած էր Հեփթաղների դէմ վարած պա-
երազմներով. Հայաստանի ներքին գործերի վերայ ա-
անձին ուշադրութիւն դարձնելու միջոց չունէր. միայն
է Հայոց այրուձին հեռաւոր երկիր շարունակ զէնքի
ակ մնալով շատ ընտանիքների զրկում էր իրենց
վանաւորից ու սիրելուց։ Նոյն իսկ հայ մարզպան
նեցաւ մեր աշխարհն այս ժամանակ յանձին Վա-
ակ Սիւնու, ունէր հայ հազարապետ յանձին Վահ

Ամատունու, և առհասարակ հայ նախարարներն այնպի
ույժ էին կազմում և այնպիսի անկախութիւն վայելու
ներքին կառավարութեան մէջ, որ եկեղեցին ու ժողովուր
երևի շատ չէին զգում, թէ մի օտար հեթանոս թագաւո
է իշխում իրենց վերայ։

Այսպիսի կացութեան մի նշանաւոր վկան է Շահա
պիվանի ազգային-եկեղեցական ժողովը, որ տեղի
ունեցած լինի 445 թ.—ին։ Առաջին ժողովն է այդ մ
ազգային-եկեղեցական ժողովների շարքում, որի 20 կա
նոնները պահուած են մեր կանոնագրքերի մէջ. իսկ առ
կցուած կայ մի նախաբան, որը թէպէտ ժամանակակից գ
չէ և զանազան ձեռագիրներում զգալի տարբերութիւ
ներով է աւանդուած, այնուամենայնիւ հետաքրքրակ
տեղեկութիւններ է տալիս ժողովի մասին։ Նշանաւոր
նախ այն հանգամանքը, որ եպիսկոպոսների ու վարդ
պետների հետ ժողովին մասնակցում են հայ նախարարնե
ու իշխանները և դորանով հաստատւում է, որ մեր ժ
ղովներն սկզբից և եթ խառն ժողովներ են եղել, ու ա
խարհական ներկայացուցիչները նոցա մէջ իրենց պատու
ւոր տեղն են ունեցել։ Ապա տեսնում ենք, որ ժող
համար կանոնական հեղինակութիւն են ս. Գրիգոր և
Ներսէս, ս. Սահակ և ս. Մաշթոց, որոց դրած կարգի
վերահաստատելը համարում է նորա գլխաւոր նպատակ
Սակայն որչափ այստեղ էլ կրկնւում է, թէ վերջին ժ
մանակ շատ զեղծումներ են մուտք գործել եկեղեց
մէջ և կարգ ու կանոն խանգարուել է, ժողովի կանոնն
ի նկատի ունին ընդհանրապէս այն տեսակ չարիքնե
որոնք առաջ էլ անշուշտ եղել են, և գուցէ աւելի ը
դարձակ չափով, բայց իբրև սովորական երևոյթներ ա
ուել են։ Այդպէս է միշտ, մարգարէների օրերից ի վ
ժամանակի վատութեան ու զեղծումների աւելանալ
դէմ ամէնից շատ բողոքներ լսւում են հենց այն դէ
քում, երբ մարդոց բարոյական գիտակցութիւնը զօրաց
է և հետևաբար պակասած չարիքն իսկ աւելի աչք է ծ
կում ու մեծ երևում։ Ս. Սահակի և ս. Մաշթոցի աշ
կերտները, որոնք անկասկած ժողովի բուն կազմակերպո
ները ու վարիչներն էին, աւելի պարզ հասկացողութի

նէին եկեղեցւոյ պաշտօնեաների և ժողովրդեան քաղա-
ւական պարտականութեանց մասին, քան ասորիները մօտ
շակերտած իրենց նախորդները և կամենում էին այդ հաս-
ցողութեան համեմատ բարեփոխել նոցա փոխադարձ յա-
րաբերութիւնները։ Ժողովի կանոններից մի քանիսը յիրաւի
րահաստատում են ս. Ներսէսի օրով ամուսնական կեանքի
կանոնութիւնների, մեռելոց կոծի, հմայութեանց և այլ
պիսի հեթանոսական սովորութեանց դէմ սահմանուած
րգերը, որոնք երևի սկզբից և եթ ընդարձակ գործա-
ութիւն չէին գտել, բայց աւելի խստացնում են և
ոտկապէս պատիժներ որոշում եպիսկոպոսների, երէցների
նոցա մերձաւորների բարոյական զեղծումների համար։
է քանի ուրիշ կանոններ վերաբերում են եպիսկոպոս-
երի, երէցների ու վանականների հոգևոր կեանքին ու
պաշտօնական յարաբերութիւններին։ Սակայն, ինչպէս
րևում է, ժողովի գումարման բուն պատճառը եղել է
յն աղանդը, որի մասին խօսք է լինում ԺԴ. ԺԹ. և Ի.
անոնների մէջ։

Մծղնէ են կոչւում այդ աղանդի հետևողները և նոյնն
անշուշտ, ինչ որ ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան
մէջ յայտնի մեսալեանները, երկու բառն էլ աղաւաղումն
նելով ասորերէն «աղօթող» կոչման։ Այս աղանդի ծա-
գումը մինչև այժմ ծածկուած է մնացել խոր մթութեան
մէջ. նոյն իսկ ամենահին աղբիւրներն այդ մասին ոչ մի
որոշ ծանօթութիւն չունին և զարմանալի է, որ գրեթէ
նոյն խօսքերով են նկարագրում, ինչպէս մեր Փարպեցին
ր ժամանակ Հայաստանում եղած աղանդներին, որ ա-
նոյն հաւանականութեամբ նոյն աղանդի հետևողներ
էին. «Իսկ Հայոց աշխարհի աղանդ անանուն է ըստ վար-
դապետի և անգիր ըստ բանի»։ Որոշ աղանդապետ
նուն չի կրում սա, ինչպէս արիոսականութիւնը, նեստ-
որականութիւնը, մոնտանականութիւնը, և այլ քրիստո-
նէական աղանդներ. չունի իւր որոշ վարդապետութիւնը
այդ վարդապետութիւնը պարունակող գրուածներ, այլ
նորանշան երևոյթ է քրիստոնէութեան մէջ։ Ենթադր-
ւում են, որ նա յառաջ է եկել Դ. դարում՝ իբրև հա-
ակշիռ օր աւուր զարգացող կրօնաւորութեան. վերջ

արտայայտուել է նաև այն կարծիքը, եթէ նորա մէջ ն[...] բանկենդանացած պէտք է տեսնել Բ. Գ. գաղափարի Ազգ[...] գրական աղանդը: Անհաւանական չէ խոկալ էլ, որ Թ[...] այդ և թէ Միջնադարում բուն դրած ուրիշ հին աղանդ[...] ներ Մարկիոնեանք, Բարդեծանեանք և այլն) միևնոյն հո[...] յածական վիճակում գտնուելով՝ հետզհետէ միմիանց հե[...] ձուլւում էին, և երբ եկեղեցւոյ մէջ առանձին կարևոր[...] թիւն ստացան մի կողմից դաւանական խնդիրները, մի[...] կողմից կրօնաւորական կեանքն ու ծիսական բարեպաշ[...] տութիւնը՝ այդ աղանդաւորները հանդէս գային եւ[...] ջատագով այնպիսի պարզ քրիստոնէութեան, որ գլխա[...] ւորը տալիս է կրօնական զգացմունքին, և ո՛չ թէ վարդա[...] պետական նրբութիւններին, որ բարդ վարչական կազմ[...] կերպութիւն, սրբազնագործ պաշտօնէութիւն և ծէ[...] պաշտամունք չի ընդունում. Ճգնութիւնից հրաժարւում է և անխտիր հաղորդակցութիւն է պահանջում աղանդա[...] ղաց և կանանց մէջ՝ պահանջում է մի խօսքով այնպիսի կրօնական կեանք, որ հաւասարապէս մատչելի լինի գի[...] տունին և տգէտին, մեծին ու փոքրին, այր մարդուն[...] կնոջ, աստիճան ու բաժանում չդնի կրօնական համայն[...] անդամների մէջ: Ինչպէս կտեսնենք գոնէ յաջորդ գար[...] րում նոյն աղանդի հետևողները այդ տեսակ ուղղութի[...] բռնեցին, և դորանից հասկանալի է դառնում, թէ ինչ[...] նա մեծ հրապոյր ունէր ամէն կարգի և մանաւանդ ստոր[...] դասակարգի մարդոց համար, որ նա աւելի տարածուա[...] էր որևէ երկրում, ուր զգացմունքը գերակշռում է գա[...] ղութեան և յունական եկեղեցւոյ բարդ կարգերին ու բազմազան պաշտամունքին համակերպելու տրամադրու[...] թիւնը պակասում էր: Հասկանալի է այս, թէ ինչ[...] Հայաստանում մաքառումն է սկսում այդ աղանդի դէ[...] նոյն այն ժամանակ, երբ բարենորոգւում էր մտնում մ[...] եկեղեցու մէջ յունական ոգւով: Առաջ յիշել էինք ա[...] դէն, որ ամենայն հաւանականութեամբ այս աղանդին էլ պատկանում Կորիւնի ասած Բորբորիանոսները և հետևաբար ս. Մաշթոցի հանած հալածանքով նա[...] յղինջուեցան, այլ որչափ նորա աշակերտները նախանձ[...]

իւն էին ցոյց տալիս նոր կարգերը հաստատելու

այնչափ և սուրս օգնում էին քաղում հնի կողմնակիցների ցուլ դժգոհութիւնից և զօրացնում իրենց ազդեցութիւնը ժողովրդեան մութ խաւերում, մինչև հարկ եղաւ Շահապիվանի ժողովը գումարել և արտակարգ խիստ միջոցներ ձեռք առնել նոցա դէմ:

Եփեսոսի տիեզերական ժողովն արդէն բանադրել էր միջի այլոց Մեսալեաններին: Իսկ Հայոց եկեղեցին, ինչպէս տեսանք, ս. Սահակի և ս. Մաշթոցի միջոցաւ ընդունել էր այդ ժողովի դաւանական սկզբունքներն ու սահմանած կանոնները, և նոցա վերայ հաստատ մնաց մինչև վերջը: Ուրեմն Շահապիվանի ժողովը նորոգեց միայն Եփեսոսի ս. ժողովի որոշումը՝ դատապարտելով Մծղնէութիւնը, և մի քանի գործնական միջոցներ ձեռք առաւ այդ աղանդը բնաջինջ անելու համար: Նոցա վերև յիշած կանոնները աղանդի էութեան մասին շատ բան չեն ասում, բայց տալիս են մի քանի բնորոշ գծեր, որ օտար աղբիւրների համաձայն յատուկ էին Մեսաղեաններին: ԺԴ. կանոնը արգելում է եկեղեցականներին այդպէս կոչուած «տան տիկին» պահել, «որպէս սովորութիւն է մծղնէից»: ԺԹ. կանոնը ուրիշ ծանր պատիժների շարքում սահմանում է հասակաւոր մծղնէների ոտքի ջիղերը կտրել և գողենոց տանել· իսկ այդպէս պատժելու պատճառն այն էր հաւանականօրէն, որ մծղնէները՝ կրօնական ոգևորութիւն յառաջ բերելու համար՝ դերուիշների, հին սեմական նաբիների, կամ այժմեան ռուս պրիգուննների նման մոլեկան պարեր էին կազմում: Միւս ծանր պատիժն էր բռնուած աղանդաւորների ճակատին աղուեսադրոշմ դնելը, որի բուն նպատակն էր անշուշտ նշանակել և ամէնքին յայտնի կացուցանելով նոցա ինչ լինելը՝ զգուշացնել նոցա մօտենալուց և վարակուելուց, բայց արտայայտում էր գուցէ միևնոյն ժամանակ նոցա աղուէսային խորամանկութեամբ մարդիկ որսալու սովորութիւնը և այս աղանդի ներկայացրած վտանգը՝ իւր թագուն ու կեղծ բնաւորութեամբ: Ընդհանրապէս այս պատիժների խստութիւնից երևում է, որ աղանդի տարածումը մեծ երկիւղ էր ազդում, և այն հանգամանքը, որ նորա հետևողների թւում տղամարդոց և կանանց հետ յիշւում են նաև մանուկներ, որ պա-

տիժներ են սահմանուում նորան յարող իշխաններին, ն
խարարների, ոստանիկների և նոցա ընտանեաց համ
պարզ նշան է, թէ որչափ ընդարձակութիւն էր գտել
արդէն, մինչև բարձր նախարարական տները մուտք գ
ծել և առանց սեռի ու հասակի խտրութեան՝ ամէն
իւր ցանցերի մէջ առելու Իսկ եթէ ժողովը չէ քաշուա
նաև երկրի ամէնից զօրեղ իշխաններին ծանր պատուհ
ու դատապարտութեան ենթարկել՝ նշանակում է հոր
որ եկեղեցին մեծ ույժ էր զգում իւր մէջ, ինչպէս և որ
այս աղանդաւոր շարժումը ցոյց է տալիս, որ կրօնակ
ոգին մեր երկրում կենդանացել էր և կրօնական խնդ
ների համար հետաքրքրութիւն զարթել։ Մծղնէութի
այնպիսի կրօնական շարժումներից է, որ արտաքին գ
զութեան քօղի տակ օգուտ էր քաղում անկառա
ատխացի մարդու մեղկութիւնից, զգայականութիւն
հոգևոր ծուլութիւնից. կարելի է ասել՝ եւրոպական
քրիստոնէութեան դէմ նա կամենում էր դնել մի աս
կան կրօն, ինչպիսին մանիքեցութիւնն էր, ինչպէս յ
ուրիշ կերպարանքով մահմեդականութիւնը եղաւ, ք
քարոյական ու մտաւոր ուժերի մեծ լարում չէր պա
հանջում՝ չէր ստիպում իրերի ու գաղափարների խոր
թափանցել, այլ բաւականանում էր քրիստոնէութիւն
միայն ծայրեր քաղելով և թոյլ էր տալիս, որ մնացած
երևակայութիւնն ու զգացմունքները լրացնեն։ Ուստի ա
աղանդի դէմ մաքառումը մտնում է դարձեալ ս. Սահակ
և ս. Մաշթոցի արծարծած գործունէութեան այն ընդար-
ձակ շրջանի մէջ, որով նա յունական-արևմտեան ազ
կրօնն ու գաղափարականութիւնը պաշտպանեց ասիակ
աւանդականութեան և զգայականութեան դէմ՝ այն մե
արդիւնքը յառաջ բերելով, որ հայ ժողովուրդը ասիակ
հոգի վիճակ պարձաւ առ միշտ արևմտեան քաղաքակր-
թութեան յարող և այն ըմբռնելու ընդունակ մի ազգ։
Ինչպէս կտեսնենք, նոյն մաքառումը կրկնուել է պարբե-
րաբար դարերի ընթացքում և այս շրջանում մի անգամ
գծած շաւղի վիճակ մեծամեծ դժուարութիւնների դէմ
յառաջ տարուելով յաջողութեամբ՝ վաւերացնել նախ-
նիքի անունը։

**Գ. Յազկերտի հանած հալածանքն ու Հայոց ուխտը։**— *ւրդանանց պատերազմի երկու պատմիչները՝ Փարպեցի Եղիշէ, համաձայն են այն կէտում, որ հալածանքը Հայոց մ սկսուել է Յազկերտ Բ.ի թագաւորութեան ԺԲ. որին, կամ 449 թ.-ին. բայց երբ անցնում են մանրա- ամնութիւններին, զգալի տարբերութիւններ ենք նկա- ւմ նոցա պատմածի մէջ, և եթէ ուշի ուշով համեմա- նք՝ կտեսնենք որ Փարպեցու պատմածն աւելի նախ- կան է, իրականութեան մօտ և վստահելի. մինչ Եղիշէն՝ րևոր դէպքերում կէտ առ կէտ նորան հետևելով, ամէն նգամ երբ շեղուում է և տարբեր բան է պատմում, ըն տպաւորութիւնն է գործում, որ կամ ինքն իրենից ւղկեցնում է, կամ իւր նիւթը վերցնում ոչ արժանա- ւաստ աղբիւրներից։ Այդպէս՝ նորա պատմելով, Յազկերտ ը թագաւորութեան ԺԲ. տարուայ սկզբին նախ յար- ձկուում է Քուշանաց վերայ, մեծ յաղթութիւն տանում, կերն ասպատակում, շատ բերդեր ու քաղաքներ առ- ւմ, աւար ժողովում, և երբ կամենում է այդ բոլորի մար գոհութիւն մատուցանել աստուածներին՝ մոգերը րհուրդ են տալիս, որ բոլոր ազգերին զրադաշտական օնի դարձնէ։ Ընդունում է այդ խորհուրդը, Հայոց, Վրաց Աղուանից այրուձին «Պահ դրան». այն կողմում փակած ահում, զանազան տանջանքներով, անարգանքով ու խա- ականն միջոցներով ստիպում իրենց հաւատն ուրանալ։ պա Դենշապուհ անունով մէկին ուղարկում է Հայաս- ան, որ գալիս աշխարհագիր է անում, եկեղեցին հարկի ակ դնում, հարկերն առհասարակ ծանրացնում, նախա- արների մէջ բանսարկութեամբ խռովութիւն ձգում, հայ զպարապետին փոխել տալիս և տեղը պարսիկ բերում։ ունելով վերջապէս որ այս բոլորը չի օգնում՝ նոր իհրներսէհ հազարապետը գրում է իւր նշանաւոր նա- ակը։ Սակայն մի կողմ թողած այն, որ Եղիշէն ինքն իրեն ակասում է՝ երկու անգամ կրկնելով մոգերի խորհուրդը*

*կրօնափոխութեան գործը արդէն տարիներ առաջ կսուած, երեք աշխարհի այրուձին այդ իսկ նպատակով երել տուած, վերջին անգամ Քուշանաց դէմ գնալուց ռաջ բոլոր հպատակ ազգերին մոգական կրօն ընդունե*

լու հրաման արձակած ցոյց տալով,—նոյն իսկ այդ վէճ
պատերազմի և նորան հետևող դէպքերի նկարագիր
մի կերպ չի կարելի կենդանի, ժամանակակից իրակա
թեան հետ հաշտեցնել, և բոլորը, դեռ Միհրներսեհի
մակի պատասխանը, հայ նախարարների արքունիք կո
չուիլը, հաւատն ուրանալը և Հայաստան վերադառնա
էլ վրան աւելացնելով՝ մի տարուայ ժամանակամիջոցո
տեղաւորել: Պարզ է, որ եթէ նա իւր հռետորական պ
ուեստը փայլեցնելու և առաջը դրած խնդրի կարևոր
թիւնը բազմացնելու. համար չի ստեղծում շատ բ
գոնէ ժամանակները շփոթում է և գուցէ ուրիշ հանգ
մանքներում կատարուած դէպքեր այստեղ փոխադր
Գիտենք օրինակ, որ քրիստոնեաներին հաւատուրաց
թեան դրդելու համար նորա նկարագրած այնպիսի
ջոցները, ինչպէս աւագ իշխաններին ստորացնել, ստոր
րին բարձրացնել, թոշակներ կապել ևայլն, Վարդան
պատերազմից յետոյ են տեղի ունեցել: Ակներև է և
որ եթէ Հայոց այրուձին առաջուց արգելքի տակ դրա
լինէր Պարսկաստանում և հաւատի համար չարչարանք
ենթարկուած, նախարարներն այնքան պարզամիտ
գտնուէին, որ յետոյ առանց այլևայլութեան արքո
գնային, ծուղակի մէջ ընկնէին և նոր մտածէին, թէ
պէս իրենց հաւատն ուրանալով՝ հայրենիք վերադառ
ու ապստամբելով պաշտպանուեն Յազկերտի բռնութ
դէմ:

Մնում է ուրեմն հետևել Փարպեցուն և ընդու
որ առաջին անգամ մոգական կրօն ընդունելու առա
կութիւն եղել էր հայերին այն հրովարտակով, որ գրո
ինքը թագաւորը՝ Միհրներսեհի խորհրդով (և ոչ Միհր
սէհ): Փարպեցին յառաջ է բերում թէ այդ հրովարտ
և թէ հայերի տուած պատասխանի բովանդակութ
միայն, մինչ Եղիշէն ամբողջական գրութիւններ է բեր
հասցէով ու ստորագրութիւններով մէկ տեղ, և համ
տութիւնը ցոյց է տալիս, որ Փարպեցին դարձեալ ա
մօտ է իրականութեան, որչափ և Եղիշէի բերած
ւստեւոյթ դիւանական վաւերաթղթերի կերպարանք
աւի բաւական միամիտ է Փարպեցու տուած

ատրութիւնը, որով նա այս աղէտալի բանակցութեան
ն շարժառիթ համարում է Վարազվաղան Սիւնու
ատուրացութիւնը։ Վերջինս Վասակ Սիւնի Հայոց
զպանի փեսան լինելով՝ գժտուել էր նորա հետ, Գար-
գուռն էր դիմել և մոգական կրօնն ընդունելով՝ յոյս
էր վրէժ առնել իւր աներից։ Այս օրինակն իբր թե-
րել էր Պարսից հազարապետին այն միտքը, որ կարելի
նախ հայերին և ապա բոլոր հպատակ քրիստոնեանե-
մոգութեան դարձնել, որով և համոզել էր թագաւո-
գրելու յիշեալ հրովարտակը։ Սակայն նոյն իսկ Փար-
յու ուշադրութիւնից չեն վրիպում ժամանակի քա-
ղական պայմանները, որոնց մէջ ծնունդ առաւ այսպիսի
ընդարձակ ծրագիր։ Յազկերտի օրով ինչպէս Սասանեանց
անութիւնը, այնպէս և նորա հետ զուգընթացաբար
ւաջ եկած և զարգացած մոգութիւնը իրենց զօրու-
ան գագաթնակէտին էին հասել։ Նախորդ թագաւոր-
ի ժամանակ փորձեր շատ էին եղել, որ ո՛չ միայն
երը, այլ նաև Պարսկաստանի խորքերում գտնուած
ստոնեաներ՝ հոգով իրենց շատ աւելի մօտ էին զգում
ստոնեայ արևմտեան կայսերութեան, քան իշխող
տութեան, մինչև անգամ սոցա մէջ պատերազմ եղած
պքում ակներև համակրութիւն էին ցոյց տալիս առա-
ին և ուրախանում նորա յաջողութիւնների համար։
ու պետութիւնների դարաւոր մրցումը Հայաստանի
հար վերջացած կարելի էր համարել այժմ և Պարսից
անութիւնն ընդ միշտ հաստատուած նորա մեծագոյն
ի վերայ։ Ի՞նչ զարմանք ուրեմն, որ յաղթութիւն-
ով յղփացած ու օտար աղբիւրներից ևս իբրև մոգա-
կրօնի ջերմեռանդ պաշտպան յայտնի Յազկերտը՝
արատև պատերազմներով իւր պետութեան արևելեան
հմաններն ապահովացնելուց և այդպէս ամբողջ երկիրը
ղաղացնելուց յետոյ, մտածէր բոլոր հպատակ ազգե-
նոյն կերպ երկրպագութեան բերել մոգական ատրու-
ի առաջ, ինչպէս խոնարհած էր տեսնում իւր արքա-
յան գայխոնի ներքոյ. կամենար դորանով մանաւանդ
էլ պետութեան արևմտեան սահմանների վերայ գտնուող
ստոնեաների հարևան զօրեղ քրիստոնեայ երկրի հե-

կապող ներքին կապերը և սերտ կերպով միացնել երկրի հետ. վերահաստատել գոնէ այն յարաբերութի որ կար հայերի և պարթևների մէջ քրիստոնէութ առաջ, երբ Հռովմայեցիների հպատակ համարուած հա իրենց բնական հակումներով միշտ դէպի արևել թեքուում: Գուցէ Վարազվաղանի ուրացութիւնն և փոքր դեր խաղացել է այն տեսակէտից, որ կամեցե Նորանով որսալ և ընկճել նախ Վասակ Սիւնուն՝ Հայ տանի ամէնից զօրեղ իշխանին ու կառավարչին, այդ միջոցաւ միւս նախարարներին:

Ցամենայն դէպս ըստ Փարպեցու Թագաւորի մանը յայտնուել է սկզբում մի պարզ առաջարկի ձ գրի են առնուել Պարսից կրօնի տարերքը, որ հրովար հետ ուղարկելով՝ առաջարկուել է ընդունել այդ «ալ և կշիռ օրէնքը», և թողնել այն «սուտը և անօգու որ պաշտում էին հայերը, պատուիրելով այնուամենա իրենց օրէնքը նոյնպէս գրել և արքունիք ուղարկել: Հ հոգևորականութիւնն ու իշխանները ժողով կազմեցին առթիւ Արտաշատում և նոյնչափ պարզ և կտրու պատասխանով կամենում էին միանգամից փակած խնդիրը: Նոքա առարկում են, որ ինչպէս իրենց պա է ըստ մարմնաւորին ամենայն հաւատարմութեամբ սից Թագաւորին ծառայել, այնպէս և ըստ հոգևո միակ ճշմարիտ Աստուծուն երկրպագել. աւելորդ համարում երկու կրօնների քննութեան մէջ մտնել մոգական կրօնի մասին գրուածը ըմբռնում կարդում Նորա ինչ լինելը առաջուց իմանալով և ի յարգանս գաւորի չկամենալով Նորա անհեթեթութիւնը ծաղրի առ կայ դարձնել, ոչ էլ քրիստոնէական կրօնի մասի գրում, որպէսզի առիթ չտան մոլեռանդ անհասկացո րին Նորա սրբութիւնն անարգելու: Այս կէտում կապէս շատ տարբեր ոգի ունի Եղիշէի յառաջ բե պատասխանը՝ մի ընդարձակ յիշատակարան, որ պատո ւոր տեղ կարող է բռնել եկեղեցական գրականութ մէջ՝ իբրև մաքուր աւետարանական հաւատքի և հաս տուն բարոյական համոզումների արտայայտութիւն, անաբար արտայայտութիւնը այն հաւատք

ժողովմների, որոնք կռուել ամրացել էին երկարատև-
ական պատերազմների մէջ, և ոչ թէ նոցա սկզբում
աշատի ժողովականների ձեռքով բառ առ բառ այս
գրուածքը թելադրել: Այսպէս թէ այնպէս պատասխանը
շատ որոշ և համարձակ էր. հետևանքն այն եղաւ, որ
Հայոց, Վրաց և Աղուանից նախարարները արքունիք կոչ-
ուեցան և մեծ սպառնալիքներով հրամայուեցաւ նոցա
ատեղ՝ ենթարկուել անպայման թագաւորի հրամանին,
ական կրօնն ընդունել: Նախարարները մտածեցին, որ
եթէ ընդդիմանան՝ ոչ միայն իրենք չարաչար կտուժեն,
այլ իրենց երկրներն անտէր կմնան ու ոտնատակ կլինեն-
ատի որոշեցին առերես հնազանդել, մեծ դժուարու-
թեամբ և միջնորդներ ձգելով կարողացան համաձայնեցնել
ւե Վարդան Մամիկոնեանին, երդուեցին առերեսանի
րայ՝ հայրենիք վերադառնալուց յետոյ արիւն չխնայել
հաւատի պաշտպանութեան համար, ապա թէ յօժարու-
թիւն յայտնեցին կրակատուն երթալու, և պատիւներ ու
ընծաններ ընդունելով ուղևորուեցան դէպի իրենց տեղերը:
Բայց երևի Յազկերտ ինքն էլ շատ վստահ չէր նոցա ան-
կեղծութեան վերայ, որ իւր մօտ պատանդ պահեց Վրաց
Աշուշա Բդեշխին և Հայոց մարզպանի երկու որդիներին:

Նախարարների հետ Հայաստան էին եկել նաև բազ-
մաթիւ մոգեր, որոնք նոցա արդէն կրօնակից համարելով՝
յոյս ունէին նոցա օգնութեամբ ատրուշաններ կանգնեց-
նելու երկրի գլխաւոր կենդրոններում և ժողովրդին հեշտ
եղանակով դարձի բերելու: Բայց հայ ժողովուրդը ոչ միայն
նոցա երեսը տեսնելու տրամադրութիւն չունէր, այլ և
նախարարներին ընդունեց իբրև ուրացածների՝ իրենց
տանեաց դիքերը վերադառնալու անարժան ուրացողնե-
րի: Լացով ու սգով էին դիմաւորում սոցա ամէն տեղ,
ոռա անգամ յայտնի թշնամանք ցոյց տալիս: Տեսնել
սրբազանների վիշտը, ստորադրեալների արհամարհանքը,
ժողովրդական ընդհանուր մեղադրանքը, և ստիպուած
նել կեղծելու, առերէ կրօնի պաշտող ձևանալու՝ շատ
ծանր պիտի գար հարկաւ հայ նախարարներին, մանաւանդ
ջահելներին, որոնք մանկութիւնից ամենախնամոտ
քրիստոնէական դաստիարակութիւն էին ստացել, ինչպէս

օրինակ Վարդան Մամիկոնեան: Սա չկարողանալով տա
այսպիսի դրութիւն, իսկ յայտնի ապստամբութեան հա
հարկաւոր ույժ ու պատրաստութիւն իւր երկրի
չգտնելով՝ ժողովեց իւր հարազատներին ու մերձաւո
րին և առաջարկեց՝ տուն, կալուածք, ամէն ինչ թո
և Յունաց բաժինը գաղթել: Սակայն մինչ նա իւրայի
րով այս պատրաստութեան վերայ էր՝ Վասակ մարզպ
ու այլ իշխաններ իմացան, ժողովուեցան, խորհուրդ
Պարսկաստանում արած ուխտը նորոգեցին և աւետար
կնքելով մի քանի աչքի ընկնող քահանաների ու իշխ
ների ձեռք տուին, ուղարկեցին, որ նորան համոզեն,
իրենք ամէնքը պատրաստ են միաբան սրտով ու զօր
թեամբ հայրենի հաւատքը պաշտպանելու. մինչ եր
Մամիկոնեանք, որ այսպիսի գործերում սովորաբար առ
նակարգ տեղ էին բռնել՝ թողնէին հեռանային, իր
ուխտը կքանդուէր և ամբողջ աշխարհին ու եկեղեց
մեծ զրկանք կլինէր: Վարդան համոզուեցաւ, թողեց
մտադրութիւնը, վերադարձաւ Հայոց բանակատեղի
նախարարների հետ միաբանելով, իբրև զօրաց հրամա
տար՝ դիպող առթի էր սպասում, ապստամբութ
դրօշը բարձրացնելու:

**Դ. Հայոց ապստամբութիւնը եւ երկպառակութիւն ի
շխանների մէջ:**—Փարպեցու նկարագրութիւնից երևու
որ հայ նախարարները միաբան լինելով այն կէտում,
պէտք է դիմադրել Պարսիկներին և թոյլ չտալ բռնի
դական կրօն մտցնելու հայերի մէջ, տարբեր հայեաց
ունէին դիմադրութեան եղանակի նկատմամբ: Ոմ
անտանելի համարելով ուրացութեան քօղի տակ մն
պատրաստ էին, հոգևորականութեան և նորան հետ
բազմութեան հետ՝ օր առաջ յայտնի ապստամբութ
դիմել և ո և է գնով իրենց վերայ եղած արատը մաք
ուրիշները, որոնց գլուխ Վասակ մարզպան, կկամեն
երևի ըստ կարելւոյն երկար մնալ նոյն քօղարկեալ դ
թեան մէջ; առերես համակերպել մոգերի հետ և դի
ժամանակի սպասել, մինչև կարելի լինէր կամ Պա
[illegible] համոզել՝ յետ առնելու իւր անտեղի հ
րօնական ազատութիւն շնորհելու,

[illegible]ւնից օգնութիւն գտնելով և ապստամբելով՝ կրօնական
[illegible]զատութեան հետ նաև քաղաքական ազատութիւն ձեռք
[illegible]րել: Յայտնի է յամենայն դէպս, որ ժամանակի քաղա-
[illegible]կան պայմանները խիստ աննպաստ էին ապստամբու-
[illegible]եանը փութացնելուն, և Փարպեցին ինքը փաստեր է
[illegible]բերում կասկածելու այն մասին, թէ յիշեալ երկրորդ
[illegible]րգի նախարարները սկզբից և եթ սրտով յարած են
[illegible]եղել մոգութեան և նենգաւոր խորհուրդներ ունեցել,
[illegible]չպէս պնդում է նորա հետ մանաւանդ առանձին Թա-
[illegible]վ Եղիշէն: Նա վկայում է նոյն իսկ, որ միւս խմբին
[illegible]ակողներն էլ բոլորեքեան զուտ գաղափարական
[illegible]տումներով չէին առաջնորդուած, յիշելով գոնէ գլխա-
[illegible]ներից մէկի՝ Վահան Ամատունու համար, թէ Վասակ
[illegible]րզպանի հետ ոխ ունէր և աշխատում էր ապստամբու-
[illegible]իւնը արագացնել՝ միայն նորա համար, որ մարզպանը
[illegible]ջոտեղ տուժէր: Իսկ վերջինս յիրաւի ամէնից աւելի
[illegible]պատճառներ ունէր ըզուշութեամբ շարժուելու: Չէ՞ որ նա
[illegible]էր երկրի կառավարիչը և պատասխանատուն Թագաւորի
[illegible]առաջ անցած դարձածի համար. չէ՞ որ նորա երկու որ-
[illegible]իքը պատանդ էին Թագաւորի մօտ և Յազկերտի նման
[illegible] դաժան բռնաւորի համար ոչինչ չարժէր՝ չնչին կաս-
[illegible]կածից նոցա գլուխները կտրել տալ: Փարպեցու պատմե-
[illegible]լով՝ այս պարագան լաւ ըմբռնում էր օրինակ ուխտեալ-
ների պարագլուխ Վարդան Մամիկոնեան, ուստի դէմ էր
գնում Վահան Ամատունու ստորանքներին և իւր կողմից
ջանք չէր խնայում ապստամբութեան խորհուրդը հնա-
րաւոր չափով ծածկուած պահելու: Այս այսպէս լինելով.
եթէ Կորիւնի վկայութեանը, որ թէպէտ ս. Մաշթոցի
վարքը գրել է Վահան Ամատունու մահից՝ ուրեմն և
Վարդանանց պատերազմից յետոյ, և Վասակի բոլոր
արարքներին տեղեակ եղել, այնուամենայնիւ, ինչպէս
առաջ ակնարկեցինք, մեծ գովասանքով է խօսում նորա
մասին,—առանձին կարևորութիւն իսկ չտանք, ի նկատի
ունենալով, թէ ինչպիսի մեծ գովասանքով է խօսում նա
միաժամանակ Վահան Ամատունու մասին, դարձեալ պիտի
խոստովանինք, որ մեր պատմութիւնը շատ խիստ, գուցէ
և բոլորովին անարդար, դատաստանի է ենթարկել Վա-

սակին՝ Նորան իբրև մի հրէշ և ուրացողների տիպար
կայացնելով։ Հաւանականաբար շատերը, որոնք արգար
անուն են վաստակել՝ նորա տեղ լինելով, Նորանից ս
բեր ընթացք չէին բռնի։ Եթէ Նա առաջիններից մէկն
որ արգելք եղաւ Վարդան Մամիկոնեանի գաղթել
Նորա համար չէր երևի, որ մաքուր գրած ունէր
աշխարհը մոգութեան դարձնել և ինքն էլ մոգ մնալ
ուխտեալներին ասպարիզից հանելով՝ կատարեալ
լինել այդ աշխարհին։ Մոռանալու չէ նաև այն, որ
երկու պատանդ որդիները գերեալ և ուխտապահ նա
քարների թւում էին Վարդանանց պատերազմից յե
իսկ Նորա երէց որդին՝ Բաբգէն, Վահան Մամիկոնի
գլխաւոր աջակիցներից մէկն էր և մինչև վերջը հաւա
րիմ մնաց Նորան։

Երկպառակութեան սկիզբը դրուեցաւ անշուշտ
ժամանակ, երբ Վարդան և ուրիշ իշխաններ՝ նկատե
նելով, որ իրենց հաւատարացութեան առերես լինե
հայերի մէջ ամենուրեք մոգերին ցոյց տուած արհա
հանքը երկար ծածուկ մնալ չէր կարող, կամ որ վե
ներս իմաց տուած կլինէին արքունիքին իրերի իսկ
դրութիւնը և մի նոր ծանր փորձանք կբերէին
գլխին, հոգևորականութեան հետ մէկ տեղ, Վա
ծածուկ, խորհուրդ կազմեցին, թէ ինչպէս հրապ
հանեն իրենց ապստամբութեան ծրագիրը։ Թէպէտ յե
Նոցա կասկածը մարզպանից այնչափ մեծ էր, մինչ չ
չար մահով սպանել տուին ոստանիկին, որ գնացել
խորհրդի մասին յայտնել էր Նորան, բայց դարձեալ
չկայ ընդունելու, թէ այն պատճառաւ էին կասկա
որ Նորա նենգաւոր և սրտանց ուրացող լինելուն
մոլորուած էին. բաւական էր, որ Նորա՝ իւր որդւոց
գերութեան պատճառով, ապստամբութիւնն արագացն
հակառակ լինելը գիտէին, ուստի պիտի մտածէին,
իւր ունեցած մեծ ազդեցութեամբ կարող էր իրենց
գերը խափանել։ Եթէ նա սկզբում այդ չարաւ, այլ
խորհրդակիցների հետ միաբանելով՝ երդուեց ու իւր
[illegible]ջմից աւետարանի վերայ, որ պէտք է պաշտ
[illegible]ն հաւատը, եկեղեցի գնաց, միւսների

կողմ ձգեց ուրացութեան դիմակը և սկսեց պատրաստութիւններ տեսնել Պարսիկներին դիմադրելու համար, ուցէ յիրաւի հանգամանքների ճնշման ներքոյ այդպէս քուեց, ստիպուած, մինչ արդէն մաքում դրել էր պանի բանակցութեան մէջ մտնել արքունիքի հետ և որդիների կեանքն ու իւր իշխանութիւնը ապահովե-՝ ի դերև հանել ապստամբութեան խորհուրդը։

Ցամենայն դէպս ապստամբութիւնը ծածկել այլ ևս քելի չէր։ Մինչ Նախարարները եկեղեցում երդւում էին ում և ուխտ հաստատում, ամբոխը յարձակուել, ատ-շանը կործանել և մոգերին ձերբակալել էր, որոնց մեծ ւին յետոյ սպանեցին։ Պէտք էր այդ բոլորի համար ստասխան տալ Թագաւորին, և շատ հաւանական է, Վասակ շտապեց գրել այս մասին արքունիք, մեղքն էշի վերայ ձգել և իւր անձն արդարացնել։ Շատ հաւանական է, որ նա դաւաճան դիտաւորութիւններով րգան Մամիկոնեանին՝ Խորէն Խորխոռունու, Արշաւիր մսարականի և ուրիշ իրենց հաւատին առանձնապէս ւատարիմ և ջերմեռանդ ճանաչուած նախարարների Աղուանից աշխարհն ուղարկեց, իսկ իւր սխերիմ նամի Վահան Ամատունուն քաջարի Հմայեակ Մամիկեանի հետ դեսպան կարգեց՝ կայսեր մօտ գնալու և ա օգնութիւնը խնդրելու համար, հեռացնելով այդպէս երից բոլոր նոցա, որոնք լուրջ խոչընդոտներ կարող էին նել իւր ապագայ ձեռնարկութիւնների դէմ։ Սակայն է ի նկատի ունենանք, թէ որչափ վտանգաւոր խաղ էր ա կողմից իւր կնքով դրոշմած թղթեր ուղարկել Յուց կայսրին և Հայաստանի սահմանակից նահանգների րը կուսակալ իշխաններին՝ հրաւիրելով նոցա զինութեամբ օգնել հայերին Պարսից դէմ ապստամբելու համար, մի խաղ, որը բացուելով կարող էր նորան շատ ինգ նստել, ինչպէս և իրաք թանգ նստեց վերջում և ա կորստեան պատճառ եղաւ, պէտք պիտի մտածենք, նա իսկապէս երկդիմի դեր էր բռնել։ Եթէ ասենք, սպասուած օգնութիւնը ստանում էին արևմուտքից, կալին ապստամբութեան գործը յաջողութեամբ գլուխ նել և Պարսից լուծը թօթափել, գուցէ արդեօք նա

ու այլ կողմնակի նկատումներ մի կողմ կդնէր և ...
նոյն եռանդով ձեռնամուխ կլինէր այդ գործին, ...
իրեն պէտք է հասնէր փառքի մեծագոյն բաժինը. ...
Եթէ ոչ մի կողմից օգնութիւն չգտնէին և յաջողութ...
յոյսը կտրուէր, այն ժամանակ բացարձակապէս կզա...
ճանէր իւր ուխտակիցներին և համատարմութիւն ...
տալով Պարսից արքունիքին՝ կարդարանար նորա ...
կամ թերևս աւելի մեծ պատուի ու իշխանութ...
կարժանանար: Իսկ իրերը շուտով այնպիսի ընթացք ...
ցան, որ դժուար չէ հասկանալ, թէ ինչու նա թ...
առաջին ծրագիրը, եթէ ունեցած համարենք այն, և գ...
երկրորդը հակուեցաւ :

Վարդանի մղած առաջին ճակատամարտը Պար...
դէմ Աղուանից երկրում, Կուր գետի ափին, շատ յ...
էր: Զնայելով որ թշնամիներն անհամեմատ առաւել ...
թուով էին փոքրիկ գնդից՝ կատարեալ յաղթութ...
տարաւ նա, ցրուեց ու նոցա դուրս քշեց դաշն...
քրիստոնեաների երկրից, անցաւ Կուր գետը և մինչև ...
պահակը հասաւ, որ Պարսից իշխանութեան հիւսիս...
սահմանը պաշտպանում էր Հոներից, կոտորեց պա...
պահապաններին և բանակցութեան մէջ մտնելով Հո...
հետ՝ կարողացաւ դաշն հաստատել սոցա հետ, խոստ...
առնել, որ օգնութիւն հասցնեն Հայերին Պարսից ...
Դորա փոխարէն կատարեալ անյաջողութեան հանդի...
կայսեր մօտ ուղարկուած դեսպանութիւնը: Թէոդո...
կայսրը վախճանուել էր 450 թ.ի ամառը՝ հենց այն ...
մանակ, երբ Հայոց դեսպանները ճանապարհին պէտ...
եղած լինէին. նորա յաջորդը Մարկիանոս շտապեց ...
բանհաստատել խաղաղութիւնը Պարսից հետ և զբաղ...
էր արևմուտքում այնպիսի խնդիրներով, որ ամեն...
տրամադրութիւն չունէր հայերի պատճառով ծանր պ...
տերազմի մէջ մտնելու: Հայ դեսպանները առ ժամ...
մայրաքաղաքում դեգերելուց յետոյ ձեռնունայն վ...
վերադառնային: Այդ դէպքում զուր էր օգնութիւն ...
ասել նաև Հայաստանի արևմտեան և հարաւային ...
նակից նահանգների իշխաններից: Հաւանականաբար ...
դոս կայսեր մահը լսելուց և դորա հետևանքները կշռե...

տոյ միայն Վասակ բացարձակ կերպով դրժեց տուած խօսքին: Նա շուտով միացրեց իրեն հետ Հայաստանում մնացած նախարարներին, գրաւեց բերդերը, Մամիկոնեան, Մոսարակեան և այլ հակառակորդ իշխանական տոհմերի մանկահասակ զաւակներին ժողովեց և իբրև պատանդ-նեաց երկրի բերդերը փոխադրեց. այդպիսով հաւատարմութեան ամէն տեսակ երաշխիք ընծայեց Պարսից արքունիքին՝ և շտապեց յետ նուաճել երկիրը նորա մար:

Երբ այս բոլորը լսում է Վարդան, շտապում է ինքն էլ իր ընկերներով և զօրքով Հայաստան վերադառնալ: Փարպեցու պատմութիւնից պարզ չի երևում, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ էին այնուհետև երկու հակառակ կողմի նախարարները: Նոքա որ և է ընդհարում չեն ունենում, իրար դէմ չեն ելնում իբրև երկու պատերազմող բանակներ, այլ վերև նկարագրածի պէս իբրև երկու հակառակ կուսակցութիւններ են ներկայանում, որոնցից իւրաքանչիւրը տարբեր քաղաքականութեան էր հետևում իր պետութեան նկատմամբ: Ուխտադրուժների պարագլուխը Վասակ չի քարոզում, թէ պէտք է մոգութիւն ընդունել, այլ մարդիկ է ուղարկում ամէն կողմ, քահաներ է ուղարկում և հաւատացնում ժողովրդին, թէ ինքը խոստանում է ընդունել թագաւորից, որ քրիստոնէութեան պաշտամունքը բոլորովին ազատ կթողնուի և մինչդ տեղի ունեցած ապստամբական շարժումները կներուին, յորդորելով միայն՝ չհետևել Վարդանին և կորստեան տանել երկիրը: Խաբէութիւն էր արդեօք այդ հաւատացումը նորա կողմից, դժուար է հաստատ պնդել: ...ւցէ յիրաւի Յազկերտ տեսնելով, թէ ինչպիսի ընդարձակ ծաւալ ստացաւ ապստամբութիւնը, և աւելի ծանր հետևանքներից վախենալով՝ զիջել էր և պատրաստ էր յետ ...ելու կրօնափոխութեան հրամանը, ինչպէս և յետոյ արեց: Սակայն Վարդանի կողմնակիցները պատճառներ ունէին չհաւատալու եղած խոստումներին: Նոր էին փորձում նոքա Պարսից նենգութիւնը և մի անգամ ...ա զօրքի դէմ ուրիշ ձեռքին կռուելուց յետոյ՝ աւելի ...տուոր պէտք է համարէին դարձեալ ուրիշ ձեռ

նոցա դէմ ելնել և կամ իբրև յաղթական խաղաղութ-
պայմաններ թելադրել, կամ ազնիւ մահով վկայել ի-
տուրը հաւատի ճշմարտութիւնը, փոխանակ ստորանա-
և անագորոյն բռնաւորից գթութիւն հայցելու։ Եւ պա-
տմութիւնը այս անգամ էլ պէտք է ապացուցանէր, ինչ-
պէս շատ անգամներ, թէ իրաւունքը նոցա կողմն
որոնք իրենց խղճի և համոզման ձայնին էին հետևո-
ւմ, որոնք նուրբ հաշիւներ չէին անում և առաջ զգուշու-
թեամբ անձնական շահերը նախատեսում՝ այնտեղ,
պարտաճանաչութեան զգացումը պարզ կերպով ե-
րևում էր անձնէլքը և ազնուութիւն ներշնչում։

Ե. Աւարայրի ճակատամարտն ու անմիջական հետևա-
նքը։—Դժուար է որոշել, թէ ինչպիսի՞ դերք էին բռ-
ուխտանենգ նախարարները պատերազմի նախօրեակին և
մասնակցութիւն ունեցան բուն պատերազմի կամ նո-
հետևող անցքերի մէջ։ Փարպեցու պատմութիւնից տ-
եսնում ենք միայն, որ ս. Վարդան Աղուանից երկրից վե-
րադառնալուց յետոյ առանձին մի գործի չձեռնարկեց,
իւր հետ եղած իշխաններին ու զօրքին թոյլ տալու էլ
աները ցրուել և վերահաս ձմեռն անցկացնել՝ պատ-
որ գարնան սկզբին անշուշտ Պարսից զօրքը կգար ապ-
ստամբութիւնը ճնշելու համար և հարց կլինէր նորից
զօրուել ու դիմադրաւել։ Հաւանականօրէն Վասակ մա-
րզպանն ու ուխտանենգ նախարարներն և իրենց եր-
ներն էին քաշուել և սպասում էին իրերի վախճանին
պատերազմից առաջ ուխտադրուժներ հետ որ և է կ
հարում ունեցան և ոչ յետոյ իրենց բերդերից էլ
մինչև որ պարսիկները տիրեցին կատարելապէս Հայոց
խարհին և իւրաքանչիւրը նոցանից շտապեց իւր գր-
արդարացնել։ Բոլոր այն թշնամական գործողութիւնն-
որ վերագրում է Եղիշէն Վասակին ու իւր ընկերներ-
ինչպէս և այն աւերածութիւնները, որ իբր գործ-
Վարդան ուխտանենգներին պատժելու և մեղադ-
ոչնչացնելու համար՝ ուշ ժամանակի պատկերացու-
պէտք է համարուին։ Ուխտանենգները հարկաւ, ե-
երկրի թշնամիները չէին և ոչ մի պատճառ չունէին
[illegible] այն նախարարներին, որոնց մէջ ունէին մաս

…ձիաններ, ցեղակիցներ էին. այլ միայն անձնական նկա-
տումներով առաջնորդուած՝ անխորհուրդ էին համարում
անտեսել այնպիսի շարժման, որից օգուտ չէին սպա-
սում: Նոցա պատճառած մեծ չարիքը հենց այն էր,
միաբանութեան ուխտը քակտելով՝ ուխտապահներին
… բոլորովին ջլատեցին և նոցա ձեռնարկութիւնը սկըզ-
…և եթ անյաջողութեան դատապարտեցին, մինչ եթէ
միաբանութիւնը պահպանուած լինէր և ամբողջ եր-
… մի շնչով ելնէր հաւատի պաշտպանութեան համար
…րեց դէմ ելնէր՝ գուցէ նոյն իսկ պատերազմի չհաս-
…նէին. այլ Պարսից թագաւորը մի անխորտակելի զօ-
րութիւն տեսնելով իւր դիմաց և չկամենալով զուր տեղն
…րթել իւրեն հպատակ ու հարկատու մի երկիր՝ տեղի
կտար և քրիստոնէութիւնը ազատ կթողնէր, հայերի հա-
…ւատքի ձեռնատու և պատուաւոր պայմաններով, քան
…ու վերջը՝ այնչափ կոտորածներից և աւերածութիւն-
ներից յետոյ:

451թ.-ի զատիկը դեռ նոր էին կատարել հայերը,
և լուր հասաւ, որ հայաստանի հարաւ-արևելեան կող-
մից Պարսից զօրք է գալիս և մտել է արդէն Հեր ու Զար-
ևանդ գաւառները: Հայոց Սպարապետը ս. Վարդան
…պետ ուխտապահների գնդերը իւր մօտ ժողովել և
նոցա դէմն արշաւել, որպէս զի միջոց չտայ նորան
…ւր խորքը մտնելու: Առանձնար անուանով մի սեպուհի
…տունեաց ազգից փոքրիկ հեծելագնդով նա առաջ ու-
ղարկեց, թշնամու զօրութեան և դիրքի մասին ճիշտ տե-
ղեկութիւններ ստանալու նպատակով, որ և ընդհարուե-
լ Պարսից վերջապահների հետ յաղթութեամբ վերա-
դարձաւ և իւրայիններն աւելի խրախուսուեցան և քաջա-
լերուեցան: Պարսից զօրքը Մուշկան-Նիւսալաւուրտ զօ-
րավարի առաջնորդութեամբ արդէն Արտազ գաւառն էր
…տել և Տղմուտ գետի հովտում, Աւարայր գիւղի մօտ՝
…մուր դիրք գրաւելով բանակ դրել. հայերն ևս եկան
…նտեկոստէի նախորդ ուրբաթ օրը դիմացը բանակեցան:
…յոց բանակի մէջ էր ս. Յովսէփ հայրապետը ս. Ղևոնդ-
երէց և ուրիշ բազմաթիւ հոգևորականների հետ, որոնք
…աք առաջ երեկոյեան ժամերգութիւնը հանդիսաւոր

կատարեցին և ամբողջ գիշերը հսկումով անցրին. և
Ղևոնդ իւր ճարտարաբան լեզուով քարոզում ու յո
էր կարդում նոցա՝ անվեհեր առաջ դիմել, նահատա
կութեան պսակն ընդունելու։ Առաւօտեան լուսաբացին
բոլոր զօրքը ս. հաղորդութիւն ընդունեց, և այսպէս հո
գեպատրաստուած, հոգևոր յաղթանակի յուսով՝ պատե
մի պատրաստուեցան։ Ս. Վարդան իւր զօրքը երեք
բաժանեց. մէջին մասն ու աջ թևը յանձնեց իւր և
գլխաւոր հրամանատարներին՝ Ներշապուհ Արծրունուն և
Խորխոռունի Խորէն մախազին, իսկ ինքն պահեց ձախ
Զնայելով իրենց թուի անհամեմատ սակաւութեան
նամիների հանդէպ՝ հայերը մեծ ոգևորութեամբ յա
կում գործեցին և սկզբում յաջողութիւն ունեցան.
երբ մի մասը դաւաճանեց և ի փախուստ դարձաւ՝ լք
առաջ եկաւ նոցա շարքերում, որից օգտուելով պա
ները ամէն կողմից վրայ տուին, շատերին առ տեղ
խողխողեցին, շատերին էլ հալածելով ձերբակալեցին
կոտորեցին։ Պատերազմի դաշտում ինկաւ քաջ նահա
ներ ընկան՝ ինքը Մեծ սպարապետը, Կարմիրն Վար
Խորէն Խորխոռունին և ուրիշ եօթն աչքի ընկնող իշ
ներ։ Իսկ բոլոր սպանուած հայերի թիւը մեր պա
ները հաշւում են 1036, թշնամիների կողմից ընկած
մարելով 3544 հոգի։

Այսպէս, անյաջող ելք ունեցաւ պատերազմը
յերի համար, բայց մեծ էր նորա պատմական նշանա
թիւնը և յարատև նորա թողած բարոյական ազդ
թիւնը։ Զուր տեղը չէ, որ Հայոց եկեղեցին այս պ
րազմում զոհուած բոլոր 1036 վկաներին սուրբերի կ
դասեց և տարէցտարի առանձին հանդէսով տօնա
նոցա յիշատակը. պատահականութիւն չէ, որ և
պատմութեան նման մի ոգևորեալ գրուածք յառաջ
այս արտաքոյ կարգի նահատակութեան տպաւ
թեան ներքոյ և անսպառ ոգևորութեան աղբիւր
ձու դարէդար յաջորդող սերունդների համար, ս.
դանի անունը դարձրեց քաջութեան, վեհան
թեան, անյողդողդ հաւատոյ և անձնուէր հայրենա
[illegible] անփոփոխ հերոսի անուն։ Վարդանանց պատ

…աւլ մի անօրինակ գործ էր ասիական հողի վերայ՝ ան-
…ր բռնութեան և ստրկաքարշ աղքատութեան մթնոլոր-
տում: Նա ապացուցեց որ բռնաւորները միշտ զօրեղինը չէ,
եթէ մէկը պատրաստ է աւելի շուտ իւր անձը դնել,
… գոյքը, փառքը՝ ամէն ինչ զոհել, քան տեղի տալ
…նութեան, կնշանակէ նորա մէջ մի ոյժ կայ, որի հետ
…շիւ պէտք է առնեն աշխարհի ամենազօրեղ բռնաւոր-
…ը: Համոզմունքի ոյժը, որ երբ անպարտելի է մնում
…հատի մէջ՝ այնչափ մեծ տպաւորութիւն է գործում շըր-
ջապատի վերայ, գերմարդկային բնաւորութիւն ընծայում
նահատակին և երկնային լուսոյ պսակով զարդարում նորա
գլուխը, որչափ տպաւորիչ պէտք է լինէր, երբ ամբողջ
ժողովուրդ նահատակութեան ասպարէզ էր մտնում և
…ունակ գործնում՝ ամէն մարդկային հաշիւ մի կողմ
դնելով, ահաւոր թշնամու դէմ խիզախելու: Այն հան-
գամանքը, որ մի բուռն հայեր՝ առանց արտաքին օգնու-
թեան և ներքուստ երկպառակուած, Պարսից հսկայական
…ութեան ընդդիմադրել համարձակուեցան և պարպա-
…ն կռուել հանդերձ՝ իրենց հաւատն ու իրենց պատիւը
պաշտպանել կարողացան, որ ընտրած պատերազմին հե-
տևող արհաւիրքներին՝ քրիստոնէութիւնը Հայաստանում
…ղ կեցոն մնաց և պատերազմում ընկած նահատակ-
ների զաւակները նոցա հաւատով մեծացան, մի անջնջելի
…ս էր եկող սերունդների համար, որ հայի հաւատը
…րքին ծայր տկարութեան ու նեղութեան մէջ անընկ-
ճելի պիտի լինէր և անսասուեր պայծառութեամբ փայլէր
ասիական խաւար հորիզոնի վերայ:

Պատերազմից յետոյ պարսիկները հարկաւ անպատիժ
…ին թողնի ապստամբներին: Յազկերտ, ընդունելով Մուշ-
ան-Նիւսալաւուրտի զեկուցումը պատերազմի ելքի մա-
ն՝ շտապեց Ատրորմիզդ անունով մի պարսիկ մարզպան
ղրկել, որին հրաման տուաւ՝ քրիստոնէութեան պաշ-
տպանները ազատ թողնել և կաշառ մէջոցներով ու խո-
րամանկ հնարներով յետ նուաճել երկիրը: Սա անգ հաս-
ցէն պէտ թղթեր ուղարկեց ամէն կողմ և հրաւիրեց
…պլեցեան, որ հանգիստ սրտով իւրաքանչիւրն իւր
…բնակավայրերը ետևից գնայ և կրօնական հալածանքներ

ամենևին երկիւղ չունենալ: Բայց կոյրն իշխանները ապ-
ստամբութեան ղեկավարների, որոնց դեռ զինու զօր-
թեամբ նուաճել պէտք էր: Այդպէս՝ ամենավտանգա-
թշնամի կարող էր համարուել ս. Վարդան սպարապե-
եղբայր Համայեակ Մամիկոնեան, որ Բիւզանդիոնից ուն-
նաձեռն վերադառնալով՝ Տայոց աշխարհի ամուր կողմ-
էր ապաւինել, և իւր շուրջը ժողովելով փախստա-
իշխաններին և զօրքի բաւական պատկառելի մի քանակ-
թիւն պատրաստուած էր լուրջ ընդդիմադրութիւն ց-
տալու: Մարզպանի կողմից ուղարկուած զօրքը, որին
ուղեկցում էին փախստականների գիւղերին լաւ ծ-
ղեակ դաւաճան հայ իշխաններ՝ այնպէս անակնկալ կ-
պով վրայ հասաւ, որ Համայեակ իշխանն ու իւրայինք
ուանց որ և է կասկածի Պարխար լեռներից իջել, մի գ-
ղում գիշերում էին: Սոքա լուսաբացին իրենց յանկ-
շրջապատուած գտան թշնամիներով և թէպէտ անձա-
ըեցին ձի նստել ու զէնքը ձեռին քաջութեամբ պաշտպա-
նուել, բայց երբ մահացու վէրքով ընկաւ ազնիւ Համայ-
միւսները յուսահատ ցանուցիր եղան, և ասպարէզը մ-
Պարսիկներին: Այնուհետև Ատրորմիզդ աւելորդ համա-
զէնք գործածել մնացած ապստամբ նախարարների գ-
այլ սուտ երդումներով և պատիր խոստումներով յա-
ղեց նոցա ցած բերել իրենց բերդերից և ձերբակալ-
բոլորին, որոնց մէջ նշանաւոր էին Ներշապուհ Ա-
րուենին, Արշաւիր Կամսարականը, Վահան Ամատունին
Պարսից դուռն ուղարկեց: Ձերբակալուեցան և նոցա եւ
թագաւորի առաջ դատուելու ուղարկուեցան նաև
հոգևորականութեան պարագլուխները՝ ս. Յովսէփ
Ղևոնդ, ս. Սահակ Ռշտունեաց եպիսկոպոսը, Սամ-
Աբրահամ, Մուշէ և Արշէն երէցներ և Քաջաջ սարկա-
Ականաւոր ոչ ոք մնաց այդպիսով երկրում, որ ս. Վ-
դանի դատը շարունակէր:

Զ. Վասակի դատաստանը եւ ս. Ղեւոնդեանց նահ-
կութիւնը:—Պատերազմից անմիջապէս յետոյ պարսիկ մ-
պան նշանակուելը ցոյց է տալիս արդէն, որ Վա-
աւելի կորցրել էր իւր վարկը թագաւորի առաջ, քան
իւր դաւաճանութեամբ նոր փառահութիւն գտաւել.

ի երբ կայսեր իշխանների և հոգևորականների ետևից ըն էլ շտապեց Պարսից դուռը գնալ, ո՛չ թէ նորա համար էր, անշուշտ, ինչպէս Փարպեցին և նորան հետևող պատմիչներն են բացատրում, որ իբր իւր ցոյց տուած ջանասէր ծառայութիւնների փոխարէն թագաւորական պատւութիւն ձեռք բերէ, այլ որ ընդհակառակն իւր ախտաւոր գիրքը վերահաստատէ։ Հաւատարմութեան նոր նշան և իւր վերայ եղած կասկածները փարատելու միջոց պէտք է լինէր նորա կողմից նաև Մամիկոնեան և Կամսարական իշխանազուններին Պարսից դուռ ուղարկելը, որոնց գերել էր ս. Վարդանի Աղուանից երկրում անուած ժամանակ և որոնց Պարսկաստանում գտնուիլը կատարուում է յետագայ շրջանի պատմութեան։ Փարպեցին յառաջ է բերում կայսեր հոգևորականների և սակի մէջ ճանապարհին տեղի ունեցած մի միջադէպ, զարմեալ ապացուցանում է, թէ վերջինս աներկբայելի ուրացող չէր դեռ բոլոր հայերի աչքում և ամէնքին յայտնի թշնամական գործողութիւնների ու ազգադաւ արարքների համար չէր մեղադրուում։ Երբ սա [illegible] հասնում է, իջնում է ձիուց և յարգանքով ողջունում։ այդ ս. Ղևոնդի հետ մանրամասն խօսակցելով ուղեկցում է նորա բանակին տեղ, մինչև իսկ մօտիկ իջևանում իւր մօտ ճաշելու հրաւիրում. այդ թէ բաժանուելիս ս. Ղևոնդ եռանդ ձայն է տալիս և կշտամբում մարգարէանում, որ Վասակ գլուխն ուսերի վերայ այլ Հայաստան պիտի չվերադառնար։ Այս մարգարէութիւնը եթէ մի կողմից արտայայտութիւն էր այն հաւատմունքի, որ ո՛չ մի չարիք՝ առաւել ևս ուխտադրժով կատարուած երդման դրժելն ու ս. եկեղեցուն դաւաճանելը, անպատիժ մնալ չէր կարող, միւս կողմից անհերքելի արժանիք էր այն դիտողութեան, որ դաւաճան իշխանի հեղինակութիւնը այնքան բացուէր և Պարսից Թագաւորն իմացաւ, որ նա սխալուած կամակից էր եղել ս. Վարդանին, ապստամբութեան համար բանակցութիւն ունեցել տարբեր ձևով, և միայն հանգամանքների բերմամբ փոխուել է ու Պարսից հաւատարիմ մնացել։

Այսպէս դանէ կատարուում է գուշակութիւնը։ Եր

կայսեր նախարարներն որքանիք հասուն և թագաւոր-տանանի առաջ հնազանդեցան՝ հայոց աղաւեցաւ. Նոցա հար-կաւ, թէ ինչպէ՞ս էին համարձակել տիրող իշխանութեան դէմ ապստամբել: Այն ժամանակ Արշաւիր Կամսարականը բոլորի կողմից պատասխանելով՝ մի առ մի նկարագրեց, թէ ինչպէ՞ս հաւատաւ բացութեան անտեղի պահանջը թա-գաւորի կողմից անտանելի դրութեան մէջ էր դրել իրեն-ց և այդ դրութիւնից ելնելու համար ապստամբութեան պարագլուխը—ս. Վարդան պատրաստուել էր տուն ու կալուած ձգել և ամբողջ ազգատոհմով Յունաց կողմը գաղթել, մինչ աւերակ թ հաւատարիմ մնացած Վասակ նորան յետ էր բերել տալ, ապստամբութեան ուխտը կնքել և զրկել օգնութիւն գտնելու նպատակով Յունաստա-ներ ու ազատել կայսեր ու այլ իշխանաւորներին: Այս լսե-լուց և Կամսարականի խօսքերի ճշմարտութեանը հաւատա-նալուց յետոյ մէջտեղ են կանչում Վասակին, որ մինչ այդ մեծարանքով ընդունուել էր արքունիքում և իրեն վայել շուքով բազմած էր նոյն ժամին ատեանում. Թա-գաւորը թափում է նորա վերայ իւր զայրոյթը, իբրև Հայաստանում անեղի ունեցած բոլոր չարեաց սկզբնա-պատճառ ի և պատասխանատու ի, կարգադրում՝ նորանից պահանջել պետական գանձարանին հասած բոլոր վնաս-ները և առանց թոյլ տալու, որ մի խօսք անգամ տայ իւր արդարացման համար, հրամայում է տեղնուտեղը հանել նորա վերայից պատուոյ նշանները ու անարգանօք դուրս վարել: Ըստ Փարպեցու Վասակ այնուհետև մի քանի տարի մնաց Պարսկաստանում և այնտեղ էլ մեռաւ՝ իշ-խանութիւնից ու պատուից զրկուած, իւր արարքների համար չարաչար զղջալով, բայց ոչ բանտում և այնպիսի խայտառակութեամբ ու չարչարելի տանջանքներով, որ-պիսին Եղիշէն է նկարագրում՝ ամենատարած ասպարէզ տալով իւր կրքոտ երևակայութեան:

Մինչ այս Միհրներսէհ հազարապետն ես առանձին հարցաքննութեան էր ենթարկել կալեալ հոգևորական-ներին և նոցա համարձակ պատասխաններից զայրանալով բերանները նոցա թէ շղթաներով ծեծել տալ ու բանտ դրել: Այնուհետև թէ նոքա և թէ կալեալ նախարար-

[illegible] արգելանոց ներքոյ մնացին Վրկան աշխարհում մինչև Յազկերտի թագաւորութեան ԺԶ. տարին, կամ 454 թ. ը։ Այդ թուականին Յազկերտ, նորից պատերազմի գնալով Քուշանաց դէմ՝ հրամայեց բոլոր կալանաւորներին իր ետևից տանել և բանտարկել տուաւ նոցա Ապար աշխարհի Նիւշապուհ քաղաքի բերդում։ Իսկ երբ մեծ տնանձնութեան հանդիպելով, գլխիկոր վերադարձաւ պատերազմից՝ գրգռուած ըստ մեր պատմիչների մոգերի մատուանդ թելադրութիւններից, որոնք անյաջողութիւնը նոյն յանցապարտ հոգևորականների անպատիժ մնալուն էին վերագրում, հրաման տուաւ, որ սոցա մի առ մի չարաչար տանջանօք մահացնեն։ Նահատակութեան պատիւն ընդունեցին ամենից առաջ Սամուէլ երէցն ու Աբրահամ սարկաւագը, որոնք Արտաշատում սրբազան հրակը հանգցուած լինելուն համար առանձնապէս ծանր յանցաւորներ էին համարւում և բանակի մէջ էին։ Այս նահատակուեցաւ Բասենոյ Թաթիկ եպիսկոպոսը, որ միւսներից առաջ Սարեստան էր տարուած և ծանր կապանքի ներքոյ պահւում էր։ Իսկ Նիւշապուհ քաղաքում բանտարկուածների մօտ թագաւորը յարձրապետին պաշտօնեաներ ուղարկեց՝ պատուիրելով այնպէս հեռացնել նոցա կապեալ նախարարներից, որ սոքա չիմանան, թէ ուր և ինչի՞ համար են տանում և այնպիսի տեղում նոցա մահուան պատժի ենթարկեն, որ ոչ մի քրիստոնեայ յայտնի չլինի, և նոցա նշխարները չառնեն՝ պատուելու և պաշտամունքի առարկայ դարձնեն։ Սակայն երբ հանում էին բերդից, թէ նոցա և թէ մնացող նախարարների համար շատ պարզ էր նպատակը, ուստի և վերջին հրաժեշտի ողջոյններով, փոխադարձ քաջալերութեան ու մխիթարութեան արտասուօք խօսքերով միմեանցից բաժանուեցան։ Քաղաքից բաւական տարածութեամբ հեռու, Թեհրան անունով մի գիւղի մօտ, անապատ և քարքարուտ տեղում ծանր տանջանքներ կրելով նահատակուեցան այն սուրբերը, որոնք Ե. դարու ազգային-կրօնական շարժման բուն ոգին էին՝ Ս. Յովսէփ, Ս. Ղևոնդ, Ս. Սահակ եպիսկոպոս, Ս. Արշէն և Ս. Մուշէ երէցներ և Ս. Քաջաջ սարկաւագ։ Նոցա և միւս տեղերում նահատակուած ընկերների համար մե

եկեղեցին մի ընդհանուր տօն հաստատանց և Ս. Ղևոնդեանց անունով յիշատակւում են նոքա սերունդէ սերունդ իբրև օրինակելի անձնազոհ հովիւներ։ Նոցա մարմինները անթաղ ու անյայտ չմնացին, ինչպէս դահիճների դիտաւորութիւնն էր. այլ Խուժիկ անունով մի գաղտնի քրիստոնեայ վաճառական նոցա դէպի նահատակութեան տեղը տանող պաշտօնէի վստահութիւնը գրաւելով՝ վկայ եղաւ նոցա անցրած վերջին ժամերին և իւր մարդկանցով կարողացաւ նոցա մարմինները թաղել մի ծածուկ վայրում. իսկ նշխարների մի մասը նախարարներին հասցնելով՝ պատմեց իւր տեսածները, և Փարպեցին իւր առելով, լսել է անձամբ Արշաւիր Կամսարականի բերանից ու նկարագրել։

Ս. Ղևոնդեանց հետ իբրև նոցա աշակերտ գերութեան մէջ գտնւում էին նաև երկու երէցներ՝ Խորէն ու Աբրահամ, որոնք նահատակութեան տանելիս կամենում էին նոցա ընկերանալ. բայց դահիճները թոյլ չտուին։ Նոցա ականջները կտրելով յետոյ՝ ուղարկեցին իբրև ստրուկներ Ասորեստանում աշխատելու, ուր և Խորէնը վախճանուեց. իսկ Աբրահամ գերութիւնից դառնալով Հայաստան վերադարձաւ և եղաւ վերջը Եղնունեաց եպիսկոպոս։ Այս Աբրահամ Խոստովանողը համարւում է թարգմանիչ «Վկայք Արևելից» գրուածքի, որ պատուաւոր տեղ ունի մեր Ոսկեդարեան գրականութեան մէջ։



ԳԼՈՒԽ Թ.

## Երկրորդ հայկական մեծ պայքարը մոգութեան դէմ Վահան Մամիկոնեանի առաջնորդութեամբ եւ արդիւնքը:

Ա. Հայրապետական աթոռի փոխադրութիւնը ի Դուին եւ Գիւտ Կաթուղիկոս.—Փարպեցին գերեալ նախարարների օտարութեան մէջ կրած տառապանքը, նոցա և հայրենիքում թողած նոցա կանանց քրիստոնէական համբերու-

Ջիւնն ու արժանավայել ընթացքը ուղևորութեամբ նկա-րագրելով՝ մինչև նորա գործը գերութիւնից, գրեթէ մերկ է թողնում մի լայն էջ մեր երկրի պատմութիւնից և չի յիշում, թէ ի՞նչ էր Հայաստանի վիճակն այն երեք-տասնամեայ ժամանակամիջոցում։ Աւելի կլինէր հարկաւ-ւորանից առանց այլևայլութեան հեռևեցնել, թէ ուրեմն ոչ մի առանձնապէս կարևոր ու յիշատակելի անցք տեղի էր ունեցել։ Քանի Յազկերտ Բ. կենդանի էր, Հայաստա-նում տիրում էր հաւանականաբար այն մեռելային խա-ղաղութիւնը, որ լինում է սովորաբար Վարդանանց ա-պստամբութեան նման մեծ ցնցումներից յետոյ։ Բայց երբ Յազկերտ մեռաւ (457 թ.-ին) և նորա երկու որդի-ների մէջ պատերազմ ծագեց գահի համար, որ մօտ եր-կու տարի տևեց և որ ժամանակ Հայաստանում եղած Պարսից զօրքերն էլ երևի դուրս տարուեցան, դժուար թէ Հայերը հանգիստ նստէին, մանաւանդ որ, ինչպէս Եղի-շէն յիշում է, նոյն միջոցին ապստամբութեան դրօշ էր բարձրացրել Աղուանից Վաչէ թագաւորը։ Ցիրաւի մեր ուշ ժամանակի պատմիչների մօտ գտնում ենք պատմա-կան անուանց և դէպքերի մութ յիշատակութիւններ, որ կարծես այդ օրերին են վերաբերում և կարող են փոքր ի շատէ նպաստել այդ հեռաւոր անցեալի վրայից ան-յայտութեան քօղը բարձրացնելու։ Այսպէս, Ժ. դարու հեղինակ Թովմա Արծրունին պատմում է, որ Նաւասուր Արծրունի իշխանը Պարսից Պերոզ թագաւորի մօտ է գնա-ցել, մօտութիւն ընդունել և հետը «գլխաւորութիւն Հա-յոց», ապա Վնդոյ անունով պարսիկ մարզպանն եկել է Հայաստան, սկսել է հալածել քրիստոնէութիւնը, խոշ-տանգել եկեղեցւոյ պաշտօնեաներին և կրակարաններ շի-նել։ Այդ ժամանակ «Մեծն Վարդան Մամիկոնեան», որ քաշուել ամրացել էր «ի Տօրոսական Զառայլ», չկարողա-նալով տանել իւր հաւատքին հասած անարգանքը ու երկ-րի աւերմունքը, օգնութիւն է խնդրում Տաճատ Ռշտունի և Վահրիճ Անձևացի իշխաններից, հաւաքում երկու հա-րիւր մարդով յանկարծակի յարձակւում է, Նաւասուր Արծ-րունին իւր ձեռքով սպանում, իսկ մարզպանին [illegible] Եւրոյ որդուն իւր դաշնակիցներով [illegible]

Դուին են ընկնում. մարզպանին նորա պաշտած կրակա-րանի վերայ այրում են, որդուն կախում, նորա մարդ[կանց] էլ մինչև Երասխի միւս կողմը հալածում. ապա Դուինի մեհեանը քանդելով՝ տեղը բլուրի մօտ եկեղեցի են շի-նում՝ Ս. Գրիգորի անունով, և Հայոց Գիւտ կաթուղիկո-սին այնտեղ նստեցնում: Նոյն դէպքը փոքր ինչ փոփո-խուած ձևով պատմում է ժամանակակից Յովհաննէս կա-թուղիկոս պատմագիրը. համառօտակի յիշում է նաև ԺԴ. դարու պատմիչ Վարդան Բարձրբերդցին:

Արդ, ակներև շփոթութիւններ կան այս նկարա-գրութեան մէջ: Վարդան Մեծը հարկաւ ժամանակակից չէր Պերոզ թագաւորին և նորա միջոցաւ այսպէսի դէպք տեղի ունենալ չէր կարող: Բայց մեր ԺԱ. դարու պատմիչ Ստեփաննոս Ասողիկ յիշում է, թէ Վարդան մի որդի է ունեցել Մանդնոս անունով, որ նորանից յետոյ 20 տարի սպարապետ է եղել: Նոյն Մանդնոսը յիշւում է նաև Սամուէլ Անեցու ժամանակագրութեան մէջ: Եւ անհաւա-տալի չէ ամենևին, որ այդպիսի մի Մամիկոնեան եղած լինի: Յունահնչիւն Մանդնոս անունը մի ակնարկ է կար-ծես, թէ նա Յունաստանում էր սնուել, գուցէ և շատ ուշ վերադարձել հայրենիք՝ Վարդանանց պատերազմից տարիներ յետոյ, երբ Մամիկոնեան իշխանազունները ցա-նուցիր էին եղել և նոցա կալուածները յարքունիս գրա-ւուել: Գուցէ Յազկերտի մահից յետոյ տիրող խաղաղու-թիւնից նա կամեցել էր օգուտ քաղել և հաստատուել հայրենի իշխանութեան մէջ. իսկ երբ Պերոզ, իւր եղբօրը յաղթելով և գահին տիրանալով, սկսել էր իւր զօրու-թիւնը ցոյց տալ բոլոր հպատակ ազգերին՝ խոյս էր տուել ու ամրացել Տօրոսեան լեռներում: Եթէ Շաւասպ Արծ-րունու հաւատուրացութեամբ ձեռք բերած իշխանու-թիւնը սպարապետութիւնն էր՝ ապա աւելի հաւանական կդառնայ Մամիկոնեանի յարձակումը նորա վերայ. հո-գևոր ու հայրենասիրական նախանձախնդրութեան հետ՝ հայրենի տան պատուի վերականգնումն ու սեփական իրաւունքների պաշտպանութեան խնդիր եղած կլինէր այդ: Թէ ինչու վերջապէս այս գործը Մեծ Վարդանին է վերագրուել՝ կարելի է բացատրել կամ նորանով, որ ժա-

ժամանակակից պատմիչների կողմից չյիշուած և օտարոտի անուան տէր որդու փոխարէն՝ աւանդութեան մէջ, անկատելի կերպով, հռչակաւոր և իբրև սուրբ պաշտուած Ներսէս անունն էր անցել, և կամ որ շփոթութիւն է յառաջ եկել՝ յաջորդ դարում, 571 թ.-ին, տեղի ունեցած մի ապստամբման դէպքի հետ. ուր, ինչպէս կտեսնենք, դարձեալ մի պարոնիկ մարզպան է սպանուել և հերոսը եղել է մի ուրիշ Մամիկոնեան Վարդան: Այս բոլորը ենթադրութիւններ են ի հարկէ. բայց ստիպուած ենք ենթադրութիւններով պարզել այն պատմական խրթութիւնը, որ հայրապետական աթոռը այս ժամանակամիջոցում Դուինն է փոխադրուել և Գիւտ կաթուղիկոս հաստատուել, քանի մեր եկեղեցւոյ պատմութեան համար այդպիսի առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի հանգամանք աւելի հաւաստի աղբիւրներից ծանօթ չէ մեզ, այլ աւանդուել է զուգորդուած յիշեալ արկածի հետ:

Փարպեցին Գիւտ կաթուղիկոսի անունն առաջին անգամ տալիս է նախարարների գերութիւնից վերադառնալուն առթիւ, որից յետոյ և իբրև մի մոռացուած էջ յառաջ է բերում արդէն նախընթաց գլխում յիշուած տեղեկութիւնը նորա նախորդների մասին: Բայց հարևանցօրէն միայն ակնարկելով, որ ս. Յովսէփից յետոյ կաթուղիկոս էր եղել Տէր Մելիտէ Մանազկերտցի, ապա սորա ցեղակիցը Տէր Մովսէս, առանձին հանդիսաւորութեամբ պատմում և իբրև «Աստուծոյ տեսչութեան» մի գործ է նկատում, որ սորան յաջորդեց Տէր Գիւտ, Տայոց գաւառի Արահեզ գիւղից, մայրենի լեզուին և մանաւանդ յունարէնին հմուտ ու գիտուն մի անձ, հոգեշունչ քարոզիչ և անձանձրոյթ ուսուցիչ աւետարանական ճշմարտութեանց: Նոյնչափ առաւել զարմանալի է ի հարկէ, որ գոնէ այս փառապանծ հայրապետի համար չի յիշել, թէ ե՞րբ և ի՞նչ պայմաններում ս. Լուսաւորչի աթոռը բարձրացաւ: Սակայն այդպիսի բացեր անթիւ են պատմութեան մէջ և ո՛վ կարող է այժմ նոցա համար մի առ մի բացատրութիւն գտնել: Յամենայն դէպս, եթէ վերյիշենք մեր խառնաշփոթութիւնները ժառանգական և ընտրական կաթուղիկոսութեան, Ս. Սահակի հաւատարիմների

Մանազկերտցիներին մէջ եղած մրցութեան մասին.
Ի նկատի ունենանք, որ Դուինը այս շրջանից սկսած
բաւի դարեր շարունակ Հայոց կաթողիկոսանիստը եղ
որ այնտեղ յիրաւի ս. Գրիգորի անունով եկեղեցի
յաջորդ դարում՝ կաթողիկոսարանի մայր եկեղեցին
ուրեմն օրին մէկ օրը պէտք է շինուած լինէր,—ա
պէտք է համոզուենք, որ վերև յառաջ բերած աւանդ
թիւնը առանց հիմքի չէ և Դուինի կաթողիկոսանալ
որոշ շարժման հետ կապուած է եղել։ Եթէ հայերը
բողացան հազար երկու հարիւր մարդով ապստամբե
ինչպէս Թովմա Արծրունու նկարագրութիւնից և սա
քի շինութեան հանգամանքից երևում է, բաւական
կար ժամանակ անպատիժ ու ինքնագլուխ մնալ, պէ
ենթադրել, որ ուրեմն Պարսկաստանում դեռ կենդր
կան զօրեղ իշխանութիւն չկար, կամ ուրիշ խօսքով
եղել է Յազկերտի երկու որդւոց կռուի և գօրանից
առաջացած անիշխանութեան օրերում, իսկ Պերոզ յիշ
է աւանդութեան մէջ գուցէ նորա համար, որ յայտն
իբրև Յազկերտի անմիջական յաջորդ։

Այդ դէպքում Դուինի կաթուղիկոսութիւնը
կլինէր դնել 460 թ.-ից առաջ, և մեր ունեցած կցկ
տեղեկութիւնները միմեանց շատ լաւ կյարմարէին։ Դժ
չէ պատկերացնել, թէ ինչպէս մի Մամիկոնեան, մա
ւանդ երբ Մեծ Վարդանի որդին էր նա, Ս. Սահակի թ
ոռնորդին, մոգական հուրը Հայաստանում հանգցնել
նորա պաշտօնեաներին և նորա հետ բերուած այլ և
խորթութիւններ դուրս վարելուց յետոյ, համազգ
կրօնական մի հանդիսով կկամենար վերակենդանա
Վարդանանց ջերմեռանդութիւնը դէպի մայրենի եկ
ցին և կջանար Ս. Սահակի ու Մեսրոպի դպրոցի լաւա
աւանդութիւնները գործադրութեան մէջ դնել։ Եւ
աւելի ազդուորիչ մի հանդէս, քան Հայաստանի մեծ
սաւորչի նշխարները իւր հանգստեան վայրից՝ Թորդա
տեղափոխել երկիր, այն ժամանակուայ մայրաքաղ
վրան մի նոր կաթուղիկէ եկեղեցի շինել և այդ ձևով
հովանու ներքոյ Հայոց հայրապետութեան աթոռը
քով՝ ներկայել առաջին անգամ պատմօրէն [illegible]

դիկոս, որ Ս. Լուսաւորչի յաջորդը պիտի լինէր՝
ըմնաւոր, այլ հոգևոր ժառանգութեան իրաւունք-
Ս. Գրիգորի անունով կառուցած առաջին եկեղե-
ւայր և նորա շինութեան ու նշխարների փոխա-
եան նկարագիրը կարող է նորա համար պատմու-
ց անհետացած լինել, որ յաջորդ դարերում ընդ-
ը ընդունելութիւն գտաւ Գառնիկի ճգնաւորի զրոյցը
ւաւորչի նշխարների գիւտի մասին. իսկ այդ երկու
դութիւններին իրար հետ հաշտեցնել չէր կարելի։
՞նչ եղաւ այս շարժման հետևանքը և ժամանակի
յքում ի՞նչ վերաբերմունք ցոյց տուեց պարսիկ պե-
թիւնը՝ մեզ յայտնի չէ։ Փարպեցին պատմում է, որ
դահի վերայ հաստատուելուց յետոյ, իւր թագա-
Թեան առաջին իսկ տարին, հրամայեց գերեալ հայ
րարներին կապանքից ազատել և [illegible] կապերով
ուլ, որ արձակ ապրեն Հրև նահանգում, իրենց
միով ծառայեն պետութեանը։ Եղիշէն այս արձա-
ուելի վրայ՝ արդէն Յազկերտի օրով եղած համա-
Յազկերտի որդւոց կռուի ժամանակ Աղուանից
ւորի աջակցելն է պատճառ բերում, որ հայ
րարներին չթողին հայրենիք վերադառնալ։ Նա պատ-
է տալիս, որ պարսիկները երկարատև պատերազմ
ով Աղուանից թագաւորի հետ, մեծ աւերմունք
ցին երկրում, բայց չկարողացան զինու զօրութեամբ
քաջարի իշխանին, մինչև որ Պերոզ թագաւորը համա-
նութեան մէջ մտնել նորա հետ և խաղաղ մի-
ով հպատակեցնել։ Եւ ահա, երբ [illegible] Պերոզի
ւորութեան Ե. տարին կռիւ ու խաղաղութիւն
ստուեցաւ Պարսից պետութեան բոլոր սահմաննե-
հայ նախարարներին ևս իրաւունք տրուեցաւ յայ-
տարելի Հայաստան վերադառնալ։ Սակայն նկատելի
ի է, որ այս բոլորը [illegible] [illegible] միայն Հայաստանում
[illegible] [illegible] հետոյ [illegible] [illegible] ճակատը
[illegible] յետին [illegible] [illegible], որ շատ հաւատա-
[illegible] [illegible] համար [illegible] [illegible] և
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

յետոյ հայրենիք վերադարձնելը այս ուղղութեամբ ս
ղեցութիւն անելու համար էր։ Գոնէ ա․ Գրիգորի և
ղեցւոյ շինութիւնն ու Գիւտի կաթուղիկոսութիւնն, ի
պէս երևում է, նորև կատարուած իրողութիւն են նկ
տուել և Պարսից թագաւորն առժամանակ աչք է փա
ղոցա զուգընթաց հանգամանքների նկատմամբ։ Կարել
մի անհնարին համարել այս մասին այն խօսքերը, որ ւ
Փարպեցու թագաւորի կողմից Գիւտ կաթուղիկոսին
սուեցան, երբ նա տարիներ յետոյ Պարսից դուռը կ
չուեցաւ․ «Մինչև ցայժմ քո իշխանութիւնդ առանց
հրամանի կալեալ է և ծառայ մարդիկ են, որոց քեզ զա
պխոյն մեծ գործ տուեալ է»։ Առանձին ուշադրութ
արժանի է նաև այն, որ Գիւտ կաթուղիկոսը թղթակց
թիւն է ունեցել Աղուանից Վաչէ թագաւորի հետ,
Մովսէս Կաղանկատուացու Աղուանից պատմութեան
պահուած այդ թղթակցութիւնը հաստատում է, որ Գ
ու Վաչէ ժամանակակիցներ՝ կարծես թէ բարեկամն
են և որ երկու հարևան քրիստոնեայ ազգերի մէջ ն
օրով սերտ յարաբերութիւն է եղել՝ ընդհանուր չա
հաւանականաբար համերաշխ գործողութիւններով պա
պանուել են։

Նոյն թղթակցութիւնը ներկայացնում է Գիւտ
թուղիկոսին բոլորովին մի նման դերի մէջ, որպիսին
րան Փարպեցին է վերագրում հայ իշխանների նկատմա
Սա խիստ մռայլ գոյներով է նկարագրում ժաման
հայութեան, մանաւանդ նախարարական տների քար
կան վիճակը։ Վարդանանց պատերազմից յետոյ պար
ները լաւ հասկացել էին, որ զէնքով ընկճելուց շատ ա
յարմար ու դիւրին էր հրապոյրներով ու զանազան խ
դալս միջոցներով նախանձ, երկպառակութիւն, անա
ռութիւն տարածել հայերի մէջ, նոցա կրօնական ու
ընտանիքական եռանդը պաղեցնել, մեղկացնել ու բա
յապէս սորկացնել նոցա․ և որոշ չափով հասել էին նպա
կին։ Հայ ցածահոգի իշխաններից շատերը բարձր գ
պատիւներ, կալուած ու հարստութիւն ձեռք բեր
համար ուրանում էին իրենց հաւատը, մատնում ու
ւռանում իրենց մեգակիցներին․ Նոցա օրինակը վ

չում էր աւելի սուր դատակարգի մարդոց, և բանն այնտեղ էր հասել, որ Պարսից թագաւորը մոռանալ կարող էր անընկճելի հայ զինուորութեան դարերի ընթացքում ցոյց տուած ամբաւ սխրագործութիւններն ու ասել․ իմ զօրքի մէջ ամէնից անպիտան ու յետին տեղ բռնողը ասորիներն են, բայց ասորուց էլ յետնեալ ու անպիտան հայն է։ Հարկաւ պակաս չէին նաև իրենց նախնեաց պատուին, եկեղեցւոյ և հայրենիքի բարւոյն նախանձախնդիր նախարարներ, և ահա սոցա միջոցաւ Գիւտ ջանք էր գործ դնում օրէօր ծաւալող չարիքի առաջն առնելու և իւր հօտի անմխիթար կացութեանը մի դարման տանելու․ աշխատում էր արթուն պահել նոցա մէջ բարոյական գիտակցութիւնը, համախմբել նոցա և միաբան գործել տալ։ Վաչէ թագաւորի հետ ունեցած վերոյիշեալ թղթակցութեան նպատակն էլ այն էր, որ քաջալերէր նորան նեղութեան օրերում և այդ կարևոր ոյժը պատրաստ պահէր երկու հարևան ազգերի ընդհանուր քրիստոնէական գործի համար։ Մինչև իսկ հաւատարիմ նախարարների հետ միացած՝ Գիւտ երկու անգամ գաղտնի պատգամաւորութիւն էր ուղարկել Լևոն կայսեր մօտ և նորա օգնութիւնը խնդրել՝ մի նոր ապստամբութեամբ Հայոց երկիրը քրիստոնեայ իշխանութեան ներքոյ դնելու համար․ բայց արդիւնքի չէր հասել։

Միւս կողմից Գիւտ բնականաբար լաւ յարաբերութեան մէջ չէր ուրացող և դաւաճան նախարարների հետ․ տեղն ընկած ժամանակ նա չէր քաշւում նոցա կշտամբելու իրենց վատութեանց համար և ցոյց տալու իւր ակներև արհամարհանքը․ որից զայրացած Գարջոյլ Մախազ Խորխոռունին ամբաստանեց նորան Պարսից թագաւորի առաջ, և նա արքունիք կանչուելով՝ թէպէտ կարողացաւ արդարանալ իւր վերայ բարդուած գլխաւոր մեղադրանքից, որ էր կայսեր հետ ունեցած գաղտնի բանակցութիւնը, բայց և թագաւորի պահանջներին չհամակերպելուն համար զրկուեցաւ կաթուղիկոսական աթոռից։ Ըստ Փարպեցու նորան ստիպում էին մոգութիւն ընդունել․ բայց դժուար է հաւատալ, որ այդպիսի անհեթեթ պահանջ դրուէր․ երևի թագաւորը կամենում էր

միայն գործիք դարձնել իւր ձեռքում, և չյաջողեց: Ցա[յց] մինոյն դէպս մեծ չի կարող եղած լինել բարկութիւ[ն] նորա դէմ, երբ նորան թոյլ է տրւում ազատ ապ[րել] մայրաքաղաքում, պատիւներ վայելել, նոյն իսկ ձեռն[աս]-դրութիւններ կատարել, ապա հայրենիք վերադառնալ[ու] դեռ երկար տարիներ խաղաղ կեանք վարել ու խոր ծ[ե]-րութեան մէջ հանգչել Վանանդ գաւառի Ոգմուս գիւ-ղում: Դժբաղդաբար ուրիշ կողմնակի մանրամասն տե-ղեկութիւններ չունինք այդ նշանաւոր հայրապետի մա-սին, չենք կարող որոշել, թէ երբ զրկուեցաւ աթոռ[ից] և երբ վախճանեց. ի՞նչ վիճակի ենթարկուեցաւ հայրա-պետութիւնը նորա հրաժարումից յետոյ: Նորան վերա-գրւում է մի թուղթ Դաւիթ Անյաղթին ուղղուած, ո[րը] կեղծ լինելն անկասկած է: Ի նկատի առնելով, որ նրա[նց] մեղադրում էին կայսեր հետ դեռ շարունակւող յարա-բերութեան համար, իսկ Լևոն Ա. կայսրը վախճանել է 474 թ.-ին, կարելի է մտածել, որ նա այդ թուականի[ց] առաջ զրկուեցաւ հայրապետական իշխանութիւնից:

Բ. Վահան Մամիկոնեանի ապստամբութիւնը:—Վերև յիշուեցաւ, որ Վարդանանց պատերազմից յետոյ Մամի-կոնեան, Կամսարական և այլ տոհմերի գերեալ մատ[ղ] իշխանազուններ Պարսից դուռն էին ուղարկուել: Ցազ-կերտ Բ. դեռ ևս կենդանի էր, որ Վրոյ Աշուշայ բդեշխը մեծ ջանքով կարողացաւ նահատակ Հմայեակ Մամիկոնեանի երեք որդւոց ազատել գերութիւնից (455 թ.-ին): Սոքա երեքը՝ Վահան, Վասակ և Արտաշէս, սնուեցան այնու-հետև Վրաստանում, Աշուշայի տանը՝ իրենց մայր Ձուի-կի խնամքի ներքոյ, որ Արծրունի էր ծննդեամբ և որի քոյր Անուշվռամը Աշուշայի կինն էր. իսկ կրտսեր եղ-բայրը՝ Վարդ, առաջուց տարուել էր պայեանների ձեռ-քով Տայոց աշխարհը: Ղազար Փարպեցին, որ թէպէտ տա-րիքով փոքր ինչ մեծ՝ նոցա ընկերակիցն է եղել պատա-նութեան օրերում և նոցա մօրեղբայր Աղան Արծրունու մօտ սնուել, մեծ գովութեամբ է խօսում նոցա մօր՝ իբ-րև բարձր բարոյական արժանիքների տէր մի [illegible] մայրին. Ինչպէս երևում է, նոցա կրթութեան գործում էլ դեր է ունեցել նաև Աղան Արծրունին, որ ու. Սա-

կէ և ս. Մեսրոպի դպրոցից էր և շատ երիտասարդական տարիքում կրօնաւորական սքեմ էր հագել։ Եւ ահա, մինչ ւն Հայաստանում քաղաքական անկումը աւելի ու աւելի այլի էր դառնում և հետզհետէ մի ողբալի կացութիւն ստեղծուում՝ հարևան երկրում աճում զօրանում էին ամիկոնեան կորիւնները և արժանավայել կրթութեամբ դաստիարակուում իրենց անման նախնեաց տեղը բռնելու։ Անձնապէս աչքի էր ընկնում իւր արտաքոյ կարգի շնորհակութիւններով մեծ եղբայրը՝ Վահան, որ թէպէտ ւրկ ժառանգական իշխանութիւնից ու ստացուածքից, րգանք էր ազդում ամէնքին և նախանձ շարժում այն փաքաքաղութիւնների մէջ, որոնք ուրացութեամբ և այլ ստթաքը միջոցներով ստոր դիրքից բարձրացել էին ու ենց մուրացածոյ փառքը նսեմացած էին տեսնում ազ-ւ Մամիկոնեանի քնատուր ձիրքերի առաջ։ Սոքա չդան-ղեցին բանսարկութիւններով ու քսութիւններով կաս-ծելի դարձնելու նորան արքունիքում, և Վահան տես-լով, որ ապահով լինելու և յառաջադիմելու համար ակ ճանապարհն էր ժամանակի բարքերին յարմարուել, նձն առաւ դժբաղդաբար հակառակորդների դէմ նոցա ւզքով կռուել, լինելն ևս Պարսից դուռը գնաց և «հաւա-մէջ տեղաբանալով», կարողացաւ, ինչպէս երևում է, միայն վստահութեան ձեռք բերել, այլ և մի կարևոր աշտօն ստանալ՝ պետական ոսկեհանքի վերակացու կար-ւել։ Սակայն չարախօսութիւնները նորա դէմ չդադա-րին, և թէպէտ երկրորդ անգամ արքունիք գնալով՝ նա ջողեց իւր վերայ բարդած մեղադրանքները փայլուն պացոյցներով հերքել, բայց սեփական խիղճը նորան հան-ստ չէր տալիս և նա յարմար առիթ էր որոնում՝ ու-րացութեան արատն իւր վրայից մաքրելու և մի Մամիկո-նեանի անվայել կեղծ դրութիւնից ելնելու։

Առիթը շուտով ներկայացաւ։ 482 թ.-ին Վրաց Վախ-թանգ իշխանը ապստամբելով Պարսիկներից՝ թագաւորեց Վրաստանում, որով յոյս արծարծուեցաւ հարևան քրիս-տոնեայ ազգերի, մանաւանդ Պարսից բանակում ամէն տեսակ անարգանքի ու անտանելի զրկանքների ենթարկուած զօրամասերի մէջ, որ ժամանակը եկել էր նաև իրենց

համար՝ անտանելի լուծը թօթափելու և պատուաւոր կեանքի պայմաններ ստեղծելու։

Այս զօրական իշխաններից ոմանք՝ լաւ իմանալով Վահանի տրամադրութիւնը և գնահատելով այն հրապոյրը, որ Մամիկոնեան անունն ունէր հայ ժողովրդեան աչքում, ծածուկ նորան դիմեցին և յայտնեցին, որ պատրաստ էին ժամանակի ներկայացրած յարմարութիւններից օգտուելու և նորա առաջնորդութեամբ ապստամբութեան դրօշ բարձրացնելու։ Վահան սկզբում մերժեց նոցա առաջարկը՝ առարկելով, որ չնայած երեսից անտանելի դիմաց հանելու իւր մեծ յօժարութեան՝ ո՛չ Յունաց, Վրաց և Հոնների անվստահելի օգնութեան, և ո՛չ մանաւանդ հայ նախարարների հաւատարմութեան յոյս կապել կարող էր, բայց երբ վերջիններս բուռն ազդեցութեամբ հաստատեցին, որ պատրաստ են աւելի շուտ մահ յանձն առնելու, քան շարունակելու մնալ այնպիսի արհամարհելի դրութեան մէջ, Վահան եւ ազդուեց, քահանայ ու աւետարան բերել տուաւ, և ամէնքը միաբերան երդուեցան՝ անձը դնելու իրենց հաւատի ու պատուի պաշտպանութեան համար։ Այն հանգամանքը, որ այստեղ գաղձեալ մի անպիտան մատնիչ գտնուեցաւ Ամատունեաց տոհմից և գնաց նախարարների խորհուրդը յայտնեց պարսիկ մարզպանին, շատ արագացրեց ապստամբութեան ծրագրի իրագործումը։ Հայաստանի մարզպանն էր այդ ժամանակ Ատրվշնասպ անունով մէկը, որ պարսիկ հազարապետի և ուրիշների հետ գտնւում էր Ծիրակում և երբ ապստամբութեան լուրն առաւ՝ շտապեց իւրայիններով Արտաշատի բերդն ապաւինել։ Հայ նախարարները ետեւիցն ընկան ու բերդը պաշարեցին, բայց նա կարողացաւ այդտեղից եւ խոյս տալ ու Ատրպատական անցնել։ Միայն ուրացող Գադիշոյ Խորխոռունի մախազը բռնուեցաւ ճանապարհին և Դուին բերուեցաւ, ուր ապստամբներն սկսեցին եռանդուն պատրաստութիւն տեսնել։

Ատրվշնասպ հետեւելով իւր շրջապատողների խորհուրդին, որ քանի դեռ հայերն անպատրաստ էին և վրաց հետ չէին միացել՝ դիւրին կլինէր նոցա ընկճել և ապստամբութիւնը սաղմի մէջ խեղդել, հապճեպով մի խառն գունդ

ռեց Ատրպատականում և արշաւեց դէպի Երասխի
: Հայերն եւս շտապեցին երկրի մէջ կուռամարութիւն
յարգել հաստատել. Սահակ Բագրատունի ասպետն
ուեցաւ մարզպան, Վահան վերականգնեց իւր տոհ-
ւն իրաւունքները և ճանաչուեց իբրև սպարապետ
ց ու տանուտէր Մամիկոնեանց. ուրիշ առաջնակարգ
արարներին համապատասխան պատիւներ տրուեցան,
պէս գի այս գեռահաս կազմակերպութիւնն սկզբից
Ժ վտանգի չենթարկուի ու քայքայուի, որոշուեցաւ
ործավան ու սպարապետը Դուինում մնան, գոր-
կարգի գնեն. իսկ Վասակ Մամիկոնեան, Կամսարա-
եղբայրներն ու ուրիշները Բաբկէն Սիւնու գլխաւո-
րեամբ մի փոքրիկ գնդով Պարսից դէմ գնան և աշ-
ւեն չթողնել, որ Երասխն անցնեն ու երկիրը մտնեն:
ւ Թշնամի գնդերն իրար դէմ ելան Մասիս լերան
ոտում, Ակոռի գիւղի մօտ: Հայերն ընդամէնը 400
էին և դոցա մի քառորդը Գարջայլ մախաղի հետ-
ւ, որին ըմբռնողաբար անխոհեմութիւն էին ունեցել՝
բազմադիմի դաւաճանութիւններին չնայած, հայրե-
պաշտպաններին ընկերացնել, և որ ոչ միայն կռուի
ում իւր մարզկանցով Թշնամու կողմն անցաւ, այլ և
ի ամենատաք ժամանակ մի խորամանկ շարժումով
ի կողմից յարձակուեց հայերի վերայ ու քիչ մնաց
Յաղթութիւն ձգէր նոցա մէջ. սակայն և այնպէս մնացած
հերոսներն աներևակայելի քաջութեամբ կռուեցան
ենց վատ ազգակիցների նենգութիւնն ի գերև հա-
ք փառաւոր յաղթութիւն տարան բազմապատիկ
ւել Թուով Թշնամու դէմ. Պարսիկ մարզպանը սպա-
ց պատերազմում, նորա խառնիճաղանճ զօրքը ցրուեց
կերը. ժամանակ վաստակեցին կազմակերպուած ոգևո-
րեամբ սկսած գործն առաջ տանելու: Այնուհետև
հասաւ ձմեռը. և թէպէտ ոչ Վախթանգ թագա-
կողմից սպասուած օգնութիւնը գաւաւ. Վահան և
նրկ հարաւային մեծ նախարարութիւնների՝ Արծրու-
լ, Անձևացեաց, Մոկաց և Ռշտունեաց մօտ նորա առ-
ուած պատգամաւորները գգալի օժ բերին, այնպէս
այնիս չվհատեց, և նորա փոքրիկ գունդը ...

*ոկզբէն կազմ պատրաստ էր պարսիկներին դիմադրաւելու։ Օրերը տաքանալուն պէս սոքա արդէն կանոնաւոր բա… մութեամբ դէպի Հայաստան դիմեցին. բայց Վահան ա… պարեց Նրասխի միւս կողմում նոցա հանդիպելու, և գ… ձեռալ մի անգամ պատմական Արտազ գաւառում, Ն… աէհապատ գիւղի մօտ, օրհասական ճակատամարտ … ունեցաւ աւետարանի ու կրակի պաշտօնեաների մէջ։ … որչափ մեծ բաղդ էր հայերի համար, որ յաղթութի… նոցա կողմը մնաց, որ այսպիսով կրկին անօգտանելի … անհաւատալի յաղթութիւններից յետոյ ականներն … թերահաւատներին խսկ զօրանալ ոկսան, և համոզուել, … հայրենի սրբութիւններին հաւատարիմ քաջութիւնը հրաշ… ներ կարող է գործել, յուսալ, որ Պարսից ահագին … նուօրականն ոյժը տեղի պէտք է տայ ի վերջոյ խաչի … նկուն զօրութեան առաջ։*

*Յաղթութեան պսակն եղաւ մի նոր անակնկալ յա… ջողութիւն, որ Վահանի և իւրայնոց ուրախութիւնը կա… տարեալ դարձրեց։ Նորա կրտսեր եղբայրը՝ Վարդ, … պատանդ էր Պարսից մօտ և որի վիճակը բնականաբար մեծ հոգս էր պատճառում նորան՝ զարմանալի քաջու… թեամբ ու ճարտարութեամբ կարողացաւ խոյս տալ իւր պահապանների հսկողութիւնից և պատերազմից վերադար-ձողների ետևից հասնել։ Սակայն այս յաջողութիւնը վեր-ջինն էր. շուտով ծանր փորձութիւններ վրայ եկան։ Դեռ պատերազմից չէին հանգստացել հայերը, որ թուղթ ստացուեց Վախթանգ թագաւորից, թէ պարսկական մեծ բանակ իւր երկիրն է մտել և ինքը չկարողանալով մենակ դէմ դնել՝ Հայաստանի լեռներն է ապաւինել և օգնու-թեան է սպասում։ Վահան Մամիկոնեան, Սահակ մարզ-պան և միւս բոլոր իշխանները՝ հաւատարիմ վրաց հետ հաստատած ուխտին և երդման, ձեռքի տակ եղած ամ-բողջ զօրքն առան ու աճապարեցին Վախթանգի մօտ։ Այս-տեղ նոքա կկամենային ամուր լեռնային դիրք գրաւել և թշնամուն Հայաստանի սահմանի վերայ ընդունել, բայց Վախթանգ սուտ խոստումներով և խաբէական հրաւէր-ներով նոցա համոզեց, թէ դաշնակից Հոները մի մեծ բազ-մութիւն իրենց է սպասում դաշտում, նոցա տարաւ դէպի*

-ր գետի հաղթանակայքը, և գետ ո՛չ մի հոնի երես չառե-ձ՝ նոքա հանդիպեցին Պարսից Միհրան զօրավարին և խաղացած եղան իրենց համար շատ աննպաստ պայմանում, անհամեմատ փոքր թուով, հակառակել նորա անթիւ զօրքի դէմ։ Վահան և իւրայինք սակայն քաջութեամբ կռուեցան. բայց շնորհիւ այն հանգամանքի, դաշնակիցների զօրքի մէջ շատերը նախօրօք բանակցութեան մէջ լինելով պարսիկների հետ՝ պատերազմի շատում դաւաճանեցին և նոցա կողմն անցան, կամ փախուստ հրաւիրելով իրարանցում ձգեցին իրենց կողմի զօրքի մէջ՝ հետզհետէ լքումն յառաջ եկաւ և փախուստը ընդհանուր դարձաւ. իսկ պարսիկները հետամտով փախչողներին՝ մեծ կոտորած արին։ Հայերի կորուստը շատ զգալի էր. Սահակ մարզպանն ու Վահանի եղբայրը՝ իւր քաջարի եղբայրը Վասակ, ընկան պատերազմում, Հրահատ Կամսարականը գերի բռնուեցաւ մնացած զօրքը ցանուցիր եղաւ։ Հաւատարիմների մի քանի գնդով միայն կարողացաւ Վահան խոյս տալ դէպի լեռ ստուեր կողմերը, և ապաստարաններին քաղցր վճռած պահել էր համարել, եթէ նորա անօրինակ արիութիւնն հաստատամտութիւնը չլինէին և մի քանի առատաքին ընթացքում հանգամանքներ այժմ չառաջին նորա նորանոր երջանիկ ձեռնարկութիւններին։

Գ. Վահանի Մամիկոնեանի սպարապետութիւնն ու յաղթանակը։ — Նկարագրած մեծ անյաջողութեան ժամանակն հետևանքները ապացուցեցին, թէ որչափ իրաւունք ունէր Վահան սկզբից և եթ կասկած յայտնելու ապստամբութեան առաջարկած իրեն դիմողների գեղեցիկ խոստումների ու ակնկալութիւնների համար։ Նորա բոլոր կասկածները, որոնք առաջին յաղթութիւնների փայլից շլացած եկել յարել էին՝ թողին, իրենց տեղը քաջութեան և ներքին ու անհերքելի միջոցներով իրենց գլխաւորութեան մասին կէին միայն մտածում. նոր օժանդակութեան սպասել վրացիներից, որոնք այնպէս վճռաբար բաժանվեցան իրենց իսկ երկիրը պաշտպանելու եկած դաշնակիցներին հետ՝ անմտութիւն կլինէր. ուրեմն ո՛չ մի ան-օգնութեան յոյս չկար. Միհրան նահանջին զօրքով

տանում էր քայլ առ քայլ խիզախ ապարապետին և ամ[illegible] ջանք գործ էր դնում, նորան իւր ձեռքը ձգելով՝ փախ[illegible] լու ապստամբութեան խնդիրը. իսկ առանին մատնէ[illegible] ներին ու դաւաճանները պատրաստ էին իւրաքանչիւր քայ[illegible] լափոխում ի դերև հանելու. Նորա ամենախորագէտ ծրա[illegible] գիրներն ու ամենակարողի ձեռնարկները: Երկրի անպիտա[illegible] կառավարութիւնը մի քանի տասնեակ տարիների ըն[illegible] թացքում ստեղծել էր այնպիսի վարակուած մթնոլորտ[illegible] որ ո՛չ միայն փոքրիկ մարդիկ չնչին նիւթական օգուտ[illegible] ների համար մրցում էին միմեանց հետ՝ ամենաստոր ծա[illegible] ռայութիւններ մատուցանելու օտարին, այլ և Սիւնեա[illegible] իշխանի նման առաջնակարգ նախարարներ պատիւ [illegible] պարծանք էին համարում ամեն մի նենգաւոր միջոց, որո[illegible] կարծաղանային ապստամբ հայրենակցի ոյժը ջլատել և իրե[illegible] անձնուէրութիւնը ցոյց տալ արքայից արքային: Որպէս[illegible] փառքի ու երախտագիտութեան է արժանի ուրեմն ա[illegible] անօրինակ հերոսը, որ այդ անտանելի պայմաններում [illegible] րոպէ չվհատեց ու իրեն չկորցրեց. որ իւր հանճարեղ ռազ[illegible] մագիտութեամբն ու աննկուն քաջութեամբը ո՛չ միայ[illegible] բոլոր որոգայթներից ելաւ, բոլոր խոչընդոտները խորտա[illegible] կեց և իւր ազգի ինքնուրոյն գոյութիւնը գահերով ապա- հովեց, այլ և իւր գերազանց առաքինութիւններովն ու սխրագործութիւններով փրկեց նոյն ազգի պատիւը, նորա[illegible] մոլորեալ զաւակների վատ արարքները մոռացնել տուա[illegible] և շատ սերունդների համար գաղափարական հայի տիպա[illegible] հանդիսացաւ:

Նշանակալից է Վահանի ուղարկած պատասխանը Պարսից զօրավարին, որ նորա ետևից հասել, մի քանի հազար զօրքով հալածում երկու փարսախ հեռաւորութեան վերայ բանակ էր դրել և թէպէտ նորա մարդոց թիւը հա- րիւրից չէր անցնում՝ փոխանակ զինու զօրութեամբ նորա վերայ յարձակուելու, գերադասում էր խաղաղ բանակ- ցութեամբ հրաւիրել, որ գայ, հպատակի թագաւորին և յոյս ունենայ իւր միջնորդութեամբ շնորհաց արժանա- նալու: Վահան նկարագրում է, թէ ի՛նչպիսի ամօթալի և աւերիչ կարգեր էր մտցրել Պերոզ իւր տէրութեան մէջ. [illegible]ակ անձամբ վերահասու լինելու իւր սատրապների

[illegible] իշխանների բռնած ընթացքին, գնահատելու նոցա [illegible]տանիքը և դատապարտելու թերութիւններն ու գեղ[illegible]մները, քսուների և շողոքորթների չարախօսութեանց [illegible]ւում, վատերին առաջ քաշում, ազնիւներին արհա[illegible]մարհանքի ենթարկում: Անարգ վաճառքի առարկայ էր [illegible]ձրել կրօնը. Թոյլ էր տալիս, որ ամենացած մարդիկ [illegible]ենց հաւատն ուրանալով և մոգութիւն ընդունելով՝ [illegible]անց կրակը պաշտելով և ծածուկ պղծելով ու ծաղ[illegible]ով, պատուի ու աստիճանի հասնեն. մինչդեռ մեծա[illegible] նախարարները պէտք է քաշուէին ամէն ասպարի[illegible] եթէ պատուազգաց էին և հաւատարիմ հայրենի[illegible]ութեանց: Այդպիսով բանն այնտեղ էր հասցրել, որ [illegible] իսկ աչքում անպիտան առօրուց աւելի անպիտան[illegible]ն էր երևում: Ուստի ուրիշ ելք չէր մնացել հայ մար[illegible] համար, բայց եթէ՝ կամ յարմարուել տիրող իշխա[illegible]թեան պահանջներին և կամովին իւր վերայ վերցնել [illegible]ութեան անունը, կամ մի հնար մտածել մաք[illegible]ելու վրայից այդպիսի մեծ արատ: Ինքը Վահան սկզբում [illegible]ջին ճանապարհն էր ընտրել և բանսարկուների ան[illegible]րջ չարախօսութիւններից ձանձրացած կամեցել էր հա[illegible]տի գնով ապահովել իւր գիրքը. բայց ուրացութիւնից [illegible]այ զգացել էր, թէ աւելի լաւ էր՝ վիշտ, հալածանք, [illegible]հ, քան հոգւոյ այս սպանութիւնը յանձն առնէր: Եւ [illegible]ժմ, եթէ համարձակուել էր զէնք վերցնել Թագաւորի [illegible]մ՝ ոչ թէ նորա համար էր, որ Պարսից ահաւոր զօրու[illegible]ւնն ու հայերի խեղճութիւնը չէր ճանաչում, այլ որ [illegible]նը գերադասում էր վատ անունից: Թողնել հեռանալ, [illegible] աշխարհում ազատ ապրել, կնշանակէր վատու[illegible]ան դրօշմը հետը տանել. մնում էր ուրեմն զէնքը ձե[illegible]ին ապացուցանել, որ այդ դրօշմը արհեստական կեր[illegible]ով է դրած, և հայութեան կրծքում դեռ բաւական [illegible]ութիւն կայ Պարսից զօրքի՝ ոչ թէ վատթարագոյն մա[illegible]ն, այլ տասնապատիկ աւելի թուով քաջերին իսկ դի[illegible]րելու. ինչպէս արդէն երկու անգամ ապացուցեց. [illegible] դեռ հայեր էին կռուում պարսիկների հետ, և եթէ [illegible] անգամ իւր կողմնակիցների նենգութեան ու երկ[illegible]ակութեան երեսից անյաջողութեան է հանդիպել.

դորանով իրերի դրութիւնը չի փոխուում, և իւր դ
հանգը նոյնն է մնում. կամ պէտք է պարսիկներն իւ
կառավարութեան անպիտան եղանակը փոխեն, ամէն
իւր իսկական արժէքով գնահատեն ու խղճի ազա
թիւն շնորհեն, կամ թէ չէ հայերը պատուաւոր
կընտրեն և մինչև յետին կէտ կպաշտպանեն իրենց
դաւր դատը:

Այս սկզբունքին հաւատարիմ մնաց Վահան իւր
ողջ կեանքում: Պարսից թագաւորը ստիպուած լին
իւր բոլոր զօրութիւնը կենդրոնացնել պետութեան հ
սխս-արեւելեան նահանգներում՝ Հեփթաղների հետ
տերազմելու համար, չէր կարող բարեբաղդաբար մշ
կան մեծ զօրք պահել Հայաստանում. շատ չանցած Մ
քան իւր գնդով Պարսկաստան կանչուեցաւ և Վահան
իւրայիններն ազատ շունչ քաշեցին. Հրաման կամ
կանը ևս ճանապարհին խոյս տուաւ Պարսից զօրքէ մի
և Նոցա հետ միացաւ. այպա Դուին մայրաքաղաքը վե
դարձան և նորից մի ամբողջ ձմեռ վատնեցին՝ իւ
ուժերը ժողովելու և նոր արկածների համար պատր
տուելու: Սակայն պարսիկներին յաջողեց, դեռ դար
չքացուած, նենգաւոր և դաւաճան հայերի միջոցա
լորութեան մէջ ձգել Վահանի շրջապատողներին, մի
բաւոր զօրագունդ Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդ
թեամբ բաժանել, հեռացնել նորանից, և ապա յանկ
ծակլի բերել նորան, որ առանց մի կատաղի սակա
թիւ մարգկանցով Դուինում նստած՝ մէկ էլ շրջապ
տուած գտաւ իրեն Զառմիհր Հազարաւուխտ պար
զօրավարի բիւրաւոր բանակով: Թէպէտ առիւծ Վահ
այս որոգայթի մէջ ևս չբռնուեցաւ, այլ իւրայիննե
հետ սուրը ձեռին թշնամիների շղթան կտրեց ու ապ
տան պատու հայրենի ազատ լեռներում, բայց չէր կա
ի հարկէ մի նոր բանակ կազմել և բաց դաշտում պա
սիկների դէմ ելնել: Մի անհաւասար պայքար սկսաւեց
այնուհետև, որի մասին դեռ պատմիչը չունէր կայ առ
առաջ ամէն ինչ խոնարհեցնելու սովոր ասիական բռն
կալութիւնը: Հազարաւուխտ մի առժամանակ ան
վ Վահանին հետամուտ լինելուց, իւր պալ

ցած տեղերի անպաշտպան ազգաբնակութեան վերայ. սփռելով և մի շարք աւերմունքներ գործելուց յետոյ՝ ման ստացաւ իւր բանակով Վրաստան անցնելու և յեթանոց թագաւորին նուաճելու. իսկ իւր տեղը Թո-յ Շապուհ զօրավարին՝ մի քանի հազար զօրքով, որ յածանքը շարունակէ: Բայց Վահան ամենևին միտք չու-նէր տեղի տալու: Նա իւր փոքրիկ գնդով մերթ շանթի պէս նետուում էր պարսիկների վերայ այն ժամին, երբ նրանից քիչ էին սպասում իրեն, մերթ մահ ու սարսափ սփռ-ում աջ ու ձախ, մերթ թև առած ճախրում անցնում լեռներ, գաւառէ գաւառ, և դարձեալ շաբաթներ էր թաքուսը լինում, որ թշնամին ետևից հասնէր: Այս խոյ շարժմունքի պատկեր եղաւ Շապէհ ճակատամարտը, որ, ինչպէս երևում է, ամենից յաջողութիւն է գործել անատեսների վերայ: Վահան մի անգամ գիշերով յար-ձակել էր Պարսից բանակի վերայ և սաստիկ կոտորած ելուց յետոյ եկել հանգստանում էր իւրայիններով էջ գիւղ կոչուած տեղում, որ պարսիկները եկան շըր-ջապատեցին գիւղը: Ցաղնած ու քնաթաթախ՝ հազարա-պարսիկների այսպէս յանկարծ իրենց շուրջը տես-նել, Վահանի մի բուռն հետևողները զարհուրեցին ու կամաւ նորա արիական յորդորներին փախուստի դի-մին: Նորա մօտ մնացին միայն իւր հարազատ Մամի-կոնեանները և ի մանկութենէ սննդակից ու բաղդակից նաժարական եղբայրք՝ Մեծն Վարդանի դուստր և Արշա-Համազասպեանի որդիքը, իրենց մտերիմներով՝ ընդա-մէնը մօտ քառասուն մարդ: Մինչև իսկ այս անվեհեր-ները ամէն ինչ կորած էին համարում արդէն և դի-մադրութիւնն անօգուտ. բայց երբ քաջերի քաջը խա-ղեկից երեսն ու աշտանակից ձիուն, անզուսպ սլա-թեռամբ հետևեցին նորան ու փոթորկի նման ընկան թշնամու վերայ: Պարսիկներն իրենց աչքերին չէին հաւա-տամ և կարծում էին, թէ մի գերմարդկային զօրու-թեան հետ գործ ունեն. աւերածող հայ [illegible] սար-սափեցին: Թշնամին Միհրին՝ մի յաղթանդամ պարսիկ [illegible] իւր [illegible] գնդով Շապուհին [illegible] [illegible]թափուած էր, փորձեց յանկարծ [illegible]

դէմն առնել, բայց մահացու վէրք ստացաւ, և Վ
նանք, չորս հոգի միայն զոհ տալով՝ վերջնական
ճանապարհ հարթեցին դէպի ազատութիւն։

Այս դէպքից յետոյ, մինչ Պարսից զօրավարը չ
քած չգիտէր, թէ ի՞նչ ձեռնարկէր առասպելական,
խոցելի հերոսի դէմ, մի գոյժ հասաւ նորան, որ
դամայն յեղաշրջեց իրերի ընթացքը։ Պերոզ թագ
չարաչար պարտութիւն էր կրել Հեփթաղների դէմ
ըած պատերազմում և ինքը սպանուել, տագնա
մինակ էր ստեղծուել Պարսից տէրութեան համար,
դարման տանելու պիտի շտապէին՝ ինչպէս ուրիշ
քում, այնպէս և Հայաստանում եղած զօրականնե
զօրքը։ Ընդհանուր հաճութեամբ Պերոզի եղբայր Վ
շը նորա գահի վերայ բարձրացաւ և առաջին
պէտք է դարձնէր՝ իւր գոռոզ նախորդի յարուցած
ընդհատ պատերազմների ու ապստամբական շար
ների հետևանօք քայքայեալ պետութիւնը խաղաղ
ղու և ներքուստ բարեկարգելու։ Նիխոր անուն
բարձրաստիճան անձ ևս դէպի Հայաստան ուղար
ցաւ, որ խաղաղ միջոցներով հնազանդեցնէ ապստամ
ներին։ Առանց Երախն անցնելու՝ սա պատգամա
ուղարկեց Վահանի մօտ և հրաւիրեց իւր բանակը
գնալ, խաղաղ բանակցութեան մէջ մտնել ու
դաւորի հրամանները լսել։ Վահան իւր կողմնակի
ի մի ժողովելով պատգամաւորների ներկայութեամբ
պայման առաջարկեց սոյն, որոց յանձնառութեան
քում միայն կյօժարէր Պարսից բանակը գնալ. ա)
տոնէութեան պաշտօնն ազատ թողնել, ո՛չ ոքի բ
թեամբ կամ հրապոյրներով մոգութեան չդարձնել և
կարաններ չշինել Հայաստանում. բ) Ամէն մէկին իւ
ժանիքի համեմատ գնահատել և անիրաւ տեղը ստո
չբարձրացնել ու քաջատոհմներին չստորացնել. գ
բախօսութեանց ու բանսարկութեանց ականջ չդնել
անմիջապէս թագաւորի ատեանի առաջ քննել իւր
չեալի գործը և ըստ այնմ դատել կամ վարձատրել։
առաջարկութիւնները տեղ հասցնելու համար
ամաւորների հետ իւր կողմից ևս մի քանի

ուղարկեց, որոնց Նիխոր սիրով ընդունեց և Արեայ
ոյի անունով խոստանալով բոլոր պայմանները կա-
ել՝ գիր ուղարկեց, որ տուանց կասկածի փութայ
իւր մօտ։ Վահան այն ժամանակ իւր հաւատարիմ-
ն հետն առած և զգուշութեան բոլոր միջոցները գործ
ով՝ դիմեց գէպի Պարսից բանակատեղին, ուր և մտաւ
երաժշտ փողը հնչեցնելով՝ իբրև մի յաղթական։ Այս-
նա ու նորա ուխտապահ ընկերներն այն մեծ հոգե-
բաւականութիւնն ունեցան, որ մինչ իրենք պա-
ւոր ընդունելութիւն էին գտնում և ամէն մեծա-
վայելում, բանակի մէջ եղած ուրացող հայերն ընդ-
ուակն արհամարհուում էին և դուրս քշուում հան-
ւսր ակումբներից։ Նիխոր կրկին անգամ խոստա-
վ՝ կատարել Վահանի առաջարկած պայմանները և
խօսել Թագաւորի մօտ, որ հայերի ապստամբու-
ն ի հարկէ ստիպեալ նկատուի և ապստամբող իշ-
ները պատժի փոխարէն իրենց արժանի պատիւն
ան, խնդրեց, որ Վահան ևս իբրև նշան իւր հաւա-
թութեան մի օժանդակ գունդ ուղարկէ Պերոզի որդի
հի ապստամբութիւնը ճնշելու համար։ Վահան ու-
եց այդ գունդը, հետն էլ իւր եղբօրորդի Գրիգորին,
ա այդպիսով զգալի ծառայութիւն մատուցած եղաւ,
և ամենայն պատրաստութեամբ արքունիք գնաց,
որչեց ապստամբութեան պատիւ և Մամիկոնեանց
ւտէրութիւնն ընդունեց, իւր հետևողների համար
պատուական պատիւներ ձեռք բերեց, ինչպէս օրի-
ադնիւ Կամսարականների համար իրենց տանուտէ-
ն իշխանութիւնը․ ապա փառքով պսակուած վե-
րձաւ հայրենիք, որը ամենանեղ դրութիւնից հա-
ր։ Այս եղաւ հաւանականաբար 485 Թ.-ին, քանի որ
լ 484-էր սպանուել։
Դ. Յովհան Մանդակունի կաթողիկոս.—Ի՛նչ դեր էր
րում հայ եկեղեցականութիւնը Վահանանց շարժ-
մէջ, այդ մասին հաւաստի տեղեկութիւններ միայն
լ մեր մեզ․ բայց ապստամբութեան առաջին [illegible]
ամ ապարէզի վերայ երևում է և նորա [illegible]
ղքում եռանդուն գործակցութիւն

քինչպէս կարելի է մի քանի նշաններից եզրակացնել, նո տակարգոն սուրբ կաթուղիկոսն Յոհան, ժամանակի Հա եկեղեցու հովուապետը: Անյայտ է մնում, թէ երբ հայրապետական աթոռ բարձրացաւ. Գիւտ կաթուղ սից անմիջապէս յետոյ արդեօք, թէ միջանկեալ ժա նակ անցաւ. երկար անեց այդ ժամանակը և թափուլ այդ միջոցին աթոռը, թէ մի ուրիշն էր հայրապետա իշխանութիւնը վարում: Թովմա Արծրունին պատմու թէ Գէորգ Գառնեցու օրով Բարծումա առաջին աշխա է նեստորականութիւն տարածել Հայերի մէջ, նախա ներքին ամբաստանել է Գէորգի առաջ և շատ ահերն գործել. իսկ ժամանակի Հայոց կաթուղիկոսը՝ Քրիստո թղթեր է գրել Ասորեստանի և Խուժաստանի կող ուղղափառ քրիստոնեաներին և նեստորականութ զգուշացրել: Այստեղից շատերը հետևեցրել են, թէ Գ ու Յովհան Մանդակունու մէջ կաթուղիկոս եղել է լինի յիշեալ Քրիստոսափորը: Բաւական է սակայն ի նկ առնել, որ Թովմա Արծրունին այդ պատմութիւնը բերում ապացուցանելու նպատակով, թէ Բարծու Եղիշէի պատմութիւնից հանել է Վարդան Մամիկոն գործակից Վահան Արծրունու սխրագործութեանց վ բերեալ մի գլուխ, մինչ Եղիշէի պատմութիւնը Գէո Բարծումայի ժամանակներ գրուած լինել չէր կարո անհա կարգադրուի, որ Թովմայի իւր տեղեկութիւնները ստանելի աղբիւրից չի առնում: Ինչպէս յետոյ կտեսն այն Քրիստոսափոր կաթուղիկոսը, որ նեստորականու նից զգուշացնելու համար թղթեր է գրել, ապրու Զ. դարում, և եթէ Գէորգ անունը հանենք Թովմայի մուածքի միջից, մնացած բոլոր հանգամանքներն էլ պատրուն են յարմար գալիս՝ թիւրիմացութեանը Գ անուան հետ կապուած և Բարծումայի հետևողներին խարէն Բարծումեան խնդրը գրուած: Պէտք է ենթա նաև, որ եթէ Մանդակունու և Գիւտի մէջ ուրիշ թուղիկոս լինէր, Փարպեցին առանց յիշատակութեա թողնի, ինչպէս որ Գիւտի մասին խօսել սկսած ժամ յիշում է անմիջապէս նրա նախորդ եղած Մանդակ [illegible]:

Յովհան Մանդակունուն սմանք նոյն են համարել վհան Եկեղեցացի Թարգմանչի հետ, որ ս. Մեսրոպի ագագոյն աշակերտներից էր, նորա մահից յետոյ ս. վսէփի հետ տեղապահ-վերակացու Հայոց եկեղեցւոյ, և ապա Կորիւնի պատմելով, չարչարանքի է ենթարւել Տիզբոնում հաւատի համար և «Խոստովանող» անուն ռանգել: Բայց այդ մի բոլորովին ձրի ենթադրութիւն որը հասկանալի դարձնելու համար պէտք կլինի Ե. որը առանց միջին շրջանի և մի քանի տասնեակ տարիքի երևակայել: Աւելի ընդհանրացած է այն կարծիքը, է Մանդակունին Գիւտ կաթուղիկոսի եղբօրորդին էր, ովհետև Փարպեցին իւր Թղթի մէջ յիշում է մի ինչ որ քանեալեայն Յովհաննու, Գիւտեայ կաթուղիկոսի եղբօրդւոյ» մասին: Կարելի՞ է սակայն ընդունել, որ այդ անելի Յովհանը Մանդակունին եղած լինի և Վահան ամիկոնեանին ուղղուած Թղթի մէջ հարկ նկատուի իւր ամանակակից և գործակից մեծանուն կաթուղիկոսին նաչեցնել նորա հօրեղբօր անունը տալով: Թող որ Փարեցու պատմածը նոյն Յովհանի մասին ամենևին չի էլ ամապատասխանում Մանդակունու հայրապետական երքին և արժանեաց: Կմնայ ուրեմն խոստովանել, որ անդակունու նախ քան հայրապետութիւն վարած անքի և ունեցած ազգակցական կապերի մասին մենք մի տեղեկութիւն չունենք: Իմանում ենք միայն, որ շամունեաց գաւառի Տախնառ գիւղից էր. իսկ Մանակունի անունը ցոյց է տալիս իշխանական ցեղից լիլը: Փարպեցին նորա անունն առաջին անգամ տալիս է կոււոյ ճակատամարտի համար եղած պատրաստուեանց առթիւ, 482 թ.-ից, երբ նա օրհնում և քաջարիչ բարեմաղթութիւններով ճանապարհ է ձգում Պարց դէմ աճապարող կտրիճներին, որոնց և յետոյ՝ յաղանակով վերադարձած միջոցին, ընդունում է նոր օրհւթեամբ և գոհաբանական մաղթանքներով: Ապա Մանակունին ներկայ է լինում Ներսէհապատի ճակատամարին և իւր աղօթքով ու քաջալերական խօսքերով խրաուսում զօրականներին: Իսկ երբ Վահան շրջապատուում Դուինում Հազարաւուխտի զօրքերով, նա և որոգայ

մէջ է մնում և ուրիշների նման փախուստի դիմած միջոցին՝ ձիուց վայր է ընկնում և կիսամահ գրութեան մէջ դուրս տարուելով՝ հոգին աւանդում: Մէկ էլ այնհետև հանդէս է գալիս նա Վահանի սպարապետական տանուտերական իշխանութեամբ Պարսկաստանից վերադարձած միջոցին, երբ եկեղեցական շուքով դիմաւորւում է նորան և դէպի Վաղարշապատի սրբավայրերն առաջնորդում: Այստեղ յիշւում են առաջին անգամ, ս. Լուսաւորչի նշխարները, որ ուրիշ սրբութիւնների հետ դուրս էին հանուել հայրենիք դարձող իշխանների հանդէպ, դորանով հաստատուում է մեր այն ենթադրութիւնը, թէ նոքա բերուել էին Թորդանից Դուինի ս. Գրիգոր եկեղեցու շինութեան ժամանակ և պահւում էին այս կաթողիկէում, որ Հայոց հայրապետութեան երկրորդ աթոռն էր։

Յովհան Մանդակունին, ինչպէս տեսնում ենք, գրեթէ նոյնպիսի յարաբերութեան մէջ է եղել Վահանանց հետ, որպիսին ս. Յովսէփ և իւր ընկերներն ունէին Վարդանանց օրով: Անշուշտ նորա կատարած դերը չէր սահմանափակւում հանդիսաւոր ժամերում քրիստոնէական հաւատոյ պաշտպաններին օրհնութիւն ու խրախոյս կարդալով, այլ պէտք է ենթադրել, թէ նա մնացած ժամանակն էլ եռանդուն կերպով աշխատում էր արիութեան ու միաբանութեան ոգին կենդանի պահել ապստամբութիւնների մէջ և եկեղեցւոյ հեղինակութիւնը գործ էր դնում ի նպաստ նոցա առաջ վարած դատին: Նա և խաղաղութեան տարիներում պէտք է որ նա պակաս բեղմնաւոր գործունէութիւն ցոյց տուած չլինի: Այն մեծ պատկառանքը, որ արտայայտում է Փարպեցին ամէն անգամ նորա անունը տալիս, և այն գովութիւնը, որ ընծայուում է նորան մեր բոլոր պատմիչների կողմից անխտիր՝ իբրև մի խիստ երախտաւոր ու մեծ արժանիք տէր հայրապետի, արդիւնք են կարծես մի ընդհանուր գիտակցութեան, թէ նա շատ աւելի բան է արել, քան աւանդում է մեզ կցկտուր պատմութիւնը: Յայտնի է միայն, որ նա մի շարք բարեփոխութիւններ է մտցրել մեր ամենօրեայ ժամերգութեան, մաշտոցի և պատարագամատոյցի մէջ. նորա անունով կանոններ կան պահուած

կանոնագրքերում և նորան վերագրւում են մի
նի թարգմանութիւններ, բաւական մեծ թուով ճա-
ր ու խրատաքանութիւններ, որոնք պատուաւոր տեղ
բռնում մեր եկեղեցական գրականութեան մէջ, բայց
տկապէս այդ ճառերի վաւերականութիւնը, գրական
պատմական արժէքը որոշելու համար դեռ մի լուրջ
ետազօտ է հարկաւոր, որ չի գտնուել: Պարզ է յամե-
յն դէպս այն, որ Մանդակունին ս. Սահակի և ս. Մես-
ոպի դպրոցից լինելով և նոցա գծած ուղղութեանը հե-
ևելով՝ աշխատել է լրացնել նոցա ձեռնարկութիւնները
եղեցական ներքին բարեկարգութեան նկատմամբ և
քրել այն խոտորութիւններն ու զեղծումները, որոնք
-ոք գործած պէտք է լինէին նախընթաց խառն ժա-
անակներում և որոնց դէմ մասնակի յաջողութեամբ
այն մաքառել էր նորա արժանաւոր նախորդը, Գիւտ:
ս տեսակէտից նա իրաւամբ համարւում է մեծ թարգ-
անիչների դպրոցի վերջին հոյակապ ներկայացուցիչը և
յա ընդարձակ բարենորոգչական գործունէութեան
ծիոփողն ու մի քանի մասերում վերջնականապէս ձևա-
ւորողը,—կարելի է ասել այնպէս, ինչպէս Մեծն Վա-
ն Մամիկոնեան Մազդեզանց կրօնի դէմ մաքառման
պարիզում վերջնական յաղթանակ տանողն եղաւ և
իստոնէութեան տիրապետութիւնը հայ երկրում ապ-
ահովողը:

Մանդակունին պէտք է որ նաև որոշ մասնակցու-
ւն ունեցած լինի Վահան Մամիկոնեանի շինարարու-
եան մէջ, ինչպէս վկայում է յատուկ Յովհաննէս պատ-
ոգիր: Փարպեցին Վաղարշապատի Մայր տաճարի մա-
ն ասում է. «Զոր հիմնարկեալ նորոգեաց մեծապայ-
ու շքեղութեամբ՝ զհնացեալ գործ նախնեացն իւրոց,
ոջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»: Իսկ նորա
թին նայելով այդ հիմնարկութիւնը կատարուած կա-
լի է համարել 487 թ.-ին, երբ նոյն ինքն Փարպեցին
դաբարձու» կարգուեցաւ Սրբավայրին և նորա հսկո-
ւթեան ներքոյ հաւանականաբար տեղի ունեցաւ վե-
նորոգութիւնը: Եթէ նա Վաղարշապատի կաթուղիկէն
հանի նախնեաց գործ է համարում, որ ինչպէս յա-

տուկ պարտք է զգում այն նորոգելու, այնպէս և բ
ցառիկ իրաւունքները է գործ դնում, յանձնելով սրբ
վայրի վերակացութիւնը ում կամենար, պատճառը եւ
այն ժառանգական իրաւունքներն էին, որ նոյն տ
համար ունեցել էր Լուսաւորչի սերունդը, իսկ Վարդ
Մամիկոնեանից յետոյ ստացել էր նորա օրինական ժառա
գը Վահան. ըստ այդմ և ս. Սահակ Պարթև նախնիննե
մէկն էր, որ իրենից առաջ նորոգել էր նոյն տաճարը։
որովհետև ասուած է թէ «հիմնարկեալ նորոգեաց», եւ
ւունք ունենք ընդունելու, որ նախկին անշուք և խ
խուլ շէնքը վերացուել, տեղն ամբողջութեամբ նոր
կառուցուել, ուրիշ խօսքով Ս. Էջմիածնի այժմեան Մ
տաճարը, որի հիմնական նորոգութեան մասին յետա
դարերից այլ ևս ոչ մի յիշատակութիւն չունինք և
իւր յատակագծով յիրաւի հայկական ճարտարապետ
թեան հնագոյն տիպն է ներկայացնում, կառուցուել
որչափ վերաբերում է շինութեան բուն գանգուա
(առանց գմբէթի, գանգակատան և այլ յաւելեալ
սերի), Մեծն Վահանի խնամքով, Յովհան Մանդակու
օրհնութեամբ և Ղազար Փարպեցու վերահսկողութեա
Սակայն յետագայ ժամանակների պատմիչների աւ
Վահան ուրիշ շատ շինութիւններ և նորոգութիւններ
արել է՝ ծածկելով այն աւերմունքները, որ գործուել
նախընթաց պատերազմների միջոցին, և թուում է
այս շրջանի մի ուրիշ փառաւոր յիշատակարան ուն
մինչև այսօր կանգուն մնացած, որ վկայում է Վա
Մամիկոնեանի և Յովհան Մանդակունու ազդեցութե
շինարարութեան գործի ընդարձակ ծաւալ ստանալու
զանազան նախարարութեանց սահմաններում ծաղկելո
Տիկորի հոյակապ, դժբաղդաբար այժմ կործանուելու
եկեղեցին է այդ, որից աւելի հին ամբողջական շինու
դժուար թէ գտնուի մեր երկրում և որի կիսեղծ ար
նագրութեան համաձայն Հայոց Յովհան հայրապետի
ջոցաւ է կառուցուել այն՝ Սահակ Կամսարական իշխ
նի օժանդակութեամբ։ Արձանագրութեան մէջ կան ն
դժուար կարդացուող ուրիշ իշխանների անուններ, որ
մին կարող է Վահանը լինել։ Ոչինչ չի արգե

*պա ընդունելու, որ այս տաճարի կառուցանող Յովհան պերապետը Մանդակունին էր, իսկ Սահակ Կամսարականին այն «երանելւոյ Արշաւրայ որդին», որին Վահան ու-րիշ իշխանների հետ Նիխորի մօտ ուղարկեց, նորա հետ եղած բանակցութեան սկզբում, և որ յիշուում է 506 թուին Բաբգէն կաթուղիկոսի թղթում իբրև «Արշարու-նեաց տէր», պայազատած լինելով ուրեմն, իւր երեցա-գոյն եղբայրների՝ Ներսէհի և Հրահատի մահից յետոյ Կամ-սարական տան իշխանութիւնը։*

Ե. Վահան Մամիկոնեանի մարզպանութիւնը. Հայոց եկեղեցու եւ երկրի վիճակը նորա օրով։—*Եթէ և Վաղար-շապատի կաթուղիկէի շինութիւնը Վահան իբրև Մամի-կոնեանց տանուտէր էր սկսել՝ Դուինի և ուրիշ տեղերի շինութիւնները նա արաւ հաւանականաբար արդէն իբրև ամբողջ երկրի իշխան, մարզպան կարգուելուց յետոյ։ Թէ ո՛ր թուականին տեղի ունեցաւ այդ կարգումը՝ պարզ յայտնի չէ։ Փարպեցին պատմում է, որ երբ Վահան պա-տուով ու փառքով Պարսկաստանից վերադարձաւ՝ ետևից Պարսկական անունով մի նոր պարսիկ մարզպան եկաւ, որ նորան շատ էր սիրում ու պատուում և նորա արժանիք-ները, արարքներն ու վայելած յարգանքը տեսնելով՝ այն եզրակացութեան յանգեց, որ այս երկիրը նորանից յար-մար կառավարիչ ունենալ չէր կարող։ Ապա նա շտապեց իւր խորհրդածութիւններն այս նկատմամբ Վաղարշ թա-գաւորին ներկայացնելու, որ և խորհրդակցելով իւր ա-տեանի հետ՝ շատ բանաւոր գտաւ նորա առաջարկը, հրովարտակ ուղարկեց և Վահանին Հայոց աշխարհի մարզ-պան կարգեց։ Սակայն Սեբէոս, Փարպեցու պատմութեան շարունակողը և յետագայ շրջանի համար ամէնից արժա-նահաւատ պատմիչը՝ Վահանին մարզպան եղած է ցոյց տալիս Կաւատի միջոցաւ։ Քանի որ Վաղարշի թագա-ւորութիւնը կարճատև եղաւ, 488 թ.-ին նորա գահից զրկուելով և Պերոզի որդի Կաւատի թագաւորելով, անհա-ւանական չէ, որ նոյն այդ թուականին Վահան մարզպան կարգուած, և այդ պատճառով Սեբէոս, որ Վաղարշին մինչև չի յիշում, Կաւատի թագաւորութեան հետ կապած լինի Վահանի մարզպանութիւնը։ Մարզպ*

*թեան հրավարտակին ընդունելու առթիւ հանդէս է գ*
*նորից Յովհան Մանդակունին և մի ոգևորուած քա*
*է ուղղում խուռներամ բազմութեանը, որ բերկ*
*լուրն առնելուն պէս գունդագունդ Դուինի մայր տա*
*կը դիմել, գոհաբանութիւն մատուցանելու Երկնաւո*
*Այդ քարոզը, որ Փարպեցին, հարկաւ իւր խօսքե*
*յառաջ է բերել պատմութեան մէջ՝ զուր տեղը հա*
*րուել է շատերի կողմից անհամապատասխան Ման*
*կունու հանճարին և րոպէի պահանջին։ Ընդհակառակ*
*Գրքից վերցրած շատ յարմար բնաբանով և դիպող*
*նակներով կենդանի արտայայտութիւն է գտնում*
*տեղ այն ոգևորութիւնը, որ պէտք է զգային քրի*
*նէութեան հաւատարիմ պաշտպանները՝ եկեղեցւոյ*
*թանակը տեսնելով և զգալով, թէ ինչպէս «զթագա*
*քաղցրացոյց եկեղեցի, զգաղանս ընտելացոյց . . . զթ*
*միս ճշմարտութեան ամաչեցոյց»․ ուստի և ուսուցա*
*է՝ ոչ միայն կրկին սիրով սիրել այդ եկեղեցին, այլ և*
*եկեղեցւոյ քարոզած սիրոյ մեծ օրէնքը գործ դնել*
*րեալ ազգակիցների նկատմամբ, որոնք թշնամանել*
*եկեղեցին, սրբութիւնը պղծել, մոխրատուններ շ*
*ճշմարտութիւնը մոռացել․ մոռանալ նոցա վատ ա*
*քը, իրենց ցոյց տուած բարոյական զօրութեամբ*
*սկարութիւնը բառնալ, հրաւիրել նոցա եկեղեցւոյ*
*բախը և զղջման արտասուօք նոցա յանցանքը քա*
*միջոց ընծայելով՝ կազմել վերստին նոցա հետ մի*
*Քրիստոսի՝ վերջին երանաւէտ կոչման և երկնային ժա*
*գութեան արժանի։*

*Յամենայն դէպս Յովհան Մանդակունին կենդա*
*ուրեմն և գործակից Վահանին նորա մարզպանու*
*ժամանակ—մինչև երբ, դժուար է ասել։ Եթէ վերև*
*շուած արձանագրութեան համաձայն ընդունենք, ո*
*րիշ շինութիւնների հետ Տիկորի եկեղեցին նորա ձե*
*տուութեամբ է կառուցուել, կարելի է ենթադրե*
*բաւական ժամանակ պէտք է անցած լինի, մինչև*
*խոշոր շինուածները գլուխ գային։ Այլ և այն հա*
*մանքը, որ մեր պատմիչները 5-6 տարուայ հայրապ*
*միայն վերագրում են Մանդակունու յաջորդ*

աթուղիկոսին, իսկ սա, ինչպէս կտեսնենք, 506 թ.-ին
ոբել է իւր նշանաւոր ժողովը, իբաւունք է տալիս
ակուռնաւ կաթուղիկոսութեան տարիները մինչև Ե.
ւ վերջերը ձգելու: Սակայն կարելի է համարել այն
, որ նա Վահան մարզպանից շատ առաջ պէտք է
անած լինի, որովհետև Փարպեցին վերջինին ուղղած
Ծղթի մէջ այնպէս է խօսում ժամանակակից կա-
նկոսի մասին, որ այդ կաթուղիկոսը Մանդակունին
չի կարող: Սակայն մենք ո՛չ Փարպեցու Թղթի գրու-
ժամանակը և ո՛չ Վահանի մահուան տարին գի-
ժամանակակից մի օտարի պատմագրի հաղորդած
ւթիւններից երևում է, որ Վահան մի անգամ ևս
ամբութեան դրօշ է բարձրացրել Կաւատի օրով,
նշու մնեւը նորոգուեցան քրիստոնէութեան դէմ և
իկները փորձեցին նորից կրակատուններ շինել Հա-
անում: 496 թ.-ին Կաւատ գահից ձգուեցաւ և
երեք տարի յետոյ, 499 թ.-ին, Հեփթաղների օգ-
նամբ կարողացաւ վերահաստատել իշխանութեան
Այս առթիւ տեղի ունեցած ներքին պատերազմների
ին հաւանականաբար Վահան նոյն կերպ անկախ իշ-
ւթիւն էր վարում, ինչպէս երկու դար առաջ իւր
հաւ Մանուէլ Մամիկոնեանը, և որովհետև 502 թ.-ին
րազմ ծագեց պարսիկների և յոյների մէջ այն պատ-
ւ, որ Յունաց կայսրը հովանաւորում էր հայերին՝
ի է կարծել, թէ Կաւատի գահի վերայ հաստա-
ուց յետոյ իսկ Վահան շարունակեց կայսեր օգնու-
ք պահել անկախութիւնը, մինչև որ 506 թ.-ին խա-
թիւն կնքուեցաւ երկու մեծ պետութիւնների մէջ
աքանչիւրը իւր նախկին սահմանները պահելով՝
իկները կատարեալ տէր դարձան նորից Հայաստանին:
է է, որ պատերազմի ժամանակ Յունաց բաժնում
Միջագետքի Ամիդ բերդաքաղաքը երեք ամիս պա-
եցաւ և 503 թ.-ի սկզբին առնուեցաւ պարսիկնե-
ակ այս կռուի մէջ մասնակցում էր Հայոց գուն-
արք Մամիկոնեան զօրավարի առաջնորդութեամ
ք Փարպեցու Թուղթը, որ գրուած է Ամբ
հենց այս ժամանակում չի՛ գրուել:

մազապ Մամիկոնեան իշխանը, որ պէտք է Վահանին հասցնէր թուղթը՝ պատերազմի պատճառով Հայոց գնդի հետ Ամիդ չէր եկել: Այդ դէպքում Վահան կենդանի կլինէր դեռ եւ 503 թ.-ին և որովհետև 506 թ.-ին գրած Բաբգէն կաթուղիկոսի առաջին թղթում Վարդ Մամիկոնեան յիշւում է առաջին տեղը, բայց առանց «մարզպան» տիտղոսի, մինչ Սեբէոս և այլ պատմիչներ յիշում են, որ նա իւր եղբայր Վահանից յետոյ 4 տարի մարզպանութեան իշխանութիւն է վարել, կարելի է մտածել, որ Վահան վախճանել էր պատերազմի միջոցին, իսկ խաղաղութիւն հաստատուելուց յետոյ նորա տեղը նոյն 506 թ.-ին մարզպան կարգուեցաւ Վարդ, որ Յունաց կողմից եւս պատրիկութեան տիտղոս էր ստացել: Մեր պատմիչներից ոմանք յիշում են նաև, թէ Վահան «զՍալանս արգելականս» արար—երբ և ինչպէ՞ս, յայտնի չէ:

Շատ ցաւալի է հարկաւ, որ այս նշանաւոր մարդու, ինչպէս տեսնում ենք, բազմակողմանի գործունէութեամբ հարուստ մարզպանութեան շրջանը պատմութիւնից չի դարձել: Դորա փոխարէն նոյն շրջանի Հայոց եկեղեցական ներքին կեանքի մասին խիստ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Ղազար Փարպեցու վերև յիշած թուղթը: Այդ ինքնատիպ յիշատակարանը մի յառաջաբան եւս ունի, որ աւելի է պարզում նորա գրութեան հանգամանքները: Իմանում ենք այդպիսով, որ Վաղարշապատի կաթուղիկէի հոգաբարձու կարգուելուց յետոյ Փարպեցին շատ նախանձորդներ և թշնամիներ է ունենում: Սոքա աշխատում են նախ միջնորդներով ու ընծաներով Վահան Մամիկոնեանին գրաւել ու որբանոցը նորա ձեռքից առնել, բայց երբ չի յաջողում, հետամուտ են լինում բամբասանքով ու զրպարտութիւններով վարկաբեկ անելու նորան, մինչև որ մի դժբաղդ դէպք՝ եկեղեցու փայտակերտի այրուիլը հրդեհից, նոցա ձեռքին զէնք է դարձնում մեղադրանքն այնտեղ հասցնելու, որ Վահան եւս երես է թեքում նորանից և նա հալածուում է, մերկ ու անարգուած թողնում հայրենիքը, գնում է Ամիդ քաղաքը և այնտեղից թուղթ գրում մարզպանին արդարանալու համար: Առանձին ուշադրութեան

…րժանի է այստեղ այն պայքարը, որ մղում էր Ղա-
…րքի նման յունական կրթութիւն ստացած եկեղեցա-
…կաններ ի և տգէտ աբեղաների մէջ: Ղազար յիշում է մի
…րք անուններ՝ Մովսէս փիլիսոփայ, Տէր Խոսրովիկ, Աբ-
…րջամ եպիսկոպոս, որոնք յայտնի էին իրենց գիտու-
…թեամբ, սուրբ վարքով, արժէքաւոր գրուածներով, բայց
…անր հալածանքի էին ենթարկուել այդ աբեղաների կող-
…ից, մինչ այն աստիճան, որ նոցանից մէկի ոսկորները
…երեզմանից հանել, ջուրն էին թափել: «Թարգման» ա-
…ունք, որ իրենց վերայ կրել էին Ե. դարի պարծանք կող-
…ից բոլոր հայերը՝ թշնամանքի ու ատելութեան նշա-
…ռան էր նոյն աբեղաների բերնում. կոյր նախանձով
…կցուած սոքա չէին կարող տանել այս կամ այն լուսա-
…որ անհատի վերայ երևեցած ակներև առաւելութիւն-
…ները և գժբաղդաբար յաջողում էին բանսարկութեամբ
…ոցա դէմ շարժել տգէտ ամբոխը: Եւ այդ աբեղաների
…զդեցութիւնն այնքան զօրեղ էր, որ ժամանակակից կա-
…թուղիկոսը (երևի Բաբգէն) չի վստահանում պաշտպա-
…նել Ղազարին նոցա մեղադրանքների դէմ, թէպէտ, ինչ-
…պէս երևում է սորա բացատրութիւններից՝ չնչին ու
…աւելի քան անհիմն էին այդ մեղադրանքները: Մեղա-
…դրում էին ի միջի այլոց, թէ Ղազար աղանդաւոր է, և
…դ առիթ է ընծայում նորան մի քանի խիստ կարևոր
…կնարկներ անելու «Հայոց աշխարհի աղանդի» մասին, որ
…չել ենք արդէն առաջ՝ Մծղնէից աղանդի ծագումը բա-
…ատրելիս, և որ ցոյց է տալիս, թէ Ղազարի ժամանակ
…դ աղանդը շատ տարածուած է եղել հայերի մէջ: Նա
…ուրանում մինչև իսկ, որ իրեն յայտնի են եղել աղան-
…աւորներից ոմանք. բայց ստուարկում է թէ իրաւունք չի
…մարել իրեն դատ բանալ նոցա դէմ, այլ աւետարանի
…մաձայն թողել է, որ որոմն ու ցորենը միասին աճեն
…նչև հունձի ժամանակ, և միակ արդար Դատաւորը դա-
…տաստան տեանէ: Եւ Փարպեցու ամբողջ թուղթը մի կեն-
…անի վկայութիւն է, որ չնայելով ս. Սահակի և ս. Մեսրո-
…պի ցանած բարի սերմերին և այն արեանն ու քրտանցը,
…նոցա հաւատարիմ աշակերտները մի քանի տասնեակ
…րիների ընթացքում թափեցին նոյն սերմերն աճ

լու համար, որոմ խիստ շատ կար դեռ դարի վերջին
փոթորկոտ հայրենիքում և կեանքի բոլոր ասպարէզներ
ուռճանալով՝ սպառնում էր այն հոկայական ջանք
պտուղները խեղդել։ Բայց նոքա չխեղդուեցան. որոմը
չացաւ հետզհետէ, և նոքա աճեցին. որովհետև
սերմից էին և ամուր արմատ էին ձգել բարեբեր հողի մ



ԳԼՈՒԽ Ժ.

## Հայոց եկեղեցւոյ մասնակցութիւնը դաւանակ վէճերի մէջ եւ բռնած դիրքը. Դուինի ժողովներ

Ա. Նեստորական եւ Քաղկեդոնական վէճերը։—Ե. դէպի Զ. դար անցման հետ զգալի փոփոխութիւնն տեղի ունեցան Հայոց եկեղեցւոյ արտաքին ու ներք յարաբերութիւնների մէջ։ Մինչև այդ մեր եկեղեցւ ներկայացուցիչների բոլոր ջանքն էր եղել, ինչպէս տե-սանք, մի կողմից քրիստոնէութիւնը պաշտպանել օտ կրօնի նուաճողական ձգտումների դէմ, միւս կողմ ներքին կազմակերպութիւնն առաջ տանել՝ ընդհանու եկեղեցւոյ մէջ մշակուած քրիստոնէական գիտութիւն իւրացնելով և ժողովրդի հոգևոր ու բարոյական կրթու-թեան համար սորա ընձեռած միջոցները մեր կեանքին յարմարեցնելով։ Դառն իրականութեան ստիպողական պահանջների շնորհիւ նոքա ազատ ժամանակ ու յարմա-րութիւն չէին ունեցել զբաղուելու այն բարդ դաւանա-կան խնդիրներով, որոնցով ալեկոծուած էր Ե. դարու ամբողջ քրիստոնեայ աշխարհը։ Նոքա առաջնորդուել էին այն համոզմունքով, որ հաւատոյ էական կէտերը մի ան-գամ ընդ միշտ ընդգծուած ու որոշուած են Նիկիայ տիեզերական ժողովի մէջ, և հայերն ընդունելով այդ պարզ հաւատքը Մեծ Լուսաւորչի որդու ս. Արիստակէսի 'Քոցաւ' մի հոգի և մի շունչ եկեղեցւոյ ընդհանրութեան

...տառ, անաղարտ էին պահում այն և պէտք է պահէին յաւիտեան։ Կ. Պոլսում և Նիկեայում ժողովուած հայրերն այդ հաւատքի վերայ նոր բան չէին աւելացրել, այլ նոյն աւելի պարզաբանել էին և պաշտպանել զանազան աղանդաւոր մոլորութեանց դէմ, որոնցից և զգուշանալ պէտք էր, ինչպէս որ տեսանք՝ իւր ժամանակին զգուշացել էր և յետնորդներին ճանապարհ ցոյց տուել Լուսաւորչի վերջին ժառանգը, Ս. Սահակ։ Թէ սորա և իւր գործակիցների ձեռք առած խիստ միջոցները և թէ մատուանդ քաղաքական հանգամանքները թոյլ չէին տուել, որ այն մոլորութիւնները մուտ գործեն հայերի մէջ, և ...ակ աղանդը, որ այստեղ դեր էր կատարել և շարունակում էր կատարել, ոչ մի որոշ առընչութիւն չունէր ժամանակակից միւս եկեղեցական աղանդների հետ և զուրկ էր վարդապետական հիմունքներից։ Սակայն վաղ թէ ուշ Հայոց եկեղեցին մի հաշիւ պիտի տեսնէր նոցա հետ և որոշ դիրք բռնէր դուրսն արծարծուող դաւանական խնդիրների նկատմամբ, և ահա ամէնից առաջ նորա դէմն է ելնում անմիջական շրջապատում սպառնական ուժ ստացած նեստորականութիւնը։

Կ. Պոլսոյ պատրիարք Նեստորի անունով այդպէս կոչուող աղանդը, որ դատապարտուեցաւ Եփեսոսի տիեզերական ժողովում, ծագումն է առել իսկապէս Անտիոքի դպրոցից, որի գլխաւոր ներկայացուցիչներն էին մեր առաջ յիշած Դիոդոր Տարսոնացին և Թէոդորոս Մամեստացին։ Վէճը սկզբում ժամանակի քրիստոնէական գիտութեան երկու գլխաւոր կենդրոնների՝ Անտիոքի և Աղեքսանդրիայի մէջ էր, որոնք տարբեր ուղղութեամբ և տարբեր կերպով էին բացատրում Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը։ Այն հարցին, թէ Քրիստոսի անձի մէջ կատարեալ աստուածայինն ու կատարեալ մարդկայինը ինչպէ՞ս էին միացել, Անտիոքացիք, ս. Գրքի մեկնութեան և փիլիսոփայական դատողութեան վերայ հիմնուելով՝ պատասխանում էին, թէ աստուածայինն այնքան բարձր է և հեռու մարդկայինից, որ նոցա մէջ իրական միութիւն լինել չի կարող, այլ մարդ Յիսուսի մէջ աստուածայինը բնակութիւն հաստատելով՝ աստուածանման է դարձրել

Նորա շարժումներն ու գործերը. իսկ Աղեքսանդրացի հիմք ընդունելով հաւատը դէպի Քրիստոսի միջոցաւ տե ունեցած փրկագործութիւնը, առանց որի քրիստոնէու թիւնը կորցնում էր իւր իսկական արժէքը, առարկու էին, թէ այլ ևս ի՞նչ փրկագործութիւն, եթէ աստուա ծայինն ու մարդայինը կատարեալ կերպով չեն միացե այդ միութեան շնորհիւ կատարելապէս սրբուած ու աս տուածացած Յիսուսի մարմինը տանջանք ու մահ կրե խաչի վերայ: Աղէքսանդրիոյ պատրիարք Կիւրեղը նախ գահելով Եփեսոսի ժողովին՝ ընդունել տուաւ վերջին հա յեցակէտն իբրև անհրաժեշտ հետևութիւն նիկիական դա ւանութեան, և Նեստոր ու իւր հետևողները բանադրուե ցան: Բայց Անտիոքացիները հեշտութեամբ տեղի չտուեցի թէպէտ 433 թ.-ին նոքա որոշ համաձայնութեան եկա Կիւրեղ Աղեքսանդրացու հետ, որով Եփեսոսի ժողովը ճա նաչեցին և ի թիւս այլ որոշումների Նեստորի դէմ ար ձակած դատավճիռն ընդունեցին, սակայն քանի որ բա նադրանքից ազատ էին մնացել Անտիոքի դպրոցի բա ներկայացուցիչները՝ Դիոդոր ու Թէոդորոս, շարունակում էին աւելի եռանդուն կերպով տարածել սոցա գրուած ներն ու սոցա ուսումը: Իսկ ծայրայեղների մի խումբ ամենևին համակերպել չկամեցաւ և պետութեան կողմի հալածուելով՝ ապաստան որոնեց հեռաւոր արևելքում, ուր և հետամուտ եղաւ պահպանելու զուտ նեստորակա-նութիւնը և նորանոր հետևողներ գտնելու:

Միւս կողմից հանգիստ չէին նստած Կիւրեղ Աղէք-սանդրացու կուսակիցները: Անտիոքացիների քօղարկեալ գործունէութեան հակառակ՝ նոքա բացարձակ կերպով դատապարտում և հերետիկոսական էին անուանում այն ամէնը, ինչ որ կապ ունէր Անտիոքի ուսման հետ, ո և է բաժանում կամ երկուութիւն էր դնում Քրիստոսի մէջ: Ծայրայեղութիւնն այնտեղ հասաւ, որ Եւտիքէս անունով Կ. Պոլսում և պալատում մեծ յարգ վայելող մի վանա-կան սկսեց քարոզել, թէ մարդկային բնութիւնը բոլորո-վին ձուլւում անհետանում է Քրիստոսի աստուածային նութեան մէջ և մնում է միայն մի աստուածային բնու-[illegible]ն իսկ մարմինն իւր բոլոր շարժումներով ա-

ուածային դարձած: Եւտիքէսի դէմ ելաւ Կ. Պոլսոյ Փլաբիանոս պատրիարքը. իսկ Նորա եկկուսի վերայ իբրև պաշտպանաւոր հանդէս եկաւ Կիւրեղի յաջորդ Աղէքսանդրիոյ Դիոսկորոս պատրիարքը, որ մի նոր ժողով գումարել տուաւ Եփեսոսում 449 թ.-ին, Դ. տիեզերական ժողովի հաստատուած դաւանութիւնն իբրև հիմք ընդունելով և ամէն նորութիւն դատապարտելով՝ հարկադրեց Եւտիքէսին յետ առնել իւր քարոզածները և այդպիսով ներումն ստանել. իսկ Փլաբիանոսին բանադրել ու աքսորել տուաւ իբրև երկու բնութիւն ուսուցանողի: Սակայն Լևոն Ա. պապը, որի Փլաբիանոսին ուղղած՝ նորան արդարացնող և Եւտիքէսին դատապարտող թուղթը, այդ ժողովում կարդացին և ոչ մի պահանջին ուշադրութիւն դարձնել կամեցան, «Աւազակաց ժողով» անուանեց այն և յաջողեց նորա որոշումներն ի չիք դարձնել: Ապա բոլոր վէճերին վերջ դնելու նպատակով 451-թ.-ին մի մեծ ժողով գումարուեցաւ Քաղկեդոնում, որ համարուեցաւ Դ. տիեզերական ժողով և հակառակ ժողովականների մեծամասնութեան համոզումներին, տեղի տալով միայն Հռոմի պահանջների առաջ՝ դաւանութեան հիմք ընդունեց Լևոն Ա.-ի յիշեալ թուղթը (մեզանում այդպէս կոչուած Լևոնի տումարը) և որոշեց ճանաչել «մի Քրիստոս յերկուս բնութիւնս». թէպէտ այդ որոշումը երբէք հաշտեցնել չէր կարելի Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութեան հետ, որի նշանաբանն էր «Մի Քրիստոս՝ կամ մի բնութիւն յերկուց բնութեանց», այնուամենայնիւ ժողովը Դ. տիեզերական ժողովի որոշումներ հաստատում ու Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութիւնն ուղղափառ էր ճանաչում, Դիոսկորոսին էլ ոչ իւր մոլար ուսման, այլ իբր թէ ինչ ինչ վարչական զանցառութեանց համար աթոռից զրկում. ապա Նորա կողմնակիցներից շատերին Եփեսոսի Բ. ժողովին տրամագծօրէն հակառակ որոշումների տակ ստորագրել տալով, Նեստորին ու Եւտիքէսին նոր ի նորոյ բանադրելով՝ ենթադրում էր թէ կյաջողի ամէն երկպառակութիւն ծածկել և ընդհանուր եկեղեցւոյ մէջ խաղաղութիւն վերականգնել:

Ընդհակառակն նոյն այս ներքին հակասութիւնն.

քով լի Քաղկեդոնի ժողովը պատճառ դարձաւ քրիստո
նէական եկեղեցին ընդ միշտ բաժան բաժան անել
Նորա որոշումները զօրեղ ընդդիմութեան հանդիպե
նախ Երուսաղէմում, ապա Եգիպտոսում. և կայսեր
կան կառավարութիւնը ստիպուած էր նոցա գործադ
տալու համար զէնքի դիմել և մեծ արիւնահեղութիւնն
անել։ Ընդդիմութիւնը սակայն քանի գնաց սաստկացա
արևելքի բոլոր նշանաւոր աթոռները, նոյն իսկ Անտիո
մի բնութիւն դաւանողների ձեռքն անցան, և սոցա կող
այնչափ զօրացաւ, որ Զենոն կայսրը խոհեմութիւն հ
մարեց 482 թ.-ին Կ. Պոլսոյ Ակակիոս պատրիարքի թել
դրութեամբ «հենոտիկոն» կոչուած մի հրովարտակ հր
տարակել, որով բնութիւնների մասին վիճելն արգելուա
էր, առաջին երեք տիեզերական ժողովների ուսուց
դաւանութիւնը միայն ուղղափառ ճանաչւում և նոր
նից դուրս ամէն նորութիւն դատապարտւում։ Այդպ
սով լռելեայն դատապարտուած էր լինում Քաղկեդ
դաւանութիւնը. և թէպէտ Հռոմի պապը մերժեց
նոտիկոնը և առժամանակեայ բաժանումն յառաջաց
արևմտեան և արևելեան եկեղեցիների մէջ, բայց Զեն
յաջորդ Անաստաս կայսրն ևս շարունակեց պահել ն
դրութիւնը և մի բնութեան ուսումը դարձաւ տի
դաւանութիւն Բիւզանդական կայսերութեան բոլոր ս
մաններում։ Միևնոյն ժամանակ Զենոն կայսրը աւե
էր ծայրայեղ Անտիոքացիների վերջին կայանը կայսեր
թեան մէջ՝ փակել տալով 484 թ.-ին Եդեսիայի դպր
և հալածելով այնտեղ բոյն դրած նեստորականներ
Սոքա անցան Պարսից կողմը և կենդրոն դարձնելով Մ
բինը, ուր եպիսկոպոս եղաւ մեր վերև յիշած Բարծու
ասորին, սկսեցին եռանդով տարածել իրենց ուսո
Պարսկաստանի զանազան կողմերում բնակող քրիստոնե
ների մէջ։ Նեստորականութեան պաշտպան հանդիսաց
նաև Սելևկիոյ Ակակիոս եպիսկոպոսը, որ համարւում
Պարսկաստանի քրիստոնեաների կաթողիկոս և որի
յաջորդը Բաբէոս 499 թ.-ին մի ժողով գումարեց Սելևկի
ում և նեստորական ուսումն իբրև պարսկական ե
շտօնական դաւանութիւն ընդունել տու

ուման և Ակակիոսն էլ, որ մի ժամանակ միմեանց սուտակորդներ էին եղել և երկար վէճ վարել, եկեղեց-համաքան վարդապետներ հռչակուեցան, ի թիւս ոնի Անտիոքացիների՝ Դիոդորի, Թէոդորոսի ու Նես-տի։ — Ահա այսպէս էր դրութիւնը Զ. դարի սկզբին,

Հայոց եկեղեցին հարկադրուեցաւ ուշադրութեան նել, որ այլ ևս դաւանութեան միութիւն չկար Ընդ-րական եկեղեցւոյ մէջ. Բիւզանդական կայսրութեան արձակ սահմաններում տիրում էր մի բնութեան ու-մը՝ ըստ Հենոտիկոնի տրամադրութեան. Հռոմում և ա եկեղեցական իրաւասութեան ենթարկուած քրիս-նեայ աշխարհում պաշտպանուած էր Քաղկեդոնի ղովի հաստատած երկու բնութեան ուսումը. իսկ րսկաստանում ապրող խառն ասորի և պարսիկ քրիս-նեաները նեստորականութիւն էին ընդունել։ Պէտք էր շել, թէ որ՞ կողմը բռնել։

Բ. Բաբգէն կաթուղիկոսի թղթերը. Դուինի Ա. ժողովը— հան Մանդակունու յաջորդ Բաբգէն կաթուղիկոսից ր ձեռքն է հասել երկու թուղթ, որոնցից առաջինը տմական մեծ արժէք ունի, իսկ երկրորդը միայն մի անաւոր խնդիր է շօշափում, և վաւերականութիւնը կածելի է։ Քանի որ այդ թղթերը մինչև վերջին ժա-նակ անծանօթ էին, ուշ ժամանակի պատմիչների սխալ ղեկութիւնների հիման վերայ կազմուել էր այն կար-քը, թէ Բաբգէն 491 թ.-ին ժողով է գումարել Վա-րշապատում և Քաղկեդոնի ժողովը բանադրելով՝ Հա-նական անջատում յառաջ բերել իւր և ընդհանուր եկեղեցւոյ մէջ։ Բայց Բաբգէնի «Թուղթ Հայոց ի պարսս, ւ ուղղափառս» ուրիշ բան է ցոյց տալիս։ Այստեղ ւելեան եկեղեցիների փոխադարձ յարաբերութիւնները տկերանում են ճիշտ այնպէս, ինչպէս վերև նկարա-ուեցաւ։ Կաւատի թագաւորութեան տասնևութերորդ-որին, այսինքն 506 թ.-ին, Դուին են գալիս մի խումբ եղեցականներ Պարսկաստանի զանազան կողմերից և յոց կաթուղիկոսին ու նորա շրջապատողներին պատ-ւմ են. Մենք մինչև այժմ անաղարտ պահել ենք քրիս-ոնէական հաւատը՝ այնպէս, ինչպէս աւանդել է

*Նիկիոյ ժողովը հայրերը և ինչպէս ընդունում է ամ
քրիստոնեայ աշխարհը. Բայց Պերոզի թագաւորութ
քառասնևօթերորդ տարին (այսինքն 484 թ. ին) յայտն
ցան մարդիկ, ինչպէս Ակակ, Բարծումա, Մանի
որոնք սկսեցին ճշմարիտ հաւատը պղտորել և Նեստ
Դիոդորի, Թէոդորոսի մոլորութիւններն ուսուցանել.
ղովներ գումարել և նզովել ամէն կերպ ուղղափառ
րին, որ իրենց հետևեն: Այժմ ևս Ասորեստանի Բաբէ
թուղթը իւր հետ եղած նեստորական եպիսկոպոսն
ստիպում է, որ Քրիստոսի մէջ երկու անձ կամ ե
որդի ընդունենք. մին երկնքից իջած՝ Հօր հաւասար,
տուծոյ Բանը, միւսը մեզ նման մահկանացու մարդ
սուս. և պնդում է, թէ Հռոմը, Հոյք, Վիրք, Աղու
բոլորեքեան այս նոյն հաւատն ու կանոնը ունին.
էլ Կաւատ թագաւորից հրամանագիր առանք ու եկ
որ գրով հաստատէք ու տաք, թէ ինչպէս էք ընդուն
դուք ճշմարիտ հաւատը:—Եւ ահա Բաբգէն, որի հ
Հայոց Դուին մայրաքաղաքում ժողովուած էին* բոլոր
*պիսկոպոսները, վանականներն ու նախարարները,
Պարսից եկեղեցւոյ յիշեալ պատգամաւորները նորան ն
կայացան, թուղթ է գրում Պարսից աշխարհի բոլոր եպ
կոպոսներին, քորեպիսկոպոսներին, երէցներին և այն, որ
ցից մի քանիսի անունները տալիս է, վաւերացնում
իւր, քսան եպիսկոպոսների և տասնևչորս նախարարն
ստորագրութիւններով և հաստատում, որ Հայերը, ի
պէս և Յոյները, Վրացիք և Աղուանք, հաւատարմութե
ու անփոփոխ պահել են այն հաւատը, որ Առիստակէ
միջոցաւ ընդունել են Նիկիոյ* 318 *հայրերից և որին մի
բան են գտնուել Կ. Պոլսոյ ժողովի* 150 *ուղղափառ եպ
կոպոսները. իսկ Նեստորի ու նորա համախոհների ք
րոզածը ծանր հայհոյութիւն են համարում և մերժել
մերժում ու նզովում:*

*Ինչպէս տեսնում ենք, այս թղթի մէջ խօսք չկ
Քաղկեդոնի ժողովի մասին: Խնդիրը պարզ է. Պարսկա
տանի հարաւ-արևմտեան մասի գլխաւոր կենդրոններու
հաստատուած նեստորականութիւնը կամենում է ի
ազդեցութիւնը տարածել նոյն պետութեան սահմանն*

մ գանուաղ բոլոր քրիստոնեաների վերայ. բայց շա-
րը չեն կամենում ընդունել այդ նոր ուսումը և դի-
մ են Հայոց Հայրապետի հովանաւորութեանը ներքև
ւնց մերձաւոր ամէնից աչքի ընկնող եկեղեցական իշ-
խանութեան: Հայերի վերաբերմունքից չի երևում, թէ
շա իրենց ևս վտանգուած համարէին մոլորեցուցիչ նես-
րականների կողմից. ընդհակառակն նոքա մի առանձին
արծանքով չեշտում են, որ «ճշմարիտ հաւատ» ունին
այդ հաւատը խիստ հաստատուն է ու անփոփոխելի.
ատոր և իւր համախոհները նորութիւն չեն նոցա և
ւս քրիստոնեայ ազգերի համար, այլ վաղուց ճանա-
ւած են իբրև հայհոյիչներ և ժամանակին մերժուած ու
ովուած: Թղթի մէջ պարզ չէ, թէ հայ եպիսկոպոս-
րն ու վանականներն ու նախարարները ինչո՞ւ էին ժո-
վուել Դուինում 506 թ.-ին. արդեօք այս նոյն նեստո-
ականութեան խնդիրը քննելու, թէ ուրիշ պատճառով:—
ովհեան է. գարում Վրաց բաժանման առթիւ փոխա-
նկուած թղթակցութեանց մէջ յիշուում է, թէ Կաւատ
ագաւորի օրով Բաբգէն կաթուղիկոսի գումարած ժո-
վին ներկայ են եղել Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսը մի
րք եպիսկոպոսներով, Աղուանք և Սիւնիք, և այդ ժո-
վում նզովուել են Քաղկեդոնի ժողովն ու Լևոնի տո-
մը, կարելի է ենթադրել, թէ նոյն ժողովը բաղմադիմի
նդիրներ է ունեցել աչքի առաջ և ի միջի այլոց քաղ-
ղաքականութեամբ վարուել: Դժուար է սակայն ըն-
ունել, թէ Քաղկեդոնի ժողովն այստեղ բոլորովին որոշ,
անօնական կերպով նզովուած լինի, և ոչ էլ յամենայն
էպս յիշեալ թղթակցութեան մէջ յառաջ բերած այն
ալը, թէ այդ ժամանակ «Հոռոմք զՔաղկեդոնին ընկա-
ն», իսկ Հայոց և Վրաց աշխարհը «հրաժարեցին և հե-
ացան»: Բաբգէնի իսկական թղթում, ինչպէս տեսանք,
ն գիտակցութիւնն է արտայայտուում, թէ «Հոռոմք»
յն հաւատն ունին, ինչ որ Հայք. և մեր ազգային-եկե-
եցական ժողովների համառօտ հնագոյն պատմութիւն-
երը հաստատուում են, որ Բաբգէն ժողով է գումարել
ստկայէս Նեստորի աղանդի դէմ և գրել, թէ «մեջ
ներքեան հաստատեալ եմք ի մի հաւատ՝ Յոյնք,

Վիրք և Ագուանք»․ և այդ եղել է՝ «Ցաւուցս Ջենոնի կ
սեր և Անաստասայ ուղղափառաց»:

Վերջին անուններն արդէն մի ակնարկ կարող համարուել այն մասին, թէ ինչպէ՞ս պէտք է հասկա Դուինի Ա. ժողովի վերաբերմունքը դէպի քաղկեդոն կանութիւնը: Վերև տեսանք, որ Զ. դարի սկզբում Յ նոն կայսեր հրովարտակի հիման վերայ ամբողջ յունակ աշխարհում լռելեայն դատապարտուած էր Քաղկեդ ժողովը: Քանի որ այս ժամանակ՝ Անաստաս կայսեր խանութեան ներքոյ, փորձեր եղան մինչև իսկ մի քա ժողովներում հրապարակաւ բանադրելու նոյն ժող վը, անկարելի չէ, որ Դուինի ժողովում ևս մի բան դրական վճիռ արձակուած լինի. բայց որովհետև, ի պէս կտեսնենք, թէ մեր վստահելի հեղինակներից չ տերի և թէ մանաւանդ օտարների վկայութեամբ քա կեդոնականութիւնն առաջին անգամ որոշ կերպով բ նադրուել է հայերի կողմից Դուինի Բ. ժողովում, աւ հաւանականն այն պիտի համարենք, որ առաջին ժող վում նորա վերայ նայել են իբրև մի իւր ուժը կորց և ամէնքի կողմից բարձի թողի եղած մեծութեան վեր և կարևոր էլ չեն տեսել առանձնապէս ուշադրութ առնել:—Բաբգէնի թուղթն այն ձևով է ուղղուած՝ « ամենայն հաւատացելոց Պարսից աշխարհի, որ ընդ հ ւատայ արքայից արքայի իշխանութեամբ էք»—, որ կ րելի է կարծել, թէ իրենք գրողները հաւատի իշխան թեան ներքոյ չէին: Եւ յիրաւի, ինչպէս վերև ակնարկ ցինք, մեր ունեցած հարևանցի տեղեկութիւններն ժամանակուայ Հայաստանի քաղաքական դրութեան մ սին և այն հանգամանքը, որ թղթի մէջ Վարդ՝ թէպ պարագլուխ հայ նախարարների, իբրև մարզպան չի յ շուում, իրաւունք են տալիս կարծես մտածելու, ի թուղթը գրուած և Դուինի Ա. ժողովը տեղի ունեց կարող է լինել այն օրերում, երբ շարունակուում է բանակցութիւններ Բիւզանդական և Սասանեան պետու թեանց մէջ և Հայաստանը դեռ կատարելապէս չէր մտ Պարսից իշխանութեան տակ, այլ վայելում էր Անաստ կայսեր հովանաւորութիւնը: Այս դէպքում դուցէ

լը եկեղեցականք հետ խառն, երեք հարևան քրիստո-
ույ երկրների (Հայոց, Վրաց և Աղուանից) վերաբերեալ
դաւանական խնդիրներ ևս ունեցել է լուծելու: Յա-
նայն դէպս Հայերը շատ մօտ պէտք է զգացած լինեն
ոց Յոյներին, հաւատով անբաժան նոցանից, և դա-
նութեան նկատմամբ նոցա առաջնորդող հայեցակէտն
ր էր թէ Զենոն և Անաստաս ուղղափառ կայսրները
անգամ ընդ միշտ վերականգնել էին համայն քրիս-
նէութեան համար՝ նախնական, նիկէական ուղիղ հա-
ը և ոչ նեստորի միջոցաւ և ոչ նորանից յետոյ եղած
է նորմուծութիւն ընդունելի չէր:

Գ. Բաբգէն կաթուղիկոսի յաջորդներ. իրերի դրու-
նը նոցա օրով. — Յիշեալ թղթերից դուրս մեզ շատ քիչ
ն է յայտնի Բաբգէնի կաթուղիկոսութեան մասին:
անում ենք միայն, որ նա Վանանդ գաւառի՝ կաթու-
կոսացած զաւակներով հարուստ, Ոթմսու գիւղից էր.
Իշխանութիւն է վարել 3—5—7 տարի. մինչև որ թուա-
կանը՝ անյայտ է մնում: Ամենայն դէպս ժողովից յետոյ
պէտք է որ նա երկար ապրած չլինի. Յովհաննէս պատ-
մգերը նորա յաջորդ Սամուէլ Արծկէացու ժամանակ է
ռում Վարդի պոյազատութիւնը, որ, ինչպէս տեսանք,
րս տարի միայն մարզպան եղած է յիշուում: Այնու-
ամե. գալիս են մի շարք կաթուղիկոսներ, որոնց միայն
նունները են տուել մեր պատմիչները և իշխանութեանց
արիները հաշուել՝ այն ևս միմեանց անհամաձայն և
հատոյգ կերպով: Նոյնչափ անծանօթ է մնում սոյն
ժամանակի քաղաքական պատմութիւնը և յիշուում է
այն, թէ Վարդից յետոյ պարսիկ մարզպաններ էին
խում Հայաստանում: Սակայն այս ժամանակը չի կա-
ող անպտուղ եղած լինել ոչ քաղաքական և ոչ եկեղե-
ական անցքերով: Արտաքին պատմութիւնից յայտնի է,
երկարատև պատերազմներ տեղի ունեցան դարձեալ
ուզանդիոնի և Պարսկաստանի մէջ և մանաւանդ երես-
ական թուականներից սկսած, երբ Բիւզանդական գահի
րայ Մեծ Յուստինիանոսն էր, Իրանի գահի վերայ Խոս-
ով Մեծ Անուշիրուանը՝ երկու հսկայազօր մրցակիցներ
քին ու արտաքին քաղաքականութեան մէջ,

Նման քիչ թագաւորներ են ունեցել նոյա երկիրը, չ… կարևոր քանեք կատարուեցան արևելքում, որոնցից … մասն չի մնացել անկասկած հայ ժողովուրդը, յա… պէս հայ նախարարութիւնը: Օտար և ազգային հեղի… ների հարևանցի յիշատակութիւններից տեսնում … նոյնպէս, որ եկեղեցական ու գրական ասպարէզներ… և բաւական կենդանի գործունէութիւն պէտք է եղ… լինի: Ասողիկ յիշում է օրինակ, թէ ինչպէս «Եզրաս … գեղացի, աշակերտ ճարտասանին Մովսէսի, եպիսկոպ… Բագրևանդ գաւառի՝ գրաւոր ճարտասանիցն բազմաց… ցանէր», և ամենայն հաւանականութեամբ մի շարք … նուրբ ու թարգմանական գրուածներ, որ Ժ դարի … վերագրուում՝ այս շրջանում են յառաջ եկել (օր. Եղ… չէի պատմութիւնը): Առհասարակ այն երկարատև, հ… մեմատաբար խաղաղ վիճակը, որի մէջ գտնուեցան հ… յերն ու հարևան քրիստոնեաները Վահանանց պատ… րազմներից յետոյ՝ պէտք է մեծապէս նպաստէր քրի… տոնէական-հոգևոր կեանքի զօրանալուն: Գոնէ Աղուան… մասին տեղեկանում ենք, որ մի ժողով են գումարել … կանոններ սահմանել, որոնք և պահուած կան մեր կ… նոնագրքերում. Թղթակցութիւն են ունեցել հայերի հե… ւորից մնում է օր. Աբրահամ Մամիկոնէից եպիսկոպ… թուղթը և ի միջի այլոց վկայում, թէ Բաբգէն կաթու… ղիկոսի օրով յարուցած դաւանական խնդիրները իրեն… նախերդ անքն ունէին և Դուինի Ա. ժողովից յետոյ էր… շարունակեցին հաւանականաբար պնդեցնել հայերին ու… նոյն դաւանակից Վրացիներին և Աղուաններին:

Սամուէլ Արծկեցու մասին այն է միայն յիշում, որ 10 տարի կաթուղիկոսութիւն է արել. իսկ նորա յա… ջորդ Մուշէ կաթուղիկոսի մասին, որ Կոտայք գաւառ… Այլաբերից գիւղից էր և 8 տարի իշխանութիւն վարած է… համարում, Ստեփաննոս Օրբելեան (ԺԳ. դարու հեղի- նակ) պատմում է, թէ մեծ շուքով Սիւնեաց աշխարհն է գնացել և Երիցակ անունով մի համբաւաւոր վանական եպիսկոպոս ձեռնադրել: Նորա յաջորդ Սահակ Բ. Հար- քացին, որին 5 կամ 7 տարուայ կաթուղիկոսութիւն է վերագրուում, հաւանականաբար այն Սահակ կաթուղի-

և էին պրի ստնունով կանոններ կան մնացած մեր կանոնագրքերի մէջ: Այդ կանոնների վերնագրի համաձայն՝ դա հաստատուել են Կարենոյ մի ժողովում, որ գումարել էր «Հրամանաւ մեծի Թագաւորին Յուստինիանոսի, ընկերեալ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ»: Եթէ ընդունենք, որ Բաբգէն կաթուղիկոսը վախճանուել է մօտաւորապէս 507 թ.-ին և նորան յաջորդող երկու կաթուղիկոսները 18 տարի իշխանութիւն են վարել, ապա Սահակ Բ. աթոռ բարձրացած կլինի շուրջ 525 թ.-ին և ժամանակակից կգայ Յուստինիանոս Մեծին, որ 525 թ.-ին գահակից եղաւ Յուստինին Ա.-ին, իսկ 527-ին յաջորդեց նրան իբրև միահեծան կայսր: Սորա հրամանով և գումարուած կլինի ուրեմն յիշեալ ժողովը, որ այդ դէպքում շատ աւելի մեծ նշանակութիւն է ստանում, քան կանոնների աննշան բովանդակութիւնից եզրակացնել կարելի էր:—Խնդիրն այն է, որ Յուստին Ա. Անաստասից յետոյ 318 թ.-ին կայսերական գահ բարձրանալով՝ կամեցաւ վերականգնել Հռոմի հետ Հենոտիկոնի պատճառաւ խզուած միութիւնը. դաւանական այն դրութիւնը, որ հաստատուած էր կայսերութեան մէջ 482 թ.-ից ի վեր՝ Զենոնին դատապարտուեցաւ և Քաղկեդոնի ժողովը նորից հռչակուեցաւ տիեզերական սուրբ ժողով, որ և ճանաչել տալու համար կառավարութիւնն ամենախիստ միջոցներ գործադրեց. յիսունից աւելի եպիսկոպոսներ աթոռից ձգուեցան և աքսոր ուղարկուեցան. բացի Եգիպտոսից միւս բոլոր երկրներում քաղկեդոնականութիւնը դարձաւ միակ պետութիւնից ճանաչուած և թոյլատրելի դաւանութիւն: Սակայն Յուստինիանոս Մեծ տեսնելով, թէ որչափ ընդարձակ հակակրութիւն կար արևելքում իր հռոմէական քաղաքականութեան դէմ և որպիսի մեծ վտանգ կարող էր սպառնալ պետութեան շահերին, աշխատում էր ամէն կերպ մեղմացնել յարաբերութիւնները արևելեան քրիստոնեաների հետ. մանաւանդ որ նշանաւոր և խիստ ազդեցիկ Թէոդորա կայսրուհին բացարձակ պաշտպան և կողմնակից էր մի բնութեան դաւանողների: Այս պայմաններում ահա կարող է գումարուած լինել վերոյիշեալ Կարնոյ ժողովը՝ 532 թ.-ից առաջ, երբ

պատերազմ կար Յոյների և Պարսիկների մէջ և հայ
դուցէ յոյս ունէին Յունաց օգնութեամբ Պարսից լու
թօթափելու: Արդեօք դաւանական խնդրում որ և է
ջում արել են հայերն այս ժամանակ և ի՞նչ կերպով
յայտնի չէ. յամենայն դէպս 532 թ.-ին կնքուած խ
ղաղութեան դաշինքից յետոյ, երբ Հայաստանն ամբ
ջովին Պարսից իշխանութեան և ազդեցութեան նեը
էր դարձել, պէտք է որ ամէն եկեղեցական յարաբեր
թեան յոյների հետ խզուած լինի:

Այսպէս թէ այնպէս, Սահակ Բ.-ի յաջորդ Քրիստ
փոր կաթուղիկոսի մասին, որ Բագրևանդ գաւառի
րաւանի գիւղից էր և որին մեր պատմիչները «փիլիսոփ
մակդիրն են տալիս՝ օտար աղբիւրներից գիտենք,
եռանդով պաշտպանել է մի բնութեան դաւանութիւ
Ասորական ժամանակագրութիւնները յիշում են նո
մասին, թէ ելեր գնացել է Ասորւոց Մար-Մաթայ վան
որ Նեստորական Բարծումայի հանած հալածանքի շնոր
կիսաւեր էր մնացել, վերջին ժամանակ այնտեղ հաւ
քուած քանի մի վանականների մէջից մէկին ընտրե
եպիսկոպոս ձեռնադրելով մետրոպոլիտ է կարգել չը
կայ ուղղափառ, կամ մի բնութիւն դաւանող՝ քրիս
նեայ վիճակների վերայ: Դորանով ասորիների մի մ
Հայոց եկեղեցական իրաւասութեանն էր ենթարկւ
լինում և մի դարի չափ հաւանականաբար այդպէս
մնացել ու շարունակել է մեր հայրապետներից ձեռ
դրութիւն ընդունել: Մի ուրիշ ասորի եպիսկոպոսի
մար ևս յիշատակութիւն կայ, որ նոյն Քրիստափոր
ձեռնադրել: Իսկ արդէն առաջուց ակնարկել ենք,
հաւանականաբար սորան է վերաբերում Թովմա Արծր
նու այն խօսքը, թէ Հայոց Քրիստափոր կաթուղիկ
թղթեր է գրել Ասորեստանի կողմերը և զգուշաց
չխառնուելու Նեստորականների հետ: Նորան այդ
Բարծումայի ժամանակակից դնելու պատճառն էլ
կարող է եղած լինել, որ ինչպէս տեսանք, արդիւնա
գործունէութիւն է ցոյց տուել մի երկրում, ուր մի
[illegible]ակ. Բարծուման հրով ու սրով հալածել էր ուղղա
[illegible]նը և Նեստորականութիւն քարոզել: Քրիստո

ամենայն դէպս առաջ է ընթացել այն շաւղով, որ գծել էր Դուէնի Ա. ժողովը. աշխատել է ի մի ժողովել Պարսից իշխանութեան ներքոյ եղող այն բոլոր քրիստոնեաներին, որոնք նեստորականութեան չէին յարել, և կապել իւր եկեղեցւոյ հետ: Եթէ նորա փիլիսոփայ մականունը մի բան նշանակում է, պէտք է ենթադրել, որ նա իւր ուսեալ գիտութիւնն էլ գործ է դրել ուղիղ դաւանութիւնը պաշտպանելու՝ նեստորականութեան, գուցէ նաև քաղկեդոնականութեան դէմ: Անհաւանական չէ, որ, նաև արտաքին յարաբերութիւնների մէջ հովանաւորութիւն վայելած լինի Պարսից թագաւորի կողմից, ինչպէս մի քանի տարիներ յետոյ վերջինիս հովանաւորութեան տակ տեսնում ենք Ներսէս Աշտարակեցուն:

Խոսրով Անուշիրվան 540 թ.-ին նորից սկսեց պատերազմը Բիւզանդացւոց դէմ և մի շարք նուաճումներ արաւ Միջագետքում: Յուստինիանոսի հակառակ սա ևս իւրեն աշխատում էր այնտեղի քրիստոնեաներին իւր կողմը գրաւել, որոնք հաւատարիմ էին մի բնութեան վարդապետութեան և ատելութեամբ լի դէպի վերակենդանացեալ քաղկեդոնականութիւնը: Նուաճած տեղերից Խոսրով բազմաթիւ քրիստոնեաների տարաւ բնակեցրեց իւր երկրում, որով ուղղափառութիւնը նոր ոյժ ստացաւ այնտեղ, և գուցէ Քրիստափոր հենց այս հանգամանքից օգտուեց իւր իշխանութեան սահմանները ընդարձակելու և նեստորականութեան հակառակ ուղղափառ եկեղեցու մի պատկառելի կազմակերպութիւն յառաջ բերելու Պարսկաստանում: Մինչ այդ Պարսից թագաւորները բնականաբար հովանաւորում էին նեստորականներին, որովհետև նոքա հալածուած լինելով կայսեր կողմից՝ չէին հակուում այլ ևս դէպի իրենց դարաւոր ոսոխ Յոյները: Այժմ, երբ յայտնուեցաւ, որ մի բնութիւն դաւանողները նոյնպէս հալածւում են Յոյներից՝ ոչինչ չէր արգելում Խոսրովին նոցա պաշտպանութիւն ցոյց տալու և նոցա կրօնական ազատութեան համար նպաստելու: Հայոց կաթուղիկոսին, որի նախարարներն իրենց յունասիրութեամբ այնչափ գլխացաւանք էին պատճառել Պարսից Թագաւորութեան: Թէպէտ մեր պատմիչները 6 տարի

*կաթուղիկոսութիւն են ընծայում Քրիստափոր Ա.-ին, բ[այց] եթէ վերև տուած բերած հաշուով ընդունենք, որ Սամ[ուէլ] Բ. մինչև 532 թ. կաթուղիկոս է եղել, այն ժամանակ Քրիստափորի կաթուղիկոսութիւնը չի հասնի մինչև Խոս-րովի յիշեալ նուաճումների շրջանը: Բայց մի ցանկի մէջ էլ Սահակ Բ.-ին 10 տարուայ իշխանութիւն է տրուած և առհասարակ այս թուերն այնքան անստոյգ են, որ նոցա վերայ հիմնուել չի կարելի: Քրիստափոր Ա.-ի յաջորդ Ղևոնդ կաթուղիկոսին ընդհանրապէս 3 տարի միայն տրուում է, իսկ սորա յաջորդ Ներսէս Բ.-ին 9 տարի. վերջինս այդ դէպքում դժուար կարող է 547 թ.-ից առաջ աթոռ բարձրացած լինել. ուրեմն և Քրիստափոր Ա. իշխանութիւն վարած կլինի մինչև 544 թ., որ համաձայն կգայ արդէն վերև բերած տեսութեանց: Նորա յաջորդող Ղևոնդի մասին ուրիշ բան չգիտենք, բացի այն որ Առբերանի գաւառի Առեստ գիւղից էր: Իսկ Ներսէս Բ.-ի կաթուղիկոսութիւնը ընդարձակ տեղ է բռնում մեր եկեղեցւոյ պատմութեան մէջ:*

Դ. Հայոց եկեղեցւոյ յարաբերութիւնն ասորիների հետ Ներսէս Բ.-ի օրով:— *Ներսէս Բ., որի ծննդավայր Աշտարակայ գիւղն ըստ մեր պատմիչների գտնուում էր Բագրևանդ գաւառում՝ տարբեր ուրեմն ուրիշ կաթուղիկոսների հայրենիք եղած Արագածոտն գաւառի Աշտարակից, դրեթէ նոյնչափ անծանօթ էր մեզ, որչափ իւր վերոյիշեալ նախորդները, մինչև որ հանդէս եկաւ վերջին ժամանակ մի խիստ արժէքաւոր թղթակցութիւն՝ նորա և ժամանակակիցների մէջ փոխանակուած, որ մի լայն հեռանկար է բաց անում մեր աչքի առաջ: Այդ թըղթակցութիւնը պէտք է երկու մասի բաժանել: Առաջին մասը սկիզբ է առնում այնտեղից, որ մի, ինչպէս երեւում է, Հայաստանի հարաւ-արևմտեան կողմը,— Տօրոսեան լեռներում ընկած գաւառի բնակիչ ասորիներ պատգամաւորութիւն են ուղարկում Հայոց Ներսէս կաթուղիկոսի ու նորա պաշտօնակիցների մօտ և խնդրում են իրենց գաւառի եպիսկոպոս ձեռնադրել Աբդիշոյ ա-[illegible] հոգեռանդ և բարեբարոյ երէցին, այդ ձեռնադրութիւնը դարձնել կանոնական հիմք՝ հաղորդակցու-*

ի պահպանողական Հայոց եկեղեցում և իրենց մէջ. պայքա-րելով, որ մի էին հաւատով: Պատմագրական աղբյուրներ պահպանած գրականութիւնը նոյնպէս պարզում են իրենց հայոց և յոյն ազգերի, որ նախկինում ճշմարիտ դաւա-նութեան հաւատարիմ մնացին համար հալածանքի էին ենթարկուել նեստորականների և ուրիշ հերձուածողների կողմէ. ընդդեմ նրանց պայքարում, որ հայերը նոյնպիսի ճշմարիտ հաւատ ունէին և իրենց նման բոլոր հերձուածողներին դատապարտում. նոյնպէս էին գիտում, որ իրենք Ակինք հաւա-տարմութիւնը պահպանութեան և աշխարհագրական սահմաններում. ազգային փիլիսոփայութեան հիւանդոց՝ իրենց ցաւերն պար-զաբանեն, նեղութեան մէջ օգնութեան հասնեն: Իսկ իրենց հաւատը հաստատում են այն, որ ընդունում են միայն երեք տիեզերական ժողովները՝ Նիկիայում, Կ. պոլսում ու Եփեսոսում, ուստի մերժում են և նզովում միայն այդ ժողովների կողմից դատապարտուած, այլ և յետոյ հանդէս եկած ու նոյն վարդապետութիւնից առաջ-եկած քաղկեդոնական աղանդաւորներին: Եւ ահա յաճախ երևում այնպիսի դաւանական սկզբունքներ և աւան-դութիւնների շարքում են գտնում այնպիսի անուններ. որոնք ից են առաջ մեզ պատմելու, թէ ինչ դեր էին խաղում այդ տարրերը ժամանակակից կրօնական շարժումների մէջ:

Վերև յիշեցինք, որ Յուստին Ա.-ի գահ բարձրանա-լով 518 թ.-ից յետոյ Քաղկեդոնի ժողովը վերջնական կերպով պաշտօնապէս հաստատուեց. իսկ մի քանի թեան դաւանողների դէմ հալածանք սկսուեց կայսրու-թեան սահմաններում. Հալածուած ու անթիւ զրկուած եկեղեցականների մէջ ամենից աչքի էր ընկնում Սևերոս Անտիոքի պատրիարքը, որ իբրև գլխաւոր հեղինակ և եկեղեցական գործիչ արդէն Անաստաս կայսեր օրով կա-րևոր դեր էր կատարել: Այս հանգամանք այս դարում եկե-ղեցական կեանքի եռման ու զարգացման կենդրոնը մի ութեան դաւանողների կողմում էր և այստեղ էին աստուածաբանական դրութիւններ մշակւում, դաւանական խնդիրները քննադատութեան առարկայ դառնում և նշանաւոր հեղինակներ յառաջ գալիս, որոնց

մէջ բացի Սևերոսից ամենայայտնիներն են Փիլոքսէն Մ
բուգի եպիսկոպոսը և Յուլիանոս Հալիկառնասցին: Վերջ
Սևերոսի հետ միաժամանակ եպիսկոպոսական աթոռ
ձգուել էր և երկուսն էլ Աղէքսանդրիա էին ապաւէն
ու նոյա մէջ մեծ վէճ յառաջ եկաւ այն մասին,
ապականացո՞ւ էր արդեօք Քրիստոսի մարմինը, թէ ան
պական: Յուլիանոս պնդում էր, թէ Քրիստոս ո՛չ
հարկի, այլ ըստ կամաց ենթակայ եղաւ մարդկային կր
իսկ Սևերոս առարկում էր, թէ փրկագործութեան հ
մար անհրաժեշտ էր, որ նա ապականացու մարմին զգ
ցած լինէր: Այս վէճը պատճառ դարձաւ մի նոր պ
ռակտման: Սևերոսի մի ամենաջերմ հետևողը՝ Յակ
Բարադէոս կամ Ծանծալոս, 541 թ.-ին եպիսկոպոս ձե
նադրուելով՝ անվերջ ճանապարհորդութիւններ ար
Արևելքում և անսպառ եռանդ գործ դրեց, գաղափ
րակից համայնքներ կազմելու, նոյա համար եպիսկոպո
ներ ձեռնադրելու և, իբրև մի տեսակ Արևելեան պա
րիարք՝ միացնելու բոլորին իւր աթոռի շուրջը: Նա
յաջողեց յիրաւի Սևերեան միաբնակների մի ինքնու
եկեղեցի հաստատել, որ նորա անունով «Յակոբիկ» կ
չուեցաւ և Ասորիքի, Պաղեստինի, Եգիպտոսի ո՛չ յ
տարրերը իւր մէջ առնելով՝ մի պատկառելի մեծութ
դարձաւ: Յիշատակութիւն կայ, որ Յակոբ Բարադ
դէպի Հայաստան էլ ճանապարհորդել է և մինչև Կ
պադովկիա տարածել իւր ազդեցութիւնը: Բայց լինե
Եդեսիոյ եպիսկոպոս՝ նա յամենայն դէպս աւելի մօ
էր այն գաւառին, որի ասորի բնակիչները բանակցո
թեան մէջ մտան Հայերի հետ և նորա առաջին շրջա
գործունէութեան արձագանգն էր հաւանականօրէն ա
բանակցութիւնը:

Յիշեալ ասորիներն իրենց գրած թղթում բացի Նե
տորից և իւրայիններից (Դիոդոր, Թէոդոր, Բարծումա և
ուրիշների նզովում են Քաղկեդոնի ժողովը և Լևոնի տո
մարը, Եւտիքէսին, Սևերոսին «և զխիրս իւրեանց ապ
կանութեան»: Իրենց դաւանական սկզբունքների ս
[illegible] դնում են, որ Քրիստոս «խաչեցաւ և մեռաւ վա
[illegible] որպէս և կամեցաւ, ստուգապէս և ո՛չ կարծեօք,

(ապա)կանութիւն բնաւ ոչ գտաւ ի նմա. զի մարմինն, որ (ի կու)սէ առաւ, անապականութիւն էր և փառաւոր՝ ի նմա-(ն)մութենէ»։ Պարզ է, որ Սևերեաններն դէմ են առած խօսքերը, բայց արդեօք Հաղիկարնացու հետևողու-թեամբ-գծուած է ասել։ Շատ հաւանական է, որ այդ խօսքերը, մանաւանդ եպիսկոպոսութեան թեկնածու-թեան, որի հմտութիւնը դաւանական խնդիրներում այ կատարած գերից և երևում է, մոտիկ ծանօթ էին Աղէքսանդրիայում տեղի ունեցած վէճերին և Հա-ղիկարնացու կողմը բռնէին, բայց անշուշտ համարելով նրան Նախնեաց վարդապետութեան ուղիղ բացատրող-ներից մէկը, և ոչ մի նոր դրութիւն ստեղծող։ Հաղիկար-նացու առաջ և գրեթէ միաժամանակ, անկախ նորա-նից, ուրիշներն ևս, ինչպէս օր. Փիլոքսէն Մաբուգեցին, պաշտպանել են Քրիստոսի մարմնի անապական լինելը, դաւանանքների պատմութիւնը ցոյց է տալիս, որ մըր-ակարծութեան գաղափարը, ինչպէս ընդունել էր այն բնական աշխարհում և պարզաբանուել ուղղափառու-թեան սիւն համարուող բոլոր եկեղեցական հայրերի՝ մանաւանդ Աղէքսանդրացիների կողմից, հետևաբար տրուած, պէտք է գտնէր ի վերջոյ այն բացատրութիւնը, ինչ որ տուեն Յուլիանոս Հաղիկարնացին և անապակա-նութեան ուրիշ քարոզիչներ։ Նոյն իսկ Յուստինիանոս կայսրը իւր իշխանութեան վերջին տարիներում քիչ մնաց անապականութեան ուսումը պաշտօնական դաւանու-թիւն հրատարակէր կայսրութեան սահմաններում, քաղ-կեդոնականների համար, այնչափ հանդուրժողական էր նրա ըմբռնումը արևելեան եկեղեցիների կրօնական հայե-ացողութեան։ Ուստի անապականութեան պաշտպանները մեր ի նկատի առած ժամանակամիջոցում այն գիտակ-ցութեամբ էին առաջնորդւում հաւանօրէն, թէ Սևերո-սի նոր մոլար տեսութիւն է մտցրել, մինչդեռ իրենք հաւա-տարիմ են մնում այն հիմքի վերայ, որ դրել էին երեք տիեզերական ժողովները և ամրափակել իրենց դրուած կանոնով Մեծն Աթանաս, Մեծ Կապադովկացիները, Կիւրեղ Աղէքսանդրացին։ Սակայն այս դարերում սովորութիւն էր, որ հակառակ հայեացը ունեցողների համար ա

ճառ պէտք էր մի հերետիկոս գտնել ու նորա ան-
դնել վրանները, և ինչպէս անապականութիւն ընդուն-
ները չասպելեցին Սևերոսին հերետիկոս հրատարակել,
կերպ վարուեցան անկատակած Սևերիանները Քաղկեդոնա-
ցու նկատմամբ, և որովհետև նա էր վիճել Սևերոսի դ-
նորան և նշանակեցին իբրև պարագլուխ հակառակ
բանակի:

Այս բացատրութիւններից յետոյ կարող ենք առ-
որոշ կերպով պատկերացնել Հայոց եկեղեցւոյ դաւա-
կան դրութիւնը Զ դարու կէսերին, քանի որ ստորին
տրուած պատասխանի մէջ՝ պատգամաւորութիւն ընդ-
նելն ու Աբգարեանի ձեռնադրելը յայտնելով, Հայոց
Թուղթկոսը իւր պաշտօնակիցներին և իւր հօտի կող-
հաստատում է, թէ Հայերը նոյն հաւատն ունեին, ինչ-
խոստովանել էին ուղղափառ սուրբերն իրենց գրութ-
մէջ, ընդունում են նոյն 3 տիեզերական ժողովները
նզովում նոյն հերձուածողներին: Յատկապէս անապա-
նութեան խնդրի նկատմամբ՝ իրենց հայեացքը արտայ-
տում է նա նոյն բառերով, որ առաջ բերինք վերև ս-
րիների գրութիւնից. բայց և կարևոր է համարում պա-
պանուել հակառակ ծայրայեղութիւնից, կամ այս
առած «Եւտիքեան միաբնակութիւնից», որ Քրիստ-
կատարեալ մարդկային մարմին ընդունելն ուրանում
չեշտելով չեշտում է, որ Քրիստոս մարմնոյ բոլոր կրք
իւր վերայ է առել, բաց ի մեղաց, կաթնաբոյծ և
սնուել, չարչարուել են, և կրկնում մի անգամ էլ,
Հայերը խոստովանում են «երկցս սրբացատութեամբ զլ
չիլն»: Խօսքն այստեղ մի եկեղեցական կարգի մասին
որ Ե. դարու եօթանասնական թուականներին քաղկե-
նական վէճերի ամենաառաջ ժամանակ մտցրել էր Անտ
պատրիարքական աթոռը բարձրացած Պետրոս Թափ
«Ս. Աստուած, սուրբ և հզօր, Սուրբ և անմահ» օրհն
գութեան վերայ աւելացնելով՝ «որ Խաչեցար վասն մ
բառերը, և որ այնուհետև ուրիշ դաւանական կէտ
չարքում անվերջ վիճաբանութեանց առարկայ եղ
նոյն բառերը մենք տեսնում ենք բերուած թէ Աստրին
և թէ Հայերի պատասխան գրութեանց մէջ, որոնց հե

մ է, որ Հայոց եկեղեցին վաղ ընդունել և գործածու-
ել է գործածել այդ կարգը: Ե՞րբ—մեզ յայտնի չէ, ինչ-
ս և որոշել չենք կարող, թէ արդեօք այն դաւանական
ւթիւնը, որի մէջ ներկայանում է Հայոց եկեղեցին
ւոյ Թղթակցութեանց՝ առաջ էր հաստատուել, թէ
չափով հետեւանք էր Աբդիշոյի և Նորայնոց հետ ու-
ած բանակցութեան: Յամենայն դէպս, եթէ դարի
սում մեր եկեղեցին միայն Նեստորականների հետ
ունէր, այժմ գտնում ենք նորան երեք ճակատով
ւէ բռնուած՝ մի կողմից դարձեալ Նեստորականների,
կողմից Քաղկեդոնականների ու Սեւերեանների հետ:
ւոյի էջրև եպիսկոպոս իւր վիճակը վերադառնալուց
ալ գրած թղթերից երեւում է, որ վերջիններս նոյն-
ս կամեցել են փորձել յարաբերութիւն հաստատելու
ւոյց եկեղեցւոյ հետ, և այդ նորան մեծ հոգս է պատ-
ռել. նա ակներև երկիւղ է կրում, թէ մի՛ գուցէ սո-
ս յաջողեն արդարացնել իրենց ատեւութիւնները Հայերի
ջքում և ընդունել տալ Սեւերոսի վարդապետութիւնը.
սախ իրար ետևից զգուշութեան ու բանադրանաց
ղթեր է գրում՝ ապացուցանելու համար, որ Սեւերոս
ոկաս չար հերձուածող չէ, քան Նեստոր և ուրիշները.
որ անապականութեան ուսումն է ուղիղ ու. նախնա-
նաց: Բայց հազիւ թէ Հայերն զգուշացման առանձին
կար ունեցած լինէին. եթէ իրենց բռնած ղեկը նոքա
մտքում էին միակ համապատասխանը Հայերի աւան-
դութեան, կնշանակէ ամենևին չէին էլ մտածում փոխե-
լ այն:

Ե. Դուինի Բ. ժողովը:—Անցնելով վերոյիշեալ Թղթ-
ակցութեան երկրորդ մասին՝ գտնում ենք երեք աւելի
երևոր թղթեր, որոնք կապ ունեն Դուինում գումա-
րուած մի ժողովի հետ և նրանց միջին ընդարձակագոյնը
ներկայացնում է այդ ժողովի «Միաբանութեան ուխտի»
թերը: Այստեղ պատմուում է, որ Խոսրով Անուշիրուանի
Թագաւորութեան ժէ. տարին, կամ 547 Թուին, Խու-
ժաստանի կողմերից իբրև վաճառական եկած և մեր
երկրում բնակութիւն հաստատած մի խումբ քրիստո-
նեաներ մի վանք էն շինել Մանաճիհր Ռաժիկի անուն

որ նոյնպէս այն կողմերից էր եկել և քրիստոնէութ
ընդունելով ու Գրիգոր անուամբ մկրտուելով՝ նա
տակուել էր։ Սկզբում նոքա ըստ երևութին միահա
էին և անխախտ հաղորդակցութիւն ունէին Հայերի հե
բայց նոր շինուածում տեղաւորուելուց յետոյ առա
ուսուցիչներ և առանձին առաջնորդ բերել տուին, ա
ցին նոր մոքեր տարածել և հետևողներ որոնել Հայե
մասնակից անել նոցա իրենց աղօթքներին, «ընծայք հ
ընդունել նոցանից և մի յատուկ եղանակաւ հաղորդ
թիւն բաշխել, նոցա երեխաներին մկրտել, և այսպէս
նաղան պատրողական միջոցներով իրենց կողմը գր
չատերին։ Նոցա յաջողութեան մանաւորապէս նպ
տում էր այն հանգամանքը, որ իրենց մօտ եկողների
տարբերութիւն չէին դնում և ամէն տեսակ յանցա
ակը մարդոց ընդունում էին։ Տեսնելով այս, որ չար
արագ կերպով ծաւալ է առանում՝ Հայոց Ներսէս կ
թուղիկոսը, հայ եպիսկոպոսներով, իշխաններով, քահ
նաներով, վանականներով և զանազան դասակարգի ա
խարհականներով՝ մի մեծ ժողով է գումարում Դուին
Խոսրովի ԻԴ. տարին, կամ 554 թուին, ուրեղ որոշուա
է քանդել, աւերել այդ աղանդաւորների բոյնը, հալ
ծել ու ցրուել նոցա, ամէն հաղորդակցութիւն նոցա հե
արգելել և նզովքի տակ դնել ամէնքին, որ ունեցէ եղա
նակաւ օգնութիւն ցոյց կտային կամ կքաջալերէին նոց
կրկին համախմբուելու և իրենց աւերակները վերակա
գնելու։—Միւս թղթերից առաջինը յանդիմանական գրու
թիւն է՝ մի քանի եպիսկոպոսների ուղղած, որոնք հրա
ւիրուել ու ծուլացել, չէին եկել ժողովին, որոնց և խատ
պատուիրուում է նորից գալ մասնակցել։ Նոցանից երե
ստորագրութիւնը կայ «Միաբանութեան ուխտի» գր
ներքոյ, որոնք կնշանակէ յետոյ եկել են։ Երրորդ թուղ
թը, գրուած արդէն Խոսրովի ԻԵ. տարին, մի օրինակն է
երևի այն գրութիւններից, որոնք տրուեցան թէ քաջա
կայ և թէ ներկայ եպիսկոպոսներին՝ յանձնարարելով
ժողովի որոշումները յայտնել իրենց թեմի վանահայրեր
քին, քահանաներին և ժողովրդեան, իրենց կողմից եւ
ւաւաշացնել ու խրատել։ Այս երկու թղթերը մի առա-

քան չեն ուեւլացնում միջինի բովանդակութեան, այ, բայց մի քանի կողմնակի յիշատակութիւններով տառում են երկրորդական հանգամանքներ պարզելու։

Հարց է այժմ, թէ ի՞նչ աղանդաւորների մասին է ակեղ խօսքը։ Թղթերի մէջ նորա պարզապէս Նեստորականներ են անուանւում. բայց նոցա բաշխած հաղորդութիւնը համարւում է՝ «էբրև յուխսէ նուիրաց Պաւղիանեա», որով առաջին անգամ տրւում է միջին դարերում յայտնի դարձած և մեծ դեր կատարած մի աղանդի ունը։ Մինչ այդ ամենահին տեղեկութիւնները Պաւղիկեաններ մասին մեր Յովհան Օձնեցի հայրապետի տուածն էին՝ Ը. դարի սկզբից. իսկ այստեղից երևում է, նոյն աղանդաւորները գոյութիւն են ունեցել և նոյն ունով ծանօթ եղել արդէն մէկ և կէս դար առաջ։ Օձնեցին, յիշում է, որ իւր ժամանակի Պաւղիկեանները մնացորդներն են Ներսէս կաթուղիկոսի օրով հալածուած եղած աղանդի, բայց այդ աղանդը նա միևնոյն ժամանակ Մծղնէութիւն է անուանում և իրաւունք է ելիս զորանով այն կարևոր եզրակացութեան յանգելու, մանաճիհս Ռաժիկի վանքում հաստատուած աղանդաւորները պարզ Նեստորականներ չէին, այլ կապ ունէին Մծղնէից կամ «Հայոց աշխարհի» աղանդի հետ, որ նադրուեցաւ Շահապիվանի ժողովում և որի մասին խօսում է Ղազար Փարպեցին։ Ինչպէ՞ս հաստատուեցաւ այդ պը—մեր ձեռքի տակ եղած աղբիւրներով որոշել չենք բող. բայց եթէ ընդունենք ոմանց գիտնականների այն քծիքը, թէ Մծղնէ—Պաւղիկեան աղանդը իւր ծագումը նում է Բ—Գ դարու Որդեգրականներից, որոնք Պաւղոս մոստացու քանադրուելուց յետոյ ցրուեցան և գաղտնի մայնքներ հաստատեցին արևելքում՝ այն ժամանակ ւական քան կպարզուի։ Նեստորականութիւնը իւր ավայրում՝ Անտիոքում արդէն ուղիղ գծերով կաւած էր հին որդեգրական աղանդի հետ և իւր հիմնան գաղափարները ժառանգութիւն էր ստացել այն լոցից, որի հիմնադիրներից մէկը կարող է համարուել թերջի նախկին եպիսկոպոս Պաւղոս Սամոսատացին, [illegible] ւեմն Գ. դարում Անտիոքից և շրջակայքից

Որդեգրականները տպատատան էին գտնել և համայնքի հիմնել Պաւլոսից իշխանութեան ներքոյ եղած երկրներու նոյն կերպ, ինչպէս Ե. դարում նոցա ժառանգ Նեստորականներն արին, այն ժամանակ աւելի հաւականալի լինում, թէ ինչու վերջինները այնպէս սիրալիր ընդունելութիւն գտան և այնպէս հեշտ իրենց կողմը դարձրին և պարսկահպատակ քրիստոնեաներին: Նոքա ուրեմն չե- տեղ գաղափարակիցների էին հանդիպում և շուտով մ- անում նոցա հետ: Այն Խուժիկ նեստորականներն էլ, Հայաստան եկան՝ գուցէ հին Որդեգրականներից էին առաջուց կապ ունէին այստեղ գտնուող Մծղնէների հետ յամենայն դէպս շուտով մտերմացան սոցա հետ և սոցա միջոցով է երևի, որ այնպէս արագ կերպով տարածեցին իրենց ազդեցութիւնը հայ ժողովրդի վերայ և այնչափ վտանգաւոր դարձան, մինչ հարկ եղաւ ժողով գումարել և արտաքոյ կարգի միջոցներ ձեռք առնել նոցա դէմ, բայց այդ միջոցներով կարելի չեղաւ նոցա արմատախիլ անել և նոքա շարունակեցին իրենց գաղտնի գոյութիւնը ոչ իբրև մի հաստատուած նեստորականութեան, այլ իբրև Մծղնէ-Պաւղիկեան աղանդի հետևողներ՝ իրենց առանձին սովորութիւններով ու կարգերով:

Դուինի Բ. ժողովի գումարման բուն շարժառիթը ուրեմն այդ Խուժիկ-նեստորականներն էին, յիշեալ թղթերի համաձայն. բայց նոքա չեն կարող ժողովի զբաղմանց միակ առարկան եղած լինել: Վերև ակնարկեցինք, որ մի շարք առանին և արտաքին վկայութիւններ առաջին անգամ այս ժողովի մէջ հանդիսաւոր կերպով բացնադրուած են ցոյց տալիս քաղկեդոնականութիւնը: Ցե- բաւ ի, որչափ մեր ձեռքն եղած յիշատակարաններից եզրակացնել կարող ենք, մեր Եկեղեցւոյ ներկայացուցիչները Զ. դարում առանձին խտրութիւն չեն դրել քաղկեդոնականների և նեստորականների մէջ և եթէ ոչ աւելի վաղ, գոնէ Դուինի Ա. ժողովից յետոյ՝ նոցա եւ սոցա հետ հաւասար կերպով մերժել են ու բանադրել: Այդ են վկայում նաև Ներսէս Բ.ի ու սուրբների մէջ [illegible] թղթերը, որոնք ժողովից առաջ են գրուել, որովհետև Ս[illegible] մասնակցում է ժողովին՝ իբրև «Աստրեաց ուղղա-

ւոց եպիսկոպոսի։ Սակայն երեւի կամ այն պատճառաւ, մնչիւ աւուր կենդանի, եկեղեցւոյ ընդհանրութեան կող-մանադրանքի վճիռ չէր արձակուած Քաղկեդոնի ժողովի. և պատահած անգը Հայերն անխտիր եկեղեցական ղորդակցութիւն էին ունենում Յոյների հետ, կամ որ, ղես ենթադրեցինք, երեսնական թուականների սկզբին, ձկ կաթուղիկոսի օրով մի այնպիսի համաձայնութիւն եղի ունեցել նոցա մէջ, որ յոյները շարունակում նայել Հայոց եկեղեցւոյ վերայ՝ իբրև ընդհանուր ղեցւոյ դաւանօրէն անբաժան մի հատուածի վերայ, նայն դէպս Դուինի ժողովն է այն սահմանակէտը, ից ու յաջորդ դարերի հայ և օտար հեղինակների ացքով իրական բաժանման ժամանակն է որոշում։ ք է սառած, մինչև Զ. դարի կէսը ոչ միայն Հայերը, նաև միւսք Ասիայի, Ասորիքի, Պաղեստինի, Եգիպտո-մի բնութիւն դաւանող քրիստոնեայ բնակիչները նկատւում իբրև բաժանեալ պետական եկեղեցւոյ։ ա վերջնական բաժանումն եւս նոյն այս միջոցին ի ունեցաւ։ Յուստինիանոս կայսեր համար յիշեցինք, ամէն կերպ աշխատում էր գրաւել նոցա, Քաղկեդոնի ւքն ընդունել տալ և եկեղեցւոյ միութիւնը վերա-դնել։ 553 թուին նա մի ժողով գումարել տուաւ Կ. ում, որ կոչւեցաւ Ե. տիեզերական ժողով և բա-նադրանքի տակ դնելով այն ամէնը, ինչ որ ժառանգու-ւն էր մնացել յունական եկեղեցւոյ մէջ Անտիոքի ոցից՝ Քաղկեդոնի դաւանութեանը տուաւ ըստ ամե-յնի Կիւրեղ Աղէքսանդրացու վարդապետութեան հա-ձայն բացատրութիւն։ Դորանով մի բնութիւն դաւա-ների առջևից վերացւում էին Քաղկեդոնի ժողովն ընդունելու գլխաւոր խոչընդոտները, և յիրաւի մի բնու-ւն դաւանող յոյներն այնուհետև հեշտութեամբ հա-ղորդեցան այդ նոր դրութեան և ձուլուեցան պետա-ն եկեղեցւոյ մէջ. բայց Ասորիքում և Եգիպտոսում ւանական վէճերին զուգընթաց արդէն մի տեսակ ազ-ային շարժում էր սկսուել, որ ձգտում էր Ասորի և ւն եգիպտացի ժողովրդի համար հոգևոր անկախութիւն ք բերել յունական աշխարհից, ի դէմս քաղկեդոնա

կանութեան թօթափել վրայից եկեղեցական կեանքի արտայայտութիւնները, որոնք զուտ յունական էին խորթ արեւելեան ազգերի ոգուն։ Ուստի Ն. տիեզերակ ժողովն աւելի նպաստեց, որ այդ ասորի և եգիպտակ տարրերը, հակառակ բոլոր ջնջումների, Քաղկեդ անունը լսել չկամենալով՝ ընդ միշտ բաժանուեցան Յ նական–Պետական եկեղեցուց և Յակոբ Բարադէոսի գ ճանապարհով ազգային եկեղեցիներ կազմակերպեցին։

Ահա այս պայմաններում, Ն. Տիեզ. ժողովից ան ջապէս յետոյ, գումարուեցաւ Դուինի Բ. ժողովը, մասին Յովհան Օձնեցու անունը կրող «Ժողովոց Պատմ թեան» մէջ, կարդում ենք. «Ջայս ժողով արարեալ Տէր Ն ոէս հակառակ ժողովոյն Քաղկեդովնի, վասն զի էր ա պղտորման խոստովանութեան Քաղկեդոնին յաճախեա յաւելեալ»։ Ամենևին անհաւանական չէ ուրեմն, կայսերութեան սահմաններում տեղի ունեցած անցքեր արձագանք գտնէին Դուինի Բ. ժողովի մէջ և այսպէ գուցէ յատկապէս Կ. Պօլսի ժողովի բռնած ընթացքն նկատի ունենալով՝ բանադրանքի վճիռ արձակուէր Քաղ կեդոնի ժողովի դէմ։ Մեր ձեռքն է հասել Դուինի Բ ժողովից քան տարի յետոյ Երուսաղէմի պատրիարքակ աթոռը բարձրացած Յովհաննէս եպիսկոպոսի մի թուղթ որտեղ նա պարզ ասում է, թէ Հայերն Աբդիշոյ առա ռադրանօք մի ժողով են գումարել, նզովել Քաղկեդո ժողովը և այդպիսով անջատուել ընդհանուր եկեղեցու Թ. դարու Կ. Պոլսոյ բազմահմուտ Փոտ պատրիարքն Հայոց Զաքարիա կաթուղիկոսին գրած թղթի մէջ հաստա տում է նոյնը, թէ մինչ այդ Հայերն անբաժան են եղ Յունաց եկեղեցուց և միայն այդ ժողովում Քաղկեդոն ժողովը մերժել և բաժանուել են։ Իսկ թէ ինչու վեր յիշուած «Ուխտի» գիրը Քաղկեդոնի անունը չի տալի բացատրել կարող ենք նրանով, որ այդ գիրը որոշ գործն կան նպատակով էր խմբագրուած և ժողովի զբաղմ առարկայ եղող գլխաւոր խնդիրն էր միայն շօշափում։ Թղթերից երևում է, որ ժողովի նիստերը բաւական երկար ժամանակ, գուցէ մի երկու տարի, տևած պէտք է լինին. աք. այդ ժամանակամիջոցում կարող էին զանազան ուղե

էրնեք արծարծուել, և հաւանականօրէն արծարծուել են։ ս կողմից Ներսէս Բ.-ի յաջորդ Յովհաննէս կաթուղի-։ էւր գրած երկու թղթերում՝ նկարագրելով հանդերձ ինի Բ. ժողովի ընթացքն այնպէս, ինչպէս տեսնում վերոյիշեալ թղթերէց՝ այսինքն որ Խուժաստանից ւծ նեստորականների չարութեան խմորը ոչնչացնելու ւար է գումարուել, որոշ կերպով ասում է, որ նես-տականների հետ հաւասար նզովել են այդտեղ «քաղ-անիտաններին», և երևում է, որ առանձին խտրութիւն գնում սոցա մէջ։ Նեստորական անուան ներքոյ նա քառում է պարզապէս այնպիսիների դէմ, որոնց Երու-ղէմի վերոյիշեալ Յովհաննէս պատրիարքը իւր թևէ ւկն է առնում յետոյ իբրև քաղկեդոնականների։ Թերևս ւեմն այդ ժամանակ Պարսկաստանում նեստորական-ն ու քաղկեդոնականները մի դրօշակի տակ են գոր-ւ կամ աւելի ուղիղ՝ նոցա վերայ այդ աչքով նայել և միատեղ բանադրել Դուինի ժողովում։

Զ. Դուինի Բ. ժողովի պատմական նշանակութիւնն ու ետևանքները—Վերև յիշուածից աւելի հին ու համա-ա մի «Ժողովոց պատմութեան» մէջ Ներսէս Բ.-ի հա-ք ասած է, թէ «բաժանեաց զՀայս ի Հոռոմոց և յն-տաղէմ գնալոյ, որում խոստմունս մեծ արար Խոսրով քաց Թագաւոր»։ Տեսանք, որ օտար հեղինակներն ևս պում են, թէ Հայերն այդ ժամանակ բաժանուեցան նաց եկեղեցուց, իսկ մեր պատմիչներից նոյնը վկայում եսողէկ՝ շեշտելով միանգամայն, թէ հենց այդ տարին տատատուեցաւ Հայոց թուականը, ինչպէս և Օձնեցու ունը կրող վերոյիշեալ յիշատակարանի մէջ ասուած թէ Դուինի ժողովը գումարուեցաւ «ի սկզբան թուա-նութեանն հայոց»։ Յայտնի է ապա, որ Հայոց թուա-նն սկսւում է 552 թուից։ Մեզանում Յովհաննէս սամագրի և այլոց վկայութեանց վերայ հիմնուելով գունում էին մինչև այժմ, թէ Մովսէս Եղուարդեցի թուղթէկոսն է հաստատել Հայոց թուականը և նա է ել այդ ժամանակ հայրապետական աթոռի վերայ։ Սա-ն այժմ ոչ մի կասկած լինել չի կարող այն մաս

որ 550—555 թ․ներին Ներսէս Բ․ն էր Հայոց կաթողի-
կոս, որ նորա յաջորդ Յովհաննէսը կենդանի էր մինչև
573 թ․ը, և որ հետևաբար այդ թուից յետոյ միայն հնա-
րաւոր է դնել Եզրուարգեցու կաթուղիկոսութիւնը։ Հայկական
թուականի սկիզբն ընկնում է ուրեմն յամենայն դէպս
Ներսէս Բ․ի կաթուղիկոսութեան ժամանակ և հաւանաբար
կանոնօրէն կապ ունի Դուինի Բ․ ժողովի հետ։
Թէպէտ ժամանակակից յիշատակութիւն չկայ, թէ ժո-
ղովն այդ խնդրով ևս զբաղուել է՝ Հայոց եկեղեցական
տումարը կարգաւորել և նոր թուական հաստատել, բայց
անշուշտ լոկ պատահականութիւն չէ, որ հայկական
թուական է սկսուում այն նոյն օրերում, երբ Հայոց
եկեղեցին դաւանութեամբ բաժանուում էր քրիստոնեա-
աշխարհից և իւր կատարեալ ինքնուրոյնութիւնը հաս-
տատում։ Մենք չգիտենք․ գուցէ և Մովսէս Եզրուարգե-
ցու օրով է եղել տոմարի վերանորոգութիւնը, և այդ
հայրապետը, որ ջերմ հետևող էր Ներսէս Բ․ի ընթացքին
և պաշտպան իւր եկեղեցւոյ ինքնուրոյնութեան ընդդէմ
Քաղկեդոնականների, այն գիտակցութեամբ նոր թուա-
կանի սկիզբը դրել է 552-ին, որ այդ տարին դարագլուխ
էր համարում Հայոց եկեղեցւոյ համար։ Բայց քանի որ
ուշ ժամանակի վկայութիւններով պիտի բաւականանք
և վստահելի վաւերաթղթեր չունինք ձեռքի տակ՝ աւելի
հաւանական մնում է այն, որ թէ տոմարի վերանորո-
գութիւնը և թէ նոր թուականի հաստատութիւնը Դուինի
ժողովում է տեղի ունեցել։ Իսկ թէ ինչո՞ւ Հայոց թուա-
կանը 552-ից է սկսուում, մինչ ժողովի համար իմացանք,
որ 554 թուին էր, զանազան կերպ կարելի է բացատրել։
ա) Ինչպէս տեսանք, առաջին հրաւէրին եպիսկոպոսները
մի քանիսը չէին եկել․ հարկ եղաւ նոցա կրկին հրաւիրել
և նոր ժողով գումարելով 554 թուին վճիռ արձակել
Խուժիկ-Նեստորականների դէմ․ գուցէ ուրեմն և առա-
ջին գումարումը եղել էր 552-ին և այն ժամանակ զբա-
ղուել էին տոմարի խնդրով․ բ) Մեր պատմիչներն ասում
էն, որ այդ թուականին մի որոշ դարաշրջան լրացել էր
ուրեմն տոմարական հաշիւներով կարող էր յարմար գտ-
[illegible] ընել այդտեղից սկսել նոր թուահամարը․ գ)

ջորդ դարերի մեր ժամանակագրութեանց մէջ շատ
հաստատ է Հայոց թուականի գործածութիւնը և չի
մապատասխանում մեր այժմեան գործածութեան.
Եւ ես մնում է ուրեմն քննել և հաստատել, թէ որ-
տեղ հնում 552 թուակից էին հաշւում այն:

Այսպէս թէ այնպէս Դուինի Բ. ժողովի և Հայոց
թուականի հաստատութեան մէջ մի կապ պէտք է եղած
լի, և եթէ մենք այսօր տեսնում ենք, որ այդ ժողովով
կարևոր յեղաշրջումն կատարուեց Հայոց Եկեղեցին
կեանքի մէջ, անտեղի չի լինի ամենևին ենթադրել, որ
գիտակցել են ժամանակակիցները և այդ շրջման
ից նոր օրերի համար նոր թուական սկսել: Համառօ
ղօվոց պատմութեան այն խօսքը, թէ «խոստմունս մեծ
ար Խոսրով Պարսից թագաւոր», որ աւելի է պարզում
Պատրիարքը իւր վերոյիշեալ գրուածքում, հարե-
ւանցօրէն վկայում է, թէ որոշ տեսակէտից քաղաքական
ութիւն էլ ունէր այն յեղաշրջումը և յառաջ էր
էլ քաղաքական ազդեցութեան ներքոյ: Փաստ առում է,
է Խոսրով այնչափ գոհ է եղել Դուինի ժողովի գումա-
րմից և որոշումներից, որ իւր ուղղուն դարձրել է որ-
բերը Ներսէս կաթուղիկոսի և նորան ու նորա համախոհ
եպիսկոպոսներին յանձնել Հայաստանի հարկերի գան-
ձումը: Իսկ թէ այստեղից է յառաջացել նաև Վարդան
Մամիկոնեանի ապստամբութիւնը 571 թուին, որ տանել
ր կարող, թէ ինչպէս հոգևորականները տէր ու տիրա-
ն էին դարձել երկրի մէջ, իսկ իշխանները մի կողմ
ացել: Թէպէտ այս տեղեկութիւնները փոքր ինչ առաս-
պելական գոյն ունին, բայց ըստ ինքեան հասկանալի է,
Խոսրով գոհ պիտի լինէր իւր նախորդների վաղուց
կացածը կատարման մօտ տեսնելով: Այնպիսի մի ժա-
մանակ մանաւանդ, երբ նա անընդհատ պատերազմի մէջ
Յունաց կայսեր հետ, Հայերը, որոնք յաճախ կռուա-
ճառ էին լինում և այս կամ այն կողմ թեքուելով
ծապէս նպաստում մէկի յաղթութեանն ընդդէմ միւ-
ս, կտրում են իրենց Յոյների հետ կապող կրօնական
պը, մի դժուար անցանելի հոգևոր անջրպետ յառաջ-
բում, որ պէտք է ստիպէր նոյն այնուհետև այլանկ

ների մօտ պաշտպանութիւն որոնելու կրօնակիցների գէ
Ի՞նչ զարմանք ուրեմն, որ Խոսրով Անուշիրուանի պ
մեծ ծրագիրներ ունեցող և քաղաքագէտ մի թագաւ
ամէն կերպ քաջալերէր Հայերի այդ քայլը, խոստումն
անէր նորա հեղինակներին, մեծամեծ արտօնութիւնն
շնորհէր, և այդպէս փոխադարձ շահերով ամուր կապ
կամենար նոցա իւր գահի հետ: Շատ հետաքրքրակ
կլինէր հարկաւ աւելի մանրամասնօրէն տեղեկանալ, 
ի՞նչ էին և ինչպէ՞ս էին գործադրւում շնորհուած ա
տօնութիւնները, ի՞նչպիսի քաղաքական դերք ունէ
առհասարակ Հայոց կաթուղիկոսները Պարսից արքունի
առաջ մինչև այդ ժամանակ, ի՞նչ նոր առաւելութիւ
ներ ձեռք բերին զօրանից յետոյ և մինչև ե՞րբ պահեցի
բայց մեր պատմութիւնը լռում է այդ մասին և պէտք
բաւականանանք յիշեալ հարևանցի ակնարկներից ա
եզրակացութիւնը հանելով:

Մենք նոյնպէս շատ քիչ բան գիտենք այն ժամ
նակի Հայոց քաղաքական կեանքի մասին: Յիշեցինք ա
դէն, որ երկիրը կառավարւում էր պարսիկ մարզպա
ներով. բայց թէ ինչպէ՞ս էին նոքա կառավարում, ի
ներքին յարաբերութիւններ էին ստեղծուել նոցա և հ
իշխանների ու ժողովրդի մէջ, ի՞նչ չափով էին ծանր
նում Պարսից և Յունաց մէջ եղած պատերազմները Հ
յերի վերայ,ստոյգ ոչինչ յայտնի չէ: Առանձին հետ
քրքրութեան նիւթ է ներկայացնում միայն հայ իշխա
ների ցանկը «Ուխտի» գրի մէջ: Առաջինը յիշւում
այստեղ մի Համազասպ Մամիկոնեան, ինչպէս և եպի
կոպոսների մէջ կաթուղիկոսից յետոյ առաջին տե
բռնում է Մամիկոնէից եպիսկոպոսը: Ուրեմն Վա
մահուամբ մարզպանութեան իշխանութիւնը կորցնե
հանդերձ Մամիկոնեանք շարունակում էին պահպա
իրենց առաջնակարգ դերը: Երրորդ տեղ յիշուած Սա
Արտաւազդեանը, որ սպարապետութեան պաշտօն ու
անշուշտ նոյնպէս մի Մամիկոնեան է, և միւսների անու
ներից երևում է, որ էլի քանի հոգի Մամիկոնեան
կան մէջները: Նշանակալիցն աւելի այն է, որ իշխա
- - և շարքում միայն մէկը առաջուայ պէս կոչւո

անանդայ տէր». միւսները մեծ մասամբ նորատեսակ, ու ևս Բագրէն կաթուղիկոսի թղթի մէջ անծանօթ, յորանուններով են յիշուում. «Դրիդոր ի Համայական, Տաճիկ ի Վարգանեան» են, որ անկասկած իւր պատճառն ունի։ Պէտք է ենթադրել, որ Հայոց հին նախարարական ազմը՝ Սասանեանց խիստ միապետական իշխանութեան ներքոյ գոյութեան իրաւունքը կորցրած լինելով, կամաց կամաց քայքայուում էր. մի տոհմի սերունդը սպառել ամ աղքատացել էր եղել և նորա կալուածները ուրիշ ձեռք էին անցել, կամ յարքունիս գրաւուել. մի ուրիշ տոհմ ճիւղաւորուել էր և մի քանի տների բաժանուել. ընտանեկան ծագման հնութիւնը կորցրել էր, իւր նախկին նշանակութիւնը և շատերն իրենց կամ իրենց հայրերի մօտիկ անցեալում գործ դրած արդար ու անարդար ճգանց շնորհիւ դիրք և իշխանութիւն էին ձեռք բերել։ Քիչ չէին երևի այնպիսիները, որոնք երկու պատերազմող պետութեանց մէկի կամ միւսի զօրքի մէջ ծառայելով՝ յառաջացել էին, ինչպէս օրինակ Յուստինիանոսի երևելի զօրավար Ներսէսը։ Արդէն նախորդ դարում Յունաց զօրքի մէջ կային աչքի ընկնող զօրավարներ, որոնցից մէկը մինչև իսկ կայսերական գահ բարձրացաւ. իսկ այս դարից սկսած թէ զօրավարների, թէ հասարակ զօրականների թիւը գնալով աւելանում է նոքա աւելի ու աւելի մեծ դեր են կատարում Բիւզանդական պատմութեան մէջ։ Ասողիկ և ուրիշները պատմում են, թէ իր Ներսէս Բ.-ի ժամանակ Հայոց մարզպան է եղել մի Մժէժ Գնունի. բայց այդ թիւրիմացութիւն է հարկաւ, և կամ շփոթութիւն յաջորդ դարու այանի Բիւզանդական զօրավարի հետ, կամ աղօտ յիշողութիւն Յունաց ծառայութեան մէջ եղած մի ուրիշ Մժէժի մասին։ Աւելի կարևոր է Սեբէոսի այն յիշատակութիւնը, թէ Սիւնեաց Վահան իշխանը Հայկական մարզպանութիւնից բաժանուեց և իր աշխարհի դիւանը Դուինից Ատրպատականի կենդրոնական քաղաքը փոխադրել տուաւ։ Սակայն պէտք է որ Դուինի ժողովից առաջ տեղի ունեցած լինի այդ. որովհետև մինչ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը Ներսէս Բ.-ի գլխաւոր գործակից-

Ներքեց էր և մասնակից Դունինի Բ. ժողովին, նորա յաջո[րդ] Արթանէս եպիսկոպոսին Յովհաննէս կաթողիկոսը թուղթ է գրում արդէն այն ձևով, որ երևում է թէ նա իւ[ր] երկրի սահմաններից դուրս էր։ Քաղաքական անջատմ[անը] հետևել էր ուրեմն եկեղեցականը։

Պետրոս եպիսկոպոսի մասին առանձին գովասանք[ով] է խօսում Սիւնեաց պատմիչը, համարում է նորան «Քեր[-] թողահօր», այսինքն Փարպեցու յիշած Մովսէս փիլիսո[-] փայի աշակերտ, վերագրում է նորան մի շարք թարգմա[-] նութիւններ, ճառեր, դաւանական և մեկնաբանակ[ան] գրուածներ, տալիս է կարևոր դեր Դունինի ժողովու[մ]։ Ինքը Ստեփանոս Պատմիչը մի քանի վկայաբանական քա[-] ղուածներ է յառաջ բերում նորա երկասիրութիւններից, որոնցից մեր ճառընտիրների մէջ եւս կան հատուկտորներ պահուած։ Բայց Պետրոս Սիւնեցին անշուշտ իւր ժամա[-] նակի միակ գրական գործիչը չէր։ Փոտ պատրիարք[ը] Դունինի Բ. ժողովի մասին արած յիշատակութեան մ[էջ] թուում է այն հեղինակաւոր եկեղեցականներին (Դիոս[-] կորոս, Փիլոքսէն), որոնց Հայերն ընդունեցին իբր պաշտպան մի բնութեան դաւանութեան, և ի մէջի այ[-] լոց Դիոսկորոսի յաջորդ Աղէքսանդրիոյ պատրիարք Տիմո[-] թէոս Կուզի մասին ասում է, թէ նորա գրքերը հայերէ[ն] թարգմանեցին «չարին թարգմանիչ» կոչուածները։ Այ[ս] գրքերը, որոնց յունարէն բնագիրը կորած է, իսկ հայե[-] րէն թարգմանութիւնը վերջերս գտնուեցաւ և հրատա[-] րակուեցաւ՝ կարող են օրինակ համարուել, թէ ի՛նչ տե[-] սակի գրականութիւն էր հետաքրքրում այս շրջան[ի] մարդոց։ Իսկապէս մի՛ շարադրութիւն է այդ՝ երկու գրքերից բաղկացած, և ուղղուած է Քաղկեդոնի ժողովի դէմ։ Դունինի Բ. ժողովում Հայերը որոշ հաստատուն դիրք բռնելով բնութեանց խնդրի նկատմամբ՝ կարիք զգացին անշուշտ այնպիսի գրուածների, որ իրենց դա-ւանութեան ճշմարտութիւնը կարող էին հաստատել հա-կառակորդների դէմ, և ահա սկսան խնամքով ի մի ժողո-վել այնպիսիները, որ առաջ թարգմանուել էին, և նոր թարգմանութիւններ անել։ Այսպիսի դաւանաբանական գրուածներ էին երևի նաև Պետրոս Սիւնեցու թարգմա-

-թիւնները, որ Ներսէս Բ.-ի շրջապատողների մէջ ամէ-
ն գէտուն և ազդեցիկ անձը պէտք է եղած լինի:

Մեր կանոնագրքերի մէջ կան 36 կանոններ, որոնք ուել են «յաւուրս Ներսիսի և Մերշապհոյ Մամիկոնէից իսկոպոսի» և որոնց համար գործել տուած է, թէ տրոս Սիւնեաց եպիսկոպոսի գործակցութեամբ են կազ-ւել: Հարկաւ այդ կանոններն եւ Դուինի Բ. Ժողովում ստատուեցան, և Լ9. կանոնը, որ հրամայում է՝ «մի՛ բէք աղանդաւորաց վանս տալ», վերաբերում է երևի կին Խուժիկ-Նեստորականներին:—Դուինի Բ. Ժողովն յսպիսով զգալի փոփոխութիւն է յառաջ բերում նաև եղեցական դրականութեան մէջ: Ե. դարում մեր եկե-ցական հեղինակներն այնպիսի գրուածներ թարգմա-նելու և երկասիրելու հետամուտ էին, որ պէտք է ժա-ռանգութիւնը ճոխացնէին, քրիստոնէական կեանք արծար-ծէին, քարոզական խորհրդածութեան նիւթ տային, հե-թանոսական մոլորութիւնների և անբարոյական սովո-րութիւնների առաջն առնէին: Նոցա կռիւը ներքին և արտաքին հեթանոսութեան դէմ էր, այդ կռուի համե-մար և զէնք էին գործ դնում, քրիստոնէութիւնն ամուր հիմքերի վերայ դնել աշխատում: Զ. դարում թէ ներքին եղծումների և թէ արտաքին հեթանոսութեան դէմ պաշտպանուում էր կռիւը, թէպէտ աւելի խուլ կերպով: Յիշատակութիւններ կան, որ Ներսէս Բ.-ից առաջ և որա ժամանակ քրիստոնէութիւն ընդունած պարսիկներ հալածուել ու նահատակուել են Հայաստանում, ինչպէս վերոյիշեալ Մանաճիհր–Ռաժիկը, ինչպէս Մախոժ–Ցիզա-ուզեանը, որին մեծ հանդիսով թաղել է Ներսէս Դուի-նում և վրան կոփածոյ քարերից վկայարան կառուցել: Սակայն դոքա կողմնակի պատահական երևոյթներ էին. Այժմ առաջին տեղը բռնում է այն նոր պայքարը, որ պէտք է մղէր՝ ազգային ու դաւանական տեսակէտից արդէն իւր որոշ կազմակերպութիւնն ստացած, Հայոց եկեղեցին իւր ինքնուրոյնութիւնը օտար կազմակերպու-թիւնների հանդէպ պահպանելու համար: Ըստ այսմ և աստուածաբանական–վիճական գրուածներն առաջնակարգ արևորութիւն են ստանում, եկեղեցական կեանքը

կենդրոնանում է դատանական խնդիրների շուրջը խնդիրները ամէնից դժուարըմբռնող և հարազատը ապանող վարդապետներն են, որ նորան ուղղութիւն տալիս:




Հրատարակութիւն Ա. Յովհաննիսեանի։
Ա.

ՂԱԶԱՐՈՍԻ ԱՂԱՅԵԱՆՑ

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՋԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## (լուծումն տարակուսութեանց)

Պօլսոյ Հայերին նուէր հեղինակից



ՏՓԽԻՍ

1874

Ի ՏՊԱՐԱՆԻ Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

Ի Հայրապետութեան

**Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.**

**Կաթողիկոսի ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարքի Համազգական Նախամեծար Ա-թոռոյ Արարատեան Առաքելական Մայր Ե-կեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի։**

Дозволено Цензурою Тифлисъ. 8-го Октября 1874 года.

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԻՄ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻՆ։

Մեզանում ինքնուրոյնաբար գրուածք հազարից մի անգամ հազիւ երեւում, բայց միեւնոյն մտքի կրկնողները խիստ շատերն են հանդիպում։ Մտքի նորութիւնը կամ ինքնուրոյնութիւնը մի արժանաւոր բան է, եթէ նա միեւնոյն ժամանակ ճշմարիտ չէ եւ օգտաւէտ, վասն զի լաւ է մի հին ճշմարտութիւն յայտնել, քան թէ մի նոր սուտ։ Նոր պէտք է պարունակում արդեօք այս տետրակը թէ հին, վնասակար թէ օգտակար բովանդակութիւն ունի, ստութիւն թէ ճշմարտութիւն է արտայայտուած սորա մէջ,—այս հարցերի լուծումը իմ քննադատներին կընկնի։ Իսկ ես, յայտնի բան է, իմ գործս չեմ փտնիլ, ոչ ոք իրա թանին թթու չի ասիլ։ Ես միայն այսքան կարող եմ ասել, որ ինչպէս էլ լինի, այս արժանի է ամեն ուսումնասէր մարդու ուշադրութեան, վասն զի, ի վնաս թէ յօգուտ հեղինակին ասեմ, նիւթն ինքը վսեմ է, բարձր է եւ մեր ժամանակակից կարեւորագոյն խնդիրներից մինն է. եւ այդ իսկ պատճառով արժանի է անաչառ քննադատութեան, որի վճռին եմ ենթարկում ահա իմ նկատմանցս եւ մտածմանցս արդիւնքի մի համառօտ քաղուածքը։ Քննելի նիւթս բաժանել եմ երկու մասն. առաջին մասնի մէջ աշխատել եմ, ինչ որ պէտք էր ասել, եւ դորանով, ըստ իմ կարծեաց, լուծել ենթակայ խնդիրը։ Երկրորդ մասնի մէջ՝ մի ընդհանուր հայեացքով փաստել եմ ոմանց տարակուսութիւնը եւ ցրել այս եւ այն անձանց մոլոր կարծիքները ու առաջարկութիւնները։

Գ. Ա.



# ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆՁԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## *(լուծումն տարակուսութեանց)*

*Պօլսոյ Հայերին նուիրում է հեղինակը։*

ռուա անամօտութիւն բառը, որ գրել էին «Մշակին» ծաղ-րելու համար։ Մի հայ մարդու համար մի՞թէ աւելի հեշտ է անամօթութիւն ասելը, քան թէ անամօտութիւն։ Բայց ա մի շատ բնական բան է և մեկնվում է ահա ինչպէս, ռուսաց գրերի մէջ չը կան հետևեալ հնչիւնները Թ, Ծ, , ձ, ճ, ջ, փ, ք։

Մեր այն երիտասարդները, որոնք մանկութեան հա-սակում ռուսաբար են զարգանում և սնանում, ահա այդ ակազգային և հակակրթական եղանակով մեծացած մա-ւկները երբոր իրանց հասակին առած ժամանակ զգում ն, որ իրանք հայի զաւակ են, և սկսում են հայերէն խօ-ել և հայերէն գրել, այդ միջոցին նոքա վերը բերուած տառերը ռուսական տառադարձութեամբ են հնչում, այն թ-ի տեղ տ, փ-ի տեղ պ, ք-ի տեղ կ, և այլն։ Գրելու ժամանակն էլ գրում են այնպէս, ինչպէս հնչում են։

Երևակայեցէք այժմ, որ մեր աշխարհիկ գրականու-թեամբ զբաղուած մարդիկ չունինք. չունինք լրագրեր աշ-խարհիկ բարբառով. մայրենի խօսակցական լեզուն որպէս առանձին առարկայ չի աւանդվում մեր ուսումնարան-րումը, այլ միայն վանքերումը փակուած աշխարհից ռացած հին գրականութեան շարունակողներ ունինք։

Արդեօք այդ ժամանակ ում և իցէ աչքի կը զար-նէ՞ր անամօտութիւն ասելը. Նարեկացու ոճին հետևող մի րդու շա՞տ զգալի կը լինէր, թէ այս և այն մարդը իւր մկերէնի մէջ փոխանակ անամօթութիւն ասելու, ան-ամօտութիւն է ասում։ Եւ ի՞նչ էք կարծում, այդ դրու-թեան մէջ մնալով շարունակ քանի մի տարի, արդէն մի ո սերունդ չէ՞ր յառաջ գալ, ռուսաց հնչիւնների շնոր-ւ, տասնից աւելի հնչիւններ կորցրած իւր բուն ազգա-ն բարբառից։ Օտար լեզուն ոչ միայն մարդուս ազգա-

յին հնչիւններն է փոխում, այլ և նորա զրութեան խօսակցութեան ոճը և դարձուածքը։ Ամէն փոքր 'ի շատ իմացական փիլիսոփայութիւնից տեղեկութիւն ունեցողի շատ պարզ յայտնի է դորա պատճառը։ Իմ նպատակից դուրս կը գամ, եթէ ես այժմ սկսեմ ոճ և դարձուածք քննել, այդ մասին ես ուրիշ անգամ տեղիք կունենամ խօսելու։ Այսքանս ասեմ միայն, որ ինք զինքը ճանաչելը այնքան հեշտ չէ, ինչքան կարծում են։ Կան մարդիք, որ շատ լաւ էլ գիտեն իմացական փիլիսոփայութիւններ, բայց այդչափ գիտութիւնը դեռ ևս չի կարողացել այդ անձնաւորութեանց ուղեղին մէկ զարկ տալ, որ միանգամ քննեն իրանց անձը, իրանց հոգին, իրանց խօսքը և խօսելու եղանակը։

Քիմիագէտները վերլուծելով զանազան մարմիններ շատ անգամ գտնում են երկու այնպիսի մարմին, որոնց մէջ թէ պարզ տարրերների և թէ նոցա քանակութեան մէջ դրական ճշտութիւն և հաւասարութիւն կայ. բայց որ զատ-զատ մարմիններ են, դորա պատճառն այն են գտնում, որ իւրաքանչիւր մարմնի մէջ տարրերի հիւլէները այլակերպ են դասաւորուած։ Օրինակ, վեր են առնում շաքարե նաշիշտայ, ենթարկում են քիմիական վերլուծութեան և տեսնում, որ ինչպէս մէկի, նոյնպէս և միւսի մէջ կան վեց մաս ածխածին, հինգ մաս ջրածին և հինգ մաս թթուածին։ Այս տեղ ակամայից հարց է յառաջ գալիս, թէ քանի որ երկուսեան մէջին ևս այդ տարրերների քանակութիւնն հաւասարաչափ է, ինչ տեղիք է մնում մէկին լինել շաքար, և միւսին նաշիշտայ։ Հիւլէականները ասում են, որ դորա պատճառը ուրիշ բան չէ, այլ այն, որ մէկի մէջ տարրերի հիւլէները այլակերպ են դասաւորուած, միւսի մէջ այլ։ Օրինակ վեց հիւլէից կարող է մի մաս ածխածին բաղկանալ այլ և

դասաւորութեամբ, ինչպէս վեց մարդ կարող են կանգ-նել շարքով, կարող են կանգնել երկու շարք, իւրա-նչիւրում երեք հոգի, կարող են կանգնել երեք շարք, իւրաքանչիւրում երկու հոգի, վերջապէս կարող է լինել 2 և 3, 1 և 5, 2 և 4 և այլն։ Եւ ահա այս դասա-ւորութեան ձեւն է պատճառ, որ երկու մարմին միաչափ միատեսակ տարրերքներից բաղկացած լինելով, չեն նմա-նում միմեանց թէ ըստ ձեւոյն և թէ ըստ յատկութեան, ինչպէս այս օրինակի մէջ շաքարն ու նաշխշտան են։

Ուրեմն հիւլէների շարքերը կարողանում են մի ա-րկայի այլ հոտ ու համ տալ, միւսին այլ. մէկին հա-ղութիւն միւսին անհամութիւն։

Սուտ է արդեօք այս տեսութիւնը, թէ ճշմարիտ, չեմ կարող ոչ հերքել և ոչ ապացուցանել, բայց բաղ եմ տալ, որ սորան աւելի հաւատալ, քան թէ հաւատալ կարելի է, վասն զի ինչ են մարդկային հըն-չիւնները, բառերը, դարձուածքները, ոճը, եթէ ոչ հիւ-լէական շարք, այս տեսութեան բոլորովին համաձայն։ Թէ ր նախնիքը ինչ մտքով են տուել շարադրութիւն կամ շա-րադրութիւն ես այդ չը գիտեմ, բայց այսքանը գիտեմ, որ ա կամ այն միտքը յայտնելը, որքան որ բառերի քա-նակութիւնից և տեսակից կախումն ունի, այնքան և նո-ա շարքից, շարադրութիւնից, որ կարող է շաքար կամ նաշխշտայ չինել։ Այսպէս շատ անգամ ինձ հարցրել են "Որտեղ դուք ապրում էք։ „ Եթէ ասելու էլ լինին "Որտեղ դուք կենում էք„ դարձեալ շաքար չի դառնալ, ա կը մնայ նաշխշտայ, թէև միևնոյն բառերն են։ Մի ատիկ բառ իւրեան տեղը չը լինելով հարցականից պատ-մական է չինում նախադասութիւնը, վասն զի "Որտեղ

էք կենում„ հարցական նախադասութեան շարք է, «
տեղ կենում էք„ պատմական նախադասութեան շարք

Այլ տեսակ լուսարուք:

Պատուական Մասիսի լեզուասէր խմբագիրը մի մ մանակ սկսաւ հետեւիլ մեր դարձուածքներին, փոխան գրելու իրանց բարբառի դարձուածքով գրած է, ասած սկսաւ գրել ըստ մեզ ասել է, գրել է, բայց չիմանա մեր բարբառի շարքը և ոչ մեր որոշեց տառերի գործ ծութիւնը, մի անգամ էլ գրել էր այսպիսի մի նախ դասութիւն —

«Այս խօսքը Պատրիարքը հայր ասել է„ ուզում ասել-Այս խօսքը Պատրիարքը հայրն է ասել, բայց կամեցածի հակառակ դուրս է եկել, որ «խօսք„ և «Պա րիարք հայր» նոյնանշան բառեր են, որ ասել է թէ ջնջել է շաքար շինել, բայց դուրս է եկել նաշիշտայ

Լեզուն մի գեղարուեստական, գեղեցիկ և զարդար շինուածք չէ. ոչ, այդ շինուածքը մեռած է, շունչ չու հոգի չունի, բայց լեզուն մի գործարանական շինուածք հոգի ունի, նորա ստեղծողը բնական, հոգեկան և քա քական հանգամանքներն են, որով մի ժողովրդի լ սկսում է աստիճանաբար զարգանալ կամ զարգացա զրկուիլ, չեղուիլ իւր նախնական յատկութիւնից կամ կարտաւ պահել նոյն յատկութիւնքը: Լեզուն անհ սեփականութիւնք չէ, որ ով ինչպէս կամենայ, այն ծաւմ է: Բողկի մէջ կտաւատ ցանելով կարող ես տ խուն բուսցնել և միևնով ...ելացնել քո կանաչեղէնի թ ակայն տարխունը սերմ չունի, որ բնութեան հող ձեռքով տարածուի ընդ ամենայն տեղիս: Քանի որ տպագրութիւն կայ և ոչ սպարբերական հրատարակութի ով ինչպէս կամենում էր այնպէս էր գրում, և ոչ

...ը չէր թէ նա ինչպէս է գրել կամ ինչու համար։ ... այսօր այդ անհատական և խուսափական նեղ շըրջանից դուրս ես ելել և երես առ երես ժողովրդի հետ խօսում, նորա համար գրում, նորանից վարձ ստանում։ Այժմ ժողովուրդը ձայն ունի քո գրութեան ոճի դարձուածքի մէջ, նա ասում է. "պարոն, ես եմ քեզ պաշտպանողը, այդ բանը ինձ համար ես գրել, բայց լաւ. կատարել իմ պատուէրները, դու իմ լեզուս աղճատել ես, և ի՞նչ իրաւունքով"։ Ուրեմն այժմ՝ դժուար է անհաճութիւն անելը, ժողովրդի ոճի աղաւաղումը, նոյն և գրողների օգուտը չի թողլ տալիս այդ։ Մեր բարբառների մնացորդներն անգամ, որ սաստիկ պաշտպան են գրաբարի, ինքեանք չեն հրատարակում ոչ ինչ գրաբար։ Ինչո՞ւ,-ժողովուրդը չի առնում, ո՞վ պիտի վճարէ տպագրութեան ծախքը...

Մեր Ղարաբաղու բարբառի շարքը, բոլորովին նոյն է ինչպէս արարատեանինը, Թիֆլիսի բարբառը այդ կողմանէ նոցանից մէկ տեղ շեղվում է։ Բայց այս բարբառների շարքը համեմատելով Պօլսեցոց գրածի հետ, այն տարբերութիւնն է երևում, ինչ տարբերութիւն որ կայ հայերէնի և տաճկերէնի մէջ։ Վրաց լեզուի շարքը մեր շարքից շատ քիչ տարբեր է, այնքան, որ կարելի է ասել, թէ համարեա տարբերութիւն չը կայ։ Տաճկերէնի շարքը շատ տարբեր է, ռուսերէնինը առաւել շատ։

Պօլսեցոց բարբառը մեծ կերպարանափոխութիւն է տացել սկսեալ Ռուբինեանց իշխանութիւնից մինչև մեր օրերը, և վերջ 'ի վերջոյ բոլորովին տաճկացել ըստ ոճոյն։ Դոցա բանասէրները այս մեծ անցքից բոլորովին անտեղեկութիւն չունենալով, զարդարում են իրանց տաճիկ բարբառը փարիզի նորելուկներով, կոչում են եղունկնե —

մորուքին հինայ դնում, մատներին թանգագին մատանիք
Մէկն ասում է եկէք էլ այսուհետև այս ինչ բառը գոր-
չը դնենք, միւսն ասում է, այս ինչ մասնիկը տեղը է
հարկաւոր է ոչնչացնել բոլորովին և այլն։ Խնդալս գալիս է, եր-
այդ կիրակոսները մեզ էլ խորհուրդ են տալիս, որ մեր
ուժեղ վերջաւորութիւնը վերցնենք և դորա փոխանակ բաց
սկզբունքն աւելացնենք կը մասնիկը որպէս ներկայ ժամանակի
մասնիկ։ Թէ որքան Թորոս են այդ մարդիկը, կարող էք եր-
րակայցնել նոյն իսկ այդ խորհրդատուի գրած հետևեալ
տողերից

«Քաղցր է ինձ յուսալ որ Թիֆլիսի Մշակ և Մեղու
լրագրաց գիտնական խմբագիրները նկատողութեան կառ-
նուն (ե՞րբ) մեր դիտողութիւնքը, որով մեր լեզուն աւելի
կազնուանայ (ե՞րբ, երևի երբոր մենք էլ ձեր կոր մտանիկ
պէս մեր ուժեղ վերջաւորութիւնը վերցնենք և ներկայի
ձևը ապառնի ձևի հետ նոյնացնենք) և նշանակութիւն
կունենայ (ե՞րբ) և հետզհետէ գրական լեզու մի կունենայք
(ե՞րբ)... Անշուշտ Ռուսիոյ խմբագիրք ևս կը մերժեն (այո՛ կը
մերժեն անշուշտ այդպիսի ներկան) իւրեանց գրուածներ-
րուն մէջէն...(Մասիս Թ. 1546)։

Ասացէք տեսնեմ ո՞ր ազգի լեզուի մէջ կայ այս տե-
սակ ներկաներ։ Այս էլ հնչիւնը չէ, որ լսողութիւնից կա-
խում ունենայ, միթէ ըմբռնում, դատողութիւն է՞լ չու-
նին մեր Պօլսեցիք։

Այս խորհրդատուն, որ մեր Մշակի հերոս Մկրեանն
է, մեզ՝ խրատ էլ է տալիս. որ մենք փոխանակ գրելու Նա-
պօլէօն, գրենք Նաբօլէօն (!?!). որով և ստիպում է ինձ
դառնալ մեր չորրորդ խնդրոյն—

## Դ.

Սխալ հնչողը ինչպէս պիտի կարողանայ ուղիղ գրել.

Ես այժմ պիտի խօսիմ այն նիւթի վերայ, որի
վին արդէն խօսացել են մեր բազմավաստակ և հռչա-
-ւոր գիտնականք Մ. Էմին, Գ. Ախվերդեանց, Ս. Նազար-
եց և Ք. Պատկանեան և սոցա հակառակ Մխիթար-
ի հայրք, առանձնապէս Սրբազան Գ. Այվազեանց: Շատ
ւալի է, որ Պօլսոյ հայերը մեր գիտնականների գրածնե-
ոչինչ տեղեկութիւն չունին, և այդ է պատճառը, որ
ռնում են Ս. Այվազեանի անհիմն և սխալ տեսու-
անը: Ես այժմ միջոց չունենալով մեր գիտնականների
ածները Ս. Այվազեանի քննութեան հետ համեմատե-
այլև հարկաւորութիւն չըզգալով այդ բանի մէջ, ըստ
ւմ յուսով եմ, որ իմ բերած փաստերը միանգամայն
ռելցին այդ տարակուսական խնդիրը, թէ ո՞ւմ հըն-
ները են ուղիղ. ես այժմ մատնացոյց կը լինիմ մի
նի եղանակների վերայ, որին եթէ հետևեն Պօլսեցիք
, հեշտութեամբ կը գրեն ուղիղ:

Առաջին եղանակ: Վենետիկցիք իրանց պատուա-
, և հարուստ բառարանի մէջ իւրաքանչիւր տառի
ըում մի մի խրատ են առաջարկում, թէ այլ լեզու-
ի ո՞ր հնչմանն է համապատասխան նա, օրինակ բ տա-
համար նոքա ասում են « 'ի տառադարձութեան յայ-
լեզուաց 'ի մերս՝ 'ի մեզ բ, ուր առ նոսա է պ»:
յն պէտքէ գիտենալ, որ բառարանի հեղինակները պ
նլով ըստ իւրեանց հնչման ակնարկում են Եւրոպացոց
րդ տառին, որ սակայն է բ=b: Այստեղ միայն պ տա-
հնչմունքն է սխալ, իսկ հետևանքը ուղիղ է: Բայց
ն ցաւալի երևոյթ է. այս: Բոլոր քրիստոնէից հ:

ինչպէս ա տառը ամենի համար ա՛ է, մի լեզվում ա
միւսում է, այնպէս էլ բոլոր Եւրոպական ազգաց մէջ
բը է և ոչ ուրիշ հնչիւն։ Մենք էլ բոլորովին Եւրոպա
երկրորդ տառի պէս ենք հնչում մեր երկրորդ տառը։ Ս
համաշխարհական կանոնաւորութիւնից շեղուել ենք միայն
ռեցիք և Մխիթարեանք մինչև այն աստիճան, որ Եւրոպա
երկրորդ տառի հնչիւնը հասկացնելու համար մասնացոյ
լինում մեր քսանըմէկերորդ տառի վերայ։ Լաւ չէ՞ր լի
արդեօք, որ Մխիթարեան հարք իրանց անխախտ չը հ
մարէին, այլ առէին միանգամ, թէ "մենք տառը ու
չենք հնչում, սորան պէտք է հնչել այնպէս, ինչպէս
լոր Եւրոպացիք հնչում են իրանց երկրորդ տառը, և ի
պէս մինչև այսօր էլ այդպէս են հնչում մեր հայա
տանցի եղբարք........" ինչև իցէ, եթէ Պոլսեցիք ըստ ի
եանց այժմեան հնչման հետևէին յիշեալ բառարանի խրատ
կալող են սխալ չանել երբէք առոգանութեան ժաման

Երկրորդ եղանակ, համարենք որ հայերէն առոգա
ձութեամբ պիտի գրենք մի Եւրոպական բառ, և թ
լինի դա ըստ ձեզ Նաբօլէօն և ըստ մեզ Նապօլէօն,
ժըմ հարկաւոր է մեզ իմանալ, թէ ինչպէս գրենք, որ
ղեղ լինի։ Այս տեղ բանը մի տառի վերայ է, այն է Եւ
րոպական p տառը։ Մենք ուշ չենք դարձնիլ ոչ մ
գրածին, ոչ Հայկազեան բառարանին և ոչ մեր վարժ
պետի և ուսումնականաց խրատին, այլ միտներս կը բ
րենք Աստուածաշնչից քանի մի բառ այդ տառով սկսու
օրինակ Պօնտոս, Պիղատոս, Պաղեստին և այլն, և միանգ
կը բերենք թէ այդ բառերը մեր լեզուի մէջ ինչ տառ
են գրել մեր խնկելի թարգմանիչք, կը տեսնենք որ
ել կը գրենք պ, և ոչ թէ բ. և պարոն Մկրեան
որ առաջ ինքը ասելով և ապա մեզ առ

Գիտեմ և շատ լաւ զգում եմ, որ այժմ դուք
գրում էք եւ ուղիղ հնչում, իսկ եթէ ուղիղ գրէք
ի սխալ հնչէք: Բայց ինչ անենք, յերկուց չարեաց
փոքրագոյնն է ընտրելի: Դուք արդէն հազարաւոր բառ ու-
ղ գրում էք և սխալ հնչում, քանի մի հատ էլ հի-
աւելացրէք վերան, ինչ վնաս ունի. բայց այն օգուտն
է, որ մեր ուղղագրութիւնը միանման կը լինի: Մեծա-
ծ ուղտեր և փղեր էք կուլ տուել, այժմ ախորժակ
ունի՞ք քանի մի մանր մեղուկներ ևս կուլ տալու, մինչև
Ջալպէս աչքներդ բացուի և լաւ ճանաչէք ձեր կերածն
ատածը..........

Երրորդ կանոնակ: Համարենք որ ձեր գրելի բառը
րղմանական չէ, ոչ մի բառարանում և գրքում չը
, այլ ճանապարհորդում էք մի անծանօթ ազգի մէջ,
նակ ասենք Վրաստան, հարցնում էք այս և այն բառը
ուզում էք գրել, ահա այդ ժամանակ ձեր գրածը մեր
ածի պէս չի լինիլ: Խմճիճեանն ինքը այս անգամ սխալ-
շատ է արել, ուր մնաց որ դուք, որ ոչ էք մեծ
ն գիտարդասէր ձեր: Օրինակ, նա գրել է Կորի այն
գեղի անունը որ մենք ասում ենք և գրում
ի: Այժմ դուք նորա գրածը, այնպէս կարդասանէք,
պէս մենք մեր գրածը, բայց փոխադարձաբար սխալ կը
ենք: Այդպիսի դիպուածներում խորհուրդ եմ տալիս
իտուն ունենալ իմ գրած աղիւսակը, և Եւրոպական հրնչ-
նդ համապատասխանող տառերը գրել, հետևելով այն
ւածին, որ ասում է «անճարը կերել է բանճարը»...

# Ե.

Ես կարող էի այս նիւթիս վերայ այնքան եր-

գրել, որ աւելի ընդարձակ կը լինէր, քան թէ Հ. Այտ
եանի քննական քերականութիւնը*, բայց ասած է. «Ս
տուած որ տայ, մէկ ակօսից էլ կը տայ»։ Համեցողը կ
քանից էլ շատ բան կը հասկանայ, և ինքը կարող է
սել այնուհետև այն, ինչ որ ես պիտի ասէի, իսկ ով
չի մտածել այս մասին, նորա համար երկար էլ գրէի,
զուր պիտի չունենար։ Ես լաւ կը համարիմ այնպիսի
ուղեցոյցի հանդիպել, որ ինձ ցոյց տայ ուղիղ ճան
պարհը, այնուհետև ես ինքս կերթամ առանց նորա
նութեան, քան թէ հանդիպիմ այնպիսի մի ուղեցո
որ առաջս ընկնի վստահութեամբ, թէ ես քեզ կը ա
նեմ այս ինչ տեղը, բայց ինքը կոյր լինելով տանէ
մի խորխորատի մէջ ձգէ։

---

* Հայր Այտընեանի Քննական Քերականութիւնը, որ
առաջին փորձ ամենընդարձակ և պատմական աշխատութիւ
որպիսին երբէք չէր կարելի յուսալ մեր Մխիթարեան Հայրեր
որոնք առհասարակ նշանաւորութիւն արտայայտելու սովոր հա
մրան են։ Հայր Այտընեանը խոստովանում է, որ արեւելեան հ
մունքն ուղիղ է և նման է մեր նախնեաց ուղղագրութեա
Նա ասում է իրանց համար, թէ մենք «Որոշ կանոն մը չուն
բ կամ փ, դ կամ թ, գ կամ ք, չ կամ ջ, ծ կամ ց գրելու,
մեր հիմնական հնչմամբ իրարու հաւասար են».... Ցաւալի ե
ւոյթ. Այս տառերի հնչիւնները այնքան հեռու են միմեան
մեզ համար, որ մեր նորեկ աշակերտներն անգամ երբէք չ
շփոթում միմեանց հետ։ Հայր Այտընեանը իրանց հնչմանց պ
ինքն էլ մնում է շփոթուած և իւր ընթերցողներին խորհուրդ
տալիս երկու տեսակ ուղղագրութեամբ հետևել օտար տառ
տառադարձութեան ժամանակ։ Նա ասում է հին լեզուաց (ա
սինքն Յունարէն և Լատիներէն) բառերը պէտք է թարգմա
ըստ տառադարձութեան նախնեաց, իսկ նոր լեզուաց բառե
ըստ արդի հնչման արեւմտեան Հայոց։ Հայր Այտընեանի հ
յէ, թէ զորօրինակ Աքիլլեւսց և Աքեմենեանց, այսինքն մեր և Գո

Դարձուածքների և ոճի կողմանէ Պօլսի ու Տփխի-
ներկայանում են այսօր որպէս իրերահակառակ բևեռ-
մի էլէկտրացեալ ահագին խաւարանի: Չեզոքացնել այդ
տարանը չէ կարելի միկէն 'ի միկ մի դատարկիչով, (այն է
նի մի խմբագրատների և Թերթաւոնների ջախջախեալ գըր-
ը) վրան դէ այդ ձևով մեծ ճայթումն յառաջ կը գայ
մեծ հարուած հասցնելով՝ կը մեռցնէ նորան երկուքին
լեզուական համար, այլ Թոյլ տալու է, որ ինքն իրեն
տարկուի, բնական կարգով, աստիճանաբար, ինչպէս որ
ւել է: Եթէ կամենում ենք օգնել դորա յաջողու-
թեանը, դորա համար մեր լրագիրները պիտանացու մի-
ներ չեն, մեզ հարկաւոր են կանոնաւորապէս պատրաս-
տուած վարժապետներ, առանց նորան մեր բոլոր արած-
ը և ասածները ձայն բարբառոյ յանապատի են: Բայց

ուղղագրութեան մէջ տարբերութիւն կը լինի: Նա ասում է.
միևնոյն հարիւր տարի սորանից առաջ սկսուել է այդ չփոթ
ուղադարձութիւնը, ուստի պէտք է չարունակել: Հարիւր տա-
չափ աղխատութեան մէջ ընկղմուած լինելով, պէտք է մնալ
աղխատութեան մէջ: Հարիւր տարու չափ Պօլսեցիք չեն ու-
նել հայ վարժապետներ, այլ կամ Լատին կամ լատինացած
էր են եղել դոցա վարժապետները և կամ աղջատ հայախօս
պղնացի Մխիթարեաններ: Այս օտար և խորթ մարդիկ իրանց բե-
ն առնելով հայկական դպրութիւնը, մի նպատակ են ունե-
միայն—լեզուն կրօնափոխութեան միջոց չինել և ոչ թէ հա-
լեզուն մշակել: 1714 Թուականին Հռովմի «հաւատոյ տա-
ծման» տպարանում տպուած լատիներէնից հայերէն բառա-
ի միայն ինչ է եղել, որի մէջ ուրանում է Հայկազանց իշ-
խութիւնը, հայհոյում է Հայերին և փոխանակ գրելու Բագրա-
նիք, գրում է Փաքրատունիք և միւս բառն էլ այսպէսի
ուղղարձութեամբ աղջատում: Ուրեմն հետևենք այդ խարդախ
դպատղեսին, որ ինք զինքը անուանում է Ցակոբոս վարդա-
Ցիստուսեան կարգէն . . . .

ով կարէ յուսալ մեր Պօլսեցիներից այսպիսի մի բան.
խօսքով ճեմարաններ են հիմնում, բայց գործով հիմ
յատակ քանդում շինածները, արժանաւոր մարդկ
մեռցնում և նախատալ գիտակներ կենդանացնում, փոխ
նակ մի սառն խորհրդածութիւն անելու, մի տաղերակ
ւաղներ կամ սախական հայհոյանք առաջդ դնում: Եա
կողմանէ դրանցից ոչինչ յոյս չունիմ, վասն զի իմ
սութեամբս պէտքէ որ դոցա ուղեղն անգամ կորցրած
նի ևր ազգային յատկութիւնը...... (իմ այս յանդի
նութիւնը չի վերաբերւում մի քանի հայրենասէր
ձինքներին, որոնց ձայնը խեղդուած է խառնիճաղ
ընդհանուրի մէջ):

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## Ա.

Մեր ազգասէր Հախվերդեանցը, Ցփլիսեցոց հռչման …ծառը տալիս է Հաղպատեցի վանականներին, որոնք երբ է քաջ հայկաբան լինելով, սովորեցրել են Ցփխիսի քաղաքացիներին ուղիղ դպրութիւն։ Գէտք է ասել, որ մեր պաշտելի դիվանականը ուրիշ մի պատճառ չը գտնելով՝ չէր կարող գտնել այդ հանգամանքը չը յիշել։ Այս փաստը …ցէ), որպէս մի պատմական իրողութիւն, արժանի լինի ուշադրութեան, տակաւին լեզուի գործի մէջ, որպէս հոգեւորական փաստ, չունի ոչինչ զօրութիւն։ Ցփխիսու քաղաքացիք մեծ մասը, մինչև այսօր էլ ոչ միայն իւրեանց ազգայնութիւնը, այլ նոյն իսկ Աւետարանը և բոլոր ժամերգութիւնը իրանց փոխացուցած լեզուին են հպատակեցրում և իրանց համար արդէն ունակութիւն դառած օտարաբերութեանքը ծածկում, և այդ գիտութեամբ չեն աւում, ինչպէս շատերին թւում է։ Այսպէս ասում են «Հայր մեր վրաց երկինս իս սուրբ իղեցի անուն քու» և այլն։ Ռաւհանայք ուղիղ դպրութիւն ունենային ևս, դարձեալ ոչ ինչ նշանակութիւն չի՛ր կարող ունենալ մի ամբողջ եկեղեցական համար, որ չունէր հայերէն դպրութիւն։

և դպրութիւնը լեզուին, տեղական կենդանի հնչման հպատակում և ոչ դարերով կազմուած հնչմունքը գրութեան. որ նոր է ուզում արհեստական կերպով բացատրել։

Մենք աւելի հզօր փաստեր ունինք մեր երջանիկ շատակ Հանճարի յոյսը լրացնելու, որ ասում է. «այս բանկուսութիւնը, ինչպէս էլ որ լինի վերջ առաջ կը ծուփ յօգուտ Տփխիսու հնչման, յուսոյատելը տմարթիւն էր։ Այո՛, Քո Աստուածային սրբութեամբ և ջերմ սիրով վառուած հոգին թելադրում էր քեզ մարտութիւնը, բայց որ չկարողացար Քո բուն նպատ հասնել, ես այդ վերագրում եմ անգութ ցաւին, որ կաշկանդեց միանգամայն ՚ի մեծ վնաս մեր ազգային կանութեան։... . . . . . .

Տփխիսու քահանայք փոքր ՚ի շատէ շուկում և րանց դպրութիւնը։ Արարատի և Գանձակի կողմերի կան բազմաթիւ գաղթականների շնորհիւ, որոնց մէջ կային քահանաներ կային և համարեա առաջին ան հայերէն դպրութիւն դրքա սկսան տարածել Տփխիս դաքում. գոյս մէջ վերջին ժամանակ երևելի են Ն Մեծ Տէր Օհան, Փոքր Տէր Օհան և այլք։ Նթէ այս մաթիւ նորեկները ջոկ մնս չը կազմէին, այլ բնիկների խառն բնակէին, այժմ բուն Տփխիսի բարբառով մն խօսող հազիւ թէ գտնուէր։ Նորեկները բնակութ հեռու լինելով, գերդաստանական յարաբերութեանց մինէ առաւել ևս հեռու էին պահում իրանց, չէին մտնում փոխադարձաբար խնամութիւն անել։ Բնիկ նայք նորեկ կինարմատների բերանները՝ Հայաստանի ջին գարուց սովորութեամբ՝ փաթաթած տեսնելով, «շարխնթրապա» անու անեցին, նորեկներն էլ նրանց «ան

…ջէր։ Բայց այս երկու կողմանից լսերատեսաց մոլեռան-
…թեան չափ աւանդապահ ծերերը իրանց նախապաշար-
… հետ գերեզման մտան, ջահել հարսները պառաւ-
…ց ազատուելով երանները բաց արին, չխօսկանու-
…թեց ձեռք վերցրին, այդ կողմանէ այնքան յառաջա-
…ւթիւն արին, որ սկսան բնիկ Տփխիսեցու պարկեշտու-
…թեց քանի մի քայլ անգամ միւս կողմը ցատկել։ Այս
…կան մրցման օգնութիւն հասաւ քաջին և անմահին
…ի հանճարը, որ իւր հայրենակից նորեկներին պաշտ-
… հանդիսանալով՝ բոլորովին նուաճեց Տփխիսի հայերի
…ականութիւնը։ Տփխիսեցիք մինչև Ներսէսի առաջնորդ-
…ակութիւնը հայերէն խօսելու սովորութիւն չունէին, ինչ-
… Պօլսեցիք, ուր մինչև հիմի էլ նոյն իսկ քահանայք,
…վարդապետք և Եպիսկոպոսունք անգամ միմեանց հետ
…թուրքերէն են խօսում և անքաղաքակրթեալ համարում
… ազգային հանճարին, մեր պաշտելի և սիրելի Խրիմեան
…էլին, ըստ որում իրանց պէս լեզկատակ կապկի բնա-
…ւթիւն չէր տացել ոչ Փարիզ և ոչ նորա խրատու-
… Պօլիս…

Բոլոր Տփխիսեցիք առանց բացառութեան դրագէտ էին,
…ց ոչ հայերէն, այլ վրացերէն։ Նոյն իսկ նորեկ գաղ-
…թականները հարկադրուած էին վրացերէն գրութիւն սո-
…վորել, որ կարողանան բուն Տփխիսեցոց հետ վաճառակա-
…կան յարաբերութիւն ունենալ։ Վրացերէն գրի այսպէս
շատութեամբ տարածուիլը հայերի մէջ միայն չէր պատ-
…ճառ, որ գտնվում էին Վրաստանումը ու Վրաց իշխանու-
…թեան տակ, կարելի է ասել թէ դա բնաւ պատճառ չէ
…ամ։ Այդ պատճառը հետևեալն էր։ -

Վրացերէն դպրութիւն չէին սովորում, այլ միայն
…ւ գրելու արուեստ և քանի մի առևտրական գործ-

նական դրութիւնք և հաշիւներ։ Այս կարդալ գրելու
րուեստը աւարտվում էր հասակաւորների. համար ա
նաշատը վեց ամսում և փոքրերի համար մի տար
Այս արուեստի մէջ չը կար մեր հնգարանի այբ բէ
ռսն ու այբ խէ չան, և որ ամենավատթարն է, չը
մեր գիր-կապի Չինական և Եգիպտական ձևը։ Հնչակա
ղմնակով ուսուցանելը այս բնութեան որդւոց մէջ ծ
է դարերից առաջ և ով գիտէ, գուցէ նոյն իսկ
Մեսրովպի համեմատ ծնունդը լինի կամ մի որևիցէ հ
Այսպէս, նոքա չեն ասում զա այբ զա, չա եթ ւէ չ
զաշքս։ Նոքա գիր ճանաչելուց յետոյ, իսկոյն սկսում
ընթերցանութեան աղօթքը և «Հայր մերը» և իսկոյն
ըիշը տալիս ձեռքը, որ գրէ։ Իսկ կարդալը սկսում են
պէս, քը—ա—րը քար, և ոչ քէ այբ րէ քար,
փը—ա—ռը—օ. ափառօ (աղորմած)։ Սորանից յետոյ ս
վում էր—ամ. էրթի, բան օրի... (նոյն մէկ, բանի երկու)
գի եղանակով, որ բոլոր աշակերտները միասին առևն։ Գ
մուց քանակութիւնը գրելն անգամ առաւելով էին
վեցնում դարձեալ ձայնաւոր,-էն էրթի փուլի, լին օրի
լի, կան էրթի բիստի և այլն, այնպէս որ երեխայք փի
խայի և պատճի երես չէին տեսնում, այնքան հեշ
թեամբ էին սովորում։ Բեստամպարանների մէջ սարսա
պատիժներ մոցներու սովորութիւնը վերջին դաղթա
ները բերին իրանց հետ։

Երևակայեցէք այժմ թէ մէկ դրի համար, ո
պատիժ լինի, ոչ ատճաննելի գիրկապ լինի, ոչ անհա
նալի սաղմոս. ժամագիրք լինի և այլն և այլն, այլ բոլոր
խաղ ու պարով լինին սովորեցնելիս, ել ի՞նչ պատճա
ռեայ չը սովորելու։ Շատերը, որոնք երեսուն քառա
սարերկան էին, բեստամպարան չէին գնում, այլ իրանց

…ջից էին սովորում մի քանի օրում: Նոյն իսկ այն …ները, որ վրացերէն խօսիլ չը գիտէին, նոքա եւս փո… քրիկ Հայերէնի՝ վրացերէն գրերն էին սովորում և իրանց …երէն միայն վրաց տառերով գրում: Ինչպէս տեսնում …ենք մի մեքենական արուեստ էր. սովորեցնելը հեշտա…ն և ոչ կրթութիւն կամ դաստիարակութիւն. բայց …յիշողական մի արուեստ, որ չէր կարող ազդեցութիւն չու…նենալ իւր ազգային հոգեկանների վերայ: Բոլորովին այլ կը …լինէր, եթէ ժողովուրդը Հայերէն դպրութիւն գիտենար և …կը միշտ գործածէր մայրենի կերպով, (ինչպէս որ այ…սօր այդպէս անում են), կամ ամենևին չը սովորէր վրաց …ռով գրել և վրաց լեզուով խօսել:

Սակայն չը պէտք է կարծել, թէ այս հանգամանքը …ղեք կը տար անշուշտ առաւելութիւն իրանց հայկական գրա…կանութիւն — գրաբարը: Ո՛չ, գրաբարը իւր դժուարութեան …համար, մի տեսակ մեհենական փակմունք ունէր ժողո…վրդեան աչքում, անմատչելի և անհասանելի մի բան …թվում: Փոքր 'ի շատէ գրաբար գրող ու կարդացողը …համարվում էր այնպիսի գիտնական, որ գիտէ բոլոր եր…կիր ու գիտութիւնները, մանաւանդ եթէ միշտ կարդար հատուա…ծ Աստուածաշունչը: Մի խօսքով Հայերեանները այն պա…ն ու յարգն ունէին վրացերէնագէտների աչքում, ինչ …Չինաստանցոց համար իրանց Մանդարինները: Վրացերէ…նն արհամարհելով էին սովորել, համարելով մի թե…թև հասարակ մարդկանցուի լեզու, բայց օգտակար վա…ճառականութեան համար: Այլ և չը պէտք է կարծել, թէ …երեւմն վրաց ազգի մէջ եւս ծաւալած կը լինէր իրանց …գրութիւնը: Այդ էլ ոչ: Վրացիք վաճառական և ար…հեստաւոր դասակարգ չունէին: Բոլոր արհեստները և վա…ճառականութիւնը Հայերի ձեռքումն էր: Վրացիք երկ

դասակարգ ունէին, ծորտեր և ազնուականք։ Դրանցից չէր կարող սովորել, սովորէր էլ ինչո՞ւն պէտքն էր, ունէր առնելու և տալու, ինքը ոչ ինչ չունէր, ամէն ինչ իւր տիրոջն էր, իսկ ազնուականաց նոյնպէս պէտք վաճառական չէին, հոգևորական չէին, ուրեմն նոցա դասակարգի մէջ միայն կար դպրութիւն, այն է, հոգ րականաց մէջ, (սաս էդ էլ չը լինէր)։ 'Ի հարկէ բաց ութիւն կը լինէր, առանց այդ չէր լինիլ. միայն թէ այ պէս մի ընդհանրական պահանջ չէր, ինչպէս Հայերի մէ Վրացիք դեռ մինչև այսօր տառերի ձուլարան չունին չեն ունեցած երբէք։ Տպագրութիւն ևս չեն ունեցած մ չև Ռուսաց հպատակիլը։

## Բ.

Որպէս զի աւելի շատ զէնք տամ իմ ուսումնա ընթերցողի ձեռքը, պէտքէ ասեմ, որ բարբառի փոփոխու լը մի մեծ բան չէ ազգաց պատմական կեանքի մէջ ոչ էլ երկար ժամանակի կարօտ։ Ես իմ աչքովս տես եմ. (պէտքէ գիտենաք, որ ես էլ բաւական տեղ պըտ տած եմ, և այն ոչ կոյր գնալով), Վրաստանի գիւղե րում Ղարաբաղցի գաղթականներ, (առումեմ Ղարաբաղ ըստ որում ես չը գիտեմ ոչ մի ցեղ Հայերի մէջ, որ գ րա պէս աւանդապահ լինի)։ Ղարաբաղից եկած ծերուն խօսում են մաքուր Ղարաբաղի բարբառով, բայց նոց թոռները երկու բառ չէին կարողանում խօսել Հայերէ և ասածդ էլ բոլորը լաւ չէին իմանում։ Ահա այսպէ կարճ ժամանակում կարողանում է փոխուիլ լեզուն։ Հայր պահպանում է ցեղը, որդին աղաւաղում է, թոռը սպա նանում է, ծոռը բոլորովին կորցնում է։ Սակայն ոչ այն

ն, որ Հոգեբան լեզուաներից Թաքչեն, թէ սա բնական ցի չէ կամ Տաճիկ չէ։ Ես Բաթումցի տաճիկներ շատ տեսել, որոնք ոչ միայն կերպարանքով և կազմուածո-վ բոլորովին Վրացու նման են, այլ նոյն իսկ Տաճկերէ-շեշտերից, արտասանութիւնից, տառափոխութիւնից ե-ամ է, որ սա հաստատ Վրացի է, բայց որ Վրացի չենք ամ այդ միայն նորա համար, որ թէ կրօնն է կորցրել և լեզուն*։ Այսպէս են ահա և Կեսարիոյ և այլ տեղերի ճկախօս Հայերը։ Մի Հայ ամիրա (թող լինի նա Պօլ-ծնունդ) որքան էլ մաքուր, որքան էլ փափուկ խօսի ճկերէն, չի կարող նոյն լինել, ինչ որ խօսում է տա-կ ցեղի ամիրան։ Ուրիշ այս գրուածի մէջ ես ոչ մի ն չեմ ենթադրել՝ բացի մի ծանօթութիւնից, որի մա-ն ահա ինչ կասեմ։ Մենք պատմութիւն չունինք այս նի բուն նշանակութեամբ։ Եթէ մեր բոլոր պատմու-թիւնքը ժողովենք մի տեղ և այրենք, իմ կարծիքով ոչ կորուստ չենք ունենալ։ Ներկայ դարուս գիտութեան պահանջներին համապատասխան չեն դրանք, մեր փնտրած ութը չեն տալիս։ Ես իմ ենթադրութիւնը աւելի ուղիղ կը համարիմ, քան թէ մի որևիցէ պատմութեան մէջ տպ-ուած փաստ, որ շատ անգամ ոչ ինչ բնական հիմք ունի և սուտ է ըստ ամենայնի։ Համարենք, որ այս ծայ-րահեղութիւն է. և յիրաւի, դեռ ևս վաղ է այսպէս բան ասել, առաջ պէտք է նորը շինել, յետոյ հինը քանդել՝ Մենք ոչինչ չը շինած ամեն բան քանդում ենք, սա թէ անմտութիւն և թէ յիմարութիւն է։ Ես բոլորովին հա-մաձայն եմ։ Ես մեղայ Աստուծոյ։ Բայց դուք պատասխա-

* Տաճիկները գիտեն, որ սոքա բուն Տաճիկ չեն, այլ տաճ-կացած Վրացիք, որոնք անուանվում են «Լազ»։

նեցէք ինձ այժմ։ Ահա քանի տարի է, որ Պօլսոյ մ
լրագրեր, ամսագրեր և այլ և այլ հրատարակութիւն
են լինում, բայց կարո՞ղ էք արդեօք դրանց էջերից տա
կական Հայաստանի դրութեան մասին մի որ և է հա
կացողութիւն կազմել։ Քանի՞ տարի է, որ մենք իմացա
թէ աշխարհիս երեսին Զէյթունցիք կան, բայց հիմի էլ
ո՞վ գիտէք, Զէյթունցիք ի՞նչպէս են խօսում։ Ո՞վ
լսած, քանի՞ բարբառներ կան տաճկական Հայաստանու
և ի՞նչպիսիք են դոքա. Մեր խնկելի Խորենացին զանազ
անուններ է տալիս Մոկաց իննը գաւառին, որպիսիք
Իշայր, Միւս Իշայր, Իշոց գաւառ և այլն։ Ո՞վ գիտէք,
էշերը արդեօ՞ք դեռ ևս կենդանի՞ են, և եթէ կենդանի
իշավարի են խօսո՞ւմ, թէ՞ մարդավարի։ Մենք ինչ կի
նայինք թէ Ղարաբաղու ձորերումը, ինչպէս են խօսո
և ինչ տեսակ մարդիք են, եթէ Փրէյդումը չը գրէր Մշ
կի միջ նրանց լեզուով մի բան և չերևցնէր, որ այս մ
գիւքը կրթութեան կողմանէ էլ այնպէս են որ-«Առջը գ
առջա օղըմ չի Տըղըրկեցէ տառնայ, էսը գեօրա գի
թա մեր հալը հինչա», որ ուզում է ասել թէ Սրջը
արջէ, չի կամենում Դիզակեցի դառնալ. սորանից կայ
ես իմանալ, թէ մենք ինչ դրութեան մէջ ենք։ Քա
քանի՞ Դիզակներ կան այս բոպէիս Կորդուաց լեռների ս
բոտներումը, Տաւրոսի փեշերի տակ, Ալիս գետի ափերո
Ասորւոց միջագետքում, Իշաստանի համար արդէն աստ

Հիմի որ փառք Աստուծոյ, երբեմնապէս չաւ լաւ
ներ շատ ենք տպում, մինչև անգամ գիտենք թէ Զինա
տանի թագաւորը ինչ է մտածում, Բիսմարկը որ ժա
վերկացաւ տեղերը, Մասիսի մէջ մի սուտ լուր է հաղ
դուել և միւսն էլ նորան ցրել է, լաւ լաւ կռիւներ ու
մաղալներ... հիմի որ այսքան իմաստուն ենք, դեռ էլի ոչ

գիտենք մեր աշխարհքի մասին. ուրեմն ինչ կը լինէր ն ժամանակը: Հիմի քիչ գրողներ կան, որ կատարեալ են, մինչև այդպիսի պատմութեան գրողներ քիչ յին և հին ժամանակը։ Նոքա գրում են. այսքան կոտորեցին, այսքան ջարդեցին, այսքան գերի բերին, այս ինչ եղ բնակեցին և այլն։ Ո՞ւմ հոգն էր մի անգամ էլ ասէր, թէ այս ինչ մարդիկը, այս ինչ ժամանակից այսինչ ածառով են եկած Հայաստան, այսքան տարի է սոցա ղը, սոքա եկած ժամանակը այսպէս էին եղել խօսելիս. կ հիմի այսպէս են խօսում: Ի՞նչպէս են խօսում"; պր...- կարելի էր արդեօք պատմել թէ ինչպէս են խօսում...

## Գ.

Ղարաբաղի բարբառի մէջ հնաւեալ տառերը բ, գ, դ, և ծ այնքան նրբացել են, և տեղացւոյն միայն կարելի առել հնչելը, որ կարող ենք ասել թէ կորել են բոլորովին *։

Արարատեան բարբառից ոչ մի հնչիւն չը կայ կորած և շփոթուած: Քանաքեռցիք, Օշականցիք, Աշտարակեցիք և այլ շատ գիւղերում բոլորովին այնպէս են խօսում,

* Թէև միտք չունիմ այժմ Ղարաբաղու բարբառի մասին մի ընդարձակ տեղեկութիւն տալ, բայց մի համառօտ նկատողութիւնք անելն անհրաժեշտ եմ համարում։ Ղարաբաղու բարբառ ասելով պէտք չէ հասկանալ Շուշեցոց խօսուածքը, որ չէ ընդհանուր քաղաքացոց համար մի կանոնաւոր բարբառ, այլ անհատական ։ Ղարաբաղը (չը հաշուելով Շուշի քաղաքը) ունի հինգ գլխաւոր գաւառ։ Այդ հնգեքին գաւառների մէջ միակերպ չեն խօսում, դոցա միմեանց մէջ եղած տարբերութիւնը շատ մեծ չէ բայց այնքան էլ քիչ չէ, որ խօսելու ժամանակ իսկոյն չը նշմարուին, թէ որը ո՛ր գիւղից կամ գաւառից պէտքէ լինի։

ինչպէս Տփխիսումը Հաւլաբրեցիք, Տփխիսու մօտիկ գիւ-
րից Դուռնիկեցիք, Շամշուլդեցիք։ Կան բառեր, որոնց մ
այս և այն տառը փափուկ է հնչվում և այդ շատ բն
կան է ամեն ազգային լեզուաց մէջ։ Այս բառական յա

Այս է ահա պատճառը, որ Ղարաբաղու բարբառով գ
ուածների մէջ ես միանմանութիւն չը կայ։ Այս չնմանութիւ
բառերի և դարձուածքների մէջ է, բայց հնչմանց վերաբեր
թեամբ չը կայ ոչ ինչ տարբերութիւն։ Այս բարբառը ունի բա
րակ ձայնաւորներ, որոնք չը կան Արարատեան և Տփխիսու բա
բառների մէջ, բայց կան բոլոր միւս բարբառներում, առաւել
պէս Պարսկահայոց։ Առանց այդ բարակ ձայնաւորներին չի կա
րելի այս բարբառները մեր ունեցած ձայնաւորներով այնպէ
գրել, որ ընթերցողը կարողանայ կարդալ ըստ ժողովրդակա
հնչման և արտասանութեան։ Այդ ձայնաւորը կարելի է կա
զաւորել հետևեալ կերպով։

| Հաստ | Բարակ |
|---|---|
| Ա | ային պարսից |
| Է | իե (միացած) |
| Ը | եը (միացած) |
| Օ | էօ (միացած կամ գաղղ. eu) |
| Ու | իու (միացած կամ գաղղ. u) |

Բարակ ձայնաւորները բարակացնում են և իրանց մօտ ե-ղած բաղաձայնները և այդպէսով այլ և այլ նշանակութիւն տալիս նոցա։ Ասում են պէլ (пэлъ), որ կը նշանակէ գիժ, խէնդ, և պ՛էլ (пѣль), որ կը նշանակէ կնքահայր. ծօր—մեղրի ծոր, և ծըօր—ձոր։ Ո տառը բառերի սկզբում չի հնչվում որպէս վօ, այլ որպէս վէ։ Օրինակ փոխանակ ասելու որդի, ոտն, որ, ոսպ, ասում են վէր-թի, վէննը, վէր, վէսպ, վէսկէ, (ոսկի) վէչ (ոչ) նայլն։ Ղարաբա-ղու բարբառի վերայ ազդող օտար լեզուն եղել է պարսկերէ

ԻիւՆները Թէ Տփխիսի և Թէ Արարատեան ժողովրդ-
ի մէջ բոլորովին նոյն է, միայն ահա ինչ կայ։ Տփխի-
ն Հայերէն կարդալիս, բայց ոչ խօսելիս, չի կամենում
և այն տառը փափկացնել։ Այսպէս, մենք ամենայն

---

վական հնչիւններ մէջ չը կան, պ, կ. տ, ծ. ճ, ձ. և այս
ճառով Ղարաբաղու բարբառի մէջ չը կայ ոչ մի օտար
այդ հնչիւններով։ բ, գ, դ, և ջ տառերով միայն օտար բա-
է հնչվում, բայց եթէ բառը հայերէն է, այն ժամանակ
տառերը փոխվում են իրանց համապատասխանող միջակ
երին, այսինքն դառնում են պ, կ, տ, ճ։ Իսկ ձ տառը փոխ-
է ծ։ Այդ տառը հնչվում է հայկական բառերի մէջ միայն,
ն տառից յետոյ։ Օրինակ—

| | | | |
|---|---|---|---|
| բ=պ | | պ=պ | |
| | պարի | պաս | պաս |
| | պիուն | պահել | պահել |
| | պիր | Պօղոս | Պօղոս |
| | պհիր | պաշար | պաշար |
| ն | պերան | պանիր | պանէր |
| ակ | պէժակ | | |
| ւթ | պիւրթ | | |
| Օտար բառեր | | Օտար բառեր | |
| եամ | գուցէ | ղալղա | հովանի |
| ղ | բուկ | ղաբաղ | կաշեգործ |
| ուլ | փոխանակ | ղանա | հօրթ |
| ան | միանգամայն | ղիուղ | հարթ |
| ուբար | հաւասար | ղիուշման | Թշնամի |
| ութ | վառօղ | ղարդ | հոգս |
| գ=կ | | ձ=ծ | |
| ; | կեարի | ձայն | ծէն |

տեղ ասում ենք-ախպէր, Տփխիսեցին նոյնպէս ասում ախպէր։ Գրած ժամանակ Արարատցին կարդում է եխպ Տփխիսեցին կարդում է եղբայր աղբիւր առանց փափկ ցնելու ղ և բ տառերը։ Տփխիսեցին ասում է փուրթի, Ակ

---

| | |
|---|---|
| գայլ | կիւլ |
| գող | կեօղ |
| գումէշ | կիւմաշ |
| գազար | կիեզար |
| գալուստ | կեալուստ |
| կ=կ | |
| կով | կով |
| կոթ | կոթ |
| կուժ | կօժ |
| կացին | կացէն |
| Օտար բառեր | |
| գեօլ | լճակ |
| գեաղա | ծառայ |
| գեառ | մեծախօս |
| գեօռ | թուրքի գերեզ. |
| դ=տ | |
| դանակ | տէնակ |
| դմակ | տմակ |
| դող | տըօղ |
| դարման | տէրման |
| դարփին | տէրփիուն |

| | |
|---|---|
| ձոր | ծըօր |
| ձագ | ծեագ |
| ձեր | ծէր |
| ձեզ | ծէզ |
| ծ=ծ | |
| ծարաւ | ծարաւ |
| ծիրան | ծէրան |
| ծնեբեկ | ծնեփակ |
| ծակ | ծակ |
| ծոմ | ծոմ |
| ծամ | ծամ |
| (ն տառից յետոյ ձ) | |
| ինձ | ինձ |
| բրինձ | պրինձ |
| տանձ | տանձ |
| խնձոր | խնձոր |
| թանձր | թանձր |
| հունձ | հօնձ |
| ձնձաղիկ | խնձաղա |
| ջ=ճ | |
| ջուր | ճուր |

ցին որթի, գրածի մէջ Արարատցին խուր հնչման ուղ-
ծիւնն է պահում, խսկ Տփխիսեցին փոխում է և ա-
ր է որդի, այնպէս որ ղ մէջ անղը ղնդում է։ Այս
'անէ ուղիղ ճնչելը ուղիղ չէ, այլ սխալ ճնչելն է ուղիղ, ո

---

| | | | |
|---|---|---|---|
| | տ==տ | ջորի | ճորի |
| | | ջոկ | ճոկ |
| | տակ | ջաղաց | ճաղաց |
| ի | տարէ | ջերմ | ճերմ |
| ը | տասը | | |
| | | | ճ==ճ |
| եւ | տանել | | |
| ' | տօն | ճրագ | ճրաք |
| ն | տուրսուն | ճետ | ճեօտ |
| | | ճիւղ | ճողնը |
| | | ճուճն | ճուճնը |

Օտար բառեր

| | |
|---|---|
| ջախս | աշխատանք |
| ջամա | տուգանք |
| ջուբ | գրպան |
| ջողաբ | պատասխանի |
| ջահիլ | նորահաս |
| ջարգ | շարք |

Այս 2 տառով բազմաթիւ օտար բառեր պէտքէ լինին ղարաղի բարբառի մէջ, ըստ որում ես իմ յիշողութեան թե-ութեամբ մէկ անգամից անընդհատ գրեցի մօտ երկու հա-բառ։ Ես ասացի, որ Ղարաբաղի բարբառի վերայ աղղող րը եղել է պարսիցը, սակայն չը պէտքէ մոռանալ, որ ա-մնից լեզուն նոյնպէս դառել է այդ բարբառի բաղադրական ներից մինը։ Բայց ով գիտէ, Աղուանից լեզուն մի առան-լեզու էր, թէ հայկական բազմաճիւղ բարբառներից մինը։ մէկ նոր տարակուսութեան աղբիւր, որ ես հարկաւոր եմ արում առաջարկել մեր լեզուաղէտներին և ուսումնասէրնե-լուծելու։

ասել է Արարատցունն է ուղիղը։ Տառերը ունին իր
բնական հնչմունքը ընդհանուր առմամբ և իրանց շ
մունքը այս և այն բառի մէջ։ Տփխիսի հայերէն գրագ
յիմարութեամբ չէ շեղվում և ոչ թէ գիտութեամբ (կարդա
ժամանակ) որ շատ բառեր ականջ են ծակում, ինչպէս
եղբայրը և աղբիւրը։ Ուստի պէտք եմ համարում աս
որ մեր մայր Աթոռի մէջ մինչև այսօր անարատ են մ
ցել հայկական հնչիւնները դպրութեան և խօսակց
թեան մէջ, միայն Մաթէոս կաթողիկոսի օրից սկսեալ
ըիտասարդ աբեղաները իրանց մեծերին դուր գալու հա
սկսում են ծումկել կարդացուածքը և խօսուածքը։
տերը մինչև անգամ չեն կամենում Արարատեան բար
ռով գրել։ Կարծես մեր հոգևոր հայերին բնական է դ
ռել իւրեանց հոգւոյ և մտաց թելադրութեանը չը լ
ազի որ ինչ յիմարութիւն է առաջի մարդկան, իմաստութիւնէ ա
ջի Աստուծոյ. ասէ Անտօն Ճգնաւոր 'ի Հարանց վարս։ Ն
է ահա դրանց բնաբանը իւրեանց բոլոր գործողութեա
մէջ։

## Դ.

Արարատեան բարբառը Ղարաբաղու բարբառի հ
համեմատելով նոյն է, ինչ որ Աթենացոց լեզուն Սպա
տացոց լեզուի հետ։ Ղարաբաղի բարբառի մէջ տիրում
սաստիկ Լակոնական ձև, այս է նորա ողին և կենդ
նութիւնը*։ Եթէ այսպէս չը լինէր, Ղարաբաղի բարբա

* Սորա վերայ պէտքէ աւելացնել նաև այն հանգամա
առաւելապէս, ինչոր նախընթաց ծանօթութեանս մէջ յիշեցի,
է պակասութիւնը բարակ ձայնաւորների, որ համարեա չղթայակ
է անում գրողի ձեռքը և չի թողլ տալիս նորան իւր զգացմու
—ազատ կերպով յայտնելու։

ղէս կունենար իւր անմահ Աբովեանը, վասն զի քաղու-
ան կողմանէ պակասութիւն չը կայ, հերոսների թիւը
ոցանից շատ են, որոնց փոքրը մեծ է քան թէ Աղա-
Լեզուն է, որ տաղանդ է ծնում գրականական և ոչ
նդը լեզու։ Եթէ Աբովեանը չը լինէր Քանաքեռի ծը-
նդ, նրանց մէջ մեծացած, նրանց մէջ ծնած. նրանց ցա-
ց ցաւած, նրանց ուրախութեան հետ ուրախացած, ոչ
Դորպատ նորան չէր կարող այդ անմահութիւնը պար-
ել, այդ կրակոտ լեզուն նորա կրակոտ սրտին տալ։

Աբովեանցը գրեց իւր "Վէրք Հայաստանին" ոչ թէ
համար որ մի բան գրած լինի, որ անուն ստանայ:
նորա համար որ չէր կարող չը գրել, նորա սիրտը ցա-
ւմ էր, նորա լացը գալիս էր, պէտքէ լար, որ հանդըս-
նար իւր սիրտը։ Բայց ով էր տուել նորան այս զգա-
նը, այս լեզուն—ժողովուրդը։ Նա յետ դարձրեց ժողո-
դին նրանից ստացած տաղանդը աւելի շահեցրած, որ-
հաւատարիմ և ազնիւ ու հարազատ զաւակ իւր
ուն հայրենեաց—"Ով թուր ունի, առաջ իմ գլխիս
ի, իմ սիրտս խրի, ապա թէ ոչ քանի բերնումս լեզու
, փորումս սիրտ, ես լեզապատառ ձէն կտամ. էդ ով
յ էք թուր հանել, Հայոց մեծ ազգին չէ՞ք ճանա-
մ...(երես 11)։

"Օրօրոցի վրայ մեր լեզուով մեզ նանիկ ասեցին, էն
յ մեր միտքը չի՞ պէտքէ ընկնի" (երես 91)։

"Ինչ կուզէ Ֆրանցուզերէն, նեմեցերէն գիտենանք,
ք չենք կարող էնպէս բան գրել, որ նրանց միջումն
ուն ունենայ, չունքի նրանց միտքը, նրանց սիրտը ուրիշ ա,
ն ուրիշ...(երես 93)

Ահա այս տողերից զգացող և անաչառ հոգի ու-
ող մարդը կարող է տեսնել, որ մի գրուածք այն ժա-

ժմանակը կարող է կենդանի լինել, երբ հոգւոյ թելադր-
թեամբն է գրուած։ Ցիշողութեան օգնութեամբ այս և
բառգրքին նայելով, սորանից նորանից գողացած մտքե-
տեղ բերելով՝ կարող էք մի շինուածք կառուցանել...
ցէ և հօյակապ, բայց աւերակ բոլորովին, ուր չկայ և
մի հոգի։ Հոգին ժողովրդի անհատականութիւնն է, նա-
տութեամբ և ձրի չի պարգևւում ոչ ոքի, որպէս մի
վկայական։ Հանճարներից էլ հանճար Անգղիացի Շ-
պիրը կարող էր արդեօք գերմաներէն գլխենալով Շ-
զպառնալ, այդպէս որ լինէր մեր Պօլսեցիք այժմ ս-
պ.օլթեր կը լինէին, մինչդեռ այժմ նորա կապիկներն

Ղարաբաղու. ոճը միայն ղարաբաղցին կմբռնէ
պէս պէտքէ։ Ղարաբաղցին շատ անգամ չի էլ խօս-
մի գլխի շարժումով, ձեռքի կամ ոտքի ցուցմամբ է յ-
նում իւր միտքը, և այն շատ ընդարձակ միտք, ան-
արդէն գլխի է ընկնում, թէ ինչ է ուզում ասել։
անգամ մի բառ կասէ միայն կամ միջարկութիւն և
բանով մի ամբողջ պարբերութիւն կը հասկացնէ։ Ա
և ճարտար խօսել չունի Աշտարակցու պէս*, մի քանի
կասէ ծանր ու բարակ, այն էլ վերջին վանկերը թո-
ղով։ Երևակայական խաղերի մէջ կան այնպիսի խաղեր

---

*Ով չի լսել այն առակը, որ ասում են մի Աշտարակ-
Լոռեցու հետ չի ուզել գդալ-փոխ մածուն ուտել, պայման
առաջարկել թէ ով որ շուտ-շուտ օխտը գեղի անուն կը տայ
կալը նրան ըլի։ Ասում են մինչև Լոռեցին կասէր Հըլէ լծոլ
Հըլէ ուզունլար... Աշտարակցին իսկոյն վրայ է տալիս շուտ
Ուշի—Օշական—Կարբի—Բիւրական—Թօլին—Թալիշ—Մա-
րա, գդալի կոթը դէմն արա...չը նայելով այս առակին պէ-
ասել, որ յիրաւի Աշտարակցիք սաստիկ արագախօս և
տար են...

չխօսելներն են զարգացնում։ Այսպէս շատ անգամ
ով հաւաքվում են երեխայք, պայման են անում, որ
պիտի խօսեն միմեանց հետ և ով որ առաջ խօսի,
ն այս ինչքան զարկ գլխի տան։ Բոլորն էլ միա-
բերան ասում են "—Թու կրկում", և լռում են, շատ
ամ ամբողջ ժամով, բայց ոչ անշարժ, ընդհակառակն
ղական շարժմունքներ են անում, որ զօռով խօսե-
ն և ծիծաղացնեն, որ ձայները դուրս գայ ու մի լաւ
ծենէ։ Այս խաղը մի աննշան բան չէ, ինչպէս և ոչ մի
խաղ։ Հարսների մէջ չխօսկանութիւնը Արարա-
պէս թեթև չէ, իմ հարսը (եղբօրս կինը) որ քսան
ի է մեր տանն է դեռ ևս ինձ հետ չի խօսեցած։
րգելում հարսները մեռնելու ժամանակ միայն իրաւունք
ստանում մեծերի հետ խօսելու*. ընդհանրապէս ասե-
լ մեր բարբառներից, բացի Արարատեանից, ոչ մինը չի
նող մի զարգացած մարդու հանճարի համար օրինա-
ր ծեւ դառնալ։ Դոքա կարող են ժողովրդական մանրիկ
նաստեղծիկներ դուրս բերել, բայց ոչ ընդհանուր ազ-
ային մի վիպասան, որ կարող է տալ միայն մեր այժ-
ման գրականական բարբառը Արարատեան բարբառի օգ-

---

* Չը պէտքէ կարծել, որ այս մի տեսակ ճնշումն է և
ռնաւորական ստիպմունք։ Գուցէ սկզբումն այդպէս լինի ե-
ած, բայց հիմի այդ հանգամանքը դառել է մի տեսակ հոգե-
ն պարծանք և մխիթարութիւն։ Իմ հարսի համար մեծ մխի-
թարութիւն է, որ չի խօսում ինձ հետ, որպէս ինձ չափազանց
իրած և պատուած։ Այսպէս ահա փախչելը, բերանը փաթա-
լը չխօսկան կենալը մեր կանանց միակ պարծանքն է։ Մեծ
նպատվութիւն են համարում, երբ որ ասում ես, այդ ջիմար
ն է մի․անէք։ Տղամարդիկ ոչ թէ ստիպմամբ բերանները փա-
աթել են տալիս, այլ ստիպմամբ բաց են անում և այդ էլ շատ
չերն են յաջողում։ Բայց ճշմարիտն ասել դրանից բերանը բե-

նութեամբ, և ոչ երբէք Պոլսոյ լեզուն։ Պոլսոյ լեզուով մաններ թարգմանել կարելի է, բայց ազգային վիպա լինել չի կարելի, պատճառ, վիպասանին հարկաւոր է կ դանի լեզու, հոգի, և ոչ մի մեքենական հոգի ու շղթայող արհեստական բառաշարութիւն...

Մեր լեզուն կը ծաղկի
Մեր լեզուն կը ճոխանայ,
Երբ մեր աղջկունք մեր սիրուն հարսու
Կը սորվին կարդալ, կը սորվին խօսել
Մաքուր Հայերէն ազգային լեզուն.
Երբ մեր պատանիք զարգացած կրթու
Հարսունք և փեսայք ձեռք ձեռքի տու
Կը խօսեն քաղցրիկ մայրենի լեզուով,
Յայնժամ կունենանք մենք լաւ բանաստ
և լաւ վիպա
Երբ մեր քահանայք և մեր վարժապ
Կը սորվին մաքուր հայերէն խօսիլ,
Երբ մեր հնամոլ դդում ուսուցիչք
Կիմանան կրթել և դաստիարակել,

---

բան չէ այլ ըռնիս է, լաւ է որ բնաւ բաց չանեն։ Երբ որ սի խօսել, մարդաւարի և քաղաքավարութեամբ միմեանց հետ ռավարուիլ չունին, լաւ կը լինի, որ միշտ փակ պահեն բեր ները։ Երկուսից մէկը պէտք է ընտրել—կամ կանոնաւոր զար ցում և դաստիարակութիւն և ապա ազատութիւն և կամ հապետական կոյր հնազանդութիւն։ Զարգացում չեղած ազատութիւնը տանելի բան չէ ընտանեկան կեանքի մէջ, աւելի սարսափելին թերուս և հակազգային կրթութիւն ցած իմաստակ օրիորդներն ու պատանիքն են, որոնք կա եալ ցեցեր են ընտանեկան կեանքի մէջ և ծնողաց սի մաշող։

Ցայնժամ կուռնեհան՝ խելօք մտածող
Իւր ազգի ցաւը, կարիքն իմացող։

# Ե.

Քամթ, քամթ, մին չուալ ցակատ,
Վէչ կօթ օնէ, վէչ արկաթ։

(Լա հի՞նչն ա)։

Արքազան Այվազեանը մի տետրակ է հրատարակել 69 թուականին այսպիսի վերնագրով—«Ուղղագրու-ն լեզուիս Հայոց. յօրինեաց 'ի պէտս Ազգային Վարժարա-նաց Գաբրիէլ Եպիսկոպոս Այվազեան»։

Ես զարմանում եմ, որ մեր գիտնականք այս մասին է չը խօսեցին։ Չի կարելի բանի տեղ չը դնել Արքա-Այվազեանի պէս անսխալ հեղինակութիւն ստացած անձանց գրուածք, մանաւանդ երբ այդ գրուածքն է պէտս Ազգային Վարժարանաց։ Մի՞թէ այսչափ թեթեւնշա-ւութիւն ունին մեր գիտնականաց աչքումը մեր Ազգային ւսած վարժարանները։

Միտ չը դարձնելով այս աշխատութեան մէջ մեր էւեանները այլ լեզուաց հնչիւնների հետ համեմատելը, մի հասարակ փաստով կը քանդեմ նորա բոլոր շէ-ածքը։

Արքազանը երկար բարակ սիմ—սիմ անելուց յետոյ ում է Սիմաւօն և դորա Սիմաւօնն այս է—

Թէ Պօլսոյ և թէ Տփլիսի հնչմունքները և թէ նախ-աց տառադարձութեան հետևելը համարում է սխալ, իսկ Ջերկրեայ Հայոցը, այն է Արարատցոցը ուղիղ։ Բայց տեսնենք ինչպէս է հասկանում Արքազանը Արարատե-

հնչմունքը։ Ահաւասիկ նորա բերած օրինակներից մինը ցոյց տայ, թէ ո՞յք ինչպէս են հնչում։

"Ռուս, постой...тебѣ возврата нѣтъ

Ըստ տառադարձութեան նախնեաց և ըստ այ
հիւսիսայնոց (Տփխիսեցոց)

Պաստօյ...տեբէ վօզվրատայ նետ,

Ըստ սովորական հնչման միջերկրեայ Հայոց (
րատցոց)

Փասթօյ թէպե վօզվրաթայ նեթ

Ինչն է արդեօք ստիպել Սրբազանին այս անհեթ սխալման մէջն ընկնել և Արարատցոց հնչիւնները Թի ցոց հնչիւններին յարմարացնել։ Այս բոպէիս կասեմ Սրբազանը այդ տեսութիւնը հիմնել է մեր երևելի գապարծանք Հանճարի, այն է Երջանկայիշատակ Ս եանցի այն մի քանի բառերի վերայ, որ նա գրել է Նախիջևանցոց և առ հասարակ Ղրիմեցոց ծաղրելու հւ յարմարացնելով իւր տառադարձութիւնը նոցա հնչմա ոչ իւր կամ մեր։

Տեսէք ահա մեր գիտնական Սրբազանը ինչպէս բռում այդ օրինակը։

"Նոյն Երևանցի հեղինակն՝ Խաչատուր Աբովեա ռուսերէն քաջ ես գիտէր, տես ինչպէս հասկըցած թէ տառադարձութեան կանոնը չյարմարիր այժմու ղուաց լեզուները հայերէնի փոխաբերելու համար, թ և նորա տառադարձութեանը մէջ ալ միակերպութ կանոնաւորութիւն չերևեր* այս հատուածիս մէջ— որ ասում ես փրաքուչնիվաթսա արի, աքուշնայ եմ,

* Աբովեանցը գրել է փրօքուլիվաթսա, քրուժիթսա, Սրբազանը այդ միևնոյնը ինքը սխալմամբ գրել է փրօ վաթսա, քրուժիդսա, յետոյ իւր սխալից եզրափակել, թէ

այ էլայ, փրօշէնի տուփ...„Այդ օտար բառերը եթէ
ւեցին մէջ բերէր կամ Ջուղայեցին անշուշտ նախ-
տառադարձութեան հաւատարիմ մնալով պիտի գը-
նպէս—պրօգուլկիվատսա, սկուչնայ, օբիժատսայ, արո-
և ահա յայտնի է, թէ որքան ևս առաւել կայլանդա-
ւքերը եւ անիմանալի լինէր թէ Հայուն եւ թէ Ռուսին„:

Ահա այս փաստով ուզում է ցոյց տալ, որ Ջու-
ւ տեսութիւնը սխալ է, նախնեաց տառադարձու-
ւ հետևեալը ուղիղ չէ, այլ Աբովեանցի գրածն է ու-
ուրեմն և Արարատցոցը և տրանով է կամենում
թիւն տալ իւր անկանգնելի և խախուտ շինուածքին:

Ահա այս է նորա շինուածքի հիմքը և բուն շինու-
ւ, որի խնդիրը կը լինի հետևեալ կերպով: Սրբա-
ւյր: Եթէ ես ուզենայի Ձեր հնչմամբ և արտասա-
ւամբ մի բան գրել, որ մերոնք կարդային բոլորովին
ս, ինչպէս դուք արտասանում էք և հնչում, անշուշտ
ասէի.—մեր Սրբազան Հայրը ասում է քօփէր
նակ ասելու կօպէկ, մեր Սրբազանը գրում է փեթր-
փոխանակ գրելու Պետերբուրգ: Այժմ չեմ ասիլ
ս գրելու փոխանակ այնպէս է գրում, այլ կասեմ
որ ասում ես քօփեք, փեթրբուրք ևայլն: Ուրեմն
ածը այս վերջին ձևի մէջ միայն տեսնելով՝ պիտի
Աղայեանցը որպէս ներկայացուցիչ Արարատեան բար-
աւելի ուղի՞ղ է գրում, ըստորում գրում է փե-
ւրք և ոչ Պետերբուրգ, ինչպէս Ջուղայեցին է գրում

---

ութիւն չերևէր: Օրհնուած մէկ լաւ կնայէիք բնագրին,
ս ես չը հաւատալով Ձեր տպածին, նայեցայ բնագրին և
ւեցայ, որ ճշմարիտ է եղել իմ բնագրումս:

ըստ Նախնեաց տառադարձութեան*։ կամ թէ չէ, ես
մի վիպասանութեան մէջ ուզեցած լինիմ մի կաթ
Շիրակացու խօսուածքը մեր հնչմամբ գրել—"Ձօ՛ ուր
գուքաս գը, ձօ՛ ուր գերթաս գը...սորանից ուրեմն էլ ս
տի եզրակացնէք թէ Աղայեանցը ուղիղ հայերէն գրել
գիտէ՞։ Ուրեմն դուք այդպէ՞ս էք ուսումնասիրել Վէրք Հ
յաստանին Աբովեանցի։ Վա՜յ նորան...

Լաւ չէի՞ք անել արդեօք, որ նորա սեփական տ
առադարձութեան մասին ճշմարիտ հասկացողութիւն կա
մելու համար, նորա թուրքերէն գրածի վերայ հիմնուէ
որ նոյնպէս բերած էք որպէս օրինակ—"Սան քեամ, գ
ջանըն, իմամ ուշաղը, սանըն նա հաղղըն վար, քի ու
բզզան գեօնղարիր սան...դուրըն, դուրըն գեգալը"։ Այս
խալ էք համարել դուք, իսկ ռուսերէնը ուղիղ։ Ինչ
արդեօք, երևի սա ձեր տեսութեանը ձեռնտու չի եղ
ընտրում փոխանակ ճշմարիտ գիտնականի պէս առա
կանխակալ կարծիքների ուսումնասիրելու Ձեր յանձնառ
նիւթը, առաջուց որոշել էք, թէ ես պիտի աշխատ
հաստատել, որ բոլորեքեանք սուտ են, միայն ես եմ ճ
մարիտ, միայն ես գիտեմ, թէ որն է Արարատեան բ

---

* Ես ոչինչ չէի խօսիլ Սրբազանի այս նոր աշխատութե
վերայ և պատուելով իւր բազմահատոր աշխատութիւնքը, նե
ղամիտ աչքով կը նայէի նորա այս մեծ սխալի վերայ, սակ
նա որ իրան թոյլ է տալիս ասելու, որ մեր Նախնեաց տառ
դարձութեանը հետևիլը սխալ է, դորանով արդէն իրաւունք
տալիս ինձ ակներև կացուցանելու իւր իսկ չօչափելի սխալնե
Եւ չէի էլ կարող լռել այս մասին, քանի որ այս միակ միջ
է մնում ինձ առաջարկել մեր Պօլսոյ եղբարց—հետևիլ Նախնեա
տառադարձութեանը, որպէս զի մեր և իրանց գրածների
միակերպութիւն լինի։

տառը: Ահա այս պատճառով ուղիղը դէն էք գցում,
ղը վերցնում և այդ սխալովը ուրիշի ուղիղը չափում
տում:

Ծերունի Գաբրիէլ Պատկանեանցը այնքան գրակա-
ան պարկեշտութիւն ունի, որ իւր ճշմարիտ կարծիքը
տնել է որպէս «Տարփկոյս» (Տես Նիրկայ տարոյս «Ա-
տատ Ամսագրի մէջ, Թիւ Գ.): Այս յօդուածի մէջ ա-
ինչ է ասում մեր պատկառելի ծերունին,—«Տփխիսի
չիւնին պիտի համարուի աւելի մերձ այն հնչմանց, որ
որոց տուել է իւրահնար տառերուն թէ Հայոց և թէ
ացը»: Ահաւասիկ ճշմարտութիւնը, որ երկար ժամանակ
ագցրած պահել է մեր Ափում և 'ի վերջոյ յայտնում
այն էլ ոչ որպէս ճշմարտութիւն, այլ որպէս «Տարա-
ը»: Սորա հակառակ մեր Սրբազանը իւր գրուածքը հարց
պատասխանի տակ դնելով հաւատոյ դաւանաբանու-
եան դասագրքի ձև է տուել նորան և ամենայն վստա-
ութեամբ տուել 'ի պէտս Ազգային Վարժարանաց: Այլ բան
եթէ որպէս մի կարծիք առաջարկէր, որպէս դատողու-
թեան և միակութեան կարօտ նիւթ: Ուրեմն միայն Պա-
ը չէ, որ ինք զինքը անսխալ է համարում: Սրբազանը
ոչ մի խօսք չի ասել վրաց հնչիւնների մասին, բայց
ստ է խօսեցել այնպիսի հնչիւնների վերայ, որոնք ամե-
ւին Արարատի անունը լսած չեն: Հեշտը թողած դժուա-
ն ետևիցն է ընկել:

Կարճ ասել.

Ծերունի Պատկանեանցը լրականութեան հետ մօտիկ
անօթանալը հարկաւոր համարելով, չէ ուզեցել, որպէս
ոհակոն և փորձ սիրող մարդ, իւր վերջնական վճիռը
ալ. բայց սորա հակառակ Սրբազանը հետևել է այն ա-
ակին, որի մէջ պատմվում է, թէ ինչպէս մի Գերմա-

նացի փիլիսոփայ կեանքի մէջ ուղտ տեսած չը լինե-
այլ միայն անունը լսած, թէ աշխարհումս մի կեն-
կայ այդ անունով, ցանկանում է ուղտ նկարագրել, մտ-
իւր ընկեր Անգղիացին այդ նպատակով գնում է
կէի և Արաբիայի անապատները առաջուց քանի
ժամանակ դնելով մօքումը ուղտեր ուսումնասիրելու
մար: Գերմանացին փակվում է իւր սենեակի մէջ, ձ-
ճակատին դնում, և սկսում մտածել, թէ արդեօք
պիտի կենդանի պէտքէ որ լինի ուղտը: Երևակայո-
շատ և նկարագրում մի անհեթեթ հրէշ, և ժողո-
հուն հաւատացնում, թէ սա է ուղտը, ուրիշ կերպ կար
լինել.........

# ՎԵՐՋ:


Въ Типографіи Амбарцума Энфіаджіанцъ и К°

# ՏՈՒՆԿԵՐԸ

ԵՒ ԱՆՈՆՑ

# Հայերէն անունները






**DES PLANTES**

**et de leurs noms arméniens**

par le Dr Joh. ARTIGNAN

Illustrations par M. Eugène DIÉBOLD, dessinateur




**ՓԱՐԻԶ**

Տպագրութիւն Տ. ՍՕՂՐԱՄԱՃԵԱՆ

**1906**

Imp. D. DOGHRAMADJIAN, 18, Rue des Gobelins, Paris.



# ՏՈՒՆԿԵՐԸ

## ԵՒ ԱՆՈՆՑ

# Հայերէն անունները





Երբ ասկէ տասն եւ երկու տարի առաջ Կ. Պոլսոյ Հայրենիքին մէջ հրատարակեցի մեծանձնուտ Հ. Բաջունիի գիտական Բառագրքին մասին մէկ քանի քննական յօդուածներ(1), ու յետոյ, բուսաբանութեան դասագրքի մը պատրաստութեան միջոցին, տեսայ թէ ի՜նչ անորոշութիւն եւ խառնակութիւն կը տիրէ բոյսերու հայերէն անուանց մասին։ Սակայն մեր երկիրը շատ ճոխ է եւ բեղուն բուսական արտադրութեամբ, եւ մեր եղե-

(1) «Հայրենիք», 1894, Թիւ 851, 853, 866.

մական լեռներն ու հովիտները գունագեղ եւ քաղցրաբոյր ծաղիկներով են պատած։

Բառերը չեն որ կը պակսին մեզի, միայն թէ անոնք որ մեր երկրին մէջ կը ճանչնան տունկերն ու իրենց անունները, չգիտեն բուսաբանութիւն եւ օտար լեզու, իսկ անոնք որ բուսաբանութիւն գիտեն, անկարող են երթալ հայրենի գաւառները. բուսաքաղել (herboriser) եւ հայրենական աւանդութեանց ու լեզուին պահապան մամերու եւ տատերու բերնէն քաղելով՝ որոշել, ճշդել այդ տունկերու անունները, տեսակները, յատկութիւնները. այդ կերպով ո՛րքան թաքուն գանձեր պիտի յայտնուէին մեզի։

Կայ ուրիշ դասակարգ մը եւս մարդոց. բառագիրք շինողները, որ՝ առհասարակ՝ ոչ բուսաբանութիւն գիտեն եւ ոչ բոյսերու հայերէն բառերուն գոյութեանը կը կասկածին, եւ սակայն Տունկ ինչ չգրելու համար հայերէն լեզուն կ'աղքատացունեն նորահնար թարգմանածոյ բառերով, մինչդեռ անդին բուն հայկական անունները կը գտնուին ժողովրդին բերնին մէջ։

Արդարեւ մեր ներկայ պայմաններուն մէջ տունկերու հայ անունները ճշդելով սարքել եւ գոհացուցիչ արդիւնքի մը հասնիլ շատ դըժուար բան է, չկրբեմ անհնարին։ Իմովսանն նպաստելու համար այս գործին, ներկայովս ի լոյս կ'ընծայեմ հետազօտութեանցս արդիւնքը մասամբ։

Հրապարակաւ մեծարանօք կը յայտնեմ Հ.

*Բաղտունիի որու գործն ունեցած եմ աչքի առջեւ՝ այս աշխատութիւնը պատրաստած միջոցին . իր Բառագիրքը , թէեւ զուրկ չէ սխալներէ, ինչպէս ամէն մարդկային գործ, արդիւնք է տակային մեծ վաստակոց . Ունէի նոյնպէս պատուական Ալիշան Հօր Հայբուսակը որու նկարագրութիւնները երկար հետազօտութիւններու մէջ օգտակար եղան*(1) ։

**Կանճրակ**. — *Այժմեան ո՛ր ֆրանսահայ բառագիրքը բանայ մարդ , Բաղտունի , Լուսինեան, Տէմիրճիպաշեան* , colza *բառին դէմ կը գտնէ կանճրակ : Յարգելի Տ. Նորայր Բիւզանդացին է որ, նախ՝ գրած է*, colza, *ազգ ինչ կաղամբոյ որոյ ունին ձէթ իւղ վառելի . Գ. Կանճրակ* (?) : *Միայն թէ նորագոյն հեղինակք տարակոյսի նշանը* (?) *վերցուցեր են ։*

*Նախ եւ յառաջ ըսենք թէ կանճրակը* colza *չէ, որը պարզապէս կաղամբ է իւղաբեր* (brassica oleifera L(2)), *կը նմանի շողգամին* (brassica esculenta, navet) *որմէ կը տարբերի իր մանր*

(1) Հ. Ալիշան որու հաղորդած էի իմ դիտողութիւններն Հայբուսակի մասին և իրեն յայտնած քննութեանցս արդիւնքը մասամբ՝ հետեւեալը կը գրէր ինձ 28 Մայիս 1901 Թուականով .

« Արդէն ծանուցած էի իմ բուսաբանական գործոյս
« մէջ՝ որ նպատակս չէ Բուսաբանութիւն այլ Բուսաբա-
« ռութիւն. բաց այլ Թարգմանութեան մէջ եթէ կան սը-
« խալք՝ յետ իմ կարելի քննութեանցս , ընդունիմ ուղ-
« ղութիւնները , բայց այսուհետեւ այդպիսի գիտելեաց
« պարապելոյ անցեալ է ժամանակս . . . . »

(2) L. կը նշանակէ Լիննէ . տունկերու լատին անունները կը նշանակուին միշտ իրենց կնքահօր անուամբ ։

ու բարակ արմատովը, մինչդեռ շողգամինը խոշոր է եւ հաստ. խաչակերպ տունկերու (crucifère) ընտանիքին կը պատկանի, ու անոնց նման իր դեղին ծաղիկներն ունին չորս փերթեր (sé-




Կանճրակ.—**Carthamus tinctorius L.**

1. ծաղիկը. 2. պտուղը. 3. պտուղը Kentrophyllum lanatum DC. տունկին որ կանճրակին դրացի է:

pale), չորս թերթեր (pétale), վեց առէջներ (étamine) որոնց երկուքը միւսներէն աւելի կարճ են. լերկ ու լայն տերեւներն են փոխադիր (alterne) եւ խորապէս բաժնուած. իր գնդաձեւ սերմերէն կը հանեն վառելու իւղ. կոլզան(1) եր-

(1) Կոլզա հոլանդերէն կաղամբի սերմ կը նշանակէ (Kool, կաղամբ, Zaad, սերմ.)

կամեայ տունկ է, մէկ տարին յուլիսին կը ցանեն, միւս տարին մայիսին կը ծաղկի եւ յունիսի վերջն ալ կը քաղեն։



Կոլզա.—Colza.

Մեր երկրի կանճրակը բարդ (composée) ծաղկով տունկ մըն է մինչեւ մէկ մեթր բարձրութեամբ, ծայրը փշոտ եւ ատամնաւոր տերեւներով։ Գլխուն ծաղկեփունջը (capitule) նոյնպէս մանր փշէ պատատ (involucre) ունի եւ կը վերջանայ կարմիր մանիշակագոյն մանր թելերով որ ծաղիկներն են։ Փշապատեանին մէջ կան բազմաթիւ հատիկներ անկիւնաւոր՝ նման արեւածաղկի (tournesol) հատիկներուն։ Հանգուցեալ Սրբուանձտեանց Եպիսկոպոս կը գրէ Մա-

Ճաճայիին մէջ (էջ 447) թէ կանճրակը «փշաւորոյս է մշակել, որ ունի ծաղիկս նման զաֆրանի եւ հունտս կաղմէ, որոց հատիկներ նման են արեւածաղկի հատին, զորս խաշեն, ծեծեն, կամ հանեն եւ պահոց կերակրոց ի պէտս գործածեն »:

Ալիշան իր Հայբուսակին մէջ կանճրակ բառին իբր հոմանիշ կուտայ կակժիրակ, կակծիրակ, կակճիրակ, կաճրճրակ, ճակժիրակ, ճաճկիրակ, որոնց զանազանութիւնն անշուշտ գրչագիրներու սխալ ընդօրինակութեանց արդիւնք է լոկ եւ անպէտ:

Հայբուսակի մէջ կակժիրակ բառին դէմ կը գտնենք. «Ամիրտովլաթ գրէ. Ասացել է գրոցս ժողովողն թէ այսօր (Ղրտումի) Պ. Հասաֆսանիա կ'ասէ, եւ Հայք կակճիրակ ասեն, եւ ասփուրի հունտ ասեն»: Գալիէնոսի Բառից կարգին գրուի. Կնուկոն՝ Կակծիրակ որ է խիարիշամբ. Պէյթար կ'ըսէ. «Երկայն, թանձր եւ փշոտ տերեւներով բոյս մի է (Ասփուրը) երկու կանգուն բարձր, գլուխն մեծ ձիթապտղի մի չափ. ծաղիկն քրքմային (նման զաֆրանի), համեմի տեղ ի գործ ածուի. իսկ սերմն կարմիր եւ ճերմակ, երկայնաձեւ եւ անկիւնաւոր է»: «Ղրտում, որ է ասփրին հունտն, ածուց լինի եւ վայրի, տաք է եւ կակուղ է . . .» (Ամիրտովլաթ):

Սակէ կը հետեւի որ Ասփուր եւ կանճրակ միեւնոյն տունկն են որու ղրտում կամ կրտիմ արաբերէն անունը տուած է ֆրանսերէն carthame բառը. Հ. Քաջունի իր գիտական Բա-

*բառագրքին մէջ կը գրէ* · Carthame, *ասպուղան*, *ասփուր*, *ասպուր* · *արաբ.* **ասֆուր**, **զօրֆում**։

*Տ. Միհրան Աբիկեան իր ընդարձակ բառագրքին մէջ կը նշանակէ, եթէ եօթնեւտասնամեայ յիշողութիւնս զիս չի խաբեր. Ասփուր= կանճրակ, միայն թէ կ'աւելցնէ* colza, *ինչ որ սխալ է*։

*Ուրեմն մեր կանճրակը Ֆրանսերէն* carthame*ն է*։ *Արդարեւ* carthame*ի նկարագրութիւնը կը յարմարի կանճրակին, ինչ որ ստուգեցինք Նանսիի բուսաբանական պարտէզին մէջ ազնիւ բարեկամիս Վանեցի հողագէտ Մ. Նաթանեանի հետ*։

Carthame*ը բարդածաղիկ տունկերու մէկ սեռն է, որու տեսակները, տարեւոր տունկեր, Արեւելքէն բերուած են Եւրոպա* · *մէկ տեսակը կը կոչուի* **խորթ քրքում** (safran bâtard) *երկուքին չորցուած ծաղիկները իրարու նմանելուն համար* · *սերմերը կը տրուին պապկաններուն կեր* (graines de perroquet, *թրք. փափաղան եէմի*) · *այդ սպիտակ եւ անկիւնաւոր* (à 4 côtes), *կէս հարիւրորդամեթր մեծութեամբ, սերմերէն կը հանեն իւղ որ Եթովպիոյ մէջ կը գործածուի կերակուրներուն մէջ իբրեւ* sauce, *իսկ բժշկութեան մէջ կը գործածուէր ժամանակաւ իբրեւ դարման յօդացաւի* (rhumatisme) *եւ իբրեւ լուծողական*։

**Կորնգան, Առուոյտ, Երեքնուկ.** — *Այս բոյսերու նշանակութեան մասին բառագրքի հեղինակները համաձայն չեն, մենք ստուգեցինք տունկ ի ձեռին որ Վանեցւոց* կորնգան *կոչածն*

է sainfoin, առուոյտը՝ luzerne եւ երեքնուկը՝ trèfle.

Այս երեք տունկերն ալ Թիթեռնակերպներու (papillonnacées) տոհմէն են որով կը բնո-




Կորնգան.—Onobrychis sativa L 1. պտուղը, 2. ծաղիկը։

րոշուին իրենց անկանոն ծաղիկներով. այս ծաղիկները որ աղօտապէս թիթեռնի ձեւ ունին հնգաթերթ են, վերին թերթը (դրօշ [étendard] կոչուած) կը ծածկէ աջ ու ձախ դրուած երկու թերթեր (թեւ [ailes] կ'անուանուին) զորս կը պատեն ստորին միացած երկու թերթեր (նաւ carène), օրինակի համար, լուբիային, բակլային ծաղիկները ։

Sainfoinին (կորնգան), luzerneին, trèfleին իրարմէ ունեցած զանազանութիւնն այն է որ sainfoin (լատ. onobrychis sativa Lam. բառ Լա-

մաւրքիր = hedysarum onobrychis L. ըստ Լինէ բուսաբանին) խոտային տունկին ծաղիկները ան-հաստատարակ կարմիր, քիչ անգամ սպիտակ, հասկեր կը կազմեն գլխագիր (en épis terminaux) ծղօ-տին ծայրը բացուած, տերեւները երեքէ աւելի տերեւիկներ ունին։ Պտուղը փոքր սերմ մըն է խորդուբորդ երեսով։ Այս խոտը կը հնձեն երբ հասկին տարին ծաղիկները կը սկսին թառա-միլ եւ ունդ կապել։




Առուոյտ կապոյտ.—Médicago sativa L.
1 - պտուղը. 2. 3. ուրիշ տեսակ առուոյտներու պտուղներ (m. orbicularis (2). — tornata 3 )

Trèfleը եւ luzerneը իրարու շատ նման են, Երկուքին եւս տերեւները երեքական տերեւիկ-ներ (folioles) ունին, միայն թէ trèfleը (երեք-

նուկ. լտ. trifolium) որ ամէն տեղ առանց մշակութեան իսկ կը ճապաղի եւ հասարակ տունկ մըն է, ունի գնդաձեւ ծաղիկներ որոնց պսակը (corolle) տեւական է, չթափիր եւ կը դառնայ թաղանթային (membraneux), ունդ կապելէն



Երեքնուկ.—Trifolium rubens L. 1. ծաղիկը :

ետոյ եւս. իսկ luzerneը (առուոյտ, լտ. medicago) զոր Մեծն Աղեքսանդր Մարաստանէն Յունաստան մտցուց, մշակուած ճարակախոտ է. երկայն, ցից ծղօտ ունի ճղճղկէն (rameux), ծաղիկը կը թափի երբ տունկն ունդ կը կապէ, պտուղները՝ փշոտ կամ անփուշ՝ ի գնդաձեւ եւ գալարուած(1) :

(1) Այս մանրամասնութիւնները կուտամ որպէսզի

Տեսնենք ինչ կը գրեն մեր հեղինակներն յաս տունկերու անուններուն մասին ։

Այնչափ Հայբուսակին մէջ կորնգանը méli-lot կը նշանակէ, որ բոլորովին luzerneին կը նմանի, ու զանազանութիւնը որ mélilotի մանր տերեւները Շուրբ երկայն ողկոյզ կը կազմեն ու իրենց պտուղը ուղիղ է եւ ոչ գալարուն, մինչ sainfoinը կ'անուանէ խաղր կորնգան, իշ-որնգան ։ Նոյնպէս բշապուտոյ բառին դէմ կը դնէ լ. onobrychis փ. esparcette որ sainfoin կը անուանեն ։

Հ. Այնչափ երեքնուկն ու առուոյսը trèfle համարի, իսկ luzerneը կ'անուանէ ասպաս(1) պարսկերէնն է luzerneին ։

Ամիրտովլաթ կը գրէ . « . . . Ի. եռեճա[ն]ան է եւ Հ. առվոս . . . փասփուրայ ասեն չոր Ճայքն, որ պ. ասպաս ասեն եւ հայերէն առվոս ասեն »(2) ։

Հ. Բաչունի կորնգանը կը նկատէ Origan որ շրթնակերպ (labiée) տունկ է՝ անանուխին, աթրինին նման, Թուրքերէն քէքիք օտու կոչուած արաբ. սաքար), իսկ առուոյսը կը կոչէ trèfle եւ luzerneը՝ ասպաս, վայրի առուոյս (մինչդեռ luzerneը մշակուած եւ ընտանի տունկ է) ։

երկրցի ընթերցողներն իրենք անձամբ ստուգեն, եթէ առիթ ունին . ու շատ շնորհակալ կ'ըլլամ եթէ ինծի ղրկեն իրենց հետազօտութեանց արդիւնքը ։ Յ. Ա.

(1) Luzerneի պատկերը թէ Հ. Բաչունիի բառագրքին և թէ «Հայբուսակ»ին մէջ, որ անշուշտ Հ. Բաչունիէն առած է, սխալ է ։

(2) «Հայբուսակ»էն կ'առնենք այս տողերը ։

Նորայր Բիւզանդացի կը կոչէ. mélilot, Կո-րնգան, մեղրածուծ. sainfoin, իշխոտ (լատ.



**Մելիլոտ.—Melilotus officinalis L.** 1. ծաղիկը. 2. պտուղը։

hedysarum [sainfoin]). luzerne, մարառուոյտ. trèfle, առուոյտ ։

**Սպանդ.** — Վանայ Հայոց հին գերեզմա-նատուններուն մէջ կը բուսնի, ասոր համար Վանեցիք կ'ըսեն թէ միայն հայ գերեզմաննե-րուն վրայ յառաջ կուգայ. հոտն անախորժ է։ Այստեղ ստուգեցինք Բուսաբանական Պարտէզին մէջ որ Վանեցւոց սպանդ կոչած տունկը Փրան-սերէն rue (լատ. ruta) կը կոչուի որու բազմա-թիւ տեսակները կան ։

Սպանդի մէկ տեսակը rue officinale, լատ.

**ruta** graveolens, (*սպանդ բժշկական*) *ունի դե-ղին ծաղիկներ. փոխադիր, ճղճղկէն եւ ատամ-նաւոր տերեւներ, պտուղը չորեքխորշ է, համը տաքը ու լեղի ։*




Սպանդ.—**Ruta graveolens L.**

1. ծաղիկը. 2. պտուղը. 3. սերմը ։

*Հռովմայեցի տիկիններու ամենէն հաճելի [illegible]ոտն էր սպանդինը, իսկ ի բաց կը վտարէին [illegible]նանք կիտրոնին բոյրը որ սիրելագոյնն է այժ-[illegible]ու փափուկ ա՚լկնայց (ո՛ կանացի քմահաճոյք)։*

*Արաբացիք սպանդը կը նկատէին իբրեւ դեղ ամենաբոյժ՝ ըստ Մարգարէին հրամանին. այժմ իսկ կը գործածուի քոսի, ճճիներու դէմ, իբ-րեւ պնդիչ եւ դաշտանաբեր ։*

*Այնչափ սպանդ բառին դէմ կը յիշէ* pega-

num harmala որ է սպանդ վայրի (rue sauvage), կազմուած յունարէն փէ՛կանոն եւ արաբերէն հարմալ անուններէն ։

Փեգենայ բառը զոր մեր բառագիրք կը նշանակեն, յունարէն փէ՛կանոն բառին աղաւաղրութիւնն է . յիշուած է Ղուկասու Աւետարանին մէջ(1) ։

Իսկ սպանդ բառը որ կը գործածուի գաւառներու մէջ, պարսկերէն կը կոչուի իսփէնտ.

Հայբուսակի հեղինակը սպանդին համանիշ[illegible] կը նկատէ կառաճ, սանճալ, սասալ, սասա[illegible] որ թուրքերէն սասաֆ օթուի ապատպրութիւն[illegible]ն եւ գրչագիրներու օրինակողներէն այլակերպուած ։

**Մկնալոճ.** — Վանեցիք, ինչպէս նաեւ Տարօնեցիք, այսպէս կը կոչեն aubépine (լտ. cratægus) ծառատունկը ։ Մկնալոճը կը գործածու[illegible] Տրանսայի մէջ պարտէզներու շուրջը, երկաթուղւոյ գծերու երկին, կողմը ցանկապատներ[illegible] շինելու, իր սպիտակ ծաղիկները շատ անուշ[illegible]ն տեսարան մը կը կազմեն Մայիսին ու օդը կ[illegible]ը խնկեն. մկնալոճը մարգագգի է եւ ալոճի[illegible]ն (azarolier, լտ. cratægus azarolus, 7—8 մեթ[illegible]ր բարձրութեամբ ծառ) սեռէն, ունի բաժանուա[illegible]ծ տերեւներ. Իր փնջաձեւ սպիտակ ծաղիկներ[illegible]ը կուտան մանր կարմիր պտուղ ալոճի նման [illegible]. ճիւղերը սուր փուշ ունին, այս պատճառաւ[illegible]ու կը կոչուի լատիներէն cratægus oxyacantha

(1) Այլ վա՛յ ձեզ Փարիսեցւոց, զի տասանորդէք զա[illegible]նանուխ և զփեգենայ և զամենայն բանջար։ Ղուկ. ԺԱ. 4[illegible]42։

(oxyacantha, սուր փուշ ունեցող, սրափուշ(1)):

Հ. Կաղնունի aubépineը կ՚անուանէ նաեւ խուռուկ որ մեզ միայն ծանօթ է Փիլոնի Նախախնամութեան գրոց թարգմանութենէն. « Մորե-




Մկնալոճ.—Cratægus oxyacantha L.
1. ծաղիկը. 2. պտուղը :

նիք եւ կանկառունք եւ քոսուկք՝ սուսանց մշակութեան բուսանին » որու մեկնիչը կը գրէ. Քոսուկ՝ Սուր փուշ (Հայբուսակ) : »

Թուրն. Փոր Ֆրանսացի բուսաբանը որ Ժ.Ը. դարուն ճանապարհորդած է ի Հայս, կը յիշէ մկնալոճի մէկ տեսակը (aubépine à feuilles de tanaisie, cratægus tanacetifulium), 5—6 մեթր

(1) Սրափուշ բառը գործածուած է Ագաթանգեղոսի մէջ (տպ. Վենետիկ 1862 էջ 484), փուշերու շարքին մէջ.

գարձրութեամբ, ճեղքատուած կեղեւով, խօրապէս բաժանուած մանր տերեւներով, պտուղը արեան նման կարմիր, հոկտեմբերին կը հասուննայ: Հայերը, կ'ըսէ Թուրնըֆոր, կ'ուտեն անոր թթուաշ պտուղները որ ալոճի կը նմանին, բայց անոր չափ լաւ չեն ։

**Ամանէկոտրուկ.** — Վանայ մէջ այսպէս կ'անուանեն adonis տունկը ։

Ամանկոտրուկը (գեղեցկութեանն ի տես ամանը նախանձէն կը կոտրի ?), կ'ըսէ Տ. Մ.



Ամանէկոտրուկ.—**Adonis.** 1. պտուղը ։

Նաթանեան, կը բուսնի պատերու տակ, արե
երես տեղեր, կարմիր ծաղիկներ կուտայ պըզ
տիկ պզտիկ, հոտը գէշ է ։

Ամանկոտրուկը, որու ֆրանսերէն անուն
առնուած է յունական դիցաբանութենէն (որ

ամեմատ Ադոնիս գեղեցիկ պատանւոյն արեան
ՙէկ կաթիլէն բուսած է այս տունկը), հրա-
ունկներու (renonculacées) ընտանիքէն մանր
30—50 հարիւրորդամեթր) խոտ մըն է կծու,
ունաւոր. տերեւներն են խորապէս բաժնուած,
աղիկը մութ կարմիր, կը նմանի անեմոն ծաղ-
կին եւ նոյն իսկ իր անունը չփոթուած է անե-
մոնին հետ. բայց անկէ կը տարբերի հետեւեալ
կարագիրներով. ամանկոտրուկն ունի բաժակ
փերթերով (sépales), պսակը կազմուած է 3—
5 կարմիր թերթերէ. անեմոնի ծաղիկն ունի
պսակ 5—9 գունաւոր թերթերով, չունի բա-
ժակ այլ ստորեւ երեք տերեւներով պատատ
involucre) որ իր բաժակն է՝ անշուշտ պսակէն
հեռի մնացած ։

Այս բացատրութիւնները կուտանք որով-
հետեւ մեր հեղինակները, ադոնիսը անեմոնին
հետ չփոթելով, վերջինին կուտան պsուկ կոs-
ուկ, կճընճկոsrուկ, ծափկոsrուկ(1) անունները
(ուփինեան), որ ամանկոտրուկին ուրիշ բա-
ներով կրկնութիւններն են, գալով անեմոնին
Նր բառագիրքը կը թարգմանեն նոյնպէս պուs,
ենուՆա(2), դարուՆան, խաչափայs :


Պօկու մեր կը կոչուի coquelicot հասարակ
աղիկը Վանայ մէջ (Թ.ք. կէլինճիf չիչէյի, ար.

(1) Հ. Բաչունի anémone բառին դէմ կը յաւելու և
. . ծափկոտրուկ. anémoneի տեղ դրած պատկերն ալ
donisի է :

• Ծափ մեր լեզուին մէջ կը նշանակէ եւ ծողեղէն
աման, պտուկ «(Հայբուսակ)» :

(2) ՓԵՆՆա կամ փԵՆուՆա pæonia, pivoine.

նաֆէգ) . տարեւոր տունկ մըն է խաշխաշի ընտանիքէն , ցորենի արտերու մէջ շատ կը գըտնուի , ծաղիկը կպչուն կաթ կը ծորէ եթէ կըտ-




Պէկու մէր.—papaver rœas L.
1. պտուղը . 2 պտուղին կտրուածը . 3. սերմը.

րուի . կուտայ փայլուն կարմիր ծաղիկներ բաժակին ունի երկու թերթեր միացած վերի ծայրով որ կը թափին ծաղկին բացուելուն ։ պսակին չորս թերթերը ճմռթկուած (chiffonnés) են կոկոնին մէջ , ծաղկին կեդրոնը սեւագոյն առէջներուն պատճառաւ . պտուղը քահանայի փակեղի կը նմանի իր ճառագայթներով (աղաք[illegible] հանճի կ'ընեն անոր) ։ Այս տունկը յաճախ շըփոթուած է անեմոնին եւ կակաչին(1) հետ ։

(1) Ատաբազարցիք կակաչ կ'ըսեն coquelicotին , կակաչը (tulipe) տաճկաց լալէ ըսածն է որ միաբլթակ տունկ է շուշանազգի վեց գունաւոր թերթերով , վեց առէջներով ։
Սեբաստացիք ամանկոտրուկ կ'ըսեն եղեր coquelicotին ։

Բառագիրք կը գրէն նոյնպէս coquelicot, հարսնուկ, հարսնածաղիկ (Թր. կէլինճիք չիչէյին թարգմանութիւնը), դարինած (անեմոնէին համար եւս գրած է այս բառը Հ. Բաղջունի), գթուկ (անշուշտ պտուղ) ։

**Սուքմա կակաչ**. — Ըստ Վանեցւոց, fritillaire կոչուած տունկն է զոր, Ֆրանսերէնէ



Սուքմա կակաչ.—Fritillaria imperialis.

Թարգմանածոյ, բառագիրք կը կոչեն արքայապսակ (couronne impériale), սովորական տունկ մըն է շուշանազգի կակաչին շատ մօտիկ ։

Տ. Խ. Լեւոնեան ճշգրտօրէն կը նկարագրէ

*զայն Վանայ Առտէր կղզիի մասին «Բիւզան-դիոն»ի մէջ հրատարակած իր յօդուածին մէջ. «Սուրմա կակաչը (Սուրմա անունն աղաւա-ղումն է Ս. Թումա անուան, որ վանք մըն է Առտէրի հանդիպակաց լեռան մէկ թեւին վրայ իբրեւ նոյն ծաղկին բնակավայր) շատ վայել-չատես դիրք մ'ունի, մէկ բթաչափ հաստ մութ կարմիր բունով մը՝ որ պտտնէն իբր մէկ թիզ լերկօրէն վեր բարձրանալէն յետոյ, կը ներկա-յացնէ քանի մը կարգ իրարու վերեւ բուսած փայլուն կանաչ տերեւներ, ասկէ վերջ դարձ-եալ լերկ մէկ երկու թիզաչափ եւ յետոյ կը ներկայացնէ վեց-եօթը զանգակաձեւ ու կարմիր ծաղիկներ որ բոլորակի վար կը կախուին, դեղնագոյն սերմնարանները լեզուի մը պէս դուրս երկնցուցած. այս ծաղիկներէն անմիջա-պէս վեր դարձեալ տերեւներու փունջ մը կը բացուի ճեղինաձեւ, այնպէս որ շատ անգամ մարդու հասակէն քիչ պակաս երկայնութիւն կ'ունենայ հոս, երբեմն ալ շատ առոյգ ըլլալով երկու կարգ ծաղիկ կուտայ։ Առոր դեղնագոյնն ալ կայ, բայց հազուագիւտ է։ Թուրքերէն լալէ փաշաար կ'ըսեն։»*

*Աւելցունենք որ այս արեւելեան ծագումով տունկը կը մշակուի Ֆրանսա պարտէզներուն մէջ իբրեւ զարդ. սոխարմատը կը պարունակէ կծու նիւթ մը, լուծողական եւ թունաւոր։*

**Հովու ճակտիկ.** — *Գարնան առաջին բան-ջարեղէններէն է սուեղին եւ սոխուկին հետ։*

*Ֆրանսերէն* bourse-à-pasteur *լտ.* capsella bursa pastoris L. *կոչուած տունկն է։ Հայերէն*

ք կը գտնեն հովուի մախաղ (bou se-à-
ն բառական թարգմանութիւնը), ծsա–
Հայբուսակի մէջ կայ նաեւ ճնճղուան,
նշան. Ատաբազարցիք կը կոչեն ճնճուղ–
ր տերեւներու ձեւին ակնարկելով ։
ր տունկ մըն է խաչաձեւներու ընտա–




ու ճակտիկ.—Capsella bursa-pastoris L.
լտուղը . 2. Թերթ . 3 ծաղկին կտրուածը ։

ւններ, սղոցաձեւ, կը ճապաղին հողին
ոմատին շուրջը կլորակի, վայրի եղեր–
ուքին (pissenlit) նման, անկէ կը բարձ–
անր ծղօտ մը, 10—20 հարիւրորդամեթր
թեամբ, ծայրը մանր ծաղիկներով որ,
՝ կուտան փոքրիկ պտուղ մը եռան–

կիւնի նման հովուի մախաղին , այնչափ փոքր որ ծառի մը պաշար միայն կրնայ ըլլալ ։

**Ծան սխտոր**. — allium carinatum L., այ-գիներու , խոպան արտերու մէջ կը բուսնի.



Ծանսխտոր.—Allium carinatum L.

արմատը փոխանակ սխտորի պէս պճեղ պճեղ ըլլալու , սոխի պէս թերթ թերթ է , իսկ տե-րեւները , բարակ ու մանր , սխտորի տերեւնե-րուն նման տափակ են ու մէջն անծակ ։

**Սոխուկ**. — ciboulette, civette, լատ. allium schœnoprasum L. մանրատերեւ սոխ մըն է, կը բուսնի մարգերու մէջ , տերեւները մէջը ծակ

են ու գրեթէ գլանաձեւ, իր փնջաձեւ ծաղիկները վարդագոյն են եւ ունին կապիճ (périgone) մանիշակագոյն, պտուղին մանրիկ հատիկները սեւ են. Վանեցիք ժաժիկին (տեսակ մը չորթան) մէջ կը խառնեն որպէս զի համ տայ.



Սոխուկ.—**Allium schœnoprasum L.** 1. ծաղիկը

կերած ատեն, ատամներուն տակ ճըք ճըք կը կոտրին։

Գիւղացիները սոխուկն աղած կ'ուտեն ձըմրան։

Երկարակեաց տունկ մըն է, սոխարմատը շատ մը մանր կոճղէզներէ կազմուած է, ձմրան վերջը այդ մանր կոճղէզները կը բաժանեն իրարմէ եւ առանձին կը տնկեն առուերաւոր տեղ մը։

**Բարտի, Կաղամախ, Սօսի.** — *Անտառային ծառերու անուններուն մասին եւս կը տիրէ շփոթութիւն մեր բոլոր բառագրերու մէջ ։*

*Կրցանք ստուգել այս երեք անունները. բարտին եւ կաղամախը* peuplier*ի*(1) *տեսակներ են զորս ընդհանուր անուամբ կրնանք կոչել բարտի որ ի մասնաւորի է* peuplier pyramidal, *իսկ կաղամախն է* peuplier blanc (*լտ.* populus alba, peuplier de Hollande), *կը բնորոշուի անով որ իր տերեւներուն ետեւը շատ սպիտակ է, մատաղ բողբոջները սպիտակ են ։*

*Աստուածաշունչի մէջ կաղամախ բառը կը գտնենք Յովսեայ Դ. 13ի մէջ. « ի ներքոյ կաղնեաց, կաղամախից եւ վարսաւոր ծառոց ». նոյնպէս Եսայեայ ԽԱ. 19ին մէջ. « եւ բղխեցուցից յանջուր երկրին զմայրն եւ զտօսախն, զմուրտն եւ զնոճն եւ զսօսն, զսարդն եւ ըզսարոյն եւ զկաղամախն. զգին եւ զփայտն իւղոյ » ։*

*Այս երկու կտորներուն մէջ եբրայական բնագիրը կաղամախին տեղ կը դնէ լիպնահ որ կը նշանակէ սպիտակ. ու եօթանասնից յունարէն թարգմանութիւնը կը գործածէ լեւքի որ է սպիտակ կաղամախ ։*

*Բարտի ծառը շատ կ՚աճի, սպիտակ եւ թեթեւ փայտ կուտայ, տերեւները կրնան ըլլալ անասնոց կեր ու բողբոջներէն* (bourgeon) *կը շինեն* onguent populeum *դեղը ։*

(1) Peuplier *լտ.* populus=*ժողովուրդ. Հռովմայեցիք, ժողովրդական, հասարակաց տեղեր, հրապարակներու մէջ կը տնկէին այս ծառը* ։

Արեւորդիք սրբազան կը համարէին բարտին եւ Շնորհալի կը գրէ անոնց մասին . « զբարտի ծառն մի՛ աւելի պատուէք քան զուռին եւ զկա-




1. Տերեւ կաղամախի , peuplier blanc. 2 տերեւ բարտիի , p. pyramidal. 3. p. tremble, եւերուն բարտիի . որձ (4) եւ էգ (6). Եռբացք. որձ (5) եւ էգ (7) ծաղիկներ. 8. պտուղ. 9. սերմ։

Կաղամախին եւ զայլս ծառոց եւ մի՛ կարծէք թէ փրկայա խաչին Քրիստոսի բարտի է », (Հայբուսակ էջ 87)։

Գալով սօսին , այդ հայկական ծառն է չինարը , platane, որու ծանօթ տեսակն է platanus orientalis L. « Տուղպ որ է՝ չինարն, պ. եւ

թ. զայսօր՝ անունն դաղձաղակն առեն եւ Հյ. Մ-սի» (Ամիրտովլաթ)։

Platane*ին* եբրայեցերէնն է արմոն որ յիշուած է Ս. Գրոց մէջ երկու տեղ. Ծննդոց Լ. 34 եւ Եզեկիելի ԼԱ. 8։

«Եւ առ Յակոբ գաւազան՝ շեր դալար եւ ընկուզի եւ սօսւոյ». Ծննդ. Լ. 37.

«Մայրքն եւ սօսոյք ոչ նմանեցին ոստոց նորա». Եզեկ. ԼԱ. 8։

Այս երկուքին մէջ լատինական բնագիրը (Vulgate) կը դնէ platanus, իսկ Եօթանասնից թարգմանութիւնը(1) առաջին տեղը կը դնէ թղա՛ղանոս իսկ երկրորդին մէջ էլատի՛ (եղեւին), հայերէն բնագիրը լատիներէնին նման պահած է միեւնոյն բառը եբրայական բնագրին արմոն բառին փոխարէն իրաւամբ։

Ֆրանսերէն երկու թարգմանութիւններ (Segond եւ de Saci) կը գործածեն նոյնպէս platane, իսկ անգղիերէն բնագիրը կ'ըսէ The chesnut trees (plane-trees) were not like his branches, Ezech. XXXI. 8.

Սօսին մեծ ծառ է մինչեւ 30 մեթր բարձ-

(1) Եօթանասնից թարգմանութիւն կոչուած Ս. Գրո յունարէն բնագիրը իբր թէ եղած է Աղեքսանդրիա՝ Պըտ ղոմէոս Եղբայրասէրի օրով (280 Ն. Ք.) 72 թարգմանիչներու ձեռքով։ Ճշմարտութիւնն այն է որ Աստուածաշունչ թարգմանուած է հելլենագէտ Հրեաներու ձեռքով ի պէտ իրենց ազգակցաց որոնք խիստ մեծաթիւ հաստատուած էին Եգիպտոս և մոռացած եբրայական լեզուն. մաս առ մ և այլևայլ ժամանակներ թարգմանուեցան այդ գրքեր աւարտեցան Քրիստոսէ 150 տարի առաջ. Տես. Histoire de la littérature Grecque, par Croiset.

բութեամբ, իր լայնատարած գագաթը պատ-ուական սօսուեր կը ձգէ պտղոտաններուն վրայ։

Հաստ բունը բաւական բարձրութեամբ երկ է ու անճիւղ, կը բարձրանայ ուղիղ («բոյդ սէրվիի չինար, աչքդ կաթոյտ, յօնքդ կամար, եւն.») կեղեւը մոխրագոյն կանաչ է, տերեւներն են լայն, փոխադիր եւ թաթաձեւ (palmée), հողմահարբ.ձեւով տարածուած ջիղերով (nervures), միաբնակ (monoique) ծառ է, այսինքն որձ եւ էգ ծաղիկները կը գտնուին առանձին. ծաղկոյլները գնդաձեւ են ու երկու երեք թուով երկայն կոթի մը վրայ շարուած որպէս խոզակ. Աշնան, երբ տերեւները կը թափին, այս պը-տուղները կը մնան ընդ երկար ճիւղերէն կախ-ուած, ու երբ կը շնչէ քամին, իրարու զար-նուելով խորհրդաւոր ձայներ կը հանեն անտա-ռին մէջ։ Սօսիներուն հանած ձայնէն եկած է Սօսափիւն բառը։

Ի հնուց սօսին պատուուած է եւ եղած նուիրական, Յունաստանի մէջ Դաչաց ոգինե-րուն նուիրուած էր եւ Սպարտացիք անոր ըստ-ուերներուն տակ կը կատարէին իրենց մար-զանքը։

Քսերքսէս Լիւդիոյ մէջ վեհապանծ սօսւոյ մը պաշտօն մատոյց։

Հայկազանց պատմութեան մէջ յայտնի է Սօսեաց անտառը Արմաւիրի մէջ, որու նուիր-ուեցաւ Անուշաւան ու կոչուեցաւ Սօսանուէր։

Այժմ սօսին առանց մշակութեան կ՚աճի միայն ի Հայս, Կովկաս, Պարսկաստանի եւ Յունաստանի հիւսիսային կողմը։

*ժէ՝ դարու ճանապարհորդներն ի Պարս—*
*կաստան, Թաւէռնիէ, Շարտէն, Երկարօրէն կը*




**Սօսի.—Platanus Orientalis L.**

1. 1'. առէջաւոր որձ ծաղիկներ, որ թել թել կ'ըլլան կը թա— փին յետ բեղմնաւորութեան. ինչպէս ցոյց կուտայ 1'. 2. սերմ— նափակաւոր էգ ծաղիկներ որ կուտան պտուղ. 3. պտուղ — 4. սերմ իր պատեանին մէջ :

*խօսքին Սպահանէն մինչեւ Նոր Ջուղայ երկարող, լայն ու գեղեցիկ պողոտային վրայ, հէզար ճէրիս, զոր կ'ընդմիջէր Զէնտէռուդի գետը եւ Ալլահվէրտի հրաշակերտ կամուրջը. երկու կողմը կը բարձրանային հոյակապ սօսիներ որոնց վրայ երկնքի թռչունները գիշով տերեւներուն հետ սխրալի համերգութիւն մը կը կազմէին։*

*Հ. Բաջուռնի* peuplier blanc*ը կը թարգմանէ սօս, իսկ* platane*՝ սարոյ: Միեւնոյն սխալը կը գործէ իշխան Լուսինեան իր բառագրքին մէջ։*

*Սարոյ բառը շատ տեղ յիշուած է Ս. Գրոց մէջ, թէեւ այդ բառի մասին հեղինակութիւնները անբաւական են վերջնապէս որոշելու, այլ կը կարծեմ որ սէրվի* (cyprès) *է, յաճախ Ս. Գրքի մէջ դրուած է սարդ բառին հետ եւ շատ անգամ լտ.* cupressus *եւ յն. կիպարիսսոս* (cyprès, *նոճի) բառերուն տեղ. « Սարոյն եւ սարոյն եւ նոճ ի դրախտին Աստուծոյ ոչ հաւասարեցին շառաւղաց նորա ». Եզեկ. ԼԱ. 8։*

*Մխիթար Գօշ որ լաւ կը ճանաչէ ծառերն ու տունկերը, շատ լաւ կը նկարագրէ սօսին իր պատուական առակներէն միոյն մէջ (ԺԹ.).*

*« Սօսին մօտ երկրագործները կ'ողողէին բամբակենիները եւ միմեանց կը պատուիրէին զգուշանալ որ մի՛ դուցէ կոխոտեն բամբակենիի ծառերն. սօսին աս լսելով՝ բարկացաւ որ ծառ կը կոչեն զայն, եւ ըսաւ, ինչո՞ւ ինձ նըման ծառ կը կոչուի ան. ես այսքան ստուար ու բարձր եմ, շատ տեղ կը բռնեմ։*

*Բամբակենին զայս լսելուն պէս, պատասխանեց եւ ըսաւ. — բարձր ես դու եւ ստուար,*

*սակայն անօգուտ . ոչ շինութեան , ոչ պտուղի եւ ոչ այրելու յարմար ես . այլ թանձր ստուեր ունիս , որու համար կը բամբասուիս աւելի քան կը գովուիս . իսկ ես թէպէտ փանագի եւ փոքր , այլ բազմաշահ եմ , ոչ միայն մեծատուններուն այլ եւ աղքատներուն , տածելու , քաշելու , գործելու համար . կը լինիմ հանդերձ ինչպէս ոչխարներու ասրը եւ կտաւին վուշը ու որդերու մետաքսը , որոնցմէ ոչ ինչ ունիս դու բնաւ , բայց միայն խոզակ* (1) » ։

**Գազ** . — *Բոլորովին փուշերէ կազմուած մէկ արմատէ դուրս կուգայ , մէկ քառակուսի մէթր կը տարածուի երկրի վրայ, իր արմատէն կը պատրաստեն խէժ՝ ծանօթ* gomme adragante, *Թրք. ֆիթրա, գազի խէժ անուամբ . տեղացիք հողը կը փորեն եւ արմատին վրայ ճեղք կը բանան , կամ ցօղունը կը ծակեն , խէժը կը վազէ եւ կը չորանայ , շաբաթէ մը յետոյ կը հաւաքեն։ Այս խէժը կազմուած է ծուծին* (moelle) *բջիջներուն եւ ծուծային շառաւիղներուն կակուղ նիւթի մը փոխուելովը ։*

*Գօնեայի մէջ ընդարձակ առեւտուր կայ ֆիթրայի. Վարագայ, Վանայ լեռներուն մէջ շատ կայ , Քիւրտերը գազը կը հաւաքեն , եւ ֆէվքն կամ ղաճղաղ անուամբ կը գործածուի իբրեւ դիւրավառ նիւթ թոնիրը բռնկցնելու համար։*

*Կապոյտ է իր բարդ ծաղիկը ու կը թռչի , կը չորնայ եւ կ'ըլլայ փուշ ։*

(1) Խոզակ , cocon . *սոսիին կախուած կլոր պտուղներուն կ'ակնարկէ շերամի խոզակներուն հետ համեմատելով։*

Տեսակներն են՝ 1) ցուան գազ կամ սեւ գազ, կը ճապաղուի շատ, փուշերը, բոյսն ամբողջովին սեւ է. 2) պարզ գազ, բաց թուխ, կարմրորակ, աւելի փոքր, նուազ կը տարածուի եւ աւելի յարգի է։



Գազ.—**Astragalus tragacantha.** 1. ծաղիկը ։

Գազն է ֆրանսերէն astragale տունկին իր տեսակներով ։

Astragale vrai (*լատ.* astragalus verus) *որ Հայոց, Պարսկաստանի, Փոքր Ասիոյ գաղ*
astragalus gummifera, *ի Լիբանան*, astragal
tragacantha *յիշուած Թուռնըֆորէ ի Կրետէ։*

*Հ. Քաջունի եւ Ալիշան կը յիշեն գազ իբրեւ համանիշ խազիրան եւ կոնի, սակայն ս տունկերու մասին Հայբուսակի մէջ տրուած ծ նօթութիւնք չեն պատասխաներ գազին։*

**Պապկեբլոր** *կամ* **Պապկլոր**. — mus ari



Պապկէբլոր.—**Muscari Comosum Mill.**
1. Muscari racemosum. 2. 3. պտուղ. 4. առէչ։

*տունկն է, Հ. Քաջունի եւ Տ. Լուսինեան ըշ- կուենի գրած են ֆրանսերէն բառը Թարգմա եւ- լով* (muscari, *մուշկ, այս տունկին գլխա ւոր տեսակը մուշկի հոտ ունենալուն համար)։*

*Միաբլթակ* (monocotylédonée) *տունկ է շու-շուշանազգի, ինչպէս սոխը, սխտորը, կակաչը, շուշան հովտացը* (muguet)։

*Նեղ տերեւներ ունի սխտորի պէս, մէջտեղ կը բարձրանայ ծաղկաբեր ծղօտը. մութ կա-պոյտ կամ մանիշակագոյն ծաղիկները, զանգա-կաձեւ, վեց մանր ատամներով, ծղօտին ծայրը ողկոյզ կը կազմեն։*

*Ողկոյզը կրնայ խիտ ըլլալ* (*լ.* muscari racemosum, ail-de-chien), *կամ անօսր եւ երկայն* (muscari comosum, ail-de-toupet).

*Կը յիշուի իբր Արեւելքի, Փոքր Ասիոյ տե-սակը* muscari moschatum (*պատկլոր մշկահոտ*) *Դեղնածաղիկ։*

*Պապկերլորը շատ հասարակ տունկ է, ձեան հալչելէն անմիջապէս յետոյ կը բուսնի ապրիլին, մայիսին, արեւոտ տեղեր, ածուներու մէջ, չոր դաշտերու մէջ. պտուղը եռանկիւնի է եռախորշ։*

*Հայբուսակը կը յիշէ վարդապետիկ անուամբ տունկ որու պատկերն եւ նկարագրութիւնը* («*Թութի ձեւով հաւաքուած մ'է մանրիկ կա-պոյտ ծաղկանց, վեցարի նմանցընելով զանոնք, որք փոքրիկ [տապաշափ] բոժոժից նմանին, այս-պէս կոչուած է*»), *բայց Հայբուսակի մէջ ըս-ուած չէ թէ ո՞րտեղ այդպէս կը կոչուի այդ տունկը։*

**Թաճի ծաղիկ.** — *լտ.* delphinium, *ֆր.* dauphinelle, *ռմկ.* pied–d'alouette *կոչուած տունկն է զոր Վանեցիք կը գործածեն թանի մէջ։*

*Հրանունկազգի տունկ է կապոյտ ծաղիկնե-րով. ծաղիկն անկանոն է, բաժակը գունաւոր*

հինգ փերթերով կը կազմէ բիզ (éperon), պսակին չորս թերթերը միացած են իրարու, տերեւները փոխադիր, ճղճղկէն են. կը ծաղկի ամռան՝ արտերու մէջ։

Մեր բառագիրք կը թարգմանեն դլփինակ



Թանի ծաղիկ, Դլփինակ.—**Delphinium consolida L.** 1. սերմը

լատիներէնէն առնելով (delphinium, դլփին-պոչի նման բիզ ունենալուն համար), իբրեւ գիտական բառ կարելի է դլփինակ գործածել։

Այս տունկին մէկ տեսակը կայ եւս. delphinium staphisagria L., staphisaigre, herbe aux poux որու սերմերը խաչելով՝ ջուրը կը քսեն մորթին իբրեւ դեղ ոջիլի դէմ, (Թրք. մեզվէֆ, արաբ. հապպրաս, զեպիպ-էլ-կապպ)։

**ԽԻՑՃ.** — *Այգիներու մէջ, փխրուտ, մշակուած հողերու մէջ կը բուսնի, մինչեւ* 10–15 *հարիւրորդամեթր երկայնութիւն կ'ունենայ, բարակ տերեւները թարմ վիճակին մէջ կ'ուտուին, գեղին են իր բարդ ծաղիկները. տերեւին*




ԽԻՍՃ.—**Tragopogon pratensis L.** 1. արմատը. 2. սերմը։

*ցօղունին հետ միացած տեղը քիչ մը բրդոտ է, տերեւներուն միջատեղ թուքի պէս հեղուկ մը կ'ըլլայ որու համար Վանեցիք կ'ըսեն՝ օձը թքեր է։*

*Խինձին արմատը շատ մեծ չըլլար եւ ոչ շատ ուռած, ցօղունը կտրած ժամանակ կաթնալից հիւթ կուտայ։*

*Այս նկարագրութիւնը կը պատասխանէ* salsifis *des prés* (*լտ.* tragopogon pratensis L.)

տունկին զոր այստեղ գտանք եւ ստուգեցինք

Մեր բառագիրք Բօշմօրուք կը դնեն լ tragopogon (այծի մօրուք) եւ ռամկերէն barbe de-bouc անունները թարգմանելով (Նանսի ցիք bombade կը կոչեն եւ կը ծամեն կ'ուտեն ցօղունին անուշ եւ կաթնոտ միջուկը)։

Մուճուղեզը խինձի մէկ տեսակ է, կ գտնուի խոպան արտերու մէջ, նոյնչափ բարձ չըլլար, բազմաթիւ տերեւներ ունի, գետնի երեսը կը ճապաղի. արմատն է մուճուղեզը կլոր, բոյթի մեծութեամբ սեւ կեղեւով պա տած, եւ լի է կաթնալից մսով. եթէ ժամա նակին անցնի, կը տախանայ, ինչպէս անգա բողկը. այդ տախացած մասին Վանեցիք կ'ը սեն կատու (առած վանեցւոց. եա գըրըլըր շի, եա չըգար մուճուղեզ)։

Այս վերջին տունկը salsifis noirն ըլլալո է զոր մեր բառագիրք գոզի կը կոչեն։

Սեբաստացւոց սինձ կոչածը վանեցւոց խինձըն է։

**Շվան լեզու**. — Մեր մէջ եղան լեզու ան ուամբ կը ճանչցուի (թ.ք. սըղըր տիլի) տուն մը կանաչ լայն տերեւներով, որոնց գլխաւո ջիղերը խարու զուգահեռական են, հողին ե րեսը կը տափկի. Ֆրանսերէն plantain moye կոչուածն է (plante (1), ոտքին ներբանը, ո

(1) Plante = dessous du pied de l'homme entre les doig et le talon (Larousse), որ է հայերէն ներբան. Ֆրանսահ. բառագիրք կը դնեն plante = գարշապար, ինչ որ սխա է, քանզի գարշապարն է talon. Եւ դու [illegible] նոր

բովնեաեւ ներքանի մը կը նմանի ոտքերը). ռամկօրէն կը կոչուի langue d'agneau, որմէ թարգմանած են մեր բառագիրք զառնալեզու բառը. եզնալեզու թարգմանուած է բառագրոց մէջ buglosse (buglosse, յունարէն կը նշանակէ ե-



Եզնալեզու.—Plantago medla L. 1. Ծաղիկը :

զան (լեզու) որ շատ տարբեր տունկ մըն է borraginéeներուն ընտանիքէն։

Հ. Քաջունի buglosse լատ. anchusa բառին

Գարշապարի, Ծննդ. Գ.15 լատիններէն դրուած է calcaneum և յն. փթէ'րնա որ կը նշանակեն talon :

Եւ ապա ել եղբայր նորա եւ ձեռն նորա ունէր ըզԳարշապարէ Եսաւայ. եւ կոչեաց զնա Յակոբ. Ծննդ. ԻԵ. 25 :

Եւ եղիցի Դան օձ դարանակալ ի ճանապարհի, հարկանել զգարշապար երիվարի. ծննդոց ԽԹ. 17.

դէմ եւս կը դնէ «եզնալեզու, մանրատերեւնասի ի մեզ գառնալեզու . . . յոմանց ասացեալ է եւս թուրք կամ թուրքն որ է այլ բոյս ։ Բայց մեք առ որոշելոյ ի միմեանց զգանազան բոյսս, կոչեցաք plantain, գառնալեզու, alisma, ջղախոտ, anchusa, խոլթ, buglosse, եզնալեզու»։ Միայն թէ buglosse եւ anchusa մի եւ նոյն տունկին անուններն են, մին՝ ֆրանսերէն, իսկ միւսը՝ լատիներէն ։

Plantainի շատ տեսակները կան, մարգերու մէջ, ճանապարհներու եզերքը լի են . Նեղ, երկայն տերեւովը, plantain lancéolé, (ռամկ. կը կոչուի bonne femme, herbe à cinq côtes, oreille de lièvre), իսկ մեր եզան լեզու կոչածը plantain moyenն է (ռամկօրէն langue d'agneau, plantain blanc), լայն տերեւներով զոր մեր երկիրը կը գործածեն վէրքերուն վրայ, խաշելով հիւանդոտ աչք կը խնամեն ։ Ծաղիկները են հասկաձեւ, վարդագոյն առէջներով, 10-30 հարիւրորդամեթր պոկի, ծղօտի մը ծայրը. սերմերը կուտան կեր թռչուններուն։ Ինքը դառն տունկ է կապող (astringent)։

Սալաձորցին կ'երգէ.

Լեզուակ անուն ծաղիկ մի կայ՝ որ կու բուսնի մէջ
մարգերուն :
Ծաղիկըն մօռ մանաւուշ (մանիշակագոյն) է, նորա
երամն է ինգնագոյն :

Լեզուակ, ջղախոտ՝ (սինիր օթու) Ակնեցւոց լեզուով, եղնալեզու, կը նշանակեն plantain

**Շրէշ**, *Թք. չիրիշ օթու.* — *Ֆրանսերէն կը կոչուի* asphodèle (*որ յունարէն կը նշանակէ ճիզակ, տերեւներու ձեւին համար*). *միաբըլթակ տունկ է շուշանազգի. դեղին կամ սպիտակ ծաղիկներ ունի այս տունկը, գիւղացիք Վանայ մէջ մսոտ տերեւները կ'ուտեն. արմա-*




**Շրէշ.—Asphodèle.**
1. առէջները. 2. պտուղը. 3. պտուղը բացուած. 4. սերմը։

*տէն կը հանեն չիրիշ, տեսակ մը սոսինձ որ Ջրով խառնած՝ կը գործածեն կազմարարները, կօշկակարները, փակցունելու համար։*

*« Հայբուսակ » Շրէշին հոմանիշ կը դնէ Թուրթ լա.* anthericum, anthéric, *սակայն* anthéric*ը Շրէշ չէ, թէեւ շատ մօտ նմանող։*

*Շրէշին իբրեւ հոմանիշ կը գտնենք նոյնպէս Հայբուսակի մէջ թաղաղու, օղին, թրթոշ, Վրայլկցուկ, խնդէ բառերը որք մեզ ծանօթ չեն։*

**Թուքու**. — *Վանեցւոց լեզուով* pissenlit (*լատ.* taraxacum *որ՝ յունարէնէն առնուած՝ կը նշանակէ խանգարում բուժող* ) *տունկն է* , (*ա-րաբ* . *հինտիպա պէրրի* . *ռամկ* . dent-de lion ,



**Թուքու.—Taraxacum officinale. L.**

couronne de moine , salade de taupe) . *Թու-քուն բարդ ծաղկով տունկ է եղերդեայց տոհ-մէն* (chicoracées) . *Ինչ որ ծաղիկը կը կոչուի* , *ծաղիկներու հոյլ մըն է լեզուակաձեւ* ( liguli-forme ) *դեղին ծաղիկներով* , *մէջը ծակ ծղօտի մը ծայրը* . *առատօրէն կը գտնուի դաշտերու եւ մարգերու մէջ* , *գետնին երեսը կը տարածէ ու-նենալով շուրջանակի* ( en rosette ) *տերեւներ*

եռանկիւնի ատամներով . կարած ատեն , կաթնանման հիւթ մը կուտայ , արմատ ունի երկար , թուխ , զոր chicorée ( եղերդ ) անուամբ կ'ազգանձեն , կը խորովեն եւ խառնուելի ու չորոլայի մէջ խառնած կը ծախեն ։

Գարնան առաջին բանջարներէն մին է , մաղձադրող տերեւներն աղցան եղած կ'ուտեն , միզաբերական է եւ մրզեցուցիչ , որու համար Փրանսերէն կը կոչուի pissenlit , չռան ։

Մշակութեամբ կը ստացուի barbe-de-capucine որ բուբու է , միայն թէ տերեւները հողին տակ ծածկելով՝ իրենց կանաչութիւնը կորուսած եւ եղած են սպիտակ ։


Բուբուին հոմանիշ նշանակուած են ճարճրուկ (Հ. Բաջունի) եւ կռաբանշար (Գ. Լուսինեան) սակայն ճարճրուկն է eruca sativa L., roquette որ է մանանեխի նման տունկ խաչածեւներու տոհմէն . իսկ կռաբանշար , հեղինակներու բացատրութեանց նայելով չնշանակեր pissenlit ։ Հ. Ալիշան Հայբուսակին մէջ կը գրէ ասոր մասին . « բուսաբանք եւ բնախօսք տարակուսին ինչ ըլլալուն եւ պէսպէս կարծեն , ոմանք այլ համարին թէ ըլլայ լ. taraxacum Փ. pissenlit » ։

Բուբուին մանր սերմերն ունին իրենց վերեւ ցցունք նրբաթել (aigrette) զոր հովը կ'առնէ կը տանի հեռուն ամէն կողմ տարածելով եւ այսպէս պատահմամբ ցեղին կեանքն ու յարատեւութիւնը ։

Անտարագարցիք սասանեայի ճռագ կ'անուանեն այդ հողմավար սերմերն . իսկ Վանեցիք ,

պանդուխտ ժողովուրդ, բաղդին հողմէն ցիրու — ցան, իրենց կեանքին պատկերը կը տեսնեն աս — նոր մէջ եւ կ՚անուանեն զայն խապարաքեր, լու — բերող ։

**Կայլուկ**. — Պատառաբոյծ տունկ մըն է, թել թել կը փաթթուի առուոյտին (luzerne), կորնգանին (sainfoin), երիժնակին (panicaut) վրայ, ծծակներով կը կառչի եւ կը ծծէ իրե




Կայլուկ կտաւի վրայ.—**Cuscuta densiflora S. W.**

1. ծաղիկներու հոյլ. 2. ծաղիկ առանձին. 3. ծծակները։

պէտք եղած սնունդը անոնցմէ եւ կը չորցունէ զանոնք. Կայլուկները չեն կանաչ խոտ, այլ կարմրագոյն, անտերեւ, թել թել, մանր ծա — ղիկներ ունին սպիտակ կամ վարդագոյն ե — անկոթ (sessile).

Գայլուկը ֆրանսերէն կը կոչուի cuscute որ արաբերէն քուշութ բառէն ծագած է (յուն. քա-ռութաս) ։

Ռամկերէն կը կոչուի tignasse (անկարգ երք), chevelure du diable (դեւի ձար), barbe-e—moine, cheveux-de-Vénus եւն ։

Գլխաւոր տեսակներն են .

Գայլուկն անուշահոտ (cuscute odorante) գլխտակ ծաղկով՝ որ մշակուած առուոյտին ատառաբոյծն է . գայլուկն մեծ (cuscute majeure), եղինջին, կանեփին վրայ . թիւմին գայլուկը (cuscute du thym, épithyme, աւթիմոն . արաբ. էֆթիմուն), թիթեռնակերպներուն, խորցին, ցախին վրայ ։

Բոլորն ալ վնասակար են, սերմ տալէն առաջ պէտք է այրել, ջնջել զանոնք ։ Հ. Բա-ունի լիքբեւ հոմանիշ կը դնէ գաղձն, գոճաւոռւ ։

**Խռնդատ**. — Հաստարակ տունկ մըն է իսան, ֆրանսերէն կը կոչուի molène (լտ. verbascum, աղաւաղում barbascumի = barbu, ուէ չնեբը մազոտ են, թրք. սըղըր գույրուղը) որու մէկ տեսակը ծանօթ է bouillon blanc (լ. verbascum thapsus L.) անուամբ ։

Խռնդատը խոտ է, մէկ, մէկուկէս մէթր բարձրութեամբ, ունի խոշոր տերեւներ փոխասիր, որոց մեծութիւնը կը նուազի հետզհետէ վերանէն վեր բարձրանալով միակ ցօղունին երկայնութեամբ . ստորին տերեւները, ամենէն մեծ, ծակծկուած են . ծաղիկները, առ հասարակ դեղին, երբեմն կարմրախառն եւ խատու-

*տիկ , անկանոն են ձեւով , հինգ թերթ ունին, հինգ անհաւասար առէջներ որ մազոտ են ։*

*Տեսքը տգեղ է եւ անշնորհ , բայց ծաղիկ-ները են գեղեցիկ եւ Վանեցիք կ՚ըսեն երբեւ առած . « Ի՞նչ խռնդատ , ի՞նչ իւր ծաղիկ » ։*



**Խռնդուս.—Verbascum thapsiforme**

1. ծաղիկը . 2. ծաղկին կտրուածը . 3, պտուղը . 4. առէջը ։

*Երբ ցօղունը կը փայտանայ աշնան , գիւղացիք իրենց տանիքը ծածկելու կամ վառելու կը գործածեն ( գիւղացւոց տուները հողի տակ են ) ։ Կը ծաղկի յուլիսին , օգոստոսին ։*

*«Հայբուսակ» եւ Հ. Քաջունիի բառագիրքը խռնդատին համանիշ կը դնեն նոյնպէս եզան ացի ( Թք.* սըղըր գույրուղու *) , ձկան մահա-*

ռուր ( արաբ. մահի զէհրէ ) քանզի եթէ ճմլե-լով՝ ձկան աւազանի մը մէջ ձգուի, ձուկերը կը սատկին ։

Խանդաառը կը գործածուի բժշկութեան մէջ իբրեւ քնացուցող, հանգարտեցուցիչ. տերեւ-ներէն լափա (cataplasme) կ՛ընեն կակղացուցիչ, ծաղիկները տաք ջուրի մէջ ձգելով (infusion) կը խմեն իբրեւ հազի դարման ։

Երիժնակ կամ Էրնջակ. — Վանեցւոց ե-



Երիժնակ.—Eryngium campestre L.

Երիժնակը փուշ է տարեւնուրու ծայրը, 30–40 հարիւրորդամեթր բարձրութեամբ. անմշակ, կորդ

(jachère) հողերու մէջ կը բուսնի. ցօղունը տերեւներէն մերկացունելով՝ աղ ջրի մէջ կը պահեն, ձմեռը կ'ուտեն պանիր առ ուր իբրեւ աղանդեր՝ զայն կեղեւելէ յետոյ, ծաղիկը կապտագոյն եւ փշով ծածկուած է։

« Հայբուսակ »ի մէջ կը գտնենք երիժնակ բառին դէմ. « փշալից բանջար. որձայ անեփ ուտի. արմատն բժշկարար է վիրաց »։

Երնջակ անուան տակ « Հայբուսակ »ի մէջ կը գտնենք. « Ար. զաrուանաք, Թք. իպrէհիմ թիֆէնի, (Տիմայ պուղա թիֆէնի այլ ասեն), ցեղուցեղ լինի. փշոտ խոտ է. եւ որուն ծաղիկն սպիտակ է՝ այնոր ըղsու խնձոr կու ասեն. եւ տերեւն տափակ է. Հայք երնջան ասեն, եւ ինքն ի քարոտ եւ չոր տեղեր կու բուսնի, յառաջն տերեւն ի գետինն կու ճապղի, եւ կանանչ եւ պինդ կու լինի. յորժամ մեծանայ՝ փուշ կու լինի սպիտակ, եւ երկայնութիւնն մէկ թիզ եւ այլ աւելի. եւ ծաղիկն ըսպիտակ կու լինի, եւ ծաղկին ծայրն ի սպիտակութիւն կու քշտէ. եւ, ի բոլորն վեց փուշ ունի, եւ տակն ամուր է . . . » (Ամիրտովլաթ)։ «Արմատէն վերի հաստ մասը կեղեւելով կ'ուտեն մեր երկըրցիք եւ ստեպղինի համով է կ'ըսեն »։

Այս երիժնակն կամ երնջակը, Ֆրանսերէն panicaut, լտ. eryngium կոչուած տունկն է։

Eryngiumը (երնջակ կամ երիժնակ) հովանակերպ տունկ (ombellifères) է, տերեւներն են փշոտ, բաժակը փշոտ ատամներ ունի, որոնց վրայ կը գտնուի ծաղիկներու հոյլ մը պնդաձեւ եւ

գրեթէ անկոթ, շատ տեսակներ կան, գլխաւորն է լտ. eryngium campestre L. (Ֆր. panicaut champêtre, ռամկ. panicaut à 100 têtes, barbe de chèv e, chard n Roland (կամ roulant որովհետեւ հովը կը խլէ եւ կը թաւալէ գետինը երբոր չորցած է). Ծաղիկները սպիտակ կապ-



**Agrimonia eupator L.** Երեսնակ 1. Ծաղիկը. 2. պտուղը:

տապոյն են. կը ծաղկի յուլիսէն սեպտեմբեր:

Հին ժամանակ eryngium campestreի արմատը կ'ուտէին Ֆրանսայի մէջ:

Պարտէզներու մէջ իբրեւ զարդ կը տնկուի Ալպեանց տեսակը E. Alpinum L.:

Հ. Թաջունի, Ալիշան եւ Լուսինեան (որ

անշուշտ առաջիններէն ընդօրինակած է) կը սխալին երիժնւակը կարծելով տարբեր երնջակէն ( eryngium ) եւ զայն անուանելով aigremoine (agrimonia) տունկը ։

Aigremoineը որու ծանօթ տեսակն է լա. agrimonia Eupatoria ( Եւպատոր Միհրդատ, պոնտացի թագաւորին անուամբ որ առաջին անգամ գործածեց այս տունկը ) , անփուշ տունկ է վարդազգի, դեղին ծաղիկներ ունի հասկաձեւ շարուած 30·5) հարիւրորդամէթր բարձրութեամբ ծղօտի մը շուրջը ։ տերեւները , 5-9 տերեւիկներու բաժնուած կանաչ մոխրագոյն են ներքեւի կողմը , մորենիի (ronce) տերեւներուն կը նմանին ։ Կ'աճի ճամապարհներու երկու կողմը , մարգերու եզերքը ։

Բժշկութեան մէջ կը խաշեն ու կը գործածեն թբրեւ պնդեցուցիչ , խաղաջ կ'ընեն (gargarisme ) անով կամ վէրք կը լուան ։

Արաբ. կը կոչուի զաֆիղ , Թք. զօյուն օթու , յն. եւփաթորիոն :

**Բող, Քերմաղ, Բողիկ.** — Վանայ մէջ շատ կայ . յեռնային տունկեր են , միեւնոյն հովանակերպներու (ombellifères) տոհմէն ։

Քերմաղը 1–1 1/2 մեթր բարձրութիւն կ'ունենայ , թունաւոր չէ , ձիերու կերակուր կ'ըլլայ . բաւական ծանօթութիւն չունինք կարենալ որոշելու համար ։

Բող , ահա՛ այս տունկի մասին մեր ունեցած տեղեկութիւնները . մինչեւ մէկ մէթր բարձրութիւն կ'ունենայ , տերեւներն են շատ ճզմղկէն , հաստ ցօղուններ ունի . Նախապէս

Ջրի մէջ կ'եռացունեն դառնութիւնն առնելու



Բող.—Ferula assa fœtida L.

1. առէջաւոր ամուլ ծաղիկ. 2. սերմնափակաւոր ծաղիկ. 3. սերմ։

Հասամար. կ'աղեն եւ պահոց օրեր կ'ուտեն։ Արմատէն կը հանեն հեղկզ, թանձր իւղ մը, զոր

կը գործածեն ոչխարներու վէրքեր, մասնաւորապէս ոտներու տեպաղ դարմանելու։

Տ. Ն. Լեւոնեան Առտէր կզզիի մասին յօդուածին մէջ կը գրէ, «կանաչներուն մէջ գլխաւոր տեղը կը բռնէ «բող» կոչուած հաստատուն բոյս մը, որ մանրաթելերէ բաղկացեալ շատ խոշոր տերեւներ եւ դեղին ծաղիկներ ունի, եւ ամենէն առատ գտնուելով ու մէկ ծնկաչափ բարձրանալով կը քաղուի իբրեւ ձըմեռնային կեր ոչխարաց ու գոմէշներուն եւ դուրս կը հանուի նաւակով»։

Ինճիճեան կը նկարագրէ այսպէս, «բանջար եռաչաւիղ ծանրահոտ, ունի եւ ի միջի բուն սերմնաբեր, զոր ի բաց առեալ՝ դշխատուութեան խարշեալ թողուն ի ջուր, առ ի բառնալ զհոտ. ապա արկանեն ի ջուր աղի, որ տեւէ մինչեւ յաշուն. իսկ զարմատ նորա մինչդեռ է ի գետնի՝ ընդ մէջ հատեալ՝ գտանեն անօթ առ նովաւ, ի հաւաքել զկաթնամաման հիւթ նորա (որ կոչի թողիճ) որոյ հոտ զօրաւոր գոլով սաստիկ, ի գործ ածեն հովիւք ի սատակումն որդանց դմակաց խաշանց։»

Հայբուսակ թոխ, բոխի, պող, բոլի (անշուշտ գրչագրի սխալ լ, ղ ի տեղ), անուններու տակ կը նկարագրէ մի եւ նոյն տունկը. այս անուններու տարբերութիւնը տեղական զանազան հնչմանց արդիւնք է, եւ ըստ արեւելեան եւ արեւմտեան հայերու թ կամ պ տառով գրուած (1)։

(1) Վանեցիք այս տունկը ըստ պոլսական հնչման պէօղի կ՚արտասանեն։

Այս նկարագրուած տունկը կը համապատասխանէ férule հովանոցաւորաց տունկերուն որոնց մէկ տեսակը կուտայ asa fœtida խէժը կարմրագոյն, սխտորային չար հոտով ու պառնահամ. Հռովմայեցիք այս խէժը կը գործածէին իբրեւ համեմ. վէրքերը դարմանելու համար լաւ է։

Asa fœtida զոր արաբերէն կը կոչեն **անճուտան** (officine de Dorvault), **հալթիթ** · պըռ-**ուճմաք** · Թք. գըլբըգ, բուլին է։ Այս խէժերն արեւելեան են ու ժամանակին մեծ առեւտուրի նիւթ են եղած իբրեւ դեղ, ուստի եւ Արեւելքցիք երկար ատեն ծածկած են անոնց ծագումը եւ անուններու մասին շփոթութիւն տեղի ունեցած է. նոյն իսկ առասպելներ յօրինուած են անոնց վրայ. asa fœtidaն հին բըժշկարաններու մէջ կը կոչուի նոյնպէս stercus diaboli, շէյթան պօգու, սատանայի աղբ (**Միկ-Փիոն արմենիոն** յոյն հեղինակներու)։

Թուռնըֆոր, ֆրանսացի բուսաբանը իր յԱրեւելս ճանապարհորդութեան մէջ տեսած եւ ստուգած է։

Այստեղ կը նշանակենք férule կոչուած տունկերու նկարագիրները։

Դեղին ծաղիկներ ունին, հովանոցին կողմնակի հովանոցիկները (ombelle) աւելի փոքր են, յաճախ ամուլ եւ կեդրոնական հովանոցակէն աւելի երկար, թել թել, ճղճղկէն տերեւներ ունին։

Ծաղկին բաժակը 5 փոքր ատամներ ունի, պսակին թերթերը ձուաձեւ են եւ ամբողջ (en-

tiers) . պտուղն ունի բազմաթիւ խոռոչաւոր գծեր իր վրայ ։

Asa fœtida (բողիճ), galbanum (քաղբան, մաղթն) opoponax (ոպան) խէժերը իբրաբունմանող, զորացի տունկերէ կը հանուին, գրքերու մէջ իրենց անունները չփոթուած են ։

Հ. Թաղոունի կը նշանակէ . « séséli, բող, բողիկ, անճիշան, ոմանք զանուն բող, բողիկ տան ոնկոյն caucale » կ'աւելցունէ . . իսկ férule կը կոչէ բոխ . ինչպէս որ asa fœtida կը թարգմանէ չարհոտ, մաղթն, տճ. զանը ։

Բող եւ բոխ նոյն բառերն են, իսկ բողը չկրնար ըլլալ ոչ sé éli եւ ոչ caucale, որոնք սպիտակ կամ կարմրագոյն ծաղիկ ունին, որ մէկ բուսաբանութեան գրքի մէջ նշանակուած է որ խէժ կուտան ։

Տ. Նորայր Բիւզանդացի asa fœtidaյին համար կը գրէ . « խէժ ինչ խոտորահոտ եւ զանահամ ծորեալ ի նարդէս (férule) ունկոյ կամ ի քեքերդէ (silphium), ուպան (?). չարհոտ (?). պարսիկ կոէզ ։ »

Թունմրֆոր իր Արեւելքի ճանապարհորդութեան մէջ հանդիպած է բողիճ զոր կը կոչէ ferula orientalis, ferula assa fœtida (ըստ Գուսիէի F. narthex)։ Թաղբան, մաղթն տուող բուղերն են ferula galbaniflua եւ rubricauli։ Bois կը բուսնին ի Պարսկաստան ։

**Մեղրածուծ** . — Աստաբաղարցիք այսպէս կը կոչեն lamier չրթնաւոր տունկը եւ ի մանաւորի lamier tacheté (լտ. lamium maculatum) որ կը բուսնի փոսերու, ցանկերու եզերքը. աշ

*ղաքը կը ժողովեն այս ծաղիկը՝ Վիճակին, Վարդավառին, պսակներ կը շինեն ու դիրենք, եւ փայտի մը վրայ շարուած ջրալից սաներ անոնցմով զարդարելով դրնէ դուռ շրջելով՝ կ'երգեն։ Այս ծաղկի պատկին սպիտակ ծայրը շատ անուշ է մեղրի նման, տղայք կը փրցունեն եւ կը խածնեն, կ'ուտեն։*





**Մեղրանուշ—Lamier**

1. ծաղիկը. 2. ծաղկին կտրուածը. 3. առէջը. 4. ծուարանը։

**Անթառամ.** — *Մեր բառագիրք առ հասարակ անթառամ կ'ըսեն* amaranthe*ին*(1) *որ ա-*

(1) *Հ. Բաշունիի եւ «Հայուսակ»ի մէջ իբրեւ* amaranthe *ի ծաղիկ դրուած պատկերը* tussilage *կոչուած տնկին ծաղիկն է որու տերեւները ծաղկին հետ չեն երեւան գար. տերեւները դրուած են խռճիկ բառին դէմ։*

***քաղաղէ կատարի նման ծաղիկ մըն է կարմիր մանիշակագոյն եւ կուտայ մանր սերմեր, մեր երկրի անթառամը ֆրանսացիք*** immo telle ***կը կոչեն. ճարդ ծաղիկ է որու մանր դեղին թեր-թերը կը չորնան եւ կը մնան այնպէս, բուսա-բանօրէն*** helichrisum ***եւ*** xeranthemum ***տունկե-***




**Անթառամ.— Helichrisum arenarium DC**

1. ծաղկին հոյլը կտրուած. 2, 2', ծաղիկ մը եւ իր կտրուածը. 3. առէջներու խողովակը կտրուած. 4. սերմը:

***րու տեսակներ են:*** Immortelle d'Orient (heli chrisum Orientale Gært.) ***ըսուածը առատօրէն կը մշակուի Նիսի կողմը մեռելական պսակնե-րու համար:*** Xeranthemum annuum L. ***ըսուա-ծըն ունի սպիտակ կամ մանիշակագոյն ծաղիկ-ներ:***

**Նարկիզ**, narcisse. — *Ովիդէս* (Ovide, Métamorphoses III. 5 et 6) *կը պատմէ թէ, Կեփիս գետին (Աթէնքի մօտ) եւ Լիրիոպա յաւերժահարսին որդին, Նարկիզ, չքնաղագեղ պատանի մըն էր, ամենքն իրեն զարնուած էին եւ արհամարհանքով կը մերժէր բոլորին սէրը. Արձագանք*



Նարկիզ.—**Narcissus poeticus, L.**

*յաւէրժահարսը, անոր սէրէն սրտաբեկ ու վըշտահար, հալ ու մաշ եղած՝ ձայնը միայն մնաց, եւ իր կմախքն՝ իբրեւ ժայռ։ Օր մը Նարկիզ որսէ դարձին հանգչեցաւ վճիտ աղբիւրի մը եզրը եւ հոն ջրին կոհակներուն մէջ տեսնելով իր աննման երեսը, սիրահարեցաւ իր ստուերին ու այլ եւս չկրցաւ անկէ զատուիլ. անկարող տե-*

փնտռելու իր սիրոյ առարկային, ինքզինքը ըսպաննեց. մեռած՝ կ'ըսէ առասպելը, կը նայէր միշտ Ստիւքսի յաւիտենական ջրերուն մէջ։ Դիք զինքը փոխեցին ծաղկին՝ որու պատկերը, կ'ըսէ Ովիդէս, գարնան կը ցոլանայ ջուրին մէջ եւ յետոյ կը թառամի ու կը մեռնի։

Հիւրմիւզեան իր Վրոյրի Բուրաստանաց մէջ կ'երգէ այս բանաստեղծական Նարգիսը։

Ամիրտովլաթ եւս կը նկարագրէ Նարճիսը «մէջը դեղին, դուրսն սպիտակ». այս բոլոր նկարագրութիւնները կը պատշաճին Լինէի narcissus pœticus L.ին (Նարկէզ պուէտներու) որ միաբլթակ տունկ է ամարիլլիսներու (չգի-տամ(1)) տոհմէն վեց սպիտակ թերթերով որոնց կեդրոնը կը գտնուի աչք խառնուրդի, դեղին, կարմիր կէտերով պիսակուած, որու համար կայ պարսկերէն առացուած Ճերկիզ չէշմէ (Նարկիզանման աչք(2))։ Վանեցիք Նարկիզը կը կոչեն բարդի սապահ (առաւօտեան վարդ)։

Իսկ ինչ որ շատ տեղեր հայ ժողովրդին մէջ Ճարկիզ կը կոչուի, Ֆր. souci, լատ. calendula անունով բարդ (composée) ծաղիկն է դեղին, մէջտեղը՝ խողովակաձեւ (tubuliflore) որձ,

(1) Գիտցողներ amaryilisը ճանչցան մեր երկրի չգիտամը եւ ոչ Թէ, ինչպէս կը կարծէ Տ. Նորայր Բիւզանդացի, hémérocalleը, լեղին շուշան (Վանեցւոց զամպխ ըսածը արդեօք)։ Չգիտամն (amaryllis) ունի սոխարմատ (bulbe), hémérocalleն ունի ուռած ստորերկրեայ ցօղուններ (rhizomes tubéreux)։

(2) Արաբերէն Ճարկիս փոխաբերաբար կը նշանակէ աչք։

*եւ շուրջանակի լեզուականաձեւ* (liguliflore) *էգ եւ պտղաբեր ծաղիկներով ։*

*Տերեւները փոխադիր են եւ երկայնաձեւ, ծաղկի հոյլերն* (capitule) *առանձին ծաղկաբեր ծղօտին ծայրը, պատատն է կխագնդաձեւ. բոլորտիքի պտուղները խիստ կոր են. անախորժ է հոտը ։*

*Ժամանակով տերեւները կը գործածուէին իբրեւ դեղ կոծիծի եւ ճաղրի, ծաղիկներուն խաշածը* (décoction) *կը նկատուէր իբրեւ դեղ խոյլի* (scrofule, *սըրաճա*), *դալուկի* (ictère, *սարըլըգ*) *եւ մանաւանդ իբրեւ քրտնեցուցիչ եւ դաշտանաբեր ։ Իսկ այժմ կը ծառայէ քրքումը խարդախելու, ինչպէս կանճրակը, ու կարագը ներկելու ։*

*Հ. Թաջունի* souci *ծաղիկը կը կոչէ ցինգ, ինչ որ սխալ է. ցինգ բառը յիշուած է հետեւեալ տեղերը մեր նախնեաց գործերուն մէջ. Ս. Գրոց արտաքոյ կանոնի Իմաստութիւն Սիրաքայ (ծ. 16.) գրքին մէջ. « Ցինդ առ ամենայն ջրով յեզեր գետոյ՝ յառաջ քան զամենայն խոտ խլեսցի ». Մխիթար Գօշի ԼԳ. առակին մէջ (Վենետիկ 1854), ուր կը յայտնուի թէ ցինկը « ծիւրեալ է դեղնութեամբ » ու գերանդիներու սուրը կը սրուի իրեն եւ գնդածաղիկներուն, կորնգանի, խոլորձին, կապոյտ առուոյտին, սէզին եւ այսոնց նմաններուն համար ։*

*Սալաձորցին ալ կ'նրգէ. « Ցինկն դեղին ծաղկի, ցնծայ փայլէ մէջ ջրերուն » ։*

*Ինձ կը թուի որ* populage, *լա.* caltha palustris L. *ըսուած տունկն է ցինգը որ կը*

բացուի դեղին պայծառ գարնան, ապրիլ, մայիս ամիսներուն ջրերու եզերքը. գտան է մնամասկար մարգերուն. իր լայն տերևներն



**Caltha palustris L.—Ցինգ ?**

փայլուն, սրտաձև. ցօղունին վրայ եղած տերևները փոքր են ու անկոթ, ցօղունին կցուա(ծ)

Populage, caltha palustris L. տունկ ռամկօրէն կը կոչուի souci d'eau եւ անշուշ(տ) այս բառն է որ թելադրած է Հ. Քաջունիի souci(1), ցինգ կոչել.

(1) Տ. Նորայր Բիւզանդացի souci վաղենիկ կ'անուանէ:

**Զաթրին, Զաթար.** — *Այս բառն առնուած է անշուշտ արաբերէն զաթարէն*(1) (Dict. franç.-arabe, F. Gasselin; -- arabe-franç, Kazimirski)




**Calendula**, վաղենիկ (*ըստ Տ. Նորայր Բիւզանդացիի*). — 1. ծաղիկններու հոյլ. 2. պտուղ ։

*Եւ կը նշանակէ* sarriette *կոչուած չրթնաւոր տունկը. լատիներէն կը կոչուի* satureia(2).

(2) *Եբրայեցերէն* զաթար *կամ* սաթար ։*կը կոչուին բազմաթիւ չրթնաւոր անուշահոտ տունկեր եւ արաբերէնն ալ ունի նոյնպէս* սաթար. սաթուր. = espèce d'origan ou de thym *ասորերէն* ցաթրօ=*ծամթրին*, sarriette.

(3) *Կը յիշեն լատին հեղինակներ, ի մասնաւորի Ովիտիոս Նազօ, Քրիստոսէ դար մը առաջ* (Ars aratoria, 3. 415.) Martial. (3, 75). *Պղինիոս բնապատում*։

*Ծարրին*, *զա՛թար*, *շաբրօ*, satureia *նոյն ծագումն ունին եւ կը նշանակեն միեւնոյն տունկը . յունարէն կը կոչուի թիմբրա* (thymbra)(1) *ասկէ առնուած է անշուշտ հայերէն զամփուռ բառը որ կը նշանակէ ծաթրին ։*




Ծարրին.—**Satureia Hortensis L.** 1. 2. ծաղիկը ։

*Մեր բառարանները, Բաջունի, Լուսինեան, Աչիշանի Հայբուսակը կը նշանակեն ծաթրին*= thym, serpolet (*թիւմ, ուրց*), *որ արդարեւ շատ մօտ է* sarriette*ին ։*

*Ետ քննութեան այն եզրակացութեան հա-*

(1) *Պետրոն* (Petronius arbiter sat. 135.) *Վիրգիլիոս*, Մշակականք (Virg. Georg. IV. 39.) *կը յիշեն ծաթրինը յունական* thymbra *անունով . կը փափագէի գիտնալ թէ ինչպէս թարգմանած են Մխիթարեանք Վիրգիլիոսի մէջ ։*

տած էի որ մեր ծաթրինն է արաբական զա'-թարը եւ լատին satureiaն. ապահով ըլլալու համար ուղղարկեցի sarriette եւ նմանօրինակ չրթնաւոր տունկեր Վանեցի, Սեբաստացի եւ Ատաբազարցի տեղական անձերու որոնք բոլորն ալ իրբեւ մեր երկրի ծաթրինը ցոյց տուին sar-rietteը լատ. satureia hortensis L.



Թիմ.—**Thymus vulgaris L.** 1. ծաղիկը ։

Ամիրտովլաթ կը գրէ (Հայբուսակ. թ. 1172) «Ծաթրինը երկու ազգ է. մէկը վայրի(1) եւ մէկը ածուոց(2) . . . լաւն այն է որ տերեւն ի զուֆայի(3) տերեւ նմանի»։

(1) Satureia montana L. (2) Satureia hortensis L. (*sarriette*). (3) որ է զոպայ hysope լատ. hyssopus.

Ծաթրինը չրթնաւոր տունկ է եւ ունի չրթնաւորներու նկարագիրները. տերեւները ընդդիմադիր, նեղ եւ երկայն են. ծիղերն ընդդիմադիր, այսինքն՝ ցօղունին երկու կողմէն ծնունդ կ'առնեն միեւնոյն կէտին վրայ։

Ծաղիկները մանր, բաց մանուշակագոյն են, պսակը երկու մասի, շրթունքի բաժնուած է. չորս առէջ կայ պսակին խորը։ Շատ անուշահոտ տունկ է ինչպէս առհասարակ չրթնաւոր տունկերը, թիւմ, ռեհան, թուրինչխոտ, մարզանկոշ, զոպայ։ Այս տունկերու անուշ բոյրը յառաջ կուգայ տերեւներուն եւ բաժակին վրայ գտնուող գեղձային մազերու մէջ որ կ'արտադրեն քափուր, ռետնային-խէժ եւ ցնդողական իւղութիւն մը (essence volatile). այս ցնդողական իւղը կազմուած է ջրածինէ եւ ածխածնէ։ Տունկերը կը սնանին ածխածնով զոր տերեւներու կանաչ նիւթը (chlorophylle) կը զատէ ածխական թթուէն(1) (acide carboniqu ), արե-

(1) Առհասարակ կ'ըսուի որ տունկերը, կենդանիներու հակառակ, ածխական թթու կը շնչեն և թթուածին դուրս կուտան, բացարձակ սխալ է այդ. « բոլոր ապրող էակները, կենդանի կամ բոյս, կ'առնեն թթուածին շնչառութեամբ եւ կուտան ածխական թթու ». իսկ տունկերը կը սնանին ածխածնով (carbone). իրենց սննդեան հարկաւոր ածխածինը կը գտնեն օդին մէջ. այս սննդառութեան պաշտօնը կը կատարուի տերեւին կանաչ նիւթով եւ այդ պատճառով ալ կը կոչուի կանաչանիւթային պաշ-'soli (fonction chlorophyliienne) որ միայն կարելի է լոյսին ազդեցութեամբ։

Այս ցերեկով բոյսը թէ կը շնչէ և թէ կը սնանի, որով՝ շնչառութեամբ դուրս տուած ածխական թթուն կա-

ւոյն լոյսին ազդեցութեամբ․ արդ չրթնաւոր տունկերն, ինչպէս ծամբրիկը, այդ բնածուխին մէջ մասը կը գործածեն ջրածնի բնածխակը (carbure d'hydrogène), իրենց անուշահոտ իւղը, պատրաստելու․ առանց լոյսի, արեւու չեն կըրնար կատարել այս գործողութիւնը, այդ պատճառաւ է որ առհասարակ անուշահոտ տունկերը մանաւանդ չրթնաւորները, լեռներու վրայ կը տարածուին արեւդէմ տեղեր եւ յանկարծական ցուրտերէն պատսպարուելու համար, կը փոքրանան, կը ճապաղին, կը կծկուին, կը պառկին գոգցես չոր հողին երեսը, մերթ սուրացող քամիներուն արշաւանքէն ճողոպրելու համար․ կեանքի պայքարն է, իւրաքանչիւրը կը պաշտպանէ իր անձն ինչպէս կարող է։

**Կաթնուկ**. — Կաթնուկ կը կոչուի Ատաբազարցւոց լեզուով euphorbe(1) անունով տունկը որուն մէկ տեսակն է euphorbia orientalis L. Թուրքերէն սիւթլիւյեն. Հայ Հեղինակներ կաթնուկ անունով պատուական կերպով նկարագրած են այս տունկը որուն ամենէն դոյզն վէրքը

նաւչ նիւթին կաթէ վար կը դրուի և վերջնական արդիւնքն այն կը լինի որ տունկը թթուածին միայն կ'արձակէ.

Իսկ գիշերը, քանի որ սննդառութեան պաշտօնը կը դադրի մթութեան մէջ, տունկը կը շնչէ միայն. այսինքն, թթուածին կ'առնէ և բնածխական թթու կ'արտաշնչէ. ասոր համար է որ վնասակար է տունկեր պահել պառկելու սենեակի մէջ։

(1) Euphorbe յատուկ անուն է. որմէ հայերէն ափուրփի։ Euphorbus Մաւրիտանիացւոց Յուբայ թագաւորին բժիշկն էր։ Արաբները օձի խայթուածին դեղ կ'ընէին այս տունկը. արաբերէն Լըրմիյուն։

*կուտայ կաթնամնման հիւթ դառն, մած զոր կը գործածեն իբրեւ դարման կոծիծի* rue). *Նոյն ընտանիքէն են հնդիկ իւղի տունկը եւ տոսախը։*

*Սալահորեցին կ՚երգէ. «Կաթնուկի ծ է դեղին, գոյնն է գլուխ դեղիններու ն»։*



Կաքնուկ, Ափարփի —**Euphorbia orientalis**

1. ծաղիկը. 1′ սերմնափակ. 1″ առէջներ։

*ուանձտեանց Մանանային մէջ կը գրէ. «Նուկ որ եւ իշու կաթնուկ. խոտ որոյ սաստիկ դառն է. գործածեն իբրեւ դեղ «Կանչողն իշկաթնուկն է» կ՚ըսէ Ա. Վարդապետ (Հայբուսակ Թիւ 868)։*

կանչող, կաղանչան—euphorbe, «Ծիպրիմն, որ է կաղընձանա, որ է Թ. Սիւթլիւկէն, խոտ մն է, նոսր կեղեւ ունի եւ կաթն ունի» Ամիրտովլաթ)։

Ուրեմն կաթնուկ, իշկաթնուկ, ափարփի, կանչող, կաղանչան միեւնոյն euphorbe, tithymale տունկին են կամ անոր զանազան տեսակները։

Ափարփիներու տեսակներուն թիւը 400ը կ'անցնի, տարածուած են բարեխառն կլիմաներէն մինչեւ այրեցեալ գօտին. հրաշալի օրինակներն են միջավայրին յարմարութեան. մինչդեռ հիւսիսային բարեխառն երկիրներու մէջ ունին լայն տերեւներ, հասարակածային տաք անջրդի հողին վրայ աղամաթուզներու (cactus) նման կ'ըլլան անտերեւ, չկորսնցնելու համար ջուր արտաշնչութեամբ. իրենց մէջ գտնուած սնանային մածուցիկ կաթը կը լինի պաշար դժուարին օրերու համար։

**Սուեղ.** — Falcaire, լտ. falcaria Rivini. — առաջին բանջարեղէններէն մին է Վանեցւոց. Ցօղունը ինչպէս նաեւ տերեւներն իբրեւ աղցան կ'ուտեն մարտ, ապրիլ ամիսներուն երբ դեռ թարմ է, չէ «տախացած». Սուեղը կը տապկեն եւ կուտեն ոմանք։

Գտայ այդ տունկը այս տեղի բուսաբանական պարտէզին մէջ եւ Վանեցիներ եւս, որոնց ուղարկած էի, ճանչցան զայն։

Երնջնակի նման եւ անոր դրացի հովանոցակերպ տունկ է, սպիտակ ծաղիկներով. կը ծաղկի յուլիս, օգոստոս ամիսներուն կրային

*դաշտերու մէջ, կ՚ունենայ մինչեւ կէս մեթր բարձրութիւն. տերեւները բնորոշ են, նեղ ու երկայն, երեք հատուածներ ունին սղոցի նման մանր ու կանոնաւոր ատամներով, թաղանդային եզերքով, տերեւներու եզրը յաճախ գերանդիի նման կոր է* (falcaire, *լտ.* falx *բառէն որ կը նշանակէ գերանդի*)։



Սուեղ.—**Falcaria Rivini.**

*Հ. Բաջունի իր բառագրքին մէջ կը դնէ. Սուեղ,* chénopode, botrys, ansérine *որոնք զանազան տունկեր են, եւ սուեղին համար դրած է անշուշտ Հ. Բաջունի որովհետեւ սուեղին թուրքերէն* զազ այաղը (*սագի ոտք*) *կ՚ըսեն եղեր.*

chénopode լատիներէն նոյն նշանակութիւնն ունի եւ ռամկօրէն ալ patte d'oie կը կոչուի ։

Նոյն սխալ նկատողութեամբ է որ բառագիրք եզնալեզու, որ է plantain, կը թարգմանեն buglosse, որովհետեւ buglosse յունարէն եզի լեզու կը նշանակէ․ ժողովուրդները միշտ միեւնոյն կերպով չեն տեսներ ու մեկներ միեւնոյն իրերն ։

* * *

Ահա առաջին մասն այն աշխատութեանս զոր սկսած եմ․ օտար երկրի մէջ պայմանները շատ աննպաստ են այսպիսի գործի մը համար, երբ մարդ իր քով պէտք եղածին չափ հայկական աղբիւրներ չունի ու չգտնուիր հողին վրայ՝ ժողովրդեան բերնէն լսելու եւ նշանակելու համար, մեր բոլոր բուսական անունները քննուելու պէտք ունին․ մեր հեղինակներու ամենամեծ սխալն է հին գրողներու գիմել բառերու նշանակութիւնը գտնելու համար, բայց այդ հին գրողներն ալ, Ամիրտովլաթ, ըլլայ նոյն իսկ Իպն-Պէյթար, շատ բան լսելով գիտեն, իրենք ալ ուրիշէ ընդօրինակած են յաճախ առանց կարենալ ստուգելու ։ Զանազան տեղեր միեւնոյն անունով կը կոչուին այլազան տունկեր ու տարբեր անուններով միեւնոյն տունկը ։

Ժողովրդին գործածած բառերը հաւաքելէ, ճշդելէ, դասակարգելէ յետոյ կարելի է հին հեղինակներուն դիմել, ստուգել, նոյն իսկ ձեռագիրներու սխալներն ուղղել ։

*Ընթերցողներէս կը խնդրեմ որ մեր երկրի բոյսերու, տունկերու մասին ի՞նչ տեղեկութիւն որ ունին բուսաբանական, բժշկական, ու նոյն իսկ անոնց մասին եղած սովորութիւնները, աւանդութիւնները, երգերը, ամենէն դոյզն ծանօթութիւնները, հաճին ինձ հաղորդել։*



**Ծանօթ.** — *Էջ* 33 *տող* 24, *փակագծէն յետոյ մոռցուած է* կը յարմարին պատկերներին .

*Թուռնըֆոր* Carduus Orientalis *կը կոչէ* Carthameը ։

Imp. D. DOGHRAMADJIAN, 18, Rue des Gobelins, Paris

# ՃԱՌ
# ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ

Բնական է մարդոյ բաղձանց իւրոց անձին, այլ յաւէտ խնամատ-
անձն՝ հոգեւորականին անձին, և վասն զի ուր պատրաստ է յօժա-
րութիւն Աստուածային, անդ և ոչ մի արգել։ Այս 'ի խնդրոյ
անձանց և արդեամբ Վանեցի Հեղահնամբ Տ. Գէորգ Թովբէշեան
վարդապետի Տէր Յովհաննէսեան Միքայելի առ ըր Աթանայ
ածաւ սա 'ի լոյս։

# ՏԵՍՈՒԹԻՒՆ
## ՃԱՌՕՐԷՆ
# ԹԱՐԳՄԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ
## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

---

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

ՀՈԳԵԼՈՅՍ ՅՈՎՍԷՓ ՎԱՐԺԱՊԵՏԷ

ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԱՐԱԲԿԵՐԻ ՍԱՂՄԿԱՑ ԳԵՂՋԷ

---

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ՔՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ ՎԵՀԱՓԱՌԻ

ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՑՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ


Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՍՐԲԱԶԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

Տ. ՍԱՐԳԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1860

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ճշմարտութիւնք յայտնեալք Աստու-
` որք նկատին 'ի փրկութիւն, խորհուրդք են ան-
ա՝ անմոլար Աստուածպաշտութեան և հաւատոյ։
ւ արդ՝ եթէ ոք առանց գործնական հաւատոյ,
վ միայն տեսական հաւատով նկատեսցէ 'ի նոսա՝
անզօրծ է և անկենդան, մոլորի յոյժ չարաչար. զի
տական հաւատով միայն և եթ արդարանայ 'ի մա-
ութենէ, և ոչ հոգին 'ի մեղաց։ Ապա մեղանչել
ճշմարտութիւնս հաւատոյ՝ մեծագոյն յանցաւո-
ւթիւն է Աղանդաւորաց՝ քան Հեթանոսաց. զի
թանոսք առ բնական ճշմարտութիւնն անիրաւեին,
կ նոքա առ գերբնականն ամբարշտին։

Իւ արդ՝ երրեակ խորհուրդքն են հաւատոյ.
րորդութեան, Մարդեղութեան, և Հաղորդու-
ան. և երեքեան ևս 'ի վեր են քան զհասումն
րդկան։

Խորհուրդն Հաղորդութեան կախի զխորհրդոյ
րդեղութեան. և տիրապէս իսկ իսկութիւն իրա-
ն պատարագի Խաչին, ոչ օրինակ կամ սոսկ յիշա-
կ. վասն որոյ և նոյն ըստ գոյացութեանն և հա-
զօր, ուրով իսկ Արեամբ հատուցեալ զնա Փրկ-
, որպէս կոտակ վերջին՝ 'ի յիշատակ և 'ի կցորդու-
ւն չարչարանաց իւրոց և մահուն. զի ընդ տեսա-
ւ անմահագործ հացին՝ բոլոր Քրիստոս Աստուա-
թեամբ և Մարդկութեամբ կայ 'ի ձեռն մի

րութեան ։ Եւ որպէս այն Մարմին միաւորեալ է ը
Քրիստոսի, նոյնպէս և մեք Հայքս այսու ընդ
մա յօդիմք ․ և ըստ որում միութեանն յօդ՝ է ն
Մարմինն Քրիստոսի, մի է արդ և ՚ի մեզ յամենե
յօդաւորութիւնս այս Աստուածային ․ վասն որոյ և
նոյն իսկ միջէ Հայէ անուն ճաշակեմք ամենեքին,
բով նա ընդ մեզ կցորդի, և մեք ընդ նմա՝ և ը
միմեանս ։

Մի՞ ուրեմն ըստ տեսանելոյն դատեսցէ ոք, ․
ըստ իմանալւոյն հաւատասցէ՝ խորհրդաբար և հ
գեորապէս ․ զի խորհրդականապէս լինի սա Մար
և Արիւն Քրիստոսի, և ոչ երևելապէս ․ յայտ ա
և ասի խորհուրդ հաւատոյ, զի այլ ինչ տեսանեմք՝
այլ ինչ հաւատամք ․ ապա թէ ոչ՝ ոչ էր խորհուրդ

Յայլ Աստուածագործ աքանչելիս՝ Փրկիչն ոչ ա
պէս հրաշացոյց զտիրական իւր զօրութիւն, որպ
՚ի յետին ցանկացեալ ընթրիսն անդ ընդ աշակերտ
՚ի սահմանելն զայս խորհուրդ ահաւոր ։ Վասն զի
պէս ըստ մարմնոյ՝ ամենայն ոք ծնունդ ունի և
նունդ, նոյն և ըստ հոգւոյ ․ Մկրտութեամբ ունի
վերստին ծնունդ ․ և սուրբ խորհրդոյն ճաշակմա
զսնունդ ․ քանզի մաքրի մարդ ՚ի սկզբնական մեղ
Մկրտութեամբ, և ՚ի ներգործական մեղաց՝ Ապա
խարութեամբ, յետ այնորիկ սնանի և աճէ՝ սու
խորհրդոյս ճաշակմամբ ․ ապա գրաւական է սա ա
մահութեան ամենեցուն արժանաւորաց, որպէս հ
դւոյ՝ նոյն և անմահ յարութեան մարմնոյ ՚ի կեան
Իսկ յայսմ է բանն, որ ամենայն բազմաբիւր հոգև
բարեաց է ծայր ․ անարատ խղճիւ երջանկահաւ
մերձենալ ։

Եւ վասն զի եղեն՝ և են, որք յաղագս այսպի
մեծամեծացն Աստուծոյ փոքր խորհեցան և խորհի
Աստուածայինն ամբարշտելով և զանձինս իւրեա

փառաւորեալ. Եկեղեցի Աստուծոյ միշտ ճակատ ընդդէմ եկաց պերճայաղթ ։ Ի ժամանակի յայսմիկ՝ մինչ ա-ղանդաւորական ամբարշտութիւն սփռեալ է ամենայն ուրեք. Սա է և առաջիկայս մատենիկ զէն ուղղափառ Եկե-ղեցւոյ զօրեղ զինու սուրբ Գրոց. զոր դիպեցուցիչ խնամոտն կիրթ ճակատահարն յառաջ քան զամս ինչ ուղղեաց փայելուչ. այն է՝ Արաքելերի Սաղմկայ գերշքէ Աստուածիմաստ Հոգելոյս Յովսէփ վարժա-պետն Մաքաիրեանն ։

Այլ՝ զի մի որպէս թաղումն անգամ պատահի, գրեալ դատակար վաստակ բարի Առնն արժանագով աշ-խատութեան՝ ՚ի ձախող ինչ արկածից անհետացի, տուաք սա ՚ի Տիպ, լեալ աներկբայ՝ թէ այս ևս դորժ Միջնաաշնորհ այս խորհուրդ հաւատոյ՝ լիցէ ամենեցուն հաճելի ։


Առաջ լուսաւոր
ԳԷՈՐԳ Եպիսկոպոս ։





Ճ՚աշակեցէ՛ք և տեսէ՛ք՝ զի քաղցր է Տէր·
Երանեալ է այր՝ որ յուսա 'ի Նա։





# ՏԵՍՈՒԹԻՒՆ
## ՃԱՌՕՐԷՆ
# ՓՐԿԱԿԱ՛Ն ԽՈՐՀՐԴՈՅ
## ՍՐԲԱԶԱ՛Ն ՊԱՏԱՐԱԳԻՆ



Յաւագու՝ թէ Աբրահամու պատարագն Իսահակայ՝
էր օրինակ Փրկչին ։

ԱՀԱՒՈՐ և սքանչելի է խորհուրդ սրբոյ Պատարագին, զի ոչ յանասնոց գառն կամ՝ ոչխար զենանի, այլ նոյն ինքն Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ. բայց մեք տեսանեմք հանապազ ՚ի վերայ սրբոյ սեղանոյն մատուցեալ հաց և բաժակ, արդ ո՞ւր է մարմին և արիւն ։

Յառաջագոյն ցուցեալ յԱստուծոյ ծրագրիս պատկեր ճշմարիտ Ողջակիզին զանմեղ պատանին Իսահակ՝ բարձեալ յինքեան զփայտ իբրև զխաչափայտ, հուր ևս կալեալ ՚ի ձեռին՝ նշմար սիրոյ խաչաբարձին՝ իբր ՚ի Գողգոթայ ՚ի սեղան անդր ընթանայ. և յորժամ մերձենայ, յայնժամ ՚ի միտս եկեալ հարցանէ ցհայր իւր. «Հայր . . . ահա հուր՝ և ահա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակէզ»։ Իսկ զի՞նչ հայրն պատասխանէ. չասէ թէ մոռացայ ընդ մեզ բերել. և կամ արդ բերեն ծառայք մեր. նաև ոչ զկամս իւր յայտնէ՝ թէ ունիմ զքեզ իսկ առնել ողջակէզ. այլ ամոքէ զնա մեղմագին այնուիկ հոգեւոր բանիւն ասելով, «Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ որդեակ»։ Ծննդ. ԻԲ. 7, 8։

Իսկ ընդէ՞ր ապա լռեաց Իսահակ՝ որում չեղէ ինչ ակնկալութիւն տեսանել զմի յոչխարաց անա հօր իւրոյ 'ի զենուլ։ Քանզի հաւատաց 'ի լսել զբան թէ «Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ», զայ և եթ սկսաւ խորհել 'ի սրտի իւրում. վասն զի հո գին սուրբ՝ որ եբաց զբերան Աբրահամու մարգա րէաբար պատասխանել, անդ լուսաւորեաց և զմիտ Իսահակայ հաւատալ, թէ տեսցէ Աստուած զոչխար յողջակէզ՝ որ Տէր իսկ իցէ. խելամուտ եղեալ բա նին Աբրահամու՝ որ չասաց թէ Աստուած տեսցէ ոչխար յողջակէզ, այլ թէ՝ Աստուած տեսցէ Տէր ոչ խար յողջակէզ։ Ապա 'ի բաց թողեալ 'ի մտաց ըն խնդրելին իւր ոչխար՝ զորմէ հարցանէր, և խորհէր ընդ միտս զայն Տէր՝ զոր խօսեցաւ Աբրահամ. և այն պէս մտախորհ և մտադիւր ընթանայր ընդ այն ճա նապարհ անձին իւրոյ մահահրաւէր սեղանոյն։ Ն բագէ Աբրահամ հանել զորդին իւր 'ի սպանդ, և որդին կամակար եղանէ 'ի սպանդարան. ուր ժամա նեալ՝ տեսանէ զինքն լինել օրինակ հանդերձեալ ճըշ մարիտ Ողջակիզին. որ և ըստ ճշմարտին ըստ այնմիկ՝ «Իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր». Գործ. Ը. 32։

Արդ՝ ո՞րն յերկոցունց անտի գերօրինակ համա րեսցի. հա՞յրն՝ եթէ որդին։ Այս ընդ երկոսին իսկ ա հաւասարակ սքանչացեալ հիանամ. քանզի հայրն կամի մատուցանել ողջակէզ զորդին սիրելի, և որդին կա մի մատուցանիլ 'ի սիրեցեալ հօրէն։ Զի՞նչ գործես Աբրահամ. զենում զորդի իմ յողջակէզ Աստուծոյ։ Զի՞ է քեզ Իսահակ. զենու զիս հայր իմ յողջակէզ Աստուծոյ։ Հայրն զենու՝ որդին զենանի, և երկոքին միաբան առ 'ի մի վախճան։ Յո՞ր վախճան. 'ի կատա րումն Աստուածային հրամանի։ Ահա՝ անդուստ երևի 'նոսին պատկեր ինչ, կամ ուրուական իմն նմանու-

ւեն Աստուածային. զի Աբրահամ՝ յորժէ խաւհակ՝
ւչեալ անձինք, և համակամութիւն նոցին՝ իբրև
հոգի ՚ի նոսին։ Անօրինակ միաբանութիւն։

Եւ այն գործ աննման և անօրինակ միաբանու-
թեան նոցա՝ եղև նմանութիւն ծայրագոյն մարդա-
բութեանն Աստուծոյ, և օրինակ փրկչական Պա-
տարագին։ Քանզի Աբրահամ այնչափ սիրեաց զԱս-
տուած, մինչև զորդին իւր մատուցանէր նմա ողջա-
կէզ. և խաւհակ ևս այնչափ սիրեաց զԱստուած, մին-
և զանձն իւր ետ լինել ողջակէզ։ Եւ ահա ըստ օ-
րինակի և նմանութեան ըստ այնմիկ, « Այնչափ սի-
րեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր Միա-
ծին ետ » մեզ. Յովհ. Գ. 16։ Եւ այնչափ մեծ եղև
սէր Որդւոյն Աստուծոյ առ մեզ, մինչև զանձն իւր
ետ ՚ի վերայ մեր. և արդարև « Մեծ ևս քան զայս
սէր՝ ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բա-
րեկամաց իւրոց ». Յովհ. ԺԵ. 13։ Ահաւասիկ չափ՝
անչափելի սիրոյն Աստուծոյ, այս է՝ անձնատուր պա-
տարագ լինել Որդւոյն Աստուծոյ կամօք և հաճու-
թեամբ Հօր՝ ՚ի հաշտութիւն և ՚ի հաղորդութիւն
մարդկան ընդ Աստուծոյ։

Իսկ զի՞նչ իցէ ասել Հաղորդութիւն։

Եւ յաղագս Երանական Հաղորդութեան։

Հաղորդութիւնն հասարակօրէն առեալ՝ է գոր-
ծական կցորդութիւն որ և իցէ գործակցեալ իրաց.
և հաղորդիլն՝ ստանոր ՚ի բանիս առեալ՝ է բաժա-
նորդ լինել ուրուք ընդ փառս կամ ընդ վիշտս այլոյ
ուրուք. զոր մին ունի տիրաբար, և միւսն ունիցի
առաբար։ Օրինակ. Թագաւոր մտեալ ՚ի պատե-
րազմ, և ՚ի սաստկանալ մարտին յորժամ նետք թըշ-
նամեաց տեղան ՚ի վերայ, և սուրք զիւրև պատեալ

և բազուկք 'ի հարուածս ամբարձեալք տեսանէին. այ-
կայն Թագաւորն յայնմ մեծի վտանգի ոչ ինչ երկն-
ցեալ 'ի սաստկութենէ մարտին, և ոչ փոյթ ինչ ա-
րարեալ զհարուածոց և զվիրաց իւրոց անձին, ամե-
նայն զօրութեամբ նահատակեալ արիաբար հալած-
զախոյեան իւր զթշնամին. և զզօրս նորա խորտակեա-
և խապառ ջնջեալ՝ զամենայն զգունդ և զստացուա-
նորին յաւար առեալ դարձցի փառօք իւրոց յաղ-
թանակին. յայնժամ և զօրականք իւր՝ որք հետևեա-
բար կցորդք եղեն հարուածոց և վիրաց արքայի
իւրեանց, հաղորդ լինին իրաւամբ ընդ յաղթական
փառսն նորին. և այս՝ է բան Առաքելոյն, զի «Եթ
թէ չարչարանացն կցորդ լինիմք, ապա և փառացն
հաղորդ լինելոց եմք»: Հռովմ. Ը. 17: Իսկ զորպի-
սութիւն փառաց երկնաւոր Թագաւորին մերոյ՝ ո-
րում զհնազանդեալ եկեղեցի ակն ունի ընդ երանելեա-
ցըն տեսանել, ոչ է մարթ բանիւ ցուցանել. վասն
զի որպէս ոչ ոք տեսեալ է զԱստուած աստ 'ի կեանս
յայսմիկ, նոյնպէս և զփառս նորին՝ զոր երանելեաց
տեսանեն և վայելեն՝ ոչ ոք է տեսեալ; ոչ ոք լուեալ
և ոչ 'ի սիրտ ուրուք նկարեալ. այլ զոր խոստացաւ յաղ-
թող զօրագլուխն իւր Քրիստոս, զնոյն հաւատոյ՝
թէ փառք են անճառելի, փառք երկնից արքայու-
թեան, փառք են անեղ Աստուածութեան. «Զոր
ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի սիրտ մարդոյ
ոչ անկաւ, պատրաստեաց Աստուած սիրելեաց իւ-
րոց»: Ա. Կոր. Բ. 9: Երանական հաղորդութիւն:

Յաղագս Շնորհական հաղորդութեան:

Իսկ լրումն եկեղեցւոյ՝ որովհետև անկարանայ
ըստ լրութեանն իւրաքանչիւր հաւատացելովք չա-
րակից լինել Քրիստոսի, որպէս զի ապա կարասցէ

ըստ քաղցրութեանն երանական հաղորդութեամբ հաղորդել փառաց նորա, վասն այնորիկ Տէրն փառաց ըստ ամենատարած մարդասիրութեան իւրոյ գթացեալ կամեցաւ յիւրմէ լնուլ զպակասութիւն կարողութեան [illegible]՝ բաշխելով նմա զԱստուածախառն մարմին և զարիւն իւր ուտել և ըմպել, և նովին հաղորդ լինել փառաց իւրոց. զի որ ոչն կարողանայ ժառանգորդ լինել փառաց իւրոց երանական հաղորդութեամբ, հաղորդեսցի Աստուածախառն մարմնոյ և արեանն հաղորդութեամբ: Շնորհական հաղորդութիւն:

Յաղագս Երանական և Շնորհական հաղորդութեան միանգամայն:

Արդ՝ յորժամ այնու շնորհական հաղորդութեամբ անձամբն հոգիք բարեգործ հաւատացելոց, ընդ որս դառնին և հոգիք մկրտեալ անմեղ տղայոց, որպէս հաղորդութիւնն երանական՝ նոյնպէս և հաղորդութիւնն շնորհական միապէս բնակեցուցանէ զնոսա ՚ի Քրիստոս՝ և զՔրիստոս ՚ի նոսա. «Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեսցի, և ես ՚ի նմա»: Յովհ. Զ. 57: Որ և ՚ի յարութեան մեռելոց՝ միապէս «Կերպարանակից առնէ զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոց»: Փիլիպ. Գ. 21: — Լուսամագիրք:

Զայն ևս գիտեմք, զի փառք Որդւոյն Աստուածոյ՝ որում ՚եթէ հաղորդեսցին երանական հաղորդութեամբ և ՚եթէ շնորհական հաղորդութեամբ, նոյն փառք են ՚ի կողմանէ Տեառն փառաց. որպէս շնորհք առաքելութեան, շնորհք մարգարէութեան, շնորհք վարդապետութեան կամ ՚ի լեզուս խօսելոյ և թարգմանութեան. «Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ Հոգի նոյն է. եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է»: Ա. Կոր. ԺԲ. 4, 5: Բայց ՚ի կողմն

հաղորդեցելոցն՝ ըստ իւրաքանչիւր վաստակոց և առաքինութեան իւրեանց, մի քան զմի առաւելութեամբ զանազանեալ. որպէս «Այլ փառք արեգական, և այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց, և աստղ քան զաստղ առաւել է փառօք»։ Ա Կոր. ԺԵ. 41։ Իսկ զոր մասնաւորապէս առեալ կոչեմք սուրբ հաղորդութիւն, է խորհուրդն ահաւոր. զոր՝ Հոգին սուրբ իջեալ յերկնից՝ կատարէ 'ի ձեռս Պատարագիչ քահանային յասելն անդ էական բանին, փոխարկելով զհացն 'ի մարմին և զբաժակն յարիւն իւրոյ էակցին։

Այլ են ոմանք յազգն Յունաց, թերևս առեալ 'ի բանից սրբոյն Կիւրղի Երուսաղէմացւոյ՝ որ 'ի ճառն սրբալոյս Միւռոնի, առաւել միտ եդեալ 'ի ժամանակ մաղթանաց Պատարագչին՝ քան 'ի կէտ ներգործութեան Աստուածախօս Էական բանին, ըզփոխարկութիւնն կարծեն յայնժամ լինել, յորժամ զկնի այնր էական բանին՝ Պատարագիչն մաղթէ առաքել զսուրբ Հոգին. և 'ի նոյն մաղթանս յարէ ասելով «Արա՛ զհացս զայս օրհնեալ՝ ճշմարտապէս արասցես մարմին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Արա՛ զբաժակս զայս օրհնեալ՝ ճշմարտապէս արասցես արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Պատարագ։ Եւ այնու ոչ թէ զհաւատս խոտեն, այլ հայելով 'ի կարգ գրուածոյ պատարագամատոյց Խորհրդատետրին, և 'ի կարգէ յետադաս մաղթանաց Նորին՝ զժամանակ որոշեն։ Բայց ներգործութիւն այնր Էական բանին՝ ըստ որում է գործողութիւն Աստուածային կամաց միութեան, առանց որոշելոյ զժամանակ և առանց մերժելոյ զնոսա՝ միաբանիմք 'ի հաւատս փոխարկութեան. և ասեմք,—

Յաղագս Փոխարկութեան հացին և բաժակին։

Փոխարկութիւն էութեան հացին 'ի մարմին և

ամանակին յարիւն, է գերազանց գործ Աստուածային.
ան որոյ կարօտեալ միայն Աստուածային գերազանց
ործադիր բանին՝ որ է բանն Տեառն «Առէք կերէք
յս է մարմին իմ... Արբէք 'ի սմանէ ամենեքեան այս
արիւն իմ...»: Նոյն վասն այնորիկ ասի Բան Տեառն.
Եւ այն է միայն աննահանջելի գործողութիւն և հրա-
ման Աստուածային կամաց էացուցանել զխորհուրդ-
սրբոյ Հաղորդութեան՝ 'ի գործադրութեան Պատա-
րագիչ քահանային՝ 'ի ձեռս ունելով զնուիրեալն
հաց և գինի՝ ըստ դիտաւորութեան Եկեղեցւոյ: Նոյն
որպէս 'ի ստեղծագործութեան անդ վասն աճելոյ և
բազմանալոյ մարդկան՝ ասաց Աստուած զբանն Տեա-
ռն «Աճեցէք և բազմացարուք...», Ծննդ. Ա. 28.
Նոյնպէս 'ի փրկագործութեան աստ՝ վասն հաղորդե-
լոյ ինքեան զհաւատացեալս անուան իւրոյ՝ ասաց ըզ-
բանն Տեառն «Առէք կերէք. այս է մարմին իմ... Ար-
բէք 'ի սմանէ ամենեքեան. այս է արիւն իմ...»: Զայն
ասաց 'ի լնուլ զերկիր, իսկ զայս 'ի լնուլ զերկինս՝
«Զտեղի անկելոց ապստամբողական Թշնամւոյն»,
[illegible]ար: Նա ծնուցանէ զմարդիկ 'ի կեանս մահկանա-
ցու, իսկ սա յարուցանէ 'ի կեանս անմահ. նա ըն-
տակեցուցանէ յերկիր զմարդ ընդ մարդոյ, սա ըն-
տակեցուցանէ յերկինս զմարդ ընդ Աստուծոյ: Նոյն
չ միայն այս ահաւոր խորհուրդ, այլ և ամենայն
խորհուրդք Եկեղեցւոյ ըստ իւրաքանչիւր նիւթոց
և գործադրութեանց՝ կարօտին իւրեանց պատշաճա-
ւոր Տեառն բանից որովք կատարին. որպէս և այս
ահաւոր խորհուրդ կատարի նովին Տեառն բանիւ,
որ լուաւ սուրբ Եկեղեցի 'ի վերնատանն խորհրդոյ
ի բերանոյ Որդւոյն Աստուծոյ. ուր կից ընդ նմին
Աստուածային խորհրդոյն՝ Աստուածային էր և հրա-
մանն՝ զայն խորհուրդ հանապազ առնել: Նոյն որ[illegible]
արիցէր առնել. ոչ ապաքէն նիւթովքն՝ զոր եւ

և բանիցն՝ զոր լուաւ․ վասն այնորիկ այս ահաւո
խորհուրդ մարմնոյ և արեան՝ որպէս անհնար է առա
Աստուածադիր նիւթոյն այնոցիկ լինել, նոյնպէս ան
հնար է և առանց Աստուածախօս Էական բանին փո
խարկութիւնն լինել։

Ըստ որում բանն Էական յասել Քահանային 'ի ժամ
սուրբ Պատարագին 'ի վերայ հացին և բաժակին,
կարէ համարիլ պատմութիւն այնր ժամանակի փր
կագործութեանն Յիսուսի․ վասն զի յաղագս նու
րեալ հացին և բաժակին այնորիկ՝ զոր քահանայն ա
ռեալ է 'ի ձեռս իւր, է իսկապէս խորհրդաբար խօ
սիլ ընդ գործադրիչ Հօր Աստուծոյ՝ գործադրական
բանիւ Որդւոյն Աստուծոյ, գործադրութիւն Հո
գւոյն Աստուծոյ՝ 'ի կատարումն խորհրդոյ առաջա
կայ Աստուածագործութեանն եկեղեցւոյ․ զի 'ի նը
մին իսկ յասելն զԲանն Էական՝ կատարէր Յիսու
Հոգւովն սրբով 'ի սուրբ Վերնատան․ ուր անմիջա
պէս պատուիրէր Եկեղեցւոյ առնել զայն փոխարկու
թիւն ևս վասն յիշատակի իւրոյ՝ ասելով « Զայս ա
րարէք առ իմոյ յիշատակի »․ Ղուկ․ ԻԲ․ 19։ Ըստ
զայս արարէք» ասելովն՝ պատուիրէր զայն փոխարկու
թիւնն իսկապէս առնել․ և առ իմոյ յիշատակի ասե
լովն՝ պատուիրէր զնոյն փոխարկութիւնն միա
գամայն և վասն յիշատակի իւրոյ առնել․ ուր և
ցուցանէր ոչ միայն զնիւթս խորհրդոյն, այլ ուսու
ցանէր և զԲանն Էական՝ որով զխորհուրդն արար։
Արդեամբ և 'ի ժամ սուրբ Պատարագին յասելն Էական
բանին յաղագս նուիրեալ հացին և բաժակին՝ Էանոյ
մարմին և արիւն Քրիստոսի իսկապէս, լինի և յիշատակ
նորա ճշմարտապէս․ վասն այնորիկ Դպիրքն 'ի բե
րանոյ ժողովրդեանն երգեն ամէն․ որ յամենայն ազ
գաց մայր լեզուաց նշանակէ հաւատալ ընդունիլ և
ճշմարտութեան իրին վկայել․ զոր թէ բուն Հայկ

ետն բացատրեալ առաքելոցն․ և ասէ՝ այս ծորքն և ա-
ղբիւրն է, կատարելութիւնք և հաստատութիւնք։ Այս ամպս սկզ-
բանէն զյիշատակ մահուան Որդւոյն Աստուծոյ եր-
բեմն՝ ի դէմս Հօր Աստուծոյ՝ ասելով, "Օրհնեալ քո
հասար ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մե-
րոց ։ Այս զքաշխիսն վասն մեր Հացն կենաց նե-
րկայացեալ, ի դէմս Որդւոյն ասելով "Որ պատարագ-
եալդ Հօր ի հաշտութիւն հաց կենաց բաշխիս ի
մեզ ։ Այս զկատարումն խորհրդոյն ի դէմս Հոգւոյն
սրբոյ ասելով "Որ զփառաւորեալ քո զխորհուրդ լինել
ի յերկնից կատարես ի ձեռս մեր ։ Քանզի յայս-
ժամ լինի Աստուածագործութիւն, որ է փոխա-
րկութիւն բանին Քրիստոսի․ միանգամայն և քա-
հանայագործութիւն՝ որ է վասն Յիշատակի մահ-
ուան նորա, ի նոյն վայրկենի՝ երբ էական բանն
ասացեալ լինի բերանով Պատարագիչ քահանային․
ըստ հրամանի փրկչին մեր "Զայս արասջիք առ ի
մոյ յիշատակի ։

Իսկ զի՞նչ այլ պարտ էր իմանալ զայսն այն՝ զոր
մի ասէր որոշմամբ․ ոչ ապաքէն իբրու մատամբ ցու-
ցանէր զխորհուրդն զոր առնէր, որ է հացն և բա-
ժակն՝ էացուցիչ բանիւն իւրով էացուցեալ մարմին և
արիւն իւր կենդանի՝ կենդանարար Հոգւովն սրբով։
Այս բոլորական իմաստ պատուիրանին Քրիստոսի
յայտնեալ իմացեալ լինի․ զհացն և զբաժակն՝ զոր ես այ-
սմ "Առէք կերէք այս է մարմին իմ, Արբէք ի սմանէ
ամենեքեան այս է արիւն իմ ․ ասելով, մարմին և արիւն
իմ տարայց ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց․
զոր կերայք և արբիք, յայսմհետէ դուք ևս նմին
նմանիք իմով զայս խորհուրդ իմ արասջիք առ իմոյ յի-
շատակի, զի հանապազ զիս յիշելով և զմահն իմ
պատմելով ուտիցէք զմարմին իմ և ըմպիցէք զարիւն
իմ ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց։ Վ

որոյ և Առաքեալն քարոզէ ասելով. « Քանզի որ֊
քան անգամ թէ ուտիցէք զհացս զայս՝ և զբաժակս ըմպի֊
ցէք, զմահն Տեառն պատմեցէք՝ մինչև եկեսցէ նա »
Ա. Կորն. ԺԱ. 26։ Իսկ զոր Առաքեալն հաց և բաժակ
ասէ, ոչ թէ սոսկ վասն յիշատակի պատարագելոյ
մարմնոյ ասէ՝ որպէս Նորաղանդք ասեն. այլ զոր փո֊
խարկելով արար Քրիստոս, զայն և՛ վասն յիշատակի
իւրոյ առնել պատուիրեաց. Առաքեալն ևս նոյնօ֊
րինակ փոխարկութեամբ լինելով ասէ. քանզի վասն
ուտելոյ Հացին և ըմպելոյ Բաժակին այնորիկ խրա֊
տէ զմեզ մաքուր լինել 'ի խղճէ մտաց, և սոսկալի
վտանգ ցուցանելով անարժանութեամբ ճաշակօ֊
ղաց՝ ասէ. « Փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա
'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. զի որ
ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս ան֊
ձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն
Տեառն »: Ա. Կորն. ԺԱ. 28, 29։ Իսկ ո՞ւմ կամակոր
զրկեալդ 'ի Մարմնոյ և յԱրենէն Քրիստոսի. զի չա֊
սէ թէ ոչ խտրէ զյիշատակն Տեառն, այլ ասէ թէ
ոչ խտրէ զմարմին Տեառն. վասն զի նոյն է խորհուրդ
մարմնոյ և արեան, և նոյն միանգամայն վասն յիշատակի
Տեառն։

Իսկ ահա կաթուղիկէ Եկեղեցին այնու փոխար֊
կիչ զօրութեամբ Աստուածային բանին կատարէ զե
խորհուրդն ահաւոր. և յետ կատարելոյն՝ Պատա֊
րագիչն աղօթելով 'ի դէմս Հօր՝ ահիւ և դողու֊
թեամբ 'ի վեր առեալ զՊատարագն մատուցանէ նմա
ասելով, « Իսկ զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք »:
Եթէ մատուցեալն այն չիցէ յայնժամ Էական բա֊
նիւն այնուիկ փոխարկեալ 'ի մարմին և յարիւն Որդւոյն
Աստուծոյ, կենդանի պատարագ ընդունելի Հօր,
զիա՞րդ մատուցանէ նմա իբրև ղատուերական պա֊
տարագն Մելքիսեդեկի քահանային առ հայրն Ա֊

ահաւամ ըսկ հաց և գինի, Ծննդ. ԺԴ. 18. Նա էր և ընդդէան մեծի պաշտաման, ընծայքն Նուիրական, պատարագութիւնն խորհրդական, և որ մեծն է և սուրբ ամենայն քան զամենեսեան՝ անդ Աստուածախօս բանն եակին, յայտնի ցուցանեն և հաստատարմացուցանեն, թէ զոր քահանայն մատուցանէ՝ է անտարակոյս Պատարագ կենդանի՝ մատուցեալ «Վասն ամենայնի և յաղագս ամենեցուն»։

Է. Նորիցես. Ընդէ՞ր ապա զկնի Էական բանին և ընկեր մատուցման Պատարագին քահանայն անընդհատ պաղատելով առ Հայր՝ մաղթէ առաքել զսուրբ Հոգին, որով արասցէ զհացն ճշմարիտ մարմին և զբաժակն ճշմարիտ արիւն մարմնացեալ բանին. ո՞չ ապաքէն արար զայն ընդ ասել քահանային Էական բանի բերոյ Միածնին։

Պատասխանեմ. Արդարև անյարմար է այդ 'ի կարգի մարդկային բանի. զի մարդ զոր ինչ խորհի խօսի և գործէ, ըստ սահմանի բնութեան ընդ ժամանակաւ խորհի խօսի և գործէ. և 'ի սկսանելոյ խորհրդոյն և բանին և գործոյն իւրոյ մինչև ցաւարտն ժամանել՝ ժամանակ անցուցանէ։ Վասն այնորիկ յարեան ոմանք 'ի Հայոց հռովմէականք, որք հայելով 'ի վիճակ մարդկայինս բնութեան, առանց ակնածութեան 'ի դէպ վարկան փոխել զբառն արասցէս 'ի պատարագամատոյց գիրս իւրեանց՝ և ընթեռնուն արարէր. որ թէպէտ 'ի կարգի մարդկօրէն բանք մերում է յարմարաւոր, բայց և ընթեռնուլն արասցէս, 'ի կարգի բանից հաւատոյ լուսաշաւիղ աստուածաբանութեամբ ևս տեսանի յարմարաւոր. զի այդօրինակ խորհուրդ զԱստուծոյ՝ կամ խօսք ընդ Աստուծոյ. թէպէտ լինին մարդկային տկար սահմանաւ, բայց յորժամ լինին միանգամայն և զօրութեամբ հաւատոյ, յայնժամ առ յԱստուածայ

իսկ չափու հասու լինել՝ հաստուցանէ զմիտս մեր ըն[դ] շնորհաց հաւատոյ համբերութեան առանց աշխատանաց։ Ո՞չ և ես՝ զոր ասեմ, հաւատով ասեմ. յետե[ւ] ռաջնութիւն՝ կամ անցեալ և ապագայութիւն այդ մաղթանաց Պատարագչին՝ չէ՛ ինչ ընդդէմ գործո[ղ]ղութեան Աստուածախօս էական բանին, որովհետև անցեալքն մեր և ապագայք ներկայ են յԱստուա[ծ] վասն այնորիկ եԹէ յառաջ քան զԱստուածագոր-ծութիւնն և թէ զկնի՝ ներկայանայցէ ընդունի ընդ Աստուածագործութեան խորհուրդ զքահանայական մաղթանսն զայն՝ ըստ հաւատոյ սուրբ Եկեղեցւոյ. որ և սուրբ Եկեղեցի մեծաւ հաւատով ներկայացեալ ընկալեալ համայն զհանդերձեալ փառսն Աստուծոյ որում անդրդուելի յաւետ ակն ունի զնա ժառանգել, զի խոստումն յԱստուծոյ է։ Խոստացեալ ինչ պարգև ՚ի մարդկանէ առ մարդիկ՝ չէ՛ պարգև ՚ի ձեռս հասեալ. այլ որ խոստանայ, նայ միայն ակնկալութիւն իւր ունելոյ զայն ՚ի ժամանակին. բայց և եկեղեցին Աստուծոյ զխոստացեալն առ ՚ի յԱստուծոյ մեծաւ հաւատով և հաստատուն յուսով առ իւր ունի, և ընդ այն բերկրի՝ իբր ներկայացեալ պարգև ընկալեալ. զոր օրինակ վասն խոստմանն Քրիստոսի կերպարանակից առնել զմարմին խոնարհութեան մերոյ ըստ նմանութեան մարմնոյ փառաց իւրոյ, այսպէս քարոզէ, ,,Վասն զի զոյս խոստացաւ, զմեծ և զանճառելի շնորհս պարգևել սիրելեաց իւրոց ճշմարիտն Աստուած Յիսուս Քրիստոս,,։ Այսպէս մա-տէ և Աստուածիմաստն մերս Նարեկացի. ,,Քո խոստումն շնորհ է,,։

Արդ՝ Պատարագիչն մարդ գոլով յանելն զբանն էական ոչ կարէ և զառաջադրումն Հոգւոյն սրբոյ ՚ի ...ապէս մաղթել միանգամայն. որովհետև մարդ ոչ է ամենագէտ, զի ամենակալ միայն Աստուած է. որ զա-

[illegible]նայն ինչ՝ եթէ անցեալք, եթէ որ կանն, և եթէ հանդերձեալքն, 'ի միում կէտ ներկայութեան միով հայեցուածով ունի առաջնէ՝ քննէ և ճանաչէ, ըզ-նոսա և ոչ մի կարօտեալ ժամանակի. քանզի որ ինչ էրն՝ և որ ինչ է՝ և որ ինչ լինելոց է՝ բովանդակա-պէս 'ի միում ներկայութեան 'ի նմին 'ի յԱստուա-ծն. Նմա և ոչ է մարդ՝ գտնէ իբրև զհրեշտակս երկ-նից, որոց տուեալ է կարողութիւն զյայտնագոյն գի-տելիս առ 'ի յԱստուծոյ հեղեալս 'ի նոսա՝ իմանալ գիտել և ճանաչել 'ի կէտ հեղմանն յայնմիկ ամե-նայն հանդամանս. և 'ի քթթելական՝ առ բազում մարդիկ պատգամաւոր լինել, զի են « Զօրութիւնք հոգիք անմարմնութեան բարձրելոյն ... և քան ընթա-ցից տեսութեան մնաց առաքողունք ». Նոր. ՁԱ. Ա-րոյ՝ 'քան բնաւոր հագեղէն գոյացութեան և քան բանաւոր յարապաստառասա հպատակութեամբ իւրեանց՝ անձնարար սպասաւորութիւնն 'ի Մարգարէէն առա-ջնաւ, « Օրհնեցէք զՏէր ամենայն հրեշտակք նորա, հզօրք զօրութեամբ որ առնէք զբան նորա, լսել ձայնի պատգամաց նորա ». Սաղմ. ՃԲ. 20. որ պար-զապէս է ասել՝ թէ երբ զձայն պատգամաց Տեառն լսէք, առանց ժամանակ անցանելոյ՝ նոյն հետայն կա-տարէք զբան կամաց նորա։ Վասն զի կարող են 'ի քթթելական՝ 'ի ծագաց երկնից մինչև 'ի ծագս աշ-խարհի հասանել. և ահա այնու արագութեամբ « Հրեշտակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս ». և տարաւ յԱզովտոս. զի 'ի նոյն կէտ յափշտակութեան՝ « Եկ եւ եկեալ զնա ներքինին ». Գործ. Ը. 39. և ինքն գտաւ յԱզովտոս, որ բազում ասպարիսօք հե-ռի էր 'ի նոյն տեղւոյ՝ ուր զներքինին մկրտեաց։

Եւ թէպէտ մարդն այսպէս մարմնաւոր գոլով ակար է քան զհրեշտակս զօրութեամբ, սակայն բան-ական հոգւով և մտաւոր՝ կարող է ուղիղ Աստուա-

Ճաքանանական վարդապետութեամբ ընդհանրական ե-
կեղեցւոյ զպակասութիւն զօրութեան իւրոյ ընա
հաւատով. զի հաւատն ուղղափառ լուսաւոր առն
զծրագ մտաց, հաստատէ զյոյս հաւատացելոց, և
զօրացուցանէ զսիրտս յուսացելոց: Զնոյն ասեմ
զՊատարագիչ քահանայէն. որ թէպէտ ոչ կարէ զ
ռէ՞ կէրէ՞ն ասելով՝ ուրոյն մաղթանօք միանգամայ
հայցել ՚ի Հօրէ և զառաքումն Հոգւոյն սրբոյ՝ որպէ
առացաւ. բայց կարող է յայնմ Աստուածախօսու-
թեան անդ զիւրաքանչիւր ներգործութիւնս հա-
մօգոյ և միանական սուրբ Երրորդութեան միա-
գամայն ՚ի միասին հաւատալ, որպէս հաւատոյ և
ուսուցանէ սուրբ Եկեղեցի. զի փոխարկութիւն կե-
ութեան հացին և բաժակին է գերազանց հրաշա
Աստուածագործութիւն. և վասն փոխարկելոյ զայ
նոյն ինքն Քրիստոս ասէ անդ զբան իւր բերանով
քահանային, և գործէ զգործն փրկական ՚ի ձեռս
քահանային. և ըստ իւրումն միութեան՝ ոչ եթէ
յանձնէ ինչ խօսի, այլ Հայրն որ ՚ի նմա բնակեալ է,
«Նա գործէ զգործսն». Յովհ. ԺԴ. 10: Նոյն և սուրբ
Հոգին որ է ՚ի Հայր և յՈրդի՝ գործակից է ընդ նո-
սին. ըստ որում գործն այն Աստուածային՝ է ներ-
գործութիւն ոչ ՚ի ներքս յԱստուածութեան, այլ
՚ի փոխարկութեան հացին և բաժակին. ուրեմն նոյն ժա-
մայն իջեալ յերկնից կատարէ զխորհուրդ փառաւորի
իւրոյ՝ և կենդանի առնէ զնա. վասն զի «Հոգին է
կենդանարար, մարմինն՝ ինչ ոչ օգնէ». Յհ. Զ. 64:
Որպէս մեկնէ և մերս երանեալ Լամբրոնացի ըստ
կարգի բանից խորհրդատետրին զմաղթանս առաք-
ման ՚ի Հօրէ Հոգւոյ կենդանարարին: Նոյն ոչ է
պարտ յայնմ Աստուածագործութեան մարդկօրէն ա-
րոշել զժամանակ. վասն զի գործադրական է յայն
ժամ բանն էական. որպէս ՚ի սուրբ Աւետարան. և

բարձագրողն է ընդ Հօր և ընդ սրբոյ Հոգւոյն հա-
ծոգոյ և միաբանական. ուրեմն 'ի ժամանակի յայնմիկ
աստուածախօս էական բանին՝ իջանէ յերկնից և գոր-
ծակից սուրբ Հոգին. որպէս ունի մաղթել քահա-
նայն, Թէպէտ բանիւն իւրով չև է հասեալ 'ի մաղ-
թանսն յայն և ասել «Որով զհացս զայս օրհնեալ՝
ճշմարտապէս արասցես մարմին Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի. Որով զբաժակս զայս օրհնեալ՝ ճշմարտա-
պէս արասցես արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստո-
սի»: Աստ զի քահանայն մարդ գոլով՝ որպէս ասա-
ցաւ, մինչև հասանել 'ի մաղթանսն յայն՝ կարօտ է
բանական ժամանակի. որ թէ կարող լինէր գտնէ-
իբրև զհրեշտակս երկնից ամենարագ սպասաւորու-
թեամբ՝ յայնմ պահու մաղթել միանգամայն և վա-
ղուն առաքման Հոգւոյն սրբոյ՝ որոշակի բանիւ ընդ-
դէմս և ընդ բերան, մաղթէր արդեօք 'ի միասին յա-
ւելն անդ էական բանին. իսկ ես դարձայց 'ի կարգ-
բանք Հաղորդութեան:

Պարզեալ վասն Հաղորդութեան:

Արդ՝ մեք տեսանեմք աչօք 'ի վերայ սրբոյ Սե-
ղանոյն հաց և բաժակ՝ նոցին յատկութեամբք. և ճա-
նաչեմք հաւատով մարմին և արիւն՝ էութեանցն փո-
խարկութեամբք. Զի՞նչ ապա արժան է մեզ անուա-
նել. զի հայելով զգալի տեսակացն, հաց և բաժակ կո-
չել՝ յէութէէն զարհուրիմք. և հաւատալով Աստուա-
ծադրոյ ճշմարտութեանն, մարմին և արիւն անուանել՝
յահէ մեծութեան նորին սարսափիմք. որ միայն քա-
հանային անկ է ասել 'ի պատարագելն և 'ի մատա-
կարարելն, մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քր-
իստոսի. Զոր օրինակ 'ի հնումն՝ յորժամ քահանայա-
պետն 'ի Սրբութիւն սրբութեանցն մտանէր, նա

այն կ՚որդայր զկենդան անուանն Աստուծոյ Երրորդութ-
բարբառով Ն՛օ՛վ՛ա, ըստ մերոյս որ էն. Իսկ միա-
ցութիւնէ անուն ահաւոր խորհրդոյն առաւել, կե-
կեղ զածութեամբ կոչեմք Միածնին կամ աւլքն
Ընդդէմբնին. զի զօրութիւն նորա է որքեւ զմեզ ՚ի
զայս՝ և հաղորդս առնել մարմնոյ և արեանն Քրիստոսի
որ յերկինս է. վասն զի գոյացութիւն այնր նոյն-
խաղաղին՝ բանիւն Քրիստոսի փոխարկեալ է ՚ի մարմին
և յարեան իւր որ յերկինս է. և վասն փոխարկե-
լինելոյն աստացաւ Հաղորդութիւն, ըստ որում Առա-
քելոյն ասէ. « Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք
ոչ ապաքէն Հաղորդութիւն է Արեանն Քրիստոսի,
Հացն զոր բեկանեմք, ոչ ապաքէն Հաղորդութիւն
Մարմնոյն Քրիստոսի ». Ա. Կոր. Ժ. 16.

Այլ ես աստանօր ողբամ զնորադարձն հերձուա-
ծոց. որ ՚ի վերայ այսր ճշմարիտ Աստուածադործ Հաղ-
դորդութեան ընդհանրական Եկեղեցւոյ՝ նախ վասն
թերահաւատութեան իւրոյ շուարեալ, և ապա վասն
յանցս անհաւատութեան բանսարկուին անկեալ՝
զրկեալ ՚ի ճաշակմանէ մարմնոյ և արեան Փրկչին՝ առանց
արտաքոյ եկեղեցւոյ իբր յանձանօթ և յօտար ամայի
աշխարհ ՚ի քաղց և ՚ի ծարաւ տակաւին չլքի վարա-
նեալ. Արդ՝ իցէ թէ յաւուր միում ըստ նմանու-
թեան անառակ որդւոյն՝ ՚ի միտս իւր եկեալ ասիցէ.
« Քանի՞ վարձկանք են ՚ի տան հօր իմոյ հացալիցք,
և ես աստ սովամահ կորնչիմ. յարուցեալ գնացից
առ Հայրն իմ, և ասացից ցնա, Հայր՝ մեղայ յերկինս
և առաջի քո ». Ղուկ. ԺԵ. 17, 18. Եւ այնպէս կա-
տարեալ զղջմամբ և խոստովանութեամբ դարձցի ՚ի
տուն հօր իւրոյ ՚ի կաթուղիկէ յուղղափառ եկեղե-
ցին Աստուծոյ, ուր արժանասցի զենման Եզինն պա-
րարակին, և ուտիցէ զմարմին և ըմպիցէ զարիւն նորա
կեանս յանձին իւրում. քանզի նոյն Փրկիչն մեր

ասէ. « Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս. Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է »։ Յովհ. Զ. 54. 56։ Լսեա և զայս՝ իմ կամակոր զրկեալդ 'ի Մարմնոյ և յԱրեանէն Քրիստոսի. զի չասէ թէ՝ եթէ ոչ կերիջիք և արբջիք զյիշատակին Որդւոյ մարդոյ՝ ոչ ունիք կեանս յանձինս, և թէ յիշատակին իմ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի է. այլ պարզապէս վասն մարմնոյ և արեան իւրոյ ասէ՝ թէ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի է։ Որ թէ ուտէ ոք արժանաւորութեամբ, ըստ իւրում բանին՝ նա 'ի Քրիստոս բնակէ և Քրիստոս 'ի նմա, զի այն է Հաղորդութիւն. որ է հացն և բաժակն փոխարկեալ 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ յանապական մարմին և յարիւն Քրիստոսի՝ մնալով տեսակ նոցին. և ցորչափ կայ այն տեսակ հացին և բաժակին, է իսկապէս Հաղորդութիւն։ Իսկ 'ի յեղափոխիլ և յապականիլ ապականացու նիւթեղէն տեսակին, անապականն էութիւն ըստ որում Հաղորդութիւն՝ ոչ յեղափոխի ընդ նմին. այլ ուստի էջն՝ հաւատամք լինել 'ի նմին. քանզի նա է « Հացն կենդանի, որ յերկնից իջեալ... Յովհ. Զ. 51. Որ էջն յերկնից Որդին մարդոյ՝ որ էն յերկինս »։ Յովհ. Գ. 13։

Զհունսն ասեմ. Տեսակ հացին և բաժակին յեղափոխի՝ ըստ որում նիւթ ապականացու. քանզի Աստուածային է սահմանն աննահանջելի, « Զի ամենայն նիւթոյ որ մարմին է՝ ապականութիւն հետևի »։ բայց փոխարկեալ գոյացութիւնն մնայ անփոփոխ, ըստ որում անապական Հաղորդութիւն՝ անապական մարմնոյն Քրիստոսի։ Վասն այնորիկ յորժամ ուտեմք և ըմպեմք արժանաւորութեամբ, ապականացու մարմին մեր ընդունի զապականացու տեսակ հացին և բաժակին յորովայն իւր, և ան-

պական հոգի մեր ընդունի զանապականն գոյա
թիւն յէութիւն իւր ։ Յորմէ հետևի ասել, թէ
խարկեալ գոյացութիւնն անապական՝ կայ և
ընդ ապականացու նիւթով հացին և գինւոյն՝
չև ՚ի կէտ յեղափոխման տեսակաց նոցին . և ՚ի
ղափոխման անդ՝ այն ինչ կորուսանեն զտեսակս
րեանց , անջատի գոյացութիւնն կենդանի , որպէ
մեռանիլ մարդոյ՝ հոգի ՚ի մարմնոյ . այլ մինչ չև է
ջատեալ, ՚ի ճաշակման անդ հաղորդէ զհոգին
ճաշակողն ։ Բայց յորժամ պատահեսցի բանութե
ուտել անհաւատից , կամ յանզգուշութենէ ու
անասնոց , կամ պատահմամբ թափեալ ՚ի վայր գ
ուարին՝ ՚ի ջուր կամ ՚ի հուր կորուսանիցի, գոյա
թիւնն ըստ որում անկորուստ և անապական՝ առ
ինչ հաղորդելոյ անջատի . և ուստի էջն՝ հաւատ
՚ի նոյն ելանել . « Զի հաց Աստուծոյ է՝ որ իջ
յերկնից . . . Ելանիցէ ուր էր զառաջինն » . Յովհ.
33 . 63 ։

Զունիմք ՚ի բնականէն բերել այսմ օրինակ .
թոտ մասնեայ յարմարութեան՝ միոյն զլոյս արե
կան ։ Բարձ միանգամ խորհրդով քոյին ՚ի հանդ
նորին զօդ և զամենայն մարմին , յայնժամ հատ
երևակայութիւն քոյ յաներևոյթ յերկիր իմն
ւարայքն . բայց և անդստին ոչ կարես ուրանալ
բերդակնն ինքնին լուսաւոր ։ Նոյնպէս և սուրբ
ղորդութիւնն ՚ի ճաշակողն խնդրէ զհաւատ սի
յաջողեալ, որպէս արեգակն զօդ պարզեալ՝ ընդ
թափանցէ . և զնիւթ մաքուր՝ իբրու մարմին դի
հար՝ յոր ճառագայթէ . Իսկ եթէ ճաշակողն չու
ցի ուղղափառ հաւատս սիրով յաջողեալ, և
նորա չիցէ խոստովանութեամբ և ապաշխարու
սրբեալ և յարդարեալ, ոչ երբէք զնա հաղո
՚ի տեսակէ անտի անջատեալ՝ « Ելանիցէ .

ղուածին »: Սակայն անարժանութեամբ ճաշակողն այն պատուհասէ անձին իւրում անհեղ դատաստան. բանիցն Առաքելոյն ասէ, « Փորձեսցէ մարդ նախ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ. Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն ». Ա. Կոր. ԺԱ. 28, 29:

Յայտնանէ ունիմք իմաստասիրել, թէ խորհուրդն այն ահաւոր՝ ըստ էութեանն է իմանալի և անփոփոխելի նիւթ հաւատոյ. և ըստ տեսակին՝ զգալի և փոփոխելի նիւթ հաւատոյ. բայց 'ի յեղափոխիլ ապականացու տեսակին, անապական էութիւնն մնայ միայն նիւթ հաւատոյ. Այլ յորչափ կայ և տեսանի տեսակ նոցին, թէ և 'ի ճաշակ չիցէ մատուցեալ՝ է ճշմարտիւ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զոր ճաշակեալ՝ հաղորդիմք և լինիմք ընդ Քրիստոսի 'ի կենդանութեան և 'ի մեռելութեան մերում միայն հոգւով. և 'ի յարութեանն հասարակաց՝ միաւորելով փառաւորեալ հոգի մեր ընդ մարմնոյ մերում, և լինիմք ընդ Քրիստոսի՝ փառաւորեալ հոգւով և մարմնով:

Ասացի՝ թէ և 'ի ճաշակ չիցէ մատուցեալ, է ճշմարտիւ կենդանի մարմին և արիւն. Զի են ոմանք օտարացեալք յեկեղեցւոյ, և ելեալք ըստ սահման այսր ուղղափառ հաւատոյ, 'ի բազմազգի մոլար վարդապետութիւնս իւրեանց՝ զայն ևս յաւելուն ասել, թէ սրբագործեալ հացն և բաժակն՝ 'ի կայութեան իւրում է հասարակ հաց և բաժակ. և 'ի ճաշակելն սրբուք հաւատով՝ ճաշակողին այնմիկ է սուրբ հաց և սուրբ բաժակ. որ է ասել թէ՝ 'ի տեսանելին աչօք՝ չունի ինչ գերբնական զօրութիւն յինքեան, այլ 'ի ճաշակելն անդ ստանայ զայն: Ով այլանդակ վարդապետութեան. բայց չեն զարմանք, զի այնպիսի օտար

և ինքնահնար հաւատք՝ պատճառեալ լինին 'ի մ
լար կարծեաց. և մոլար կարծիքք՝ պատճառեալ լին
'ի հայեցուածոյ մարմնական աչօք 'ի բնականն ն
Թեղինութիւն, քան հոգւոյ ակամբ առ գերբնակ
Աստուածայնութիւն. սակայն մեզ չէ փոյթ զնոցու
զն " Մեք չունիմք այնպիսի սովորութիւն, և ոչ եկ
ղեցիքն Աստուծոյ ". Ա. Կորն. ԺԱ. 16։

Արդ խորհուրդն ահաւոր՝ որ կատարի 'ի մէ
Առաքելական սուրբ Եկեղեցւոյ, է ճշմարիտ մարմին
արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. և է Հաղոր
դութիւն Մարմնոյ և Արեան Նորա որ յերկինս է. որ
պէս Առաքեալն ասէ, " Բաժակն օրհնութեան՝ զոր
օրհնեմք, ոչ ապաքէն Հաղորդութիւն է Արեանն Քր
րիստոսի. Հացն՝ զոր բեկանեմք, ոչ ապաքէն Հաղոր
դութիւն է Մարմնոյն Քրիստոսի ". Ա. Կորն. Ժ. 16։
Ուրեմն սուրբ Հաղորդութիւնն՝ որ է ճշմարիտ մարմին և
արիւն, հաղորդէ զմեզ Մարմնոյ և Արեանն Քրիստոսի
որ յերկինս է։ Բայց աստանօր ընկլմեն զիս անդունդք
և անհնարին խորութիւնք Աստուածային խորհրդոյ.
քանզի 'ի մէջ եկեղեցւոյ է՝ որ զմեզ հաղորդէ, և
յերկինս է՝ որում զմեզ հաղորդէ. արդ որն և որում
զիարդ կարիցէ իրապէս և ճշմարտապէս մի և նոյն
լինել. այդ ոչ է երկուց զանազան իրաց ընդ միմեանս
խառնմամբ միաւորութիւն, այլ որն յեկեղեցի՝ և ո
րումն 'ի յերկինս, նոյնանալ էութեամբ միութեամբ
ճշմարտութեամբ. ընդ որ ոչ միայն ազգ մարդկան,
այլ և վերին զուարթունք սքանչացեալ հիանան ա
ռաւել քան ընդ խորհուրդն Աստուածային մարդե
ղութեան։

## Ի Վերայ խորհրդոյ Մարդեղութեան։

Քանզի խորհուրդ մարդեղութեան Որդւոյն

Աստուծոյ՝ է երկուց բնութեանց միաւորութիւն . զի
նմին Բանին Աստուծոյ՝ առեալ զմարդկային բնու-
թիւն 'ի կուսէն Մարիամայ՝ եղև մարմին . և որպէս
յղութիւն մօրն էր կուսական , նոյնպէս և ծնունդ
որդւոյն կուսական . զի յղացուցիչ մօրն էր Հոգին
Աստուծոյ , և 'ի նմա ծնեալն Որդին Աստուծոյ . որով
նոյն երանեալ՝ անխախտելի կուսութեամբ եղև Աս-
տուածածին : Քարոզէր Առաքեալն « Զխաչելեալն
Քրիստոս՝ հրէից գայթագղութիւն , և հեթանոսաց
յիմարութիւն » . Ա . Կոր . Ա . 23 . քարոզէ և Առա-
քելականն Եկեղեցի զԱստուածածինն միշտ կոյս ,
թերահաւատից գայթագղութիւն , և նորաղանդից
յիմարութիւն . բայց մեզ ուղղափառ հաւատացե-
լոցս զնորին միշտ կուսութիւն՝ « Աստուծոյ զօրու-
թիւն , և Աստուծոյ իմաստութիւն » . Նոյն . Ա . 24 .

Արդ՝ բնութիւնն մարդկային 'ի կէտ վայրկենի
յղացման կուսին՝ այն ինչ անձնաւորիլ էր յարգան-
դի նորին ըստ իւրում բնական սահմանին , Անձն Բա-
նին Աստուծոյ յառաջելոյ արգել զպայման նորին՝ և
ինքն եկաց փոխանակ մարդկային անձին . և այնպէս
անձն Աստուածային և բնութիւնն մարդկային՝ ան-
հատելի խառնմամբ ընդ միմեանս միաւորեցան , բայց
ոչ խառնակեալ շփոթեցան . զի որ Աստուած է կա-
տարեալ՝ Աստուածային բնութեամբ և կամօք , նոյն
մարդ կատարեալ՝ մարդկային բնութեամբ և կամօք .
Որպէս և ինքն բազում անգամ 'ի բանս և 'ի գործս
իւր՝ մերթ միաւորաբար , և մերթ որոշակի զերկու
բնութիւն և զկամս յիւրեանց յայտնի ցուցանէր . զի
'ի գիշերին յորում մատնէր , Աստուածային բնու-
թեամբ և կամօք առ Հայր իւր ասէր , « Հայր՝ զորս
ետուր ինձ , կամիմ՝ զի ուր եսն եմ , և նոքա իցեն
ընդ իս » . Յովհ . ԺԷ . 24 : Իսկ յորժամ 'ի չարչարա-
նացն զերծանիլ կամէր , սոսկ մարդկայնովն կամէր և

ասէր. « Հայր՝ եթէ կամիս՝ անցո զբաժակս զայս յի-
նէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին ». Ղուկ. ԻԲ. 42։
Նոյն մերթ Աստուածային միանգամայն և մարդկայ-
բնութեամբ և կամօք բաղում գործս ցուցանէր. և
այն զի ասէր, « Հուր եկի արկանել յերկիր. և զի՞նչ
կամիմ թէ արդէն իսկ բորբոքէր ». Ղուկ. ԺԲ. 49։

Արդ՝ լուիցեն ընտանի թշնամիք մեր և զզջացի-
ընդ բարուրանս իւրեանց, զի մեք խոստովանիմք և
հաւատամք զմարդացեալ բանն Աստուած՝ մի անձն
մի դէմ. և վասն անշփոթ խառնմանն Աստուածայ-
անձին ընդ մարդկային բնութեան, ասեմք յերկու
բնութեանց միաւորեալ մի բնութիւն։ Նոյն մի բնու-
թիւն ասելով՝ կամիմք մի անձն ասել ընդդէմ Նես-
տորի, որ չարաչար վարդապետութեամբ երկու բ-
նութիւն ասելով զմի Քրիստոսն յերկուս անձինս բա-
ժանէր. զոր տիեզերական ժողովն Եփեսոսի դատա-
պարտեալ նզովեաց։ Իսկ յերկուց բնութեանց միա-
ւորեալ ասելով՝ կամիմք անշփոթ խառնումն ցու-
ցանել ընդդէմ Եւտիքեայ, որ մի բնութիւն ասե-
լով չարաչար մոլորութեամբ շփոթեալ խառնակ դա-
ւանէր. այն ևս տիեզերական ժողովով քաղկեդոն ա-
կամ դատապարտեալ նզովեցաւ։ Սակայն ուր ցկի
ինչ կացեալ՝ ոչ Նեստորական և ոչ Եւտիքական հա-
կառակութեանց, առհասարակ միաձայնաբար ասեմք՝
Քրիստոս է Աստուած մարդացեալ։

Դարձեալ ՚ի վերայ խորհրդոյ Հաղորդութեան։

Բայց խորհուրդն ահաւոր՝ որ հաղորդէ և որով
հաղորդէ, չէ՞ երկուց իրաց միաւորութիւն. այլ զի
առ որովն փոխարկեալ լինելով որպէս ասացաւ՝ նշա-
նակեալ էութեամբ միութեամբ և ճշմարտութեամբ։
[illegible] լուսեղեն յայտնիկ լեզուք գիտուն ծառա-

[illegible]ց, և անկցին դրիւք 'ի ձեռաց իմաստուն դպրաց. Արդ եկայք խնդրեսցուք 'ի Սերովբէից և 'ի Քերովբէից անտի զորպէսն իմանալ. զի որք հանապազ առաջնոն զերեսս Աստուծոյ, արժան թէ գիտասցեն նոքա՝ թերևս և մեզ յայտնեսցեն։

Ո՛վ Սերովբէք և Քերովբէք գերաշխարհիկ իմաստունք, «Որ կայք միշտ առաջի Աստուածութեանն». ուսուցէք մեզ զձեզ՝ զի առանց խնայելոյ յայտնեսջիք մեզ։ Բայց ահա նոքին իսկ ևս անհաս գոլով այսմ ահաւոր խորհրդոյ, վկայեն լինել անքննելի և անճառելի. վասն այնորիկ վերին թեւօք ծածկեն զգլուխ՝ իբրու թէ օրպէս կարասցուք զայդ գիտել. և ստորին թեւօք ծածկեն զոտս իւրեանց՝ իբրու թէ ո՛չ կարեմք ամենևին յայդ 'ի խորս ընթանալ. Այլ միայն միջին թեւօք հաւատոյ թռուցեալ՝ 'ի ժամու Աստուածագործութեան անդ միաբան աղաղակեն և ասեն «Սուրբ սուրբ սուրբ Տէր զօրութեանց, լի՛ են երկինք և երկիր փառօք քո, օրհնութիւն 'ի բարձունս»։

Ծածկեսցե՛ն սուրեմն և զդէմս իմ թեւք հոգեղէնսս, զի պատկառանք անհնարինք անկան զերեսօք իմովք. զի յաղագս մեծի յանդգնութեան իմոյ առ 'ի գիտել զանգիտելին և նացին իսկ հրեղինաց, ահաւասիկ Առաքեալն անդուստ 'ի վերուստ զայրագին ակամբ առ իս հայեցեալ ասէ. «Մարդ ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութեանն չհաւանել». Գաղ. Ե. 7։

Այն յանդիմանութիւն Առաքելոյն դրեցաւ առաւել ևս վասն իմ, և ծանրացաւ 'ի վերայ իմ առաւել քան զքար՝ և դժուարաքաշնալի քան զաւազ. զի այսպէս եղև ինձ իմանալ, ո՛վ յիմար՝ ընդէր խառնեցար 'ի լուսաւոր արահետ շաւղաց սուրբ[illegible] ներգեցւոյ, մինչ ունէիր քեզ ուղեցոյց զմեծամեծաւ զլոյս հաւատոյ, և միամիտ սրտիւ թեթև

Թանայիր 'ի վերայ այդորիկ ծովու Աստուածային խո-
րին խորհրդոյ։ Որդ՝ զիարդ հնչեաց 'ի քեզ յանկարծ
հողմն վայրահակ մտաց մարդկայնոյ, որով երկնէի-
ծանրացար և սկսեր ընկղմիլ. այլ մինչչև ընկղմեալ
իցես գլխովին և կորուսեալ, վերայն փութով զձե-
ռըս քո առ Փրկիչն Յիսուս՝ և աղաղակեալ ընդ Պետ-
րոսի ասելով " Տէր փրկեա զիս ", Մատթ. ԺԴ. 30։
զի և նա 'ձգեալ զձեռն ողորմութեան իւրոյ փրկես-
ցէ, և դարձեալ հաստատեսցէ զքեզ 'ի հաւատ
սուրբ Եկեղեցւոյ։ Բայց մի այլ ես մարդկային դա-
տմամբ մատիցես 'ի քննութիւն անհմանալի խորհր-
դոցն Աստուծոյ, և կորուսանիցես զանձն քո 'ի զուր.
վասն զի քննութիւն խորոցն Աստուծոյ՝ գործ է յա-
տուկ Հոգւոյն սրբոյ. այլ դու " Միայն հաւատա՛ և
կեցցես ", Ղուկ. Ը. 50. և արժանի լինիցիս հաղոր-
դիլ Մարմնոյ և Արեան Տեառն մերոյ Յիսուսի Քր-
իստոսի։ " Զի ես ընկալայ 'ի Տեառնէ, զոր և ձեզ
աւանդեցի, եթէ Տէր Յիսուս 'ի գիշերին յորում
մատնէր, առ հաց. գոհացաւ. եբեկ և ասէ.
Այս է մարմին իմ... Նոյնպէս և զբաժակն յետ
ընթրեացն, առ և ասէ. Այս բաժակ նոր ուխտ է
իմով արեամբ ", Ա. Կոր. ԺԱ. 23—25. որ և պատ-
ուիրեաց եկեղեցւոյ իւրոյ առնել զայն Աստուածա-
գործ փոխարկութեանն խորհուրդ՝ ասելով " Զայս
արասջիք առ իմոյ յիշատակի "։ Եւ ընդ էր պատուի-
րեաց առնել. վասն զի ըստ ամենառատ մարդասի-
րութեան իւրում կամեցաւ, զի մինչև 'ի կատարած
աշխարհի եղիցի միշտ ընդ մեզ յերկրի՝ Ճշմարիտ
Մարմնով և Արեամբն իւրով. զի և մեք 'ի նոյն հաղ-
որդեալք՝ եղիցուք ընդ իւր յերկինս հոգւով. և
'ի կատարածի աշխարհիս՝ մինչև յաւիտեան ընդ
—Ն— նմա հոգւով և մարմնով։

Այս հոգեխրատ յանդիմանութիւն սրբազան

ռաքելոյն Թադէանցեաց. առ ևս մինչև 'ի յոգի. վասն ոյ Թողեալ զվայրն անլոյս վայրենամիտ խորհրդոյս, դրէն կալեալ զլուսաշաւիղ հետս հաւատոյ Առաքելական սուրբ Եկեղեցւոյ. որով ահաւասիկ տեսանեմ զՔրիստոս ճշմարտապէս 'ի մէջ եկեղեցւոյ, որ պատարագեալ պատարագեալ մատչի վասն մեղաց մերոց մեղ Գառն Աստուծոյ: Նա և տեսանեմ նովին հաւատով զՀոգին ճշմարտութեան զառաքեցեալն 'ի յօրէ յաւուր մեծի Պենտեկոստէի՝ լիակատար շնորհք բնակեալ ընդ եկեղեցւոյ: Եւ եթէ չէր ընկալեալ եկեղեցի զՀոգին սուրբ, և չունէր հանապազ ընդ իւր բնակեալ, անհաւատալի էր՝ յայնմիկ հացն գինին փոխարկութեամբ լինել կենդանի մարմին և ն Յիսուսի Փրկչին. այլ թերևս լինէր որպէս 'ի ժողովս նորաղանդից՝ հաց և գինի անկենդան, վասն ոյ և անընդունելի յիշատակ. քանզի ոչ լինէր մարմին և արեան Քրիստոսի, և մեզ ճշմարիտ կերակուր ճշմարիտ ըմպելի: Վասն այնորիկ ժողովուրդք նոցին երբէք անկանալցին բնակիլ 'ի Քրիստոս՝ և Քրիստոս նոսին, զի ոչ ուտեն զմարմին և ոչ ըմպեն զարիւն նորա՝ որ պատարագեալ է 'ի նոսա. վասն զի ոչ ընդունին սուրբ Հոգին բնակիլ 'ի ժողովս իւրեանց, որ փոխարկէ զհացն և զգինին 'ի ճշմարիտ մարմին և յարիւն րոյ Եակցին: Զունին նա և զօրհնաւոր քահանայս ընդ միջնորդ Առաքելական յաջորդութեամբ ձեռնադրեալս՝ և կարգեալս 'ի պաշտօնութիւն Աստուածային խորհրդոցն եկեղեցւոյ. վասն զի կամակորութեամբ իւրեանց անջատեցան 'ի հոգեբնակ Առաքելական եկեղեցւոյ, և զրկեցան 'ի Հաղորդութենէ ճշմարիտ մարմնոյ և արեան Որդւոյն Աստուծոյ:

Նայց կաթուղիկէ եկեղեցի՝ յօրէ անտի մեծի Պենտեկոստէի՝ անընդմիջաբար ունի զսուրբ Հոգին լիակատար շնորհօք ընդ իւր բնակեալ. ուստի ան-

ընդ միջնորդաւոր ունի և զլխակատար իշխանութիւն զալ
համաշխարհական պաշտօնէութեան՝ առ ՚ի լինել առաջնորդ-
ող Աստուածային խորհրդոյն, և առեալ ՚ի բերանոյ
հեղինակի այնր խորհրդոյ երկնաւոր քահանայապետ-
տին՝ «Առէք կերէք այս է մարմին իմ... Արբէք ՚ի սմա
մանէ ամենեքեան այս է արիւն իմ»․ պատուէր փոխադրելով
լինել ճշմարիտ կենդանի մարմին և արիւն Որդւոյն Աս-
տուծոյ՝ որ յերկինս է։ Արդեամբ Քրիստոս՝ յերկինս
մարմնովն իւրով ընդ աջմէ Հօր, է և նովին մար-
մնովն Հաղորդութեամբ ընդ մեզ յերկրի մինչև ՚ի
կատարած աշխարհի․ զի եթէ ոչ լինէր հանապազ
՚ի մէջ եկեղեցւոյ մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ,
անտարակոյս ասեմ՝ զի և նա ոչ լինէր ընդ եկեղեցւ-
ւոյ՝ որպէս ասացն, «Զամենայն աւուրս՝ մինչև ՚ի կա-
տարած աշխարհի»․ Մատթ․ ԻԸ․ 20։

Նոյն ՚ի վերայ այսր գլխակատար իշխանութեան ե-
կեղեցւոյ՝ ասեն երկինք նա և զերօրհնեալ Աստուա-
ծական մեծափառութիւն եկեղեցւոյ․ զի Աստուա-
ծատուր քահանայական իշխանութեամբն այնուիկ՝
պատուաւորելով Աստուածադիրն խորհրդոյն այնմիկ
ոչ միայն առնէ զայն վասն յիշատակի անճառելի շ-
նորհութեան և խոնարհութեան Բանին Աստուծոյ
այլ և ուտելով և ըմպելով զայն Աստուածախառն մար-
մին և արիւն նորա՝ նովին Հաղորդութեամբ և մարդն
աստուածանայ։ Եւ այս լրումն ցանկութեան նախա-
ստեղծին Ադամայ, որ ուտելով ՚ի ծառոյն գիտութե-
բարւոյ և չարի՝ կամէր անդէն աստուածանալ․ իսկ
այժմ տեսանեն երկինք զԱստուած մարդացեալ, և
՚ի նմանէ Աստուածական մեծափառութիւն շնոր-
հեցեալ իւրում եկեղեցւոյ․ զի որ էառ զմարմին
մեր մահկանացու ըստ մարդկութեան, ետ փոխա-
նակ զայն մարմին իւր կատարն ընդ փառաւոր անմահն Աս-
տուածութեան։ «Ո՜վ մեծի սուրբ և սրբութեանդ,

Ղուկ. Սուրբ. որ եղեւ ընդ երկնաւոր վաճառականին. զի մարգարիտ եւ առաւել թանկին Աստուծոյ սուրբ մարդկային Խորհրդին եւ արեան մասնկանացն, եւ առաջին 'ի նմանէ Աստուածախնամ Հօրն եւ որդւոյն կերակուր անմահական։ Եւ զայն չնաշխարհիկն շահեկանութիւն յայնժամ զգացաւ եկեղեցին, յորժամ Տէրն փառաց բազմեալ աշակերտօքն խորհրդոյ՝ բաշխեաց նմա զմարմին իւր եւ զարիւն ուտել եւ ըմպել. եւ զայն պատուիրեաց վասն ուտելոյ եւ ըմպելոյ հանապազ առնել, եւ վասն յիշատակի իւրոյ առնել։

Երգ՝ խորհուրդն այն ահաւոր՝ ըստ որում վասն յիշատակի մահուանն Քրիստոսի, է Քահանայագործութիւն. որ հաղորդեալ ընթերցանութեամբ եւ խորհրդաւոր արարողութեամբ կատարի բանիւ Եկեղեցւոյ 'ի ձեռն քահանային։ Իսկ ըստ որում 'ի Հօրն եւ յորդւոյն փոխարկութիւն՝ է Աստուածագործութիւն, որ կատարի յառկայծս բանիւն Աստուծոյ 'ի ձեռն քահանային։ Զոր եկեղեցին ուսօր եւ ընդ միշտ առնել կեանս յանձին իւրում. քանզի ասաց Տէրն. «Եթէ ոչ կերիջիք զմարմին Որդւոյ մարդոյ, եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս» Յովհ. Զ. 54. վասն այնորիկ պատուիրեաց ասելով «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի»։

Նոր դու ես միւսանգամ, զի ոչ պատուիրեաց միայն առնել, այլ՝ զայն առնել. զի զոր ինքն արար, ոչ եթէ իբրեւ օրինակ ցուցանէր իւրում եկեղեցւոյ, որպէս յետ լուանալոյն զոտս աշակերտացն իւրոց՝ պատուիրեաց նոցա եւ ասէ, «Օրինակ մի ետու ես ձեզ, զի որպէս ես արարի՝ եւ դուք առնիջիք»․ Յովհ. ԺԳ. 15. Վասն որոյ եւ մեք առնեմք 'ի մէջ եկեղեցւոյ 'ի յիշատակ ծայրագոյն խոնարհութեան Նորա. քանզի զխորհուրդ Մարմնոյ եւ Արեան իւրոյ զոր արար՝ եւ պատուիրեաց առնել, ոչ թէ ըստ նմանու-

թեանն սոսկ առ 'ի յիշատակ, այլ փոխարէն զնոյն առ-
նել, վասն այնորիկ չասաց թէ արարէք, արասջիք, այլ
թէ՝ զայս արասջիք: Զի եթէ ասացեալ էր արարէք ա-
րասջիք, թերեւս օրինակ լինէր այն. և ասել, Զայս՝ որպէս
նախ ետու ձեզ, զի և դուք ըստ նմանութեան այնր
արասջիք առ իմոյ յիշատակի. և այնպէս Պատարագն
եկեղեցւոյ ոչ լինէր փոխարկութեամբ Ճշմարիտ մարմ-
նոյն և արեան Որդւոյն Աստուծոյ, այլ լինէր ըստ ան-
վաւէր արարողութեան աղանդաւորաց՝ զուրկ 'ի նմա
զօրութենէ՝ սոսկ յիշատակ: Բայց ասելովն զայս ա-
րասջիք, յայտնի կամեցաւ ասել թէ՝ Զայս մարմին և զայս
արիւն իմ զոր արարի, և զոր կերայք և արբէք, արասջիք
և դուք ուտել և ըմպել. որով և « Յիշատակ իմ
առնիցէք մինչև եկից ես միւսանգամ ». Հար:

Եւ ահա ըստ այնմ Աստուածային պատուիրանին
պաշտէ եկեղեցի սուրբ զխորհուրդն ահաւոր, որ
կատարի Հոգւով սրբով 'ի ձեռս քահանային. զի ոչ
քահանայն տիրապէս կատարիչ այնր խորհրդոյ, այլ
սպասաւոր խորհրդոյն կարգեալ 'ի Քրիստոսէ. զի փո-
խանորդաբար ասասցէ զբանն էական: Վասն զի Քրի-
ստոս է որ տիրապէս փոխարկէ զհացն 'ի մարմին և
զբաժակն յարիւն իւր՝ գործակցութեամբ համագոյ
կից Հոգւոյ կենդանարարին. անդ երեւութաբար իւ-
րըն խոկութեամբ, և աստ աներեւութաբար նոյն իւ-
րըն էութեամբ: Վասն այնորիկ յառաջ քան զփո-
խարկութիւնն գեղեցիկ խորհրդով երգեմք ասելով
« Քրիստոս 'ի մէջ մեր յայտնեցաւ. որ էնն Աստուած
աստ բազմեցաւ »: զի յանուն նորա ժողովեալ Ող-
ջունեմք զմիմեանս 'ի համբոյր սիրոյ և խաղաղութեան
որով յայտնեալ լինի Քրիստոս 'ի միջի մերում, անե-
րեւութապէս բազմեալ 'ի վերայ սրբոյ Սեղանոյն՝ առ
'ի կատարել զառաջակայ զխորհուրդ սուրբ Հաղոր-
դութեան. զի Քրիստոս մատուցանէ անդ Պատա-

ող ձև « Պատարագ. Քրիստոս մատչի. Գառն Աստուծոյ. Բնոյց. որք « Զանձինս առ իմաստունս ունէին »։ Հռոմ. Ա. 22. յայնմիկ ևս ուղիղ համարեցան ըն-կենուլ « Քրիստոս ՚ի մէջ մեր յայտնեսցի, որ էին ծածուած աստ բազմեցի »։ Եւ ոչ միայն ՚ի պատա-րագամատոյց գիրս համարձակեցան, այլ և դպրոցա-ցն վարդապետք նոցին՝ զբանս ոմանս հոգևնուա-կարականին փոփոխել յանդգնեցան. որոց եթէ չէր շնորհ իւրեք հասանել ՚ի վերայ հայր ումն աստուածա-ւոյն, փոքր մի ևս զՀարականն ունէին իբրև զխե-ղաստակս իւրեանց՝ անարգ խառնարան. այլ մեք զ՚ի նախնի Հարցն սրբոց որպէս ընկալաք, պա-հեք զնոյն մինչև ՚ի վախճան անփոփոխ՝ և առանց ինչ յաւելլոյ կամ յապաւելոյ ունել։

Մեծ են այս պարծանք արդարև Հայաստանեայց եկեղեցւոյ, որ ոչ յանձն առնու երբէք՝ թէ և աղքա-տա և ուղիղ վարդապետութեամբ՝ յաւելուլ զմա-ծին այն Լատինաց ՚ի Նիկիական հանգանակին. զի տա է յաղօթամատոյց գիրս և յեկեղեցական եր-գարանութիւնս իւր համաձայն ընդհանրական եկե-ղեցւոյ դաւանիլ զսուրբ Հոգին՝ « Հոգի Հօր և Որ-դւոյ »։ զի ուսեալ է ՚ի սրբոց Լուսաւորչէն իւրմէ այն բարձրագոյն աստուածաբանութիւն, « Հայր ծնանէ՝ Որդի ՚ի Հօրէ՝ Հոգին սուրբ ՚ի նոցունց ութենէ »։ և ուրեք նաև « Ի նոցունց և ՚ի նոսին »։ Եւ առ պարզութիւն բանիս դեղեցիկ է օրինակն՝ զոր ցուցանէ մերս Շնորհալին ՚ի գիրս Յիսուս որդին, ըստ նմին օրինակի ունիմք զմիտս մեր իբրև ջուր աղբիւր և պայծառ՝ հանդէպ Երրեակ և մի անքա-նելի բնութին Աստուածութեան. արդ հաւատամք. բխեալ լոյս՝ ՚ի ջուր ծագեալ. և լոյս Որդին՝ ՚ի լուսոյ ծառագայթ ներգործեալ. և լոյս Հո-

գին որ 'ի Հօրէ ելանէ՝ 'ի ճառագայթէ անձանց ծաւալ առեալ. վասն այնորիկ երգէ մեզս Եկեղեցին. «Նոյն և նման Հօր և Որդւոյ, Հոգիդ անեղ և համագոյ. բղխումն Հօր անքննաբար, առեալ յՈրդւոյ անճառաբար»: Շար. այլ մի երկարեսցուք և մեք բացուք ժամանակաճառ, դարձցուք վաղվաղակի 'ի նախադասակ մեր:

Արդ՝ յուսամ, զի Աստուածագործութիւնն այն 'ի սուրբ Վերնատան՝ չէր օրինականն, և ոչ փոխարինական կամ վարկողական. քանզի ոչ ասաց Քրիստոս՝ թէ զայս հաց կերէք, և զայս բաժակ արբէք փոխանակ Մարմնոյ և Արեան իմոյ. կամ թէ զայս հաց և բաժակ համարեսջիք ձեզ իբրև մարմին և արիւն իմ: Ըստ որում յետ ջրհեղեղին՝ յորժամ մարդիկն չէին սովոր տակաւին զմիս ուտել, այլ պտուղք և բանջարք կերակրէին, հրաման ետ Տէր ուտել զմիս անասնոց որոց աւանց խղճի. վասն որոյ ասէր՝ «Իբրև զբանջար խոտոյ ետու ձեզ զամենայն»: Ծննդ. Թ. 3. յայնմհետէ սկսան ուտել զմիս առանց խղճի՝ որպէս ուտէին զբերս երկրի. և ոչ թէ միայն նշանայս իսկապէս բանջար խոտոյ: Բայց 'ի Վերնատան խորհրդոյ՝ ոչ եղև այնպէս. զի այն ինչ ասաց Յիսուս վասն հացին՝ թէ այս է մարմին իմ, և վասն բաժակին՝ թէ այս է արիւն իմ, ոչ մնաց անդէն ինչ վասն անուն կամ փոխանակի. այլ եղև ճշմարիտ մարմին և արիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Յորժամ տեսանէին Հրէայք՝ զի 'ի ձեռն Յիսուսի խուլն լսէր և համրն խօսէր, զարմացեալ ասէին թէ «Այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք»: Մարկ. Բ. 12. և եթէ մեծ հրաշք էին առաջի մարդկան՝ խլից լսել և համրոց խօսել, իսկ այս անլուր և անքննական հրաշագործութիւն, այն է՝ հացին և գի-

նմին Տէրունականութեան կենդանւոյ մարմնոյն և արեան լինել՝ զինչ երևեցաւ։

Ընծայեալ Մովսէս գիտել զանունն Աստուծոյ, զոր մտածէր զհարցումն ժողովրդեան Իսրայելի և ասէր. «Հարցանիցեն զիս՝ թէ զի՞նչ է անուն նորա. զի՞նչ ասացից ցնոսա. Եւ ասէ Աստուած ցՄովսէս, Ես եմ Աստուած որ էնն»։ Ելք. Գ. 13, 14։ Նմին աստուածահնչմանն. Նմին ահաւոր և անսահման ընդ բերան ժողովրդեան հնչոյն Իսրայելի. բայց 'ի մեզ՝ Անուամբ Աստուծոյ մարդացելոյ և ընդ մարդկան բնակեցելոյ՝ օրհնաբանեալ ընդ բերան ժողովրդեան Նորոյս Իսրայելի։ Մի անհնարին մարդասիրութեան. Յանձնեալ որ էնն մերձաւորեալ 'ի բարեկերպեան հրաւէրն 'ի յաւիտենական փառաց, 'ի հինգերորդում աւուր մեծի Զատկին՝ ընդ աշակերտսն բազմեալ 'ի վերնատան խորհրդոյ, առեալ 'ի ձեռս հաց և բաժակ՝ կենդանի մարմնոյն իւրոյ փոխարկէ և փրկութիւն հրաշագործէ, որում ցանկայր 'ի սկզբանէ. բանիւք ասէր, «Ցանկալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ՝ մինչ չև չարչարեալ իցեմ»։ Ղուկ. ԻԲ. 15։

Որդի՝ որոյ Անունն էական անլուր և անսահմանելի. նորին և յայս խորհուրդ Բանն էական՝ անլուր և անճառելի. զի ոչ ոք 'ի յաւիտենից կոչեցաւ որ էնն, բայց միայն Աստուած. և ոչ միտք ուրուք խորհեցաւ կարգել այսպէս անօրինակ սեղան խորհրդոյ, բայց միայն որ էնն Աստուած, վասն զի աշակերտաց իւրոց հաց մատուցանէ՝ և ասէ թէ մարմին իմ է. Բաժակ մատուցանէ՝ և ասէ թէ արիւն իմ է։ Իսկ զհացն կարող լինել, և կամ զգինին կարէ նոյնն համարել զմինչ. վասն զի Աստուած է գործողն, Աստուածային է գործն, և Աստուածապէս գործողութիւնն, զոր յանուն խոստացաւ 'ի ժողովրդեանն մինչ ու-

նէր 'ի կափառնայում. ուր ասէր թէ՝ « Հացն զոր ես տաց՝ մարմին իմ է ». Յովհ. Զ. ԾԲ.

Տես՝ թէ խոստմամբն այն որ 'ի կափառնայում, որպէս հաստատէ զհաւատս մեր 'ի խորհուրդն ահաւոր. զի վասն հացին ասէր թէ՝ « Զոր ես տաց », և ոչ ասէր թէ տամ. զի չէր անդանօր ներկայապէս հաց 'ի ձեռս առեալ. այլ զոր կամէր տալ յետ ակաւուց, զայն խոստանայր: Իբրու կամէր ասել թէ՝ 'ի ժամանակի յորժամ բաշխիցիմ յԸնթրիս խորհրդոյ իմոյ, անդ տալոց եմ զՀացն զայն. վասն այնորիկ ասէր « Հացն զոր ես տաց ». իսկ վասն էութեան խորհրդոյն որ է մարմին իւր, զայն ներկայապէս ցուցանէր յասելն « Մարմին իմ է ». վասն զի որ էն Մարմին եղեալ, այն իսկ էր ներկայապէս « Հացն կենդանի, որ յերկնից իջեալ ». Յովհ. Զ. ԾԲ.

Ասիցես. ապաքէն մարմինն Քրիստոսի հաց էր առեալ և արիւնն բաժակ ըմպելի: Պատասխանեմ. որպէս 'ի վեր անդր ցուցաւ 'ի բանի փոխաբերութե, նոյնն իմա և յայսմիկ բանի էութեան. զի ոչ նմանութեամբ ինչ կամ յարմարութեամբ փոխանակ հացին կերակրոյ և բաժակին ըմպելւոյ, այլ ճշմարիտ կերակուր և ճշմարիտ ըմպելի. որպէս ինքն ասէ. « Զի մարմին իմ՝ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ՝ ճշմարիտ ըմպելի է ». Անդ. Զ. ԾԶ. զորմէ ճշմարիտ ասելով՝ 'ի նմանութենէ կամ 'ի փոխանակութենէ ամենևին անմասն և անբաժին ցուցանէ.

Թէրևս պնդիցէ նորաղանդն՝ զայդ ինձ յայլաբանական միտս իմանալ ըստ հակառակ ոգւոց խարեանց. բերեալ ընդ առաջ՝ թէ այլ ուրեք ասէ Յիսուս զանձնէ իւրմէ « Ես եմ որթն ճշմարիտ՝ և Հայր իմ մշակ է ». Յովհ. ԺԵ. 1. որ թէպէտ ճշմարիտ որթն եմ՝ ասէ, բայց պարզ է յայլաբանական միտս իմանալ: Պատասխանեմ. յայսմիկ ճշմարտութեան ա-

գիտողի՝ անհնարին միայն զնոյն թեթեւութեան. որ է աղօթն նմանու- Թեան ատեան, որ չէ կարգեալ 'ի կիրառութիւն- նականաց կամ ընկալեալ։ Եւ յԱՅՆ 'ի Հաղորդութեան՝ և՛ յառաջիկն մարմին և՛ յերկրորդ մարմին՝ ճշմարիտն է- մայեալ ըստն 'ի մերում նիւթոյ և կիրառութեանց նա- գինս. որպէս Թէ ասէր, մարմին իմ է ճշմարիտ հաց՝, որ ձեզ ճշմարիտ կերակուր. և արիւն իմ ճշմարիտ ըմպելի՝ որ ձեզ ճշմարիտ ըմպելի. նա մանաւանդ՝ յայտ է այն ըմպել նմանութեան 'ի բանից անտի, զոր Յիսուս յարէ զկնի՝ ասելով աշակերտաց իւրոց, «Որ կեր զիմ՝ և զուր ա.ա. որ հաստատեալ է յիս՝ և ես 'ի նմա, նա բերէ պտուղ յոյժ ո. Յովհ. ԺԵ. 5. Ըստ որպէս բան յարմարութեան բանին իւրոյ զՀայր իւր կենդանի անուանէ՝ և զաշակերտսն ա.ա., նոյնպէս և զինքն յարմարութեամբ որթ անուանէ. ուր ճշմա- րտն ասելով զհոգեւորեցոյց վարդապետութիւնս իւր իմաստն աշակերտաց իւրոց յոյժ արդասաւոր ընդել- ցանկ. Ակնոյն 'ի խորհուրդ սրբոյ Հաղորդութե՝ ս Հացն և Բաժակն՝ Եւկան բանին է զոյացա- ցուց մարմին և արիւն իւր, ճշմարիտ կերակուր՝ և ճըշ- մարիտ ըմպելի, նոյնպէս և Եւկան բանին իւրով որթին և արիւն իւր հաղորդաւորաց ճշմարիտ կերակուր՝ և ճշմարիտ ըմպելի. վասն որոյ ասէր, «Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է, և արիւն իմ ճշմարիտ ըմ- պելի է ո. Յովհ. Զ. 56.

Ասէ, Քրիստոս 'ի հաց փոխարկեալ։ Ստոյս ... Թեան հոգեւորական՝ ուսուցանէ զբերանն ... խոստովանիլ համարձակապէս՝ Թէ Քրիս- տոս է հաց կենդանի և կենդանարար. զի և Թո- ... Ադրիանոյ Մելքիսեդեկ քահանայ յընծայել ... Աբրահամու հօրն հաւատոյ՝ անդուստ 'ի հե- ռաւոր ժամուց անտի՝ հացին և գինւոյն այնորիկ ... ճշմարտութիւնն ցուցանէր, Ծննդ. ԺԴ. 18.

նա և մարգարէքն տեսանելով զայս՝ ընդ տեսակաւ Առաջաւորութեան հացին խորհրդաբար գուշակէին։ Այս ընդէ՞ր է ինձ վասն ճշմարտութեանս այսորիկ ընդ հեռաւորս շրջիլ տատանիլ. Տէրն մեր յայնժամ յընթրիս խորհրդոյն իւրոյ՝ որով բանիւ փոխարկեաց զբհացն 'ի մարմին իւր. ո՞չ ապաքէն այս է մարմին իմ ասելով. և ահա նոյն Եղական բան էր անդրադարձաբար՝ զոր յառաջն ասաց 'ի Կափառնայում, „Այս եմ հացն կենաց ", Յովհ. Զ. 48. որ ոչ ըստ տեսութեանն տեսակաց, Մարմնոյ և Արեան իւրոյ, և ոչ ըստ տեսութեանն տեսակաց Հացին և Բաժակին, այլ ըստ էութեանն անճառելի խորհրդոյն՝ Քրիստոս Աստուած է ճշմարիտ Հաց կենդանի, և հաց և բաժակն Աստուածագործեալ՝ ճշմարիտ մարմին և արիւն կենդանի. վասն զի զօրութիւն Աստուածախօս բանին այնորիկ՝ ոչ միայն 'ի կողմանէ աստի գոյացութեան հացին և բաժակին առ մարմին և յարիւն Քրիստոսի հաւատալ տեսանի, այլ և 'ի կողմանէ անտի անճառելի Հաղորդութեան Մարմնոյ և Արեան նորա՝ առ հաց և 'ի բաժակն Աստուածագործեալ։

Այս խոստովանութիւն ուղղափառաց՝ է դիտ[illegible] սքանչելի. որոյ յերկուց ծայրից ևս եթէ հայեսցիս լուսաւոր հաւատոյ ակամբ, միապէս մերձեցուցանէ տեսողութեան քո զերևոյթ հեռաւոր նպատակին. և յայտնապէս ցուցանէ՝ թէ Քրիստոսն Յիսուս որ յերկինս ընդ աջմէ Հօր՝ նոյն ինքն Աստուածագործ փոխարկութեամբ անճառելի խորհրդոյն իւրոյ՝ է և ընդ մեզ կաթուղիկէ եկեղեցւոյ. „Որ մատուցեալ միշտ՝ և անպակաս մնայ 'ի լրութեան, յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութեամբ, բոլոր յամենեսին՝ և բնաւ յամենայնում էութեամբ յերկինս՝ և իսկութեամբ 'ի սորին աննուազ մարդկութեամբ՝ և անթերի Աստուածա

...տամբ. փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս անհատս, զի ...ամենայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլը-...յ ն. Նար. ԽԷ:

Այսպէս աստուածիմաստ մերս Նարեկեան սրբա-ւէր ազօթից՝ դիւրաւ բացատրի դաւանութիւն եկեղեցւոյ 'ի սքանչելի խորհուրդ սրբոյ Հաղորդու-թեան. զի Տէրն մեր՝ որ յերկինս յաթոռ իւրում, ...ն ինքն 'ի Տաճար սուրբ իւրում միշտ պատարա-...ի անապառութեամբ. և յիւրաքանչիւր 'ի փշրեալ մասունս ահաւոր խորհրդոյն՝ է իսկապէս բոլոր ...դկութեամբն և համայն Աստուածութեամբն: ...քեմն մասն ինչ Աստուածագործեալ Հացին և Բա-...ժակին՝ ոչ թէ մասն ինչ է Մարմնոյ և Արեանն Քը-...իստոսի, այլ ամբողջապէս բոլոր մարմին և արիւն նորա. ...որպէս 'ի պատարագել քահանային փոքրիկ հաց ...սակաւ բաժակ՝ փոխարկելով Հոգւոյն սրբոյ գոյ-...ւոյ ամբողջ մարմին և արիւն Քրիստոսի, նոյնպէս և ... տեսակին փշրեալ փոքրագոյն մասն Աստուածա-...գործեալ Հացին և սակաւագոյն հիւթոյ Բաժակին փոխարկեալ գոյացութիւնն անփշրելի գոլով 'ի նո-...ն՝ է ամբողջ մարմին և արիւն Որդւոյն Աստուծոյ. որ ...հաղորդելովն հաւաքէ իբրև զանդամս զեկեղեցի իւր ...ւ ինքն՝ իբր 'ի գլուխ Եկեղեցւոյ:

## Յաղագս՝ թէ Քրիստոս է գլուխ Եկեղեցւոյ, և ոչ Պետրոս:

Քանզի ընդհանրական Եկեղեցի այնու հաղոր-...դութեամբ է խորհրդական անդամ միայնոյ Գլխոյն ...րոյ Քրիստոսի. և Գլուխն այն՝ որ է կերպարանն ...Աստուծոյ Հօր, «Ոչինչ յափշտակութիւն համարե-...ցաւ զլինելն հաւասար Աստուծոյ. Այլ զանձն ունայ-...նացոյց, զկերպարանս ծառայի առեալ՝ 'ի նմանութիւն

մարդկան եղեալ, և կերպարանաւ գտեալ իբրև զմարդ. խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի. Վասն որոյ և Աստուած զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն անուն ։։ Փիլիպ. Բ. 6–9։ Իսկ մի անուն է այն ՚ի վեր քան զամենայն. շնորհեցեալ ՚ի բարձրելոյն Հօրէ Աստուծոյ՝ խոնարհեցելոյ Որդւոյն Աստուծոյ. ոչ լուաւ եկեղեցին յառաջ կացեալ, կանխեալ ՚ի մարմնացեալ Աստուածն բան՝ անուն վերագոյն քան զամենայն, բայց միայն անունն Գլխոյ անկեան. Թէպէտ և ՚ի մէջ հնոյ ստուերական եկեղեցւոյն զանազան անուանք յարմարութեամբ տացեալ լինէին ՚ի գուշակողաց զգալոց Մեսիային, որպիսիք են՝ Անեղութիւն հեթանոսաց, Հրեշտակ ուխտի, Հրեշտակ մեծի խորհրդոյ, Հայր հանդերձելոյ, Հովիւ եղեռաց, Պահապան Իսրայելի, և այլ բազում. այլ քան զամենայն ձեռնհասաւորագոյն է յառաջ պատկանեալ առ գալոց Մեսիային յանուն զանա ՚ի չարչարանս և ՚ի մահ, էր միայն սահմանեալ ՚ի Մարգարէէն Վէմ, Գլուխ անկեան, Սաղ. ճժէ. ԻԲ. զոր բացատրէ Առաքեալն ասելով, « Վէմն էր Քրիստոս ։։ Ա. Կորն. Ժ. 4։ Զորմէ և սուրբն Պետրոս Հոգւով սրբով լցեալ առանձնաբանէր առաջի իշխանաց ժողովրդեան և երիցանց Իսրայէլի. « Նա է վէմն անարգեալ ՚ի ձէնջ շինողաց, որ եղև Գլուխ անկեան. Եւ չիք այլով իւիք փրկութիւն. զի և ոչ անուն այլ գոյ ՚ի ներքոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ, որով արժան իցէ կեալ մեզ ։։ Գործ. Դ. 11, 12։

Բայց ՚ի մէջ նորայս ճշմարտութեան եկեղեցւոյ՝ Վէմն այն եղեալ Մեսիային կոչեցաւ Գլուխ եկեղեցւոյ. « Որով ունիմք զփրկութիւն Արեամբն նորա, և զթողութիւն մեղաց Մարմնովն նորա։ Որ է պատկեր աներևութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն

պարագածաց. Զի Նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի, որ երևին՝ և որ ոչն երևին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ. Եւ նա է յառաջ քան զամենայն, և ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ. Եւ նա է Գլուխ մարմնոյ եկեղեցւոյ ». Կող. Ա. 14—18: Եւ արդարև կոչեցաւ Գլուխ եկեղեցւոյ, վասն զի նա է Շինող, նա է Տէր, նա իշխան, նա փրկիչ և կեցուցիչ եկեղեցւոյ. և ամենայնն բովանդակի 'ի մի բան ասել՝ Գլուխ եկեղեցւոյ:

ԵՒ Թէպէտ սուրբն Պետրոս ևս ասացաւ գլուխ եկեղեցւոյ, բայց զանազանեալ այնչափ հեռաւորութեամբ՝ որչափ ընդ մէջ է Տեառն և ծառայի, ընդ մէջ Պաշտելւոյ և պաշտօղի, ընդ մէջ Դաւանելւոյ և դաւանողի, ընդ մէջ Երկրպագելւոյ և երկրպագողի, ընդ մէջ Աստուծոյ և մարդոյ՝ Արարչի և արարածոյ. որ է ասել՝ անհասանելի հեռաւորութեամբ: Զի յորժամ ասեմք զՔրիստոսէ Գլուխ եկեղեցւոյ, ասեմք տիրապէս և բացարձակապէս. որում անչափաբար հեռանի խորհրդական անդամ կաթուղիկէ եկեղեցի, որ է ժողովն ուղղափառ հաւատացելոց և մկրտեցելոց յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. որք և հաղորդին 'ի մարմին և յարիւնն տէրունական. Իսկ ասելով զՊետրոսէ գլուխ Առաքելոց, ոչ հեռանի թէ Առաքեալքն իցեն խորհրդական անդամք Պետրոսի. քանզի այնք ամենեքին Պետրոսիւ հանդերձ՝ են ամբողջ և լրացեալ անդամք միոյ Գլխոյն Քրիստոսի:

Այսպէս բառն Գլուխ եկեղեցւոյ՝ 'ի Քրիստոս և 'ի Պետրոս այնու զանազանի, զի 'ի Պետրոս է առնած յարգական և առակական. իսկ 'ի Քրիստոս՝

անուն իսկական և բուն Աստուածաբանական. վասն այնորիկ առանց ասելոյ զանունն Քրիստոս՝ միայն ասելով Գլուխ եկեղեցւոյ, նշանակէ զՔրիստոս՝ որ տիրապէս ինքնին է Գլուխ եկեղեցւոյ. զի է յատուկ անուն նմա, և անփոխադրելի ումեք յանդամոց նորա. վասն զի անդամն՝ որչափ և պատուականագոյն իցէ, բաց որում անդամ՝ չէ՛ գլուխ: Իսկ առանց բացայայտելոյ զանունն Պետրոս՝ ոչ կարեմք ասել գլուխ եկեղեցւոյ. այլ զոր ասեմք գլուխ Առաքելոց, է ասել գլխաւորն կամ առաջինն 'ի մէջ Առաքելոց. զի նա եղև առաջին դաւանող զՔրիստոսն Որդի Աստուծոյ, յորմէ կացուցաւ գլուխ և առաջնորդ. և վասն առաջնութեան հաւատոյ իւրոյ՝ անուանեցաւ Վէմ եկեղեցւոյ: Որպէս ասէ 'ի սրբազան Հարցն մերոց Շնորհալի վարդապետութեամբ ասէ. "Սրբոշեաց 'ի մարդկային անկարգ գնացից զընտրեալսն 'ի սկզբանէ, զորս և առաքեալս անուանեաց. և կացոյց նոցա գլուխ և առաջնորդ զերջանիկն Պետրոս: Եւ Պետրոս յորժամ ասեմ՝ զո՞ ասեմ, զայն՝ որ դաւանեաց զՈրդի 'ի բնութենէ Հօր. և մեծագունի երանութեան արժանաւոր եղև. Վէմ անուանեցաւ՝ և 'ի հիմունս եկեղեցւոյ եդաւ". Սարգիս Ձեռ:

Բայց Քրիստոս ինքնիշխան տէրութեամբ և հեղինակութեամբն իւրով է խորհրդական Գլուխ եկեղեցւոյ. ուստի ոչ պատկանի ասել զնմանէ գլխաւոր եկեղեցւոյ, զի գլխաւորն չէ՛ տիրապէս գլուխ. այլ պատկանի զՊետրոսէ՝ որ չէ՛ տիրապէս գլուխ, այլ վասն առաջնախօս լինելոյ 'ի դաւանութեն՝ եղև գլխաւոր և առաջին 'ի կարգի հիմանց շինութեանն եկեղեցւոյ. և ահա յայս միտ ճանաչի Պետրոս գլուխ եկեղեցւոյ: Սոյն առաջնութիւնն կամ գլխաւորութիւնն փոխադրելի է յաջորդաց իւրոց. և որ իրաւամբ յաջորդէ նմա, իրաւամբք ժառանգէ և զգլխա-

որական պատիւ նորա . վասն որոյ 'ի մէջ տիեզերա֊
ն ժողովոյն եկեղեցւոյ՝ նմա անկ է բազմիլ գա֊
հերէց . որ է « Աթոռ և առաջին ամենայն եպիսկո֊
պոսապետաց հայրապետան Հռովմայ և փոխանորդն
ետրոսի առաքելոյն ». Շնորհ . Ընդհ :

Իսկ եթէ յաջորդն այն հայելով 'ի գերակայ ժա֊
ռանգութիւն իւր՝ մեծամեծացի, և զանձն իւր իբրև
Աստուած՝ առանձին միշտ անսխալ ծանիցէ, որպէս
արաղէն 'ի մերոց անտի հակառակորդք մեր, չգի֊
տեմ՝ յորում կարգի հարկ լինի մեզ ապա զնա ճա֊
նաչել : Այլ կամ եթէ ձեռն արկանիցէ կորզել՝ և յինքն
միոփել զքահանայապետական իրաւասութիւնս և
հովուապետական արտօնութիւս այլոց ազգացն Առա֊
քելադիր Եպիսկոպոսապետաց, յայտնի անիրաւի և
ծնապէս մեղանչէ . և զծայրագոյն քահանայապե֊
տութիւն իւր՝ հպարտացեալ փոխէ 'ի ծայրագոյն
ռնաւորութիւն . քանզի երջանիկն Պետրոս իւրով
ով Առաքելական գլխաւորութեամբ՝ ոչ կամեցաւ
րբէք յինքն կորզել զԱռաքելական արտօնութիւնս
լոց Մետասանից . և ոչ իսկ կարող էր կորզել . զի
մենեքին նոքա ոչ թէ 'ի Պետրոսէ ընկալան զԱռա֊
քելական իշխանութիւնս իւրեանց, այլ անմիջապէս
Քրիստոսէ՝ քարոզել զհաւատս, աշակերտել զհե֊
թանոսս, կապել և արձակել, և բացարձակապէս
վուել զբանաւոր հօտն Քրիստոսի և ածել 'ի փա֊
ռս արքայութեանն Աստուծոյ : Այլ որք անմիջապէս
ձեռնադրեալք էին 'ի Քրիստոսէ, ինքեանք միջաբար
ձեռնադրէին իւրաքանչիւր 'ի վիճակս յաթոռ իւ֊
րեանց՝ զո՛ և արժան տեսանէին . և ահա այնու սահ֊
մանադրութեամբ և անընդհատ յաջորդութեամբ
նին ձեռնադրութիւնք 'ի մէջ Առաքելական եկե֊
ղեցւոյ, զոր շինեաց Քրիստոս 'ի վերայ հաւատոյ վէ֊
ն Պետրոսի՝ անյաղթելի 'ի դրանց դժոխոց :

Իւ արգասիւ ’ի սկզբանէ անտի շինութեանն[ս]
քա՛ հետզհետէ երևեցան չարափառք և անհաւատքն
որք իբրև զգազանս գձոխոց բացին զբերանս իւրեանց
’ի վերայ սուրբ Եկեղեցւոյ. բայց ոչ կարացին երբեք
նոյնպէս և ոչ նորաղանդք կարեն՝ և ոչ կարասցեն եր-
բէք յաղթահարել զնա. վասն զի Գլուխ նորա Ք-
րիստոս է, զոր երիցս անգամ փորձեաց սատանայն, և
երիցս խայտառակեցաւ առաջի նորա ։ Այլ ’ի ժամա-
նութեանն գիշերի՝ յորժամ առաքեալքն զնա մերկ ան-
կեալ ’ի տագնապ երկիւղի չարչարանաց և մահու-
համարձակեալ մերձենայր ’ի նա՝ և ուրանէր չարաչարագոյն,
կարծելով արատ ինչ մեղաց ’ի նմա գտանել. զոր ա-
սաց Տէրն, « Գայ իշխան աշխարհիս այսորիկ, և յիս
ինչ ոչ գտանէ »։ Յովհ. ԺԴ. 30։

Ոչ ինչ գտանէր ’ի նմա չուառեալք և թշուառա-
ցեալք սատանայ. մի թէ զվէմն Պետրոս կարծեցեր,
զոր երբեմն կամէիր խորտակել իբրև զցորեան մաղելով,
’ի գիշերին յայնմիկ դիւրաւ շարժեցաւ յերկիւղէ
աղջկանն ’ի գաւիթ քահանայապետին, և երիցս ու-
րացաւ զՏէրն մինչև նշանակեալ հաւն խօսեցաւ ։
Այլ այս է Վէմն անշարժելի՝ անխախտելի՝ վասն զի
հաւատալի և երկրպագելի, որ մարդկութեամբն իւ-
րով աշխարհի յաղթեաց. և զիշխանն աշխարհիս դա-
տապարտեաց, և զամենայն զօրութիւնս քո խաւա-
խորտակեաց Վէմն երկնաւոր՝ վէմն կենդանի՝ « զը-
լուխ անկեան պատուական, և որ ’ի նա հաւատայ-
ցէ՝ մի ամաչեսցէ »։ Ա. Պետ. Բ. 6։

Այլ սկզբնաչարն սատանայ՝ որ հանապազ խնդրէ
հնարս քակտելոյ զմիաբանութիւն եկեղեցւոյ՝ կամե-
լով կործանել զնա, թէպէտ բազմիցս անգամ կը-
րեաց զաղեղն իւր և զնետս իւր վիրաւորելոց ։ Թէ-
[illegible]ս « Ի տանէն զչարին բուսուցանէր. և զվերջի-
րանին՝ քակտիչս և բաժանիչս առաքէր ։

մէ. Ափ. բայց ոչ կարաց որպէս կամէրն յաղթա-
հարել. վասն այնորիկ կարեւոր վարկաւ առժամանակ
փոխել զարուեստ չարութեան իւրոյ, և կեղծա-
ւորեալ ցուցանէր զինքն իբրու նախանձախնդիր ե-
կեղեցւոյ, և այնպէս զոմանս յանմտաց անտի հրա-
ւիրեաց, և խրատեաց զնոսա այնչափ աղզատեաց
ել՝ մինչև զհայրենի լեզու ժողովրդեան մերոյ ջա-
ջին խափանել։ Նաև որ առաւել ողբալի է
սոսկալի լսելեաց, զուղղափառ եկեղեցին Հայաս-
տանեայց առաջի քահանայապետին Հռոմայ Եւտի-
քեան հերետիկոս համբաւել. որ և նա հաւատա-
լ բանից նոցին՝ առանց քննելոյ զԼուսաւորչական
ւանութիւն մեր, ձեռնտու և զօրավիգն լինէր
ցա՝ արկանել հերձուած ՚ի մէջ ազգին։ Որք թէ
ևիւ և թէ գրով՝ խռովեցուցին զանկարծն և բա-
ժանեցին ՚ի մէնջ, ասելով թէ՝ որ ոչն է պապական,
ոփոսական է, զի պարտ է քրիստոնէին հաւատալ ՚ի
պն Հռոմայ. որ յաջորդ գոլով Պետրոսի առա-
քելոյ գլխոյն եկեղեցւոյ, նա է գլուխ եկեղեցւոյ.
որ ոչն հաւատայ ՚ի Պապն՝ է արտաքոյ եկեղեցւոյ,
ր չէք փրկութիւն. զի ոչ կարեն արձակիլ ՚ի կա-
պանաց՝ և ոչ ունին թողութիւն մեղաց։

Տեառնէ՞ս, թէ ո՛րպէս տայ իմանալ բանսարկուն
ն Գլուխ եկեղեցւոյ՝ որ զՊետրոսէ ասացեալ,
ինչև հաւատարել զնա և զյաջորդս նորա Գլխոյն
Աստուծոյն եկեղեցւոյ. և որ սոսկումն բերէ լսե-
աց, դաւանիլ զնոսա՝ անսխալ որպէս զԱստուած։
ցեալ անմիտ, յումմէ՞ ուսար զմարդ առանձին՝
է և իցէ քահանայապետ, անսխալ լինել. եթէ ՚ի
ութեննէն Պետրոսի զայդ յառաջ բերես, ո՞չ
քէն և նա առանց ընդհանուր միաբանութեան
եղեցւոյն՝ ինքնին սխալական էր, վասն զի մարդ էր։
. զի ոչ ասաց Տէրն ցՊետրոս՝ թէ դու ես գլ-

ժողովոց զքեզ մի յաղթահարեսցեն, այլ վասն եկեղե-
ցւոյն ասաց՝ թէ դրունք դժոխոց զնա մի յաղթա-
հարեսցեն. որ է մի միայն կաթուղիկէ և Առաքելա-
կան սուրբ Եկեղեցի. զոր շինեաց Քրիստոս արդեամբ
չարչարանաց իւրոց 'ի վերայ վիմին բանի. Վէմն
երկնաւոր՝ վէմն կենդանի՝ «գլուխ անկեան պատ-
ուականի, և որ 'ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ»։
Ա. Պետ. Բ. 6: Վասն որոյ և մեք հաւատամք 'ի վէմն
յայն 'ի Գլուխ անկեան, յոր և Պետրոս հաւատաց.
որպէս գրէ ոմն 'ի սրբազան Հարց արևմտեան եկե-
ղեցւոյ, «Այլ մեք որ քրիստոնեայքս եմք և կոչիմք,
ոչ 'ի Պետրոս հաւատամք. այլ յայն՝ յոր Պետրոսն
հաւատաց, շինեալք Պետրոսի բանիւն որ զՔրիս-
տոսէ»։

Այս ահա այն հաւատոյն և երկրպագելի Գլխոյն
անյաղթելի և անսխալելի եկեղեցւոյն իւրոյ՝ որպէս
ասացաւ, Շինող է նորա, և Տէր է նորա, Իշխան և
Փրկիչ և կեցուցիչ է նորա. վասն այնորիկ յառաջ է
Քրիստոսի որպէս անուն Գլուխ եկեղեցւոյ, որ է
ասել՝ Աստուած եկեղեցւոյ. «Զի 'ի նմա բնակէ ա-
մենայն լրումն Աստուածութեանն մարմնապէս»։ Կող. Բ. Թ։
'Ի մին իրի եկեղեցի հնազանդ է Գլխոյ իւրում յամե-
նայնի. զի նոյն է ասելն՝ Գլուխ իմ Յիսուս, և նոյն
է ասելն՝ Աստուած իմ Յիսուս. որպէս սուրբն Յով-
հաննէս 'ի հանդատեան իւրում ասէր, «Ի վեր է քան
զամենայն ասելի և իմանալի անուն՝ Աստուած իմ
Յիսուս»։ Նր. Ըռ. Եղէ։

Հուսկ ուրեմն ասեմ. սուրբն Պետրոս ասացաւ
գլուխ կամ գլխաւոր եկեղեցւոյ՝ ըստ որում ծայրա-
գոյն անդամ եկեղեցւոյ. բայց Քրիստոս է Գլուխ ե-
կեղեցւոյ՝ ըստ որում Աստուած եկեղեցւոյ, և ոչ թէ
գլխաւորն եկեղեցւոյ Պետրոս. այլ Գլուխն եկեղեցւոյ
Քրիստոս՝ խորհրդով Աստուածաբանեալ Հաղորդա-

Միեան խաղոյ զանդամս իւր զեկեղեցի յինքն հաւաքէ. վասն այնորիկ «Յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի, երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր է Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր»: Փիլիպ. Բ. 10, 11:

Դարձեալ 'ի վերայ խորհրդոյ Հաղորդութեան:

Արդ՝ որպէս Հայրն մի Հայր՝ միայնոյ Որդւոյ, նոյնպէս և Որդին մի գլուխ՝ միայնոյ եկեղեցւոյ. և ունի Քրիստոս զայլ խորհրդական անդամս, բայց միայն զեկեղեցի՝ ըստ որում եկեղեցի: Եկեղեցին ևս ունի զայլ խորհրդական գլուխ, բայց միայն զՔրիստոս՝ ըստ որում Գլուխ եկեղեցւոյ. առ որ հաւաքին անդամք ըստ քաւթեան՝ Հաղորդութեամբ կենդանարար Մարմնոյ և Արեան իւրոյ, որ է Աստուածահրաշ մեծագործութիւն, կամ մեծահրաշ Աստուածագործութիւն անլուր և անօրինակ: Հնչեսցուք ուրեմն 'ի լսելիս ամենեցուն զայն Աստուածուսոյց բան, զոր գրեաց ոմն վահանակիր քաջամարտիկ աստուածաբան. «Ոչ այս այն է՝ զորմէ ասէին թէ մասն Աստուծոյ լիցէ, այլ այս այն է՝ որ 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ»:

Իսկ արդ՝ անկարելի է մեզ ճառել զգերազանցութիւն սուրբ Պատարագին: Առցուք 'ի խորհրդաւոր արարողութեանց պաշտաման նորին սուղ ինչ ինչ բան արկանել, որք առհասարակ հոգևորական կայծակաւ շարժեն զսիրտս հաւատացելոց 'ի զղջումն մեղաց՝ և յակնկալութիւն սրբարար շնորհաց. որով արժանիք լինին մատչել 'ի ճաշակումն անմահական Հացին և Բաժակին: Այլ զի մի երկարեսցին բանք մեր 'ի սմին, առցուք զբանս և զարարողութիւնս

որ զկնի Հայր Մերին, յորժամ քահանայն զխորհրդական-
դըն ահաւոր 'ի տես ժողովրդեան վերամբարձեալ ասէ
բարձրաձայն՝ Ի Սրբոյն Հոգւոյ. յայնժամ ժողովուր-
դըն՝ որ խոստովանութեամբ և ապաշխարութեամբ
պատրաստ է մատչիլ 'ի սուրբ Հաղորդութիւն, 'ի
լսել յեղակարծումն զայն անկարծելի ձայն՝ յանկարծ
այլ յայլմէ եղեալ անկանի 'ի տագնապ անհնարին,
որպէս զի 'ի յուսոյն իւրմէ 'ի դերև ելանիցէ. քանզի
անդստին իսկոյն 'ի միտս իւր եկեալ՝ խորախոյս այս
անձին, և յայլ կերպ զինքն քաջալերէ վերստին։ Ա-
պա ոչ իբրև լալագին աղաչաւոր, այլ գոգցես իբրև
ընդգրկելի սիրուն բռնաւոր՝ մտանէ 'ի պայքար ընդ
պատարագչին. վասն որոյ փոխեալ զձայն իւր անդ ա-
նօր կրիւք տագնապին, յարտասուս հարեալ աղա-
ղակէ սրտիւ զպայրագին, գոչէ բարձրաձայն զաղօթն
և զիրաւացին. «Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս
Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ Հօր»։

Եւ այնու բարձրաձայն գոչմամբ՝ զկիրս իւր յայտ-
նելով կամի ասել, Ո՛վ սրբազան Պատարագիչ. մեք
մեղաւորքս մտեալ յայս յարկ սրբութեան 'ի մեր
Քաւարան, գիտեմք՝ զի ոչ կարեմք մեզէն արժանի
լինել սրբոյ Հաղորդութեան. այլ ապաւինեալ յո-
ղորմութիւն Բարձրելոյն՝ կացեալ յանդիման սուրբ
Պատարագիս, ակնկալեալ սպասեմք՝ զի արժանաւո-
րացն աղօթակցութեամբ մերձեսցուք յայդ 'ի սե-
ղան անմահութեան, զի Արիւն Որդւոյն Աստուծոյ
սրբեսցէ զմեզ 'ի մեղաց. զի նա է՝ ոչ միայն ըստ ար-
դարութեանն Աստուծոյ Սրբոյն Հոգւոյ, այլ և ըստ
մեծի ողորմութեան Նորա՝ «Կեանք, յոյս, յարութիւն,
քաւութիւն, և թողութիւն մեղաց»։ զի եթէ մեք
[...]ղէն սուրբ լինել կարող էաք, ապա քաւութեան
[...]ողութեան անկարօտ լինէաք։ Իսկ դու ասելով
[...]ն Հոգւոյ, արգելուս զմեզ 'ի Հաղորդութենէ

պատգամօք եւ Արքայն փրկչին մերոյ. մի թէ յայս հա-
բանից եւ փառաւոր սրտից մերոց զուր եւ ունայն եղիցի.
եւ այն ինչ մեք յուսով ունէին դիր լինել, եւ հայիլ
ՅՍրբութիւնն յայն զաչս 'ի վեր ամբառնալ՝ վստահ
սիրտ զմեզ զուարթարար քարոզն Պօղոսի, դու-
ընտանեկունելին առ մեզ որոտայցէր ձայնն սարսափելի
ի Աբրահամեան որբոյ, ո՞ն անդր քան զլոյս մեր. քանզի
եղ ոք իցէ ինքնին սուրբ՝ որում այդ ահաւոր խոր-
հուրդ՝ իցէ Սրբութիւն։ Ո՛չ եւ մեք իբրեւ զհրեշտակս
սուրբ եւ անարատ լինէաք, ո՛չ առաքէն նոքին իսկ եւս
եւ ոչ յօրինակ սորին կարէին անձամբ մերձենալ. ուս-
տի եւ Սերովբէն ունելեօք առեալ 'ի կայծականց ան-
տի նուիրեցելոյ, Եսայ. Զ. 6. մատուցանէր 'ի բերան
Մարգարէին. իսկ մեք հողեղէնքս եւ մեղուցեալքս՝
զիա՞րդ կարասցուք մերձենալ 'ի ճշմարիտն օրինակին։
Եւ զի՞նչ ասա. զրկիցի՞մք ուրեմն խրատ 'ի Սրբու-
թենէ այսր Աստուածային Հաղորդութեան։ Զի ոչ
ոք է, որ յինքենէ սրբութեամբ արժանանայ հաղոր-
դիլ, բայց եթէ սրբարար շնորհօք Հոգւոյն սրբոյ.
եւ ոչ ոք ինքնին է սուրբ, բայց "Միայն սուրբ, մի-
այն Տէր, Յիսուս Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ Հօր"։
Արդ՝ զի՞նչ մնայ մեզ առնել. որք միանգամ մի-
տեալ եմք յայս Աստուածային խորան, ուր տեսա-
նեմք զանմահ Թագաւորն փառաց բացեալ զիւր ան-
սպառելի գանձարան, կարօտեալքս եւ տառապեալքս
ունայն եւ դատարկաձե՞ռն ելանիցեմք, ո՛չ բնաւ. ա-
մենեւի՞ն այդ մեզ անհնար։ Կենդանի է Տէր՝ թէ ոչ
դարձցուք աստի ունայն ամաչեցեալ, յորժամ առա-
տապէս բաշխին պարգեւք Աստուածային շնորհաց.
ոչ թողցուք զանձինս մեր մնալ 'ի ներքոյ ծանր պար-
տեաց, յորժամ Տէրն մեր արդեամբ փրկագործ չար-
չարանաց իւրոց՝ կենդանեաց եւ ննջեցելոց առհասա-
րակ զպարտան հատուցանէ. ընդէ՞ր մնասցուք մնա-

նել 'ի դատաստան արդարութեան արժանապէս կը-րել փոխարէն զպատիժ մեղաց, մինչ բացեալ է ա-ռաջի մեր դուռն Աստուածային անհուն ողորմու-թեան. ոչ գնամք աստի սովեալ 'ի քաղց և 'ի ծարաւ, մինչ պատրաստեալ կայ առաջի մեր անմահական սե-ղան Սրբութեան: Ո՛վ սրբազան Պատարագիչ. տե-սեալք՝ զի վասն ահաւորութեան մեծի խորհրդոյն ի-րաւամբ երկնչիս 'ի վերայ մեր, զի ո՞վ կարէ կալ ա-ռաջի նորա. այլ վստահ եղիցի սիրտ քո և մի զան-գիտեր:

Ի վերայ Բարեխօսութեան Տիրամօր կուսին:

Քանզի միաբան մեք ամենեքեան ունիմք բա-րեխօս զՄայրն ամենօրհնեալ, որ մատուցանէ զաղօ-թս և զաղաչանս մեր Որդւոյն իւրոյ. որոյ և զբա-րեխօսութիւնն առ Որդին իւր անտարակոյս ընդու-նելի, որպէս ցուցաւ նախ 'ի հարսանիսն անդ 'ի Կա-նա Գալիլեացւոց. ուր արար Յիսուս սկիզբն նշա-նաց, վասն զի Մայրն արար անդ սկիզբն աղաչանաց՝ նա՛ զի ոչ կամէր Յիսուս տակաւին նշան ինչ առնել, քանզի չև էր հասեալ ժամանակ նորա, բայց և այն-պէս՝ ոչ կարաց և Մօրն աղաչանաց անլսող լինել:

Ո՛վ, ո՞րչափ անոյշ էր այն հրաշալի գինին յար-բումն ուրախութեան հարսանեաց բազմականացն. զոր Յիսուս առնելով սկիզբն հրաշից, արար և սկիզբն իւրոյ ճանապարհին դիմել ընթանալ 'ի չարչարանս 'ի խաչ՝ և 'ի խաչին ըմպել զդառն և լեղին. զի որ-պէս հարսանիքն այն էր գինւոյն կարօտեալ, նոյնպէս և հրաւիրեալն Յիսուս լեղւոյն ծարաւեալ. վասն ո-րոյ 'ի խաչին աղաղակէր ասելով. « Ծարաւի՛ եմ»: Յովհ. ԺԹ. 28: Եւ այնմ անհնարին դառն ոչ ապա-քէն՝ զոր ըմպելոց էր Յիսուս 'ի խաչին, խնչամնա

եղեալ և Մայրն յօրէ անտի բանից ծերունի Սիմէօ-նին՝ կրէր զսուր խաչին իւրոյ Միածնի 'ի խորս իւրում սրտին . և այնպէս ընդ Միածին Որդւոյն իւրոյ յամենայն 'ի կեանս իւր 'ի չարչարանս և 'ի խաչ համաշաւիղ ընթանայր . ուստի յիրաւի է ասել, թէ մինչև էր խաչին լեալ Աստուածընկալ, Մայրն երանեալ՝ եղև խաչընկալ . և մինչև տեսեալ երկիր ըզկուսածին 'ի խաչին, տեսին երկինք զսիրտ կուսին 'ի խաչին՝ և զխաչն 'ի սրտի կուսին : Բայց և այնպէս՝ Մայրն ողորմութեան աղաչէր, և Որդին ողորմած՝ լսէր . նա՝ զի եթէ Մայրն չէր անդ և աղաչեալ, վստահ եմ ասել՝ զի ոչ արդեօք և Որդին զայն սկիզբն նշանաց անդանօր առնէր, քանզի չև' էր հասեալ ժամանակ նորա . այլ ըստ հարկին՝ ժամանակ եղև հարսանեացն կարօտութիւն առ գինին զոր չունէին, և առ միջնորդութիւն կուսին զոր ունէին :

Յայտնի հաւաստեմք, թէ ուր Յիսուս և Մարիամ՝ անդ կարօտելոց լիութիւն, տրտմեցելոց ուրախութիւն, յանցանաց ներումն, մեղաց թողութիւն, և դատապարտելեաց ազատութիւն : Վասն այնորիկ գեղեցիկ խորհրդով աւանդեցին սուրբ Հարք Հայաստանեայց եկեղեցւոյ, զի 'ի վերայ սրբոյ Սեղանոյն՝ ուր մատչի Պատարագ՝ բաց 'ի տէրունական նշանէն դնիցի և պատկեր Տիրամայր կուսին . զի ժողովուրդն տեսանելով զպատկերն զայն՝ պատկերեսցէ 'ի միտս իւր զմերափոխեալն սուրբ Աստուածածին, որ յերկինս բարեխօս վասն մեղաւորաց . և այնու հաւատով անկեալ առաջի նորա խնդրեսցէ զբարեխօսութիւն վասն թողութեան մեղաց՝ առ Որդին իւր Միածին : Նա և եթէ յայսմ միջնորդական նպաստաւորութեան զուրկ և վրէպ լինէր ընդհանրական սուրբ Եկեղեցի, արդարև ըստ նմանութեան ժողովոյ նորա շնորհից՝ աղքատ լինէր և չքաւոր առաւել քան զե-

կեղեցին Հրէական հնոյ օրինաց . որ ըստ խորհրդոյ ստուերական վիճակին՝ ձօնացեալ էր ընտիր ընտիր միջնորդօք , որպիսիք էին Աբրահամ, Մովսէս, Յեսու , Եղիա՝ և այլ բազումք ։

Բանզի 'ի հնումն ըստ անտեսելոյ Մարգարէին Աստուծոյ՝ սիրելին իւր Աբրահամ արար սկիզբն բարեխօսութեան . որ խոհեմամիտ քաղաքավարութեամբ հետզհետէ խոնարհեալ աղաչէր և խնդրէր ցածուցանել զցասումն արդարութեանն Աստուծոյ՝ որ էր 'ի բազմամարդ Սոդոմացիսն և 'ի Գոմորացիս , մինչ 'ի տասնեակ թիւ արդարոց զիջանիլ՝ բայց ոչ գտաւ . Ծննդ . ԺԸ . 32 . սակայն յայնմհետէ բազում անգամ ներեաց Աստուած զմեղս մեծամեծս ժողովրդեան իւրայէլի՝ աղօթիւք և բարեխօսութք սիրելեաց իւրոց ։

Իսկ 'ի Նորումն՝ սկիզբն արար սիրելի Մօրն Յիսուսի առ սիրելի Որդին իւր 'ի հարսանիսն անդ 'ի Կանա Գալիլեացւոց . քանզի ճարտարապետն իմաստուն իմաստութեամբ հոգացաւ , զի յառաջ քան զշինութիւն եկեղեցւոյն իւրոյ՝ զկարևոր պիտոյս նորին յառաջագոյն պատրաստեսցէ . վասն այնորիկ եւ Մայրն իւր՝ լինել առաջին միջնորդ և բարեխօս եկեղեցւոյ , յառաջ քան զինքն հրաւիրանօք 'ի հարսանիսն անդ պատրաստեաց . քանզի գրեալ է, «Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին 'ի Կանա Գալիլեացւոց . և անդ էր Մայրն Յիսուսի » . Յովհ . Բ . 1 ։ Յորմէ երևի՝ թէ նախ քան զՅիսուս սուրբն հրաւիրմամբ կոչեցեալ էր Մարիամ . զի զկնի ասելոյն թէ Անդ էր Մայրն Յիսուսի , յարէ անմիջապէս թէ «Կոչեցաւ և Յիսուս և աշակերտքն նորա 'ի հարսանիսն » . Նոյն . Բ . 2 ։

Տեսանես , զի ըստ իմաստութեանն Աստուծոյ յառաջագոյն հրաւիրեալ էր Մարիամ վասն բարեխօսութեան . կոչեցաւ և Յիսուս վասն հրաշագործ-

ութեան, և աշակերտացն վասն վկայութեան. որք զաղաչանս Տիրամօրն լուան ականջօք իւրեանց, և զխաչումն Յիսուսի տեսին աչօք իւրեանց, և այնպէս եղեն մեզ վկայք ճշմարտութեան. արդ՝ Հաւատայ Եկեղեցի վկայիցն Յիսուսի, նշանացն Յիսուսի, և բարեխօսութեան Մօրն Յիսուսի: Հարցանիք, որ է վասն յաւերժական ուրախութեան, զի անդ եղև սկիզբն բարեխօսութեան և սկիզբն նշանաց. իսկ որ սկիզբն է՝ ապա և սկզբնաւորեալքն հետևին:

Ի վերայ հրաշից, և մասանց Սրբոց, և սրբոց խաչին, և եկեղեցա-գանձեան սուրբ Սեղանոյն յեկեղեցւոջ, և փառօրհնական սուրբ Տեղեաց:

Ու յորժամ կատարեցաւ Աստուածաշէն Եկե-ղեցի յաւուր մեծի Պենտեկոստէի, յայնմհետէ օր քան զօր բազմացան հրաւիրեալքն բազմականք 'ի հարսանիսն անապականն. յորոց բազումք Երանական հաղորդութեամբ և բազումք Շնորհական հաղորդութեամբ 'ի Քրիստոս կատարեցան: Որոց աղօթիւք և բարեխօ-սութեամբ ընդ ժամանակս ժամանակս երևեցան և երևին հրաշագործութիւնք 'ի մէջ եկեղեցւոյ, զորս պարտ է հաւատալ. զի որ ինչ վկայութեամբ Եկե-ղեցւոյն ճշմարիտ է՝ այն իսկ է հաւատալի:

Բայց ոչ է արժան հրաշից առ մեզ յաճախել, զի մի փոքրկասցին հաւատք մեր և վերասցի 'ի մէնջ երանութիւնն Քրիստոսական. որ 'ի ժամանակէ անտի սրբոյն Թովմայի տեսանելոյ աչօք զյարուցեալն Քրիստոս՝ այնմ եղաք բարեմասնեալ: Զի որպէս «Սո-վորութիւնն փոքրկացուցանէ զզարմանս», նոյնպէս և հրաշքն յաճախ երևեալք՝ փոքրկացուցանեն զմե-ծութիւն հաւատոյ. մանաւանդ զի ըստ աւանդին՝ «Իբր պարտ ամենայն մարդոյ հաւատալ», նոյնպէս

և ոչ սմենայն հրաշից՝ որք յանդէպս և 'ի տարադէպս իցեն երևեալք. զի մինչև անկեալ իցէ ընդ քննութեամբ հաւատարիմ պաշտօնէից եկեղեցւոյ, և ճշմարտութիւնն չէ 'ի նոցունց վկայեալ՝ ոչ է արժան հաւատալ։ Վասն զի պարտ է քննել զսկիզբն հրաշագործութեանն այնորիկ՝ թէ ուստի արար. և զմիջոցն՝ թէ որով անուամբ կամ որով զօրութեամբ արար. և ըզվախճանն՝ թէ վասն որոյ արար. և յորժամ տեսանի, թէ սկզբամբ՝ միջոցաւ և վախճանաւ համեմատին հրաշիցն Առաքելոց և Մարգարէից կամ այլոց Սրբոցն եկեղեցւոյ, որպէս զի գործողն իցէ ընդարձակ յաշխարհէ և առեցեալ յաշխարհէ, և գործն՝ արարեալ անուամբ և զօրութեամբն Աստուծոյ, և երևեալ վասն շինութեան և պայծառութեան եկեղեցւոյ՝ 'ի մխիթարութիւն տառապեալ հաւատացելոց և յամօթ երեսացն անհաւատից. յայնժամ վկայեալ լինին ճշմարտութիւնք հրաշիցն այնոցիկ՝ զորս արժան է հաւատալ։ Յորոց սակի են պէսպէս զօրութիւնք երևեալք 'ի մասանց և յոսկերաց Սըրբոց 'ի ժամանակս նեղութեան. և զոր տեսեալ եմք աչօք մերովք զբժշկութիւնս ծանր հիւանդաց և դժուարաբուժելի ախտաժետաց՝ կենաց փայտին հրաշագործեալ, մինչև զարմանալ իսկ բժշկաց և ապշիլ հեթանոսաց. և արդարև լինին այնպիսի բըժշկութիւնք հիւանդաց՝ որք հաւատով մերձենան 'ի սուրբ խաչն Աստուածընկալ, և կամ յոսկերս Սրբոց՝ զորս բարեպաշտութեամբ պատուէ սուրբ Եկեղեցի իբրև կենդանի բնակարան Աստուածային շնորհաց։

ՆԵՒ զայս մեծահաւատ բարեպաշտութիւն կաթուղիկէ եկեղեցւոյ նորադանդք անգոսնեն. որպէս զի զսուրբ խաչն Քրիստոսի՝ և զՆշխարս կամ զՊատկերս Սրբոց պաշտելով աստուածական երկըրպագութեամբ՝ խարդաւանեալ իցէ 'ի մեծ բազմա-

տուած մոլորութեան։ Եւ վասն պատուելոյ զՊատկե-
րըս Սրբոց՝ պատկերապաշտս կոչեն. և վասն երկիր-
պագանելոյ խաչափայտին Քրիստոսի՝ փայտապաշտս
անուանեն. Թողեալ ասեն, զՔրիստոս Աստուած որ
խաչեցաւ, զփայտն յորոյ վերայ խաչեցաւ՝ զայն իբրև
զԱստուած պաշտեն. որ է յայտնի զրպարտութիւն՝
և գիւտական չարախօսութիւն։

Ով չարախօս. զայդ զրպարտութիւնդ՝ զոր խօ-
սիս 'ի վերայ կաթուղիկէ եկեղեցւոյ, ոչ եթէ յանձ-
նէ ինչ խօսիս, այլ սկզբնաչարն սատանայ որ 'ի քեզ
է՝ նա տայ քեզ խօսիլ, և դու խօսելովդ՝ նմա հա-
ճոյանաս։ Եւ եթէ կամիս առաւել ևս նմա հաճոյա-
նալ, գնա դու և մուտ 'ի մէջ բազմութեանն Հրէ-
ից, որք նեղեն զՅիսուս 'ի ճանապարհին յերթալ
նորա 'ի տուն Յայրոս իշխանին՝ բժշկել զմիամօր
դուստր նորին. անդ 'ի մէջ ամբոխին տեսցես դու
զկին մի տեռատես, որ առ պարկեշտ պատկառանացն
իւրոց՝ ոչ համարձակի մերձենալ առ Յիսուս. այլ
'ի ծածուկ մերձենալով միայն 'ի քղանցս հանդերձի
նորա՝ հաւատայ փրկիլ։ Եւ յորժամ տեսանես զնա,
որպէս սովոր ես հանապազ առնել՝ կեղծաւորեսջիր
առ նա. և ցոյց նմա զդէմս խաբուսիկ ջերմեռան-
դութեան՝ ասելով, Ես՝ եմ վարդապետ Աւետա-
րանական ճշմարտութեան, եկի քարոզել քեզ զճշ-
մարտութիւն. և այնպէս խաբէական համոզիչ
բանիւք ձեռովք խրատեա զնա, զի մերձեսցի նա
յանձն Յիսուսի՝ և մի 'ի հանդերձս նորա. ասե-
լով՝ եթէ հանդերձն զոր զգեցեալ է՝ չէ Աստուած
կենդանի, որ կարողասցի զքեզ բժշկել. այլ կը-
տաւ ինչ անպիտան՝ 'ի բամբակէ կամ 'ի վշոյ ձե-
ռագործ մարդկան. և արդարև որք բաժանեցինն
զնոսա 'ի մէջ իւրեանց և զգեցան, ոչ ինչ զօրացան.
այլ մանաւանդ 'ի ժամանակի Յարութեան նորա իր-

ուղեցան, « Եւ եղեն իբրեւ զմեռեալս »։ Բայց անդանօր ՚ի հարցանելն Յիսուսի՝ թէ « Ո՞վ է որ մերձեցաւ յիս . . . քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն », Ղուկ. Ը. 45, 46. Նա և յասելն Տեառն ցկինն, « Քաջալերեաց դուստր՝ հաւատք քո կեցուսցին զքեզ, Երթ ՚ի խաղաղութիւն . և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց », Ղուկ. Ը. 48. Մարկ. Ե. 34 ; լից զականջս քո ՚ի լսել զայն, և կափո՛ զաչս քո զբժշկութիւն կնոջն տեսանել։

Բայց կաթուղիկէ եկեղեցին տեսանէ զկինն հաւատով մերձեցեալ ՚ի հանդերձսն Յիսուսի՝ և առժամայն բժշկեալ, նա և լսէ զբան Նորա թէ « Զօրութիւն ել յինէն », անդ ուրեմն խորհրդածեալ ըստ Հոգւոյն շնորհաց՝ զմանկունս իւր այսպէս ուսուցանէ . զի որ կտաւով հանդերձիցն իւրոց ներգործեաց առ մերձեցեալն հաւատով զԱստուածային զօրութիւն, ապա առաւել ևս ներգործէ փայտն պատուական խաչին իւրոյ . քանզի զհանդերձսն կրեաց ՚ի զգեստ Մարմնոյն՝ զոր կամեցեալն էր թողուլ զինուորաց։ Սակայն սիրեաց և կրեաց զփայտ խաչին ՚ի պէտս փրկութեան աշխարհի . յորում մածաւ բեւեռեցաւ՝ և Աստուածային արեամբն ներկեաց, և շնորհեաց զայն մեզ հաւատացելոցս լինել հովանի և պահապան . վասն որոյ հաւատայ եկեղեցին՝ թէ խաչեալն Աստուած մարմնով՝ Աստուածութեամբն իւրով ՚ի նմա բնակէ . և այնու հաւատով կոչէ զմեզ երկրպագել սրբոյ խաչին՝ և զբնակեալն ՚ի նմա միշտ փառաւորել։ Այլ ոչ որպէս ըստ քաղքարբանջանացդ՝ իբրեւ Աստուծոյ երկրպագէ և իբրեւ զԱստուած պաշտէ, այլ վերբերական երկրպագութեամբ իբրեւ Աստուածայնոյ երկրպագէ . և ըզբնակեալն ՚ի նմա՝ պաշտողական երկրպագութեամբ իբրեւ զԱստուած փառաւորէ . և որպէս ասէ՝ Նյս[illegible]

մեզ կը ուսուցանէ . Թէ օրհնութիւն և փառք և գոհաբանութիւն՝ որ պաշտողաբար մատուցանի 'ի Եկեղ․ վայել է միայն Արարչին՝ և ոչ արարածոց ա-մենեկին . զի նա միայն է պաշտողական փառաւորութեամբ երկրպագելի օրհնեալ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ։

Իսկ յորժամ զերանելեացն ասեմք օրհնեալ և փառաւորեալ, այն օրհնութիւն կամ փառաւորութիւն չէ՛ 'ի մէնջ մատուցեալ, այլ 'ի Քրիստոսէ շնորհեցեալ Աստուածահաճոյ և առաքինի վարուց նոցա . և առ 'ի նոցանէ հոգւով և ճշմարտութեամբ առ ինքն մատուցեալ պաշտողական փառացն փոխանակ՝ փառք պարգևական ։ Զի որք փառաւորեն զՔրիստոս պաշտողական փառօք աստ 'ի կեանս իւրեանց, նոքա փառաւորին 'ի Քրիստոսէ պարգևական փառօք անդ 'ի կայանս իւրեանց, ըստ որում ինքն ասէ . « Զփառաւորիչս իմ փառաւորեցից ». Ա. Թագ. Բ. 30 . այլ վասն պաշտողական փառաց զոր 'ի մէնջ պահանջէ, ասէ . « Ես եմ . . . Աստուած Նախանձոտ . Ելից . Ի . Ե . զփառս իմ այլում ոչ տաց ». Եսայ . ԽԲ . 8 ։

Եւ ահա այնպէս ճանաչեմք զսուրբս Աստուածայինն՝ և ասեմք փառաւորեալ և օրհնեալ, զի օրհնեցան զնա Աստուած և փառաւորեցան առաջի ամենայն ազգաց . զայս ասելով եկեղեցին՝ մի թէ նոյն իբրև զԱստուած պաշտէ ։ Եւ եթէ այսու ապացուցանիցես նորաղանդք զպարտեն երկրպագանել նմա և իբրև զԱստուած պաշտել, ուրեմն անպատկառութեամբ իւրեանց արկանեն և զազգականուհին՝ զԵղիսաբեթն ասեմ՝ զլցեալն Հոգւով սրբով . որ 'ի լսելն զձայն ողջունի սրբուհւոյ կուսին՝ ասէր, « Օրհնեալ ես դու 'ի կանայս ». Ղուկ . Ա . 42 . և նոյն ասելով՝ զԱստուածային զնորահրաշ օրհնութիւնն 'ի նմա խոստովանէր, և խոստովանելովն զնա

մեծացուցանէր. և ընդ այն կցէր ասելով, «Եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո». և այս իսկ էր օրհնութիւն պաշտողական մատուցեալ առ Աստուածածին. յորմէ առեալ եկեղեցին՝ երգէ ասելով, «Տաք օրհնութիւն պտղոյ կուսին»: Այլ յորժամ եկեղեցին զօրհնութիւն և զփառս և զգոհաբանութիւնս պաշտողաբար մատուցանէ, նմա միայնոյ մատուցանէ՝ որում պաշտողաբար երկրպագանէ, վասն զի օրհնութիւնք՝ փառք՝ և երկրպագութիւն պաշտողականք՝ են արտաքին նշան ներքին աստուածպաշտութեան: Զայս գիտելով անզգամն Արիոս, որ զանեղական Աստուածութիւն Որդւոյն ուրանայր, նմա և պաշտողական փառս մատուցանել զլանայր. վասն որոյ՝ փոխանակ ասելոյ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ըստ չարափառ մոլորութեան իւրում ասէր՝ Փառք Հօր Որդւով 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ:

Իսկ սուրբ Եկեղեցին յամենայն 'ի պաշտամունս և յաղօթս իւր հաւատարապատիւ երկրպագութեամբ զպաշտողական փառս մատուցեալ Համագոյ և միանական անբաժանելի սուրբ Երրորդութեան՝ ասէ. «Օրհնութիւն և փառք (կամ Փառք) Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ». և այս պաշտողական փառաբանութիւն եկեղեցւոյ յաճախեալ է 'ի բերանս սրբոց և կանանց՝ ծերոց և երիտասարդաց. որք 'ի ժամանակս ուրախութեան իւրեանց գոհացեալք, և 'ի ժամանակս տրամութեան և սգոյ իւրեանց մխիթարեալք, ասեն՝ Օրհնեալ ես Աստուած, կամ Փառք քեզ Աստուած: Ո՞ւր լուաւ զրպարտիչն այն՝ կամ յումմէ՞ լուաւ ասել՝ Փառք քեզ սուրբ Աստուածածին, կամ Փառք քեզ սուրբ Պետրոս առաքեալ, և կամ Փառք քեզ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, և եթէ զրպարտիչն այն չարախօսէ վասն մեր առաջի մարդկան, են բազումք՝ որք բարբառին վասն մեր

տուաչի Աստուծոյ. բայց «Վա՜յ այնմ, որ ասիցէ լը-
չարն բարի՛ և զբարին չար»։ Այլ կամ է ինձ ընդ
նմին առակաւ մի ևս բանագնաց լինել։

Մեք դու զպարտիչ դատախազ. Զի այլ է փառք և երկրպագութիւնն պաշտողական, զոր մատուցանեմք միայն Աստուծոյ. և այլ է փառք և երկրպագութիւնն պատուողական և վերաբերական, զոր մատուցանեմք սրբոյ խաչին և ամենայն սրբոց Աստուծոյ. ուրեմն ոչ կարես իրաւամբ զմեզ պատկերապաշտս կոչել՝ քանզի չեմք, այլ եմք պատուողս պատկերաց սրբոցն Աստուծոյ՝ զի սուրբք են և փառաւորեալք միշտ առաջի Աստուծոյ։ Եւ ահա այնու զանազանութեամբ երկրպագէ եկեղեցին պատուական սրբոյ խաչին. և 'ի պատուելն անդ երկրպագութեամբ՝ սովորաբար խօսի ընդ խաչեցելոյն, և դուն ուրեք հռետորական ասացուածով՝ ընդ խաչին. և առ խնդրելոյ մեր զզօրութիւն և զպաշտպանութիւն նորա, քարոզէ խնդրել 'ի Տեառնէ՝ և ոչ ուղղակի 'ի սրբոյ խաչէն, զի մի համարեսցի ինքնին՝ իբրև առանց զօրութեան խաչեցելոյն լինել լոկ աղաչանաց, և վերաբերականն երկրպագութիւն կարծեսցի պաշտողական։ Վասն այնորիկ յորժամ 'ի հանդիսի յայնմիկ վերաբերական երկրպագութեանն եղանակէ «Խաչի քոյ Քրիստոս երկիրպագանեմք...»․ անդէն առ նմին՝ կոչէ զհաւատացեալս 'ի պաշտողականն երկրպագութիւն՝ ասելով, «Եկայք հաւատացեալք երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ»․ և 'ի վերջին փառաւոր հանդիսին այնորիկ՝ անմիջապէս ընծ- պաշտողական փառս և զերկրպագութի իւր մատուցանէ ամենասուրբ Երրորդութեան, ասելով՝ «Փառք և երկրպագութի Հօր և Որդւոյ և սրբոյ Հոգւոյն»։ Նոյնպէս և 'ի հանդիսի տօնախմբութեան Սրբոց՝ նշխարաց և պատուողական փառօք զանուանս կամ զն-

Յաւուրս նոցա փառաւորէ, մինչ 'ի վերջին հաւատամս երգաբանութեանց՝ Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ասելովն, զպաշտողական փառս իւր առ Աստուած մատուցանելով զհանդէս Երրորդին կատարէ։

Նոյն այս օրինակ պատուողական երկրպագութիւն և երկիրպագանեմք սրբոյ Սեղանոյն, յորոյ վերայ Քրիստոս պատարագի։ Նա և Տնօրինական սուրբ Տեղեաց նորին, զոր Մարգարէն զցայգ և զցերեկ հանապազ տենչայր գտանել. վասն որոյ ուխտ դնէր անձին և ասէր, «Թէ ոչ մտից 'ի յարկս տան իմոյ, թէ ելից յանկողինս մահճաց իմոց. Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտևանաց իմոց, կամ հանգիստ իրանաց իմոց. մինչև գտից զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակոբայ»։ Նա իբրև 'ի մարգարէական շնորհաց Հոգւոյն լուր առնու զնմանէ յԷփրաթայ, և նովին հոգւով գտանէ զնա 'ի դաշտս մայրեաց, ամենայն ուրախութեամբ հրաւիրէ զազգն ամենայն, «Մտցուք 'ի յարկս նորա, երկիր պագցուք 'ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա»։ Սաղմ. ՃԼԱ. 3—7։

Հապա հարցցուք զՄարգարէն, թէ ընդէ՞ր եղև նա այնպէս տեղապաշտ կամ յարկապաշտ։

Նա՝ ո՛վ աստուածահայր մարգարէ. մոռացա՞ր արդեօք զմեծ և զառաջին պատուիրանն Աստուծոյ, զոր ետ Աստուածատես մարգարէին Մովսէսի, թէ միայն «Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, և զնա միայն պաշտիցես»։ Բ. Օրին. Զ. 13։ Մատ. Դ. 10։ Արդ՝ զի՞ եղև քեզ, զի աւանիկ երկիրպագանիցես 'ի տեղւոջն՝ ուր կացեալ են ոտք նորա։

Պատասխանէ Մարգարէն. Ո՛չ մոռացայ, և ոչ երբէք մոռանամ. այլ զի՝ յամենայն սրտէ իմմէ որպէս սիրեմ զնա, այնպէս սիրեցի և զվայելչութիւն տան նորա՝ և զտեղի յարկի փառաց նորա. քանզի

մարթ է. և պատուականն անեղծն այն՝ ուր կացեալ են նոքա նորա ։ և յոյժ սիրելի են յարկք Նորին Տեառն զօրութեանց, «Ցանկայ և փափագէ անձն իմ ՚ի գաւիթս Տեառն»։ Սաղմ. ՁԴ. 2։

Իսկ՝ որ արժան է բառ Մարգարէին և ընդ նմին նման երկիրպագանել ՚ի տեղւոջ ուր կացեալ են ոտք նորա, զի՞նչ անարժանութիւն իցէ այսպ սիրով և հաւատոյ պատուով երկիրպագանել սուրբ և պատուական խաչի Նորա՝ յորոյ վերայ խաչեցաւ բարձրացեալ, և ՚ի նմա առ ինքն ձգեաց զամենեսին զմեզ [illegible]ցուցանել։

Իսկ որք անգոսնեն զայս Աստուածահաճոյ բարեպաշտութիւն Եկեղեցւոյ, նոքա ոչ հաւատան ընդդէմ ՚ի սուրբ խաչն Աստուածընկալ՝ յաղթողական պաշտպանողական և բժշկական զօրութիւն Աստուծոյ. այլ և ըստ մոլորական վարդապետութեան հաւատոյ իւրեանց՝ ի զուր պարծի Առաքեալն, որ երդնու ոչ այլով ինչ պարծիլ՝ «Բայց միայն ՚ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Գաղ. Զ. 14. զի յայս նոցա խաչափայտն Քրիստոսի է հասարակ փայտ ինչ անարգ, սակայն մեզ ուղղափառացս՝ «Փայտ կենաց է ամենեցուն՝ որք պատսպարին ՚ի նա»։ Առակ. Գ. 18։ Արդ՝ աղաչեմ ինչ բաւականասցի այժմիկ ընդդէմ հերձուածողաց, մեք դարձուք անդրէն զանհաւատալի [illegible] խօսել։

Ի վերայ [illegible] պատարագական [illegible]։

Այլ զասպարազինման և զայլանդակ հրաշագործութիւնս՝ զոր լուաք և զոր ընթերցաք ՚ի վերայ նոցա և ՚ի Թարգմանութիւնս յայլոց եկեղեցաց, զի ոչ թէ ամենեքին հաւատալ. վասն զի կաթուղիկէ եկեղեցի սերտ է և ծնիս լինելոյ պարգևաց Եա-

տուածային շնորհաց, և ճրագ լուսափայլ. որ առատութեամբն իւրով որպէս ճանաչէ զԱստուած, նոյնպէս և զԱստուածայինսն բարուք ճանաչէ, որով և լուսաւորի ամենայն մարմին նորա. զի լուսաւորեալ միոջ լինիցին զգաստ և զգոյշ 'ի սուտ և 'ի կեղծեալ աստուածայնոց. զի եթէ ըստ Տեառն բանի «Յարիցեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և տացեն նշանս մեծամեծս ... առ 'ի մոլորեցուցանելոյ», Մարկ. ԺԳ. 22. ապա յարիցեն և սուտ քրիստոնեայք և սուտ վարդապետք, որք «Կերպարանեալք 'ի կերպարանս առաքելոց Քրիստոսի», Բ. Կորն. ԺԱ. 13. և «Որոց կատարածն կորուստ է», Փիլիպ. Գ. 19. ցուցանեն զանձինս իւրեանց իբրև ունողս բժշկական զօրութեան: Եւ զգիրս անընդունակս եկեղեցւոյ ընթեռնուն 'ի վերայ հիւանդաց. և տան գիր ինչ աղօթից կամ յուռութուլունս ծրարեալ պահել և կրել միշտ 'ի պարանոց կամ 'ի գլուխս նոցա. և ախտացեալն եթէ ուրեք երկուցեալ իցէ՝ հող կամ փոշի բերեալ 'ի տեղւոջէ անտի՝ ընթեռնուն 'ի վերայ նորա, և տան զայն ծոմ և անխօս արկանել 'ի գետ կամ 'ի ծով: Եղկելի՛ բժիշկ՝ և եղկելի՛ ախտաւոր. Նա՝ առածն Տէրունեան առ նոսա յարմարաւոր, «Կոյր կուրի առաջնորդել, ո՞չ ապաքէն երկոքին 'ի խորխորատ անկանիցին». Ղուկ. Զ. 39. որպէս անկեալ են դիւապաշտ վհուկք և կախարդք, և անկանին ընդ նոսին՝ որք առ նոսա ապաւինին:

Նա և ոմանք 'ի գռեհկաց շրջին 'ի վանորայս, և յաւուրս Տօնից մտանեն 'ի ժողովս Ուխտաւորաց. և 'ի ժամանակի սուրբ Պատարագին կեղծեն զանձինս իւրեանց իբր ուշաթափեալ. և յետ սակաւուց բարձրը աղաղակաւ՝ կափուցեալ աչօք ազդեն զսուտ տեսիլ իւրեանց 'ի սոսկումն ռամկաց, որպէս թէ այլ-
ն հոգի 'ի ներքուստ անտի տայ նոցա բարբառել:

, և ոմանք՝ որք ոգիական կամ յղկափառական ար-ւեստիւք և կամ գաղտնի մեքենայիւք՝ գործս զար-մանալիս իբրև հրաշս ցուցանեն, զի նոքօք 'ի վանան րեանց առաւել արդիւնս հաւաքեսցեն. բայց եղ-ւքեն՝ այնու առաւել ևս յանձինս իւրեանց դատասա-նս ընդունին, զի նոքօք պատճառս տան արձակել -զուս անհաւատից կատակել զհաւատս քրիստո-նէից :

Այլ յաղագս այնպիսի խաբեբայ արանց և խա-ական նշանաց՝ հարկ 'ի վերայ կայ ո՛ և իցէ ազգի -աջնորդաց եկեղեցւոյ բառնալ 'ի միջոյ, և խրա-ւ զժողովուրդն չհաւատալ երբէք այնպիսեաց. զի նմանեալ տխմար վաճառականաց՝ զԱստուածածին -ուսափայլ մարգարիտ հաւատս իւրեանց յիմարա-ր փոխանակեսցեն ընդ կեղծեալ ոսկւոյ՝ ոսկեփայլ -արդ պղնձոյ սուտերևոյթ զարմանալեաց :

Ի վերայ Բարեխօսութեան Սրբոց, աղօթք և վասն Բանական ոգւոյ նոցա :

Վասն զի ճշմարիտ հրաշագործութիւնք՝ 'ի սկ-զբանէ անտի որչափ երևեցան՝ եղեն աղօթիւք և -րեխօսութեամբ Սրբոց. բազում անգամ ևս մի-ան աղօթիւք բազմութեան հաւատացելոց 'ի ժա-նակս նեղութեան իւրեանց. որոց լսէր Աստուած -ն սիրելեաց իւրոց՝ որք գտանէին 'ի մէջ նոցա, և ղթէին անցուցանել զսաստկութիւն բարկութեան -ր 'ի վերայ մեղաց իւրեանց. և նա ողորմութեամն իւրով սքանչելի հրաշիւք կատարէր զխնդրուածս -ա՝ և փրկէր զնոսա :

Զայս ընդունին նորաղանդք. քանզի ասեն, -րբքն Աստուծոյ՝ ցորչափ յաշխարհի աստ կենդանի , օրհնեն զԱստուած և բարեխօս լինին վասն մե-

զաւուրաց, և Աստուած լսէ ձայնի աղօթից նոցա. խնկ յետ մեռանելոյ և երանելոյ նոցա յաշխարհէ, զի՛նչ բարեխօսեցեն՝ որք ոչն օրհնեն զԱստուած. յառաջ բերելով զբան Մարգարէին, « Ո՛չ թէ ... մեռեալք օրհնեսցեն զՏէր ... այլ կենդանիքս օրհնեսցեն զՏէր »: Սաղ. ՃԺԸ. 18, 19. Ահա այսպէս քարոզեն ՚ի ժողովս իւրեանց, և տան ուսանել զբարեխօսութիւն սուրբ Աստուածածնի և ամենայն Սրբոց:

Բայց մեք զճշմարիտն ասեմք. Աստուած՝ որ լը-սէ յամենայն ժամ կենդանի Սրբոց իւրոց, լսէ հաւատացող և երանելով ննջեցելոց. վասն զի որպէս անմեղքն և յուսահատք և անհաւատք ՚ի կենանս յայսմիկ՝ թէպէտ կենդանի են առաջի մարդկան, բայց մեռեալ են առաջի Աստուծոյ, նոյնպէս և ամենայն հաւատացեալք՝ որք առաքինի վարուք Սրբութեամբ և Հաղորդութեամբ ՚ի Քրիստոս կատարեցան, թէպէտ մեռեալ են ՚ի մարդիկ՝ բայց կենդանի են ՚ի յԱստուած. որք ՚ի կայանս իւրեանց անդադար օրհնեն զնա յաւուրս յաւիտեան, և յայնմ հետէ օրհնեսցեն զնա մինչև յաւիտեան. և ահա Մարգարէն յայտ մեզ ցուցանէ զբան իւր « Ո՛չ թէ մեռեալք օրհնեսցեն զՏէր, այլ կենդանիքս օրհնեսցուք զՏէր յայսմհետէ մինչև յաւիտեան »: Բայց չէ պարտ ընդ այնպիսիս զարմանալ. զի որք ախտացեալ են ՚ի հաւատս, անկարծ՝ թէ այնուքիկ պակասեալ են և ՚ի միտս. վասն այնորիկ և բանք նոցա միշտ պակասեալ գտանին: Բայց որ միանգամ կամիցի խոնարհութեամբ լսել և ճշմարտութեանն հաւանել, չէ ինչ դժուարին. վասն այնորիկ կարևոր վարկայ սակաւիկ մի ևս աստէն երկարել.

3 Ո՛չ է կենդանի ՚ի մարմնի՝ և այլ է կենդանի ... ի. որպէս և նոյն է ասել, այլ է մեռեալ ՚ի ... այլ է մեռեալ ՚ի հոգի: Նա այս յայտ է՝

զի յորժամ անուանէր Մովսէս զհրաշալի վառումն մորենւոյն, լուաւ անտի զձայնն Աստուծոյ որ ասէր. «Ես եմ... Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ, և Աստուած Յակոբայ». Ելք. Գ. 6: Արդ՝ ո՞ւր էին յայնժամ Աբրահամ Իսահակ և Յակոբ. ո՞չ ապաքէն բազում ամօք յառաջ մեռեալք և ելեալք էին յաշխարհէ. ապա զիա՞րդ ոչ ասաց Աստուած թէ Ես էի Աստուած Աբրահամու, Իսահակայ, և Յակոբայ. այլ ասաց թէ՝ Ես եմ. զի այնու ասացուածովն՝ նոցին իսկ բազմամեայ մեռելոց՝ զինքն Աստուած ներկայացուցանէ, և զնոսա առաջի իւր միշտ կենդանի ցուցանէ. վասն այնորիկ՝ յարէ Յիսուս ՚ի բանն յայն թէ՝ «Եւ Աստուած չէ մեռելոց, այլ կենդանեաց. զի ամենեքին նմա կենդանի են». Ղուկ. Ի. 38. որպէս և առ Մարթա ասէր, «Որ հաւատայ յիս. թէպէտ և մեռանի՝ կեցցէ». Յովհ. ԺԱ. 25. բայց ըստ Առակաց՝ Թուի յաչս անզգամաց թէ մեռաւ. Իմաստ. Գ. 2:

Եւ եթէ կամիցի առաւել ևս լսել՝ լուիցէ. Աբրահամ յաշխարհի աստ՝ մինչ կենդանի էր յԱստուած և ՚ի մարդիկ, ստիպեալ ՚ի բանական սիրոյն իւրմէ որ առ Աստուած և առ մարդիկ, նովին սիրով բարեխօսէր և աղաչէր զԱստուած անցուցանել զցասումն ՚ի Սոդոմացւոց և ՚ի Գոմորացւոց անտի. այլ յորժամ փոխեցաւ յաշխարհէ, ո՞վ արգել զնա այնուհետև ՚ի բարեխօսելոյ. զի որ ընդունելի էր առաջի Աստուծոյ բարեխօսութիւն բանական հոգւոյ նորին, ո՞չ ապաքէն նոյն բանական հոգի նորա միշտ կենդանի կայ առաջի Աստուծոյ՝ ՚ի բանական սիրոյն անբաժան:

Քանզի սէրն բանական՝ ոչ է իբրև մարմնական ձիր ինչ արտաքին և անցողական, և ոչ առ փրկութիւն անձին մասնաւոր շնորհ ինչ պարգևական. այլ

իմացականին հոգւոյ՝ էապէս ներքին կատարելութի մշտնջենական, որով հոգին ճանաչի գոլ էակ անմահական ։ Սուրբեմն սէրն այն՝ ոչ միայն 'ի հոգիս արդարոց, այլ և 'ի հոգիս մեղաւորաց իսկ կայ և մնայ միշտ աներղծ և անվախճան, զոր ուսուցանէ մեզ և առակն Մեծատան. որոյ չուառեալ հոգին՝ մինչ 'ի տանջանսն էր և անյոյս յաղատութենէն, բռնադատեալ լինէր անդ 'ի բանական՝ սիրոյն իւրմէ զհնդեսին եղբարս իւր խնամել, «Զի մի և նոքա (ասէ) դայցեն յայս տեղի տանջանաց»։ Ղուկ. ԺԶ. 28։ Զովանայր արդեօք եղկելի պապակեալն 'ի տապոյ հնոտի անշիջանելի հրոյն, եթէ կարող լինէր Աբրահամ արձակել զՂազարոս 'ի տուն հօր նորա առ 'ի տալ վկայութիւն. բայց որ 'ի զովանալոյն հատայոյս նորա, գոնէ թողացի 'ի բռնութենէ բանական սիրոյն՝ որ անդ սկսաւ սաստկագոյն տանջել զնա. զի ոչ երբէք ողորմեցաւ աղքատաց և կարօտելոց, այլ անողորմ վարուքն իւրովք հպարտացեալ՝ չար օրինակ եղեալ էր եղբարցն իւրոց ։ Վասն զի զսէրն՝ զոր թէ առ Աստուած և զոր թէ առ ընկերն պարտէր, զայն ամենայն վասն անձին իւրոյ պահեաց. և յամենայն 'ի կեանս իւր բեհեզեայ և ծիրանեայ ագանելեօք և համադամ կերակրովք միայն զանձն իւր սիրեաց՝ և զեղբարս իւր ատեաց, որով եղեաստուածատեաց. զի ըստ սրբոյն Յովհաննու՝ «Որ ոչ սիրէ զեղբայր իւր զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն տեսեալ՝ զիա՞րդ կարիցէ սիրել»։ Ա. Յօհ. Դ. 20— վասն այնորիկ և սէրն այն՝ արդարապէս եղև նմա յայնժամ դատապարտ իրաւաբան, որ մատնեաց զնա որդանն անմահի՝ դժնդակ խղճի՝ անողորմ դահճի։

Քանզի սէրն բանական՝ էապէս բաղմեալ 'ի ջերակայ տաճար խորհրդոյ մարդկային հոգւոյ ջրէ միշտ կենակից լինել ընդ Աստուծոյ՝ և Աս—

տուծով կենակցիլ ընդ անձին և ընդ ընկերին ․ վասն
զի մարդն է բանաւորութեամբ Աստուածասէր , բը֊
նաւորութեամբ՝ անձնասէր , և երկոքումբքն ընկե֊
րասէր ․ վասն որոյ մարդատեացն է հրէշ երկկերպա֊
րան , գազան մարդակերպ՝ կամ մարդ գազանակերպ ։
Այլ զի առաջին և ըստ ինքեան սիրելի մարդկան՝ է
Աստուածն անչափ և անսահման , ապա և սէրն առ
այն՝ պարտ է լինել անչափ և անսահման ․ վասն որոյ
այն առաջին պատուիրան տուաւ մարդկան « Սիրե֊
ցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ ․․․ և
յամենայն զօրութենէ ․․․ մտաց քոց » ․ Ղուկ ․ Ժ ․ 27 ։
Իսկ անձն և ընկեր իւր՝ ըստ որում սահմանաւոր և
համաչափ , և սէրն առ նոսա՝ պարտ է լինել սահմա֊
նաւոր և համաչափ ․ վասն որոյ տուաւ երկրորդ պա֊
տուիրան « Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո » ․
Մատթ ․ ԻԲ ․ 39 ։

Այս ահա այն սէր է՝ որով մարդ յորժամ բաղ֊
ձցի յընթրիս ուտել և ըմպել , զքաղցեալս և զծա֊
րաւիս յիշէ , և ըստ կարողութեան իւրում կերակ֊
րէ զնոսա և արբուցանէ ․ և յորժամ զգենու զհան֊
դերձս փառաւորս , զմերկսն յիշէ և զգեցուցանէ ․
և 'ի հանգչիլն 'ի տան իւրում , զօտարս ժողովէ ․ և
ի զուարթ առողջութեան անձին իւրում՝ 'ի տես
նոյ հիւանդաց ․ և 'ի խրախճանս բարեկենդանու֊
թեան իւրում՝ ըստ խրատու Առաքելոյն այնպէս յուշ
ընէին նմա կապեալքն և չարչարեալքն , որպէս թէ
ինքն կապեալ և չարչարեալ իցէ , Եբր ․ ԺԳ ․ 3 ․ վասն
որոյ երթեալ 'ի կապարանս նոցա , բանիւ և ար֊
դեամբ զնոսա մխիթարէ ։

Այն սէր է՝ որով մարդ 'ի ծանր հիւանդու֊
թեան իւրում կամ 'ի ժամանակի մահառիթ փոր֊
ձութեան՝ որպէս յօժարութեամբ հաճի կորուսա֊
նել զգանձս իւր վասն առողջութեան անձին և կե֊

նոցա, 'ի դէպ ժամանակի առաւել ևս յօժարի վարա-
տանել զկեանս իւր վասն տուողին կենաց. և այնու
նահատակեալ եղանէ ընդդէմ թշնամեաց հաւատոյ
և հայրենեաց, որոց անուանք գրեալ լինին 'ի դիրս
Դպրութեան կենաց. Փիլիպ. Դ. 3: Յայտ. ԻԱ. 27:

Այն ահա է՝ որով մարդն արդարապէս կշռէ զա-
մենայն արարս, և հաստատէ զամենայն զաւուրս
իւր. և որպէս կամի՝ թէ այլք արասցեն ինքեան,
ըստ պատուիրանի Տեառն այնպէս առնէ և ինքն
նոցա. Մատթ. Է. 12:

Այն ահա է՝ որով մարդ յորժամ անկանի 'ի սուգ
թախծագին վասն մեռանելոյ համօրէն սիրելեաց
իւրոց, գերագոյն սիրելոյն մխիթարի. և զընթե-
լով զկամս նորին՝ ասէ ընդ Յովբայ համբերողին,
"Տէր ետ՝ և Տէր էառ". Յովբ. Ա. 22:

Այն ահա է՝ որով մարդ ոչ միայն անյիշաչար լինի
վասն յանցանաց ընկերին, այլ և բարի առնէ ատե-
լեաց և թշնամեաց իւրոց. և բարերարութեամբ
աղօթէ զԱստուած վասն նոցա ասելով, "Թողեա
և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ
առ իս յանցանաց. և դարձո զնոսա 'ի չարեացն զոր
ունին վասն իմ, զի ողորմութեանդ քում արժանի
եղիցին". Հաւատով խոստ:

Այն ահա է՝ որով քահանայք և վարդապետք
եկեղեցւոյ՝ նախանձաւոր եղեալք օրինացն Աստու-
ծոյ, զժողովուրդս իւրեանց աւետարանական քա-
նիւք հանապազ կրթեն. զմիտս նոցին լուսաւորեն.
զհաւատս նոցա հաստատեն. 'ի խմորոյ աղանդաւո-
րաց զգուշացուցանեն, և զատամբանական քաղցրութբ
և խոնարհութեամբ համոզեն. զսգաւորսն մխիթա-
րեն. զտրտմեալսն սփոփեն. զայրիս և զորբս հայթա-
յթ խնամեն. առաւել քան զզինուորս իւրեանց՝ ընդ
վտանգաւորաց տեսանեն. ոգեւորեն 'ի շնորհութիւն և

'ի հաստատութիւն միամիտ ժողովրդոց՝ կալ մնալ միշտ ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյ: Մանաւանդ որք 'ի հեռաւոր տեղիս բնակեալք իցեն՝ և ուրեք առանց Հովուի մնացեալք, առ 'ի գնալ յայցելութիւն նոցին՝ Առաքելական վարուք յանձն առնուն զամենայն, "Միշտս 'ի գետոց, միշտս յաւազակաց, միշտս յազգէ, միշտս 'ի հեթանոսաց, միշտս 'ի քաղաքի, միշտս յանապատի, միշտս 'ի ծովու, միշտս 'ի սուտ եղբարց": Բ. Կոր. ԺԱ. 26: Որովք պարզերես և համարձակութեամբ մատչին առաջի Աթոռոյ երկնաւոր Քահանայապետին ասելով, "Ահա ես և մանկունք իմ", Եբրայ. Բ. 13. և արժանի լինին անդ՝ իբրև ծառայ բարի և հաւատարիմ մտանել յուրախութիւն Տեառն իւրեանց. Մտթ. ԻԵ. 21:

Այն սէր է ըստ պատկերի և նմանութեան Աստուծոյ՝ բան իմացութեան և մշտնջենաւորութիւն հոգւոյ. որով հոգին է բանաւոր իմացական և անմահ իբրև զհրեշտակս երկնից, որք են իմանալի բանաւոր հոգիք հարկաւորք: Որոց զսէրն առ մարդիկ՝ կարծեսցուք աստանօր ցուցանել 'ի գործոյ անտի աղօթամատոյցն Ռափայէլի՝ սպասաւորելով առ Տովբիթ և առ պատանին Տուբիա, Տովբ. Գ. 24. շատ է մեզ իմանալ առակաւ սրբոյ Աւետարանին, որ վասն անպտուղ ծառոյն՝ օրինակի անբարեգործ մարդոյն: Քանզի տէր պարտիզին պատուիրէր զծառն կտրել՝ որ ընդ վայր զերկիր խափանէր, բայց սէր պարտիզպանին 'ի նա ձեռն մխել ոչ ներէր. և այն ոչ միանգամ, այլ 'ի լրանալ միոյ միոյ երից ամաց՝ երիցս և նա միջնորդ և բարեխօս եկաց. որ հեզիկ հայցուածով և զպարմանն խոստանալով, յերկս ժամանակս նակ կենաց մարդոյն՝ զցասումն Տեառն անցուցանէր. Ղուկ. ԺԳ. 6 — 9: Իսկ եթէ պարտիզպանն այն չէ նախանակ հրեշտակի 'ի Քրիստոսէ առակեալ, զի՞ն

այլ քան զայն յարմարագոյն կարեւորն իմանալ. իսկ եթէ որ հակառակելով անդրէն լինել սուղ պատմութիւն ոչ մեկնական՝ այլ միայն բան նկարագրական, զայնպիսին արժան է կոչել նկար մարդակերպ. որ թէ ոչ յամառեալ կամակորիցէ, լուիցէ զբանն եւ զհարազատ իմաստ այնր Առակին, զոր եւ մերս Հայւետոր յաղօթամատոյց գիրս իւր այսպէս բացատրէ. « Որք եւ պտղաբերութեան անկոյ թզենւոյն եւ ամենայն դատապարտութեամբ, որ զբնաւ յաւիտեանս պարապունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիւ եւ ընդ ապառնւոյն, յամայր յամրութեանն յերկարաձգելով՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւքն պաճուճելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեանս, տօքա բարեխօսք հանդերձիչք՝ այլ եւ խնամակալք ». Նար. ՁԱ:

Որդ՝ որպէս հոգեղէն զուարթունք երկնից նոյնպէս եւ հոգիք սրբոց՝ որք դասակիցք եղեն նոցա լսեն զաղաչանս մեր բարեխօս լինել առ Տէր: Եւ մ[illegible] անհնարին ինչ թուիցի քեզ՝ թէ զիարդ կարեն լսել որք անհասանելի հեռաւորութեամբ անջրպետեալ կան 'ի մէնջ. վասն զի էութիւն ամենատեսլին Աստուծոյ է' զմեզ եւ' զնոսա բովանդակ ունի յինքեան. զի նա « Տէր Աստուած ամենայնի, փոխանորդ յամենայնի անպարագիր եւ անփոփոխակ տեղի ամենեցուն. բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին ». Նար. ԻԴ: Իսկ որ մերձ է յամենեսին բոլոր իսկութեամբ, եւ զամենայնն ունի բովանդակ յինքեան, նա ինքն ազդ առնէ Երանելեացն այնոցիկ զՏօնասիրական պաշտամունս Եկեղեցւոյ եւ զաղաչանս 'ի բարեխօսել. Եւ այն ազդարարութիւնն Աստուծոյ՝ զոր առեալ, մի դու կարծիցես իբրու 'ի մէնջ մնացածին ինչ լինել. այլ ուսեալ եմք յոչխարագիւ առաւել սրբոյ [illegible] [illegible]արանսն. որ 'ի զանանել [illegible]

դշխար իւր, «Դնէ զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով», Ղուկ. ԺԵ. Ե. և մինչ երթեալ հասանէ 'ի տուն, առ խնդակից առնելոյ ինքեան (քան 'ի միտ առ), «Կոչէ զբարեկամս և զդրացիս՝ և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարն իմ զկորուսեալ». Ղուկ. ԺԵ. Զ։ Եւ այս շատ լիցի քեզ՝ յաղագս փրկարարութեանն Աստուծոյ ասացեալ։

Այլ գուցէ կամիցիս դու՝ չորօք եղեալն լսել, կամ իբրև աչօք տեսանել։ Հայեաց 'ի մարգարէն Եղիա 'ի վերացեալն շարժմամբ յերկինս. որ 'ի յերկնից անտի 'ի կայից իւրոց՝ որպէս կարաց իմանալ զչարագործութիւնս կռամոլ արքային Յովրամայ որդւոյ բարեպաշտն Յովսափատայ. կամ զխորդ կորուց լսել զաղաղակս տառապեալ օրինապահաց. որք էին 'ի մէջ ժողովրդեան Իսրայէլի, Բ. Մնաց. ԻԱ. 12—20։ Որք թերևս 'ի ժամանակէ անտի սովոր էին զեղիա կարդալ՝ ըստ որում ասէին Հրէայք վասն Յիսուսի. Մատ. ԻԷ. 47։ Այսր իսկ է՝ զի աղդեաց Նմա Աստուած. և Նա առաքեաց Յովրամայ զգիր յանդիմանութեան 'ի ձեռն ուրուք մարգարէի կամ 'ի ձեռն հրեշտակի միոյ կերպարանաւ մարդոյ. զի թերևս զղջասցի Յովրամ և ապրեսցի յառաջակայ պատուհասէն. բայց կռամոլն այն ոչ մարգարէին լուեալ և ոչ երբէք զղջացեալ՝ մինչև ըստ գործոց չարեացն իւրոց արժանապէս պատուհասեալ մեռանէր։

Նա և յորժամ կազմեցաւ 'ի Բաբելոն արքունական սաստիկ հրամանաւ այն սոսկալի հրաբորբոք փանջանաքան Երից մանկանց՝ եօթնպատիկ ջեռուցեալ, յորում միջնորդական յուսով աղօթէին առ Աստուած և ասէին. «Մի՛ 'ի բացէ առներ զողորմութիւնս քո 'ի մէնջ, վասն Աբրահամու սիրելւոյ քո՝ և վասն Իսահակայ ծառայի քո՝ և վասն Իսրայէլի սրբոյ քոյ». Դան. Գ. 35. զինչ ասես. զայցաւ Աստ-

ուած յայնժամ ազդ առնել Հոգւոց նոցին զմաղթանս Նահատակացն այնոցիկ, և ցուցանել սիրելեաց իւրոց զփառաւոր և զզուարճալի տեսարան այնր հրախաղաց հանդիսին ։ Ապա ոչ ոք կարէ ժխտել զայս ուղիղ վարդապետութիւն, եթէ ազդ առնէ Աստուած երանեալ Եկեղեցւոյ՝ զաղաչանս զինուորեալ եկեղեցւոյ 'ի բարեխօսել. նա և զայն ամենայն բարիս և զփառս իւր, զոր՝ մինչդեռ յաշխարհի աստ էին, յամենայն 'ի կեանս իւրեանց ցանկային նոքա տեսանել ։

Մեծ է այս շնորհ պարգևեալ 'ի Մարդասիրէն վասն բարեպաշտ և Աստուածասէր ծնողաց, որք կամին՝ որդիքն և ընտանիք իւրեանց լինել ինքեանց նշան բարութեան ։ Բայց ծնողքն այնոքիկ՝ որչափ կեան աստ 'ի կեանս իւրեանց, պարտաւոր են ինքեանք ուսուցանել զհաւատս և զպատուիրանս Եկեղեցւոյ, և կրթել զնոսա 'ի մանկութենէ առաքինի քաղաքավարութեամբ և Աստուածպաշտութբ. և մի ապաստան առնել զնոսա 'ի գանձս և 'ի կալուածս, այլ յանձն առնել 'ի խնամս Արարչին, զի պահեսցէ զնոսա ընդ հովանեաւ սուրբ Եկեղեցւոյ և արասցէ նոցա յիշատակ յաւէրժական օրհնութե. Վասն զի հոգիք բարեպաշտ ծնողաց յետ հրաժարելոյ յայսմ աշխարհէ՝ զոր ինչ և բարիս գործեսցեն աստ որդիք և ընտանիք իւրեանց, զայն ամենայն յԱստուածուստ անտի անշուշտ ունին իմանալ. քանզի ազդ առնէ նոցա Աստուած և լնու զցանկութիւն սիրոյ նոցա՝ և յաւելու 'ի նոսա ուրախութիւն մեծ. Այնպէս իմա և ընդ հակառակն վասն անհոգ և անբարեսէր մոլի ծնողաց՝ զաղետալի թշուառութիւնս զաւակաց իւրեանց, որք յաւելուն 'ի նոսա տանջանս չաւանաց. եղիցի քեզ օրինակ Հեղի քահանայն, անհոգ լինելոյ խրատել զորդիս իւր՝ ան-

կեալ յաթոռոյն իւրմէ ողնաբեկ մեռաւ՝ և քահանայութիւն 'ի տանէ նորին վերջացաւ, Ա. Թագ. Բ. Դ.։

Սուր ես զայս՝ զի մի տարակուսեալ կայցես 'ի վերայ երկուց ճանապարհաց, և վայեսցի քեզ անդ 'ի գլուխ վայն ողբալի։ Աբրահամ՝ մինչ յաշխարհի էր, ցանկայր տեսանել զօր գալստեան Փրկչին աշխարհի. և թէպէտ յառաջ քան զժամանակ մարդեղութեան նորա՝ մեռեալ էր Աբրահամ, և անցեալ 'ի վերայ նորա ազգք երիցս չորեքտասանք, բայց որ ցանկայր տեսանել զօր Փրկչին՝ էր սէրն բնական առ Օծեալն Մեսիայն 'ի հոգին Աբրահամու կենդանի և անվախճան։ Իւ յորժամ Փրկիչն եկն յաշխարհ, եթէ ոչ լինէր առ Աբրահամ ազդուութիւն և ցուցումն առ 'ի յԱստուածութենէ, զիարդ կարէր տեսանել և ուրախ լինել. բայց որ ազդեացն նմա և եցոյց զօր Գալստեան իւրոյ, նա ինքն ասաց. «Աբրահամ հայր ձեր ցանկացաւ տեսանել զօր իմ, ետես՝ և ուրախ եղև»։ Յովհ. Ը. ԾԶ։

Այլ մեք՝ որ հաւանեալս եմք այսմ Աւետարանական ճշմարտութեան, և պատրաստեալ եմք մերձենալ 'ի սուրբ Սեղանն տէրունական, գիտեմք՝ եթէ չեմք բաւական ապաշխարութեամբ մերով արժանաւոր լինել 'ի Հաղորդութիւն Աստուածային խորհրդոյն՝ յորմէ դողան զուարթունք երկնից. վասն այնորիկ միաբան ամենեքեան խնդրեմք և աղաչեմք զԱստուած՝ զի աղօթիւք և բարեխօսութեամբ Սրբոց իւրոց ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, և ողորմութեամբն իւրով թողցէ մեզ զյանցանս մեր. զի և մեք ընդ արժանաւորացն, «Մատիցուք ... համարձակութեամբ առաջի աթոռոյ շնորհաց նորա»։ Եբր. Դ. ԺԶ։

Իսկ վրիպեալքն 'ի ճշմարտութենէս յայսմանէ՝ եթէ բամբասեն զմեզ 'ի քարոզութեան իւրեանց,

ծին ոչ գիտէ. այս կարծիք՝ որ հակառակեն ճշմարտութեանն. Գաղ. Ե. 7: Բանզի Որդին Աստուծոյ ՚ի վերայ խաչին վասն չարչարողաց իւրոց և խաչահանուաց մարդկային բնութեան մերոյն բարձրախօս լինէր առ Հայր ասելով. "Հայր՝ Թող սոցա, զի ոչ գիտեն, թէ զինչ գործեն". Ղուկ. ԻԳ. 34:

Նայլ ահա ատենաւոր դարձեալ կոչեն զես զմարմինս անհնարին պաշարմամբ. վասն զի սրբեա խորհուրդ փրկագործ Համբարձութեանն Քրիստոսի անլուր և անօրինակ, նոյնպէս և փրկաւէտ Միջնորդութիւն նորա առ Հայր՝ անլուր և անօրինակ: Այլ անհասանելի մեծութեան և անքննելի Տնօրէնութեան, զի որ ՚ի վերայ խաչին նոյն ինքն Քահանայ՝ և Պատարագ Աստուծոյ Հօր, ահա նոյն ինքն Մարդ՝ միջնորդ Աստուծոյ Հօր, և Աստուած՝ զմիջնորդութիւն մարդկային ընդունող ընդ Հօր. ո՞վ ետես՝ ո՞վ լուաւ ՚ի յաւիտենից միջնորդ այսպիսի: Նա այս է նոր Միջնորդ մի՝ անլուր և անօրինակ և անհամեմատ. վասն զի ՚ի կողմանէ մարդկութեան միջնորդող՝ և ՚ի կողմանէ Աստուածութեան ընդունող՝ նոյն ինքն է Աստուած և Մարդ՝ որ Մի է. վասն այնորիկ գրեաց Հոգին սուրբ ՚ի ձեռն Առաքելոյն, "Մի է միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդ Յիսուս Քրիստոս". Ա. Տիմ. Բ. 5:

Իսկ որ եղև նա միջնորդ այնպիսի՝ որ Մի է բնութեամբ Աստուած և մարդ, նա՝ և զմարդկային միջնորդութիւնն և բարեխօսութիւնն ՚ի Սրբոց և ՚ի սիրելեաց իւրոց ոչ արգելեաց. այլ մանաւանդ միջնորդութեամբն իւրով այնուհետև ուսոյց միջնորդել և բարեխօսել առ Աստուած. յորմէ ուսեալ առաջին վկայն իւր սուրբ Ստեփաննոս՝ վասն քարկոծիչ ժողովոյն ծունր եդեալ աղաղակէր ասելով. "Տէր՝ մի համարիր դոցա զայս մեղս". Գործ. Է. 60.

Ուսուցին վերակացուքն յայսմ ճշմարտութենէ-ն հաղորդելոցն բարեխօսութիւնն Քրիստոսի, և զոր 'ի նմանէ ուսեալ՝ որպէս Ստեփաննոսի. զոր ոչ առնէ-ին վասն բարեպաշտ Տեառնիւրայց և բարեխօսութիւն ծնողաց, այլ մանաւանդ վասն չարչարողաց՝ սպա-նողաց և քարկոծողաց։ Իսկ յորժամ մեք Տէրանե-նական պատուով խնդրիցեմք զբարեխօսութիւնս Սրբոց, և նոքա յԱստուածունեան առաջի խնդրեսցին ըն-դունելութիւն մեր, ըսե՞ն արդեօք, կամ անփոյթ լինին զմեզ. ոչ ապաքէն նոյն իսկ սէր է 'ի նոսա՝ որով բա-րեխօսէին մինչ 'ի մարմնի աստ էին, և բարեխօսու-թիւնք նոցա ընդունելի լինէին. և արդ նախկին սէ-րոյն կեան անմահ, և բնակեալ 'ի սէրն Աստուած՝ և Աստուած 'ի սէր 'ի նոսին. զի "Աստուած սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, և Աստ-ուած 'ի նմա բնակէ" Յ. Ա. Յովհ. Դ. 16։

Վասն այնորիկ ունիմք անհատանելի բարեխօս՝ մարդ Յիսուս Քրիստոս, և զմայր նորին զսուրբ Աս-տուածածին և զամենայն Սուրբս. որովք առաւել եւս հաստատեմք 'ի յոյս, եթէ մարդասէրն Աստուած վասն բարեխօսութեան նոցա՝ ոչ հայի 'ի սակաւու-թիւն ապաշխարանաց և 'ի բազմութիւն մեղաց մե-րոց. այլ հայեսցէ 'ի զղջումն սրտից և յարատեւու-թեան մերոց, ամենազօր ողորմութեամբն իւրով գթասցի 'ի մեզ՝ քաւել և սրբել զամենայն զմեղս և զանօրէնութիւնս մեր։ Ապաքէն ա՛ն և ո՛ն արասցէ մեզ Տէր՝ եթէ անմահն ելանիցեմք 'ի սուրբ Հաղոր-դութենէ Աստուածային խորհրդոյն։

Իւր ահա աստ է տեսանել յափշտակութիւն Երրորդութեանն եկեղեցւոյ. զի յաւուրս անուրի լցմա-նց Մարգարէական օրհնեաց՝ արդարև "Մինչև ցայժմ արքայութիւն երկնից բանադատի, և բռնաւորք յա-փշտակեն զնա". Մատթ. ԺԱ. 12. Վասն այնորիկ յա-

նել Պատարագչին զբանն սարսափելին՝ Ի Սրբութիւն սրբոց, ըստ խորհրդաւոր արարողութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ իբրու բռնաբարական ձայնարձակութեամբ Դպիրք բարձրաձայն աղաղակեն, « Մի է այն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս, 'ի փառս Աստուծոյ Հօր »։

Տեսեալ Պատարագիչն զայն զբուռն յարձակուրդ և եռանդագին փափագ սրտից նոցա 'ի սուրբ Հաղորդութիւն, իսկոյն փոխէ զեղանակ բանին՝ առ 'ի համոզել և զիջուցանել զկիրս նոցին. և այլով դիւրալուր եղանակաւ յուսադրէ զնոսա վերստին, կարդալով զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի. և մաղթէ հայիլ յառաջակայ ժողովուրդն յայն՝ որք կատարեալ ջերմեռանդութեամբ և լցեալ սիրով անկեալ առաջի երկրպագանեն, և Սրբոցն բարեխօսութեամբ համարձակեալ խնդրեն մերձենալ յայս 'ի Սեղան անմահական։

Յայնժամ և նոքա համոզեալք՝ ամենայն խոնարհութեամբ անսան Պատարագչին. և հետևելով նորին՝ սկսանին ապա ինքեանք ևս ջերմեռանդ սրտի [illegible] օրհնել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգի՝ ողորմել[illegible] ձայնիւ մեղմագին. և ակնկալեալ սպասեն հրաման[illegible] նորին ճաշակել զփափագելին հոգւոց իւրեանց՝ ըզ[illegible] կենդանի և կենդանարար Հացն երկնային։

Եւ յորժամ լսեն զայն տենչալի հրամանն 'ի Պա[illegible]տարագչէն՝ որ ասէ, « Ի սուրբ 'ի սուրբ պատուա[illegible]կան Մարմնոյ և յԱրենէ Տեառն մերոյ և փրկչին Յի[illegible]սուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ, [illegible] իջեալ 'ի յերկնից բաշխի 'ի միջի մերում. Սա է կեանք[illegible], յոյս, յարութիւն, քաւութիւն, և թողութիւն մե[illegible]ղաց »։ յայնժամ ձայնիւ ցնծութեան սաղմոսերգեն և միաբան օրհնեն ասելով, « Քրիստոս պատարագ[illegible]եալ բաշխի 'ի միջի մերում. ալէլուիա. Զ[illegible]

տոյց մեզ կերակուր, և առաւօտ զարթեան իւր ցոյց 'ի մեզ. աղէղուրիա . . . », մինչև քարոզել Սարկաւագին « Եր-կիւղիւ և հաւատով յառաջ մատիք, և սրբութեամբ հաղորդեցարուք »։ զի ահա եղև ձեզ հրաման ըստ մեծի ողորմութեան երկնաւոր Թագաւորին՝ յառաջ մատչիլ և սրբութեամբ հաղորդիլ։

Այն զուարթարար ձայն քարոզին առաւել քան զամենայն երգս երաժշտական մեղեդեաց՝ յականջս նոցա հնչէ քաղցրագին. նմանեալ՝ ասեմ, ձայնի փո-ղոյ Գաբրիէլին՝ զոր հնչեսցէ զարթուցանել յարու-ցանել զննջեցեալսն, որք առաքինի վարուք և մա-քուր խղճիւ՝ կատարեալ հաւատով և հաստատուն յուսով յարութեան 'ի Քրիստոս ննջեցին։ Նոյնպէս հո-գիքն արժանաւորեցեալ սրբութեամբ տեսանել զլոյս փառաց ճշմարիտ լուսոյն Քրիստոսի յաւուրն կոչման՝ յորում եղև անջատիլ նոցա 'ի մարմնոց իւ-րեանց, « Նու հանգչիլ յուսով բարեաց յօթևանս արդարոց »։

Իսկ 'ի հաւատացելոց և յուսով ննջեցելոց՝ ե-թէ անմաքուր խղճիւ փոխեցան յայսմ աշխարհէ, ըստ Աստուածուստ վարդապետութե սուրբ Առա-քելոյն մերոյ՝ « Այլ կայանք են նոցա », կարօ-տեալք օժանդակութեան աղօթից և պատարագաց սուրբ Եկեղեցւոյ։ Որովք դիւրագոյն լինի նոցա հա-տուցանել զպարտս իւրեանց՝ մինչև զյետին նաքա-րակն. և այնպէս սրբեալ և մաքրեալ՝ արժա-նաւորին և նոքա « հանգչիլ յուսով բարեաց յօ-թևանս արդարոց »։

Նշանակէ՝ « Հանգչիլ յուսով բարեաց »։ վասն զի հաւատացեալքն երբ մեռանին, հոգիք նոցա չունին այլ նիւթ հանգստոյ. զի « Հաւատք՝ են յուսացե-լոց իրաց հաստատութիւն, և յանդիմանութիւն ոչ երևելեաց »։ Եբրայ. ժա. 1։ Զի որք աստ 'ի

մարմնի հաւատով տեսանէին զԱստուած " Ի բարձունս ըն
հայելի օրինակաւ ", 'ի կէտ անջատման 'ի մարմնոյ
իւրեանց տեսանեն " դէմ յանդիման ". Ա. Կոր. ԺԳ.
12: Բայց ունին զյոյս բարեաց մինչև յօր մեծի գա
լստեանն Քրիստոսի՝ դարձեալ միաւորիլ ընդ մար
մնոս իւրեանց. զի որք յաշխարհի աստ ուղղափառ
հաւատով մինչև 'ի կէտ կոչման իւրեանց քաջալե
րեալ զինուորեցան 'ի մարմնի, և մարմնովն իւրեանց
յաղթեցին փառաց և ցանկութեան աշխարհի, այն
յոյս նոցա՝ զի զփառս երկնից արքայութեան վայե
լեսցեն ևս նովին յաղթական մարմնով. և յետ այն
փառաւորեալ միաւորութեան՝ յոյսն ևս հատանի. զ
չիք այլ մի ինչ նոցա յուսալի, " Ո՞ր զոր տեսանէ ոք
զի՞ ևս յուսայ ". Հռովմ. Ը. 24: Բայց սէրն է 'ի նո
սա մշտնջենական՝ անեղծ և անվախճան. որոց վախ
ճանն է միշտ սիրելին իւրեանց՝ Աստուած յաւիտե
նական:

Եւ ահա այնու Աստուածասէր հոգւով պատ
րաստեալքն փափագին մերձենալ 'ի Սեղանն անմա
հական՝ ճաշակել զմարմին և զարիւնն Տէրունական. վա
սըն որոյ միաւորութեամբ աղօթեն, և սպասեն կոչ
ման Սարկաւագին՝ որպէս Իմաստուն Կուսանքն վա
ռեալ լապտերօք՝ տենչալի ձայնի քարոզին:

Եւ ներեսջիք ինձ՝ որ ասեմ. եթէ քարոզն Սար
կաւագին տենչալի է ինձ և փափագելի քան զձայնն
հանդերձեալ այնր քարոզին, որ 'ի միւսանգամ գա
լստեան անմահ փեսային կոչեսցէ զԿուսանսն յառա
նել ընդ առաջ՝ և մտանել յառագաստ նորին, քարո
զելով " Ահա փեսայ գայ՝ արիք ընդ առաջ նորա "
Մատթ. ԻԵ. 6: Իսկ սարկաւագն կոչէ՝ Երկիւղիւ և
հաւատով մատչիլ յառաջ, և սրբութեամբ հաղոր
դիլ Մարմնոյ և Արեան կենարարին. որով լինի աստ
'ի կեանս միաւորիլ և բնակիլ ընդ Երկնաւոր Փեսային

Աչքանի այնոցիկ՝ որք սրբութեամբ մաքրին և արժանաւորութեամբ հաղորդին. և հոգևոր ուրախութեամբ օրհնեն և գոհութեամբ երանական ասելով՝ « Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր ըզմեզ յանմահական սեղանոյ քոյ. Բաշխելով զմարմինդ և զարիւնդ 'ի փրկութիւն աշխարհի, և կեանք անձանց մերոց »։

Ահա կեանք, և առաւել ևս կեանք, զի Քրիստոս եկն յաշխարհ վասն մեր. որք հաւատալով 'ի նա՝ զկեանս ունիցիմք, և կերակրեաց զմեզ յանմահական Սեղանոյ իւրոյ՝ զի առաւել ևս ունիցիմք. Յովհ. Ժ. 10։



# ՑՈՒՑԱԿ

## ՎԵՐՆԱԳՐԱՑ ԲԱՆԻՑ





Լ. ՓԱՓԱԶԵԱՆ

# ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆՈՒԽՈՒՑ



## ԴՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԽԻԱՅ ԵՒ ԱՐԷՇԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ



1919

Տպարան Վրաստ. Հանրապետութեան Քաղաքն. Միու.

*Կարդացուած է 1919, Մայիսի 10-ի*
*Նուխուայ և Արէշի Հայրենակց.*
*Միութեան երեկոյթում*
*և քաղած ամենանոր աղբիւրներից*

## ՏԻԿԻՆՆԵՐ ԵՒ ՊԱՐՈՆՆԵՐ,

*Երկար չը պիտի գրաւեմ ձեր ուշադրութիւնը։ Պարզ Ժռուցիկ մի քանի տպաւորութիւններ միայն մի օտարա-նի, որ համաշխարային պատերազմի օրերին, Եւրոպա-ն՝ խոշոր մի քաղաքից ելնելով, երեք ամբողջ տարի ընկալւեց Կովկասի գաւառական մի փոքրիկ անկիւնում, քան հիւրասէր և այնքան սիրալիր մի բուռը հայ հա-րակութեան մէջ։*

*Այդ փոքրիկ անկիւնը Նուխին է։ Եւլախ կայարանից վերատ դէպի հիւսիս, Կովկասեան լեռների առաջին Ժայռի լանջին հանգչած։*

*Նուխին անյայտ քաղաք չէ կովկասցիների համար, չան և փոքր ու երկրի խուլ կողմերում ընկած լինի։ տաքսագործութեան կենտրոններից մէկն է եղել երկար մանակ, ունի վաճառականական անցեալ և առևտրական ւսաստանում ծանօթ է այնպէս, ինչպէս Պրուսա քա-քը Փոքր Ասիայում։*

*Թաթարաբնակ մի փոքրիկ վայր է այն, որ, ըստ մեր ստմադիրների, հիմնւել է 7-րդ դարի վերջերին և ուան կոչւել է Շաքէ. (Թուրքերէն՝ Շաքի)։*

*Հայերը եկւոր են այնտեղ։ Գաղթել են Արցախի կող-րից, Ագուլիսից և Խոյից։*

Մինչև անցեալ 1918 թիւը 6—700 տուն էին հաշւում, ունէին երկու եկեղեցի, դպրոցական երկու լաւ շէնք, մի հասարակական գրադարան և հայկական ակումբ։

Այժմ—չը գիտեմ։ Եթէ թաթարական վերջին վայրագութիւնները քաղաքում թողած չը լինեն որև է հաստատութիւն – զարմանալի չի լինիլ։

Մետաքս, կաղին ու բուրդ—ահա Նուխւայ առևտրի և արտածութեան գլխաւոր նիւթերը։ Մեր ազգակիցները այնտեղ մեծ մասամբ զբաղւում էին շերամապահութեամբ, ունէին մետաքսի թել պատրաստող գործարաններ և բաւական լաւ տնտեսութիւն։

Արհեստաւոր ու վաճառական էին ամէնքը։ Պաշտօնեայ՝ շատ քիչ կար, բանւորութիւնը մետաքսի գործարաններում բաւականաչափ, աղքատութիւնը անճեցուն, հարուստները—սակաւ։ Չէին մնացել։ Ճանապարհների հաղորդակցութեան դժւարութիւնները և զանազան ծանր հանգամանքները հետզհետէ դադարեցնում էին առևտուրն ու տաժանելի դարձնում ապրուստի միջոցները։ Առևտուրը մի կերպ քարշ էր գալիս՝ իր անցեալ մեծութեան աւերակների վրայ։

Այսպէս էր 1914 ի վերջերը, երբ ես մտայ այնտեղ։

Ապա, հետզհետէ, հանգամանքները աւելի բարդւեցին, պատերազմը իր ձեռքը ծանրացրեց ամեն ինչի վրայ... Իսկ այժմ, թաթարական վայրագութիւնները այնպէս են քայքայել, այնպէս աւերածութեան մատնել ամեն ինչ, որ դրականապէս կարելի է ասել, թէ Նուխւայ մէջ արգելափակ հայ ազգաբնակութիւնը իր ճգնաժամն է ապրում սովի և զարհուրանքի ճիրաններում...

«Les Turcs ont passé par lá»—«Թիւրքերն են անցել այդ տեղերով».—ասել է Վիքտոր Հիւգօն. «Ու...—աւելա-
է մեծ բանաստեղծը,—ամեն ինչ աւերակ են փո-

Ցիրաւի, անցան Թիւրքերը և ամէն ինչ աւերակի ոխեցին։ Ու նրանց հարազատ յաջորդները այժմ, այն արրը, որ երբէք չը սիրեց կարծես կուլտուրական եանքը և չի կարողանում հաշտուել նրա տարրական պա- աջների հետ. այն տարրը, որ միմիայն քանդել, աղտոտել ամայացնել գիտէ իր շուրջը—սանձարձակ արշաւելու ողնուած այդ անտէր վայրերում, աւերակների է փո- ում հայ ցեղի դարևոր տնտեսութիւնը և արիւնով ողո- ում շրջակայքը…

---

Նուխին, երբ ներս ես մտնում քաղաք, թողնում է ստ խղճալի տպաւորութիւն։ Չէի հաւատում որ քաղաք ր այն։ Թւեց մի մեծ գիւղ։ Մի միակ մեծ փողոցը, որ ճուղին է, քաղաքի սրտի մէջ, իր աջ ու ձախ կողմե- ում, ճիւղաւորւած է նեղլիկ, աղտոտ, ցեխոտ և մթին րբուղիներով ու փակուղիներով։

Իսկական Թաթարական բնակավայր։ Աղբն ու աղտը նմիջապէս տների կողքին դիզացած ու փողոցների մէջ իռւած, իւրաքանչիւր քայլիդ փոսեր, քանդւածքներ, ւելի ջրակոյտեր, անձրև օրերին՝ ճահիճի ընդարձակ ակներ, ցեխը՝ մինչև ծնկներդ, մածուցիկ, անելանելի, Թնելուն պէս—փողոցները խաւար ու անանցանելի, իսկ երեկին՝ ամէն կողմ, խանութների առաջ, տների պա- երի տակ կկզած, փողոցների անկիւններում կանգ առած՝ ւճռոտ, արևակէզ ու թշւառ դէմքեր, բազարում, «ղան- արի» մեծ կշեռքի տակն ու շուրջը՝ ցնցոտիապատ, կար- տանաւոր հագուստով այլանդակ Թաթար ու լեզգի բազ- ութիւն, Թաթարական զզւելի չայխանաներ ամէն քայլիդ, ոպա և Թաթարական վայրերից անպակաս՝ փողոցային ներ ամէն կողմ…

Հայկական, համեմատաբար շատ աւելի մաքու

աւելի խնամուած Թաղից եԹէ վճռես երբևիցէ ելնել դէպի ԹաԹարական Թաղերը, դէպի բերդը տանող փողոցից աջ ու ահեակ ծռւելը պիտի համարես ուղղակի անհնա(ր)․ կեղտն ու աղբակոյտերը այդ կողմերում շրջապատել են ԹաԹարական տուն ու փողոց այն աստիճանի առատու-Թեամբ, որ մարդ ակամայից յիշում է Նախապատմակա(ն) շրջանները, ՝երբ մարդիկ, վայրենուԹեան մէջ, մաքրու-Թեան հասկացողուԹիւնից բոլորովին զուրկ, կերածի բ(ո)լոր մնացորդները նետում—դիզացնում էին իրենց կողքի(ն) և ապրում այդպիսի աղբակոյտերի գարշահոտուԹեան մէջ...

Սակայն, երբ հայկական Թաղն ես մտնում, և կա(մ) աւելի լաւը, երբ մի քանի քայլ միայն անելով՝ ելնում ես անտառոտ բլուրներից մէկի լանջին և այնտեղից նայ(ում) քաղաքի համայնապատկերին—այն ժամանակ արդէն բոլ(ո)րովին այլ տեսարան է պատկերանում աչքիդ առաջ։

Ցիրաւի շատ գեղատեսիլ է Նուխին իր բռնած դիր-քով ու շրջակայքներով։

Մի ծայրը Կովկասեան լեռների առաջին լանջերի(ն) գոգաձև դէպի վեր պարզած, լեռնաբազուկների հովիտ-ների մէջ մղած և ծործորների խորքերը տարածելով, իր միւս ծայրը իջեցրել է դէպի Ղուրուչայ գետակի լայնա-նիստ հեղեղատը և ամբողջովին, մանաւանդ ներքին իր մասով, նման է ընդարձակ սիրուն պարտէզի՝ ծառախիտ, ծաղկալից ու ջրաշատ։

Սքանչելի է Նուխին մանաւանդ ապրիլին և մայիսին, երբ հայկական Թաղն ամբողջ իր մէջ առած այգիները և և ամեն տան կից գտնուող սիրուն պարտէզները տերև են հագնում դալար ու սարսուռն, ծաղկում են ծառերը ծայրից ծայր՝ փարԹամ գունագեղուԹեամբ, մանուշակը կապոյտ Թաւշեայ գորգեր է տարածում բացատների վրայ...
[illegible]ա, երբ ամեն կողմ ծաղկում են՝ սիրէնը, ժասմէնը, հիացինտներ առատօրէն, յորդ փԹԹումներով

ռանց միջից վարդի տեսակները, բազմազան, բազմագույն
անուշաբույր, հետզհետե լցնում են պարտեզ ու այգի,
ւկ անտառի մեջ կարմիր և ճերմակ խոշոր բծեր են
ռում մասրենու բազմաթիվ թփերը, ամեն ուղղությամբ...

Ամեն Նուխեցի հայ, առանձնապես հայ կինն ու մա-
ւկը, առանց բացառության գրեթե, անչափ սիրում է
ղիկներ, ունի մի անկյուն իր բակում, իր խրճիթի կող-
ն, ուր նա տնկում է բազմաթիվ վարդենիներ նախ, ա-
ս խնամում է ժասմէնի թփեր, սիրենի ծառը, մարգերի
ջ սիրով մշակում է ու պահպանում ամեն տեսակ ծա-
կ առատորէն, ադահաբար, մանրակրկիտ ուշադրու-
ռամբ... Իւրաքանչիւր Նուխեցու տանը, լինի նա շքեղ
ւմ աղքատիկ խրճիթ, դուք կը տեսնէք ծաղկամաններ
սամուտներին, պատշգամբների վրայ և գուրգուրանք դէ-
պի ամեն ծաղիկ, մանաւանդ վարդն ու մեխակը...

Վարդ, վարդ... Ամբողջ քաղաքը մայիսին վարդի մի
դարձակ բուրաստան է դառնում. ամեն պարտեզի մէջ
րմրին է տալիս, ամեն ձեռք վարդ է կրում այդ ամսին։

Ու զարմանալի էլ չէ, որ մայիսից սկսած, երիկնա-
մից մինչև կէս գիշեր, վաղ լուսաբացից մինչև երեկոյ,
րտէզների խորքերում, ստւերալից ծառերի խիտ տե-
ների տակ՝ հնչում են հարիւրաւոր սոխակների այնքան
այլելի, այնքան հոգեպարար դայլայլները։

Ամեն կողմից, ամեն տեղ, ամեն ծառի մօտ և ամեն-
ւյլից վարդն է ու սոխակը...

Եւ զարմանալի էլ չէ, որ անտառում կամ պարտէզների
ջ, հայկական թաղի իւրաքանչիւր փողոցում, ստիպւած
յաճախ կանդ առնել երիկնադէմերին ու մթնաշաղին և
ոձանանալ երկար, որպէս դի բաց չը թողնես սոխակի
ն մի հրաշալի խաղը մեն մի սքանչելի դայլայլը։ Իսկ
տառի մէջ, պուրակի խորքում՝ շունչդ բռնած կծկւել
ծառի տակ ու ականջդ տալ քեզնից մի քանի

[illegible], նոյն իսկ ցերեկով, ստուերների մթութեան մէջ, սիրուն թռչունիկն, որ իր երկնային սաղմոսն է գեղգեղում անվերջ կայլակումներով…

Նուխեցին, կլին թէ տղամարդ, ոչ միայն սիրում է վարդըն ու սոխակը, ծաղիկն ու երգը, այլ և սիրահար է ազատ բնութեան, անտառների և ծաղկալից դաշտերի։ Սիրում է անընդհատ ելնել—նստել պարտէզների մէջ, գետափին, կանաչ դալարինների վրայ, անտառի խորքերը։

Եւ դուք անընդհատ կը տեսնէք, ապրիլից մինչև ու[շ] սեպտեմբեր, թէ ինչպէս ամբողջ թաղը, ամեն տուն դադարկւում է դէպի մօտակայ պուրակի արահետներն ու բացատները, թէ ինչպէս այն դիմացի թեք և ընդարձակ կանաչ տարածութեան, Աղայեանց սարի վրայ, տարած իրեն[ց] սամավարները, յաճախ ճաշն էլ, խումբ առ խումբ նստ[ել] են բազմաթիւ հայ ընտանիքներ, մանաւանդ կիրակի և տօն օրերին։ Մանուկները վազվզում են կամ գլորւում դալարինների վրայ, գոյնզգոյն հագուստներով աղջիկների երգերը լսւում են հեռուից, շրջապար են բռնել նրանք պուրակի ծառերի տակ, թառը կուրծքին դէմ առած՝ ոգեւորութիւնով գեղգեղում է ձայն ունեցողը, օջախները մխում են բացատի կողերին, խորովածի շշերը պտտում են, սփռոցներ են տարածւել և բնութեան մէջ զւարճացողների ձայները հասնում են հայկական թաղի մինչև ծայրերը…

Հայ մանուկները, եթէ դպրոցում չեն լի օրերը և կամ երբ ճաշել են,—այլևս տանը չեն մնում, անտառի և թփուտների խորքերն են, բլուրների գագաթներին, գետափի ծառերի տակ, պարտէզների մէջ վաղվզում։ Ընտանիքներն էլ յաճախ լուսաբացին, իրենց կաթսան ու ամանները առած, փոքրից մինչև մեծը դատարկւում են դէպի անտառները, ուր մնում են ամբողջ օրը, ճաշում են, զոր-փկտում ու լւանում։ Շրջակայ բոլոր բլուրների

անջերից, ծործորների խորքերից, պարտէզների ծառերի
միջից օրն ի բուն լսում է մանուկների ուրախ ճիչերն
ու զվարթ երգերը։

Իրիկնադէմին, վերադարձն է, ձեռքերնին ծաղկեփըն-
ջեր, թևերի տակ խոտ, ետևից գառը կամ հորթը։ Եթէ
պտուղների ժամանակն է—պտուղի և բանջարեղէնի սա-
կառները մէջքերին, գլխների վրայ...

Ինչ որ ես միշտ մի առանձին նշանակութիւն եմ
տուել և քաջալերելու ճգնել այնտեղ—դա Նուխեցի մա-
նուկի բնածին սէրն է եղել դէպի այգեգործութիւնը և
յատկապէս՝ ծաղկեբուծութիւնը։

Ցիրաւի, ինչ կայ բնութեան մէջ ծաղկից աւելի սի-
րուն, աւելի ազնւացնող ու աւելի քնքոյշ։ Այնքան քնքոյշ
ու սիրուն, որ նրա վրայ գուրգուրանքով է նայում ամենա-
կոպիտ մարդն անգամ։ Սիրել ծաղիկը, զմայլել նրա
այնքան մեծ գեղեցկութեամբ, նրա այնքան նուրբ, այն-
քան կատարեալ շքեղութիւնով—դա է, որ յատկապէս պիտի
ուսուցանել մեր մանուկներին.—դա է, որ առանձնապէս
պիտի զարգացնել ու նրբացնել երեխաների սրտի մէջ,
եթէ կայ մանաւանդ բնածին հակումն ևս։

Նուխեցի մանուկը, ծնուած վարգի, ծաղիկների և սո-
ակի դալարների մէջ, ոգևորուած սէր է տածում դէպի
ծաղիկները։

Երբ ես ծրագրեցի դպրոցի բակի մէջ գտնուող խո-
պան մի ընդարձակ տարածութիւնը վերածել կանոնաւոր
ծաղկանոցի, բոլոր աշխատանքները սիրով յանձն առին
դպրոցի աշակերտ—աշակերտուհիները։ Խոպան հողը բահե-
ցին, մաքրեցին, կանոնաւոր մարդերի բաժանեցին, իմ
ցուցմունքներովը ձևաւորեցին, ուղիներ բաց արին, ծաղկե-
լաւր շինեցին, ապա՝ աղպեցին, ցանեցին, տնկեցին ու
ջրեցին և մինչև ամառւայ վերջը ամեն րոպէ աշխա-
տել էին ուզում ծաղկանոցի մէջ։ Չէին ուզում

դասամիջոցներին։ Ուղղակի խնդրում, աղաչում էին, որ թույլ տան իրենց՝ ծաղկանոց մտնելու և աշխատելու։ Եվ ամառ ամեն օր, կեսօրից հետո, յատկապես ջրելու էին գալիս մարդերը, քաղհան անելու — 7-ից մինչև 16 տարեկան աշակերտ — աշակերտուհիները, ամենքը, աշխատանքը իրար ձեռքից խլելով…

Ծաղկանոցը բաց էր, ծաղիկները ծաղկած՝ զմայլելի կերպով գունավորել էին մարգերը… բայց աշակերտներից ոչ մեկը չէր կոխոտում կամ քաղում։ Ո՛չ միայն աշակերտ, այլ դրսից մտնող մանուկ, ողամարդ, թե կին՝ ձեռք չէին տալիս ոչինչի։ Ամենքը, առանց այդ մասին յայտնված անդամ լինելու իրենց, գիտակցում էին թե այդ ամենը դըպրոցինն է, հասարակաց սեպհականությունը, ուրենը և նուիրական ու անձեռնմխելի…

Եվ յիրավի, դէպի դպրոցն ու հասարակական հիմնարկությունները տածած պատկառանքն ու սէրը, որքան ես նկատեցի երեք տարվայ ընթացքում, սակավ բացառությամբ, արմատացած է իւրաքանչիւր Նուխեցու մէջ՝ փոքրից մինչև մեծը։ Դպրոցի որև է սեպհականություն փչացնելը համարվում է մեծ մեղք. դպրոցին պէտք է տալ՝ ինչ կարող ես։

Դրա մէջ անձամբ համոզվել եմ ես, երբ պէտք է եղել գիմել հասարակությանը կամ պարտէզի ու մեղվանոցի, կամ գրադարանի և ներկայացումների համար։

Ամենաժլատ մարդու քսակը բանալ յաջողվել է ինձ. յաջողվել է նրանց այգիներից և պարտէզներից ամբողջ տունկեր, ծառեր ու թփեր բերել դպրոցի պարտէզը. պէտք եղած ժամանակ շատ հեշտությամբ, առաջին իսկ առաջարկի վրայ՝ դրամ են տվել կամ ատաղանի շինության, ...ամ բաղի նորոգության և կամ այլ հասարակական նպա...երի համար։

տի ասեմ, երեք տարվայ ընթացքում, դպրոցա-

ան աճող, մեծացող բիւդջէն մի՛շտ կարելի եղաւ լրա-
ւել դիւրութեամբ, ուսուցիչները ամեն ամիս կանոնա-
ր ստացան իրենց ռոճիկները, երբ պէտք ունէին դրամի՝
մի անգամ չը մերժւեցին աւանսներ, իսկ դպրոցի և
ա պարտէզի վրայ արւած բոլոր ծախսերը, առանց դըժ-
ւրութեան, հայթայթւեցին։

Ու երբ ես թողի Նուխին, 1917-ի վերջերին, դպրոցն
ոդէն ունէր մի ճոխ դրադարան 5000 կտոր գրքերով,
նզիքական փոքրիկ կաբինետ, սիրուն փոքրիկ թատերա-
ւմ և սրահ՝ մշտական աթոռներով և լուսաւորութեամբ,
ւշնամուր, գեղեցիկ պարտէզ ծաղկանոցով ու աւազա-
ւվ, մեղւանոց, ուղղակի հասարակաց զբօսավայր դարձած
ւդարձակ, աւազապատ ծառուղիներով բագ, մաքուր և
ւկիկ դասարաններ և փոքրիկ ձմեռային մի ծաղկանոց
ւելի քան 70—80 ծաղկամաններով։

Այդ ամենը նւիրեց և շինեց, սիրով հայթայթեց ժո-
ւվուրդը, սովորեց ինքն էլ ամեն օր, ամեն կիրակի մա-
ււանդ, գալ դպրոցի բագը, հանգչել դրւած նստարան-
երի վրայ ծառերի տակ, շադրւանով բուրաստանի դի-
ւց և գուրգուրանքով նայել իր ստեղծած գործին։

Այդպէս էր Նուխեցին և այդպէս մնաց նա։ Սովորու-
իւն դաձաւ այլևս, որ իւրաքանչիւր մեռելատէր մի-մի
ումար նւիրէր դպրոցին և Բարեգործ. ընկերութեան։
արսանիքի և խնջոյքի մէջ ևս չէին մոռացւում դպրոցն
ւ աղքատները։ Դրսում, օտար երկիրներում եղած Նու-
եցիները նւիրաբերում էին ինքնաբերաբար և կամ առա-
ին իսկ դիմումի վրայ. իւրաքանչիւր ներկայացում, բացօ-
եայ զբօսանք և կամ «մի բաժակ թէյ», տալիս էր լաւ
կամուտ և այդպիսի օրերը մի-մի տօնի օրեր էին հա-
արւում Նուխեցի հայի համար։ Դպրոցի բակը լցւում էր,
րաժշտութիւնը հնչում զւարթութեամբ—պապենական
ւռնան և սրինգը—ու ոչ ոք դուրս չէր գնու

կամ հիմնարկութիւնից՝ առանց նուիրաբերելու նրան ինչ կարող էր...



Չը պէտք է սակայն կարծել թէ ուսումնասէր այդ համայնքը զերծ էր պակասութիւններից։

Ո՛չ։ Կային և այլանդակ պակասութիւններ, որոնք արդէն սովորական էին դարձել։ Նախ՝ այն անվերջ ու զզուելի բանբասանքութիւնը, որ կանանց միջից ելնելով վարակում էր նաև տղամարդկանց։ Յետոյ՝ ընդհանուր համաճարակը, թղթախաղը, որ փոքրից սկսած մինչև մեծը, մանաւանդ կանանց, պառաւ թէ ջահել, որդիների տէր թէ ազատ, աղջիկ թէ նորահարս՝ համակել էր գլխովին։

Ոչ մի տուն, ոչ մի կին չը կար համայնքի մէջ, որ չը խաղար։ Ամեն օր յատուկ երեկոյթներ—միմիայն լոտոյի և թղթախաղի համար։ Միմիայն այդ։ Եւ այդպիսի սեղանների շուրջը զարմանալի գիւտեր էին տեղի ունենում բանբասական, հրէշաւոր ստերի շարքեր էին յօրինւում, որոնք և հետևեալ օրը պտոյտներ էին գործում ամբողջ քաղաքում ու զբաղեցնում պարապորդներին։

Իհարկէ, այդպիսի երևոյթների պատճառները բացատրել կարելի էր այլև այլ կերպով։ Կարելի էր նաև արդարացնել նրանով, որ սովորական բաներ էին գաւառական խուլ անկիւնների համար։ Սակայն, ինձ գոնէ, շա՛տ խորթ էր թւում տեսնել՝ թէ ինչպէս ամեն տան մէջ, ամեն քայլիգ և ամեն օր բացւում էին կանաչ սեղանները, կամ լոտոյի շուրջն էին շարւում հանդիսաւորապէս ամենքը և յաճախ մինչև կէս գիշեր, նոյն իսկ մինչև լոյս՝ խաղա-
...թերը կլանում էին ընդունակ և ինտելլիգենտ մարդ-
...ան ու ժամերը...

... այդ ամենին, կրկնում եմ, Կովկասի

ւստական քաղաքների հայ համայնքների մեջ Նու-
խին աչքի էր ընկնում իր ջերմ վերաբերմունքով
էպի հասարակական հիմնարկություններն ու գործիչ-
ները, իր լավ, սրտաբաց հյուրասիրությունով, այլև իր
յն զվարթ կենսունակությամբ, որ միշտ շարժուն է
ահել այդ փոքրիկ համայնքը. այն ժիր, եռանդուն գոր-
ունէությամբ, որ կարողացել է փոքր ի շատէ բարեկե-
իկ կյանք և ծաղկած տնտեսություն ստեղծել թաթա-
րական միջավայրում...

Նուխեցին, ճշմարիտ է, ունեցել է իր մեջ շատ կա-
րտ աղքատներ, որոնց նա խնամել է և օգնել միշտ,
ոնց համար նա իր նպաստները երբեք չի խնայել. պա-
երազմը թէև Նուխեցիներից շատերին թշուառացրեց և՛ս
ւելի, բայց նա իր յույսը չէր կորցրել վերականգնելու
նտեսությունը, սպասումներ ունէր ապագայից, երազում
նույն խակ դպրոցը գիմնազիայի վերածելու, դպրոցական
ր շէնքը վերջացնելու, կիսատ մնացած թատերական
եղ սրահը լրացնելու, ծրագրում էր՝ գաղութը բարելա-
ելու և զարգացնելու ամեն կերպ, երկաթուղու գծի հա-
ար դիմումները անելու... եթէ, եթէ միայն վրայ չը հաս-
ին այն սև օրերը, երբ թուրքերը անցան այդ կողմե-
ով, ամեն ինչ արյունի և ավերակների փոխարկեցին, տասա-
ակ հայկական գյուղերը կոտորեցին շրջակայքում և մնա-
րդ անօթի բազմությունը լցրին դէպի քաղաք...

Եվ ահա այժմ, Նուխեցի հայը թաթարական վայրա-
ություններից երբեւիցէ ազատվելու յույսը կորցրած ար-
ն, ոչ մի հեռանկար չունի իր հայրենիքի վերականգ-
ման համար։ Այժմ նա հեռանալ, միմիայն հեռանալ է ու-
ում իր դժոխք դարձած հայրենիքից։ Այժմ ոչ բնությունը
հրապուրում նրան, ոչ այն վարդագեղ բուրաստանները
[illegible] [illegible] գյուղայինները, որոնց —
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

Նուխուայ բոլոր պարտէզների և անտառների մէջ. այլևս ոչ իսկ դպրոցն է աչքին գալիս և կամ որևէ այլ հիմնարկութիւն։ Դող ի սիրտ, ամեն րոպէ կոտորուելու սպառնալիքի տակ, կծկուած ու սմքած իրենց տների խորքերում, անկարող՝ համարձակօրէն փողոց անգամ ելնելու, քաղաքից մի քայլ դուրս դնելու—սպասում է Նուխեցի հայը այն օրերին, երբ պիտի կարողանայ մի կերպ դուրս գալ քաղաքից, ազատուել թաթարական կոշմարից, իր կինն ու որդին կորզել մահուան գրկից, անձը ազատել գազանական ճերաններից…

Իսկ սո՜վը, իսկ անօթութիւնը, որին դատապարտուած են կոտորածից ճողոպրած ու այժմ պաշարուած մի բուռը հայերի թշուառ մնացորդները քաղաքում։ Չէ՞ որ Նուխուայ և Արէշի մէջ աւելի քան 50 հայ հարուստ գիւղեր կային, աւելի քան 60000 բարեկեցիկ հայ բնակչութիւն։ Իսկ այժմ, այդ 50-ից մնացել է միայն երեք գիւղ, 60000-ից միմիայն 30000 բնակիչ և այն—ամենքն էլ սոված, մերկ, գերի ընկած, անընդհատ բռնութեան և բռնաբարութեան ենթարկուած, հայ աղջիկներն ու կանայք թաթարների ձեռքերում, թաթարական կենդրոններում փախցրած հայ կանանցից և աղջիկներից անսառականոցներ հիմնած, հեռուն՝ անընդհատ, կոտորելով, քաղաքի մէջ ո՛չ մի առևտուր, ոչ մի գործ, գիւղերից փախստական հայեր լցուած անօթի, հիւանդ ամեն կողմ…

Ո՛չ, Նուխեցին այլևս միմիակ երազ եթէ ունի—հեռանալն է թաթարական կոշմարային միջավայրից. հեռանալ՝ թողնելով թէկուզ ամեն ինչ…

Ա՛յն, ինչ որ «Երիտասարդ թիւրքերը» Արևմուտքում գործադրեցին հայ ազգաբնակութեան վրայ, որպէս [illegible] իրենց մնար սիրայն—այն ահա կատարւում [illegible] հարազատ ժառանգ Ազէրբէյջանի հասարա[illegible]
[illegible] մեր աչքի առաջ՝ մինչև այժմ ան[illegible]

պատիժ ու անարգել։ Սպանում են մեզնից երկու քայլ հեռու, թալանում են, բռնաբարում, սովի մատնում, ամայացնում և ջնջում—ու չկան դեռ ևս այն ձեռքերը, չը կայ այն արդարութիւնը, որ վերջ տային այդքան զարհուրելի հրէշութիւններին և կորզէին՝ ոչնչացման ենթարկւած մեր ազգակիցների մի բուռը մնացորդներին։

---

Ներեցէք ինձ, տիկիններ և պարոններ, որ այսքան տխուր եմ վերջացնում իմ տպաւորութիւնների այս կըտորը։ Այդպէս է սակայն դրութիւնը։ Ողբերգութիւնը հայ ազգի՝ դեռ շարունակում է արիւնոտ ու սոսկալի։ Թէ երբ կը վերջանայ—չեմ կարող ասել։

Ու այժմ մեր բոլոր ջանքերն ու սևեռուն մտածութիւնները պիտի կենդրոնանան մեր ցեղակիցների վերջին փշրանքները ժողովելու, մեր որբացած ապագայ սերունդը փրկելու և այս-այն կողմ դեռ ևս թաթարական ճիրանների մէջ արիւնքամ լինող թշւառներին ազատելու վրայ միայն։

Ու այժմ—կրկնում եմ այդ և շեշտում յատկապէս։ Չը ուսաբեկւենք ոչ մի րոպէ։ Հեռու չէ արշալոյսը։ Թէև տանջւած ու վիրաւոր, թէև արիւնքամ ու վշտալից—սպասենք Լուսաբացին, որ չը պիտի ուշանայ երևալու։

Մեզ հալածողներն ու մեզ նահատակող վոհմակները կանգ են առել երեկւայ իրենց յօյսերի վրայ. մեզ ջնջելու և ոչնչացնելու յոյսերի։ Բայց երեկը արդէն մեռել է այսօրւայ արշալոյսին։ Այսօրն ու վաղը մերն է։ Ջանանք ձեռք տալ մեր ցեղակիցների յոգնած ու վիրաւոր բեկորներին, որպէս զի նրանք ևս մեզ հետ ողջունել կարողանան Վաղւայ Արևածագը։

Այդ է ահա, որ կուզէի ես ներշնչել այսօր և վաղը՝ ձեզ և ամէնքին…



## ԳԵՐՈՒԹԻՒՆԸ
## ՆՈՒԽԻԱՑ ԵՒ ԱՐԷՇԻ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ

Այսպէս ուրեմն, մօտ 20—25 հազար հայեր, բեկորները միայն 60 հազարից աւելի հայ ազգաբնակութեան, սարկացրած ու ճորտացրած՝ արդելափակ մնում են Նուխի և Արէշ գաւառներում, Թաթարների ձեռքերի մէջ։

Այսպէս ուրեմն, յիսուն հայաբնակ գիւղերից, Թուրքական ու Թաթարական կոտորածների ու հալածանքների շնորհիւ, մնացել են այժմ միմիայն երեք գիւղեր այդ գաւառներում, որոնցից երկուսի մէջ ուսուցիչներն են (Վարդաշէն և Նիժ), իսկ միւսը՝ կիսաաւերակ մի ողորմելի գիւղակ (Ճալէթ)։

Մնացած բոլոր դիւզերի հայերը ոչնչացրած, տեղահան արւած ու վռնտած իրենց հողերից, մեծ մասամբ գերի են վարւել դէպի Թաթարական գիւղերը և գտնւում են, բառացի կերպով, ճորտութեան ու սարկութեան մէջ։

Նրանց հողերն ու տները, նրանց արտերն ու պարտէզները, որոնք այժմ ինքնաբոյս կերպով առատ հունձ ...ստանում, որովհետև անցեալ տարի հացահատիկը ժո... լինելով թափել, բուսել է,—այդ արտերը անա, ...Թաթարների ձեռքը։

...ւկ ու տղամարդ քշւել՝ մորակների տակ, ...ա, գործում են Թաթարների համար, ան-

ւմ են, գրաստների պէս բանեցնում։ Կանանցից ու աղ-
կներից գեղեցիկներին հարեմներն են տարել և կամ նրան-
ց պոռնկատնէր հաստատել թաթարական զանազան ան-
ւններում, տղերքներին բանեցնում են՝ իբրև սորկու-
ների, իսկ մանուկներին, մի առանձին նախանձախնդրու-
համբ, թլպատում են ու մահմեդականացնում...

Ինչով է պակաս սա Թիւրքիայից, բուն-օսմանցիա-
ն գործելակերպից։

Եւ այդ բոլոր վայրագութիւնները քաղաքակիրթ աշ-
արհից ծածկելու, որև է տրտունջի ձայն խլացնելու
ատճութեամբ, կատարելապէս կտրել են տանջուողների
մաց որև է հաղորդակցութեան միջոց։ Փոստ ու հեռա-
րը մանրակրկիտ գրաքննութեան տակ, ճանապարհները
ակած՝ սպանում են դուրս ելնել կամեցող հայերի և
ակման մէջ պահում բոլոր ուղիները։

Հայը այդ գաւառներում՝ գտնւում է անընդհատ տեր-
րի, անընդհատ սպառնալիքի տակ և չի համարձակւում
և ձայն, որևէ բողոք բարձրացնել, եթէ չի կամենում
այդ բողոքի փոխարէն սպանւի ինքը, իւրայիններն ու
ցեղակիցները։

Այդպէս էր Էնվէրեան երկրի կեանքը վերջին չորս
րւայ ընթացքում, այնտեղ-Օսմանեան աշխարհի մէջ։ Այդ-
ս է այժմ, Դաշնակիցների քթի տակ, Թիֆլիզից մի քանի
ղ միայն հեռու, Նուխւայ, Արէշի, ինչպէս պատմում են,
նպէս և Շամախիի ու Գօքչայի գաւառներում։ Այնտեղ,
թուրքն է անցել. այնտեղ, ուր թաթարն է տիրում
վայրագ բնազդներով, իր անզուսպ մոլեգնութեամբ։

Չը պիտի կարծել սակայն, որ Ադէրբէյջան կոչւած
ւշարհքի այդ նոր երկիրներում միմիայն թաթարական
ւիժառութիւնն» է գործողը և կամ «կրօնամոլական
ոգը»։

Ինչպէս բազմաթիւ փաստերը ակներև են կա

նում, այդ երկրի մի ծայրից դէպի միւսը անընդհատ շըր-ջում են, ժողովրդին գրգռում, նորից Թուրք տիրապետու-թեան յոյսերով մոլեգնացնում՝ Օսմանեան երկրի այն գոր-ծակալներից, որոնցից մի քանի խմբեր արդէն գործի վրայ են Փոքր Ասիայում, արդէն փոքրիկ կոտորածներով սպառ-նալից ապագայ են խոստանում հայերի ու քրիստոնեա-ների համար։

«Երիտասարդ Թուրքերի» ոչ կուսակցութիւնն է մե-ռել ու անգործ նստել և ոչ էլ նրա պանիսլամական ձգ-տումները դադարել։ Օրէցօր և անպատիժ կերպով նրա առաքեալները մտնում են Կովկաս ամեն կողմերից, Թա-փանցում են թաթարական վայրերը, անընդհատ գրգռման մէջ են պահում մահմեդական ժողովրդին, այն քարոզն են հնչեցնում, թէ Թուրքը դեռ չի յաղթուել, Էնվէրը դեռ կայ և թէ նրանք շուտով գալու են նորից Կովկաս ու մահ-մեդական մահիկի դրօշը տնկեն մինչև Կովկասեան լեռ-ները...

Ունայն խօսքեր չեն սրանք։ Փաստեր կան։ Կան նոյն իսկ անուններ, որոնք տրւում են Նուխւայ, Արէշի և Շա-մախիի գաւառներից՝ իբր պանիսլամական գործիչների ա-նուններ։ Պնդում են, որ կան զօրեղ ու եռանդուն գոր-ծող օրջեր ևս Ազէրբէյջանի գլխաւոր կենտրոններում, ազդեցիկ հովանաւորողներ այդ երկրի բարձր շրջան-ներում...

Եւ դա շատ հաւանական է, որովհետև գաւառներում յայտնի կերպով հայահալած դիրք են բռնել՝ ոչ միայն որոշ խմբեր ու անձեր, այլ նոյն իսկ տեղական կառավարու-թեան գործակալներն ու վարիչները։

Վկայ և փաստ թող լինեն դրան՝ Վարդաշէնում տեղի [illegible]ցող սոսկումներն ու թալանները, (տես «Աշխատաւոր» [illegible]22 և 95)։ Վկայ և փաստ թող լինեն թաթարական գիւղերի տարւած հազարաւոր հայերի գրաստայէն դըու

թիւնը, այս ու այն կողմը հատատատած պոռնկատները հայ կանանցից, հարեմների մէջ տառապող հայ աղջիկները, մահմեդականացրած հայ մանուկները… որոնցից ոչ մէկի ճիչն ու բողոքը ուշադրութեան չեն առնւում, որոնց մասին եղած գանգատներն ու պահանջները մնում են անհետեւանք, ենթարկւում են ծաղրի…

Եւ այդ ամենը ոչ միայն չի նւազում, այլ աւելի ու աւելի, օրէցօր աճեցում՝ առանց քաշւելու գործադրւում է Ազէրբէյջանի կառավարութեան աչքի առաջ, մեծ կենդրոններում ու կատարելապէս անպատիժ։

---

Այժմ—չոր փաստեր միայն։ Չոր, բայց շատ պերճախօս։ Նցկոուր կը լինեն դրանք, բայց հաւաստի աղբիւրներից են քաղւած և յաճախ՝ իրենց—թաթարների իսկ ձերանից։ Չը պէտք է ենթադրել որ չը կան նրանց մէջ գութ և խիղճ ունեցող մարդիկ, որոնք հոգով վրդոված չը լինեն չափազանց և քաջութիւն չունենան ճշմարտութիւնը խոստովանելու… երբեմն։

«Բոլոր գիւղերում, հայ կանայք և օրիորդները, ինչպէս և տղամարդիկ, մի փոր հացով ծառայութեան մէջ են թաթարների մօտ։ Նրանցից շատերին արդէն իսլամացել են և շարունակում են նոյն «աստւածահաճոյ գործը»։ Նիժ, Ճալէթ և Վարդաշէն գիւղերը ապրում են ճորտութեան մէջ։ Ստրաժնիկները տէր և տնօրէն են այնտեղ։ Չը կայ ոչ մի պաշտպանութիւն՝ նոյն իսկ պատւի… Թալանում են, գչլում՝ զանազան պատրւակներով։ Իսկ ստամոքսները լցնելու համար, մտնում են անարգել ամեն մի տուն և ստանում, ինչ ցանկանում են։ Ընդհանուր պատկերը կոշմարային է»։

«Հաւաքած տեղեկութիւնների համաձայն՝ ճորտացրած հայեր գտնւում են շատ գիւղերում։ Տրւում են ան-

որոնք ժողովում են իրենց մոտ հայ կանանց, բռնաբարում են և բռնաբարել տալիս, ապա իբր ստրկուհիներ բանեցնում...

«Թրքական ասքէրներ և սպաներ շատ կան գիւղերում մնացած և շարունակ գրգռում են ամբոխին՝ հայերի դէմ։ Դրանք նոյն իսկ պահում են գերի հայ օրիորդներ և տանջանքներով բռնաբարում։ Անունները կան մի առ մի։ Յայտնի են ամէնքը։ Չեն էլ թագնւում։ Ինչի՞ց և ումի՞ց պիտի վախենան։ Չէ՞ որ հայկական կոտորած սարքող «բարեպաշտ իսլամներ» են նրանք և կարող են վայելել իրենց թալանածներն ու փախցրածները»։



«Ընդհանուր թալանից և կոտորածներից Նուխայ և Արէշի գաւառներում մնացել են փոքր ի շատ է ազատ՝ Նուխի քաղաքը, ապա Վարդաշէն, Նիժ և Ճալէթ գիւղերը միայն։

«Վարդաշէնում կան 600 տուն ուտիացի հայեր, 300 ուտիացի—վրացիներ կամ ուղղափառներ, նոյնքան էլ պարսկական հրէաներ։ Հարստութիւն հայերի մէջ՝ գրեթէ չի մնացել։ Կային յայտնի հարուստներ, որ այժմ մուրացիկների են փոխուել։ Վարդաշէնը սակայն, եղել է հարուստ գիւղ ամբողջ գաւառում։ Գիւղացիք իրենց հաշւով հեռագրական կայան էին հաստատել և փոստ հիմնել։ Ո՛չ մի տուն չը կայ այժմ, որ ազատւած լինի թալանից։ Կան տներ, որոնք կորցրել են մինչև հարիւր հազարի արժողութեամբ գոյք։ Տնական կահ-կարասիք, գիւղատնտեսական պարագաներ և տաւար չը կայ այլևս։ Չի մնացել ոչ մի ձի։ 600 տան համար կայ այժմ միմիայն 20 զոյգ լծկան։ Գարնանը՝ Ադրբէյջանի կառավարութիւնը գիւղին տուել էր 30 լծկան, սակայն բոլորն էլ բաժանուել է ուղղափառներին միմիայն։ Հայերին՝ ոչ մի հատ։ «Ուղղա

փառ» ուտիացիները և հրեաները ոչ մի վնաս չեն կրել»։

«Ապահովությունը այդ կողմերում կարելի է եղել փոքր ի շատէ հաստատել միմիայն այս մայիսին և Վարդաշէնցիք փորձում են փոքր ինչ աշխատելու ելնել այգիներում և ցանելու մոտակայ արտերը։ Հեռավոր և բեղմնավոր բոլոր հողերը անցել են թաթարների և «ուղղափառ» ուտիացիների ձեռքը։ Հայը չի յանդգնում դէպի այդ հողերը գնալ»։

«Ճալէթում եղել է 200 տուն հայ։ Ամենաաղքատ գիւղն է։ Գիւղացիները գլխովին քայքայւել են ու թալանւել։ Բոլորովին զուրկ են երկրագործական պարագաներից և տաւարից։ Գիւղից դուրս ելնելու ոչ մի հնարաւորութիւն չունէին երկիւղից։ Նորերս միմիայն սկսել են աշխատանքներ՝ մոտակայ այգիներում և դաշտերում։ Աշնանը և ձմեռը անպայման կերպով նրանք մատնւելու են սովի, եթէ որևէ տեղից նրանց օգնութիւն չը հասնի»։

Նիժ գիւղում առաջ եղել են 900 տուն հայ։ Այժմ մնացել է հազիւ 750։ Մնացածները կամ ոչնչացել են և կամ տեղահան եղել։ 1918 թւի յուլիսից մինչև հոկտեմբեր ամիսների ընթացքում չի դադարել սպանութիւնը այդտեղ։ Կոտորել են գիւղի երիտասարդներից՝ աւելի քան 300 հոգի։

«Նիժը այդ շրջանի ամենահարուստ գիւղն է եղել, բայց բոլոր տները ենթարկւել են թալանի։ Զանազան պատրւակներով թալանն ու կողոպուտը շարունակւում է նոյն իսկ մինչև այժմ։ Յուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին Նիժը ստիպւած է եղել թրքական զօրագնդին տալ օրական՝ 20 եզ, 20 ոչխար, 50 հաւ և վառեկ, 150—500 փութ ալիւր և հաց, 2 փութ իւղ, շաքար, թէյ, աղ, սոխ և այլն։ Միմիայն սեպտեմբերի վերջերից էր, որ թուրքերը սկսեցին իբր թէ վճարել... իրենց գնահատ արժէքով։ Կան գիւղացիներ, որոնք մուրացկ

*փոխել։ Եվ յիրավի, ինչպես մուրացիկ չը դառնայ այն գիւղացին, որ մի տարւայ ընթացքում տալիս է թալան՝ մօտ 170,000 րուբլու արժողութեամբ բոլոր ունեցածը»։*

*«Նիժը սակայն, չը նայելով իր կրած սոսկումներին, համեմատաբար ամենից աւելի է օժտւած փոքր ինչ և ապրելու, եթէ միայն միջոցներ ունենայ աշխատանքի ձեռնարկելու և պարբերական թալաններից ու սարսափներից ազատ մնալու»։*

*...«Ամենազարհուրելի վիճակը՝ թաթարական գիւղերի մէջ եղած փախստական հայերի վիճակն է։*

*«Մեծ քանակութեամբ հայեր, առանձնապէս կին և մանուկ, անցեալ տարւայ կոտորածների և յարձակումների ընթացքում գերի են քշւել։ Նրանցից շատերին բռնի կերպով իսլամացրել են։ Կանանց թշւառացրել են, լլկել ու բռնաբարել, իսկ տղամարդկանց ճորտացրել ու բռնի աշխատանքների լծել։*

*«Շատերին յայտնի է այդ ամենը, գրեթէ ամենքը գիտեն գերւածների տեղը, ազգականները մղկտում են իրենց դժբաղդ կանանց և աղջիկների համար, սակայն մինչև այժմ եղած բողոքներն ու դիմումները մնացել են ու մնում են անհետևանք և անլսելի»։*

*«Այդպիսի դիմումները մնում են անպատասխան այն մտքով, թէ կինը կամ աղջիկը ամուսնացել է և ըստ մահմեդական օրէնքի, չի կարելի բաժանել ամուսնուց. իսկ մանուկների մասին—թէ նրանք շատ լաւ են ապրում մահմեդականների մօտ»։*

*«Չը կայ գրեթէ փախստական և գիւղերից տեղահան արւած հայ այդ կողմերում, որ գերութեան մէջ չունենայ իր ազգականը կամ մօտիկը»։*

*«Վերադարձ դէպի իրենց գիւղերը—փախստականնե-*
*թոյլատրւում։ Միայն մի քանի գիւղերում ար-*

մանով, որ ինչ հնձեն և ժողովեն, կէսը տան թաթարներին»։

«Գիւղերում դեռ մնում են անթաղ՝ կոտորածների օրերից մնացած մարդկային ոսկորների և գանգերի կոյտեր»...

«Կան գիւղեր, որոնց արտերը անցեալ տարի հնձւած չը լինելով, այժմ բուսել են և առատ բերք են խոստանում, սակայն տէրերին ոչ մի կերպով չի թոյլատրւում օգտւել այդ արտերից։ Ուր որ թաթարները կամենում են, կառավարութեան հաճութեամբ, տէր են դառնում հայերի արտերին, այգիներին և տներին։ Կայաբաշի գիւղի հողերն ու այգիները, օրինակ, 50,000 րուբլիով տրւած է թաթարներին, մինչդեռ միմիայն այգիներից իւրաքանչիւրը կը տար այդքան եկամուտ։ Այդ գիւղը այն թշւառ վայրերից մէկն է, որ գլխովին ջարդի է ենթարկւել։ Ո՛չ մի տուն այլևս։ Աւերակնե՛ր միայն։ Եւ միակը չէ այդ գիւղը։ Յաճախ կարելի է հանդիպել վայրի խոտերի մէջ ծածկւող խրճիթների մնացորդների, փլած տանիքների ու պատերի և ամայացած գիւղերի, որոնցից թալանողները դեռ մինչև այժմ էլ կրում-տանում են գերան, դուռ, լուսամուտ և ամեն ինչ, որ կարելի է ծախել ու գործածել»։

«Նուխւայ հովիտում յաճախ է մարդ հանդիպում անմշակ ու անտէր մնացած արտերի և այգիների, որոնք հետզհետէ յափշտակւում են թաթարների կողմից»։

«Ռուսական գիւղերը, օրինակ՝ Ալէքսէեվկա, Նեկրասովկա, 1917 թւին, գուշակելով լինելիքը, ծախել էին իրենց տները հայերին գլխաւորապէս և գաղթել դէպի Ռուսաստան։ Այդ գիւղերը այժմ ամայացել են, որովհետև այնտեղի հայերն էլ փախել են կամ ջնջւել»...

---

*Ազէրբէյջանի կառավարութեան տակ անցնող այդ երկիրը մի տարուայ ընթացքում ահա թէ ինչպիսի կերպարանք է ստացել.—*

*...«Քայքայումը ակներև է և երթալով աւելի է շեշտւում։ Ճնուղիները կատարելապէս անպէտքացել են, իսկ անձրևների ժամանակ՝ այլևս անանցանելի են դառնում։ Նուխի—Եւլախեան այն սիրուն ու կոկիկ խճուղին, որ հիացնում էր անցորդներին, այժմ սոսկալի փլւածքների, փոսերի, ճահիճների և ջրակոյտների տարածութիւն է դարձել։ Հեռագրական դծերը, օրինակ՝ Վարդաշէնից—Նիժ և դեպի ուրիշ կէտերը, որոնք ձգւած էին գիւղացիների միջոցներով, այժմ լիովին ոչնչացել են։ Վարչութիւնները տգէտ, սաստիկ անշնորհք և յանցաւոր, կառավարութեան ներկայացուցիչները—անկարող։ Առ հասարակ ամեն քայլին ակներև են դառնում անկարգութիւնն ու ապօրինութիւնները։ Զգալի կերպով ծնունդ է առնում և հաստատւում ճորտատիրութիւնն ու ստրկութիւնը։ Ժողովրդի բնաւորութիւնը սկսում է փոխւել։ Դա նկատելի է նոյն իսկ առաջին հայեացքով։ Մահմեդականները վարժւում են քմահաճոյքի և բռնութեան ռէժիմին, որ առ այժմ նրանց հնարաւորութիւն է տալիս դիւրութեամբ հարստանալու և ապրելու։ Հայերը սկսում են համոզւել, որ մնացել են անպաշտպան, որ գրեթէ դուրս են հանւած օրէնքի հովանաւորութիւնից... և հետզհետէ վարժւում են ստրկութեան, դարձել են վախկոտ, խորամանկ ու ողորմելի...»*

*«Վերականգնւում է խանական ու չաւուշական ռէժիմը։ Օրէցօր, ժամ առ ժամ գրեթէ, քայքայւում է կուլտուրական այն կեանքը, որ հաստատւելու էր եկել այդ կողմերում՝ տարիներից ի վեր...»*

---

նոր այդպիսով, փոխւում է ուրեմն բուն Թուրքակա

*աշխարհի, ուր խարխլում է քաղաքակրթական ամեն ձեռնարկութիւն, քայքայւում է տնտեսութիւնը և ուր խաւարն ու տգիտութիւնը, քմահաճոյքն ու բռնութիւնները շուտով դառնալու են սովորական երևոյթներ։*

«Les Turcs ont passé par là !».—«*Թիւրքերն են անցել այդ կողմով*», *ասել է մեծ բանաստեղծը։ Անցել են և ամեն ինչ աւերակի վերածել...*

*Թուրքն է հաստատուել այդ կողմերում։ Հաստատուել է—և ամեն ինչ աւերակի ու ճահիճի վերածել, ամեն ինչ բռնութեան ու քմահաճոյքի զոհ դարձրել։*

*Մի անգամ ևս արդարանում են բանաստեղծի խօսքերը։ Եւ այն՝ մեզանից միայն մի քանի քայլ հեռաւորութեան վրայ, քաղաքակիրթ աշխարհի աչքի դիմացը, անմիջապէս նրա կողքին...*

*Սակայն ժամանակն է վերջ տալու այլևս այդ ամենին ու մի անգամ ընդ միշտ փրկելու մեր ցեղակիցներին այդպիսի դժոխային տիրապետութիւններից։*

*Ժամանակ է՝ ազատել մեր թշուառ հայրենակիցների վերջին բեկորները, որոնք կորցրել են ամեն յոյս՝ երբևիցէ բարեկեցիկ օր ունենալու այդ կողմերում և որոնք կուզէին, անչափ կուզէին ելնել ու հեռանալ այդ գեհենից, ելնել ու փախչել թաթարական մղձաւանջից։*

*Ժամանակ է մանաւանդ փրկելու 30,000-ից աւելի հայ ազգաբնակութեանը՝—սարկացման մէջ ձեռք բերւող վատասերումից ամեն տեսակ գարշելի յատկութիւններից և տանել փոքր ինչ շունչ առնելու նրան մեր հայրենիքի երկնքի տակ, ուր կարող լինէին մարդու պէս ապրել և մոռանալ այնքան մեծ, այնքան ծանր տառապանքները...*

*1919. Մայիս 20.*



# ՄԻ ՔԱՆԻ ՎԿԱՅԱԹՂԹԵՐ

## I

Նուխու գաւառի Վարդաշէն գիւղի հայ ազգաբնակութիւնը հետեւեալ խնդրագիրն է ուղարկել Ադրբէջանի պարլամենտի հայկական ֆրակցիային.

«Ինչպէս ձեզ յայտնի է, Նուխու, Սեանի և Արէշի գաւառների հայկական գիւղերն աւերակների են վերածւել, ազգաբնակութեանը կոտորել և միայն Նուխու գաւառի Վարդաշէն, Նիժ ու Ճալէթ գիւղերն են, որ թէև աւերածութիւնների են ենթարկւել, սակայն ազգաբնակութեան միայն մի մասն է կոտորւել։ Թւում էր, որ տաճկական զօրքերի հեռանալով, ազգաբնակութիւնը պիտի ազատ շունչ քաշէր. սակայն, ընդհակառակը, դրութիւնը ոչ միայն չլաւացաւ, այլ վատթարացաւ։

Նուխու գաւառի ոստիկանական 3-րդ շրջանում Վարդաշէն կենտրոնով՝ կարգը պահպանելու համար ոստիկանապետի տրամադրութեան տակ են դրւած 30 ստրաժնիկներ, որոնք ոչ միայն իրենց պարտականութիւնները չեն կատարում, այլ և թալանում են ազգաբնակութեանը՝ քաղցի մատնելով նրանց։ Բողոքել չենք կարողանում, որովհետև բողոքողները սոսկալի պատժի են ենթարկւում։ Ստրաժնիկների մեզ մօտ նշանակւելու օրից նրանք ապրում են մեր հաշւին։ Այսպէս՝ գիւղացիներից պահանջում են խոտ, քուսպ, գարի, փայտ, հաց, ձու, իւղ, բրինձ, թռչուններ և այլն։ Ով կամովին չէ տալիս, սոսկալի ծեծի է ենթարկ-



Փոքր ի շատէ ունևորներից խոշոր գումարներ են պա-
և չվճարողներին ծեծի ու բանտարկութեան ենթար-
պահանջւած գումարն ստանալը։ Գիշերները մը

ւմ են բնակարանները և ամեն ինչ կողոպտելով, տանում հետ-
րը։ Սրան կամ նրան պատվիրում են փարթամ խնջույք սար-
ղ։ Կանանց ու օրիորդներին բռնաբարում ու տանում են
տները։ Ուրիշ վայրերից գործով եկած ստրաժնիկներին տե-
ւորում են մասնավոր տներում որպես հյուրերի, որոնք վերա-
ռնալուս տանում են իրենց հետ ամեն ինչ։ Գյուղում ան-
կատակ հրացանաձգություններ են կատարում ազգաբնակությա-
ը ահաբեկելու նպատակով։ Լուրեր են տարածում, որ Վար-
աշենը հրի ու սրի է մատնվելու,. որով և ազգաբնակությանը
անգարում են իրենց աշխատանքները կատարելու, որովհետև
անք չգիտեն, թե վաղն ինչ է լինելու։ Դատ են կայացնում
գործը վճռում յօգուտ կաշառատուի ու իրենց վճիռներն էլ
կատար ածում։ Կատարում են մի շարք այլ քստմնելի գոր-
ր ևս։

Այս ամենի մասին մենք բողոք ենք ներկայացրել պառլա-
նտին Նուխու գավառի ներկայացուցիչ Ղարիբ-Քերիմ օղլու մի-
ցով, յույս ունենալով, որ նա ևս իր ձայնը կը բարձրացնի յօ-
ւտ մեզ։

Հաղորդելով վերոյիշեալների մասին, խոնարհաբար խնդրում
ք, յանուն մարդասիրութեան, գործակցեցէք, որ հարկն է դի-
լու և վճռական միջոցներ ձեռք առնելու մեզ այս անելանելի
ութիւնից դուրս գալու, որպէսզի գիւղացիութիւնը կարող լինի
աղւել իր աշխատանքներով ու դատապարտուած չլինի կո-
տեան։ Իսկ եթէ այդ անհնար է, աղաչում ենք գաղթեցնել
զ մի ապահով վայր»։

(41 հոգու ստորագրութիւն)։

Վաւերացրել է Վարդաշէն գիւղի տանուտէրը՝ իր ստորա-
ութեամբ ու կնիքով։

1919 թիւ. 25 ապրիլի։

(«Աշխատաւոր» № 83, 1919 թ.)

II

Մի տարուց աւելի է, որ հայերը Նուխու և Արէշի գաւա-
ռում ենթակայ են թալանի, կոտորածի նոյնիսկ ցա-
ում հակառակ իրենց կամքի, մահմեդականութիւն

*նում... «Կամք» ասած բանը՝ հայի համար չէ. Նա ճորտ է Թուրք բէգի ձեռքին և մինչև հիւանդանալը, եզան նման աշխատում է «մի փոր» հացի համար։ Հազարաւոր հայ կանայք մինչև այսօր էլ Թուրք գիւղերում ենթակայ են բռնաբարման... Այս օրերս Դահնա գիւղից (Նուխու գաւառ) մի հայ էր եկել, որը պատմում էր, թէ դեռ հիմա էլ՝ շատ հայ կանանց բռնի իսլամութիւն են ընդունել տալիս և սա միայն Դահնայում չէ, այլ բոլոր տեղերում։ Թուրք գիւղերից գալիս են քաղաք «անպէտքացած» կանայք ու գաղթականական կոմիտէից օգնութիւն խնդրում. կոմիտէի հարցին՝ ամուսին ունե՞ն արդեօք, պատասխանում են, որ վաղուց են իրենց ամուսնուն կորցրել. բայց և այնպէս՝ բոլորն էլ յղի են լինում... Հայ կնոջ պատիւը արատաւորուած է և դեռ շարունակւում է այդպէս մնալ։ Ո՞ւր է այն մարմինը, որին վիճակւած է ազատել հայ կնոջը այդ գերութիւնից և հայ գիւղացուն ճորտութիւնից. մի՞թէ հիմա էլ, երբ մեր երկրումն են կուլտուրական աշխարհի մեծ պետութիւնները, հայ կինը պիտի բռնաբարւի, իսկ հայ գիւղացին ճորտ մնայ Թուրք բէգի մօտ։ Մինչև ե՞րբ պիտի լռեն մեր ազգային հիմնարկութիւնները, մինչև ե՞րբ պիտի անտես անեն Ադրբէջանի պարլամենտի հայկական ֆրակցիան և Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը։ Հազարաւոր հայեր դեռ մինչև օրս ցրւած են զանազան Թուրք գիւղերում և ոչոք չի մտածում դրանց մասին. մինչև ե՞րբ պիտի շարունակւի այս դրութիւնը, մինչև ե՞րբ պիտի հայը գերի մնայ Թուրք բէգերի ձեռքին... Ժամանակ է վերջապէս հաւաքելու մարտիրոս հայ ազգի այդ դժբախտ բեկորները. լռելն ու անտես անելը յանցանք է...*

(*«Աշխատաւոր»* № *95, 1919 թ.*)

## III

*Արէշի գաւառի հայ գիւղերի կոտորածի ժամանակ Մեծ Սեօգութլու գիւղացի Ե. Խ.-նը Աղդաշեցի իր մի Թուրք քիրւայի միջոցով ազատւում ու Աղդաշ է բերւում։ Երկար մնալով քիրւայի տանը և ականատես լինելով այդ շրջանի գերւած հայ կա-*
*անց ու օրիորդներին պատահած անպատիւ արարքներին, նա*
*մ է, որ Թուրքերը հայ գիւղերի մէջ գտնւող բոլոր տղա*

մարդկանց կոտորելուց, գիւղերը Թալանելուց ու աւերելուց յետոյ, բոլոր գիւղերի գեղեցիկ կանանց ու հասուն աղջկանց քշում են Աղդաշ։ Պաշտօնեաները իրենց հաւանածները վերցնելուց յետոյ, մի մասն էլ վաճառում են մուսուլմաններին՝ բղաւելով.— «գէօզչայ արւադ, գըզ», մարմնի զանազան մասերը ցոյց տալով գնորդներին... որպէս վաճառքի ապրանք, իսկ մնացածներից էլ տաճիկ պաշտօնեաների և դլխաւորապէս Արէշի գաւառի 3-րդ մասից պրիստաւ տխրահռչակ Մահմուդ բէկ Լիւթֆալիբէկովի խորհրդով, անառականոցներ են բացւում։ Թէև այս աղաղակող փաստի մասին շատ անգամ գրեցինք ու բողոքեցին մամուլի միջոցով ի դիտութիւն համայն աշխարհի և Դաշնակից պետութիւնների միջնորդութիւնը խնդրեցինք այս խեղճերին Թրքական անխիղճ ու գազանային կրքերից ազատելու համար, սակայն մեր բողոքը միշտ էլ մնաց ձայն բարբառոյ յանապատի. և խեղճերը մինչև այժմ էլ տառապում, անարգւում ու բռնաբարւում են Թուրքերի անառականոցներում։

Իսկապէս առաջներում նրանց ազատելու հարցը կապւած էլ շատ մեծ դժւարութիւնների հետ. Թուրքերը գերիներ ազատելու համար հայերից պահանջում էին մեծաքանակ գումարներ, ինչպէս այդ երևաց մօտիկ անցեալում մի քանի գերի կանանց ազատելու խնդրում։ Իսկ այժմ, չգիտեմ ինչից դրդւած, իրենք են առաջարկում հայերին դերիները յետ վերցնել, միայն նրանց տեղափոխելու ճանապարհածախքը վճարելով. իսկ եթէ գտնւի մի մօտիկ կենտրոնավայր, որտեղ կարելի լինի, առանց կողմնակի ծախքերի, տեղ հասցնել նրանց—Թուրքերը սիրով համաձայնում են այդ ծանրութիւնը իրենց վրայ վերցնել, ինչպէս մի քանի դէպք էլ պատահել է. օրինակ՝ շատ Թուրքեր իրենց մօտ գտնւած գերի հայ կանանց ու աղջկանց տարել են Նւժ։

Ներկայումս այդ ուղղութեամբ անհրաժեշտ է մի հեզինակաւոր և ուժեղ դիմում Ադրբէջանեան կառավարութեանը և նրա կողմից մի խիստ շրջաբերական իր բոլոր պաշտօնեաներին։

(«Աշխատաւոր», 1919 թ. Յունիս 5.)



